ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Ա

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆԱՒ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Ա

Աբդա - Գրիգոր Աստվածաբան

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2009

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Վ – 345

Թարգմանությունը գրաբարից՝ Արշակ Մադոյանի

Վ – 345 Վարք սրբոց: Հատոր Ա (Աբդա - Գրիգոր Աստվածաբան): - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009.- 336 էջ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը սկսում է «Վարք սրբոցի» աշխարհաբար թարգմանության հրատարակությունը: Ներկա հատորն ընդգրկում է «Աբդա - Գրիգոր Աստվածաբան» հոդվածները:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

«Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի

ISBN 978-9939-59-019-6 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հռոմեական կայսրության մեջ Բ. դարի վերջին հատուկ հրովարտակով արգելվում էր նոր պաշտամունք մուծելը: Առավել ևս սրվեց պայքարը քրիստոնյաների դեմ: Քրիստոնեությունը դժվարին առճակատման մեջ համառորեն դիմակայեց նյութվող հալածանքներին: Կայսրությունով մեկ դաժանորեն պատժում էին նոր հավատքի հետևորդներին, բայց այնուամենայնիվ քարոզվող նոր գաղափարները արձագանքվում էին բնակչության բոլոր շերտերում: Բարձրացող կրոնի առաջամարտիկները անձնուրացաբար ծառայում էին իրենց կոչումին և զոհւում հանուն Քրիստոսի, հավատալով, որ վերջնական հաղթանակը հեռու չէ: Նրանց դեմ բանեցնում էին պատժի ամենատարբեր միջոցներ՝ գելարաններ, կախաղաններ, մամլիչ սարքեր…Իսկ ծածուկ հավատացյալներն ու նորադարձները հարգանքով ու երկյուղածությամբ հետևում էին այդ գործողություններին, վտանգելով իրենց կյանքը՝ նահատակված սրբերի մարմինները գաղտնաբար կամ երբեմն բացահայտորեն թաղում էին, կառուցում վկայարան-մատուռներ, դեպքերի թարմ տպավորությամբ, թերևս հին կենսագրությունների օրինակով, գրի էին առնում եղելությունը, սահմանում հիշատակի օրեր, պարբերաբար նշում տվյալ սրբի տոնը:

Ժամանակի ընթացքում ստեղծվեց պատկառելի գրականություն (որ պիտի անվանվեր սրբախոսություն), ուր պատմում էին նահատակների, խոստովանողների, ավելի ուշ նաև սուրբ այրերի կյանքն ու գործունեությունը:

Հնագույն ժամանակներից հայ իրականության մեջ ևս գրվել են սրբախոսական երկեր՝ վարքեր ու վկայաբանություններ, ներբողներ: Իսկ երբ քրիստոնեությունը վերջնականապես հաստատվեց Հայաստանում, և սկսեցին կարգավորել եկեղեցական տոները, կազմվեցին **տօնացոյցներ**, անհրաժեշտություն զգացվեց թարգմանելու համաքրիստոնեական սրբերի կենսագրությունները հունարենից, ասորերենից: Հին մատե-

նագիրները անհրաժեշտ չեն համարել հիշատակել ինչպես հեղինակների, նույնպեսև թարգմանիչների անունները: Այս վիթխարի գրական հունձքի համար մենք պարտական ենք մեծ մասամբ անանուն թարգմանիչներին, սակայն բարեբախտաբար պահպանվել են թեպետ աննշան, բայց թանկագին տեղեկություններ թարգմանական գործի կազմակերպիչների, թարգմանիչների մասին (Ատոմ վարդապետ, Գրիգոր Վկայասեր, Կիրակոս, Գրիգոր Փոքր Վկայասեր, Ներսես Շնորհալի…):

Անհրաժեշտ է նշել, որ թարգմանիչների ձեռքի տակ միշտ չէ, որ եղել են անխաթար բնագրեր, և հասկանալի է՝ թարգմանությունները նույնպես տարբեր են որակով ու վիճակով, պահպանված ձեռագրերը, որոնցից օգտվել են վենետիկյան հրատարակիչները, հաճախ հնամաշ ու վնասված են եղել:

Հունական և ասորական վարքերն ու վկայաբանությունները անշուշտ առընչվել են հայ իրականության հետ, իրենց նպաստն են բերում Հայ առաքելական եկեղեցու պատմության առավել ամբողջացմանը: Ներկայացվող գործողություններից շատերը կատարվում են Հայաստանում և հարակից շրջաններում, հերոսների մեջ կան նաև հայ սրբեր, նորադարձներից շատերը հայ են: Իբրև առընչությունների կարևոր փաստ հիշենք, օրինակ, Բարդուղիմեոս առաքյալի այցելությունը Հայաստան, երբ նրա ջանքերով հավատքի են գալիս ոչ միայն շարքային քաղաքացիներ, այլև իշխող դասի ներկայացուցիչներ:

Այս և այլ հանգամանքներ թույլ են տալիս մտածել, որ սույն ժողովածուն կգտնի ընթերցողների իր շրջանակը, հնարավորություն կտա ավելի խորությամբ ճանաչելու քրիստոնեության լույսը, ավելի սերտ փարվելու Հայ առաքելական եկեղեցուն:

Ա. Մ.

ՍՈՒՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲԴԱՅԻ, ՈՐՄԶԴԱՆԻ, ՍԱԻՆԻ ԵՎ ԲԵՆԻԱՄԻՆ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմոց Թեոդոս Փոքրի թագավորության և Պարսից ամբարիշտ Հազկերտ արքայի բռնակալության ժամանակ, անօրեն թագավորի միջոցով սատանան պատերազմ հրահրեց Աստծո եկեղեցու դեմ: Եվ Պարսից Աբդայ եպիսկոպոսը լսեց և լցված աստվածային նախանձախնդրությամբ, հրով այրեց Պարսից ատրուշանը, որ անվանում էին հրո տաճար և ուր կրակապաշտները բորբոքում էին հուրը: Այդ լսելով՝ պարսից մոգերը պատմեցին արքային, և նա կանչեց սուրբ եպիսկոպոսին ու նախ հանդարտությամբ մեղադրում էր նրան այն գործի համար և ապա նրան հրամայեց վերստին շինել ատրուշանը, որ այրեց: Իսկ սուրբ եպիսկոպոսը հակաճառում է արքային և ասում. «Անհնար է, որ ես վերստին կառուցեմ մոխրապաշտների և մանավանդ անաստվածների սնոտի վայրը, որ այրեցի»:

Եվ նույն ժամին թագավորի առջև սպանեցին սուրբ եպիսկոպոս Աբդային և ավերեցին բոլոր եկեղեցիները, և երեսուն տարի քրիստոնյաների հալածանքների մրրիկը չդադարեցրեց: Եվ մոգերին հրամայեց բռնել բարեպաշտություն դավանողներին և կտրել ոմանց ձեռքերն ու ոտքերը, իսկ ոմանց ականջներն ու քթերը, և ոմանց զույգ աչքերը խավարեցնել, և սուրբ վկաներից ոմանց գլխից մինչև լանջը հոշել, ուրիշների մարմինը եղեգնով ճեղքելով քցցել, և ոմանց ձեռք ու ոտքը կապում ու օծում էին ճարպով ու գցում խոր վիհը և այնտեղ էին լցնում բազում մկներ ու աքիսներ, և ուշադիր էին, որ կայտառ [մկները] չկարողանան փախչել ու սովից տանջվելով կրծեն սրբերի մարմինները: Անօրեններն այս անելով՝ չկարողացան վախեցնել Քրիստոսի երանելի վկաներին, մանավանդ, որ երբ նրանք տեսնում էին այդպիսի խստամբեր տանջանքներ՝ ինքնահոժար մեծ փափագով դեպի

մահ էին ընթանում և գոհանալով Աստծուց՝ ավարտում էին իրենց ուղին:

Պարսից մեծամեծ իշխաններից մեկը՝ շատ հարուստ էր և հավատով քրիստոնյա, որի անունն էր Որմզդան: Արքան իմացավ նրա քրիստոնյա լինելը, կանչեց նրան և պատվիրեց, որ ինքն իրեն քրիստոնյա չանվանի և ուրանա Քրիստոսին:

Եվ Որմզդանն ասում է արքային.

– Ո՛վ արքա, եթե քո ծառաներից մեկը ուրանա քեզ, որ մահկանացու ես, և ապստամբելով գնա այլազգի թագավորի մոտ՝ մեծ տանջանքի ու մահվան է արժանի: Ո՛րքան առավել պատուհասի արժանի է նա, որ երկնքի ու երկրի Աստծուն՝ անմահ Թագավորին ուրանա, պիտի մատնվի անշեջ հրին:

Այս լսելով՝ արքան նրան զրկեց իշխանական պատվից, զրկեց տնից և ունեցվածքից, հրամայեց մերկացնել նրան պատմուճաններից, որպեսզի ուղտերի երամակն արածեցնի: Շատ օրեր անց թագավորը տեսավ նրան մերկ և ուղտերից տանջված, նրան շապիկներ ուղարկեց և ասաց.

– Հիշի՛ր քո նախկին ազնվականական մեծությունն ու փափուկ, քաղցր կյանքը և ուրացիր քրիստոնեությունդ, հավատա մեր պաշտածներին:

Եվ նա լսեց թագավորի մահաշունչ խոսքերը, առավ շապիկները, բազում ծվեններ բաժանեց:

Արքան խիստ կատաղեց, հրամայեց տեղնուտեղը սպանել նրան, և [նա] Քրիստոսի հավատքի համար նույն ժամին վախճանվեց սրով:

Նաև պարսիկ քրիստոնյա մեծատուն իշխաններից մեկին, որ ուներ հազար ծառա, որի անունը Սաին էր, արքան բազում անգամ ջանաց քրիստոսական հավատից մոգության դարձնել, և երբ չկարողացավ համոզել, զրկեց հազար ծառաներից, իսկ [դրանցից] մեկին, որ բոլորից անարգ էր ու անպիտան, աղտեղի ու գարշատեսիլ դեմքով, մեծարեց, նրա ծառան դարձրեց տիրոջը, իսկ տիկնոջը կնության տվեց նրան, և նրանց հրամայեց դրան ծառայել հնազանդությամբ: Արհամարհանքի այդ բոլոր նեղությունները թափվեցին նրա վրա, բայց չհրաժարվեց Քրիստոսի հույսից:

Բռնեցին և եկեղեցու սարկավագներից մեկին, որի անունը Բենիամին էր, երկու տարով բանտ նստեցրին:

Այդ օրերին Հոռոմոց Թեոդոս թագավորից դեսպաններ առաքվեցին Պարսկաստան: Եվ լսեցին Բենիամին սարկավագի մասին, թե հանուն Քրիստոսի արգելափակված է բանտում, Հազկերտից խնդրեցին հանել նրան բանտից:

Եվ արքան ասում է.

– Թող մեզ վստահեցնի իր ստորագրությամբ, որ պարսիկ մոգերին չի դարձնի իր հավատին և ոչ իր վարդապետությամբ մեկնումեկին կսովորեցնի մեր երկրում, ապա ձեր խնդրանքով կազատեմ նրան կապանքներից:

Երբ այդ լսեց Բենիամինը, հանձն չառավ կատարել արքայի հրամանը, ասելով.

– Անհնար է, որ իմ Աստծու շնորհները թաքցնեմ մարդկանցից, այլ որքան կարող եմ կլուսավորեմ մոլորությունից խավարածներին, որ պատիժ չկրեմ իր տիրոջ տաղանդը թաքցնողի հետ:

Պարսից արքան Հոռոմոց Թեոդոս կայսեր դեսպանների աղերսանքով ու խնդրանքով ազատեց Քրիստոսի երանելի խոստովանող Բենիամին սարկավագին: Իսկ նա ելնելով չէր դադարում ուսուցանելուց և մկրտելուց պարսից կրակը պաշտողներին ու մոգերին: Եվ մեկ տարի անց, երբ Հոռոմոց դեսպանները վերադարձան, նրա մասին հայտնեցին Հազկերտ արքային, և հրամայեց բերել նրան, և բռնեցին-տարան [արքայի] առջև, նրան ստիպում էին ուրանալ հավատքը և երկրպագել արեգակին ու կրակին: Եվ նա աստվածիմաստ խոսքերով հանդիմանում էր նրանց անհավատությունն ու ասում.

– Աստվածները, որ չեն ստեղծել երկինքն ու երկիրը՝ կկորչեն երկնքի ներքո (Երեմ. Ժ. 11): Ես տարերքը աստված չեմ համարի և մոխրին ու կրակին զոհ չեմ մատուցի. ինչ կամենաս՝ արա անմիջապես:

Այնժամ անօրեն Հազկերտ արքան հրամայեց ձեռքերի ու ոտքերի քսան եղունգների տակ սրած եղեգն խրել: Իսկ արյունը որպես հորդաբուխ առու հոսում էր ձեռքերից ու ոտքերից և ոռոգում հողը: Եվ դարձյալ սրեցին ավելի երկար

եղեգն և անցկացրին ներքին անդամների մեջ և ստեպ-ստեպ հանում ու խրում էին: Բայց այնքան դառն ու չարակսկիծ կտտանքներից չվախեցավ, չզարհուրեց, այլ փառավորում էր Աստծուն և գոհանում, գոհանալուց և աղոթելուց չէր դադարում: Եվ աղաչեց դահիճներին փոքր-ինչ թուլացնել տանջանքը, և ասաց.

– Մի քիչ դանդաղեցեք, ձեզ ասելու բան ունեմ:

Եվ նրանք թույլատրեցին նրան: Նա ձեռքերը երկինք պարզեց՝ դեպի արևելք ու սկսեց աղոթել և ասել այսպես.

– Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, Տերդ և Արարիչդ բոլոր արարածների, որ առաքեցիր Քո միածին Որդուն, որ Քո ճառագայթն ու էությանդ պատկերն է, որ Իր ամեն խոսքով զորությամբը կրում է [տանջանք ու անարգանք], որ Քո կամքով եկավ ու իջավ Կույսի արգանդը, և մարմին հագավ ճշմարտապես ու առանց կասկածի, որ երևաց երկրում և մարդկանց մեջ շրջեց, և այդ կյանքի բոլոր մարմնական տառապանքներով անցավ, և համբերեց խաչի ու մահի, թաղվեց ու հարյավ երրորդ օրը, և, Հա՛յր, համբարձավ Քեզ մոտ՝ երկինք, ուր էր առաջ, և Սուրբ Հոգուն, էակցին ու մշտնջենակցին ուղարկեց աշխարհ, որով ճանաչել տվեց Քո աստվածությունը: Աղաչում եմ Քեզ, Տե՛ր իմ և Աստված, տո՛ւր ինձ պսակը, որ խնդրեցի, որովհետև Դու գիտես, որ ինքս խնդրեցի, թե ամենայն մտքով, ոգով ու կյանքով սիրեցի Քեզ, որ տեսնեմ Քեզ և ուրախ լինեմ ու հանգչեմ և այլևս չմնամ աշխարհում ու տեսնեմ ժողովրդի չարչարանքը, և Քո եկեղեցիների ավերումը, սեղանի կործանումը և սուրբ ուխտի նեղությունը, և հավատացյալների վհատությունը, և երկյուղը ճշմարտությունից դարձածների, այլ ինչի որ կոչվեցի՝ դրան հաստատուն մնամ, և ինչի հրավիրվեցի՝ այն իսկապես կատարեմ: Եվ օրինակ լինեմ քո ամբողջ ժողովրդին, որ արևելքում է, և իմ արյունը տամ նրանց առջև, և նրանց հետ ընդունեմ իմ կյանքը, ուր ո՛չ հոգս կա, ո՛չ հուզմունք, ո՛չ տրտմություն և ո՛չ մտքի խռովք, ո՛չ սպառնալիք և ո՛չ ահը թագավորների, որ ո՛չ կանչում է, ո՛չ վախեցնում, չի տագնապում ու զարհուրեցնում: Ոտքերիս թուլությունը Քեզնով զորանա, Ճանապա՛րհդ ամեն ինչի, անդամներիս հոգնությունը Քեզնով հանգստանա, Օծյա՛լդ, սրտիս վշտերը Քեզնով մոռացվեն, Բաժա՛կդ մեր փրկության, աչքերիս արտասվաց վտակները Քեզնով արգելակվեն, մեր ցնծության Մխիթարություն:

Եվ երբ այս ասաց ու մինչդեռ ուզում էր երկարացնել աղոթքը, շտապ հրաման ելավ արքայից՝ ներել նրան, եթե երկրպագի արեգակին ու կրակին, թե ոչ՝ չթուլացնել նրա տանջանքը և դրանով երկար չարչարել նրան: Եվ հարցրին, թե զոհ կմատուցի՞, նա չհամոզվեց, և արհամարհեց տանջանքը: Արքան հրամայեց երկար գավազան պատրաստել երկսայր սլաքով և անցկացնել նրա որովայնով: Եվ այդպես Քրիստոսի անպարտելի զորականն ավանդեց հոգին հրեշտակների ձեռքը՝ մարտ ամսի քսանչորսին, փառավորելով Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԱԲԴԼՄՍԵՀԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ակսենք նահատակության պատմությունը սուրբ Աբդլմսեհի, որ թարգմանվում է Քրիստոսի ծառա: Նաև՝ սքանչելի զորությունների և բուժումների մասին, որ Աստված նրա անունով կատարում էր Իրեն ապավինողներին: Քանի որ Աստված արդարև սքանչելի է սրբերի մեջ, և փառավորված է նրանց մահը՝ նրա առջև: Եվ մշտապես ականջալուր է նրանց աղոթքին, նրանց բարեխոսությամբ փրկում է իր ժողովրդին, և նրանց նահատակությամբ ամոթահար է անում դևերի բանակները, և խափանելով խորտակում է վիշապի խորամանկությունը, երբ [սա] մարտնչում է Իր սրբերի դեմ: Սրբերը կյանքի արմատ են և առողջություն են տալիս հիվանդացողներին՝ ըստ Տիրոջ անսուտ խոսքի, թե՝ «Ով հավատա ինձ՝ գործերը, որ ես անում եմ, նաև ինքը կանի» (Հովհ. ԺԴ. 12): Եվ այժմ ամբողջ տիեզերքում են նրանց հիշատակները, և երանելի են իրենց կյանքում, և նրանց մահով փառավորվում է Տիրոջ անունը, և սրբերի եկեղեցիները նրանցով են պայծառանում և զարդարում են իրենց մանուկներին Քրիստոսի պսակով: Նրանք բանավոր պատվական ակունք են, փայլուն ավելի քան լուսատուները՝ անմահ Արքա երկնային Թագավոր Քրիստոսի թագին: Որին և աղաչում ենք նրանց աղոթքով օգնել մեզ մեր բոլոր նեղությունների մեջ և փրկել բոլոր փորձություններից: Այստեղ սկիզբ դնենք պատմությանը սուրբ Աբդլմսեհի, որ թարգմանվում է Քրիստոսի ծառա:

Հայոց 91 թվին, երբ իսպառ վերացած էր պարսից իշխանության մոգությունը, և հրեաներն ավելի համարձակ էին Շիգարացոց աշխարհում, մի հրեա մարդ, Շիգար քաղաքից, շատ հարուստ, որի ունեցվածքը բազում էր և անունը Ղևի էր, այն ժամանակ հրեաների մեջ երանելի էր: Նա ուներ բազում որդիներ և նրանցից մեկին ուղարկում էր իր ոչխարներն արածեցնելու: Նա նրանցից փոքրն էր, տասնմեկ տա-

ըեկան, և անունը՝ Ասեր: Սա արածեցնում էր իր հոր եզների նախիրը և տանում ջուր խմեցնելու, ուր գալիս էին բոլոր հովիվները՝ իրենց խաշանց խմեցնելու: Եվ նրա շատ հասակակիցները՝ գալիս էին, հավաքվում այնտեղ: Նրանցից ոմանք քրիստոնյաների զավակ էին, իսկ ոմանք՝ մոգերի: Ու մինչ բազում նախրապաններ հավաքվում էին այնտեղ հաց ուտելու, նրանցից առանձին էին նստում քրիստոնյաները, իսկ մի փոքր հեռու՝ մոգերի երեխաները: Եվ Ասերը միայնակ էր մնում, որովհետև հրեա ընկեր չկար: Եվ [նա] ուզում էր ուտել քրիստոնյա մանկանց հետ, իսկ նրանք զարշ էին համարում հրեության պատճառով: Բայց սիրված էր քրիստոնյաներից: Եվ հնար էին փնտրում, թե ինչպես կարենան նրան մոտեցնել իրենց, և ամբողջ օրը նրան պատմում էին Քրիստոսի հավատի մասին, և սուրբ մարտիրոսների ճգնությունը, որ լսել էին իրենց ծնողներից: Դրանից հետո իրենց սովորության համաձայն մոտակա մի տեղ հավաքվել էին հաց ուտելու: Ասերը ելավ և փութով գնաց նրանց մոտ ու ասաց. «Ո՛վ եղբայրներ իմ սիրելի, ասացեք, թե ի՞նչ հնարքով մոտենամ ձեզ և կերակուր ուտեմ և գարշելի չլինեմ ձեր աչքին»: Պատասխանեցին մանուկները միաբան. «Եթե քո ամբողջ սրտով հավատաս և մկրտվես հանուն Հիսուս Քրիստոսի՝ անմիջապես կխառնվես մեր խմբին, և կմոտենաս մեզ անհապաղ, մեր կերակուրին, ըմպելիքին, ամեն ինչին, քանի որ քրիստոնյաներին չի կարելի ուտել և ըմպել հրեաների հետ»: Պատասխանեց Ասերն ու ասաց. «Ահա՛ ջուրը. ի՞նչն է պակաս ինձ մկրտելու»: Պատանիներն ասում են. «Այդպես չէ, պետք է եկեղեցում քահանայի միջոցով մկրտել»: Ասերն ասաց. «Հիմա մինչև եկեղեցի հեռու է, և մեզ հետ քահանա չկա, իսկ ես իմ հոր և եղբայրների ահից չեմ կարող հայտնապես մկրտվել, ուստի և զրկվում եմ ձեզ հետ միաբան լինելուց, և իմ մտորումներն անիմաստ են դառնում: Եթե իսկապես ճշմարիտ է ձեր Աստված Քրիստոս, և խոնարհ հոգին ընդունելի է նրա առջև, ավելի քան ողջակեզները, ինչպես ինձ սովորեցնում եք, կընդունի իմ խոհերի պատարագը և չի անտեսի կամքիս հոժարությունը, և ձեր միջոցով կիրագործի

իմ մկրտությունը: Արդ, մի՛ հապաղիք, այլ ելեք Քրիստոսի մեծ զորությամբ ու հույսով, մկրտեցեք ինձ հանուն Նրա, և Նա ամեն ինչ կկատարի»:

Երբ պատանիները տեսան նրա հոժարությունը և կատարյալ հավատը Քրիստոսի հանդեպ, հանեցին նրա հագուստը, իջեցրին նրան ջուրը և միաբան այսպես ասացին. «Մկրտվում է Քրիստոսի այս ծառան հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու». և աղոթելիս, մկրտության ժամանակ ասում էին. «Դու՝ Քրիստոս Աստված, հաստատիր բոլոր օրհնությունները, որ ասում են քահանաները լուսավոր մկրտության ժամին, և սրան ընդունիր կատարյալ մկրտությամբ քո բոլոր հավատացյալների հետ»: Եվ երեք անգամ նրան ընկղմեցին ջրի մեջ, ինչպես որ նախապես տեսել ու սովորել էին:

Իսկ երբ նրան ջրից հանեցին, մեկառմեկ մոտենալով համբուրեցին նրան, և իրենց գիրկն առնելով պատվեցին մեծ պատվով, նաև իրենց նոր հանդերձանքից հագցրին և մեծ ուրախությամբ նստեցին նրա հետ ճաշակելու կերակուր: Եվ նրան պատվում էին որպես փեսա առագաստի: Եվ նրա դեմքը պայծառացավ, և լուսավոր ճառագայթներ էին ելնում նրանից, քանի որ Սուրբ Հոգու շնորհներն ընդունեց պատանիների խոսքի միջոցով, և նրան կոչեցին Աբդլմսեհ, որ թարգմանվում է Քրիստոսի ծառա:

Եվ հովիվների խմբերն ու մոգերի որդիները սքանչացած զարմացան այդ հրաշալիքով, որ մարդկանց ձեռքով կատարվեց, որովհետև անուշ հոտ բուրեց նրանց, և ասացին. «Մեծ է քրիստոնյաների այս խորհուրդը»: Ու մինչ նստած էին մանկունք ցնծությամբ, պատվիրեցին Քրիստոսի ծառային զգուշությամբ պահել Տիրոջից ստացած ավանդը և չխառնվել հրեաներին, և ոչ նրանց կերակուրներին: Նա հավանելով խոստացավ մեծապես կատարել նրանց ասածները ջերմեռանդ սրտով՝ հանուն Քրիստոսի:

Նրանցից մեկն ականջին ոսկի գինդ ուներ: Նա ասաց իր ընկերներին. «Քանի հավատի այսպիսի գործ ձեռնարկել հանդգնեցինք, մենք պարտավոր ենք հաստատուն մնալ առանց երկյուղի: Ահա գիտենք, որ հրեաները արուի ականջը

չեն ծակում. արդ, եկեք բացառենք սրա վերադարձը հրեության, ծակենք ականջը և ոսկե գինդն այս անցկացնենք»: Եվ պատանիներին հաճո թվաց, և ասացին. «Բարվոք է ասածդ, այդպես պետք է անել»: Եվ ծակեցին նրա աջ ականջը և ոսկե գինդ անցկացրին: Եվ ելան ըստ սովորության արածեցրին իրենց հոտերը: Եվ մտքում ասում էին, թե ի՛նչպես է հանդիպելու ծնողներին, և կամ ի՛նչպես կընդունեն նրան, երբ տեսնեն գինդը:

Քրիստոսի ծառան արևամուտին խաչներով հանդերձ գալիս է իր մոր տունը: Եվ երբ նա ներս է մտնում՝ մայրը տեսնում է նրան, հառաչելով բարձրացնում է ձայնը և ասում. «Որդյա՛կ իմ, Ասեր, քեզ ի՞նչ է եղել. այդ ի՞նչ է քո ականջին, կամ ո՞վ խաբեց քեզ, և քո հոր տանը այսպիսի մեծամեծ չարիք հասցրիր: Չէ՞իր լսել օրենքը, որ պատվիրեց Մովսեսը, թե չծակվի իսրայելացի արուի ականջը, եթե ծառան կամենում է հավիտյան բնակվել իր տիրոջ հետ: Այժմ, եթե հայրդ իմանա՝ նա ինքը քեզնից կլուծի օրենքի վրեժը: Եվ չգիտեմ՝ քեզ ի՞նչ անել, քանի որ ականջիդ այդ նշանը թաքցնելու չէ»: Այնժամ սուրբն սկսեց քաղցրությամբ ասել իր մորը. «Մի՛ երկնչիր, մայր իմ, և քո մտքերը այս բանի համար քեզ չնեղեն, որովհետև ես այժմ քրիստոնյա եմ և ծառա Քրիստոսի և հավիտյան պաշտում եմ Նրան, Նա իմ Տերն ու Աստված է: Մովսեսի օրենքը չի պատժում ծառաներին, որ սիրում են իրենց տերերին: Նա հրամայեց ականջը գավթի դռան մոտ ծակել, որպեսզի իր տիրոջը ծառայե հավիտյան: Այսպես պատահեց և ինձ այսօր, մկրտության դռան մոտ ծակվեց իմ ականջը, և հաստատվեց իմ ուխտը Նրա հետ հավիտյան»:

Մայրն ասում է նրան. «Ինչո՞ւ այդպես չտապ քրիստոնյա դարձար, կամ ո՞վ արեց քեզ Քրիստոսի ծառա, և կամ ո՞վ սովորեցրեց այդ բաները, որ խոսում ես»: Սուրբն ասում է. «Նա, որ աշակերտներին ասաց՝ «Ով ինձ հավատա՝ չի ամաչի հավիտյան»: Ու դարձյալ ասում է. «Երբ ձեզ տանեն դատավորների առջև՝ մի՛ հոգացեք, թե ինչ խոսեք: Որովհետև այժմ ձեզ կհուշեմ մի բան, որ ձեր թշնամիները հակառակվել

չեն կարողանա: Նա է, որ սովորեցրեց ինձ և խոստացավ բազում այլ բաներ ուսուցանել»: Եվ մորը պատմեց ամեն ինչ որ լսել էր պատանիներից, և՝ թե ինչպես մկրտեցին նրան ջրով, և կամ ի՛նչպես իրենից վերացավ նեխության աղտեղությունը և բուրեց հոտ անուշության ի Քրիստոս: Իսկ նրա մայրը իմաստությամբ լսում էր նրա ասածները և մտածելով սքանչանում էր նրա գեղեցիկ տեսքով: Եվ նրան 30 օր թաքցրեց իր տանը, խանդաղատում էր նրան և երկյուղ ուներ թե հանկարծ նրա հայրը չիմանա և բարկանալով սպանի նրան իր ազգի նախատինքի համար և հրեաների երկյուղից:

Իսկ սուրբը ամեն օր առավոտ կանուխ դաշտ էր գնում իր խաչներն արածեցնելու նրանց հետ և իր ընկերներից սովորում էր հաստատուն մնալ Քրիստոսի հավատին: Եվ երեկոյան մութին վերադառնում էր մոր մոտ: Նրա հայրը, քանի որ զբաղված էր իր տան աշխարհական գործերով այն օրերին չէր հետաքրքրվում իր զավակով:

Հայրերից ոմանք այն պատանիների, որ առիթ եղան նրա փրկության, պատահեցին մի վանքում, որ Վերին Շեգարում էր, սուրբ Պողոսի և նրա հետ նահատակված երեք մանկանց տոնին, լսեցին այն սրբերի պատմությունը և եկան իրենց տներում պատմեցին սրբերի նահատակությունը: Եվ օրհնում էին Աստծուն: Եվ պատանիները լսեցին դա իրենց հայրերից, խոսում էին միմյանց հետ այնտեղ, որ սովոր էին հավաքվել միասին: Եվ սուրբը երբ լսում էր՝ առավել ևս հաստատվում էր հավատքի մեջ և բորբոքված էր ի սերն Աստծու, որովհետև նրա վրա ծագել էր Քրիստոսի լույսը, և իմանալով սրբերի ճգնությունը՝ աղոթում էր սրբությամբ արժանի լինել այն սրբերի պսակներին:

Եվ մի գիշեր, մինչ ննջում էր իր մոր տանը, տեսավ իրեն իբր խավար գուբի մեջ էր և չարչարվում, տանջվում էր Դաղանի ու Աբիրոնի ժողովրդի հետ (Թվեր, ԺԶ. 27-33): Եվ հառաչանքով մռնչում էր ու լալիս դառնորեն խավարի մեջ, որ բռնված էր: Մտքով անցկացրեց պատանիների ասածները և Քրիստոսի լույսը: Ու մինչդեռ տագնապում էր տանջանքի մեջ և խորհում էր, թե ի՞նչ կլինի, հանկարծակի երևաց լու-

սավոր կերպարանքով մի երիտասարդ և իշխանաբար բախեց խավար դուրի [դուռը] և մանկան աջը բռնելով հանեց դուրից և նրան կանգնեցրեց մանկանց մեջ, որ նրա շուրջն էին, և [սրանք] ձայները բարձրացնելով օրհնում էին Աստծուն: Եվ նա մտքում ասում է. «Ո՞վ ես, Տեր, ի՛նչպես առաջնորդ եղար ինձ նեղության մեջ և փրկեցիր ինձ»: Երիտասարդն ասում է. «Ես եմ Քրիստոսը, որին հուսացիր դու և դիմեցիր իմ անվանը: Արդ, զորացի՛ր և մի՛ երկնչիր, որովհետև քեզ օթևան է պատրաստված այս մանկանց հետ, և կան ու պահվում են քեզ անապական և հավիտենական պսակներ: Եվ կարճ ժամանակ անց քեզ կընդունեմ ինձ մոտ, քանի որ Ինձնով զգեստավորվեցիր այս մանկանց միջոցով, և որոշել եմ քեզ դարձնել Իմ արքայության ժառանգորդ»: Այնժամ սուրբը երկյուղով բռնված՝ ընկավ երեսնիվայր և փառավորում էր Աստծուն և ասում. «Գոհանում եմ քեզնից, Քրիստոս, Տեր իմ և Աստված իմ, որ փրկեցիր ինձ խավար կապարանից ու չարաչար տանջանքներից, աղաչում եմ Քեզ, Տեր իմ, պատմիր ինձ նրանց մասին, որ տանջվում էին ինձ հետ, ովքեր են: Որովհետև երբ ես դուրից ելնում էի, խորխորատը նորից փակեց իր բերանը նրանց վրա»: Քրիստոս ասում է նրան. «Նրանք են, որ խաչեցին ինձ, քո հոր տան ազգը»: Սուրբն ասում է. «Տե՛ր Հիսուս, մի՛ հեռացնիր ինձ Քո ողորմությունից, այլ հաստատ պահիր կատարելու Քո կամքը, լինելու Քո ճշմարտության քարոզիչ, որպեսզի տեսնեմ և հագենամ Քո աստվածության լույսով՝ երբ երևա Քո փառքը»:

Ու մինչ այս ամենը խոսում էր սուրբը, նրա ձայնից արթնացավ մայրը, արթնացրեց որդուն և ասաց. «Քեզ ի՞նչ եղավ, որդյա՛կ իմ, և ի՞նչ է խոսքդ, որ խոսում ես ասես սիրելիիդ հետ»: Սուրբը գոհությամբ պատասխանեց և ասաց մորը. «Քրիստոսն է, որին հավատացի և մկրտվեցի հանուն նրա, և հանեց ինձ խավարի դուրից և դժոխքի անդունդից և կապանքի տնից: Նա՛ էր, որ խոսում էր ինձ հետ»: Ասում է մայրը նրան. «Ինչպես է Նրա տեսքը»: Սուրբն ասում է. «Գեղեցիկ տեսքով երիտասարդ, որ ի վիճակի չեմ պատմելու: Նրա դեմքից փայլեր էին արձակվում, Նրա հագուստը պատռած և կողը խոցված էր, ձեռքերն ու ոտքերը մեխերով ծակված, և Նրա վրա գիր՝ «Սա է Քրիստոս Հիսուս, որին հրեաները խաչեցին Երուսաղեմում, որ Իր վրա վերցրեց Ադամի հանցանքը. սա է Գառն Աստծու, որ վերացնում է մեղքը աշխարհի, և ինքն է օրենսդիր ու սրբերի ժողովարան, և նահատակների պսակիչ»: Եվ ես տեսա շուրջս իմ հասակակիցների, որ օրհնում էին Նրան ու ասում. «Ո՛վ Տեր, փրկի՛ր, ո՛վ Տեր, առաջնորդիր, Օրհնյալ, որ գալիս ես Տիրոջ անունից, օվսաննա բարձունքին, օրհնություն Դավթի որդիներին»: Եվ մինչ նրանք փայլում էին զանազան պսակներով, նրանցից ոմանք իրենց ձեռքին ունեին արմավենու ոստեր, մյուսները ոսկե բաժակով մատուցում էին իրենց արյունը՝ երկնային Թագավորի առջև ցնծագին ուրախությամբ, և ասում էին. «Սա է մեր Աստվածը, որին հուսացել ենք. կցնծանք և ուրախ կլինենք Նրա փրկությամբ»: Այսպես և ես, մա՛յր իմ, ցանկացա դասակից լինել լույսի մանուկների առագաստին և նրանց հետ երգել օրհնության երգեր, բայց չէին թողնում ինձ իսկույն մոտենալ նրանց: Իսկ իմ անձը կարոտում է խառնվելու նրանց, և երանի մնացած լինեի տեսիլքով ուրախանալու այն սրբերի մեջ: Այն քունը արթնությունից ավելի էր: Զի եթե երազի մեջ այնպես լուսավոր և հաճելի էր այն երևույթը, ո՞րքան առավել՝ եթե դեմ-հանդիման տեսնեմ աննվազ և անսպառելի Լույսը: Եվ իմ հոգու բաղձանքն ինձ ստիպում է լինել նրանց բազմության հետ, և հույժ զարնված եմ նրանց սիրով: Եվ ինձ նախընտրելի էր մեռնել նրանց հետ, քան ստանալ լայնատարած այս աշխարհի վայելչությունը»:

Երբ մայրը լսեց այս ամենն իր որդուց, տագնապած պղտորվեց նրա սիրտը այս խոսքերի համար և ջանում էր թաքցնել իրողությունը, որ չլսեն նրա հայրն ու եղբայրները: Եվ ասում է. «Որդյա՛կ, քո խոսքերը պղտորեցին իմ միտքը, չէ՞ որ երազները մեծ մասամբ սուտ են»: Սուրբն ասում է. «Ավելի շատն այն է, որ ճշմարիտ է, ինչպես իսրայելացիներինը, կամ այն ժամանակ՝ Հովսեփը Փարավոնի օրոք, Դանիելը՝ Բաբելացոց օրոք,- արդարանում էին մեկնությամբ: Բայց ես դեմ-հանդիման տեսա սքանչելիքը Նրա, որ Տեր Հիսուս

Քրիստոս ինձ հայտնեց: Արդ դու կլինես իմ քարոզչության սկիզբը, ո՛վ մայր իմ, և հավատա՝ ում ես հավատացի և ինձ պատրաստեցի մեռնելու Նրա հետ»: Երբ իր որդուց լսեց մեռնելու մասին՝ հորդաբուխ արցունքներով սկսեց լալ: Սուրբն ասում է նրան. «Ո՛վ մայր իմ, մի՛ լար, և թող չխռովվի քո սիրտը, որովհետև ահա Հովսեփի մեռնելուց հետո նրա ոսկորները ամուր պարիսպ եղան իր ազգին, ու եթե կենդանի չէին Աբրահամն ու Սահակը, Հակոբը, Աստված Մովսեսին չէր ասի. «Ես եմ Աստվածն Աբրահամի, Սահակի և Հակոբի»,- և մեռելների Աստված չէ, այլ ողջերի: Արդ ճշմարիտ կենդանի են Աստծու առջև նրանք, որ մեռնում են Նրա հույսով: Այժմ քեզ աղաչում եմ, մայր իմ, լսի՛ր իմ խոսքը և հավատա՛ Քրիստոսին, և մկրտվիր հանուն Նրա, և կփրկվես նրանց չարաչար տանջանքներից, ովքեր խաչեցին Նրան, և կատարյալ կլինի քո անունը որդուդ մոտ բերկրանքով՝ անանցական աշխարհում, և կլինես ինձ մայր, հավերժի մեջ: Արդ, մի՛ հանիր քո մտքից իմ խոսքն ու պատվերները, այլ հավատա՛ Նրա ճշմարտությանը, որ բարձր է ամեն խորհուրդից ու մտքից»:

Այնժամ մոր խավարյալ մտքին աստվածգիտության լույս ծագեց, և որդուն պատասխանելով ասաց. «Հավատում եմ Աստծուն, որին հավատացիր, որդյակ իմ, և պատշաճ պահի կիրագործեմ խոսքս: Առայժմ մեր խորհուրդները ծածուկ մնան քո հորից ու եղբայրներից, որ չլսեն ու սպանեն ինձ ու քեզ»:

Եվ սուրբն առավ մախաղն ու իր հովվության ցուպը, ասաց. «Ո՛ղջ եղիր, մայր իմ, քեզ հանձնում եմ Քրիստոսին: Ես գնում եմ իմ ընկերների մոտ, և եթե ուշանամ՝ դու ևս արի իմ ետևից»: Այս ասում էր նախանշելով իր մահը և մոր հավատքը:

Ու ելավ սովորության համաձայն գնաց իր հոտերի ետևից: Եվ երբ մի փոքր հեռացավ՝ հանդիպեց մի եպիսկոպոսի. սուրբը գնաց ընկավ նրա ոտքերն ու ասաց. «Աղաչում եմ քեզ, տեր իմ, օրհնի՛ր ինձ և կնքիր սուրբ Խաչի նշանով, և կատարիր իմ մկրտությունը»: Եպիսկոպոսն ասում է. «Ո՞րտեղից ես ինձ ճանաչում կամ ո՞վ պատմեց քեզ իմ մասին, քանի որ

եպիսկոպոսական գգեստով չեմ»: Սուրբն ասում է. «Ով որ ինձ հայտնեց քո մասին, իսկ քեզ ճանապարհ հանեց գալու ինձ մոտ, Նա ծանուցեց»: Զարմացած եպիսկոպոսն ասում է նրան. «Եվ ես ստացել եմ քեզ օրհնելու պատվեր՝ քեզ պսակելուց առաջ, և օրհնյալ կլինես»: Եվ իր աջ ձեռքը դրեց նրա գլխին՝ նրան ավանդելով Սուրբ Հոգու շնորհները, և ասաց. «Գնա՛ խաղաղությամբ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, հաճո եղար Նրա առջև, և արժանի եղիր Քրիստոսի չարչարանքով մահուն. և մանկունք, որ քեզ մկրտեցին՝ հրավիրված կլինեն հրեշտակների կարգը»: Այսպես արեց ծերունին ու գնաց իր ճանապարհը:

Իսկ սուրբը գնաց մանուկների՝ իր ընկերների մոտ ու պատմեց նրանց տեսիլը, որ տեսավ, և ամեն եղածը: Եվ [նրանք] զարմացան սքանչելիքից և երկյուղով լցվեցին լսածից, քանի որ կատարվեց նրա մկրտության խորհուրդը, և թե ինչպես զորությամբ լցվեց Քրիստոսի ծառան՝ պատահած տեսիլքով: Եվ այն օրը ուրբաթ էր, և հրեաների մեծ տոն էր, և նրա հայրը մեծ ուրախություն էր անում այն օրը: Հրավիրեց իր ազգատոհմը և սիրելիներին ընթրիքի և ուղարկեց, որ կանչեն իր որդուն: Եվ նրա եղբայրները շաբաթամտին հավաքվել էին հրավիրված տեղը: Թեև մոտ էր Ասերը, խուսափեց մտնել իր հոր տունը, իսկ ծառաները հետամտելով բռնեցին նրան և տարան հրեաների հավաքին:

Երբ նրա հայրը տեսավ [նաև մյուս հրեաները] նրա ականջագինդը, զայրացավ և ասաց նրան. «Ասեր, ո՞վ խաբեց քեզ և այդպես խայտառակ արեց. չէ՞ որ դա ծառաների կերպարանք է, որոնք մնացել են իրենց ազատության մեջ»: Սուրբն ասում է. «Մի՛ խռովիր, հայր, գիտեմ ասածդ, որովհետև ես Քրիստոսին ծառա գրվեցի և քրիստոնյա եմ»: Երբ հայրը դա լսեց, մեծ ցասումով զայրացավ, խփեց նրա երեսին, գցեց ժողովրդի մեջ և ոտքով կոխոտում էր: Հավաքվածները ելան նրան փրկելու և ասում են. «Իսպառ մի՛ բարկանար, եղբայր, որովհետև մանուկ է և կարող է զղջալ և ուղղության գալ, մանավանդ այսօր, թո՛ւյլ տուր դրան, որ մեր ուրախությունը չխափանի, քանզի այսօր մեծ զատիկ է»:

Այնժամ բոլորը լռեցին և նստեցին ուտելու, ըմպելու և ուրախանալու: Եվ նրան ողոքելով կանչում էին, որ ուտի իրենց հետ, և նա ասում է նրանց. «Մի՛ խռովիք, որ ես քրիստոնյա եմ, և քրիստոնյային պատիվ չէ ուտել հրեայի հետ»: Եվ հայրն ամոթահար եղավ այս խոսքերից, ելավ նորից ծեծելու նրան, և չթողին:

Երեք անգամ ասում են սրբին՝ «Ե՛կ, որդյա՛կ, կե՛ր մեզ հետ, և մեղմացրու քո հոր զայրույթը, քանի որ ներեցինք Մովսեսի պատվիրաններն արհամարհելդ այն բանի համար, որ ականջիդ է՝ քո տգիտության պատճառով, նաև այս տոնի պատվին: Արդ, լսի՛ր, որդյա՛կ, արի՛, կեր մեզ հետ»: Սուրբն ասում է. «Թե իմանայիք եղած սքանչելիքը՝ չէիք ստիպի, որ ուտեմ ձեզ հետ, բայց քանի որ Մովսեսի օրենքի նույն առագաստը կա ձեր սրտերի վրա, ուստի խորհում եք այդպես»: Իսկ նրանք, երբ լսեցին՝ զարմանում էին խոսքի կորովությունից և միմյանց ասում էին. «Մի՞թե դրան տեսիլ է երևացել, որովհետև դրանք հրեայի խոսքեր չեն, իսկ դա չի տկարանում Աստծու առջև: Քանզի մարգարեներին բաղում փառավորություն եղավ մանկության ժամանակ, ինչպես Մովսեսին, Հեսուին, Գեդեովնին, Սամփսոնին, և Դավթին, Սողոմոնին, Երեմիային, և Դանիելին, Անանիաններին և սրանց նմաններին: Զէ՞ որ մեծ բան չէ, եթե այժմ լինի մեր ազգից, որովհետև փոքր բան չենք Իսրայելի ցեղերի մեջ, և Աստծու օրենքը մեր պարծանքն է»: Սուրբն ասում է նրանց. «Ում որ խաչեցին մեր հայրերը Երուսաղեմում, Նրան տեսա և գիտեմ, որ Նա Գառն է Աստծու, որի մասին վկայեց Հովհաննեսը Հորդանանում, և ես մկրտվեցի հանուն Նրա, և Նրա ճշմարտության համար կմեռնեմ: Իսկ դուք եթե չքավվեք Նրա մկրտությամբ՝ պարտական կլինեք ձեր հայրերի գործերի համար, քանի որ արդար արյուն հեղեցին և իրենք կորան իրենց անօրինությունից: Իսկ ովքեր հավատացին Նրան՝ փրկվեցին: Ահա ձեզ ասացի. վերացրեք պատվակը, որ կա ձեր սրտերի վրա և կհավատաք ու կմկրտվեք, և կքավվեն ձեր մեղքերը»:

Այնժամ բոլորը ցասումով լցվեցին այս խոսքերից և գրգռում էին նրա հորը, որ կորցնի նրան: Իսկ նրա ծառաները, երբ աղմուկը տեսան, թողին սրբին, որ փախչի: Այնժամ նրա հայրը Ղևին ելավ, գազանաբար հարձակվեց դառնացած սրտով, առավ դաշյունը, գնաց նրա ետևից, և մանուկը նրա առաջից արագ-արագ գնաց մինչև ջրհորը, ուր մկրտվեց, և իրիկնադեմ էր: Եվ դառնալով դեպի հայրը՝ ասաց. «Ո՛վ արյունարբու գազան, պահիր քո շաբաթը և քո սուրը իր տեղը դարձրու, եթե Մովսեսի աշակերտ ես, պարտքի տակ մի՛ դցիր անձդ, որ օրինազանց լինես, իսկ եթե քրիստոնյա ես ինձ նման, ձեռքդ մի՛ շաղախիր Քրիստոսի ծառայիս արյունով: Սա ոչ թե ինձ սպանելուդ համար եմ ասում, այլ որպեսզի դու գեհենի որդի չլինես»: Նրա հայրը լսելով այս ամենը՝ առավել ևս զայրացավ և կրճտում էր ատամները նրա վրա: Իսկ սուրբը հասնելով այնտեղ, ուր մկրտվեց, ծունր իջավ լալով, աղոթում էր ասելով. «Ո՛վ Քրիստոս, Քեզ հավատացի, ինձ ընդունիր Քո սուրբ անվամբ մկրտվածների շարքը և այս ջրհորի վրա դուռ բաց ինձ, մտնելու քո վկաների մոտ և խառնվելու Քո նահատակների դասին: Ահա քեզ եմ մատուցում արյունս՝ սուրբ պատարագ, որ Քո Տերությանը հաճո լինի անուշաբույր, և իմ ընկերների հետ, որ ինձ ցույց տվիր, քեզ փառավորեմ արժանի արա և ինձ, փառավորել Քեզ և մտնել իմ Աստծու սեղանիդ առջև, որ ուրախ ես դարձնում իմ մանկությունը: Քեզ օրհնությամբ խոստովանեմ, Աստված, Աստված իմ: Իսկ իմ թշնամական ու նենգավոր հորը մեղք մի՛ համարիր սա, քանի որ չգիտե՝ ինչ է անում: Նաև իմ մորը, որ ծնեց ինձ, տո՛ւր չարչարակից լինել իմ մահվան՝ պսակակից Քո հատուցումներին: Եվ ովքեր կատարում են իմ հիշատակը և հիշում են ինձ նեղության պահին, լսիր և ողորմիր, և օգնիր նրանց և բժշկիր ախտերն ու ցավերը հոգու և մարմնի: Ահա իմ սրտի խորհուրդն ու արյունս Քեզ պատարագ եմ մատուցում, այն բանի փոխարեն, որ ինձ եղբայրդ անվանեցիր, և ինձ հանեցիր տիղմի դուրից և ցույց տվիր ճշմարտությունդ, և ինձ դարձրիր Քո անվան քարոզիչ և չգարշեցիր իմ հայրենի պղծությունից: Ահա որպես դառ

ինքս ինձ ի սպանդ մատուցեցի Քեզ, Քեզ համար պարանոցս սրի դեմ դրի և եղա օտար իմ եղբայրներին, հեռացա իմ մոր որդիներից: Ո՞ւր եք, եղբայրնե՛ր իմ սիրելի, եկեք տեսեք իմ պատերազմը. ձեզ քարոզելու փոխարեն՝ եկեք ուրախացեք ձեր վարդապետության պտուղով: Ահա այժմ ավարտում եմ իմ ճանապարհը՝ որ հարթեցիք ինձ համար: Եկեք զվարճակից եղեք ինձ իմ փեսայանալու օրը և ուրախացեք իմ արյան բխմանը, որ հեղեցի Քրիստոսի սուրբը արյան համար: Իմ ընկերակիցներ ու սննդակիցներ, ո՞վ ձեզնից թաքցրեց իմ պսակման օրը: Սա է ժամանակը հայտնելու սիրելիներին, և՝ ովքեր ճանաչում են եղբայրներին: Ձեզ ո՞վ ցույց կտա իմ արյան հեղումը և նահատակակից կլինի ճգնության: Ո՛ղջ եղեք այժմ և աղոթեցեք, որ արժանի լինեմ ձեզ տեսնելու Թագավորի առագաստին: Ո՛ղջ եղիր,- ասում է,- մա՛յր իմ, որ ծնեցիր ինձ և քո գրկում կրեցիր ինձ: Ո՛ղջ եղեք, եղբայրնե՛ր իմ, իմ մոր որդիներ. երանի թե կյանքի արգանդից ինձ եղբայր լինեիք»:

Ու մինչ սուրբը խոսում էր այս ամենը, հայրը գազանաբար հարձակվեց նրա վրա, և սրբի գլուխը խոնարհեցնելով վեմի վրա, որ ջրհորի ափն էր, կտրեց պարանոցը ձեռքի սրով: Եվ հեղեց արյունը վեմի վրա: Եվ սուրբը թավալվելով իր արյան մեջ՝ ասում է. «Տեր իմ Հիսուս Քրիստոս, իմ հոգին Քո ձեռքն եմ հանձնում»:

Իսկ հայրը նրա վախճանվելուց հետո գնում է իր տունը, հիմարացած, ավետիս է տալիս մորն ու եղբայրներին Ասերի մահվան մասին և ցույց է տալիս նրանց սրբի արյամբ թաթավ սուրը: Այդ լսելով՝ մեծ կոծ արեցին նրա համար: Իսկ մայրը թեև դառնացած էր որդու մահվան սգով, բայց մխիթարում էր ինքնիրեն, քաջալերված իր որդուց լսածներով և խորհում էր ժամանակ գտնել, որ հավատա ու մկրտվի ի Քրիստոս: Եվ հույս ուներ, թե սրբի հավատով արժանի լինի տեսիլին, որ երևաց: Եվ քիչ օրեր անց կառուցվեց սրբի վկայարանը, և մայրը ծածուկ մկրտվեց իր որդու գերեզմանի մոտ:

Հաջորդ օրը սովորության համաձայն երիտասարդներն եկան այն տեղը և տեսան սրբի մարմինը արյան մեջ, ձայնեցրը բարձրացրին ու լացին դառնապես, պատռելով հանդերձները ծեծում էին իրենց երեսները և ասում. «Ո՛վ սուրբ դառդ Աստծու, ո՞վ նախանձեց քո գեղեցկությանը, կամ ո՞վ ապականեց քո պայծառ գեղեցկությունը, ո՞վ շաղախեց իր ձեռքը քո արյունով, եղբա՛յր մեր, կամ ո՞վ զրկեց մեզ քո եղբայրությունից: Ո՛վ ծնունդդ մեր քարոզության և մեր ուսման ծաղիկ ցանկալի, պատարագ՝ կանխավ արված մեր ձեռքով: Արդ ստույգ գիտենք, որ հաճեց Տերը քեզ՝ պսակյալիդ, քեզ հանեց տիղմի գուբից, ինչպես պատմեցիր մեզ: Ահա այնտեղ բազում են քո եղբայրները, որոնց դու տեսար, և այժմ մենք, այստեղ ենք, և լսելիքները չեն լսի քո քաղցրաբարբառ խոսքը: Քրիստոսի ծառա և ճշմարիտ վկա, որ այժմ մոտ ես Նրան, աղաչիր մեզ համար, արժանանալու քո տեսությանը վերին Երուսաղեմում և ցնծալու քեզ հետ՝ երբ խառնվես ճգնավորների դասերին, և Նրա գալստյանը ընդառաջ ելնել՝ պատրաստ և հաղթական պսակներով»:

Նաև այլ բազում այսպիսի խոսքերով լալիս ու ողբում էին նրան: Եվ յուրաքանչյուրը ցուպ վերցրեց, փորեցին հողը և թաղեցին երանելիի մարմինը հողը արյունախառն հավաքելով, իջեցրին գերեզման: Ու հառաչելով երկնքին էին նայում ու ասում. «Արդ կքաջալերվենք, Քրիստոս, դիմելու Քեզ. լսի՛ր այժմ, կատարիր օրհնություններս, որ լինում են թաղման ժամին հրավիրվածներիս՝ քահանաների ձեռքով, կատարիր այժմ այս սրբի թաղմանը»: Եվ կափարիչ դրեցին վեմը, որի վար սպանվեց Քրիստոսի ծառան, և տրտմագին գնացին իրենց տները: Այս ամենն արեցին շտապով, որովհետև օրն իրիկնանում էր, իսկ երկիրը գազանների բնակատեղի էր: Եվ նրանցից ոչ ոք իր տանը չպատմեց եղածները, որպեսզի նրանց չասեն՝ «Դուք եղաք նրա մահվան պարտական՝ նրա մկրտությամբ»: Բայց նրանք չէին դադարում ամեն օր գալ նրա շիրմին, լալ ու ողբալ:

Իսկ քիչ օրեր անց, անցորդ վաճառականներ էին գալիս իրենց ուղտերով ու գնում արևելքից արևմուտք: Եվ գիշերով գալով սրբի գերեզմանի մոտ, տեսնում էին՝ վառ կրակ կար սրբի տապանի վրա, որ լուսավորում էր ամեն կողմ: Վաճա-

ռականներից ոմանք թեքվեցին տեսնելու մեծ սքանչելիքը: Եվ երբ հասան սրբի գերեզմանին՝ տեսնում էին վեմը, որի տակից լույս էր ելնում արեգակի ճառագայթների նման, և սքանչացան: Եվ այնտեղից անուշ հոտ էր բուրում, ավելի քան բոլոր անուշ խունկերը: Ու քանի որ հավատացյալներ էին այդտեղ եկողները, իմանալով՝ իրենց մտքում ասում էին. «Սա մեծ գանձ է և սուրբ վկաներից մեկը և հայտնի չեղավ այս աշխարհում: Եկեք դրան վերցնենք և տանենք մեր երկիրը և հոգևոր շահ ստանանք ի Քրիստոս, որին հավատացինք: Որովհետև Նա պատմեց մեզ և ցույց տվեց և կամեցավ այս վկայի պատվական ոսկորներով օգտավետ դարձնել»: Եվ բանալով հողը՝ վերցրին գերեզմանի կափարիչ վեմը, առան սրբի արյունաթաթախ մարմինը և տեսան շատ դեռատի հասակը, իմացան, որ նոր է մահացել սուրբը: Փռեցին պատվական կտորներ, փաթաթեցին նրան ու վերցրին իրենց ընկերների մոտ ավետելու թե՝ «Այսօր մեծ գանձ գտանք»: Եվ ուրախությունից չէին հետևում իրենց գնալու վայրին, այլ դարձան իրենց աշխարհը: Եվ այլևս գերեզմանից լույս չերևաց, և հաստատվեցին իրենց հավատով սրբի հանդեպ:

Նրանց մեջ մի հավատացյալ մարդ կար, շատ հարուստ՝ բազում ունեցվածքով, անունը Նաթեր, նրա կինը ամուլ էր: Նա հայտնապես իր ընկերների առջև ուխտեց, ասելով. «Եթե Աստված այս սրբի աղոթքով արու զավակ տա ինձ ու մխիթարե ինձ ու տիկնոջս, իմ ծախքով սրան աղոթատուն կկառուցեմ և կպատվեմ այնտեղ սրա ոսկորները իմ ամբողջ կյանքում, կզարդարեմ [աղոթարանը] ամեն տեսակ երևելի սպասքով՝ ինչ որ հարկ է, և այս սրբին կանեմ ինձ որդի ու ժառանգորդ իմ ծնունդների փոխարեն: Եվ երբ ստուգեմ սրա ինքնությունը, տուն կկառուցեմ սրա հիշատակին, և իմ որդուն, որ Աստված կտա, այս սրբի աղոթքով՝ կանվանեմ իր անվամբ: Եվ սուրբն այս ինձ որդի կլինի, իսկ ես կլինեմ իր աշակերտն ու ծառան: Եվ Քրիստոս սրա հետ ինձ բաժին կհանի անանցական աշխարհից»:

Իսկ երբ հասան իրենց երկիրը, այն մարդը վերցրեց սուրբ վկայի մարմինը, մեծ պատվով դրեց իր տանը, ցույց տվեց

յուրաքանչյուրին և պատմեց ուխտը, որ դավանեց Աստծու առջև հանուն սրբի: Երբ [նրանք] լսեցին՝ ցնծացին ու փառավորեցին Աստծուն, որ ընդունի ուխտը և սրբի աղոթքով կատարե նրանց խնդրանքը: Եվ Աստված բացեց նրա կնոջ արգանդը, և հղացավ, և ուրախություն եղավ նրանց մեջ: Այնժամ հավատացյալ այրը շտապեց վկայարան կառուցել սրբին և արագորեն վերջացրեց, զարդարեց պես-պես սպասքով, և ինքն ու ընտանիքը շտապով այնտեղ աղոթում էին և Աստծուն աղաչում էին, որ շնորհի իրենց խնդրածը, և իմանան Քրիստոսի նահատակի անունը:

Իսկ սրբի ընկերները երբ եկան այնտեղ ըստ սովորության ողբալու, տեսան վեմը գլորած, իսկ գերեզմանը՝ դատարկ, և միայն անուշ հոտ էր բուրում այնտեղից. հիացան բոլորը մեծ երկյուղով, հառաչեցին բարձրաբարբառ: Մեկն ասում էր. «Գազանը հափշտակեց»,- և մեկը՝ «Իր հայրն է տարել թաղելու»: Եվ սքանչացած գնացին իրենց տները, և բոլորին պատմեցին եղելությունը, թե ինչպես մկրտեցին նրան, կամ ինչպես էր նա խոսում իրենց հետ, կամ ինչպես գտան նրան անկենդան, ինչպես թաղեցին նահատակին: Եվ արագորեն տարածվեց նրա համբավը ամեն տեղ, թե՝ Ղևին որդուն սպանեց քրիստոնյա լինելու պատճառով: Այս համբավից և երիտասարդների պատմածից ճշմարտությամբ իմացան, որ Ասերն սպանվեց իր հոր ձեռքով հանուն Քրիստոսի: Եվ այժմ արդարև Ասերը հարուստ է և հարստացնող, քանի որ Ասեր՝ նշանակում է հարստություն:

Այն հավատացյալները ջերմեռանդ հավատով ելան գնացին այն տեղը և տեսան նրա արյունով ներկված վեմը, և գինդի հետքը քարի վրա, ուր դրոշմված էր գինդի չափի գիծը և ասացին. «Արդարև մեծ գանձ հեռացավ մեր աշխարհից»: Եվ գերեզմանի վրա փոքրիկ վկայարան կառուցեցին և այն վեմը դրին վկայարանի մեջ: Եվ վեմի վրա կանգնեցրին տերունական խաչի Նշանը և վրան գրեցին. «Սա Քրիստոսի վկա սուրբ Աբդլմսեհի կատարման վայրն է»: Եվ այն աշխարհի հավատացյալները միշտ գալիս էին տարբեր կողմե-

րից, նրա անվամբ բուժվում էին իրենց հիվանդություններից: Եվ տարածվեց համբավը բժշկության, որ Տերն անում էր սրբի միջոցով՝ ամբողջ արևելյան աշխարհում: Եվ երբ մյուս տարին եկավ, այն վաճառականները եկան անցնելու նույն ճանապարհով, սրբի գերեզմանի մոտով: Երբ հասան երանելիի անվան [հետ կապված վայրը], մեծ փափագով մտան աղոթելու սրբի վկայարանում: Եվ տեսան վկայարանի մեջ դրված վեմը և նրա վրա՝ սուրբ խաչի Նշանը, հարցրին անցորդներին՝ «Ի՞նչ է այդ սրբի անունը, ինչո՞ւ պսակվեց դա»: Եվ պատմեցին նրանց ամբողջ ճշմարտությունը:

Իսկ իրենք ուրախությամբ լցված պատմեցին եղած սքանչելիքները, թե ինչպես գերեզմանի վրա բորբոքվում էր հուրը, կամ ինչպես սրբի մարմինն առան-տարան իրենց աշխարհը և կառուցեցին վկայարան հավատացյալ այրի ձեռքով, և բժշկությունները, որ լինում էին սուրբ վկայի միջոցով: Իսկ սպասավորները խնդրում էին սրբի նշխարներից մի մաս՝ ի պատիվ վկայարանի: Քիչ օրեր անց շնորհեցին սպասավորների ցանկացածը:

Իսկ հավատացյալ այրը, որ առել էր սրբի մարմինը, երբ իր տուն դարձավ, գտավ իր կնոջը՝ ծնած որդի գեղեցկատես ու գվարթ երեսով: Եվ առավ որդուն, մկրտեց սրբի վկայարանում, և անվանեց նրան Աբդլմսեհ՝ սրբի անունով, ինչպես և տեսավ վեմի վրա գրվածը: Եվ մեծ ուրախություն արեց այն օրը ամբողջ ժողովրդին: Իսկ սուրբը տեսիլքով երևաց նրա կնոջը՝ ծնունդից առաջ և ասաց. «Ահա որդի կծնես իմ կերպարանքի նման և նրան կկոչես իմ անվամբ»: Կինն ասում է նրան. «Եվ ո՞վ ես, տեր իմ, որ իմ որդուն քո անվամբ կոչենք»: Սուրբն ասում է. «Երբ ամուսինդ վերադառնա ճանապարհից և խաղաղությամբ դա աշխարհից՝ ուր ես եմ սնվել, նա կպատմի իմ մասին»: Եվ կինը զարթնելով սքանչանում է:

Եվ երբ իր ամուսինը եկավ, նա պատմեց տեսիլը, և այն ամենը եղավ բոլոր հավատացյալների համար հրաշալի ուրախությամբ, և սրբի անունը հռչակվեց ամբողջ աշխարհում՝ արևելքից արևմուտք, և բոլորը, որ խնդրում էին հանուն

նրա՝ Աստված բժշկություն էր ուղարկում և առողջություն հիվանդներին: Եվ նրա ճգնության հոտը բուրում էր ամբողջ տիեզերքով, ավելի քան բոլոր անուշ խունկերը: Եվ նրա նահատակությունը լսվում էր ամեն բերանից, ավելի քան թագավորների, ախոյան զորավարների [գործերը], որոնք հաղթությամբ դառնում են պատերազմից: Եվ բոլոր քրիստոնյաները պարծենում էին նրանով, նրա անունն աճում էր հավատով առ Քրիստոս, և նրա միջոցով Աստված շնորհում էր աշխարհին բժշկություն: Եվ բոլոր հավատացյալները օրհնում էին Քրիստոս Աստծուն:

Իսկ սրբի հայր Ղևին ծերությանը տագնապում էր դևերից և մի օր [դևը] շատ լլկելով նրան զգետնեց, և [մարդիկ] լսեցին, որ ասում էր. «Որդյա՛կ իմ Ասեր, ըստ իմ արժանիքների քեզնից հատուցում չստանամ»: Եվ իսկույն իր որդիները վերցրին նրան, տարան կապեցին Քրիստոսի ծառայի արյունով ներկված վեմին, և իսկույն բժշկություն ստացավ, հավատաց Քրիստոսին ու Նրա ծառային, և նույն ջրհորի մոտ մկրտվեց իր ամբողջ տնով: Սուրբն այսպես որսում էր բոլորին Քրիստոսի հավատքին և ամեն կողմից հորդորում էր գալ հավատի, և [նրանք] հոգու և մարմնի առողջություն էին ստանում:

Եվ մի օր տաճիկների մեծամեծներից մի շատ հարուստ մարդու ուղտի երամակները խուճապով գնացին անապատ վայրեր, և բնավ չգտան նրանց հետքը: Իսկ երբ նրանց գտնելու հույսը հատեց, դիմեցին աղոթելու, և [նա] ուխտեց, ասելով. «Ծառա Քրիստոսի և սուրբ վկա, եթե ինձ վերադարձնես իմ կորուստը, դարձողների տասից մեկը քեզ կտամ: Եվ երբ այրն իր տունը դարձավ՝ նրա բոլոր ուղտերը իրենց ձագերով իր տան մոտ էին, և դրանցից ոչ մեկը չկորավ: Երբ հաշվեց՝ շատ ուրախացավ, և զղջաց, և սրբին չտվեց խոստացած տասանորդը, և ասաց. «Բավական է սրբին միայն տասն ուղտ, քանի որ չաշխատեց հավաքելու և ոչինչ չարեց նրանց համար»: Եվ նրա բարեկամներն ասում են. «Այդպես չէ, ո՛վ մեծդ, այլ խոստացածդ տուր նրան, գուցե այլ

բան պատահի քեզ, և դիմես ու չօգնի»: Բայց նա չկամեցավ, մտքով անցկացնելով ուղտերի բազմությունը, որ կպակասեր իրենից, տագնապում էր. և առանձնացրեց տասն ուղտ, որ ինքն ուզեց, և ուղարկեց սրբի վկայարանը: Իսկ մի օր ուղտերը արոտ հանեց, ելնելով խսկույն ցրվեցին և տարան ծառաներին, որ հեծած էին ուղտերին, և նրանց հետքը ոչ մի տեղ չերևաց: Եվ այրն իմացավ իր ուղտերի կորուստը, ամոթ զգաց, և աղաչում էր իր բարեկամներին, որ գնան սրբի մոտ և երաշխավոր լինեն՝ ինչի համար ուխտեց: Եվ երբ գնացին՝ տեսան հեռվից, որ ուղտերը հավաքված են և գալիս էին սրբի վկայարանը: Նրանք ուղտերի բազմությունը տեսնելով երկյուղով լցվեցին, կարծեցին թշնամական գունդ է, և երբ մոտեցան և տեսան իրենց ուղտերի նշանները՝ սքանչացած ասացին. «Իրապես մեծ և զորավոր է այս նահատակը. նրա ուխտը ստելու դիմաց ահա բոլոր ուղտերին իր մոտ հավաքեց: Այժմ աղաչեցե՛ք, որ իրեն վերցնի առաջին խոստման համաձայն, իսկ մերը թողնի մեզ հետ գնալու»: Եվ ջոկեցին ու տվին լավերից ու վատթարներից տասանորդը, և ծառաներից թողին արածեցնելու ուղտերը, և երբ կարգավորեցին, աղոթեցին Աստծուն, և սրբի անունով ասացին. «Ո՛վ սուրբ ծառա Քրիստոսի և քաջ նահատակ, քոնը վերցրու և արձակիր, որ մերը գա մեզ հետ»: Եվ ուղտերը երեսները դարձնելով՝ գնացին նրանց հետ:

Տերը նաև բազում այլ սքանչելիքներ էր անում սրբի միջոցով՝ բուժում դիվահարների, ամեն ցավից նեղվողների. և նա փառավորում էր Քրիստոսի սուրբ անունը: Որի համար և մենք՝ հավատացյալներս, կատարելով սուրբ Աբդլմսեհի հիշատակը՝ օրհնում ենք արարածների Արարիչ Հորը, հաստատող և համագոյ Որդուն և Սուրբ Հոգուն՝ զորացուցիչ և պարգևաբաշխ բոլորին: Եվ Քրիստոսի նույն ծառային և բոլոր սրբերին բարեխոս ունենք ամենքի Աստծու առջև, որպեսզի խոստացված բարիքին հասնենք, ի Քրիստոս Հիսուս, Տեր մեր, որին վայել է փառք և զորություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԱԴՐԻԱՆՈՍԻ ԵՎ ՆՐԱ ԿՆՈՋ՝ ԱՆԻՏՈԼԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աքսիմիանոս թագավորը երկրորդ անգամ Նիկոմիդիա քաղաք գալու ժամանակ սպանեց բոլորին, որ տարբեր տեղերից հավաքված էին Քրիստոսով: Գնալով տաճար՝ երկրպագեց աստվածներին և հրամայեց նախ իր զոհերը մատուցել, իսկ հետո քաղաքինը: Այնուհետև բոլորը լսելով գալիս [զոհ] էին մատուցում, ոմանք ցուլ, ոմանք արջառներ, ոմանք գառներ, խոյ և հավ, քանի որ քաղաքը կռապաշտ էր: Զոհում էին բոլոր հրապարակներում ու փողոցներում, տներում, այնքան որ ամբողջ քաղաքը բուրում էր զոհերի գարշահոտությամբ ու ճենճերից: Եվ պատվիրակները շրջում էին քարոզելու բոլորին, որ զոհ մատուցեն սնոտի աստվածներին, որովհետև թագավորը հրամայեց պատուհասել նրանց, ովքեր չմատուցեն, և գտած քրիստոնյաներին այրել հրով: Նշանակվեցին մարդիկ ստուգելու հրապարակներն ու ամբողջ քաղաքը, որ եթե գտնվեն Քրիստոսին հավատացող այրեր ու կանայք՝ տանեն թագավորի մոտ՝ խոշտանգելու սաստիկ տանջանքով ու բոցակեզ հրով, և դահիճները մատնողներին բազում ինչք էին տալիս: Այնուհետև դրացին մատնում էր դրացիներին, սիրելին՝ սիրելիներին, ազգականն՝ ազգականներին՝ հրապուրված տրվող ինչքով: Ոմանք թագավորի ահից մատնում էին իրենց միջից հավատացյալներին, որովհետև պատուհաս էր սահմանել նրանց, որ կթաքցնեին քրիստոնյաներին:

Այնժամ թագավորից հրաման ստացածներն իմացան, թե ոմանք մի քարայրի մեջ թաքնված են: Որովհետև գիշերով մոտիկ լինելով լսեցին սրբերի սաղմոսերգությունը և եկան հայտնեցին: Ապա նրանք անմիջապես զինվորների բազմություն վերցրած հարձակվեցին անձավի վրա և նրանց բռնելով, բոլորին կապելով երկաթե կապանքներով՝ տարան քաղաք, ուր թագավորն էր: Եվ երբ թագավորը գնաց տաճարում

աստվածներին երկրպագելու և զոհ մատուցելու, զինվորները նրանց տարան Թագավորի առջև ու ասացին.

– Թագավո՛ր, հավիտյան կաց, ամբողջ քաղաքն ու շրջակա գյուղերը աստվածներին երկրպագող են՝ քո հրամանին հնազանդ, միայն սրանք թշնամանեցին աստվածներին՝ չհետևելով քո պատվիրաններին:

Տեսնելով սրբերին՝ [Թագավորը] իսկույն հրամայեց կանգնեցնել կառքը, նրանց մոտեցնել կառքին, և ասաց նրանց.

– Ո՞րտեղից եք, այստեղից, թե այլ վայրից:

Եվ նրանք ասում են.

– Ծնունդով այստեղից ենք, իսկ հավատով գալիլեացի:

Թագավորն ասում է նրանց.

– Եվ չե՞ք լսել, թե ինչպիսի պատիժ է սահմանված այդպիսի հավատի հետևորդներին, և կամ ի՛նչ դառն վախճան գտան բռնվածները:

Սրբերն ասում են.

– Լսեցինք և ծիծաղեցինք քո անմիտ հրամանի վրա: Ծիծաղեցինք նաև սատանայի վրա, որ զորացել է անհավատ հոգիների մեջ, որոնց զորագլուխը դու ես:

Թագավորն ասում է.

– Եվ համարձակվեցիք հիմա՞ր անվանել մեր հրամանը, [որ տվել ենք] մեծ աստվածներով երդվելով: Դառն ու անհնարին տանջանքով կմաշեմ ձեր մարմինները:- Եվ ասում է,- Կապեցեք ու բրերով տանջեցեք, և թող գա դրանց Աստվածը օգնելու նրանց և փրկե այս ժամին:

Եվ երեք դահիճներն սկսեցին ջլերով տանջել նրանց:

Սրբերն ասում են.

– Առավել ևս ավելացրու տանջանքները, ո՛վ աստվածամարտ, քանի որ ինչքան ավելացնես տանջանքները, այնքան առավել կլինի [մեր] պսակը:

Եվ բռնավորն ասում է նրանց.

– Ա՛յ թշվառականներ, այժմ կկտրեմ ձեր գլուխները, իսկ դուք պսա՞կ եք ակնկալում: Ավելի լավ է դարձեք այդ համառ կամքից և իզուր մի՛ կորցրեք ձեզ:

Սրբերն ասում են.

– Աստված քեզ կկորցնի, քանի որ նրա ծառաներին իզուր և անտեղի խոշտանգում ես՝ առանց որևէ հանցանքի:

Եվ բարկացած Թագավորը հրամայեց քարշարդ անել նրանց կզակները: Եվ դահիճները քարեր առան, ջարդեցին նրանց բերանները: Իսկ սրբերը, տանջանքներն ընդունելով, ասացին.

– Որպես չարագործության մեջ բռնվածների այսպիսի դառն ու անողորմ տանջանքի ենթարկեցիր մեզ. Աստծու հրեշտակը կխփի քեզ և քո ամբողջ ամբարիշտ տանը, ո՛վ անօրեն և թշնամի Աստծու: Չհագեցա՞ր տանջանքներից, որ մեզ հասցրիր, չձանձրացա՞ր այդքան երկար ժամեր երկարացնելով քո տեսակ-տեսակ չարչարումները: Եվ չե՞ս մտածում, որ մենք ևս մարմին ունենք քեզ նման, թեև քոնը անօրեն է և ամբարիշտ, ո՛վ սատանայի որդի: Արդյոք այդ ապառաժ քարերը կավաղեին քո այսքան տանջանքներից:

Բարկացած Թագավորն ասում է.

– Մեծ աստվածներով եմ երդվում, ձեր լեզուները կկտրեմ, որ մարդիկ ձեզնով սովորեն չհակառակել իրենց տերերին:

Սրբերն ասում են.

– Եվ ատո՞ւմ ես նրանց, որ հակառակ են իրենց տերերին:

Եվ ասում է.

– Այո՛, ատում եմ և կպատուհասեմ:

Սրբերն ասում են.

– Դու ևս լսիր, ո՛վ ամբարիշտ, եթե դու ատում ես իրենց երկրային տերերին չհնազանդվողներին ու պատուհասում ես, հապա ինչո՞ւ ես ստիպում մեզ ընդդիմանալ մեր Աստծուն, ապստամբել մեր Տիրոջից ու Փրկչից, որ մենք ևս կրենք այն չարչարանքները, որ քեզ են պատրաստված:

Եվ նա ասում է նրանց.

– Ի՞նչ է պատրաստված ինձ, ա՛յ դատապարտյալներ:

Սրբերն ասում են.

– Այն, որ պատրաստված է սատանային ու նրա հրեշտակներին, և նրա գործիքներին, ձեզ, որ ամբարիշտներ եք.

[պատրաստած են] անշեջ հուր և անքուն որդեր, անվերջ տանջանքներ ու հավիտենական պատուհասներ, ապականության վիհն ու արտաքին խավարը, ուր աչքերի լացն է ու ատամների կրճտելը, նաև այլ տանջարաններ, որոնց պատկերը գիտե Նա, որ պատրաստեց ձեզ համար:

Եվ նա ասում է նրանց.

– Աստվածներով [եմ երդվում], որ հիմա կկտրեմ ձեր լեզուները:

Սրբերն ասում են.

– Ո՜վ անմիտ և ամբարիշտ, թեկուզ և կտրես մեր փառաբանության գործիքները, սրտերի հեծությունը կարող է առավել ևս աղաղակել առ Աստվածը մեր, և մեր բերաններից հոսող այս արյունը սրնգից ավելի բարձրաձայն կգոչե առ Աստվածը մեր, որի համար և չարչարվում ենք:

Թագավորը բարկանում ու ասում է.

– Գրանցեցեք դրանց բոլորի անունները և երկաթե կապանքներով շղթայեցեք ու տարեք դատապարտյալների բանտ և նեղեցեք ինչքան հնարավոր է: Եվ ինչպես իմ կամքն է, այդպես խոշտանգեցեք դրանց: Ոչ միայն սրով պատուհասվելու են արժանի, այլև պետք է դրանցով նաև խրատել ու զգաստացնել բոլոր գավառների [մարդկանց]:

Մի մարդ, մեծ ու երևելի, արքունիքի իշխան, որի անունը Ադրիանոս էր, երբ տեսավ խիստ տանջանքները, նրանց համբերությունը, ասում է սուրբ վկաներին.

– Երդվեցնում եմ ձեզ ձեր Աստծով, որի համար չարչարվում եք, ինձ ճշմարիտն ասացեք, ի՞նչ է այն, որ ակնկալում եք ստանալ՝ այդքան տանջանքներին համեմատելի. ինձ թվում է մեծ ու սքանչելի մի բան:

Սրբերը նրան ասում են.

– Ո՛չ մեր բերաններն են ի վիճակի պատմելու Նրա մասին և ոչ քո լսելիքը կարող է ընդունել:

Ադրիանոսն ասում է նրանց.

– Բոլորովին բան չլսեցի՛ք սրանց մասին, և ո՛չ Օրենքներից, ո՛չ Մարգարեներից և ո՛չ այլ գրքերից:

Սրբերն ասում են.

– Ոչ իսկ մարգարեները ինչպես հարկն է գիտեն, քանի որ նրանք ևս մարդիկ էին աստվածապաշտ, և ինչքան կարողացան Սուրբ Հոգուց ստանալ՝ նույնը խոսեցին: Իսկ Նրա մասին գրված է, թե՝ «Որին աչք չի տեսել և ականջ չի լսել և մարդու սիրտ չի զգացել, որը Աստված պատրաստեց իր սիրելի սրբերին» (Ա. Կորնթ. Բ. 9):

Այս լսելով՝ Ադրիանոսը շտապ ներս գնաց և կանգնելով ատյանի մեջ՝ ասում է դպիրներին.

– Իմ անունը նույնպես գրեցեք սուրբ նահատակների հետ, որովհետև ես նույնպես քրիստոնյա եմ:

Իսկ երբ բռնակալը տեսավ դիմացը կանգնած՝ կարծեց թե չարախոսելու է սրբերից, և ասում է դպիրներին.

– Գրեցեք իսկույն պատվական այդ Ադրիանոսի առաջադրած ամբաստանությունը:

Դպիրներն ասում են նրան.

– Նրանց չի չարախոսում, այլ ինքնիրեն քրիստոնյա է անվանում և խնդրում է իր անունը գրել մահապարտների հետ:

Երբ թագավորը լսեց՝ բարկացավ ու ասաց նրան.

– Մոլորվեցի՞ր, Ադրիանոս, ուզում ես, որ դու ևս չարաչար կորչես:

Եվ նա պատասխանելով ասում է.

– Չեմ մոլորվել, թագավոր, այլ բազում մոլորություններից այժմ զգաստացա:

Թագավորն ասում է նրան.

– Ինձնից ներողություն խնդրիր և բոլորի առաջ ասա, որ խաբվել ես և գնա քո անունը ջնջիր դատապարտյալների միջից:

Ադրիանոսն ասում է.

– Այսուհետև իմ Աստծուց եմ թողություն խնդրում իմ մոլար կյանքի և իմ նախորդ անօրեն ընթացքի համար:

Եվ Մաքսիմիանոսը բարկացած հրամայեց կապել նրան ու տանել բանտ՝ սուրբ վկաների մոտ, օրը հայտարարեց՝ երբ կհարցաքննի նրան և նրանց:

Ադրիանոսի ծառաներից մեկը, երբ տեսավ այդ, շտապ գնաց տուն և պատմեց նրա կին Անատոլիային և ասում է.

– Իմ տիրոջը կապեցին երկաթե անուրներով ու բանտեցին:

Նա, երբ դա լսեց՝ պատռեց իր պատմուճանը և սկսեց դառնապես լալ ու արտասուք թափել, և ճչալով ասում է երիտասարդին.

– Ասա՛ ինձ, ո՛վ այր, ի՞նչ պատճառով կապվեց իմ տերը:

Եվ երիտասարդն ասում նրան.

– Տեսավ խոշտանգված մարդկանց հանուն Նրա, որին Հիսուս են կոչում, չհնազանդվեց թագավորի հրամանին՝ զոհ մատուցելու կուռքերին, և անմիջապես առանց բռնության ասում է դպիրներին՝ «Իմ անունը ևս գրեցեք այս մարդկանց հետ, որովհետև մեծ ցանկությամբ ուզում եմ մեռնել նրանց հետ»:

Կինն ասում է նրան.

– Եվ չիմացա՞ր, թե ինչի համար տանջվեցին այն այրերը:

Երիտասարդն ասում է.

– Քեզ ասացի, որ չուզեցին զոհ մատուցել աստվածներին:

Երբ նա դա լսեց, արագ ելավ և ուրախացած փոխեց իր պատառոտած պատմուճանը և փութեռանդությամբ գնաց բանտ, նրա մոտ, քանի որ հավատացյալ և սուրբ ծնողների դուստր էր և վախենում էր խոստովանել՝ այն ժամանակ զորացած ամբարշտության պատճառով: Եվ հասավ բանտ, մտավ ներս և ընկավ իր ամուսնու ոտքերը, համբուրում էր նրա կապանքները և ասում.

– Երանելի ես դու, ի՛մ տեր Ադրիանոս, որ գտար այն, ինչ քո հայրերը քեզ չթողին: Արդարև այսպես կօրհնվի յուրաքանչյուր մարդ, որ Աստծու երկյուղն ունի: Իսկ այժմ քո երիտասարդությանը տեր իմ, հավաքեցիր այն, որ երևի չգտնեիր ծերությանդ: Տեր իմ, անհոգ կգնաս այն աշխարհը, քեզ համար կուտակված է բազում մեծություն, որ կգտնես պահանջված ժամանակ, երբ բազում մեծատուններ կկարոտեն, երբ չկա ժամանակ հատուցման և փոխառության, երբ ոչ ոք չի փրկի մեկին տանջանքներից, և ոչ ոք մեկին կերևա. ո՛չ հայրը որդուն և ո՛չ մայրը դստերը, ո՛չ իրենց հավաքած ինչքը, ո՛չ տիրոջ ծառաները, և սիրելիները չեն երևա սիրելիներին, այլ բոլորը բեռան հոգսի տակ կլինեն: Դու, տեր իմ, միայն քոնը քեզ հետ առած գնում ես խաղաղությամբ՝ ընդունած Աստծու խոստումը: Դու գնում ես վստահաբար, բնավ չերկնչելով ահագին գալիքից:Դու Աստծուց վարձ կպահանջես պարտքի նման: Այսուհետև բանսարկուն անզոր է քո հանդեպ: Արդ, աղաչում եմ քեզ, տեր իմ, հաստատուն մնալ քո կոչմանը, որ կանչվեցիր և քեզ ոչինչ բոլորովին չի վրիպեցնի գեղեցիկ ապագայից, ո՛չ ազգ ու տոհմ, ո՛չ ծնող և ո՛չ ինչք, ստացվածք ու ծառա, աղախիններ, և ոչ այլ երկրային բան: Որովհետև ամեն ինչ անցնելու է և ապականվելու: Թևարկիր միայն հավիտենականին, որ քիչ ժամեր անց կտեսնես անանցանելին: Եվ քո պրկումը չթուլացնեն քո բարեկամների աղերսալի խոսքերը, նրանց նողկալի ու հրապուրիչ խոսքերը ու չգողանան քո գեղեցիկ հավատքը: Ատի՛ր նրանց ողոքանքը, ուրացի՛ր նրանց ամբարիշտ խրատները: Այն սուրբերի հետ եղիր, նմանվիր նրանց ժուժկալությանը, նմանվիր նրանց համբերությանը: Քեզ թող չխռովի թագավորի մտերմությունը, քեզ չզարհուրեցնի տանջանքներ տեսնելը, չահաբեկի քեզ այս հուրը, որովհետև խիզախեցիր հավիտենական անշեջ բոցի հանդեպ:

Եվ երբ ավարտեց այս խոսքերը՝ լռեց, քանի որ երեկո էր:

Այժմ ասում է Ադրիանոսը նրան.

– Գնա՛ քո տունը և մնա այնտեղ: Ու երբ իմանաս մեր դատաստան մտնելը՝ քեզ կկանչենք թագավորի առջև, որ դաս տեսնես մեր վախճանը:

Անիտոլին ելավ, շրջեց սրբերի բոլորը, համբուրեց յուրաքանչյուրի կապանքները, նրանք 43 այր էին, և մեծ աղաչանքով ասում է նրանց.

– Ձեր փոխարեն, տերեր և Աստծու ծառաներ, ձեռք մեկնեցեք Քրիստոսի այս ոչխարին, ցույց տվեք նրան ձեր համբերության նշանը, տեղյակ դարձրեք անանց պարգևներին, որոնց առիթ է լինում ժուժկալությունը: Սա ձեր տանջանքի պտուղն է: Ահա շահեցրեք սրա հոգին ձերի հետ: Այստեղ ևս Քրիստոս ձեզ փոխատու լինի: Դրան հայրեր եղեք մարմնական ամբարիշտ ծնողների փոխարեն, հավատացրեք երանելի վախճանին, որպեսզի անհագ լինելով այդ փափագով՝ կարողանա դիմանալ նահատակությանը:

Այս ասելով ընկավ նրանց ոտքերը, երկրպագեց նրանց, գնաց Ադրիանոսի մոտ, որովհետև ներքին բանտում էր կոճղապնդած, և ասաց նրան.

– Տե՛ս, իմ քաջ տեր, մի՛ նայիր քո մարմնի գեղեցկությանը և հասակիդ բարձրությանը, որովհետև այդ ամենը որդերի կերակուր է: Թող քեզ չմտահոգեն ոսկի, արծաթ, հանդերձներ և ունեցվածք կամ պալատական այլ բաներ, քանի որ այն ժամին բնավ ոչինչ մոտդ չի լինի, այլ այստեղի ամեն ինչը մոռացված է: Այնտեղ չկա կաշառ տալ մեկին՝ սեփական անձի համար, այլ միայն Աստված կաշառվում է սուրբ հոգվով:

Այս ասելով հրաժեշտ տվեց նրան և գնաց տուն: Եվ այնտեղ աղաչում էր Աստծուն գիշեր ու զօր, որ իր ամուսինը հաստատուն մնա իր խոստովանության մեջ:

Օրեր անց, երբ երանելի Ադրիանոսը իմացավ, որ տարվելու է դատաստանական հարցափորձի, ասում է սրբերին.

– Ինձ հրամայեցեք գնամ-բերեմ ձեր աղախնին, որ մեր վկայությանը ներկա լինի և տեսնի մեր վախճանը, որովհետև երդմամբ նրան խոստացա սա:

Եվ նրանք հրամայեցին, և ինչք տվեց բանտապահներին, ելավ գնաց և իրեն երաշխավոր թողեց սրբերին: Ու մինչդեռ գնում էր, ճանապարհին նրան տեսավ քաղաքացիներից մի ծանոթ ու գնաց պատմեց նրա կին Անատոլիային ու ասաց.

– Ադրիանոսն ազատվել է կապանքներից և տուն է գալիս. նրան ճանապարհին թողի:

Իսկ նա չհավատաց և ասաց.

– Ո՞վ կարձակի նրան այն կապանքներից: Զլինի որ նա թուլանա և բաժանվի այն սրբերից:

Ու մինչ այդ էին խոսում, նրա մի ուրիշ ծառա եկավ, մտավ դռնից և ասաց.

– Իմ տերն արձակվեց և ահա գալիս է:

Երբ կինը լսեց, կարծեց, թե փախել է մարտիրոսությունից, շատ տրտմեց և լացեց դառնորեն: Ու երբ նրան տեսավ, ձեռքի գործը թողեց և ոտքի ելավ, իսկույն փակեց տան դուռը և աղաղակելով ասաց.

– Հեռու լինի ինձնից Աստծուց հրաժարվածը, որ իր Տեր Աստծուն ստեց: Զլինի, որ ես խոսեմ Աստծուն ուրացողի հետ և խոսք լսեմ նենգող լեզվից, որ չարախոսեց իր արարչին: -Եվ ասում է իր ամուսնուն դռան մոտ,- Ո՛վ թշվառական ու անաստված այր, քեզ ո՞վ հարկադրեց ձեռնամուխ լինել մի բանի, որ ի վիճակի չէիր: Ո՞վ ուռկան ձգեց ու հանեց քեզ այն խաղաղ ու հանգստավետ կայանից: Հապա դու ասա, ինչո՞ւ փախար՝ չմարտնչելով պատերազմում: Ինչո՞ւ զենքը գցեցիր՝ չհասած նահատակության: Ինչո՞ւ վիրավորվեցիր նետը չարձակված, ինչո՞ւ սպանիչների միջից Աստծուն մաքուր պատարագ չմատուցեցիր: Հնարավո՞ր էր արյունահեղ տեղից և կեղտոտված օդից անուշահոտ խունկ մատուցել Աստծուն: Իսկ ես՝ խեղճս, ի՞նչ անեմ, որ հանդիպել եմ ամբարիշտ ամուսնու, որ ամբարիշտների զավակ է: Եվ ոչ մի ժամ մարտիրոսի կին չկոչվեցի, այլ ուրացողի [կին] եղա իսկույն: Իմ հպարտությունը քիչ ժամանակ տևեց, և ահա հավիտյանս հավիտենից նախատինք ինձ: Մի ժամ միայն պարծեցա կանանց մեջ, և այժմ նրանց մեջ կգնամ կորագլուխ ամաչելով:

Իսկ երանելի Ադրիանոսը դռնից լսում էր ու համբերում, որովհետև շատ ուրախ էր նրա խոսքերի համար, առավել ևս շտապում էր կատարել այն, ինչ ուզում էր: Եվ զարմացած էր, որ կին մարդն այդպես էր խոսում, մանավանդ որ նորահարսը մանկամարդ էր: Քանի որ չէր լրացել նրանց հարսանիքի տասներեք ամիսը: Իսկ երբ տեսավ, որ կինը շատ տագնապած է, ասաց նրան.

– Դո՛ւռը բաց, իմ տիկին Անատոլի: Քո կարծածի նման մարտիրոսությունից չեմ փախել, քավ լիցի: Այլ եկել եմ քեզ տեսնելու, որ մոտիկից տեսնես մեր վախճանը, ինչպես որ քեզ ասացի:

Իսկ նա չէր հավատում նրան, այլ ասաց.

– Ահա այս անօրենը ինձ նույնպես նենգում է, ահա ստում է երկրորդ Հուդան: Հեռու գնա ինձնից, թե ոչ՝ ինքս կդավեմ, որովհետև դա է ինձ սպասում:

Երբ շատ ուշացրեց և դուռը չբացեց, ասաց նրան.

– Բա՛ց արա, թե չէ կգնամ, և այլևս չես տեսնի ինձ: Այնժամ կսգաս, որ չտեսար նախքան աշխարհից հեռանալս: Քանի որ ինձ համար երաշխավոր թողել եմ սրբերի խումբը, և եթե ինձ փնտրեն ու չգտնեն՝ իմ տանջանքները ևս պիտի ավելանան նրանց վերքերին, և չեն կարող դիմանալ, որովհետև համարյա մեռած են բռնապետի տանջանքներից:

Եվ երբ լսեց, թե նեղվում են սրբերը, իսկույն բացեց դուռը, և փարվեցին իրար, և սուրբ Ադրիանոսն ասում է նրան.

– Երանելի ես դու կանանց մեջ, չէ՞ որ միայն դու իմացար քո ամուսնուն շահել. արդարև միայն դու եղար երկրի վրա ամուսնուդ սիրող: Օրհնվի քո պսակը, դու նվիրեցիր հաղթության պտուղը, որովհետև դու ևս մարտիրոսանում ես, թեպետ չես չարչարվում:

Եվ նրա հետ գնաց: Ու մինչդեռ գնում էին, ճանապարհին Ադրիանոսն ասում է նրան.

– Ո՛վ կին, ինչպես կարգադրեցիր քո տան ինչքը:

Եվ նա պատասխանելով ասաց.

– Իմ տեր, մի՛ հոգար երկրավոր բաների մասին, թող չզբաղեցնեն դրանք քեզ: Հոգա միայն մի բան՝ ինչպես կատարես կոչումդ: Մերժիր քեզնից այս աշխարհը, որ քայքայվելու է: Ա՛յն միայն շտապիր կատարել, որ չի ապականվում՝ ինչ որ սպասում է քեզ և այն սրբերին, որոնց հետ ուղևորվում ես:

Եվ նրանք մտան բանտ: Քրիստոսի աղախին Անիտոլին դիմեց սրբերին և խոնարհվեց, երկրպագեց նրանց կապանքներին, և տեսավ տանջանքներից տրորված նրանց մարմինները, մինչև իսկ որդերը վխտում էին նրանց վրա և շարժվում էին դեմնով: Եվ սաստկությունից զարմացած, իր ծառաներից մեկին ուղարկեց իր տունը և հրամայեց բերել բոլոր նուրբ կտավները՝ իր հագուստները բազում և թանկագին, քանի որ ազատ տոհմից էր և երևելի: Եվ առավ-պատռեց այն կտավը և մաքրեց նրանց վերքերի թարախը, և փաթաթեց նրանց ձեռքերն ու ոտքերը, որ քայքայված ու ընդարմացած էին շղթայից: Եվ նրանց մոտ բանտում մնաց յոթ օր, և ամեն կերպ դարմանում էր սրբերին:

Եվ եկավ, հասավ օրը, երբ բռնակալը հարցաքննելու էր: Եվ հրամայեց սրբերին առաջ բերել: Իսկույն գնացին բանտ, հանեցին բոլորին և բերին անվարժ դրաստներով, որովհետև տանջանքից թուլացած էին և բոլորը շղթայակապ: Միայն Ադրիանոսն էր գնում ձեռքերը ետևը կապած: Եվ երանելի Անիտոլին գնում էր նրա ետևից, աղաչելով ասում էր.

– Տեր իմ Ադրիանոս, Քրիստոսի զենքով վառված՝ ախոյան եղիր սատանային: Մի՛ երկնչիր տանջանքներից: Ահա մոտիկ է Հիսուս փրկիչը և կօգնի քեզ:

Երբ մոտեցան դատաստանի տեղին, դահճապետը տեսավ նրանց՝ մտավ և ասաց թագավորին.

– Ահա դատապարտյալները հասել են ատյանի մոտ:

Եվ երբ բռնավորը լսեց՝ ասաց.

– Բոլորին մերկացրեք և ներս բերեք, որ տեսնեն միմյանց տանջանքները:

Եվ դահճապետն ասում է.

– Ավելի առաջ տանջվածները չեն կարող քննվել, որովհետև շատ են նվաղած: Իսկ Ադրիանոսն ավելի թարմ է և ի վիճակի է դիմանալ հարցաքննության: Մյուսները ամբողջ մարմնով լլկված են այնքան, որ նրանց կողերը դրսից երևում են: Եթե հարցաքննվեն՝ կնվաղեն: Այժմ թող հանգստանան այլ՝ առաջիկա տանջանքներից: Բայց մենք չենք ուզում կարճատև տանջանքով վերջացնել նրանց դատաստանը, այս կյանքից իբրև սակավամեղների: Թող քիչ օրեր կազդուրվեն, որպեսզի հանցանքների արժանի հատուցում ստանան: Արդ,

եթե ձեր քաջությունը կհրամայե՝ թող Ադրիանոսը առաջ գա հարցաքննության:

Բռնակալն ասաց.

– Մերկացրեք նրան և ներս բերեք:

Եվ իսկույն մերկացրին նրան և առաջ բերին, հանելով փայտը նրա [վզից]:

Երբ նա գնում էր, սրբերն ասացին նրան.

– Ադրիանո՛ս, ահա արժանի եղար ստանալու քո խաչը և գնալու Քրիստոսի հետ: Զգույշ եղիր, իզուր չդառնաս հետ, բանսարկուն չկողոպտի քո դանձը, չվախենաս, ում որ տեսնես, ծաղրիր բռնավորի հրամանները, որովհետև այժմյան չարչարանքները արժանի չեն ակնկալվող փառքին, որ մեզ կտրվի:

Իսկ երանելի Անիտոլին հպվեց նրան և ասաց.

– Տե՛ս, իմ քաջ տեր, քո ուշադրությունը միայն Աստծուն ուղղիր. տանջանքները քեզ չզարհուրեցնեն: Երկյուղն այդ քիչ է, իսկ հանգիստը հավիտենական է: Աննշան են խոշտանգումները, իսկ գովքերը հավիտենական, կչարչարվես մի փոքր և հրեշտակների հետ կուրախանաս հավիտյան: Եթե երբ մարմնապես էիր զինվորյալ, բազմիցս ձաղկվում էիր իշխաններից ու զորագլուխներից մի աննշան ոճիրի համար, ինչո՞ւ առավել ևս չհամբերես սպասվող տանջանքներին՝ հանուն երկնային արքայության :

Երանելի Անիտոլին ասաց սա, և Ադրիանոսին տարան ներս:

Նրան տեսնելով բռնակալն ասաց.

– Ադրիանո՛ս, ի՞նչ է, տակավին քո մոլորության մեջ ես և ուզում ես չարով կորսվել:

Ադրիանոսն ասաց.

– Քեզ ասացի, որ այժմ մոլորությունից զգաստացա, այսուհետև չեմ ուզում կորչել:

Բռնակալն ասաց նրան.

– Ուրեմն չե՞ս ուզում զոհ մատուցել աստվածներին և երկրպագել նրանց, ինչպես ես և բոլորը:

Ադրիանոսն ասաց.

– Ինչո՞ւ ես մոլորվում և մոլորեցնում ուրիշներին, և՛ քեզ ես կորցնում և՛ այս բազմությանը, երկրպագելով անշունչներին, թողած երկնքի ու երկրի, ծովի ու ցամաքի և նրանց մեջ եղած ամեն ինչի արարիչ Աստծուն:

Բռնակալն ասաց նրան.

– Մեծ աստվածներին փո՞քր ես համարում:

Ադրիանոսն ասաց.

– Քանզի չկան և ոչինչ են:

Եվ բարկացած թագավորը հրամայեց տանջել նրան բրերով: Երանելի Անիտոլին լսելով, թե սկսեց տանջվել, գնաց սրբերի մոտ, ավետիս տվեց նրանց և ասաց.

– Իմ տերը սկսեց վկայությունը:

Նրանք լսելով՝ շտապ սկսեցին աղոթել նրա համար:

Երբ սուրբ Ադրիանոսին տանջում էին, բռնակալն ասաց դահիճներին.

– Դրան ասացեք, որ չհայհոյի աստվածներին:

Ադրիանոսն ասաց.

– Ես, որ այսքան տանջվում եմ ոչինչներին հայհոյելու համար, քեզ ինչպիսի՞ տանջանքներ են կուտակված պահվում, որ հայհոյում ես մշտնջենավոր Աստծուն:

Ասում է նրան բռնակալը.

– Այն մոլորեցուցիչները քեզ սովորեցրին այդ բանը:

Ադրիանոսն ասաց.

– Կյանքի առաջնորդներին ինչո՞ւ ես մոլորեցուցիչ անվանում: Դուք եք մոլորեցուցիչ, որ խաբում եք մարդկանց կորուստի հրապուրելով:

Առավել ցասումով բարկացավ թագավորը, հրամայեց չորս դահիճներին՝ տանջել նրան հաստ ճիպոտներով:

Ադրիանոսն ասաց.

– Ինչքան ավելացնես տանջանքի ձևերը՝ բազմապատիկ գեղեցիկ պսակ ես հորինում:

Իսկ երանելի Անիտոլին թագավորի բոլոր խոսքերն ու Ադրիանոսի պատասխանները ինչքան լսում էր, գնում-պատմում էր սրբերին:

Բռնակալն ասաց Ադրիանոսին.

– Խնայիր քեզ և երիտասարդությունդ. ինչո՞ւ ես իզուր կորչում: Երդվում եմ մեծ աստվածներով՝ տեսնում եմ քո գեղեցկությունն ու ողորմում քեզ:

Ադրիանոսն ասաց.

– Ահա այսուհետև կխնայեմ ինձ, որ իսպառ չկոչեմ:

Բռնակալն ասաց.

– Խոստովանիր աստվածներին, որ քավիչ լինեն քեզ, և ես կմեծարեմ քեզ և կհաստատեմ քո նախկին դիրքում: Քանի որ դու նրանց նման չես, այլ ազատ ես և մեծատան որդի: Թեպետ երիտասարդ, բայց մեծ պատիվ ունես: Նրանք չինականներ են, աղքատների ու անմիտների գավակներ:

Ադրիանոսն ասաց.

– Ասում եմ ես ևս, որ դու գիտես իմ գավառը, ճանաչում ես իմ ազգն ու նախնիներին: Իսկ եթե նրանց ազգն ու ազատությունը գիտենայիր և մեծությունը, և գավառը, որ ակնկալում են, գուցե ընկնեիր նրանց ոտքերը և աղաչեիր աղոթել քեզ համար, և քո ձեռքով փշրեիր քո աստվածների պատկերները:

Զայրանալով, բռնակալը դարձյալ չորս զինվորի հրամայեց խոշտանգել նրա նստատեղը, և երբ այնուհետև տեսավ նրա թափված աղիքները՝ հրամայեց թեթևացնել տանջանքը, որովհետև շատ նուրբ էր և մոտ քսանութ տարեկան երիտասարդ:

Եվ բռնակալն ասաց նրան.

– Տեսնո՞ւմ ես, որքան եմ խնայում քեզ: Եթե միայն աստվածներին խոստովանեիր՝ բժիշկ կկանչեի և կհրամայեի բուժել քեզ: Եվ այդ օրվանից ինձ հետ կշրջեիր արքունիքում:

Ադրիանոսն ասաց.

– Քանի որ խոստացար ինձ բժշկել և պատվել, մտցնել քո թագավորական ապարանքը, թող քո աստվածներն ինձ պատմեն, թե ի՞նչ կուզենան ինձ անել և ինձ խոստանան իրենց հաշտությունը, և ես կերկրպագեմ նրանց և զոհ կմատուցեմ՝ ինչպես կամենում ես դու:

Ասաց թագավորը.

– Բայց նրանք չեն խոսում:

Ադրիանոսն ասաց.

– Ո՛վ ամբարիշտ և անօրեն, հապա ինչո՞ւ ես խոսուննելիս զոհում անխոսներին:

Բարկացած թագավորը հրամայեց կապել նրան և բանտ տանել, հայտնելով օրը, երբ բոլորին միասին կբերեն դատարան: Եվ զինվորներն առան նրանց, տարան բանտ, ոմանց ձգելով, ոմանց քարշ տալով, ովքեր տանջանքներից հյուծված էին:

Իսկ երանելի Անիտոլին օգնում էր սուրբ Ադրիանոսին և ձեռքը դրած նրա պարանոցի տակ ասաց նրան.

– Երանելի ես դու, տեր իմ, որ արժանի եղար դասվելու սրբերի շարքը: Երանելի ես դու, տեր իմ, որ արժանի եղար և չարչարվեցիր Նրա փոխարեն, որ քեզ համար չարչարվեց: Ահա արդարև գնում ես տեսնելու Նրա փառքը, որովհետև ովքեր կցորդ եղան Նրա չարչարանքներին՝ կհաղորդվեն և Նրա փառքին:

Եվ երբ մտան բանտը, բոլոր սրբերը հավաքվել, ողջունում էին Ադրիանոսին, նույնիսկ թուլացած գետին ընկածները, սողալով գնում էին նրան տալու խաղաղություն և համբուրում էին սրբության ողջույնով: Իսկ երանելի Անիտոլին մաքրում էր սուրբ Ադրիանոսի արյունն ու օծում իրեն: Եվ սուրբերը ողջունելով Ադրիանոսին ասացին.

– Ուրա՛խ եղիր Տիրոջով, քանի որ անունդ գրանցվեց առաքինի նահատակների հետ:

Ադրիանոսն ասաց նրանց.

– Դուք ևս ուրախ եղեք, քանի որ այդ վաստակը ձերն է, և ձերն է պսակը: Եվ աղոթեցեք, որ չար բան չսերմանե իմ մեջ բանսարկուն, որովհետև շատ նեղված եմ:

Սրբերն ասացին նրան.

– Քաջալերվի՛ր, քեզ չի հաղթահարի սատանան, որովհետև տեսնելով քո մեծ ժուժկալությունը՝ փախավ քեզանից: Եվ երբ մարդ էիր, մենք վախենում էինք, իսկ այժմ, երբ վեր

եղար քան մարդկային բնությունը, բանսարկուն չի կարող օտարոտի բան իմանալ քո մասին: Այսուհետև մի՛ երկմտիր:

Որոշ հավատացյալ կանայք և շատ ուրիշներ ծանոթ կանանցից, մշտապես սրբերի մոտ էին, սպասավորելով նրանց, ուրիշները կտավով մաքրում էին վերքերի թարախը: Այսպես բոլորը իրենց միջև բաժանել էին սրբերին, իրենց սպասարկմամբ վշտակից լինելու նրանց չարչարանքներին: Թագավորը լսելով, թե ի տես սրբերի քաղաքը դատարկվեց կանանցից, մանավանդ ազատներից, խիստ զայրացավ և հրամայեց կանանցից ոչ մեկին չթույլատրել մտնելու սրբերի մոտ: Երբ երանելի Անիտոլին իմացավ, թե կանանց արգելվել է սպասավորել սրբերին՝ կտրեց իր մազերը և տղամարդու զգեստ հագավ, մտնում էր նրանց մոտ որպես տղամարդ և սպասավորում էր նրանց միայնակ, ինչպես առաջ բոլոր կանայք: Եվ երբ բոլորի կարիքները բավարարում էր՝ նստում էր Ադրիանոսի ոտքերի մոտ և մեծ աղերսանքով ասում նրան.

– Աղաչում եմ քեզ, տե՛ր իմ, հիշիր մեր համատեղ կյանքը, հիշի՛ր, տեր իմ, որ գործակից եղա քեզ մարտիրոսությանդ մեջ, հիշի՛ր, որ ես պատրաստեցի քեզ նահատակությանդ, հիշի՛ր, որ ես առիթ եղա այդ պսակիդ. աղաչի՛ր մեր Տեր Քրիստոսին՝ ինձ ևս քեզ հետ վերցնելու, որ ինչպես կցորդ եղանք այս աշխարհում՝ վշտագին ու մեղսասեր կյանքում, նույնպես և հաղորդ լինենք այս երանելի վախճանին: Աղաչում եմ քեզ, տեր իմ, նախ այդ հատուցումը հայցիր Փրկչից ինձ համար, և դա լինի քո խնդրանքների սկիզբ: Եվ գիտեմ, որ քեզ կտա, քանզի ախորժում է ձեր հայցելը, որովհետև դու ինքդ տեղյակ ես և գիտես մեր քաղաքի անառակությունը և Թագավորի ամբարշտությունը. զգույշ, եթե մեկին լսելով բռնավորն ինձ անաստված անօրեններից մեկի հետ ամուսնացնի, ամբարիշտները չպղծեն քո սուրբ անկողինը: Հենց դա սովորիր երանելի առաքյալից: Տուր ինձ ողջախոհության ոգի՝ վախճանվելու քեզնից հետո: Սովորեն և այլ կանայք երախտավոր լինել իրենց այրերին, տեսնելով քո դուրը իմ նկատմամբ:

Այս ասելով դարձյալ ելավ տղամարդու կերպարանքով, սրբերի շուրջը պտտվեց, դարմանելով նրանց, ում՝ ինչպես հարկ էր. կերակրում էր փոքր և չնչին հիվանդակերով, որովհետև շատ էին տկարացել, և սկսեցին այնուհետև ապաքինել վերքերը: Լսեցին և մյուս կանայք, թե կտրեց Անիտոլին իր մազերը և տղամարդու կերպարանքով սպասավորում է սրբերին, բարի նախանձով նախանձեցին և կտրեցին իրենց մազերը և տղամարդու զգեստով մտնում էին ու սպասավորում սրբերին: Մինչև իսկ աշխարհական մարդիկ, նաև ոչ քիչ ազատներ նույնն էին անում:

Երբ բռնավորը լսեց, թե ինչ են անում կանայք, և որովհետև սրբերը մահամերձ էին, հրամայեց դարբնի սալ տանել բանտ և դնել նրանց ոտքերի տակ և մեծ նիգով ջարդել նրանց սրունքները և ասաց.

– Այլ մարդկանց նման չավարտեն իրենց կյանքը:

Այդ լսելով դահիճներն խկույն եկան և բանտ բերին հրամայված գործիքը:

Երբ երանելի Անիտոլին իմացավ մահվան վճիռը, ընդառաջ գնաց դահիճներին և ասաց նրանց.

– Աղաչում եմ ձեզ, տերեր, սկիզբը Ադրիանոսով արեք, հանկարծ տեսնելով սրբերի այդպիսի դառն տանջանքները չզարհուրի և զգուշանա:

Եվ երբ դրին սալը նրա ոտքերի մոտ, երանելի Անիտոլին բռնեց սուրբ Ադրիանոսի ոտքերն ու պարզեց սալի վրա, և մեծ ուժով դահիճները նիգով խփեցին, կտրեցին նրա ոտքերը՝ ջախջախելով բոլոր ոսկորները:

Ասում է նրան Անիտոլին.

– Աղաչում եմ քեզ, ծառա Քրիստոսի, քանի կենդանի ես՝ դաստակդ ձգիր ու դա ևս կտրիր քեզնից, որպեսզի այն սրբերին հավասար լինես և դու, քանի որ նրանք ավելի չարչարվեցին՝ քան դու:

Եվ նա կարկառեց բազուկները, իսկ կինը դրեց սալի վրա, և դահիճը զարկեց, անջատեց և [գցեց] սալի վրայից: Եվ սուրբը վաղվաղակի ավանդեց հոգին:

Դահիճները սալով շրջելով՝ նիգով ջարդեցին բոլորի սրունքները: Դեռ դահիճներն իրենց չհասած՝ սրբերը նախապես պարզում էին ոտքերը՝ գոչելով.

– Տե՛ր Հիսուս, ընդունիր մեր հոգիները:

Եվ բոլորն ավանդեցին իրենց հոգիները:

Այնժամ բռնավորը պիղծերի ու անիրավների հետ մտածեց և հրամայեց կրակը գցել նրանց մարմինները, ասաց.

– Թող գալիլեացիք գան վերցնեն նրանց:

Իսկ երանելի Անիտոլիան վերցրեց-պահեց Ադրիանոսի կտրված դաստակը և գցեց իր ծոցը: Այնուհետև դահիճները վերցրին սրբերի մարմինները և տարան կրակի մեջ գցելու, քանի որ նախապես վառած էր կրակը: Հետևից գնում էր և երանելի Անիտոլին և սրբի արյան կաթիլները վերցնում էր դաստակը ու օծում ինքնիրեն: Նույնպեսև մյուս բարեպաշտ կանայք գնում էին հետևից, նաև ոչ քիչ ազատներ, պատվական կտավներով ու ծիրանիներով ընդունում էին սրբերի մարմնից իջնող արյունը և թաքցնում իրենց ծոցում: Նույնիսկ դահիճների շորերը բազում ոսկիով ու ակնեղեն զարդերով գնում էին, որովհետև սրբերի արյամբ էին թաթավուն: Եվ հասան հնոցին, վերևի կողմից [դիերը] գցեցին մեջը: Այնտեղ կային և բարեպաշտ կանայք, որ մեծ գոչյունով լալիս էին ասելով.

– Հիշեցե՛ք մեզ, տերե՛ր, ձեր հանգստյանը:

Իսկ երանելի Անիտոլին ուզում էր նետվել հնոցը և ճչալով ասաց.

– Աղաչում եմ ձեզ, Աստծու ծառաներ, ես ևս գամ ձեզ հետ:

Եվ երբ սրբերին հնոցը գցեցին, հանկարծակի որոտումն եղավ և սաստիկ անձրև և փայլակ և մեծ երկրաշարժ, մինչև քաղաքի և ամեն տեղի սասանելը, և հնոցի կրակը մարեց անձրևաջրի առատությունից: Երբ դահիճները տեսան այդ արհավիրքները՝ փախան, և նրանցից ոմանք փախչելիս երեսնիվայր ընկնելով մահացան: Եվ հավատացյալները, որ այնտեղ էին, երանելի Անիտոլիի ու այլ կանանց հետ, գնացին-հափշտակեցին սրբերի նշխարները և գտան անվնաս, մազ անգամ չէր այրվել այն հրի մեջ:

Մի բարեպաշտ և երկյուղած Աստծու մարդ իր կնոջ հետ մոտեցավ երանելի Անիտոլիին և մյուս եղբայրներին, աղաչում էր և ասում.

– Մենք այս քաղաքից այն կողմ կլինենք, որովհետև այս քաղաքի ամբարշտությունն ու անօրեն թագավորի արյունահեղությունը տեսնելով, վաղուց հետե փափագում էինք գնալ Բիզանդիոն՝ ատելի համարելով մեր վայրը: Արդ եթե կամենում եք՝ սուրբ վկաներին տվեք մեզ, նավ բարձրացնենք գնալու այն կողմը: Մեզ մոտ կպահենք մինչև անօրեն թագավորի մահը, ապա այն ժամանակ պատշաճ գերեզման կպատրաստենք դրանց՝ երկրպագության տեղում, քանի որ մենք սովորություն ունենք այդպես անելու, իսկ եթե այստեղ թողնենք՝ թագավորը կլսի և կհրամայի ևս մի անգամ այրել դրանց, և մենք կլինենք մատնողներ նրանց, որոնց Աստված փրկեց հրից՝ երկրաշարժով ու որոտմամբ և անձրևներով:

Այդ խոսքը հաճո թվաց նրանց: Եվ առան-դրեցին նավի մեջ ու տարան Բիզանդիոն. հաջողակ հողմը ուղեկից եղավ նրանց: Իսկ երանելի Անիտոլին մնաց այնտեղ, ունենալով Ադրիանոսի ձեռքը, որովհետև մտածում էր՝ «գուցե հափշտակվեն սրբերի մարմինները, և իմ հույսը մատնող լինեմ»: Այնուհետև վերցրեց դաստակը և ծիրանիի մեջ պատեց խնկով ու յուղերով և դրեց իր մահճի մեջ՝ սնարի կողմից, որ ոչ ոք չգիտեր:

Քիչ օրեր անց քաղաքացի մի այր՝ հազարապետ, մոտեցավ թագավորին, իրեն կնության խնդրեց երանելի Անիտոլին, քանի որ ունևոր էր և առաջինը ազատ կանանցից և լիովին պարկեշտ: Այրը ծանոթ կանանցից ոմանց ուղարկում է խոսելու Անիտոլիի հետ: Իսկ նա պատասխանելով ասում է եկող կանանց.

– Ես երբ լսեցի՝ շատ ուրախացա, որովհետև ո՞վ կտար ինձ զույգ լինել այնպիսի մարդու: Բայց թույլ տվեք ինձ երեք ամիս, որպեսզի պատրաստվեմ, քանի որ փոքր բան չէ ինձ առաջարկվածը:

Սա հնարում էր, որովհետև ուզում էր փախչել այնտեղ, ուր սրբերի մարմիններն էին: Եվ ճանապարհ դրեց [իբր] հա-վանելով կանանց միտքը: Եվ երբ կանայք գնացին, ելավ երանելի Անիտոլին և գնաց մահճի մոտ, ուր երանելի Ադ-րիանոսի ձեռքն էր, և գետին ընկնելով ասաց.

– Տեր Աստված իմ, նեղյալների Աստված, որ օգնական ես անօգնականներին, որ մոտ ես սրտամաշներին, նայիր ինձ՝ քո մեղավոր աղախնին և պղծության մի տանիր քո վկա Ադ-րիանոսի մարմնակցիս, մի՛, Տեր իմ, մի՛ մոռացիր քո ծառա Ադրիանոսի տանջանքը, չլինի, Տեր, որ մոռանաս նրա կա-պանքները, որ փորձանք ընդունեց քո անվան համար, չլինի, Տեր, որ մոռանաս սրա ազդրերի կտրելն ու ձեռքերի կոտրելը, չլինի, Տեր, որ ընդունայն դարձնես ջանքն ու տանջանքը, որ տեսան քո ծառաները քո անվան համար: Այլ հիշիր նրանց, Տեր, և ինձ ազատիր քո թշնամիներին պատահելուց. նենգ բանսարկուն չպղծի քո ծառա Ադրիանոսի այս անկողինը: Դու ես, որ փրկեցիր քո ծառաներին բորբոք հրից, փրկիր և ինձ ամբարիշտների ակնկալությունից:

Եվ այս ասելով՝ նա հոգնությունից ու սրտի խանդա-ղատելուց քնեց, և ահա այն սրբերից մեկը երևաց նրան և ասաց.

– Խաղաղություն քեզ, Անիտոլի, աղախին Քրիստոսի, քաջալերվիր, Աստված քեզ չանտեսեց, և ոչ մենք մոռացանք մեր հանդեպ քո ցուցաբերած վաստակը: Եվ երբ Քրիստոս մեզ երևաց, իսկույն աղաչեցինք քեզ համար, որ գաս մեզ մոտ, և քո անունը գրվեց սրբերի ցանկում:

Ասում է նրան երանելի Անիտոլին.

– Երևա՞ց Քրիստոս քեզ՝ իմ տիրոջը:

Ասում է.

– Այո՛, և մեզնից առաջ Քրիստոսին երևաց քո տեր Ադ-րիանոսը: Իսկ դու ել և մտիր նավ, մեզ մոտ, որ այնտեղ քեզ այցելի Աստված և բերի մեզ մոտ:

Եվ իր մտքում աղոթեց, քնից արթնացավ և ամեն ինչ թողնելով՝ Ադրիանոսի դաստակն առավ իր հետ ու գնաց:

Շտապելով գնում էր այնտեղ, ուր սրբերի մարմիններն էին: Նաև այլ հավատացյալների գտավ Թագավորից փախստա-կան և նրանց հետ նավարկեց: Երբ նրան կնության խնդրող հազարապետն իմացավ, որ փախել է, մտավ Թագավորի մոտ և խնդրեց նրա օգնությունը: Եվ իր հետ առավ բազում զորք, նրանց հետ մտավ նավ և գնաց նրա ետևից: Եվ մոտ հազար ասպարեզ նավարկեցին, և հանդիպակաց հողմ ելավ և նրանց դցեց ետ՝ որտեղից նավեցին: Եվ նրանցից ոմանք մեռան ալիքների սաստկությունից ընկղմված:

Եվ երբ կես գիշեր եղավ՝ մոլորության հոգի սատանան նավի տեսքով երևաց Անիտոլին և նրա հետիններին: Նավի մեջ էին նավապետ ու նավավարներ՝ հույժ խելամուտ: Եվ նավապետն ասում է նրանց բարձրաձայն.

– Ո՞րտեղից ելաք և կամ ուր գնալու միտք ունեք:

Նրանք ասացին.

– Նիկոմիդիայից ելանք և նավում ենք Բիզանդիոն:

Ասաց նրանց.

– Մոլորվել եք, այդ ճանապարհը չէ, այն կողմ գնացեք, ձախ կողմ թեքվեցեք:

Քանի որ ուզում էր նրանց անդունդը տանել, որ այնտեղ կորցնի: Եվ նրանք կարծեցին, թե իսկապես նավաստի են՝ ելան փոխեցին առագաստն ու դիմեցին այնտեղ, ուր ասաց այն մոլորեցուցիչը: Եվ ահա հանկարծակի սուրբ Ադրիանոսը երևաց իբրև նավորդ և ճչալով ասաց.

– Եկե՛ք՝ ինչպես գալիս էիք և մի՛ լսեք նրան, որովհետև դա սատանան է, ձեզ կորցնել է ուզում:

Եվ իսկույն չքացավ պիղծ դևը: Եվ երանելի Անիտոլին կանգնեց, տեսավ սուրբ Ադրիանոսին, որ գնում էր իրենց առջևից: Եվ խնդալից ասաց բարձրաձայն.

– Ահա տերն իմ:

Իսկ նա չերևաց նրանց: Այնուհետև հաջողակ քամի ելավ, նրանց տարավ, արշալույսին հանեց Բիզանդիոն: Ել-նելով նավից գնացին այն տունը, ուր սրբերի մարմիններն էին, և ընկնելով նրանց մոտ՝ երանելի Անիտոլին երկրպագեց

նրանց համբերող և տոկացող ոսկորներին: Եվ բերեց կտրած դաստակը, դրեց Ադրիանոսի մոտ և ծնրադրեց աղոթքով: Եվ երբ աղոթքը [վերջացրեց], մտավ և ողջունեց սրբերի բոլոր եղբայրներին ու քույրերն և աղաչեց նրանց աղոթել նրա համար, քանի որ այնտեղ էին հավաքվել Քրիստոսի բոլոր հավատացյալները և օրհնում էին Աստծուն: Նրանք աղաչում էին երանելի Անիտոլիին մի փոքր հանգստանալ, որովհետև շատ է հոգնել: Եվ երբ քնեց՝ երազում երևաց նրան սուրբ Ադրիանոսը և ասաց.

– Բարո՛վ եկար, Անիտոլի, Քրիստոսի աղախին և մարտիրոսների դուստր, այսուհետև արի քո հանգստին և ստացիր վաստակներիդ վարձը:– Եվ նույն պահին [Անիտոլին] ավանդեց հոգին: Եվ քիչ ժամեր անց եղբայրները եկան նրան արթնացնելու և վախճանված գտան: Եվ բոլորը աղոթքի կանգնեցին և նրան դրեցին սուրբ վկաների հետ և խնդրեցին աղոթել սրբերի գերեզմանին և այնպես կնքեցին տունը: Եվ այրերի ու կանանց բազմությունը մնաց այնտեղ՝ բոլորովին հրաժարվելով ամեն ինչից, ծառայելով մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որին զորություն և փառք Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ:

ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱԳԻՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս սուրբ Աթանագինեսը քրիստոնյա էր, քրիստոնյա ծնողներից, եպիկացոց գավառից, այսպես կոչված Փիլաքթովե գյուղից, որ ասվում է նաև Սագրուպինե: Սրա գյուղը հարկատու էր սեբաստացիներին: Երբ հասունացավ՝ ամուսնացավ. դա նաև իր ծնողների կամքով էր: Ունեցավ որդի, նրան անվանեց Պատրոփիլոս: Բարեպաշտ կյանք էր վարում, և Սեբաստիայի եպիսկոպոսը նրան քահանա օծեց: Վերադառնալով հիշյալ գավառը՝ քորեպիսկոպոս կարգվեց: Եվ քորեպիսկոպոսություն արեց պատվիրանի համաձայն:

Այնուհետև, այն ժամանակ, Գթաց բարբարոս ազգը եկավ հասավ այս աշխարհը և բազում այրեր ու կանայք, մանուկներ գերեց, տարավ իրենց երկիրը: Իսկ այս սուրբ Աթանագինեսը, իբրև Աստծու հավատարիմ քահանայապետ տրտմեց գերվածների համար: Եվ ամենաբարեպաշտ կերպով բազում ինչք հավաքեց, գնաց բարբարոսների աշխարհը՝ փրկելու գերիներին և այնտեղից վերադարձնելու իր ոչխարները, որովհետև բարի հովիվ էր և առաքինի: Այդ բանն արեց բազում անգամ: Նա ճանապարհն ընթանում էր արդարությամբ և կատարում Աստծու պատվիրանները: Հասավ մի գյուղ, որ մի լեռան ու շատ խոր մի լճի մոտ էր:

Այդտեղ բնակվում էր ահավոր մեծ մի վիշապ, որ կոտորում էր մերձակա բնակիչներին, հափշտակում նրանց անասուններն ու երեխաներին: Այն գավառի բնակիչները մեծ սարսափի մատնված՝ ասես դիվական սնապաշտ մոգությամբ վիճակ էին գցում, և [ժամանակ առ ժամանկ] ո՛ւմ բաժին ընկներ, մի մանուկ նետում էին վիշապի տեղը, որպեսզի նրա մահով այն վիշապը հաշտվի իրենց հետ՝ սպանելով մանկանը: Այս տեսավ սուրբ Աթանագինեսը, զարմացավ, և մի երեխայից տեղեկանալով, թե ինչ պատճառով է կապվել ու նետ-

վել, ոչնչանալու և ուտվելու է վիշապից, աղոթելով ասում էր. «Տեր Աստված, օգնական եղիր»: Եվ խաչակնքելով մանկանը՝ արձակեց կապերը: Եվ երեխայի մոտ աղերսում էր՝ տալով Տեր Հիսուսի անունը: Զգուշորեն բռնեց մանկանն ու նրա հետ եղածներին, և ասում է այսպես. «Տեր Աստված հավիտենից, որ ինձ հրամայեցիր այստեղ հասնել ու տեսնել այս մանկանը, որ գազանին կեր էր դառնալու, լսիր քո ծառային, Տեր, և առավել սուրբ սրտով քեզ դիմող այս մանկանը: Ե՛կ, Տե՛ր, օգնության և ցույց տուր քո բարերարության զորությունը այստեղ, և հզոր համարվող վիշապին հարվածելով՝ դարձրու անարի և անզոր, պատռելով նրան, որպեսզի բոլոր տեսնողներն ու այս երկրի բնակիչները հավիտյանս ճանաչելով քո անբավ ու անհասանելի զորությունը՝ հավիտյան փառավորեն քո մեծ և սքանչելի անունը: Եվ ես՝ քո ծառան, ուրախանալով ընթանամ քո անվան ճանապարհով»:

Երբ նա աղոթում էր, վիշապը դուրս սողաց ու երևաց սարսափելի ու ահավոր տեսքով: Եվ սուրբ Աթանագինեսը երկինք նայելով՝ բարձրաձայն հառաչելով Տիրոջ [անունով]՝ երեք անգամ հարվածեց վիշապի գլխին շերափայտե գավազանով, որ բռնել էր ձեռքին և կրում էր սովորաբար, և խկույն պատռված գազանը ոչնչացավ: Այնժամ երանելին մի հիացմունք պատեց, և մանկան ծնողներն իմացան ու այնուհետև սուրբին նվիրեցին երեխան: Եվ նա այնտեղի բոլոր բնակիչներին հավատքի բերեց, գոհանալով Տեր Հիսուսից, որ ճանաչելի եղավ նրանց:

Այս տեսավ երկրի եպիսկոպոսը և աստվածային հայտնությունից իմացավ սուրբի արժանավորությունը, աստվածազգայց այրին քահանայապետ ձեռնադրեց, նրան տալով եպիսկոպոսական իշխանություն: Արդ, այս երանելի Աթանագինեսը երեք անգամ արժանացավ այսպիսի շնորհի, գնաց իր ճանապարհը և բարբարոսական աշխարհից շատերին վերադարձրեց ու բերելով յուրաքանչյուրին իր տեղը՝ տվեց նրանց եղբայրներին ու ծնողներին: Իսկ ինքը եկավ իր գյուղը, որ կոչվում էր Փիլաքթովե, թաքցրեց ստացած եպիսկոպոսական շնորհը, որպեսզի չտրտմեցնի Սեբաստիա քաղաքի եպիսկոպոսին, որն իրեն քորեպիսկոպոս էր կարգել: Այնտեղ էր իր որդի Պատրոփիլոսի հետ, որ և հոր մահից հետո արժանացավ ընդունելու քորեպիսկոպոսության աթոռը և արժանի եղավ խոստովանություն ընդունելու: Ու մինչդեռ այն նույն Փիլաքթովե գյուղում էր, Տիրոջից ավելի մեծ շնորհք ստացավ: Եվ ջրախառն հողմ բարձրացավ՝ այլազգիների հարվածներով, քանի որ բարբարոսական գունդը վերստին հարձակվեց և գրավելով երկիրը և նրա եկեղեցին, որ գյուղում էր և որ սուրբն ինքն էր կառուցել՝ այրեցին: Մինչդեռ վառվում էր՝ նա տեսավ և խնդրեց Տիրոջից, և ջրախառն հողմ բարձրացավ եկեղեցու սրահի միջից և մարեց կրակը: Ու մինչև այժմ եկեղեցու մեջ տեսանելի է այն տեղը, ուսկից բարձրացավ հողմը: Նույն տեղում եկեղեցու մարդակները կիսով չափ այրված էին: Տեր Քրիստոսից ստացած շնորհով նաև ուրիշ բազում զարմանալի բաներ էր կատարում. ոմանց հանդիմանելով դարձի էր բերում՝ առավելապես իրեն տրված իմաստությամբ ու մտքով. ուրիշներին խրատելով, ամեն [տեսակ] բարիք էր գործում, բոլորին հաշտեցնելով Աստծու սիրով:

Իսկ Սագրուպենի սահմանին այսպիսի զարմանալի բան կատարվեց. մի ագարակի անունը Գողոյե է, հինգ կամ վեց մղոն հեռու Փիլաքթովեից: Ագարակում ոմանց միջև ոխ ու խռովություն ընկավ մատակների պատճառով, և մեծ էր հակառակությունը: Երբեմն սուրբ Աթանագինեսի մոտ գալիս էին դատի: Այնչափ բորբոքվեց թշնամանքը, մինչև միմյանց վրա գենք քաշելը: Եվ կատաղությամբ իրար խառնվեցին, և նրանց հակառակությունն այնչափ սրվեց, մինչև որ նրանցից ոմանք սրով խոցված վախճանվեցին: Այդ տեսնելով՝ երիցս երանելի նահատակ Աթանագինեսը տրտմեց այդքան հակառակությունից ու խակամտությունից, իր սուրբ ձեռքերը պարզեց դեպի Աստված և աղաչեց, որ ոչնչացնի նույն ագարակի մատակները, որի համար հենց կռվում էին, և [որպեսզի] այնուհետև այլևս այնտեղ մատակների հոտեր չլինեն:

Եվ անմիջապես նրա խնդրանքները կատարվեցին. ինչ շնորհ որ խնդրեց Աստծուց՝ իսկույն տրվեց նրան: Եվ մատակների տերերը զղջացին չարիք գործելու համար, և բազմությունը հավաքվելով ընկնում էր սրբի ոտքերը, որ դարձյալ աղոթի վերացնելու նզովքը: Իսկ սուրբը չուզեց լսել նրանց աղաչանքը և ասաց. «Արդար պատճառի համար Աստծուց խնդրածը վերացնել չեմ կարող, բայց Տեր Աստծուց կխնդրեմ մատակների փոխարեն ձեզ տալ ուրիշ մեծ մխիթարություն՝ բոլոր անասունների ծնունդի հաջողումն»: Արդ, այժմ ևս Գողոյեի ագարակում սրբի աղոթքով այսպիսի շնորհ ստանալով մեծ հաջողության մեջ են, իսկ եթե մեկը փորձի մատակ ձեռք բերել՝ իսկույն մեծ վնասի կհանդիպի, սատկում են մյուս կենդանիները ևս: Առավել սքանչելի զարմանք էր, որ մինչև այժմ կա և մնում է, որովհետև Գողոյեին սահմանակից այլ ագարակներում միշտ տեսնում ենք՝ մատակների ոչ սակավ հոտեր գալիս արածում էին Գողոյեի թփուտներում և չէին վնասվում, որովհետև նզովք չկար նրանց վրա, ուստի չի ազդում նրանց սատկեցնելու [չափ]: Այս ամենը եղել է սուրբ Աթանագինեսի միջոցով:

Բարբարոսներից խաղաղություն եղավ, այնուհետև թագավորում են Դիոկղետիանոսը և Մաքսիմիանոսը՝ կոչված Հերկուղիա: Եվ Ագրիկողայոս հեգեմոնի օրոք քրիստոնյաների շրջաններում բազում հալածանքներ եղան թագավորներից Քրիստոսին հավատալու և նրանց ատելության պատճառով: Եվ հրաման եղավ, եթե մի քրիստոնյա բռնվի և չուզենա զոհ մատուցել աստվածներին՝ տանջանքի ու չարչարանքի կենթարկվի: Եվ բռնվեցին հինգ քրիստոնյա այր, որոնց անուններն էին՝ Թեոփրատոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Հեսեքիոս և Կղեոնիկոս, և շղթայակապ տարան անօրենների մոտ, որոնք չարաչար չարչարելով սպանեցին: Այս իմացավ սուրբը Աթանագինեսը, գնաց տեսնելու սրբերին քանի դեռ բանտում էին, և մխիթարական խոսքերով սփոփեց նրանց, ապա գնաց և նամակ հղեց սրբերին, որ հաստատուն և պինդ մնան հավատի մեջ: Այսպես էր նամակը.

«Իմ երանելի տերերին, Քրիստոսի ընտրյալ վկաներին, որոնց անունները գրված են կյանքի գրքում. Թեոփրատոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Հեսեքիոս, Կղեոնիկոս. Աստծով ողջունում է Աթանագինեսը:

Դուք յուրաքանչյուրդ ճանաչել եք երկնավոր Աստծու զորությունը և վարքով վաստակածի հատուցման տարբերությունը: Եվ փորձելով իմացեք, որ Աստծուց մեծարված կամ ընտիր ու երանավոր լինելուց ավելի մեծ բան չկա, քան եթե ոչ վշտանալ և կապվել ու չարչարվել Աստծու համար, և հաղորդակից լինել նույնպիսի չարչարանքի, և նշավակ ու տեսանելի լինել հանուն երկնավորի, և նվաստացումով ու նեղությամբ հաճո լինել բարերար Աստծուն:

Արդ, ուրախ եղեք, և երանի ձեզ. որի համար և ես հոժարակամ ոչ միայն եկա ձեզ մոտ և ցույց տվի իմ սերը, այլև գրությամբս ձեր ցանկությունը կատարեցի: Այժմ սրա փոխարեն դուք մեզ կհատուցեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի [դատաստանի] օրը: Երբ վախճանվեք՝ շուտով հայտնի կդառնան ձեր բարի գործերն ու լավ ընտրությունը, իսկ բազմաթիվ մարդիկ լսելով ձեր այդպիսի ճգնության բարի համբավը՝ կհաստատվեն հավատքի մեջ: Եվ ի՞նչ պետք է ես անեի, որ գրում եմ, եթե ոչ՝ այսպիսի հոժարակամ գրով հաստատելու ձեր ոգին, ամենայն բարությամբ և առավելյալ գիտությամբ լցվածներիդ, որ կարող ու հաղթող եք, և ձեր համբերությունը նայելով ուրիշները ևս խրատվեն: Եվ մենք այսուհետև ձեզ համար աղոթում ենք անդադար առ Աստված երկնավոր՝ ձեզ տալու կատարյալ շնորհներ, որ դուք ստանաք վերին շնորհների հաղթանակը՝ ձեր հոժար կամքի համաձայն: Եվ, ինչպես խնդրեցինք մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյանը՝ երբ նահատակի պսակի արժանանաք, բարեխոսեցեք մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի առջև՝ մենք ևս արժանի լինենք ձեր ստացածին»:

Սա գրելով սուրբ վկաներին՝ իրավացի համարվեց Փիլաքթովեում նրանց համար պատրաստել հանգստարան, և այս մասին մտածելով՝ նրանց վախճանվելուց առաջ կառուցել

սկսեց աղոթատուն՝ ութանկյունի սրահաձեղուն, որ մինչև այժմ կոչվում է Գումբեթաձև, և հայտնել էր, թե իր համար լոկ ապարանք է կառուցում: Այդ պատճառով շինության ճակատը արևելք էր նայում: Նույն գյուղում կառուցել էր նախահիշյալ եկեղեցին ևս: Գմբեթի տակ պատրաստեց սրբերի գետնափոր գերեզմաններ, ուր տեղավորեց հիշյալ վկաներին: Նաև ինքը՝ սուրբ վկա Աթանագինեսը այժմ նույն գերեզմանում է՝ սրբացնելով աղոթատունը:

Երբ այսպես եղավ՝ տարածվեց սուրբ այրի բարեպաշտության համբավը, հասավ անօրեն թագավորին, և այս պատճառով նրանից դժկամում էին իշխանները, թե՝ քրիստոնյաների աղանդն է մեծարում: Եվ հրաման եղավ զորականներին՝ գտնել անվանի և առաքինի վկա, նահատակ Աթանագինեսին և տանել Սեբաստիա, Ագրիկողոս հեգեմոնի մոտ, որ չարչարելով սպանի նրան:

Այս լսելով՝ երանելին չուզեց անօրենների ձեռքն ընկնել, թաքնվում էր իր Փիլաքթովե գյուղում, իսկ երբ որոնողները շատացան, այնտեղից գնաց հասավ բարձր լեռը, որ գյուղի դիմաց էր, քարքարոտ ու անապատ, և բազում ժամեր համբերելով այնտեղ, անջուր վայրում, ուժեղ տոթից ծարավելով՝ աղոթեց առ Աստված և ասում էր. «Հիսուս Քրիստոս, ցույց տուր ինձ, Քո ծառային, Քո մեծազոր շնորհը և այս վեմից ջուր հանիր, որպեսզի ես խմեմ, զովանամ՝ փառավորեմ Քեզ»: Այսպես ամբողջ հավատով բազում ժամեր աղոթեց, արժանացավ շնորհին, որ հայցեց: Վեմը բերանի պես բացվեց և բազմաճյուղ աղբյուր բխեց, որից խմեց, զոհացավ տվողից, և մինչև այժմ հայտնապես կա ջուրը քարի ծերպից:

Երբ նրա շուրջը եղած խռովքը փոքր-ինչ նվազեց, իջավ սարից և սրբերին ժողովեց Մովասուն կոչված ագարակում, և նրա աշակերտները լսելով՝ հավաքվեցին նրա մոտ, և նրանց հետ բարձրացավ թփուտները, որ Փիլաքթովե ագարակի մոտ էին: Ուզելով այնտեղ մի քիչ հանգիստ առնել, աշակերտներին ևս հրամայեց հապաղել ճանապարհին, իշխանի [ուղարկած] որոնողներից երկյուղ կրելով: Եվ սուրբը նիրհեց, երազում

տեսավ՝ կեսօրին աստղ փայլեց իր վրա, և դրանից հասկացավ Աստծու այրն աստվածասեր, որ իր առջև վկայությունն է: Եվ հետիններին հրամայեց աղոթել, ապա ննջեց, դարձյալ տեսավ՝ մրջյունների բազմություն, որոնք նրան դրդում էին հասնել հանդերձյալների խռովություններին, և արթնանալով գոհացավ Տիրոջից: Երբ մի փոքր լսեցին, տեսան հանդիպակաց կողմից կապկված քրիստոնյաների, որ զորականները տանում էին Սեբաստիայի ճանապարհով: Նրանք տեսան սուրբ այրին ճանապարհամերձ թփերում իջևանած, մի փոքր շեղվեցին դեպի նա և ասացին. «Թե գիտես՝ որտեղ է այրն Աթանագինես, ցույց տուր մեզ»: Եվ նա ուրացավ թե՝ Չգիտեմ, գնացեք Փիլաքթովե անդաստանը, այնտեղ հարցնելով կիմանաք: Եվ նրանք այսպես կապվածների հետ գնացին՝ ոչինչ չկասկածելով: Իսկ այն տեղը մինչև այժմ այդ դեպքից անուն ստացավ և կոչվում է Ուր Տերը բռնվեց: Բայց սուրբ Աթանագինեսը զղջաց՝ չլինի գնան նեղություն պատճառեն երկրագործներին, ելավ արագորեն հասավ նրանց և խնդրեց իջևանել Փիլաքթովեում և կերակուր ճաշակել իր տանը: Իսկ նրանք ակամա հազիվ պատկառելով խոնարհվեցին այրի պատվական տեսքից ու շքեղաշուք ծերունի հասակից, իջան նրա մոտ, կերակրվեցին, ապա արի ու քաջ նահատակը չթաքցրեց իր ով լինելը, այլ ասաց. «Որդյակներ, Աթանագինեսը, որին փնտրում եք, ես եմ, արեք ինձ՝ ինչ հրամայել է իշխանը»:

Եվ նրանք երկաթե կապանքներ ունեին, բայց չէին շտապում նրան շղթայել, պատկառելով նրա ծերությունից, մանավանդ երբ տեսան պատվասիրաբար պատրաստված սեղանը, խնդրեցին նրան մնալ այնտեղ, և ասացին. «Գնանք կասենք մեզ ուղարկողին, թե՝ Նրան չգտանք»: Իսկ սուրբը չհաճեց մնալ, այսպես ասաց. «Մինչև գյուղիս սահմանը հասնեմ՝ ինձ մի կապեք, և երբ այստեղից անցնեմ, այնժամ շղթայեցեք ինձ և տարեք՝ ինչպես հրամայված է ձեզ, որպեսզի դուք ևս ձեր իշխանի ցասմանը չարժանանաք: Իսկ ես կազմ ու պատրաստ եմ թե՛ չարչարվելու, թե՛ խոշտանգվելու Տիրոջ համար»:

Այնուհետև նրանք գնացին հասան մի գյուղ, որ կոչվում էր Սադոպոն, այնտեղ օրեր մնացին. սուրբը կանչեց գավառի երեցներին, խրատեց նրանց աղաչելով և ասաց. «Եղբայրներ և հայրեր, ազատներ և պատվավորներ, ազգակիցներ և բարեկամներ իմ, սիրելիներ և որդիներ, ամբողջ ժողովուրդ, աղոթեցեք ինձ համար պահքով հանդերձ, որպեսզի Աստված կատարի իմ նահատակության բարի հոժարությունը և Նրա առջև շնորհներ գտնելու ցանկությունը, որպեսզի նաև ես այնուհետև միշտ բարեխոսեմ բոլորիդ համար: Իսկ եթե այնպես ստացվի, որ ես դասալիք լինեմ որպես մարդ և խուսափեմ մարտիրոսությունից, աղաչում եմ ձեզ՝ քարով ու փշով պատելով ինձ հալածեցեք: Բայց հույս եմ տածում իմ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, որ ինձ չի լքի նրա մարդասիրությունը»:

Այս ասելով՝ ուզեց նախապես քողարկածը բացահայտել, այսինքն՝ եպիսկոպոսության պատիվը: Եվ իր մոտ կանչեց մերձակա երեցներին և ասաց. «Այժմ, եղբայրներ, հայրեր ու տերեր իմ, ձեզ կհայտնեմ, որ վաղուց հետե արժանացել եմ եպիսկոպոսության աստիճանի և չուզեցի դա հայտնել, որ սնապարծությունից զերծ մնամ: Բայց հիշեցեք, տերեր իմ ու եղբայրներ, խրատս, որ ձեզ կասեմ հաճեցնելու ձեր սերը, որպեսզի բոլոր կանոնական գործերն ու եկեղեցու սպասավորությունը պինդ պահեք, նախապտղի և պատարագների և այլ զանազան բաների կարգերը ամեն գյուղում բազում փութով ու ազատ ցանկությամբ կատարեք, որը կարգել եմ ես՝ կրտսերս ու նվաստս: Եվ երկյուղածությամբ, սիրով և փութով մեծարեցեք եկեղեցու շինությունը, սպասարկեցեք սրբությամբ, աշխարհականին դարձնելով չար ճանապարհից, և ոչինչ չպակասի իմ կարգածից, որպեսզի և դուք դատապարտման չենթարկվեք գալիք արդար դատաստանին: Այլ բոլոր կարգածներին բարի կամոք և հոժարական վաստակներով ավելացնել, քան նվազեցնել, որպեսզի դուք ևս մեծագույն վարձ ստանաք Քրիստոս Աստծուց»: Այսպիսի խոսքերով խրատում էր նրանց: Վերստին ասում էր. «Որ ամենևին

չթուլանան իմ մեջ եղած շնորհները, որ ստացա, արժանի լինելով եպիսկոպոսության, ուզում եմ երկու հոգու՝ ում որ փորձեցի, հոգևորական դարձնել և թողնել ձեզ»:

Եվ գրեց քաղաքի եպիսկոպոսին ողջունելով և հավանելով նրա մտքերը, «ոչ թե փառավորելով կամ մարդահաճությամբ, այլ որպեսզի չդատարկվի, ինչպես ասացի՝ իմ մեջ եղած շնորհքը, որ տրվել է ինձ Տիրոջից: Եվ սրանք ինձնից ընդունելով քահանայության պատիվ՝ հովվեն ձեզ իմ հրամանի համաձայն»:

Այս ասաց նա, և բոլորը նրա ոտքերն էին ընկնում արտասվելով և ասում. «Աղաչում ենք քեզ, հայր ծերունի, աղոթք արա մեզ համար, ինչպես որ մեր մասին հոգալով կատարեցիր Տիրոջը հաճելի բաներ, և մենք բոլորս հավան ենք քո սրբությանը, որ քո աստվածասիրությունը մեզ օրինադրեց, դարձյալ՝ այժմ քեզնից առաջ եկածներս իբրև ժառանգորդներ՝ հնազանդվում ենք»: Եվ նրանց ու ամբողջ գավառը հանձնեց քաղաքի եպիսկոպոսին, առավել ևս Փիլաքթովեի անդաստանը: Այնուհետև հրաժեշտ տվեց նրանց և մեկնեց:

Եվ ինչպես ավելի առաջ ասացինք, Ագրիկողոս իշխանը զայրացած էր սրբի դեմ, այն պատճառով, թե՝ «քրիստոնյաների աղանդի գլխավորն է»: Սրբին տարան նրա մոտ:

Սուրբը դեռ նոր էր հասել Սեբաստիա քաղաքը, երանելի սուրբ Աթանագինեսի աշակերտները՝ Արիստոնն ու Սևերիանոսը, որոնցից մեկը նրա գրակարդացն էր, իսկ մյուսը սաղմոսասացը, իմացան քրիստոնյաների հալածանքի մասին, մարտիրոսության պսակի նախանձորդ եղան և իրենց պատրաստեցին նահատակության, առանց Աստծու այրի գիտության, և գնալով սեբաստացոց քաղաքը, իրենց անունից գրություն ներկայացրին ամբարիշտ Ագրիկողոս իշխանին, մեծ թշնամանքով հիշելով թագավորներին ու իշխաններին, իբր ամբարշտաբար հալածում են քրիստոնյաներին և արժանի չեն թագավորության: Սա առավել չար բաներով մատուցեցին իշխանին, մտածելով, թե նա կարդալով թուղ-

թը՝ իսկույն կսպանի իրենց, և կմարտիրոսանան: Ագրիկողոս իշխանը ստանալով թուղթը և տեսնելով եղածը՝ զայրացավ նրանց, ավելի շատ սուրբ Աթանագինեսի վրա, երբ իմացավ, որ նրա աշակերտներն են, կարծելով, թե նրա կամքով է գրվել ամբաստանագիրը:

Նստեց ատյանում կաղանդից, հունվարի հինգից առաջ, հրամայեց ներս բերել Արիստոնին ու Սևերիանոսին և ասաց. «Այս գիրը, որ հրապարակավ առաջ եք բերում, ո՞վ գրեց այսպես չարաբանությամբ»: Սուրբ Արիստոնն ասում է՝ «Ես»: Իշխանն ասում է. «Սևերիանոսը ե՞ւս քեզ հետ էր»: Արիստոնն ասում է. «Այո՛, ինձ հետ էր. նա ասաց, և ես գրեցի»: Ագրիկողոսն ասում է. «Քանի որ այստեղ շատ բաներ եք գրել թագավորների ու իշխանների դեմ, որ չարժե ասել կամ լսել, անպատեհ բաներ եք գրել, և թղթին դրոշմված էր, թե մեհյաններ եք այրել. ստո՞ւյգ է, թե ոչ»: Սուրբ Արիստոնն ասաց. «Ո՛րի մոտով անցանք ու տեսանք՝ այրեցինք, բայց վայրերի անունները չգիտենք»: Իշխանն ասում է սպասավորներին. «Կախեցեք դրան և տանջեցեք»: Բազում ժամեր տանջեցին, և ասում է սպասավորներին. «Դրան խնայեցեք, որ ասի, թե որտեղից կամ ումից խրատվեց ու դրդվեց այս բանին գալու»: Սուրբ Արիստոնն ասաց. «Ես ոչ մեկից հորդորված չեմ առաքվել, այլ իմ որոշմամբ եկա մեռնելու Տիրոջ համար»: Իշխանն ասում է. «Դու պիտի ասես և այն, թե որ մեհյաններն եք այրել»: Սուրբ Արիստոնն ասում է. «Չգիտեմ»: Իշխանն ասում է. «Որովհետև խելքդ կորցրել ես»: Սուրբ Արիստոնն ասում է. «Իմ ուշքը տեղն է»: Իշխանն ասում է. «Քո դեմքից երևում է, որ այդպես չէ»: Արիստոնն ասում է. «Ոգեպես ողջ եմ»: Եվ իշխանը զայրանալով՝ հրամայեց կրկին տանջել նրան: Իսկ սուրբ Արիստոնը տանջանքի պահին աղոթում էր Աստծուն և ասում. «Տեր Հիսուս Քրիստոս, օգնիր ինձ»: Իշխանն ասում է. «Դրան իջեցրեք, թող Սևերիանոսը կախվի»: Եվ կախեցին սրան: Իշխանն ասում է. «Պատմիր մեզ տանջվելուց առաջ և ասա՝ո՞ր մեհյաններն այրեցիք: Սևերիանոսը ասում է. «Չգիտեմ»: Իշխանն ասում է. «Ո՞ւմ որդին ես»: Սևերիանոսն ասում է. «Ոչ հայր ունեմ

և ոչ մայր»: Իշխանն ասում է. «Հապա ի՞նչպես ծնվեցիր»: Սևերիանոսն ասում է. «Չգիտեմ»: Այնժամ իշխանը բարկացավ նրա վրա, հրամայեց տանջել նրան և ասում է. «Ասա՝ ո՞ր մեհյաններն այրեցիք»: Սևերիանոսն ասում է. «Որտեղ եղանք՝ այրեցինք»: Իշխանը. «Քեզ ի՞նչն ստիպեց այդ բանն անել»: Սևերիանոսն ասում է. «Քրիստոնեության ճանապարհով ընթանալով արեցինք այդ»: Իշխանն ասում է. «Ո՞վ համոզեց ձեզ այդ անել»: Սևերիանոսն ասում է. «Ոչ ոք»:

Իշխանն ասում է սպասավորներին. «Ես հրամայեցի խստագույն տանջանքի ենթարկել նրան»,- ու մինչդեռ քերում էին, Սևերիանոսն ասում է. «Ինձ իջեցրեք, և ես կասեմ ձեզ, թե ինչպես եղավ»: Ագրիկողոսն ասում է. «Միայն այս եմ հարցնում, ասա՝ ինչո՞ւ այրեցիք մեհյանները»: Սևերիանոսն ասում է. «Քեզ ասացի, որ այստեղ գալու ճանապարհին այրեցինք»: Իշխանն ասում է. «Իսկ ո՞վ հորդորեց ձեզ այդ անել»: Սևերիանոսն ասում է. «Բնավ ոչ ոք»: Իշխանն ասում է. «Եվ դեռ համառորեն նո՞ւյնն ես պնդում: Ուրեմն ավելի ուժգին և խստորեն տանջեցեք դրան»: Երկու անգամ տանջելուց հետո [Սևերիանոսն] ասում է. «Ինձ թողեք, և կասեմ»,- և արձակեցին: Իշխանն ասում է. «Ճշմարիտն ասա՝ քեզ ո՞վ առաքեց այստեղ կամ ո՞վ համոզեց կամ ո՞վ գրեց բազմամասնյա գիրը»: Սևերիանոսն ասում է. «Անդաստանում է բնակվում մեզ հորդորողը, մեկ օրաչափ հեռու է Գամիրքից»: Իշխանն ասում է. «Ի՞նչպես է կոչվում անդաստանը»: Սևերիանոսն ասում է. «Սագուպինեին սահմանակից է, և անդաստանը Փիլաքթովեն է»: Իշխանն ասում է. «Քեզ հորդորողի անունն ի՞նչ է»: Սևերիանոսն ասում է. «Աթանագինես եպիսկոպոս»: Իշխանն ասում է. «Ո՞ր գյուղից է»: Սևերիանոսն ասում է. «Փիլաքթովեից»: Իշխանն ասում է. «Իսկ Աթանագինեսը, որ ասում ես՝ եպիսկոպոս է, ի՞նչ էր ասում, որ ձեզ առաքեց»: Սևերիանոսն ասում է. «Այսպես ասաց՝ Գնացեք, ինչպես ասում եմ ձեզ, կմարտիրոսանաք»: Իշխանն ասում է. «Գիրն ով շարադրեց, և ինչո՞ւ ձեր անուններն են գրության տակ և ոչ նրանը»: Սևերիանոսն ասում է. «Գիրն Աթանագինեսը գրեց, բայց թե ինչու մեր անունները

դրեց՝ չգիտենք»: Իշխանն ասում է. «Քո ընկեր Արիստոնը գիտե՞»: Սևերիանոսն ասում է. «Այո՛, Աթանագինեսը գրեց և տվեց մեզ»: Իշխանն ասում է. «Սևերիանո՛ս, թե ուզում ես մնալ՝ զոհ մատուցիր [աստվածներին]»: Սևերիանոսն ասում է. «Թող գա նա, որ ինձ հետ էր»: Իշխանն ասում է. «Դու մեր հրամաններին ենթարկվիր, գնա Կոռնել գավառապետի հետ, զոհ մատուցիր»: Եվ նրանք գնացին զոհ մատուցելու:

[Իշխանը] հրամայեց բերել Արիստոնին և ասում է նրան. «Քո ամբարտավան բարքն ու չար մտածմունքները ծածուկ մնալ չկարողացան»: Սուրբ Արիստոնն ասում է. «Աստված այդպես հրամայեց»: Իշխանն ասում է. «Ահա քո ընկերը զոհ մատուցեց [աստվածներին], դու ինչո՞ւ ես հապաղում»: Սուրբ Արիստոնն ասում է. «Որովհետև չկարողացավ համբերությամբ մնալ Քրիստոսի հավատքին»: Իշխանն ասում է. «Իսկ քո մարմինը ցավ չի՞ զգում»: Արիստոնն ասում է. «Աստծու կամքով»: Իշխանն ասում է. «Մի՛թե դու երկնքից ես»: Սուրբ Արիստոնն ասում է. «Այո՛, երկնքից եմ»:

Այնժամ իշխանը իմացավ նրա մտքի անփոխելի հաստատությունը՝ վճիռ հատեց նրա համար և ասաց. «Քանի որ հարցաքննությունները չհաջողվեցին և ամենահաղթ ինքնակալ տերերի մարդասիրությունը չկարողացավ քեզ լավ [ճանապարհ] հանել, այսպիսի անպատեհ գրի պատճառով, որ մատուցեցիր իմ պատվասիրությանը, և չկարողացար ճանաչել աստվածների պաշտամունքը և հանդգնեցիր մնալ նույն համառությանը՝ այսպիսի վճիռ ընդունիր»: Եվ մագաղաթից ընթերցելով այսպիսի գիր՝ ասում է. «Այն որ ամեն ինչից անպատեհն է, տվեց ինձ, որ մարդկանցից ոչ ոք պատվավորների մասին չի հոժարի ասել կամ լսել: Այս ամենի համար հրամայեցի հրո ճարակ դարձնել սրան»: Եվ այսպես եղավ սուրբ Արիստոնի նահատակությունը, նախ քան օգոստոսյան կաղանդները:

Այնուհետև դատավորն զբաղվեց Սևերիանոսով և ասաց նրան. «Աստվածներին զոհ մատուցեցի՞ր, Սևերիանոս»: Եվ նա ասում է. «Այո՛»: Ասում է իշխանը. «Մեր տերերի պարկեշտ մարդասիրությունն ու աստվածների քաջությունը քեզ լավության դարձրին, իսկ Արիստոնին իր համառության և մոլորության պատճառով հատուցեցի իր արժանիքի համաձայն: Ուստի և կհրամայեմ քեզ բանտ դնել և խնամել, մինչև դա Աթանագինեսը, որպեսզի գրության գործը ստուգությամբ քննեմ»:

Այսպես վախճանվեց սուրբ Արիստոնը Սեբաստիայում. ոմանք անգիտությամբ կարծում են Հռեգինոսն է եղել, որը Աթանագինեսի սպասավորներից է, բայց յուրաքանչյուր ոք գիտե, որ Սուրբ Հռեգինոսը Սեբաստիայում չվախճանվեց, այլ Կեսարիա քաղաքում, և նրա վկայարանն այնտեղ է մինչև օրս: Որովհետև եկեղեցին շատ և սաստիկ հալածվում էր, սուրբ Աթանագինեսը նրան առաքեց այնտեղ, որպեսզի ուսումնասիրի քրիստոնյաների պատուհասը, և ելք հուշի նրան: Եվ քաղաքում հալածիչներն իմացան Հռեգինոսի գալուստը, և բռնեցին, չարչարեցին: [Նա] ուրախացած գոհանում էր Տեր Աստծուց և բարի վկայությամբ սպանվեց:

Նրա նահատակությունը լսեց սուրբ Աթանագինեսը, երբ Սագուպինիայում էր, փառավորեց Աստծուն: Իսկ, որ բոլորը կարծում են, թե Սեբաստիայում էր՝ դա Արիստոնն է, և ոչ Հռեգինոսը:

Ապա սուրբ Աթանագինեսին զինվորները բերին Սեբաստիա քաղաքը, և Ագրիկողոսի կինը լսեց աստվածասեր այրի առաքինասեր վարքի մասին, ընդառաջ ելավ և պատահեց սրբին, ընկավ նրա ոտքերը և ասաց. «Իմացա, Տեր իմ, առավել ևս հավատացի, որ Քրիստոս կոչվածի ծառան ես, և ինչ որ խնդրում ես նրանից՝ իսկույն կտա քեզ: Արդ, աղաչելով ընկնում եմ քո առաջ, որ աննախանձաբար ինձ ևս շնորհես իմ խնդրանքը, քանի որ դու ամեն ինչ ունես քո Տիրոջից ու վարդապետից, որին հույս ես տածում: Իմ դուստրը բազում ժամանակ է, ինչ բռնվել է պիղծ դևից: Արդ աղոթիր՝ նրանից ելնի պիղծ ոգին, և ես կթախանձեմ իմ ամուսնուն և կհամոզեմ արձակել քեզ, և չմեղադրել»: Սուրբն ասում է. «Եթե լսես ինձ և արժանի լինես իմ Տիրոջը՝ քո խնդիրքը կկատար-

վի: Իսկ եթե միջնորդես խափանելու իմ ընթացքը, դ

լանում է՝ ես ի՞նչ անեմ»: Դատավորն ասում է. «Սևերիանոս, լսո՞ւմ ես, որ Աթանագինեսը ուրանում է, թե՝ Չգիտեմ ինչ որ դա է ասում: Տե՛ս, այսուհետև ինչ-որ բանից դրդված չստես այս մարդու մասին»: Սևերիանոսն ասում է. «Չեմ ստում, սա տվեց ինձ»: Դատավորն ասում է. «Ո՞րտեղ տվեց կամ որ ժամին, կամ մեկը տեսա՞վ, երբ ամբաստանությունն ստանում էիք»: Սևերիանոսն ասում է. «Գիրը վաղ առավոտյան տվեց, բայց ոչ ոք չտեսավ»: Դատավորն ասում է. «Մի գյուղի՞ց էիք դու և Աթանագինեսը»: Սևերիանոսն ասում է. «Ո՛չ, [մեր] գյուղերը տասնհինգ մղոնով հեռու են իրարից»: Դատավորն ասում է. «Որևէ մեկին ուղարկե՞ց քեզ, որ գնաս իր մոտ»: Սևերիանոսն [ասում է]. «Իմ մորն ուղարկեց, Մակեդոնիային»: Դատավորն ասում է. «Մարդո՞ւց ես ծնվել, ուրեմն, և մա՞յր ունես, որ մի տեղից լինելով՝ ասում էիր, թե երկնքից ես իջել»: Սևերիանոսն ասում է. «Այն գաղտնիքն սպառվեց»:

Դատավորը հարցնում է Աթանագինեսին. «Մակեդոնիային ճանաչո՞ւմ ես»: Աթանագինեսն ասում է «Ո՛չ»: Դատավորն ասում է Սևերիանոսին. «Այժմ ընտրություն արա. ասա մեզ ճշմարտությունն առանց երկյուղի. սա՞ տվեց գիրը, թե ոչ: Եվ ինչ ասաց, երբ տալիս էր»: Սևերիանոսն ասում է. «Սա տվեց և ասաց՝ Գնացեք և մարտիրոսացեք»: Դատավորն ասում է. «Արդ, դու կմեռնես ոչ իբրև նահատակ, այլ որպես ամբարիշտ և հայհոյիչ»: Եվ դառնալով սուրբ Աթանագինեսին, ասում է. «Լինելով այդպիսի հասակի և այդպիսի պատվի, չպիտի այդպիսի գիր շարադրեիր ու համոզեիր ինձ մոտ բերելու»: Աթանագինեսն ասում է. «Իբրև ամբարիշտ կդատվեմ Աստծուց, եթե որևէ մեկի մասին սուտ ասած լինեմ կամ այդպիսի մի գրի ձեռք եմ տվել»: Դատավորն ասում է. «Իսկ կասե՞ս, որ Սևերիանոսը տանջանքների պատճառով է ստել: Այժմ գոնե քո մասին մտածիր, չէ՞ որ այդպիսի ուսուցիչ ես, ինչպես ասում ես՝ կարող ես գրել և պատմել և քրիստոնյաներին ուսուցանել: Պետք է որ դու գրած լինես այդպիսի շատախոս ամբաստանություն: Իսկ եթե ոչ՝ հանդիմանիր դրան, որ ստեց»: Աթանագինեսն ասում է. «Նա ինքը գիտե իր համառելը. նրա առավել տանջանքներին ես պատճառ չեմ լինի: Բազմիցս քեզ ասացի, որ երիտասարդ հասակում սուրբը գիտակցությամբ եմ մնացել, և եթե կուզես՝ ամբողջ Պոնտոսում քննիր, թե ինչպես մնացի, և ըստ իմ Տիրոջ հրամանի սովորեցի կայսրինը տալ կայսեր, Աստծունը՝ Աստծուն (Ղուկ. Ի. 25): Ստահակները չեն կարող իմանալ»: Դատավորն ասում է. «Եթե արդարև սրբությամբ ես մնացել և հաստատում ես քո լավ վարքի մասին, ըստ թագավորական հրամանների կարգի, որ հրամայել են շարժվել սիրելի օրենքներով, արդ մենք ընդունում ենք քո ուղղությունը, զոհաբերություն արա [աստվածներին], ինչպես բոլորը, և մնա մեզ հետ»: Սուրբ Աթանագինեսն ասում է. «Այդպիսի օրենքների չեմ հետևել և չեմ [հետևում], բայց Երկնավորի օրենքները բազում անգամ սովորեցրել և սովորեցնում եմ, և այդպես կմեռնեմ: Բայց Սևերիանոսը բոլորովին ստեց իմ մասին»: Դատավորն ասում է. «Իբրև քրիստոնյա չես մեռնի, մինչև չսրբես քեզնից բոլոր ամբարշտություններով լի թուղթը գրելու մեղադրանքը»: Աթանագինեսն ասում է. «Ինձ կդատի Աստվա՛ծ, եթե ձեզ ճշմարիտը չասացի»: Դատավորն ասում է. «Բայց հանդիմանիր Սևերիանոսի ստությունը»: Աթանագինեսն ասում է. «Կարծում ես՝ մեծ իմաստություն ունես, բայց այս բանից չես կարողանում կողմնորոշվել և գտնել պատճառները աշխարհական կրոնով: Իսկ ես հնարած տեսությանը օտար ու անհաղորդ՝ ինչպես կարող եմ դատել նրա մտածությունը»: Դատավորն ասում է. «Հրաժարվի՛ր առաջին մոլորությունից և կատարիր թագավորական հրամանները»: Սուրբն ասում է. «Ի՞նչ ասեմ, նրանց ի՞նչպես է հրամայված երկնքից»: Անորենն ասում է. «Որ քրիստոնյաները չարաչար կորչեն և ոչ մի տեղ չերևան»: Սուրբ Աթանագինեսն ասում է. «Ես քրիստոնյա եմ ծնվել և քրիստոնյա սնվել ու ապրել և քրիստոնյա կմեռնեմ»: Դատավորն ասում է. «Քեզ չասացի մեռնես, այլ մոլորությունդ թողնելով՝ մնաս»: Սուրբն ասում է. «Վաթսուն տարուց ավելի է, որ քրիստոնյա եմ և քսան տարի է,

որ եպիսկոպոս եմ, որի համար ուրիշ բան չեմ ուզում լինել, այլ մեռնել քրիստոնյա»: Դատավորն ասում է. «Քեզ ասացի՝ իբրև քրիստոնյա չես մեռնի, քանի այդպես ես դատում»: Սուրբն ասում է. «Գիտե Նա, որ տեսնում է ծածուկ բաները, որ իզուր եք իմ մասին ստաբանում, և մի՛ խաբվեք սնոտությամբ, թե դրանով խախտվելով կկործանվեմ սուրբ հավատից առ մեր Տեր Հիսուս Քրիստոս»: Դատավորն ասում է. «Թագավորական հրամաններին և աստվածների բարեկարգ օրենքներին չես հնազանդվում, ինչպես մենք»: Սուրբն ասում է. «Անօրեն օրենքներն ու նրանցով վարված թագավորներին չեմ ճանաչում, և աստվածները, որ չեն ստեղծել երկինքն ու երկիրը՝ կկորչեն երկնի ներքո»: Դատավորն ասում է. «Եվ ի՞նչ էին քո գրածները, եթե ոչ այն, որ քո բերանը խոստովանեց»: Սուրբն ասում է. «Գրվածքը չգիտեմ, բայց Աստծու հանդեպ իմ անխոտոր սրտի մասին պատասխանները դրանք են, որ լսեցիր, և դրանցով կմեռնեմ. ավելի մի՛ չարչարվիր [այլևս]»:

Այնժամ դատավորը տեսավ երանելիի անշարժ ու հաստատուն միտքը, և այսքան հարցուփորձից հետո չտապեց գործին այսպիսի վճիռ տալ, ասելով. «Աթանագինես եպիսկոպոսին, որ երդմամբ հայհոյեց աստվածներին և թագավորին և մեզ բոլորիս՝ այնպիսի խոսքերով, որ արժանի չեն լսելու, որը և տանջանքների միջոցով Սևերիանոսը խոստովանեց, որ Աթանագինդեսն է գրել, և մինչև վերջ նույնը պնդեց, ինձ հաճո եղավ սրան կենդանի այրել. արդ, իմացեք, մեր տեր աստվածների բազմությունն»: Եվ բոլորի համար մագաղաթից կարդաց սա: Իսկ անօրեն սպասավորները խոսքը գործից առաջ էին կատարում: Կրակ վառեցին այնտեղ, որ այժմ փոքր աղոթատուն է Սեբաստիայում, ուր նահատակվել էր Սեբաստիայի սուրբ եպիսկոպոս Պետրոսը՝ Աթանագինեսի բարեկամը, բորբոքեցին կրակը և սրբին տարան: Եվ նա խնդրեց, որ աղոթի Աստծուն մեծ գոհությամբ, և [Աստծուց] բազում խնդրանքներ հայցեց, որ հետո երևում էր շնորհը նրա սուրբ նշխարների վրա: Ու մինչ աղոթում էր, մի մեծատուն ու լավ

կին, ազգով հեթանոս, Եվսեբիա անունով, մեծ հառաչանքով ընկավ նրա առջև ու ասաց. «Աղոթի՛ր ինձ համար, որ թեթևանան իմ մեղքերը»: Իսկ սուրբը վկան ասում է. «Հավատա՛ սուրբ սրտով Տեր Հիսուս Քրիստոսին և ինչ որ քեզ պատվիրեմ՝ արա, և Ամենատերը կկատարե խնդրանքներդ. վերցրու իմ մարմինը անխախտ և ամբողջ, հասցրու Փիլաքթովե ագարակը և թող այն տանը, որ իմ աշխատանքով կառուցեցի ի հանգիստ սրբերի, որոնց անուններն են՝ Թեոփրատոս, Հիսիքիոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Կղեոնիկոս. այնտեղ տանել տուր և իմ մարմինը»: Եվ նա հոժարությամբ ընդունեց խոսքերը, ողջունեց սրբին:

Եվ զինվորները երանելիին մոտեցրին նահատակման տեղին: Իսկ նա մեծ ուրախությամբ [իր] բոլոր անդամները կնքեց Քրիստոսի նշանով և մտավ հուրը և հանուն Տիրոջ ավանդեց հոգին: Եվ նույն ժամին Եվսեբիան գնաց դատավոր Ագրիկողոսի մոտ և խնդրեց վկայի մարմինը: Եվ նա բազմությունից գաղտնի շնորհ արեց նրան, այն հարգանքի համար, որ ուներ այդ կնոջ նկատմամբ: Եվ նա վերցնելով՝ պատեց ազնիվ պատանքով ու անուշաբույր յուղերով, կառք դրեց և իր հավատարիմ ծառաներին տվեց տանելու Փիլաքթովե՝ հրամայված սրբարանը: Եվ թաղեցին սրբերի մեջ:

Բայց չպետք է զանց առնել շնորհը, որ ստացավ երանելին Տիրոջից. ինչ որ խնդրել էր մտերիմների առջև, որոնք նրան ճանապարհում էին հրայրեցության: Նախ՝ [այն] կնոջ փրկությունը, որ պաղատել էր նրան. նաև՝ ավելի մեծ [խնդրանք], որ եթե մի մարդ երազում տեսնի ինչ-որ արարք և զարհուրի՝ բարեխոս անի սրբին առ Աստված, ազատված լինի երազների փորձությունից, և փոխվեն բարության՝ պատահելով լավագույն բանի: Եվ սա այն բանի համար հոգաց, որ երբ ինքը նստած էր թաքստոցում, վեմի տակ, որն աղբյուրացրեց, նիրհեց ու քնեց: Եվ թվում էր երազ է տեսնում, իբր թե իրեն տարել են իշխանի մոտ՝ գոհի [մսից] ճաշակելու: Եվ արթնացնելով նրան խռովք ապրեց դրանից: Եվ ծունր իջնելով աղոթեց ամբողջ սրտով երազը ի բարին փոխելու,

որ և եղավ իսկ: Եվ երբ նահատակվելու էր՝ հիշեց այս ու խնդրեց ամեն մարդու համար, որ երազից զարհուրել է: Այդ օրինակով նաև ուրիշ բազում ու հրաշալի շնորհներով երևաց երանելի վկան, որովհետև հուլիս ամսին կատարվում է նրա հիշատակը, շատ տոթ է լինում, քանի որ ամառ է, և բնավ մսավաճառության, կերակուրների մեջ ճանճ կամ այլ բան չի լինում, իսկ եթե տան մեջ երևա՝ մի անզոր բան կլինի և ինչպես ձմռանը՝ ընդարմացած, և եթե մեկը տանի մսից, ի հիշատակ սրբի, օրհնության խոսքով, անաղարտ կպահվի մինչև ուր կամենան տանել: Տանելով, եթե իսկույն չիրացվի, շուտով կապականվի, և ով որ շտապի ի հիշատակ նրա և պետք ունենա ջրի, որովհետև ջուրը սակավ է այնտեղ, և մեկն իր տաղավարի մեջ ջրհոր փորի, կտա բավականաչափ ջուր նրա հիշատակի օրը, իսկ հետո կպակասի: Իսկ տոնը կատարելուց հետո շատ ամպեր են կուտակվում, և շատ անձրև է տեղում Սուրբ Հոգու շնորհով, և ոռոգում է գավառի երաշտությունը, և [լվանում է] կենդանիների ու մարդկանց անմաքրությունը: Եվ գետը մոտավոր վայրերում ողողում է, և լվացվում են հողերը, և ուխտավորների բոլոր խնդրանքները կատարվում են սրբի բարեխոսությամբ:

Բայց նահատակը նաև Եվսեբիա կնոջ բարեպաշտությունը չթողեց առանց շնորհակալության, այլ խոստման համաձայն տեսիլքով կանգնեց նրա մոտ և ասաց. «Իմ մաղթանքներով առաջին հերթին մարդասեր Քրիստոսին պաղատեցի քեզ համար, և Տիրոջից ինձ տրվեց խնդրածս, և քո մեղքերը թողնվեցին՝ իմ խոսքով մտերմաբար հավատալուդ համար»: Եվ իր ամբողջ կյանքի ընթացքին տարվետարի այնտեղ էր գալիս կինը մեծ պաղատանքով, անուշ յուղով ու խնկով, և արժանի պատիվն էր մատուցում, և շատերին հաստատում էր մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատի մեջ:

Արդ, քանի որ չարժեր պակասեցնել սրբին կարգվածների միջից, որ իր կենդանությանը նշաններ ցույց տվեց և վախճանվելիս օրհնություն թողեց, այդ պատճառով սակավ չափով արձանագրեցինք սուրբ վկա Աթանագինեսի [մասին],

որ պայծառ ու համարձակ կենցաղավարելով պսակվեց: Բայց նրա պատվերն ու կարգը Սագուպինիայում և գավառի շուրջը պահում են մինչև օրս: Նա զանազան բարիքներ կարգեց Սագապինիայում, եկեղեցիներում ու Սեբաստիա քաղաքի խորհրդակիցներին, և օրհնելով բոլորին՝ իր որդի Պատրոփիլոսին հանձնարարեց, նրան նստեցրեց քորեպիսկոպոսական աթոռին, և [նա] արժանի եղավ ամեն ժամ պայծառ պահելու եկեղեցու կարգերը, սուրբ տունը, որ Փիլաքթովեում [սուրբը] հանձնեց նրան:

Ոմն Հեղիարոս՝ լավ աստվածասեր, որ այն ժամանակ գլխավոր խորհրդականն էր, մեծափառ և աստվածասեր Հիպաղաքոսի որդին, որ մեծանալով ծանոթացավ սուրբ Աթանագինեսի կարգին ու վկայաբանությանը, խնամքով ու ճշտորեն հավաքելով գրի առավ այս ամբողջ պատմությունը և այսպես թղթով ուղղափառ դարձրեց պատմվածը: Նույն Հեղիարոսը խնդրել էր երանելի Աթանագինեսից, նրա կենդանության օրոք, հինգ օրհնություններից մի գլուխ, որ երանելին կատարեց, և մինչև օրս պաշտում են Հեղարիոսի որդիներն ու տունը՝ սովորելով միմյանցից երանելիի վկայության հիշատակի համար:

Սուրբ Աթանագինեսը վախճանվեց հրով, մարտիրոսաբար վկայելով անուշահոտությամբ, ի Հիսուս Քրիստոս Տեր մեր, որին փառք հավիտյանս. ամեն:

ՍՈՒՐԲ ԱԿԱԿԻՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամբարիշտ Մաքսիմիանոսը ստանձնելով Հռոմի թագավորական իշխանությունը՝ օր-օրի բորբոքվելով չարասեր բանսարկուից, ահագին որոտով ու դժնդակ սպառնալիքներով հոխորտալով հալածանք էր հարուցում Աստծու եկեղեցու դեմ. մտադրվեց կորստյան մատնել և մեջտեղից վերացնել Նրա անվան բոլոր հավատացյալներին: Զարությունը նաև իր համախոհներից էր, և ավելանում էր աստվածամարտությունը: Բոլոր քաղաքներն ու գավառները սրանց հարուցած ծովածուփ մրրիկով բռնված՝ ընկղմվում ու կործանվում էին:

Արդ, ո՞վ կարող է համարժեք խոսքով պատմել այն ժամանակի նավակոծությունների վրդովմունքն ու խռովքը, որ խավար մեգով ու մառախլապատ ամպերով պարուրում էին Աստծու երկյուղածներին: Խռովվում էին քաղաքները, դղրդում՝ գյուղերն ու ավանները, և նրանց, որ բարեպաշտ էին՝ բռնում էին անաստված դահիճները և անմիջապես կապանքներով տանում էին ատյան: Նրանցից ովքեր համաձայնում էին ուրանալ վսեմ և իսկապես ճշմարիտ հավատքը՝ ճշմարտության դիմաց պարգև էին ստանում սնոտի այս կյանքի բարիքներ, մեծամեծ պատիվներ: Իսկ ովքեր նախընտրում էին արդարության հետևել, համբերությամբ հանձն էին առնում բոլոր տանջանքներն ու չարչարանքները, մնալով հաստատուն և անշեղ հավատքով բարեպաշտ և մինչև վերջ՝ աստվածպաշտության սիրով, նրանց համար պատրաստ էին ծանր պատիժներ, չարաչար ու դառն տանջանքներով անարգ մահ և ամեն տեսակ դաժան պատուհասներ:

Այդ ժամանակ Քրիստոսի անարատ գառը, կապադովկացիների շառավիղը, Քրիստոսի մեծ վկա Ակակիոսը, Փլաբիոս հազարապետին ենթակա ընտիր զինվորական դասից էր և թագավորներից իր արիական առաջադիմության համար պարգևներ ու պատիվներ էր ստանում: Նույն այդ ժամանակ,

այն անմաքուր աղանդները եկան այն զորամասը հասան, ուր ծառայում էր սուրբ վկան:

Այնժամ հրամայեց զորապետն իրեն ենթակա բոլոր զինվորներին՝ ներկայանալ հանդեսի, որ իմանա յուրաքանչյուրի կրոնը: Եվ շատերը մահվան երկյուղից՝ հետևող եղան ամբարշտության, ուրացան ճշմարտությունը, զրկվեցին կյանքի լույսից: Իսկ ոմանք թաքուն պահում էին իրենց հոգում սուրբ հավատքը:

Այնուհետև առաջ բերին Քրիստոսի արիագույն նահատակին և համագոյ Երրորդության դավանողին: Հազարապետը հարցրեց նրա հավատքի մասին, թե ո՞ր պաշտամունքին է հաղորդ ու հավան: Սուրբ վկան չերկնչելով, համարձակ առաջ եկավ և քաղցր ձայնով ասաց. «Քրիստոնյա եմ և ծառա բարձրյալ Աստծու՝ երկինքն ու երկիրը և նրանց մեջ եղածն արարողի»:

Այնժամ դատավորը մեծ զայրույթով ու բարկությամբ լցված և խեթ նայելով նրան՝ ասաց. «Ո՞րտեղից կամ ումից ես լսել այդպիսի բան ու բարբառում ես, ա՜յ չարագլուխ այր: Կամ ո՞վ է այն Քրիստոսը, որի անունը հանդգնեցիր իմ առջև հիշել քո բերանով: Շուտ պատասխանիր ինձ մեկ առ մեկ դատարանի առջև: Երդվում եմ բոլոր աստվածներով, որ այդ խոսքիդ համար չեմ խնայի այդ դեղեցիկ, երիտասարդ հասակդ»:

Սուրբ Ակակիոսը պատասխանում է նրան. «Եթե ամբարշտության խորին և խավար մեգով պարուրված չլինեիր՝ միգուցե քեզ ցույց տայի իմ Քրիստոսին, որպես Աստծու, Տիրոջ և Թագավորի, երևելիների ու աներևույթների արարչի»:

Այս առթիվ դատավորն ասում է. «Քեզ տեսնում եմ ամբողջապես դեղեցիկ ու վայելուչ հասակով՝ այդ պատճառով խանդաղատում եմ: Այժմ երկար դատարկաբանություններիցդ հրաժարվելով՝ սուղ և սակավ խոսքերով ասում եմ քեզ. լսիր ինձ և մոտեցիր, զոհ մատուցիր աստվածներին, երանելի եղիր երկրի վրա և ինքնակալից պարգևներ կստանաս»:

Սուրբը Ակակիոսն ասում է. «Հրամայում ես ո՞ր աստվածներին զոհ մատուցել»: Հազարապետն ասում է. «Նրանց, ում պաշտում են ինքնակալները և բոլոր նրանց հնազանդվողները»,- և իր ձեռքով ցույց էր տալիս աստվածներին, որ իր շուրջն էին, և ասում էր. «Սրանք են, որ աշխարհին խաղաղություն և շինություն են շնորհում, որոնց եթե զոհ չմատուցես և ինքնակալի հրամանը չկատարես՝ քեզ կմատնեմ չարաչար և անիմանալի տանջանքի, և չկա այլ աստված, որ կարող լինի քեզ ազատել իմ ձեռքից»:

Պատասխանում է սուրբը վկան և ասում հազարապետին. «Իմ Աստվածը կարող է ոչ միայն ինձ փրկել քո ձեռքից, այլև սատկեցնել նրանց, որ դու աստվածներ ես անվանում, և քեզ նրանց սին հույսից դուրս կորզել և իր ճշմարիտ գիտությամբ քո սրտի կամքը իր մոտ բարձրացնել»:

Հազարապետը դարձյալ ասում է նրան. «Երդվում եմ բոլոր աստվածներով և ինքնակալի բախտով, որ եթե ինքնակալի կամքի համաձայն չպատասխանես կամ անմահ աստվածներին երկրպագության զոհ չմատուցես՝ քեզ չարաչար և դառն պատուհաս կլինի»:

Սուրբ Ակակիոսն ասում է. «Ուղիղ լսիր ինձ, ո՛վ դատավոր, որ երբեք զոհ չեմ մատուցի անշունչ դևերին, խուլ և կույր մեռած կուռքերին, քանի որ գրված է՝ «Աստվածները, որ երկինքն ու երկիրը չեն ստեղծել՝ կկորչեն երկնքի ներքո» (Երեմ. Ժ. 11),- ու դարձյալ՝ «Երկրպագիր քո Տեր Աստծուն և միայն Նրան պաշտիր» (Բ Օր. Զ. 13):

Այնժամ հազարապետն ասում է նրան. «Ո՛վ Ակակիոս, դու հանդուգն մեկն ես երևում և ճոռոմախոս, և այդ հասակիդ վայել չէ ընթանալ ամբարտավան և սնոտի բաներ խոսելու ճանապարհով. չգիտե՞ս, որ իշխանի հետ ես խոսում, մանավանդ քո գլխին իշխանություն ունեցողի, լինելով մեկը նրանցից, որ իմ ձեռքն են ընկել»:

Սուրբն ասում է. «Ո՛վ դատավոր, տգետ չեմ և անտեղյակ այդ ամենին, այլ սովորել եմ բարեպաշտ ապրել, և Քրիստոս ինձ համարձակություն ու համբերություն շնորհեց հաղթելու քեզ և քո հայր սատանային: Որովհետև Նրա ձայնի զո-

ությունը սասանեց բանսարկուի ամրոցները և խորտակեց մահու բռնությունը»:

Այնժամ հազարապետը հրամայեց զինվորներին իսկույն թողնել նրա տանջանքները և մտածում էր հորդորիչ խոսքով համոզել նրան և գցել կորստյան խորխորատ: Եվ իր մոտ կանչելով սուրբը վկային՝ խոսում է համոզկեր և հաճելի խոսքերով և ասում. «Լսի՛ր ինձ, քո հորը, ո՛վ Ակակիոս, ինքնակալի քաջ և անպարտելի զինվոր, զոհ մատուցիր անմահ աստվածներին, և քեզ կդարձնեմ իմ աթոռակիցը և բազում ունեցվածք ու ինչք կպարգևեմ քեզ, և կլինես ինքնակալի բարեկամներից առաջինը: Եթե չլսես ինձ և չհպատակվես հռովմեացվոց օրենքներին և թագավորի հրամանին՝ ավելի կարծր և դառն կապանքներով քեզ կուղարկեմ Եթովպացոց Բիբիանոս իշխանի մոտ, որ ամենիմաստ է ու հանճարեղ, հռչակավոր ու պերճախոս, որև անշունչ արձաններին կարող է ուղղության բերել, և քեզ հնար չի լինի ճողոպրել նրա ձեռքից: Արդ խղճա քեզ, մի՛ ընկնիր նրա անաչառ դատաստանի տակ»: Սրան պատասխանեց սուրբը վկան և ասաց. «Ինձ համար միևնոյն է քեզնից, թե Բիբիանոսից սպանվելը, քանի որ թե դու, թե նա կտանջեք ինձ՝ ինձ նույն վախճանն է սպասում: Որովհետև երկուսիդ կամքը նույնն է՝ տանջել և սպանել բարեպաշտություն խորհողներին և իմ անմահ Աստծուն խոստովանողներին»:

Արդ, երբ դատավորը տեսավ Քրիստոսի վկայի անխախտ հավատը, մտքում տարակուսեց, պատշաճ համարեց նրան ուղարկել իշխան Բիբիանոսի մոտ, նրան գրելով նամակ այս բովանդակությամբ.

«Զինվորական դասապետ Փլաբիանոսից մեծափափագ խաղաղությամբ և ըղձալի սիրով ողջույն:

Լիովին գիտենալով մեր բարեհաղթ թագավորների բարեպաշտությունը աստվածների հանդեպ և նրանց հաճույքը կատարողներին խնամ տանելու հոժար կամքը, նաև քրիստոնյաների դժվարահաճ չարախոսությունները, որ բնավ սովոր չեն հավանելու հորդորական խոսքի, կամ խաբվելու պարգևներով և կամ գնալու ինքնակալի մեծարական պատիվների. ուստի նրանց պետք է տանջանքների ենթարկել: Բայց մենք չունենալով համարձակություն այդ բանին, դրան հանձնեցինք քո անպարտելի և ահեղ դատաստանին: Դա այս զինվորներից մեկն է, որ իմ ձեռքի տակ են: Նրան մենք ճշտությամբ ուսումնասիրեցինք, գտանք, որ Գալիլիացոց աղանդի հետևորդ է: Եվ բազում համոզման աղաչանք և տանջանքի սպառնալիք լսեց մեզնից, որ աստվածների բարեպաշտության ընտանի դառնա, բայց արհամարհեց նրանց փառքի զորությունը, որոնք նրա աչքին բրուտի անոթ թվացին: Իսկ մենք դրան երևացինք իբրև մեռելների ականջին խոսող:

Արդ, դրան, որ հավան է ամբարիշտ կրոնի և չհրաժարվեց սնոտիքներից, ուղարկեցի քեզ մոտ կապանքով ու անարգությամբ, որպեսզի դրան դատարանի հարվածների ենթարկես և խելամիտ դարձնես՝ պաշտելու աստվածներին և ընծայաբեր լինելու զոհերով ու ձոնմամբ: Ուրիշ ինչ պատշաճ կհամարես՝ կանես դրան, հետևելով ինքնակալի հրամանին: Ո՛ղջ եղիր»:

Զինվորները վերցրին նամակը և Քրիստոսի մեծ վկա Ակակիոսին՝ չարաչար կապանքներով, ճանապարհվեցին, հասան Եթովպիա՝ Բիբիանոս դատավորի մոտ: Ներկայացան իշխանին, մատուցեցին Փլաբիանոս հազարապետի նամակը և երանյալ սուրբ վկա Ակակիոսին:

Երբ կարդացին գիրը իշխանի առջև, և [նա] քննեց եղած բոլոր բաներն ու գործերը, այնժամ հրամայեց բանտ նետել նրան և զգուշությամբ պահել մինչև հաջորդ օրը: Եվ իսկույն հրամայեց ազդարարել քաղաքում և շրջակա բոլոր բնակիչներին, որ բոլորը հավաքվեն տեսնելու [դատաստանը]:

Եվ առավոտյան այգաբացին ինքը ելավ, հրամայեց կազմել շատ բարձր հարթակ թատրոնի մեջ: Եվ հավաքեցին բազմամբոխ ժողովրդին ամպի նման, որ մրրիկն է բերում:

Եվ Բիբիանոս իշխանը բազմաշուք ճոխությամբ բեմին նստած՝ հրամայում է բերել երանելի Ակակիոսին և կանգնեցնել իր առջև: Եվ հրամայում է հանրության առջև նորից կարդալ Փլաբիանոսի դատավճռի թուղթը: Այնժամ Բիբիա-

նոս դատավորը խոժոռադեմ և սպառնալի ցասումով նայելով սրբին՝ ասում է նրան. «Դո՞ւ ես խաչյալ Քրիստոսի վկա Ակակիոսը»: Եվ սուրբը վկան ասում է. «Ես եմ ճշմարիտ Աստված Քրիստոսի ծառան, Նրան հավատացողները ամոթով չեն լինում»: Դատավորն ասում է սուրբ վկային. «Ինչո՞ւ կաս և մնում ես նույն համառությանդ և այդ սնոտի անունը քեզ օգնության ես կանչում, որն իր անձը չկարողացավ փրկել մահվանից, այլ նաև բազում մարդկանց մահվան պատճառ եղավ: Բայց թեպետ ավելի առաջ չզգացիր և չուղղվեցիր, գոնե այժմ լսիր ինձ և հեռացիր այն սնոտի հույսից, զոհ մատուցիր աստվածներին և փրկվիր տանջանքներից»:

Պատասխանեց արիագույն նահատակը և ասում է. «Թեպետ շատ ուզեմ՝ անկարող եմ փախչել վաղանցուկ այս մահից, որովհետև բնությունս պահանջում է հատուցել հայրերի նույն պարտքը՝ լինելով մարդ: Մինչդեռ պետք է այս ապականացու մարմնով և անցավոր կյանքով ձեռք բերել մշտնջենական, հավիտենական և անապական կյանքը, որ աչք չի տեսել և ականջ չի լսել և մարդու սիրտ չի ընկել, որ Աստված պատրաստեց իր սիրելիներին, և որին ես այժմ սպասելով ակնկալում եմ լինել ժառանգորդ: Այլ և շատ շնորհակալ կլինեմ քեզնից՝ եթե նպաստես ինձ ստանալու հաղթանակի վերին բրաբիոն, [որ] արագ հասնեմ անսուտ խոստումների նավահանգիստ և հավիտենական կյանքի անսպառ բարիքներին»:

Այս խոսքերից մեծ ցասումով ու անհնարին որոտմամբ սպառնալիքներով լցվեց անօրեն իշխան Բիբիանոսը, հրամայեց տանջանքով ընդհատել նրա բերանի խոսքը: Եվ զինվորները մերկացրին երանելիին, գետնատարած քառակողմ ամրացած, պատրաստված տանջանքի գործիքներով և լարերով ուժգին քաշում էին ոտքերի և ձեռքերի հոդերը ու կարծր արջառաջիղով հարվածում էին թիկունքին ու որովայնին: Ու մինչդեռ ծեծում էին նրան, դատավորը ձայնեց նրան ու ասաց. «Ո՛վ Ակակիոս, քաջ զինվոր ինքնակալի, միայն ասա՝ Զոհում եմ, և նույն պահին կազատվես տանջանքից»:

Այս լսեց սուրբը՝ քամահրանքով ծիծաղեց անօրեն դատավորի չար խոսքերի վրա և ասաց. «Ո՛վ դատավոր, բնավ չեմ հանձն առնի ուրանալ մեկ Աստծուն, կենդանիին ու ճշմարտին, որ կարող է ամեն ինչ ապրեցնել ու կորստյան մատնել: Արդ, եթե քեզ հեշտ է թվում մարդկանց վերափոխել և որևէ բան այլակերպել, նույնպես և սպասելի կլինի միգուցե, որ ես ակն լինեմ, որովհետև ես նույն Ակակիոսը լինելով՝ ինչպես այժմ՝ չեմ փոխի իմ խոսքը և չեմ հրաժարվի ինձ գոյացնողից ու ստեղծողից, որ մարդկանց պարտքի համար մարմնով կրեց այն բոլոր տանջանքները, բացի մեղքից, և կամովին եկավ խաչի ու մահվան չարչարանքի»:

Դատավորն ասում է նրան. «Կարծես աղաչական և հաճելի բաներ էինք ասում քեզ, ո՛վ Ակակիոս, բայց դրանով չէիր շեղվում քո հավատի խոստովանությունից, այլ կայիր ու մնացիր նույն բանին, հոգ տանելով քրիստոնեության»: Եվ դառնալով դահիճներին՝ ուժգին շեշտով ասում է. «Արագացրեք և ավելի շատ հասցրեք դրան տանջանքներ, որ հալածանքի դառնությունից մորմոքած՝ իրիկնադեմին հրաժարվի իր ցնդաբանությունից»:

Եվ սուրբ վկայի մարմինն այնուհետև տանջանքի սաստկությունից բզկտվեց ու քայքայվեց, բայց հոգով ամրացած էր վերին զորությունից և զվարթանում էր Քրիստոսի սիրո ջերմությունից և անընդհատ բորբոքվում էր բարեպաշտության: Ու մինչդեռ արագորեն վկայի մարմնի վրա ուժեղանում էին տանջանքի հարվածները, այնժամ դատավոր Բիբիանոսն սկսեց խոսել, ասես խաղալով. «Զգացի՞ր տանջանքը, ո՛վ Ակակիոս, և չտեսա՞ր անմահ աստվածների զորության չափը, և գոնե այժմ չվախեցա՞ր քաջարի ինքնակալների հրամանից»:

Պատասխանեց սուրբ վկան և ասում է. «Այդ ամենը չզգացի և երբեք չեմ զգա, բայց գիտեմ, որ դու գիտակցեցիր քո ախտալից տկարությունը, և քանի որ չկարողացար շրջել իմ միտքը ավանդների բարեպաշտությունից, ինձ տանելու քո գարշելի ու ամբարիշտ խոսքերի ետևից և չի լինի քանի կենդանի լինելով այս մարմնի մեջ եմ»: Ու մինչդեռ Քրիստոսի

երանելի վկան այս էր ասում, դահիճները միմյանց հերթափոխելով ծեծում էին, նրան ավելի ծանր ցավ պատճառելով, իսկ նա աղաղակում էր ու ասում. «Հավիտենական անսկիզբ Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, նայիր երկնքից՝ Քո բնակատեղից և ինձ փրկիր որսացողների որոգայթից, զի Դու ես իմ համբերությունն ու հույսը նեղության ժամին: Զորացրու տկարությունս և համբերություն տուր անձիս, որ հաստատուն և անշարժ մնամ քեզ խոստովանելով և արժանի լինեմ բոլոր սրբերի և քո սուրբ անվան սիրելիների հետ ժառանգելու խոստացված պարգևները. և քեզ փառք հավիտյանս»:

Երբ դատավորը տեսավ սուրբ վկայի անփոփոխելի և հաստատուն միտքը, որով արհամարհում էր իրեն պատճառվող չարչարանքների վիշտը, անօրենը տարակուսած վարանում էր մտքում, հրամայում անօրեն դահիճներին՝ նրան թողնել բանտում: Այնժամ զինվորներն առան Քրիստոսի սուրբ վկային՝ դատավորի հրամանով, նրան բանտի արգելանոց տարան: Եվ նա բերկրալի ցնծությամբ ու անպատում ուրախությամբ հետևում էր նրանց: Երբ սուրբն անցնում էր քաղաքի փողոցով՝ կապանքներով ու դանահարումից վիրավորված անդամներով, բարձրաձայն աղաղակում էր արիաբար՝ ի լուր ամբողջ բազմության և ասում. «Ովքեր տեսնում եք Քրիստոսի նահատակների վերքերը՝ ուշք դարձրեք դրանց փոխարեն սպասվող ձիրքերին, թե ո՛րքան և ինչպիսի պատրաստված ու ամբարած բարիքներ են պահվում նրանց համար անսպառելի հավերժին, անմահ Թագավորից՝ հանուն նրա չարչարվողներին, որ մտքին հասնելի չէ, խոսքով՝ ճառելի: Ուստի Նրա համար չարչարվելս ավելի ու ավելի քաղցր է, քան աշխարհի երևելի մեծությունների բոլոր բարությունները»:

Եվ փրկական բարբառի այս քաղցրահնչյուն ձայներից հուզվում էր քաղաքի ամբողջ բազմությունը ամեն տեղից՝ սուրբ վկայի ետևից մինչև բանտի դուռը, նրանից լսում էին կյանքի խոսքը: Եվ նա չէր դադարում անփակ բերանով և անհանգիստ բարբառով հավատի արդար սերմերը տարածել

բազմության ականջին, մինչև որ տարան-մտցրին խավարչտին բանտի արգելարանը՝ կապած ոտքերով ու շղթաներով: Եվ փակեցին բանտի դռներն ու կնքեցին իշխանի մատանիով: Եվ նա մնալով բանտում՝ բազում ուրախությամբ ու ցնծությամբ, անհագաբար գոհություն ու օրհնություն էր առաքում երկինք՝ Ամենատիրոջը:

Այնժամ երկնքի բարձրությունից գալիս-հասնում էր նրան զորացուցիչ Քրիստոս և իր անճառելի ճառագայթներով լուսավորում էր խավարի մթության խորքերը, և նրան առաքելով աստվածային ձայնը՝ անպարտելի վկային հրամայում էր արիանալ և հաստատ մնալ երանավետ կոչումին, ասելով. «Քեզ հետ եմ, և միշտ էի, և կլինեմ անբաժան մինչև վերջ: Արդ, մի՛ վհատիր, այլ համբերիր քաջաբար, որ արժանի լինես ժառանգելու մշտնջենական հանգիստ Իմ արքայության մեջ, որ Ես և Իմ Հայրը պատրաստեցինք քեզ»: Այսպիսի խոսքերից խրախուսված զվարճանում էր սուրբ վկան: Եվ նույն պահին երևում էր հրեշտակների գունդը նրա շուրջը՝ երգակցելու նրա գիշերային պաշտամունքին, իսկ երբեմն ուրախակից լինելով նրան, և զվարթացած քաջալերում էին նրան, զորացնելով նահատակության հանդեսի առաջիկա մրցման համար: Իսկ սուրբ զվարթուններից ոմանք բժշկի կերպարանքով երևալով՝ բուժում էին ցավոտ վերքերը, ինչոր սպեղանի դնում քրքրված մարմնի վրա, և բազում օրեր անբաժան էր նրանից անմահների բանակը և նրա մարմինը ողջանդամ ու անարատ էին դարձնում:

Իսկ երբ անօրեն իշխանն իմացավ, որ դեռ կենդանի է Քրիստոսի սուրբ վկան, հրամայեց զինվորներին նրան տանել դատական ատյան: Ու երբ նրան տարան կանգնեցրին բեմի առջև, ուր նստած էր իշխանը, նայելով զարմանում էր նրա մարմնի վերքերի արագագույն բուժմամբ, և հեգություն կեղծելով՝ հնար էր փնտրում խորամանկությամբ փոխել միտքը բարեպաշտության ավանդներից, ասելով. «Բոլոր աստվածները գիտեն, ո՛վ Ակակիոս, որ շատ զարմացած, զարհուրած եմ՝ մտածելով թե ինչու հասակի այդպիսի բարեվա-

յելուչ գեղեցկություն և արիական քաջություն [ունենալով], զինվորական կարգ, իմաստուն խոհեմություն ցուցաբերելով, հայտնապես կամահորդոր մտքով նախընտրում ես մեռնել չարագործի մահով և զրկվել այս աշխարհիս քաղցր լույսից: Շատ եմ գովում քո հաստատուն և անփոփոխելի միտքն ու արիական մրցումը: Բայց առավել գովելի կլիներ, եթե աշխատությանդ այդպիսի ջանքը ուղղված լինեին ինքնակալի թշնամիների դեմ: Իսկ երկաթի և հրի, գազանների ու վեմերի դեմ կռվելը հույժ հիմար գործ է և ոչ ազատ մոլորություն: Այժմ չե՞ս տեսնում, թե որքան նվազել է քո ազնվական զորությունը, և նույնիսկ մարմինդ թառամել է, թուլացել են անդամներիդ հոդերը, դժգունել ես երիտասարդությանդ գեղեցիկ բարեվայելչությունից: Արդ հույժ ողորմում և խանդաղատում եմ մանկական հասակիդ վրա, և մանավանդ սիրում եմ քաջ և պինդ հաստատությունդ: Եվ եթե ինձ լսես և հավանես իմ խոսքին՝ մեծ բարիքի ու պարգևների առիթ կլինի քեզ: Եվ կգրեմ ինքնակալին, որ քեզ դատավորական իշխանության բարձրագույն պատիվ տա, և կլինես աշխարհումս երևելի և մերձավոր ու բարեկամ անմահ աստվածներին»: Այսպիսի խորամանկ խորագիտությամբ [իշխանը] կամենում էր դավաճանության մղել Քրիստոսի սուրբ վկային և թուլացնել արիական հանդեսների ժրությունը:

Սրանց պատասխանում է սուրբ վկան և ասում. «Մի՛ փորձիր խոսքի դառն մեքենայությամբ խաբել ինձ և կորստյան խորխորատը նետել, պոկելով ինձ Քրիստոսի հավատի բարձրությունից և զրկելով ինձ մեր Փրկիչ Աստծու և Տեր Հիսուս Քրիստոսի կենսաբեր ավետարանի քարոզությունից: Որի համար ասում եմ քեզ, ո՛վ դատավոր, որ չես կարող սնոտի ու չարիմաց խոսքերովդ խաբել և զրկել ինձ Քրիստոսի սիրուց և տարագրել երկնավոր Հոր որդեգրությունից: Այժմ ինչ անելու ես՝ շուտ արա, որովհետև շտապում եմ ելնել այս մարմնից և մտնել Աստծու մոտ, որին կարոտել եմ: Եվ պատրաստ եմ քո բոլոր տանջանքներին՝ սրի, հրի, քարկոծման, քերանքի, անդամների հոշման, գազանակուր լինելու, ամեն

չարահնար ճիգով չարչարվելու՝ ինչ որ կամենաս անել ինձ: Մի՛ հապաղիր, որովհետև ես չեմ հնազանդվի քո անօրեն թագավորներին, որ աղտեղության զոհ մատուցեմ նրանց դիվաձույլ և ապականությամբ կերտված աստվածների պատկերներին: Պարսպել եմ հոգիս իմ Աստծու՝ հավիտենից անմահ Թագավորի ամենակալ զորությամբ, և չարանախանձ բանսարկուն չի կարող իբրև մի աղախնի գերի տանել ինձ անդյուտ կորստյան»:

Երբ այս ամենը և սրանց նման [բաներ] խոսեց սուրբ վկան, ամենապիղծ Բիբիանոս իշխանը խորամանկ կեղծավորությունը իսկույն թողեց և չարաբանությամբ ու զայրույթով լցվեց վերստին և անողորմությամբ հրամայեց, ասում են, անօրեն դահիճներին՝ կապարե գնդերով խցել Քրիստոսի սուրբ վկայի բերանը և այնչափ սաստկացնել տանջանքի հարվածները, մինչև նրա ատամների թափվելը և նրա բերանի մսուրը ջարդելը: Եվ միանգամայն բորբոքված նրա դեմ՝ դատավորը ատենական ամբողջ խառնիճաղանջ բազմության հետ ասում էր. «Ո՛վ եղկելի և հիմար մտքերով արբած Ակակիոս, մի՛ խոսիր խաչված Քրիստոսից և Նրա անունը հիշելով մի՛ տաղտկացնիր իմ լսելիքը»: Իսկ սուրբ նահատակ Ակակիոսը, լինելով այդպիսի տանջանքների մեջ, ավելացնում էր իր պատուհասների պատճառները, նրան թշվառական և դևերի բնակարան, բանսարկուի բոլոր չարիքների շտեմարան կոչելով: «Իսկապես քո ականջների ամենապիղծ լսելիքը չեն կարող ընդունել իմ Աստծու ահավոր ու սարսափելի անունը, Նրա, ում ահավոր հրամանի ձայնը դողացնում է երկինքն ու երկիրը»:

Այս առթիվ դարձյալ ասում է իշխանը վկային. «Ես կամեցա, որ ավելի ողջախոհ լինես և ազատվես առաջիկա տանջանքներից, նաև քեզ հաղորդակից դարձրի իմաստության, և ինչպես պարտ ու պատշաճ էր, ցուցաբերելով մարդասիրություն, քեզ համոզեցի, խանդաղատելով քո պատանեկան գեղեցկությանը, բայց քանի որ դու ավելի ձգտում ես հաղթել ինձ, այսուհետև իսկույն քեզ ցույց կտամ քո Քրիստոսի զորությունը, և կճանաչես, թե ով է Բիբիանոս իշխանը և ո՛վ

Ակակիոսը: Փորձով քեզ ցույց կտամ, որ քեզ բնավ չի կարող օգնել Քրիստոս, որին հուսացել ես»:

Այդտեղ երանելի վկան լցվելով աստվածային հոգով՝ Պողոսի հետ գոչում էր, ասելով. «Զգիտենք երևելիներին, այլ՝ աներևույթներին, որովհետև երևելիները ժամանակավոր են, իսկ աներևույթները հավիտենական: Թեպետ մեր շինվածքի ժամանակավոր տաճարը կքանդվի, երկնքում ունենք Աստծու կառուցած անձեռակերտ հավիտենական տաճար (Բ. Կորնթ. Դ.18-Ե1-3): Եվ սուրբը երկնքից կայցելի և ցույց կտա, որ սնոտի և ունայն է քեզնից ինձ հասած տանջանքը, և անվթար ու անարատ կպահի ինձ, Նրա սուրբ անվան խոստովանությամբ»:

Սուրբն այսպես պատասխանեց դատավորին, շարժելով նրա բարկության անհնարին ցասումը: Դատավորը դառնալով իր շուրջը եղողներին, ասում է. «Քանի որ Ակակիոսը այս բռնամահը և չարաչար պատահմունքը, նաև առաջին տանջանքներից ավելին է ուզում, որ դա իր վրա, որպեսզի փոխարենը մեծ վարձքի ժառանգորդ լինի, որին շուտ հասնելու ակնկալություն ունի, որ և իրեն փառք է համարում, հիմա թող նորից տարածվի գետնին, և նրա մարմինը ճարակեն տանջանքի բոլոր գործիքները, և դրա շուրջը լինի ժողովրդի ու զինվորների բազմություն, որ և տանջանքը ուժգին լինի, միգուցե առավելագույն շնորհներ կխոստովանի մեզ, որ սրան ավելի շատ այսպիսի բարությունների պատճառ են լինում»:

Անօրեն իշխան Բիբիանոսը սրանք հեգնանքով ասաց, և դահիճների բազմությունը լինելով նրա շուրջը, սրբին քառակողմ պրկումով փռեցին գետնին և հաստ արջառաջիղով գազանաբար խփում էին անխնա՝ որովայնին ու թիկունքին: Իսկ Քրիստոսի երանելի քաջ նահատակը, ի սեր իր արարիչ Հիսուսի, բոլոր չարաչար տանջանքները արհամարհում էր:

Այնժամ դատավոր Բիբիանոսը ձայն տալով ասում է նրան. «Ո՛վ Ակակիոս, զոհ մատուցիր աստվածներին»: Իսկ բարեհաղթ վկան անտեսում էր նրա խոսքերը և արժանի չէր համարում պատասխանել, այլ միայն քաղցր ու հեզ ասում էր. «Ժամանակիս չարչարանքը ոչինչ է հանդերձյալ փառքի դիմաց, որ հայտնվելու է»:

Արդ, ի՞նչ խոսքերով կամ լեզվով և ով կարող է պատմել սուրբ վկայի քաջ համարձակությունը, որ եղավ այնժամ, որ տանջվում ու համբերում էր հույսի համար՝ խոցոտված սրով, և հանդուրժում էր, շրջապատված գործիքներով, քամահրանքով ծիծաղում էր: Մատաղ բնությամբ դիմակայելով խստագույն տանջանքներին, քերանքի անողորմ լկանքով փռված էր գետին, և հոգու ուղղությամբ անդրդվելի էր, այլև հրճվում էր ու ցնծում, մանավանդ Տիրոջ չարչարանքներով:

Գոչում էր բարձրաձայն և ասում. «Ավելացրու, ո՛վ բռնավոր, նաև ուրիշ տանջամիջոցներ, որովհետև ես պատրաստ եմ հրի և սրի, և վայրի գազանների և ավելի պատրաստ. ողջությունը չեմ սիրում ավելի, քան իմ արարչին, չեմ ուզում փառքը ապականացու: Ինձ համար հանգիստ է հոգերիս քակտումը. քո բանտերը պատրաստած են ինձ որպես փափկության դրախտ, որին ձգտել եմ»:

Նախարարներից մեկը, որ իշխանի մոտ էր, իբր շնորհ անելով սրբին, մոտեցավ նրա ականջին և ասաց այսպես. «Ի՞նչ ես շահելու, ո՛վ խղճալի, և ինչ ես մտադիր, չէ՞ որ երբ մարմինդ վատնվի ամբողջովին և հասնես վերջին շնչին, այնժամ կիմանաս պատշաճը, որից ոչ մի օգուտ չունես: Արդ քանի դեռ հնար ունես կենդանի մնալու, լսիր իմ խորհուրդը, հրաժարվիր և փոխիր քո միտքը այն սնոտի հույսից, հնազանդվիր մեր աստվածներին, և կարժանանաս մեծամեծ պարգևների: Չե՞ս տեսնում իշխանի ներողամտությունը քո նկատմամբ և ջերմագին սիրո խանդաղատանքը, թե ինչպես տրտում արտասուքով ու սրտի հառաչանքով հոգոց է հանում քո թշնամության առթիվ»:

Այնժամ նրա հնարանքի խաբեությունը իմանալով՝ սուրբ վկան ասում է. «Հեռու մնացեք ինձնից բոլորդ, որ անօրինություն եք գործում. Տերն է իմ օգնականը, և ես չեմ երկնչում, ի՞նչ կանի ինձ մարդը»:

Արդ, երբ դատավորը լսեց այս խոսքը, տարակուսեց մտքում՝ հրամայեց դադարեցնել նրա տանջանքները և

վերստին գցել բանտի կապանքների մեջ և նրան զուրկ պահել մարմնական կարիքների դարմաններից, և նրա ոտքերը կոճղի մեջ պնդել, և երկաթե շղթա դնել նրա պարանոցին և նրան զուրկ պահել ամեն նախախնամությունից: Բայց ստուգապես նրան կատարվեց Դավթի մարգարեությունը, թե՝ «Զտեսա արդարին արհամարհված և ոչ նրա զավակին հաց մուրացող» (Սաղ. ԼԶ. 25): Քանզի Հիսուս փրկիչը, որի համար հանձն էր առել և կրում էր չարչարանքները, բանտում երևաց և խոսում էր նրա հետ, փարվում էր նրան և քաղցրագույն խոստումով արթնացնում էր նրա միտքը, ասելով. «Ակակիո՛ս, անպարտելի և անհաղթ զինվոր իմ, զորացիր և քաջ եղիր հոգևոր այդ ասպարեզում, քանի որ ես քեզ հետ եմ քո կյանքի բոլոր օրերին: Ինչպես որ կցորդ եղար անցավ և ապականացու հավիտենիս՝ Իմ չարչարանքներին, նույնպես և հաղորդ կդարձնեմ անսպառ և մշտնջենավոր կյանքին Իմ արքայության, և անեղծ ու անթառամ պսակների, և անպատում փառքին հավիտենից՝ բոլոր սրբերի և Իմ անվան սիրելիների հետ»:

Արդ, սուրբ վկան լսեց այս աստվածային ուրախարար խոսքերը, ուրախացավ, ցնծությամբ հրճվում էր իր սրտում և մոռանում այնուհետև նեղության վշտերը, և փառավորում էր Աստծուն անպատում սքանչելիքի համար, որ երևաց իրեն: Եվ սկսեց սաղմոսել ու օրհնել ամենակալ Աստծու մարդասիրությունը և արագահաս օգնությունը ու զորությունը: Այնժամ երկնային զորություններից բազում հրեշտակներ իջան սպիտակ լուսափայլ հանդերձանքով երգակից լինելու սուրբ վկային:

Իսկ բանտապետը ելնելով շտապ հասնում է բանտի դռներին և տեսնում, որ բանտի դռները ամենայն զգուշությամբ կնքված են, իսկ ներսում տեսնում է երկնային զորքերի բազմություն և լուսափայլ հանդերձներ: Նրանք քաղցրահունչ ձայնով երգակցում էին սրբին, և [բանտապետը] զարմանալով ահուերկյուղով է բռնվում:

Յոթ օր անց Բիբիանոս իշխանը ինչ-որ գործերով կանչվում է Բիզանդիոն քաղաքը: Եվ նա ճանապարհ է ընկնում,

զինվորներին հրամայելով, որ հետները բերեն Ակակիոսին, մտածելով, թե ինքը չի կարող նրան հավանեցնել, հանձնի մի ուրիշ, չարաբաստ և ամբարիշտ, անողորմ դատավորի, որ այդպես դժվարին ու անտանելի անի նրա պատուհասի վախճանը: Դրանից հետո դատավորը գնում է, և Ակակիոսը նրա հետևից գնում է բազում դառն նեղությամբ ու տառապանքով, որովհետև նրան սաստիկ նեղում էին հարվածներից ստացած վերքերը և կապանքի ծանրությունը, և ճանապարհի չարչարանքն ու ճիգերը, և դահիճների սպառնալիքները, և կերակրի կարոտությունն ու ծարավը, և առաջիկա տանջանքների արհավիրքը, և սիրելիներից ոմանց չտեսնելը: Այսպիսի և այսքան նեղություններ ու փորձանք եղան երանելիի շուրջը, և նա հրճվանքով ու անճառելի բավականությամբ ըղձալով գոհանում ու օրհնում էր Աստծուն:

Վեցերորդ օրից հետո ավարտելով երկար ճանապարհը՝ գալիս-հասնում են Բիզանդացոց քաղաքը: Եվ դատավորը դարձյալ հրամայում է նույն կապանքներով բանտ նետել և ոչ շատ օրեր անց հրամայում է կազմակերպել բազմահանդես թատրոնը քաղաքի մեջ, շուկայի մոտ: Այնժամ դատավորը նստեց բեմի վրա և հրամայեց առաջ բերել սուրբ Ակակիոսին և այսպիսի խոսքով դիմեց նրան. «Ո՛վ Ակակիոս, այսուհետև ենթարկվելո՞ւ ես ինքնակալի հրամաններին և երկրպագելո՞ւ ես աստվածներին, թե անփոփոխ կաս և մնում ես համառությանդ»: Սուրբ Ակակիոսն ասում է. «Առավել քան բոլոր մոլեկանները դուք մոլորվել եք ճշմարիտ գիտությունից: Մարդիկ, որ հետևում են Աստծու արդար և ճշմարիտ օրենքին և Նրան պաշտում ու երկրպագում են և հավատում Նրան, որ ստեղծեց երևելի ու աներևույթ արարածները, իսկ դուք ջանում եք այն անեղ բնության պաշտոնը և պատիվը մատուցել դևերին և մեռելոտի ու մոլորեցնող կուռքերին, և այսպիսի բաների համար մեզ իզուր և անտեղի դատելով սպանում եք»:

Երբ սա լսեց անօրեն Բիբիանոսը, լցվեց կատաղությամբ և հրամայեց բերել նռնենու փշալից գավազան և չարաչար

հարվածել սուրբ վկայի թիկունքին ու որովայնին, որը տեսնելը դժվարին ու անհանդուրժելի էր բոլոր տեսնողների համար, քանի որ այնպիսի սաստիկ չարությամբ վարվեցին անաստված Բիբիանոսի դահիճները, ոչ մի խանդաղատանք կամ խնայումն չմտաբերելով, և կամ չնայելով հասարակ բնության տկարությանը, այլ մարտնչում էին ասես անշունչ արձանների դեմ, մինչև նրա ամբողջ մարմինը քրքրվեց, պատառ-պատառ դետին ընկնելով:

Իսկ սուրբ վկան մեծ զորությամբ կար և մնաց իր նահատակությանը, և արիական խորհրդով զանց էր առնում նրանց դազանությունները, և բռնավորին ոչինչ չասաց, այլ հնազանդությամբ նայելով երկինք ասում էր. «Քրիստոս փրկիչ, օգնական եղիր Քո ծառաներին և համբերություն տուր իմ տկարությանը և ամոթահար արա բանսարկուի պաշտոնյաներին, և Քո ժառանգությունը մի՛ տար ապականության»:

Եվ տասն անգամ փոխարինում էին միմյանց դահիճները, որ ծեծում էին սրբին: Այնժամ գավազանով հարվածում էին սրբի որովայնին սաստկապես, կարծես տեգով խոցում էին, և նա աներևակայելի ցավագնել էր և ցավի պատճառած նեղության վշտից բարձրաձայն աղաղակեց. «Տե՛ր Աստված, երկնքի Քո հաստատուն բնակությունից նայիր և ինձ օգնության հասիր, զի Դու ես բոլորի հույսն ու ապավենը՝ ովքեր դիմում են Քեզ»: Եվ երբ սա ասաց երանելի վկան, իսկույն թուլացան դահիճների ձեռքերը, և հրաշքից ապշած՝ չէին կարող շարժել:

Արդ, այս բոլոր քննություններից, հարցափորձից հետո դատավորը մեջտեղ բերելով ասում է նրան. «Ի՞նչ ես ուզում այսուհետև, ո՛վ թշվառական ու ողորմելի, լինել մեզ հե՞տ, թե՞ քո Քրիստոսի»: Սուրբ վկան, այս լսելով, իսկույն ոչ թե թեթևակի պատասխանեց դատավորին, այլ համարձակորեն գոչեց բարձր ձայնով հրապարակի մեջ ու ասաց. «Իմ Քրիստոսի հետ եմ և էի և կլինեմ հավիտյան»:

Երբ դատավորն իմացավ սուրբ վկայի համբերությունը և անպարտելի ու հաստատուն հավատը Տեր Հիսուս Քրիստոսին, հոգնելով պարտվեց հարցափորձ անելուց, մանավանդ որ ամբարիշտի սիրտը ձանձրացավ անտանելի տանջանքներից, որ պատճառեց սրբին: Այնժամ մտածեց նրան ուղարկել Փիղկիանոս անթիպատոսի մոտ, խորհեց գրել նրան բոլոր չարչարանքների մասին, որ կրեց սուրբ վկան, նաև հարցաքննումներն ու պատասխանները:

Անթիպատոս Փիղկիանոսն ստացավ Բիբիանոս իշխանի նամակը և հրամայեց բանտ նետել երանելիին առանց կապանքների՝ իր կնոջ աղաչանքին անսալով. քանի որ քրիստոնյա էր և պարսպված աստվածային հավատով ու երկյուղով, և բազում անգամ հայցում ու մաղթում էր, որ չարաչար չտանջե Տիրոջ հավատացյալներին, այլ արագ ու փութով նրանց հասցնե վախճանի: Եվ խոնարհվելով իր տիկնոջ աղաչանքին՝ մտածեց այդպես անել: Եվ հինգերորդ օրից հետո սուրբը վկային հանեց բանտից և բեմի առջև կանգնեցնելով՝ կարդալ տվեց Բիբիանոսի նամակը: Երբ կարդացին, անթիպատոսը նախատեց ու հայհոյեց ամբարիշտ հեգեմոն Բիբիանոսին, որ այդպիսի անհաղթելի, հաստատուն և անդրդվելի այր է ձեռքն ընկել և ավելի շուտ չի սպանել, այլ այնքան հնարքներով տանջանքների է ենթարկել: Այնժամ անթիպատոսը երանելիին ասում է. «Ո՛վ Ակակիոս, ես ծանոթանալով իմացա բոլոր տանջանքները, որոնց ենթարկվել ես, նաև հարցաքննություններն իմանալով պատկերացրի ըստ Բիբիանոսի նամակի, և քո անձն ինձ երևում է երկաթից ավելի կարծր, իսկ կամքդ՝ անփոփոխելի: Բայց այժմ ասա վերջնական, ի՞նչ ես մտադիր՝ դալ աստվածների բարեպաշտությա՞ն, զոհել և հնազանդվել ինքնակալի հրամաններին, թե՞ ընդունել կյանքիդ չարաչար ավարտը: Որովհետև ինչ որ քեզ հրամայում եմ՝ նոր բան չէ, այլ սկսվել է շատ ժամանակներ առաջ, մեր նախնիներից, և անհնար է անպատիժ արձակել քեզ՝ ինքնակալի հրամաններն արհամարհողիդ և մեր աստվածներին անարգողիդ»:

Այնժամ բարձրաձայն աղաղակեց սուրբն ու ասաց. «Ո՛վ հանդուգն, խորություն խավարային սրտի և կուրություն

իմանալի աչքերի, որ ունես դու, որ ախորժում ես ուրիշնե-
րին լինել այդպիսի մութ աղջամուղջի առաջնորդ և կորստ-
յան խորխորատն ես ուղարկում ձեր չարախորհուրդ կամքը
կատարողներին: Արդ, գիտության ոգի ունեցող բարեխոհ
և իմաստուն մարդկանցից ո՞վ կարող է հեռանալ Աստծու
ճշմարտությունից, որի ձեռքի գործն են երկինքն ու երկի-
րը և նրանց միջի արարածները, [դրա փոխարեն] մարդկային
ձեռքի գործերի՞ն նվիրել երկրպագություն ու պաշտամունք:
Այժմ արա՛ ինձ՝ ինչ կամենաս և արա ինչ կխորհես անմի-
ջապես. ինչո՞ւ ես հապաղում և ցնորեցնում քո միտքը, երբ
ոչինչ չեմ լսելու քո կորստաբեր խոսքերից»:

Երբ անթիպատոսը լսեց սուրբը վկայի համարձակ խոս-
քը և միաժամանակ իր պարտությունը նրանից, հիացավ ու
զարմացավ, որ այդքան տանջանքներից հետո դեռ հաստա-
տուն է մնացել ինքնահաճո համառությամբ: Այնժամ մահ-
վան վճիռ կայացրեց սրբի համար, որ Բիզանդիոն քաղաքի
ամբողջ բազմության առաջ սրով վախճան ստանա: Եվ հրա-
մայում է այսպես գրել նրա դատավճիռը. «Ակակիոսը,-ա-
սում է,-չենթարկվեց անհաղթ ինքնակալների հրամաններին
և չհնազանդվեց մեր բարերար աստվածներին պատվելու և
պաշտելու, մանավանդ ընթացավ Նազովրեցու չար աղանդի
ճանապարհով, հավատաց խաչյալին, իրեն Նազովրեցի կո-
չողին հրամայում ենք ըստ հռոմայեցոց օրենքի սուսերով
կտրել նրա անխոնարհելի պարանոցը»:

Երբ ընթերցվեց այս դատավճիռը հրապարակի մեջ բազ-
մամբոխ ռամիկ քաղաքացիներին՝ անմիջապես նրան շրջա-
պատեցին անթիպատոսի անօրեն դահիճները և կապանք-
ներով տարան քաղաքի մեջ այն տեղը, որ կոչվում է Ծառ
ընկուզի: Եվ երբ եկավ, հասավ այնտեղ՝ աղաչեց դահիճնե-
րին, որ թույլ տան մի փոքր աղոթի: Եվ նրանցից թույլտ-
վություն ստանալով՝ աչքերը վեր բարձրացրեց ու սկսեց
աղոթել և ասաց այսպես. «Տեր Աստված ամենակալ, Հայր
մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Քո սիրելի Որդու, որից գիտութ-
յուն ստացա, զորությունների Աստված, բոլոր արարածների

Աստված և բոլոր տեսակների, կենդանիների ու մեռյալնե-
րի Աստված, գոհանում եմ Քեզնից, որ հովանի և պաշտպան
եղար ինձ չարչարանքներիս հանդեսի բոլոր մարտերում, որ
քեզ համար էին, և ինձ ծածկեցիր աջովդ և որս չդարձրիր
քո ծառայի անձը՝ նրանց, որ աշխատում էին կորցնել ինձ
դժոխքի խորքում, այլ հաստատուն պահեցիր հավաքի վեմի
վրա՝ քո անշարժ խոստովանության և իմ ընթացքն ուղղե-
ցիր արդարության ճանապարհներ հավիտենական կյանքի:
Եվ այժմ, Տեր Աստված, որ քո անարատ ու աշխարհաստեղծ
ձեռքերը տարածեցիր կենսաբեր փայտի վրա՝ մեր կյանքի ու
փրկության համար, աղաչում եմ Քեզ՝ իմ հոգին ընդունիր
խաղաղությամբ և անցկացրու իշխանություններով ու պե-
տություններով, որ օդում են, չար դևերի միջով և հիշիր, որ
մարմինս տկարություն է հագած, և ինչ հանցանք գործել եմ
անգիտությամբ, կամա և ակամա մեղքերը և արյան հոսումը
Քո սուրբ անվան համար, երբ սրանով հանդերձ կանգնեմ Քո
աստվածության ահավոր բեմի առաջ, ներիր և թողություն
շնորհիր և անտես արա: Տեր, շնորհիր և նրանց, որ նեղութ-
յունների ու փորձության ժամանակ հիշում ինձ, իմ աղա-
չանքով ու բարեխոսությամբ, հոգու համար շահավետ բոլոր
խնդրանքները կատարիր, որ ամենքի միջոցով փառավորվի
Քո սուրբ անունը այժմ և հավիտյանս. ամեն»: Եվ ահա ձայն
է լսվում երկնային ուժերից՝ ձայնակցելով նրան, ասում էին
ամենքը: Եվ երբ վերջացրեց աղոթքը՝ հորդորում էր զինվոր-
ներին կատարել բռնավորի հրամայածները, և խոնարհեցնե-
լով պարանոցը՝ կտրեցին նրա ամենասուրբ պարանոցը, հա-
տեցին նրա ամենասուրբ գլուխը, և հոգին ավանդեց Աստծու
ձեռքը:

Քրիստոսի սուրբ վկա ճգնակյաց Ակակիոսը նահատակ-
վեց Մաքսիմիանոսի հյուպատության, Բուլթանիայի նահան-
գում Փիլկիանոսի անթիպատության ժամանակ, Բիզանդիոն
մայրաքաղաքում, որ այժմ կոչվում է Կոստանդնուպոլիս,
մայիս ամսին, ութերորդ օրը, և անեղծության պսակն ընդու-
նեց մեր Աստված Քրիստոսից. Նրան վայել է փառք, իշխա-

նութիւն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եվ եկեղեցու հալածանքները դադարելուց հետո թագավորեց Մեծն Կոստանդիանոսը և նույն քաղաքում կառուցեց սրբի վկայարանը՝ մեծապայծառ հորինվածքով, և նրա մեջ դրեց Քրիստոսի անհաղթ վկայի մարմինը, որ ամբողջական է մինչև այսօր, և բազում բժշկություն է կատարում Տերը նրա բարեխոսությամբ, ովքեր հավատով ապավինում են նրան, որովհետև Աստված իր փառավորիչներին փառավորում է այժմ և հանդերձյալ [կյանքում]: Նրան փառք. հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԱԿԻՓՍԻՄԱՅԻ, ԱՅԻԹԱԼԱՅԻ ԵՎ ՀՈՎՍԵՓԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Աստված սքանչելի է իր սրբերի համար» (Սաղմ. ԿԷ. 36),-այսպես է բարբառում աստվածահայր մարգարե ու Հոգու նվագարան Դավիթ արքան: Ու դարձյալ՝ «Կպանծան սրբերը փառքով և կցնծան իրենց հանգստի մեջ» (Սաղմ. ՃԽԹ. 5-6): Եվ ես հետևելով նրա խոսքերին՝ նվաստ մտքով [սուզվելով] նրա անբավ իմաստներով ծովացած խորքերը՝ նրբաձայն լեզվով կբարբառեմ: Եվ այսպես աղաղակելով կասեմ, որ «Սքանչելի է Աստված իր սրբերի համար»: Ինչպիսի՞ն է այս խոսքը. թե՝ Աստված սքանչելի է իր սրբերով, և երբ չկային սրբերը՝ սքանչելի չէ՞ր: Մերժիր ապիրատության այս միտքը: Երբ իր սրբերի միջոցով սքանչելիք է գործում, այդ ժամանակ նրա անունը փառավոր ու սքանչելի է լինում իր սրբերի մեջ, ինչպեսև Նաբուգոդոնոսոր արքայի ժամանակ, երբ ուզեց Աստծուն հակադրել ոսկե արձանը՝ Աստված նրան հորդորեց հրով փորձել երեք մանուկներին, քանզի այն, ինչ ինքն Աստված էր պաշտում՝ արհամարհված էր տեսնում Աստծու ծառաների կողմից: Եվ այդպես սքանչելի էր երևում Աստված իր սրբերի մեջ: Իսկ ես, որ նվաստն եմ բոլորից և իմաստների դպրությունից անտեղյակ, աղաչում եմ երանելի Ակիփսիմային, որ ինձ խոսքի զորություն տա, և Այաթալային՝ մտքի պարզություն շնորհի, և սուրբ Հովսեփին՝ որ օժանդակի իմ տկարությանը՝ գրելու և հորինելու իրենց վկայության պատմության փառքը: Իսկ ձեզ աղաչում եմ, որ արթնացնեք ձեր մտքի ականջները՝ հոժարությամբ լսելու նրանց նահատակությունը և փառավորելու Աստծուն, որ փառավորում է իր փառավորիչներին (հմմտ. Ա. Թագ. Բ. 30):

Մեր հալածանքների 307-րդ տարին՝ անճառ Բան Աստծու ծագումից հետո, Շապուհ արքայից դառն հրաման ելավ,

իշխանություն տրվեց մոգերին ու մոգպետներին՝ բոլոր քրիստոնյաների վրա, որպեսզի ամեն տեսակ տանջանքներով պատժվեն ու չարչարվեն հավատացյալները և սպանմամբ ու չարչարանքով մահվան վճիռ ստանան:

Այն ժամանակ քրիստոնեական հավատի ժողովուրդների հոտապետներն ու գլխավորները՝ եկեղեցու առաջնորդները, հայտնապես, համարձակ արիությամբ իրենց անձը չէին թաքցնում անօրենների ու ամբարշտության սպասավորների հալածանքների պատճառով: Իսկ մոգերի բազմությունը այնուհետև նրանց մատնում էր դատավորների ձեռքը, և չարախոսում էին նրանց ու ասում. «Մշտապես մեր հավատի վարդապետությունը արհամարհում են նրանք: Եվ մարդկանց սովորեցնում են մի Աստված պաշտել և արեգակին չեն երկրպագում, չեն պատվում հուրն ու ջուրը: Եվ բոլոր չորքոտանիներն ու թռչունները առանց խորհրդական զոհերի մորթում են և ուտում: Եվ միայն այս չէ. մեռելներին թաղում են հողում և պղծում են երկիրը: Եվ ասում են, թե բոլոր կենդանիներին Աստված է ստեղծել և ոչ ուրիշ մեկը»:

Երբ ամբարշտության դատավորներն այս լսեցին մոգերից՝ մեծ զայրույթով բորբոքվեցին: Եվ այս ժամանակ բռնվեց Ակիփսիմա եպիսկոպոսը, շատ ծեր, մոտ 80 տարեկան, բայց մարմնական ուժով պինդ և հավատով ջերմ ու ամրակազմ, նաև գեղեցիկ տեսքով. ծագումով ազնվական և երևելի ու հարուստ, արդարև ողորմած աղքատների ու տնանկների նկատմամբ: Եվ աստվածային շնորհների բերմամբ ու երկյուղով, որ նստած էին նրա մեջ, շատ հեթանոսներ դառնում էին առ Աստված՝ նրա վարդապետությամբ և ճշմարիտ ու անբիծ քաղաքավարության շնորհիվ, քանի որ խոսքով կատարյալ էր և Հոգով լի: Եվ միշտ ու հանապազ խոկում էր աստվածային բաներ և գիշեր-ցերեկ աղոթում էր արտասուքով: Նախ քան ամբարիշտ զինվորները կբռնեին երանելիին, մի օր եղավ, որ եղբայրներից մեկը մաքրեց նրա գլուխը, և քանի որ բնությամբ ճաղատ էր, ով որ մաքրում էր՝ համբուրում ու ասում էր. «Երանի այս գլխին, որ հանուն Քրիստոսի հատուցում է

ստանալու վկայությամբ»: Իսկ նա գրկեց, համբուրեց նրան ու ասաց. «Ճշմարիտ կլինի քո մարգարեությունը, որդյակ, և Աստված կլսի քո բերանի խոսքը, և Աստված կպարգևե ինձ մի մաս այդ բարիքներից, որ ելան քո բերանից»:

Այնտեղ նստած էր մի ուրիշ եպիսկոպոս, որ եկել էր Ակիփսիմային տեսնելու: Այս լսելով՝ իբրև ծաղր ընդունեց խոսքը և ասաց այն եղբորը. «Իսկ թե դա գիտես, ասա ինձ՝ ի՞նձ ինչ է պատահելու»: Պատասխանում է նրան. «Երբ գնաս այն երկիրը, որ կոչվում է Ադրանա՝ այնտեղ կվախճանվես»: Եվ ինչպես ասաց՝ այնպես եղավ. երանելի Ակիփսիմա եպիսկոպոսը այնտեղ վախճանվեց Քրիստոսի վկայությամբ, իսկ մյուսը գնալով Ադրանա՝ մահացավ:

Իսկ սուրբ Ակիփսիմա եպիսկոպոսը ձերբակալվեց, ու երկաթե կապանքներով տանում էին նրան, գալիս անցնում է իր տան մոտով, նրա հետ եղածներից մեկը նրան ասում է ծածկաբար. «Ո՛վ երանելիդ վկաների մեջ, ահա մոտեցել է այս հանցավոր կյանքից քո ելնելու և հանդերձյալ [աշխարհ գնալու] ժամանակը. կարգադրիր քո տան համար, որ ավարի չենթարկվի»: Եվ նա, ձեռքը վեր տարածելով, ասում է. «Այս տունն իմ տունը չէ, և այս ժառանգությունը իմ ժառանգությունը չէ, այլ իմ տունն ու ժառանգությունը Քրիստոս է, որովհետև Նրանից բացի ոչ մեկի չսիրեցի»:

Ու երբ տարան քաղաքը, որ կոչվում է Արբիլ, մոգպետի առջև էին, որ կոչվում էր Ադրաքուսիթ: Սա հարցրեց նրան. «Քրիստոնյա՞ ես»: Բարձր ձայնով պատասխանեց ու ասաց. «Այո՛, ճշմարիտ քրիստոնյա եմ, երկրպագում եմ Հայր Աստծուն և Որդուն՝ որպես Միածնի, և Սուրբ Հոգուն»: Եվ մոգպետն ասում է. «Ուրեմն ճշմարիտ են ասում, որ լսեցինք, թե մարդկանց սովորեցնում ես մեր օրենքներին հակառակվել և արհամարհել թագավորի հրամանները»: Ակիփսիմա երանելին ասաց. «Այդպիսի բաները, որ լսել ես մեր մասին՝ արդարև ճշմարիտ են. մարդկանց քարոզում ենք միայն մեկ Աստված, որպեսզի զղջան և դառնան չար ճանապարհներից դեպի Նա, կարոտեն ամեն ժամ Նրան հաճո բաներ, ինչպեսև գրված է մեր աստվածապատում Կտակարաններում»:

Մոգպետն ասաց. «Քո մասին լսել եմ, թե իմաստուն մարդ ես, բազում տարիներ ապրելով, ինչո՞ւ մանկան պես մոլորյալ՝ չես երկրպագում արեգակին, չես պատվում հուրն ու ջուրը, ինչպես պատվում են թագավորները և ամբողջ Պարսից աշխարհը»:

Սուրբը եպիսկոպոս Ակիփսիման ասաց. «Պարսից երկիրը լցրել են բազում հիմարություններով, թողել են իրենց արարող Աստծուն և երկրպագում են Նրա ստեղծածներին: Առաջ դուք մոլորվեցիք, ապա նրանց մոլորեցրիք ձեր չար ու անօրեն վարդապետությամբ, հաշվելով բազում աստվածներ, որոնք մեկ արարչի ստեղծածն են՝ Նա է Աստված ամեն ինչի»:

Մոգպետն ասաց. «Անօրե՞ն ես անվանում մեր ճշմարիտ վարդապետությունը, որով հաստատուն կա և մնում է այսպիսի թագավորությունը՝ հաղթող բոլոր թագավորությունների, որ կան երկրի վրա, ո՛վ չար ծերուկ և արժանի մահի»:

Եպիսկոպոսն ասաց. «Ո՞ւր է ձեր վարդապետության ճշմարտությունը, երբ ահա ճշմարտությունն եք ուրանում և արարածներին ու ստեղծածներին աստված եք համարում և նրանց եք երկրպագում»:

Մոգպետն ասաց. «Այս պահին լսիր ինձ և երկրպագիր արեգակին և մնա և ազատվիր տանջանքներից, որ կան և սպասվում են քեզ, քանի որ ես ծերությունդ եմ խնայում, որ արյամբ դժոխք չիջնես»:

Սուրբ Ակիփսիման ասաց. «Փակիր ամբարշտագույն բերանդ և մի շարունակիր խոսել կամ կրկնել անօրեն բաներ, ո՛վ բռնավոր, որովհետև ես մայրական խանձարուրից, իմ մանկությունից մինչև այժմ այս հավատով եմ սնվել ու զարգացել, իսկ այժմ, ծերությանս պարտավոր եմ քաջությամբ ու բարվոք խոստովանությամբ հաստատուն մնալ հավատիս մեջ, որ պսակվեմ իմ ճշմարիտ Աստծուց»:

Այնժամ կատաղությամբ և բարկությամբ լցված ամբարիշտ մոգպետը հրամայեց չարչարել նրան չորսկողմյան պրկմամբ և չարաչար հարվածներով ապտակել նրան, մինչև որ արյունը ոռոգեց հողը: Ամբարիշտը ասաց սրբին. «Ո՞ւր է քո Աստվածը, թող գա քեզ փրկի իմ ձեռքից»: Իսկ երանելի եպիսկոպոս Ակիփսիման ասաց. «Իմ Աստվածը երկնքում է և երկրի վրա և կարող է փրկել ինձ քո ձեռքից, ո՛վ ամենապիղծ և գարշելի: Եվ դու մի՛ պարծենա, քանի որ ծաղկի պես թառամելու ես, իսկ քո փառքը վայրի խոստի պես է անցնելու: Ամբարհավաճությամբ մի՛ ամբարտավանանա, որ մեռած ես ի կենդանության և հեռացած կենդանի Աստծուց, որին չես հավատում, չես երկրպագում մեր ճշմարիտ Աստծուն: Իսկ այս ժամանակավոր մահս հավիտենական չէ և ոչ կենդանությունս անվերջ: Նույնպես և այն կյանքն ու բարիքների հատուցումը, որ պատրաստել է մեզ Աստվածը մեր՝ անվախճան են: Իսկ ինչ ձեզ է պատրաստված՝ նույնպես վախճան չունի. անշեջ հուր՝ փոխանակ շիջանուտ հրի, որ դուք եք պաշտում, որ մաշում է ձեր հոգին ու մարմինը»:

Այնժամ կատաղելով՝ մոգպետը հրամայեց նրան կապել ծանր շղթաներով և խավարչտին բանտ նետել կապանքներով: Իսկ մյուս օրը բռնեցին սուրբը Հովսեփ քահանային այն գյուղից, որ կոչվում է Բիթլաթուբա և թարգմանվում է Դպիրների գյուղ: Նա ևս ծեր էր շատ, յոթանասուն տարեկան, հարգված բոլորից և մեծ նախանձախնդրություն ու ջանք ուներ Աստծու հանդեպ և անպարսավելի կենցաղավարությամբ սպասավորում էր իբրև քահանա:

Նույն օրը բռնվեց նաև Այիթալա սարկավագը, այն գյուղից, որ կոչվում է Բիթնեբրի, որ մոտ վաթսուն տարեկան ծեր մարդ էր և լցված էր Աստծու երկյուղով: Եվ ամբողջ հոգով և ուժով սիրում էր Աստծուն ջերմաջերմ հավատով: Եվ դեմքով ու երեսով պայծառ էր ու զվարթ, և խոսքով հանդիմանող: Նա համարձակ կանգնեց մոգպետի առջև Արբիլ կոչվող քաղաքում և ասաց. «Ո՛վ անօրեններ և չարամահներ, ինչո՞ւ եք մարդկանց մոլորեցնում սատանայական աղանդավորությամբ և անօրեն ու սնոտի վարդապետությամբ, և դարձնում գեհենի որդի ձեզնից ավելի»:

Մոգպետն ասաց. «Իսկ ո՞ր վարդապետությունն է մեծ ու սքանչելի, ո՛վ անմիտներ, մե՞ր, որ բոլոր երկրների արքայից արքան՝ մեծամեծ իշխաններով ու զորքով պաշտում է, թե՞

ձերը, որ նվազ եք, և մեզնից պարտված և մեր լծի ու հարկի տակ ընկած»: Պատասխանեց երանելի Հովսեփն ու ասաց նրան. «Մեր Աստվածը հպարտություն չի սիրում, այլ հակառակ է ամբարտավաններին և սիրում է խոնարհություն: Դրա համար և մենք արհամարհում ենք աշխարհի մեծությունն ու փառքը, սիրում ենք աղքատություն, որպեսզի արժանի լինենք անանց փառքի և հավիտենական կյանքի»:

Մոգպետն ասաց. «Որովհետև չեք սիրում աշխատել և վաստակով կերակրվել՝ ձեր ծուլության պատճառով, այլ՝ տնետուն շրջելով հաց մուրալ և պարծենալ աղքատությամբ»:

Երանելի Հովսեփն ասաց. «Քանի որ մեզ նախատեցիր, անվանելով հեղգ և ծույլ և վատ, ո՛վ թշվառական, եթե ուզեինք վաստակի ու ձեռքի գործերի ետևից գնալ, մեծ ու փարթամ կլինեինք ավելի քան դուք, որ հափշտակությամբ և աղքատներին զրկելով եք հարստացել: Մենք ինչ որ հավաքել էինք՝ նվիրեցինք Քրիստոսին, բոլորը բաշխելով աղքատներին: Իսկ դուք ագահությունից կողոպտում եք աղքատներին ու տնանկներին»: Մոգպետն ասաց. «Շատերին ըղձալի ու սիրելի է հարստությունը, և չկա մարդ, որ ատե այն, որ սիրված է բոլորից: Եվ ինչպես կհավատա մեկը ձեզ և կատե այն»:

Հովսեփն ասաց նրան. «Ճշմարտությամբ իմացանք, որ որևէ մեկին չի մնա հարստությունն ու մեծությունը երկրայիններիս, այլ իբրև ստվեր անցնում է, իբրև անիվ գլորվում է և չի մնա նա և քեզ մոտ, որ սիրում ես այն: Նույնպես և իշխանությունն ու թագավորությունը փախչում են նրանցից, և [նրանք] դժոխք են իջնում և հող դառնում: Սրա համար մենք չենք ցանկանում փառքը, որ անցնում է, այլ հավիտենականը, որ կա և հավիտյան կմնա, որն աչքը չի տեսել և ականջը չի լսել, որն Աստված պատրաստեց իր սիրելիներին»:

Մոգպետն ասաց. «Թող այդ ամենը, որ անմիտ մարդկանց ավելորդ դատարկախոսություն է ու առասպել, և ինձ ասա՝ ինչ հարցնում եմ. թե կանե՞ս իմ կամքը և արքայի հրամանը, կերկրպագե՞ս մեծ արեգակին և կփրկես քո կյանքը դառնագույն տանջանքներից, որ պատրաստել ենք քեզ պատճառելու և ենթարկելու ավելի չար ու դառն տանջանքի»: Սուրբը Հովսեփը պատասխանեց. «Սրանով մի՛ մոլորվիր, ո՛վ ամենամբարիշտ և մի՛ սպասիր, թե ես կերկրպագեմ արեգակին, որովհետև Աստված չէ, այլ Աստծու ստեղծածը»:

Այնժամ մեծ զայրույթով լցված իշխանը հրամայեց նրան լարերով պրկել գետնին, և տասներկու տղամարդկանց՝ նրան չարչարել արջառաջիլով ու դժնիկ փշոտ գավազաններով: Եվ այսպես նրան հարվածում էին չարաչար տանջանքով՝ մինչև ավանդեր հոգին: Իսկ Քրիստոսի քաջամարտիկ վկան արիաբար դիմանում էր և տանջանքի մեջ բան չէր խոսում, այլ միայն երկինք նայելով՝ իր սրտում դիմում էր Աստծուն, օգնության կանչելով, որ ուժ տա համբերելու տանջանքներին: Բազում և չարաչար տանջանքներից արյունաներկ եղան մարմնի բոլոր մասերը: Այնժամ սուրբն սկսեց բարձր ձայնով աղոթել և ասաց այսպես. «Գոհանում եմ քեզնից, Քրիստոս, հույս իմ և ապավեն, Որդի կենդանի Աստծու, որ ինձ արժանացրիր այս երկրորդ մկրտությանը, որ լվացվեմ վկայությամբ և արյամբ մաքրվեմ իմ բոլոր անօրինություններից, որպեսզի տաճար և բնակարան լինեմ սուրբ Երրորդությանդ»:

Այս լսելով՝ անօրենները ավելի սաստիկ ցասումով բարկացան, և [մոգպետը] դահիճներին հրամայեց նորանոր տանջանքով՝ երկաթե քերիչներով հասնեն մինչև ներքին անդամները, այնքան որ առողջ տեղ չմնաց սուրբ վկայի մարմնին: Եվ կապեցին երկաթե կապանքներով և երկաթի անուր դրին պարանոցին նրա և տարան բանտ նետեցին, որտեղ արգելված էր սուրբ եպիսկոպոս Ակիփսիման:

Անօրեն մոգպետն ասաց երանելի վկա Այիթալային. «Իսկ դո՞ւ ինչ ես խորհում, ո՛վ Այիթալա, արքայի կա՞մքը կատարել և երկրպագել արեգակին և ճաշակել զոհերի արյունից, ամուսնանալ ըստ մեր օրենքների և ապրել մեծափառ և մեզ հետ վայելել կյանքը, թե նույնպես չարչարվել ու մեռնել չարագործի մահով»:

Այիթալան պատասխանեց բարձր ձայնով և ասաց բռնավորին. «Ո՛վ անսուրբ և պիղծ շուն, դու երկրպագիր քո անշունչ աստված արեգակին և դու ճաշակիր նրա զոհերի աղտեղի արյունից, որ այդպես կուրացել ես անմտությամբ, որ չկարողացար նայել ու տեսնել Քրիստոսի անճառ ու անաղարտ լույսի պայծառությունն ու մշտնջենականությունը, որ ծագեց ամբողջ տիեզերքին, և սուրբ ավետարանի քարոզությունը, որ լսելի եղավ մինչև երկրի ծայրերը: Ինձ համար լավ է մեռնելը քո ձեռքով, որ փրկվեմ հավիտենական մահից ու գեհենի անշեջ հրից, քան սպասարկել քո աստվածների մարելի հրին ու մոխրին»:

Երբ սա լսեց անօրեն բռնավորը՝ նրա երեսի գույնը փոխվեց սաստիկ զայրույթից, և ասաց. «Ո՛վ անմիտ և հղփացած դառնածեր, ահա շուտով կհրամայեմ շտապ կտրել քո գլուխը, և կզրկվես աշխարհի քաղցր լույսից՝ անմիտ խոսքիդ պատճառով, որ ասացիր»:

Սուրբ Այիթալան ասաց նրան. «Քեզ եմ անվանում հիմար և անմիտ, որ չճանաչեցիր Քրիստոսի ճշմարտությունը: Քանզի մեր փրկիչ Աստված այսպես է մեզ դրել՝ Սիրել կյանքը, որ դուք մահ եք կոչում, և ատել մահը, որ դուք կյանք եք անվանում: Որովհետև այս ժամանակավոր մահը մեզ տալիս է հավիտենական կյանքի փրկություն: Ովքեր մեռնում են բարեպաշտության համար՝ սրբերի հետ ստանալու են մշտնջենավոր ու անանց բրաբիոնը»:

Այնժամ դժնեմիտ ու անօրեն մոգպետը հրամայեց անօրեն դահիճներին՝ կապել նրա ձեռքերը ծնկներից ներքև և վեց զորավոր մարդկանց [ասաց, որ] հաստ փայտ կախեն ձեռքերի տակ, որ կապած էին ծնկներից ներքև: Իսկ մյուս կողմից ևս վեց մարդու [հրամայեց] ծեծել նրան փշոտ գավազաններով: Եվ չարաչար ու անագորույն էին այն տանջանքի հարվածները՝ անգութ ու անխնա:

Իսկ Քրիստոսի ճշմարիտ վկա Այիթալան բարձրաձայն աղաղակում էր և անարգում մոգպետին, ասելով այսպես. «Պիղծ և անօրեն կատաղի շուն և վայրենամիտ անսուրբ դազան, որ ուտում ես անմեղների մարմինը, չեմ վախենում ես քո տանջանքներից և քո աստվածներին չեմ պաշտում: Եվ կրակին ու մոխրին չեմ երկրպագի, ո՛վ վայրենամիտ և անաստված, երիցս թշվառական»:

Իսկ անօրեն բռնավորը զայրացած ատամներն էր կրճտացնում նրա վրա և բարկանում դահիճների դեմ ու ասում. «Ինչո՞ւ մեղմ եք տանջում մեր աստվածներին բամբասողին»:

Իսկ երիցս երանելի վկայի ձեռքի բազուկները մանրվեցին չարաչար կապանքների խստությունից, և ջարդվեցին ոսկորների բոլոր հոդերը, և միմյանցից բաժանվեցին մարմնի մասերը, ապա նրան տարան նետեցին բանտ, ուր նրա ընկերներն էին:

Եվ հինգ օր հետո նրանց հանեցին այն բանտից: Եվ [մոգպետը] հրամայեց տանել նրանց բուրաստանը, որին մոտ էր հրո տաճարը, որտեղ երկրպագում էին: Այնտեղ դատաստանի ատյան նստելով՝ անօրեն մոգպետը հարցաքննեց նրանց և ասաց. «Ասացեք ինձ, ո՛վ անմիտներ, թե տակավին հաստա՞տ եք նույն համառությանը, չհնազանդվելով թագավորի հրամաններին և հիմարացած մնում եք նույն չար աղանդին, թե՞ այսուհետև զգաստացած կկատարեք նրա կամքը»: Իսկ սրբերը միաբերան պատասխանեցին. «Մենք մի խորհրդով և մի մտքով հաստատուն ենք մնացել և անշարժ այս հավատին, և այսպես կանք ու կմնանք այս հավատին մինչև վերջ: Եվ ճշմարիտ Աստծուն ենք երկրպագում՝ երկնքի և արեգակի և երկրի վրայի արարածների ստեղծողին: Իսկ ամբարիշտ և անաստված թագավորների հրամաններին չենք հնազանդվի և չենք լսի քեզ: Արդ, ինչ ուզում ես արա շտապով և ամեն հնարքի նեղություններով, որ մտածել ես, տանջիր մեզ, և մենք պատրաստ ենք հաղթել քեզ և քո խորհրդակից բանսարկուին»:

Այնժամ առավել ևս զայրացավ անօրենը սրբերի վրա, հրամայեց բերել բարակ մանած այծաթելե պարաններ և դրանցով փաթաթել սրբերի թիկունքն ու կողերը և փայտով դաժանորեն ամրացնել այնքան, որ նրանց ոսկորները ճարճա-

տում և փչրվում էին: Եվ ասաց նրանց. «Ամենաթշվառներ ու չարաբախտներ, կատարեցեք թագավորի կամքը և փրկեցեք ձեր անձը չար ու դառն տանջանքներից»: Իսկ սուրբ վկաները պատասխանեցին բարձր ձայնով. «Մենք կկատարենք մեր Աստծու և Փրկչի կամքը, իսկ անօրեն թագավորի կամքը չենք կատարի»: Եվ օրվա երրորդ ժամից մինչև իններորդ ժամը տանջվում էին սրբերը նույն տանջանքով հարցաքննվելով բռնավորից: Սակայն համբերում էին այնքան տանջանքներին, և սրբերն սքանչելի էին երևում անհավատների մեջ: Եվ Աստված փառավորվում էր նրանցով: Իսկ անօրեն դահիճները վերցրին նրանց մեռելների նման և նորից բանտ տարան և ոչ մեկին թույլ չէին տալիս բանտ մտնել նրանց մոտ և նրանց կերակրել մարմնական կերակրով: Այն հրամանն ստացան մոգպետից բանտապահները, որ սպառնալով ասում էր. «Եթե մեկը մտնի նրանց մոտ, նրանց այս պատուհասն է սահմանվում՝ դալար բրերով երկար կտանջվեն հարվածներով, և կկտրվեն ռունգերն ու ականջները»: Բայց շատ արի վկաները Քրիստոսի հոժարակամ կրում էին տեսակ-տեսակ տանջանքները՝ մերկ, քաղցած ու ծարավ՝ բանտում արգելված երեք տարի: Իսկ երբ սովը սաստիկ տանջում էր՝ նրանց հետ կալանավորվածները ելնում հաց էին մուրում և տանում նրանց և կերակրում չնչին կերակրով, սուղ միջոցներով: Մինչև որ բանտապահները տեսան անհնարին նեղություններն ու ողորմելի կյանքը՝ լալիս ու աշխարում էին նրանց հարազատների նման:

Իսկ սուրբ վկաների չարչարանքի երեք տարին անցավ, արքան եկավ Դաբիդմադան կոչված գավառը և ազատեց նրանց կապանքներից: Եվ ահա կապանքների բազում նեղություններից նրանք նման էին գերեզմանի մեռելների, այնքան որ նույնիսկ անգութ հեթանոսները լալիս ու աշխարում էին նրանց համար: Եվ նրանց տարան պալատը և կանգնեցրին ամբողջ Արյաց աշխարհի մոգպետի առջև, որի անունը Դերսաբուր էր: Եվ նստեցին պարսից ավագանիի բոլոր մեծամեծները նրա մոտ և բազում այլ մոգեր: Եվ սրբերը

մտան նրանց առջև, խոնարհվեցին նրան: Եվ ասում է նրանց. «Ասացեք ինձ, թե ո՞ր պաշտամունքին եք հնազանդ դուք և կամ ինչպես լսեցի՝ քրիստոնյա՞ եք»: Պատասխանեցին արիագույն վկաները. «Այո՛, քրիստոնյա ենք, և միակ Աստծուն ենք պաշտում ու երկրպագում»:

Մոգպետն ասում է նրանց դարձյալ. «Ինչպես տեսնում եմ՝ ծեր մարդիկ եք և բազում ճիգ ու տանջանք կրած անձինք: Սրա համար ձեզ խորհուրդ եմ տալիս իբրև բարեկամ՝ լսեցեք ինձ, այսուհետև խնայեցեք ձեզ և իզուր մի՛ վախճանվեք: Հնազանդվեցեք թագավորի օրենքներին, երկրպագեցեք արեգակին և կփրկվեք: Քանի որ մահավճիռ է սահմանված բոլորին, ովքեր ընթանում են քրիստոնյաների ճանապարհով»:

Երանելի Ակիփսիման պատասխանեց. «Գիտեմ, որ մեծ ցանկություն ունես վրեժխնդիր լինելու քո պաշտած աստծուն՝ ջախջախված իշխանությանդ համար. և արդ՝ մի՛ հապաղիր և մի՛ ուշացրու անօրեն խորհուրդդ, որ խրոխտանում ես մեր դեմ, ինչ անելու ես՝ արա իսկույն, մենք չենք զարհուրում քո սպառնալիքներից և չենք վախենում քո [պատճառելիք] տանջանքներից, որովհետև հաստատուն է մեր հույսը առ Քրիստոս Աստված մեր, իսկ անօրեն թագավորի հրամանները չենք հանձն առնում»:

Ամբարիշտն ասում է. «Գիտեմ, որ դուք՝ քրիստոնյաներդ մահ եք փնտրում, որը հանգիստ եք համարում: Բայց ձեր ուզածն իսկույն չեմ անի, մինչև դարձյալ դառն տանջանքներով կտտամահ անեմ ձեզ: Ապա ձեր գլուխները սրով կհատեմ, որ բոլոր աղանդավոր քրիստոնյաները տեսնելով զարհուրեն և հակառակ չմնան մեր օրենքներին»: Երանելի եպիսկոպոս Ակիփսիման ասում է նրան. «Ոչ քո տանջանքներից ենք վախենում և ոչ քո սրից և մահվան վճռից, չենք զարհուրում: Ուստի, քանի որ մեզ զորացրեց Քրիստոս, ինչպես մինչև օրս դիմանալու ուժ տվեց մեզ՝ համբերելու վիշտ ու նեղություններին, այժմ նույնպես նա օգնում է քանի հուսացել ենք նրան: Այժմ փորձիր մեր ծերությունը, որ զո-

բացած է Աստծով և ճանաչիր նրա աստվածության մեծագործությունը, ո՛վ թշվառական, որ հաղթվեցիր մեր հույսի համբերությամբ և կամաչես ունայն մտքերովդ: Եվ քո մոլորությունը կհանդիմանվի մեր ճշմարիտ հավատից»:

Այնժամ ամբարիշտ և անօրեն իշխանը զայրույթով լցվեց ու մեծ ցասումով, հրամայեց բերել հաստ ճոպաններ և չորացրած արջաջիլ և ասաց նրանց. «Երդվել եմ մեծ աստված արեգակով և մեծ Շապուհ արքայից արքայի բախտով ու ճակատագրով, որ եթե չկատարեք արքայի կամքը, ձեր մարմինները կապականեմ տանջանքով, ձեր սպիտակ մազերը արյունով կներկեմ, և բնավ չեմ խնայի ձեզ, մինչև չարաչար տանջանքներով կարձակեք ձեր հոգիները»: Երանելի Ակիփսիման պատասխանելով ասաց. «Ինչի համար որ երդվեցիր աստծուն, տրտմեցի, որովհետև աստված չէ, և բռնավորի բախտովս թշվառական, վախենամ չկատարես երդումդ և օրինազանց լինես ու սուտ: Ահա ասացինք, որ մենք չենք ուրանա ճշմարիտ հավատը, որին մնացել ենք, այլ մեր մարմինները հանձնում ենք ձեր ձեռքը՝ տանջելու համար: Իսկ մեր հոգիներն ավանդում ենք Աստծու ձեռքը, որ տվեց սա: Ինչ որ անելու ես՝ մի՛ դանդաղիր, այլ կատարիր իսկույն, քանի որ մենք պատրաստ ենք»:

Այնժամ ամբարիշտ բռնավորն աղաղակեց, և հրամայեց դահիճներին՝ երանելիին քառակուսի փռել գետնին, և զորավոր մարդկանց հրամայեց տանջել նրանց որովայնն ու թիկունքը, մինչև արյունախառն մարմինը կտոր-կտոր թափվեր գետին:

Իսկ մարդկային ամբոխը աղաղակում էր, ասելով՝ «Ա՛ռա՛ թագավորի կամքը և քո անձը փրկիր այդ տանջանքներից»: Իսկ սուրբը մինչ տանջանքի մեջ էր, խոսելով դիմեց բազմությանը. «Ես իմ մանկությունից կատարեցի Աստծու կամքը և չեմ կատարի բռնավորների կամքը»: Իսկ երբ տանջանքների սաստկությունից դաղված՝ չէր կարողանում խոսել, այլ աչքով նկատում էր և իր սրտում աղաչելով Աստծուն՝ խոստովանում էր ճշմարիտ հավատը: Եվ տանջանքների մեջ ավանդեց հոգին:

Նրա վախճանվելուց հետո փոխվեցին ծեծող դահիճները և դեռ տանջում էին մեռած մարմինը: Եվ բազում ժամեր տանջեցին նրան, մինչև որ փշրեցին բոլոր ոսկորները, և նրան բարձունքից ներքև գցեցին, և պոկվեց նրա պարանոցը, և քարշ տալով գցեցին քաղաքի փողոցի մեջտեղը, և պահապանները շուրջը նստած հսկում էին:

Երեք օր հետո նրա պատվական նշխարները գողացան գաղտնաբար, արքայադստեր հրամանով, որ Հայոց ազգից էր, Քրիստոսին տալով առհավատչյա խաղաղություն աշխարհի:

Երանելի Ակիփսիմա եպիսկոպոսը վկայեց հոկտեմբեր 10-րդ ամսին, Պարսից Շապուհի թագավորության շրջանում, իսկ մեզ թագավորում էր մեր Տեր Հիսուս Քրիստոս, որին, Հորը և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և հավիտյանս. ամեն:

ԱՆԴՐԵ ԶՈՐԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԶՈՐՔԻ՝ ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՈՒԹ ՀԱՐՅՈՒՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածային անճառելի և անիմանալի խորհուրդը, անհասանելի և անպարագրելի սքանչելիքը, անհասանելի և անպատմելի բարերարությունը, Նրա անբավ մարդասիրության ողորմությունը, սքանչելի և առատաբաշխ պարգևները, ո՞վ ի վիճակի կլինի պատմելու կամ իմանալու, որը մեր մտքին անտեսանելի է և գիտանքին անիմանալի, որ ո՛չ լեզվով է պատմվում, ո՛չ մարդու հանճարով է իմացվում, ո՛չ բերանով է ճառվում, ո՛չ աչքի տեսողությամբ է բացահայտվում. մեծահրաշ և սքանչելի բարիքը՝ պատրաստված Աստծու կողմից իր սիրելիների համար, որոնք ընդունել են արարչական հրամանի պատվերը. «Թե մեկը թողնի հորն ու մորը, գյուղեր ու ագարակներ, նրանն է երկնքի արքայության ժառանգությունը» (Մատթ. ԺԹ. 5, Մարկ. Ժ. 7, Եփես. Ե. 31),- և խոստումը անճառելի բարիքի, «որ աչքը չի տեսել և ականջը չի լսել, և մարդու սիրտ չի ընկել» (Ա. Կորնթ. Բ. 9): Այս պատվերը, առավել քան սա, ստացան երանելի սուրբ վկաները, որովհետև ոչ միայն տները, գյուղերն ու ագարակները թողին, այլև ամբողջ աշխարհը իր բոլոր վայելչություններով. և ոչ միայն հորն ու մորը և ազգը, այլև իրենց անձերը տվին տանջանքի ու մահի. իրենց կյանքը փոխանակեցին երկնային կյանքով, և իրենց արյունը հեղեցին Քրիստոսի արյան փոխարեն, և իրենց խաչերը շալակած ընթացան Կենարարի կոչի ետևից: Եվ այսպիսիները քիչ չէին ոչ մասնավոր մի կողմում երկրի, այլ բազում անգամ բազում տեղեր բազմություններ անբավ, որոնք Աստծու սիրով վառված միացան Աստծուն:

Բայց հիմա շատերի մասին չէ այս պատմությունը, այլ երիցս երանյալ մեծ ու հռչակավոր վկա սուրբ Անդրե զորավարի և նրա աստվածանման զորքի՝ ընտրյալ մարտիրոսների, որ Դեոկղետիանոս և Մաքսիմիանոս անօրեն ու ամբարիշտ

թագավորների ժամանակ էին: Երկրի վրա արթնացավ սատանայական խորհուրդը չարարվեստ թագավորների անաստված հրամանների միջոցով, ջանում էին հանգցնել աստվածային պատվիրանների ճառագայթները և բոլորին հորդորում պաշտելու սնոտի ու խավարային կուռքերի պաշտամունքին: Նույն ժամանակ էր սուրբ երանյալ Անդրեաս նահատակը, կենդանի Աստծուն հավատացել և աստվածային հույսով էր վառվել, իր անձը պահում էր քրիստոնեական հավատով և ուրիշ ոմանց քաջալերելով հորդորում էր արդարության ճանապարհի և հաստատում ճշմարիտ հավատի մեջ՝ խոստովանելու Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Բայց չէր համարձակվում հայտնապես պատվել քրիստոնեության հավատը, որովհետև ամբողջ աշխարհը և թագավորները և իշխանները աշխարհների՝ մոլությամբ պաշտում էին կուռքերին: Եվ այս երանելին զորավար էր Անտիոքի բռնակալի մոտ, Ասորիների կողմերը, քաջ և առաքինի, հաղթող պատերազմի մեջ, արիաբար քաջամարտիկ լինելով անօրեն բարբարոսների դեմ, հարձակվող թշնամիներին վանում էր պատերազմում Քրիստոսի մարտակցությամբ, և ծաղկում էր քրիստոնյա հավատի բարեպաշտությամբ, մեծ զորությամբ ախոյան էր թշնամիների զորքերի դեմ և խրատելով ուսուցանում էր յուրայիններին ի սեր Աստծու պատվիրանների: Խորտակելով հեթանոսների մանր զորությունները՝ Ավետարանի խոսքն էր քարոզում նրանց լսելիքներին, ովքեր հետևում էին նրան պատերազմում. նահատակվում էր արիաբար ընդդեմ հակառակորդների բռնության և վարդապետ լինում Աստծուն ճանաչողներին՝ հաստատուն մնալ երկնային փառքի հույսին. զորությամբ պատերազմում էր սատկացած հակառակորդների դեմ և մեծ հաղթությամբ վանում էր նրանց՝ Քրիստոսի զորությամբ: Եվ սիրելի էր Անտիոք Մեծի և բոլոր նախարարների ու մեծամեծների աչքին և մեծարվում էր բոլորից՝ նրանց մոլար օրենքի կարգի համաձայն:

Այն ժամանակ թշնամական բազում զորքերը հարձակվեցին դավառի վրա, եղավ պատերազմական հուզմունք՝ հռոմայեցոց թագավորության դեմ: Եվ մեծ երկյուղ ընկավ

աշխարհի այն կողմերում, և մեծ տագնապի մեջ էին: Եվ Անտիոքոսն ասում է իր զորավար Անդրեասին. «Քո արիության ու քաջության համբավը ամեն կողմում տարածված է, քանի որ բոլոր պատերազմների [հաղթական] ավարտը քեզնից իմացան բոլոր մարդիկ, որի համար և այդպիսի պատվի արժանացար և հիմա առավել կցուցադրես այս պատերազմում քո հաղթական քաջությունը, որ ավելի պատվի, գովեստի ու մեծարման արժանանաս:

Իսկ արի և առաքինի նահատակ զորավար Անդրեասը Աստծուն հուսալով՝ որ խորտակում է պատերազմները, ինքնիրեն Աստծուն հանձնեց և բռնավորի հրամանին, իր համար ընտրեց 599 այրերի և ընդառաջ գնաց թշնամուն՝ հանդիպելու մեծ պատերազմում: Տեսնելով թշնամիների բազմությունն ու իր զորքի տկարությունը՝ քանի որ քիչ էին իրենք, երկնչեցին հակառակորդների բազմությունից, [Անդրեասը] իր մեջ արիացավ և սկսեց քաջալերել իր զորքին և աստվածապաշտության հավատն էր սովորեցնում քարոզելով նրանց և դրանով խոստանում էր, որ Աստված թշնամու դեմ հաղթանակ կշնորհե, ասելով. «Եղբայրնե՛ր, այժմ Աստծուն ճանաչելու, կուռքերի մոլորությունից դառնալու և երկնքի ու երկրի Աստծուն հավատալու ժամանակն է՝ վերին օգնականությունից հայցելով մեր փրկությունը: Քանզի Նա է Աստված արարիչն ամենայնի և անհաղթելի Թագավոր և օգնական է լինում բոլորին, որ դիմում են իրեն և կփրկե ամեն նեղությունից: Այսուհետև հավատացեք ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն և այդպես մտնենք պատերազմի մեջ: Եվ իմ Աստծու մարդասիրությանը վստահելով գիտեմ, որ իբրև իրեն հավատացող ժողովրդի կդթա՝ զորավիգ լինելով մեզ, թշնամիներին կմատնի մեր ձեռքը՝ մեր առջևից հալածական, որպեսզի ըստ մարգարեի խոսքի՝ ճմռենք փողոցի կավի նման» (Սաղմ. ԺԷ. 43):

Այս լսեց զորքը, իսկույն նրանց մեջ ծագեց աստվածգիտության լույսը և լուսավորեց նրանց մտքերը, և միաբերան աղաղակեցին ու ասացին. «Մենք ևս հավատում ենք ամենա-

կալ Հորը, Միածին Որդուն և Սուրբ Հոգուն՝ մեկ Աստված, որ փառքով, զորությամբ և իշխանությամբ օրհնյալ գովվում ու փառաբանվում է երկնայիններից ու երկրայիններից և օգնում է իր հավատացյալներին, ինչպես մեզ քարոզվեց, և նրա զորությամբ կհաղթենք թշնամիներին»: Եվ ապա Աստծու հույսին հանձնվելով քաջալերեցին միմյանց, հարձակվեցին թշնամու վրա: Եվ պատերազմը բորբոքվեց, և Տերը մեծ հաղթություն տվեց այն օրը սորբ Անդրեասին ու իր հավատացյալ զինվորներին: Եվ վանելով փախուստի մատնեցին թշնամական բոլոր զորքերը, որ մարտնչում էին սուրբ բանակի դեմ. նրանցից շատերին սպանեցին, իսկ մնացածներին ցրիվ տալով՝ ամենքին մի կողմ վտարեցին: Եվ Տերը նրանցով մեծ հաղթություն արեց ի փառս իր անվան: Հաղթանակից հետո սուրբ Անդրեասն ասում է իր հավատացյալ զորքին. «Տեսեք Աստծու մեծությունը՝ ինչպես փրկեց այսօր և ազատեց մեզ մեր նեղիչների ձեռքից և մեր հալածիչներին հալածական արեց մեր առջև: Այսուհետև հաստատուն մնացեք հավատի մեջ, որպեսզի արժանանաք հավիտենական երանության, որ պահվում է իր հավատացյալներին»:

Իսկ բանսարկուն, լույսի հրեշտակի կերպարանք առած, կանգնեց սուրբ Անդրեասի առաջ, համոզկեր բաներ խոսելով՝ իբր երկնքից եկած: Իսկ նա Քրիստոսի շնորհով իմանալով՝ ասում է. «Ո՛վ ատեցող բարու և թշնամի ամեն ճշմարտության, չե՞ս դադարում խորամանկել, որի համար երկնային դասերից ընկար կորստյան վիհը»: Այնժամ կշտամբելով ասում է բանսարկուն. «Մինչև վերջ չեմ հրաժարվի փորձելու քեզ»: Իսկ սուրբ Անդրեասն ասում է. «Ես կդառնաս Քրիստոսի զորությամբ»:

Եվ մեծ պատերազմի հաղթությունից, թշնամու զորքը վտարելուց հետո վերադարձան Անտիոք՝ խրոխտացած իշխանի մոտ և Քրիստոսի հաղթության գովքն արեցին: Անտիոքոս Մեծը, որոշ չար մարդկանցից լսելով, որ հաղթության փառքը իրեն չեն վերագրում, այլ Քրիստոսին, նաև բանսարկուի խարդախությունից չարացավ, բայց իր չար դաղտնիքը իր սրտում էր պահում: Նրան սպասավորելու համար 200 զինվոր է ուղարկում ընդառաջ, նաև գիտենալու իր լսածը, թե [Անդրեասը] Քրիստոսին է փառաբանում իր զորքով և արհամարհում է իրենց աստվածներին ու նրանց պաշտամունքը: Ու երբ հասան նրա մոտ՝ նա խոսեց ամենասուրբ Երրորդության հավատի մասին, և՛ առաքինի վարքի, և՛ մեռելների հարության, և՛ արդարների ու մեղավորների հատուցման, մեծ ահ զգացին նրանք, և հավատացին Աստծուն, որովհետև ի վերուստ նրանց իջավ աստվածգիտության շնորհը: Եվ օրհնում, գովում ու փառաբանում էին Աստծուն՝ զորավար Անդրեի սուրբ բանակով հանդերձ: Եվ երբ սուրբը քաղաք եկավ իր սուրբ զորականներով՝ պատմեց իշխանին պատերազմում հաղթելը և թշնամիների կործանումը, իշխանը գոհություն էր մատուցում իր կուռքերին: Իսկ սուրբ Անդրեասն ընդդիմացավ և փառք էր տալիս սուրբ Երրորդությանը և ասում էր՝ «Քրիստոսով է հաղթությունը»: Իսկ նա հակադրվում էր՝ դարձնելու նրան ճշմարիտ խոստովանությունից և ասում Անդրեասին. «Զգիտե՞ս թե ինչքան բազմություն, ի՞նչպիսի տանջանքով ոչնչացրի՝ ովքեր Քրիստոսին հավատացին, և ոչ մեկին չողորմեցի: Այժմ դու ինչո՞ւ ես այդպես համառորեն պնդում Խաչեցյալի վրա, Աստված խոստովանելով Նրան և հաղթությունը Նրանն ես համարում, որ չի փրկում իր հավատացյալներին մեր ձեռքից:

Իսկ սուրբ Անդրեասն ասում է. «Բոլոր սրբերը, որ Քրիստոսի անվան համար չարչարվեցին ու մեռան, վերստին կնորոգվեն և կպսակվեն Քրիստոսի հայտնության ու գալստյան օրը: Այս հույսով ես սպասում եմ, միգուցե արժանի լինեմ արժանավորների հետ՝ այցելության օրը»: Բռնավորը լցվեց բարկությամբ ու զայրույթով, բայց ակնածելով նրանից՝ հրամայեց գնալ, որպեսզի խորհի թե ինչ անի նրան:

Եվ սրանք այսպես եղան, չարի խորհրդածությամբ կամեցավ նրան բոլորի հետ, ովքեր միաբանեցին նրա հետ՝ հալածել հեռավոր աշխարհ: Եվ հրամայեց երկու հազար զինվորների՝ սուրբ բանակը հանել քաղաքից, քանի որ իմացավ բոլորի անփոփոխելի միտքը: Նաև ակնկալում էր, թե յուրաքանչյուրը կզղջա և կվերադառնա իր ազգին ու երկիրը:

Իսկ նրանք երկնքի արքայության համար հանձն առան չարչարանք, քան ժամանակավորապես մեղքի մեջ վայելելը ապականացու կյանքում: Եվ սուրբ Անդրեասը բարձրացրեց իր ձայնը, ասաց սուրբ բանակին. «Հիշեցե՛ք Ավետարանի խոսքը, որ ասաց Քրիստոս Փրկիչն աշխարհների. «Երանի,- ասում է,- [նրանց], որ հալածվում են արդարության համար, քանի որ իրենցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե. 10): Արդ՝ ձեզնից ոչ ոք չթյուրանա խորհրդով և վրիպի այն երանությունից, որովհետև կյանքը սասանելի ու քակտելի չէ և երբեք չի քայքայվի, այլ կա և մնում է հավիտյան»:

Լսեց այս բաները սուրբ բանակը, խրախուսվեց Աստծով, սրտի ուրախությամբ գոհանալով Աստծուց՝ օրհնում, գովում ու փառավորում էին ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Իսկ երկու հազար [զինվորները] այդ լսելով՝ զղջացին իրենց հոգում, Սուրբ Հոգու շնորհներն ազդեցին նրանց, և արտասվելով աղաչում էին ամենակալ Աստծուն՝ սուրբ բանակի հետ հավատով որդեգրվելու շնորհ ստանալ: Եվ բոլորը միաբան օրհնություն էին վերառաքում ամենասուրբ Երրորդությանը:

Սա հասավ չարամիտ ու ամբարիշտ Անտիոքոս իշխանին, խռովքով զարհուրեց և չգիտեր թե ինչ ելք գտնի: Իր մոտ կանչեց սինկղիտոսին ու բոլոր խորհրդականներին, նրանց հետ մտածեց նամակ գրել Սելևկիոսին՝ այսպես. «Անտիոքոս մեծ և հռչակելի և հաղթող, իշխեցող և հրամանատար Ասորեստանի կողմերի ամբողջ նահանգի, մեր սիրելի եղբայր Սելևկիոս Մեծ կուսակալին՝ ողջույն: Որպեսզի քո զորությունն անտեղյակ չլինի մեր Անդրեաս զորավարի մասին՝ մեզնից մեծ հարգանքով պատվված, ապստամբելով արհամարհեց մեր պատիվն ու աստվածներին, հեռացավ դեպի խաչած Քրիստոս: Որի համար հալածվեց մեր կողմից, շատերին իր կողմը գրավեց, բոլորով խոստովանելու Քրիստոսին Աստված և հավիտենից Թագավոր, հակառակ ինքնակալ թագավոր կարծվողների: Արդ՝ այստեղ կերևա մեր եղբոր քաջությունը, ուր հանդիպես՝ սուր ու սուսերով մաշես նրանց: Ո՛ղջ եղիր, քաջդ Սելևկիոս»:

Երբ թուղթը տարան և կարդացին նրա առջև՝ իսկույն իբրև չար գազան զայրացավ [Սելևկիոսը՝] դառնության թույնով լի, մտածում էր, թե ինչ կերպ կամ ինչ հնարքով կարող է որսալ նրանց: Պատրաստվում է ինքը և իր բոլոր զորքերին հրամայում է պատրաստ լինել: Իսկ երանելի Անդրեաս զորավարը հանուն Քրիստոսի հալածական եղավ սուրբ բանակի հետ, Ասորվոց Անտիոք մայրաքաղաքից եկավ Աղեքսանդրիա, ճանապարհ բռնեց Օվկիանոսի ծովեզերքով դեպի Կիլիկիո գավառը: Հասան Կիլիկիայի Տարսոն [քաղաքը], հանդիպեցին Տարսոնի [Պետրոս] եպիսկոպոսին, նաև Բերիա քաղաքի Նունոս եպիսկոպոսին, մկրտվեցին նրանց ձեռքով զորավար Անդրեասն ու ամբողջ զորքը՝ ի Հայր, Որդի և Սուրբ Հոգի, և լուսավորվեցին աստվածգիտության լույսով: Եվ նույն պահին նրանց վրա ի վերուստ լույսի տեսիլ երևաց ջրում մկրտվելիս, նաև նահատակության պսակը, որով հանդիպելու էին առաջիկա երանություններին: Եվ սուրբ եպիսկոպոսները ողջունելով օրհնեցին նրանց, և [նրանք] ճանապարհ ընկան դեպի Տարսոն: Այնուհետև Սելևկիոսն իմացավ, այլագունեց նրա դեմքը, առյուծի պես՝ մռնչացող ու հափշտակող, հետապնդելով հալածում էր սուրբ բանակը, և ուր հասնեին՝ գազանաբար հարձակվելով՝ ուզում էին անխնա կոտորել բոլորին: Բայց նրանք ի վերուստ օգնություն ստանալով հաղթահարում էին նրանց, այնքան որ չէին կարողանում ընդդիմանալ երանելի նահատակներին, որովհետև Սուրբ Հոգին առաջնորդում էր նրանց մինչև Աստծուց սահմանված տեղը, ուր նահատակվելու էին: Հասան մինչև Տարմեղինե, Եքսոնի կողմը, և բանակեցին այն վայրում, որ կոչվում է Քափսորիոս և Քարափաթոն. դժվարին տեղ էր լեռնամիջի հովտում, և մեջտեղով փոքր գետ էր անցնում:

Սելևկիոսը հետապնդեց նրանց, հասավ Քափսորի նեղուցին և պաշարեց նրանց: Իսկ սուրբ բանակը իրենց ամբողջ երիվարներով ու զենքով մարտնչեցին նրանց դեմ, և [Սելևկիոսի բանակը] չէր կարողանում հաղթահարել ու բռնել նրանց: Որովհետև Սուրբ Հոգին առաջնորդեց այնտեղ, ուր նահատակվելու էին, ուր և բանակեցին որպես Աստծու բանակ:

Եվ սուրբ զորավարն սկսեց քաջալերել իր զորքին, ասել այսպես. «Եղբայրնե՛ր, իմ սիրելի և քաջ նիզակակիցներ, ահա ժամը արիաբար քաջանալու և հաճո լինելու երկնավոր Թագավորին. ահա ժամը մարտի և հաղթության, որ անթառամ պսակի արժանանանք: Այսուհետ հաստատուն մնացեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատին, պինդ բռնեցեք շնորհը, որ ձեզ տրվեց, հիշեցեք երանավետ պարգևները՝ ձեզ խոստացած Տեր Հիսուս Քրիստոսից: Ձեզնից ոչ մեկը մտքով չշեղվի ընկալյալ շնորհներից, ոչ մեկը հավիտենական կյանքից չզրկվի՝ ցանկանալով երկրային կյանք: Հասել ենք գավթի դուռը, ոչ մեկը ետ չդառնա և վրիպի հարսանյաց առագաստից: Բարվոք պատերազմը պատերազմեցինք, ընթացքն ավարտեցինք և ահա պատրաստ ենք հատուցման վարձքին, և շուտով Թագավորը երկնային փառքով պսակելու է մեզ: Ցանկալի է մեռնել մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվան համար, որ նրա հետ կենդանանանք և փառավորվենք անճառ ու անապական բարիքով: Ցանկալի է այս սնոտի և ապականացու կյանքը փոխանակել անմահական կյանքով, ցանկալի է ուրանալ աշխարհական մեծությունները, որ հանդերձյալում շահենք բազմապատիկ արդյունք, մեկին՝ 30, մեկին՝ 60, մեկին՝ 100 ու առավել ևս, որ հաշվից վեր է: Որ փոխանակ երկրավոր թագավորից հալածվելու՝ մերձավոր լինենք երկնային Թագավորին և նրա հետ թագավորենք: Եվ փոխանակ երկրային սիրելի եղբայրների ու ազգականների, որոնց թողնում ենք երկրում, խառնվելով միանանք երկնքի զվարթուններին և նրանց հետ զվարճանալով պարենք անճառելի ուրախության մեջ: Փոխանակ հայրական ժառանգություններին, որոնցից անջատվելով հեռացանք՝ ժառանգենք երկնի արքայություն և վայելենք անպատում բարություններից՝ ի Քրիստոս Հիսուս մեր Տեր»:

Այս և սրանից ավելին խոսեց սուրբ Անդրեասը իր զորքին, և նրանք քաջալերված Քրիստոսի շնորհներով՝ զորացան և դիմեցին առհասարակ սրա դեմ՝ հոժարակամ մեռնելու մեծ հույսի համար, որ ակնկալում էին:

Իսկ Սելևկիոսը զայրացկոտ մեծ ցասումով, բարկությամբ ու զայրույթով լի, հրամայեց կոտորել բոլորին: Սուրբը զորավար Անդրեասն այսպես էր ասում իր սուրբ բանակով հանդերձ. «Տեր Աստված ամենակալ, որ մեզ որդեգրության շնորհ արեցիր և զորացրիր քո ողորմության կամքով, մեզ արժանացրու սրբերի դասերին, որովհետև քեզ համար ենք մեռնում, իբրև ոչխար սպանդի տարված: Մեզ մի՛ թող քո բարեգթությունից՝ քեզ հուսացողներիս ու ապավինածներիս: Տե՛ր, տո՛ւր ողորմության շնորհները մեր հանգստյան վայրում և բուժիր ցավերն ախտաժետների. յուրաքանչյուրի հոգուն և մարմնին՝ հայցածի համաձայն, և հալածիր պիղծ դևերին, և բոլոր վտանգներից փրկիր քեզ հավատացածներիս, որպեսզի փառավորվի քո սուրբ անունը»: Այս ասելով՝ բոլորը սպանվեցին սուր ու սուսերով, բարի խոստովանությամբ ի փառս ամենասուրբ Երրորդության: Ի վերուստ լսվեց ձայն, որ ասում էր. «Եկեք բոլորի Արարչից մխիթարություն ստացեք, և ձեր արյան հեղման վայրում կբխի բժշկության աղբյուր, և բոլոր վտանգածներին՝ առողջություն ամեն ախտից, և հալածումն պիղծ դևերի»:

Այսպես զոհվեցին սուրբը նահատակները Քրիստոսի, օգոստոս ամսի 19-ին: Եվ սուրբը բանակի թիվն էր երկու հազար ութ հարյուր: Իսկ անօրեն թագավորները որոնեցին երանելի եպիսկոպոսներ Պետրոսին ու Նունոսին, որոնք մկրտեցին սուրբը բանակը, և նրանք փախան Աստծու երկյուղած իրենց պաշտոնյաների հետ, եկան մինչև սրբերի կատարման վայրը և տեսան բժշկության աղբյուրը և սուրբը բանակի նշխարները, աննկատելի ամփոփեցին հանգստյան վայրում, փառավորելով ամենասուրբը Երրորդությունը: Եվ ամեն մեկն իր տեղը դարձավ, և հալածանքը դադարեց: Եվ նրանց վկայության հիշատակը տոնում են ամեն տարի ի փառս ամենասուրբը Երրորդության՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԱՆԹԻՄՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նիկոմիդիա մայրաքաղաքի սուրբ եկեղեցու աճելով և Քրիստոսի հոտի բազմանալով՝ բարիքն ատեցող բանսարկուն և արդարության թշնամին, մարդկանց հոգիների ապականիչը, չար գազանը, ոչխարի մորթով ծածկված մտավ Քրիստոսի հոտը՝ Նրա ներելու պատճառով: Քանի որ այն ժամանակ արբանյակներ ու գործակիցներ գտավ իր չարության՝ ամբարիշտ և անօրեն թագավոր Մաքսիմիանոսին Դեոկղետիանոսի հետ. խավարային վայրենամիտներ, ապերասան, խայտառակված մտքով և սովորությամբ խաբեբաներ: Նա [Մաքսիմիանոս] եկավ Նիկոմիդիա քաղաքը, մտածելով կործանել քրիստոնյաներին, հետևելով մոլորության բանսարկուին՝ մեռելոտի կուռքերի մոլորությամբ: Քանի որ երկրպագում էին ճուլածո սնոտի որոշ աստվածների և անմաքուր ու պիղծ դևերին մատուցում զոհեր ճենճերալիր, ծխամած, միգախառն, մշուշատիպ: Եվ այնտեղ եկած պատուհասների դատարանները Աստծու սիրելի երկյուղածներին տանջում էին: Եվ այն օրերին երկու բյուր քրիստոնյա այր ու կին այրեցին հրով: Իսկ հավատացյալ եղբայրները տեսնելով այդպիսի տարակուսանքի աղետը, որ լինում էր նրանցից, որ ճշմարտության հակառակորդ էին և Աստծուն չէին ճանաչում, այն քաղաքից խույս տալով սփռվեցին լեռներն ու ագարակները, թաքնվելով բռնավորների հալածանքներից, ագարակները քաղաք, իսկ լեռները քաղաքամերձ վայր համարելով: Որովհետև իրենց հետ ունեին անմահ Թագավոր Քրիստոսին, նմանվելով Նրա սուրբ աշակերտներին, որ Հիսուսի հետ լեռը բարձրացան: Եվ այնտեղ լեռներում և ագարակների շուրջը կյանքի Բանն էին ուսուցանում և բարեպաշտության կրոնը:

Արդ, այն ժամանակ Աստծու սուրբ այրը, Քրիստոսի բանավոր հոտի վերատեսուչն ու հովիվը, որի անունն Անթիմոս

էր, հալածանքի երկյուղից թաքնվել էր նույն քաղաքում մի տան մեջ և այնտեղ անհագ ձայնելով պաշտամունք էր մատուցում և աղոթելով խոսակցում էր միշտ Աստծու հետ: Քանի որ արդարության բոլոր գործերով, իմաստուն ու խոհեմ մտքերով զարդարված, բարեպաշտ գործերում արագ, պատրաստ վարդապետելու, պատկառելի տեսակով, քաղաքավարությամբ՝ անպարսավելի. ոչ մի առաքինություն պակաս չէր նրան:

Խույս տալով այդ քաղաքից օրենքի աղտեղի գործերի համար և գնալով մի տեղ թաքնվեց լեռներում, նման իր Տիրոջը և Ուսուցչին, որ անապատ գնալով խուսափեց, և այնտեղ էր՝ աղոթելով ու սաղմոսելով այսպես. «Հուսացի ի Տեր, ինչպես ասում եք ինձ՝ տեղափոխեցիր լեռները ինչպես ճնճղուկ: Ահա մեղավորները լարեցին իրենց աղեղները, պատրաստեցին նետերը իրենց կապարճներում՝ գաղտնի սպանելու անբիծներին» (Սաղմ. Ժ.3): Եվ իր համար տաղավար պատրաստեց գեղատեսիլ վայրում, այնտեղ բնակվեց՝ Աստծու Բանը խոկալով, շատերին բուժելով իրենց հիվանդություններից, և մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով հալածելով դևերին: Եվ տաղավարում ուներ օթևան գիշերային հանգստի: Այն լեռան կողմերի բնակիչներին բարեպաշտության ավանդություն տալու և ուսուցանելու համար ցերեկները շրջում էր լեռներում, ծառերի ոստերի մեջ հրճվելով սաղմոսերգությամբ: Եվ մարմնական աչքի հետ հոգու աչքը վեր դարձնելով դեպի երկինք ասում էր. «Աչքերս բարձրացրի դեպի լեռները, որտեղից ինձ օգնություն կգա» (Սաղմ. ՃԴ. 1): Եվ անընդհատ, հաճախակի նրա աղոթելով վայրի գազանները հնազանդվում էին նրան՝ ինչպես գրված է՝ «Վայրենի գազանները քեզ խաղաղական կլինեն» (Հովբ Ե. 23):

Բայց սուրբ Անթիմոսը, Քրիստոսի բանավոր հոտի հովիվը, ոչ թե մահից վախենալով էր փախել այնտեղ, այլ Սուրբ Հոգու շնորհների պարգևի, մեծ իղձ ու ցանկություն ուներ, իբրև օժանդակություն առաջիկա մրցանքներում ու չարչարանքներում: Որ հաղթելով հակառակորդի զորությանը,

Բելիարի աներևույթ գնդին մոլորեցնի և մնա անարատ մարտիրոսական մրցման հանդեսում և վերցնի իր խաչը, խաչակցաբար հետևի Խաչյալին: Բայց օրըստօրե զորանում էին այն չարագուշակ ժամանակի հալածանքները, չարաչար սպառնալիքների երկյուղից [մարդիկ] միմյանց մատնում էին բռնավորի ձեռքը. հայրերը իրենց որդիներին և որդիները հայրերին, հարևանները հարևաններին և բարեկամներն իրենց սիրելիներին, որպեսզի կատարվեր տերունական խոսքը, թե՝ «Եղբայրը եղբորը մահվան կմատնի, հայրը որդուն և որդիները կհարձակվեն հայրերի վրա և կսպանեն նրանց ատելի կլինեն բոլորից իմ անվան համար» (Մատթ. Ժ. 21-22, Մարկ. ԺԳ. 12-13):

Արդ, բանսարկուի չարասեր արբանյակներից մեկը, որ նրա նման չէր ճանաչում երկնքի ու երկրի Աստծուն, ճշմարտության հակառակորդը, մոտենալով ամբարիշտ Մաքսիմիլիանոսի ականջին՝ ասում է նրան. «Թագավոր, ապրիր հավիտյան, այն քրիստոնյան, որին սպանել խոստացար, ահա փախել է այս քաղաքից, մանավանդ քահանա լինելով՝ մոլորեցնում է շատերին, նրանց ուսուցանելով մոլորության առասպելներ: Այժմ լսիր ինձ, ո՛վ թագավոր, և զինվորներ ուղարկիր, որ գնան գտնեն նրան և բերեն կանգնեցնեն ատյանում քո առաջ»: Եվ Մաքսիմիլիանոս արքան լսեց այն մարդուն՝ մատնիչ ամբարիշտին, իր զորքից 20 հոգու ուղարկեց և պատվիրեց ասելով. «Գնացեք այն գյուղը, փնտրեցեք քրիստոնյա այր Անթիմոսին և գտնելով բերեք իմ անմահական պետության առաջ»:

Նրանք շտապով հրաժեշտ տվին թագավորին, փութացին կատարել հրամայվածը: Եվ հասան այնտեղ, հարցնում էին լեռան բնակիչներին, թե ո՞րտեղ է բնակվում քրիստոնյա այրը, որ կոչվում է Անթիմոս: Բայց նրանք, ում հարցնում էին, չուզեցան պատասխանել, որովհետև խուսափում էին, քանի որ լուսավորված էին սրբի վարդապետության լույսով: Որովհետև նա լի ու լեցուն էր Հոգու շնորհներով, անպակաս ունենալով իր մեջ աստվածադիր պատվիրաննե-

րի վարդապետության իմաստությունը. ստեղծել և սովորեցնել իմաստության խոսքով հանդերձ: Եվ նրա հասակի ձևը, դեմքի նկարագիրը, լի էին շնորհներով, աչքի տեսողությանը հաճելի, անբիծ և անարատ կենցաղավարություն: Զի Հոգու ուղղությամբ հանդերձ, մարմնի անդամներով նույնպես վայելչական էր, և ունենալով ստեղծագործողի գեղեցիկ շարժուձև՝ ցուցաբերում էր փայլուն քաջաբնակություն:

Այնուհետև տեսնելով պարկեշտ կենսաձևը և բազմահանճար վարդապետությունը՝ այն վայրերի բնակիչները հանձն չէին առնում Հուդայի նման մատնել սրբին: Իսկ զինվորները գյուղացիներից որևէ բան չիմացան, որ պատմեին իրենց առաքողներին: Երբ փոքր-ինչ հեռացան այն գյուղից, մի նեղ արահետ գտան ճանապարհի և մարդկանց ոտնահետքեր, որ իջնում էին այնտեղ, ուր սուրբ Անթիմոսը իր տաղավարն էր պատրաստել: Եվ այս ու այն կողմ նայելով՝ անտառախիտ ծառերի մեջ տեսան սրբի բնակարանը, ուրախացան, հեծան երիվարները և արագ փութով հասան լեռան գառիվայրը, որպեսզի որսան սրբին:

Իսկ Աստծո այրը տեսնում է հեծելազորը, որ իր մոտ էր գալիս, ասում է. «Սրանք կառքով ու երիվարով են, իսկ ես կկարդամ իմ Տեր Աստծու անունը»: Այս ասելով երանելին սկսեց աղոթել և ասել այսպես. «Հիսուս, լույս՝ նախ քան ամեն ինչ հավիտյանս, որ քո մեջ եղած լույսդ շնորհեցիր բոլոր մարդկանց և քո աշակերտներին հայտնապես ասացիր՝ «Ով ինձ խոստովանի մարդկանց առջև, և ես կխոստովանեմ նրան երկնքում իմ Հոր առջև» (Մատթ. Ժ. 32): Քեզ եմ դիմում, կատարիր քո խոստումը, մխիթարիչդ ու առաջնորդողդ, ուղարկիր նրանց, որ փորձության մեջ են: Լուսավորիր ինձ քո ամենիմաստ գիտության լույսով, Տեր, ինձ հետ արի առաջիկա հանդիսական մարտի մրցարան, ինչպես երից մանկանց ժամանակ Բաբելոնում, նույնպես և իմ նահատակությանը: Քեզ հուսացողներին համարձակություն տուր, որ իմ մաղթանքներով հաղթեն արդարության թշնամի բանսարկուին: Մարմինս տկարանալու դիմաց ինձ զորացրու Սուրբ Հոգով:

Ինձ շնորհիր զորության քաջալերություն, վանելու ընդդիմամարտի մեքենայությունները, փառավորիր քո անունը, Տեր, որպեսզի երկրի բոլոր թագավորներն իմանան՝ որ դու ես մեծ Տեր և Թագավոր ամբողջ տիեզերքի վրա»: Եվ վերառաքելով ամբողջը, գոհանալով տիրոջից՝ սկսեց ուտել: Եվ սրբի կերակուրը գարեհաց էր ու աղ, և ըմպելիքը՝ լոկ ջուր, որովհետև հրաժարվել էր հրի ծառայությունից մանկությունից մինչև իր սուրբ կատարման ժամանակը, նույն կարգով ապրեց ու կուսությամբ նահատակվեց:

Իսկ այն այրերը, որ թագավորն էր ուղարկել, երբ մոտեցան սրբի տաղավարին՝ գտան երանելի Անթիմոսին, որ դեռևս ճաշակում էր պարզ կերակուրը: Եվ հարցնում են նրան ասելով. «Պատմի՛ր մեզ, ընկեր, թե գիտե՞ս այս վայրում բնակվող ոմն Անթիմոսի»: Ասում է նա. «Գոհություն իմ Տեր Աստծուն, եղբայրներ եկեք հանգստացեք մի քիչ իմ տաղավարում, և շուտով կգա ձեր փնտրածը»:

Այնժամ այն մարդիկ ուրախացան և բերկրանքով լցվեցին, մտան տաղավար և հանգստացան: Նրանց կերակուր տվեց, և կերան նրա հացից: Մի ժամանակ անց հարցնում են սրբին. «Դեռ ուշանո՞ւմ է այրը այստեղ գալուց»: Սուրբը ինքն էր խոսում նրանց հետ, իսկ նրանք չգիտեին: Պատասխանեց սուրբը և ասաց նրանց. «Ի՞նչպես և ինչո՞ւ եք նեղություն կրել գալու այստեղ այն Անթիմոսի համար»: Նրանք պատասխանեցին և ասացին սրբին. «Մեզ առաքեց ինքնակալ Մաքսիմիանոս թագավորը, որ տանենք նրան դատական ատյան, բեմի առաջ»: Այնժամ սուրբը վկա Անթիմոսը իրեն կնքեց Քրիստոսի նշանով. խոստովանեց և ասաց նրանց. «Ես եմ Քրիստոսի ծառա Անթիմոսը, որին փնտրում եք»: Բայց նրանք չէին ուզում հավատալ նրան: Իսկ նա նորից ու նորից ասում էր դառնալով նրանց. «Ես եմ և այժմ կգամ ձեր ետևից, ուրև կամենաք, հանուն Տիրոջ զորության, և մի՛ երկմտեք»:

Այն մարդիկ լսելով սրբից այս ամենը՝ թախծելով տրամեցին և ասես նետով խոցված լինեին, և ասացին նրան. «Այր

դու, համարենք, որ չենք տեսել քեզ և կգնանք, և դու կա-
զատվես ինքնակալի չարաչար սպառնալիքներից, և քեզ չա-
բախոսողները կկորչեն, և դու բարեպաշտորեն միշտ մեզ ան-
մոռաց հիշող կմնաս»: Եվ երանելին հիշելու առթիվ փառա-
վորեց իր Տեր Աստծուն, քանի որ հոգով իմացավ նրանց
ապագա փրկությունը: Եվ սուրբ առաքյալի նմանությամբ
ասաց նրանց. «Եղբայրնե՛ր իմ, մի՛ շրջեք ստությամբ, քանի
որ գրված է. «Մի՛ ստեք միմյանց, այլ ձեր այոն այո լինի և
ոչը՝ ոչ» (հմմտ. Մատթ. Ե. 37, Բ. Կորնթ. Ա. 17): Եվ սրանից
առավելը չարից է. եթե հավատով չեք խնդրում ինձնից, որ
հիշեմ ձեզ՝ կարգով հանդերձ: Սուրբ Հոգին Միածնի շնորհ-
ները ձեզ պարգևել է ուզում, որպեսզի խավարային իշխա-
նությունից ազատվելով և ճողոպրելով չարագուխ վիշապի
ժանիքներից՝ մեզ հետ լինեք բանավոր ոչխարներ ճշմարիտ
Հովվի, ժառանգորդ լինելով ձեր անապական Թագավորի զին-
վորության, երկնային հոգեղեն հրեշտակների բնակակից»:

Եվ երբ նրանք լսեցին այն երանելիի այսպիսի խոսքերը,
արտասուքը դադարեցնելով սրբի ոտքերն էին ընկնում, աղա-
չելով նրան, որ խուսափի և թաքնվի մի ծածուկ տեղ և չգնա
իրենց հետ: Այնժամ պատասխանեց Աստծու սուրբ Անթիմո-
սը և ասաց. «Որդյակնե՛ր իմ, ձեր մեջ տրտմություն չլինի, որ
ես գնալու եմ Տիրոջ մոտ, այլ ես ևս գամ ձեզ հետ, որովհետև
չեմ վախենում մահից՝ համբերելով հանուն իմ Քրիստոսի,
որն ինձ համար չարչարանք ու մահ տարավ, իր սուրբ ար-
յունով գնելով մեզ առաջին նախաստեղծողների անեծքից:
Զէ՞ որ այս ապականացու կենդանությունը ժամանակավոր
է, և այն, որ կա և մնում է՝ անվախճան և հավիտենական,
որ պարգևում է Հիսուս Իրեն հավատացողներին: Որի հա-
մար Նրան ունենալով լույսի փրկության պաշտպան, հոժար
կամքով ձեզ հետ գալիս եմ Թագավորի մոտ: Բայց Աստված
տա Իր շնորհները և խաղաղություն ձեր սրտերին ընդունե-
լու Միածնի գիտության լույսը: Եվ ինքը՝ մեր Տեր Հիսուս
Քրիստոս, որ հանճարավորեց ձեզ հավիտենական կյանքի
փրկության խորհրդին, հանճարեղ և իմաստուն դարձնի հո-

գով ու մարմնով, ընդունարան և բնակարան լինելու Սուրբ
Հոգուն՝ հավատի, հույսի և հարության հավիտենական կյան-
քում»: Եվ խոնարհվելով ծունր դրեց, դիմելով Տեր Աստծուն,
որ տա իրեն Հոգու օժանդակություն՝ ճակատամարտում թի-
կունքին հասնելու, ուր պատրաստվել էր մտնել: Եվ աղոթքը
վերջացնելով՝ նրանց հետ ելավ, ճանապարհ ընկավ գնալու
Թագավորի մոտ: Եվ երբ նրանց հետ եկավ՝ սուրբ Անթիմո-
սը խրատում էր նրանց և ասում. «Լսեցեք ինձ, իմ մանուկ-
ներ, և հավատացեք իմ Աստծուն և իմ Տիրոջը, և իմացեք, որ
Նա է հավիտենից Թագավորը, որի ձեռքով ստեղծված ենք և
շարժվում ենք և կանք ու կերակրվում ենք, որից և ստացել
ենք շնորհների գիտությունը Նրա մեծ Որդի մեր Տեր Հիսուս
Քրիստոսի, որ իջավ երկնքից, Հոր ծոցից, մեզ շնորհեց ապաշ-
խարություն՝ մեղքերի թողության համար, տվեց մեզ փրկա-
կան մկրտություն վկայության և կնիք հավատի իր նկատ-
մամբ, որ նրան ժառանգակից լինենք: Արդ, իմ եղբայրներ,
լսեցեք ինձ և հավատացեք Նրան, որ այնպես անխարդախ և
անբիծ լինեք հարության օրը, երբ բոլորս պիտի հառնենք և
գանք հանդիպելու Աստծու Միածին Որդուն, որ պահանջե-
լու է ամեն մեկից՝ ինչ է գործել, թե՛ բարի, թե՛ չար»:

Ու երբ նրանք լսեցին սրբից հանդերձյալ դատաստանի
մասին, մեծ երկյուղով ու սարսափով լցվեցին և ասես տառա-
պանքի խավար գուբից ելած կամ որպես մի գոռոզ բանսար-
կուից փրկված ու ազատված, այնպես էին փարվում սուրբ
Անթիմոսին, արտասվալից պաղատանքով ընկնում նրա ոտ-
քերը, ասելով. «Հիմա քո աստվածախոս վարդապետության
միջոցով ճանաչեցինք երկնքի ու երկրի արարողին և հավա-
տացինք Նրան, որ դու մեզ քարոզեցիր: Մինչև օրս մոլորած
էինք անգիտության խավարի մեջ: Այժմ հավատացինք քո
վարդապետությանը. մեզ համար աղաչիր Աստծուն, որ մենք
ևս ճանաչենք ճշմարտության ճանապարհը, որ ցույց տվիր
մեզ: Տեղեկանալով այժմ իմացանք, որ ոչ թե քեզ համար ենք
ուղարկված, որ տանենք բռնավորի առջև, այլ որ դու մեզ
կանգնեցնես երկնավոր և անմահ Թագավորի առջև: Որի հա-

մար աղաչում ենք քեզ, ընդունիր մեզ՝ տգետներիս, և տուր քո վարդապետությամբ ճշմարտության ճանաչողություն, քանի որ ճշմարտապես քո մեջ տեսնում ենք իջած Սուրբ Հոգու շնորհները: Բարեխոսիր Տիրոջ մոտ, որ մեզ արժանի անի լինելու իր աստվածության բնակության տաճար և ժառանգավորներ վերին Սիոնի, և հաղորդակից լինելու այս բանում Նրա խաչի չարչարանքին ու հարությանը»: Եվ սուրբ Անթիմոսը իր աչքը բարձրացրեց երկինք, գոհանալով Տիրոջից՝ սկսեց ասել այսպես. «Տեր Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, որ Քո մարգարեների միջոցով մեզ խոստացար Քո Միածնի գալուստը, որին և Քո կամքով առաքեցիր բանի փրկության համար, որ եկավ և մարմին առավ անարատ կույս Մարիամ Աստվածածնից, և իր ձեռքով գոյացան բոլոր տարրեղեն արարածները: Եվ Քո պատվիրաններից մեր չեղելով չտարամերժեցիր Քո ծառաներիս, այլ նրա միջոցով առաջնորդեցիր Քո աստվածադիր պատվիրանների իմացությանը: Նա երբեմնի խավարյալներին վերստին կանչեց, մոլորյալներին դարձրեց, գերյալներին փրկեց, խորտակվածներին առողջացրեց: Սքանչելիքի այս փրկական նշանները ցույց տվեց մարդանալիս Քո սիրելի Միածին Որդին: Գոհանում եմ Քեզնից՝ երկնային Թագավոր, որ այժմ ևս ճշմարտության գիտության դարձրիր Քո անարատ ձեռքով այս ստեղծվածներին, որ մոլորված ու տարագրված էին, փրկելով հեթանոսների մոլար պաշտամունքի ունայնությունից և արժանի դարձրիր երկրպագություն մատուցելու քեզ՝ երկնքի ու երկրի Արարչիդ: Որի համար և այժմ, Տեր, սրանց ուղարկիր Սուրբ Հոգուդ շնորհները, որպեսզի սուրբ Մկրտության լվացմամբ արժանի լինեն Հոգու պարգևներին, լինեն տաճար, օթևան սուրբ Երրորդությանդ: Հաստատուն և անխարդախ և անբիծ պահիր սրանց հավատքի մեջ, որին կոչեցիր, որ աչալրջությամբ արժանի լինեն հանդիպելու Քո Միածնին՝ երբ Քո փառքով գա դատելու կենդանիներին ու մեռածներին»:

Երբ աղոթքն ավարտեց և ամբողջը վերառաքեց, ասաց նրանց. «Ուզո՞ւմ եք ընդունել աստվածային պարգևների շնորհը՝ հավատով խնդրեցեք՝ ինչի մասին ասում եք»: Եվ

նրանք դարձյալ ընկնում էին նրա առջև և աղաչում տալ իրենց սուրբ մկրտության շնորհների պարգևը: Եվ երբ սուրբ Անթիմոսի հետ եկան գետի մոտ, այնժամ ափին կանգնած դիմում էր Տիրոջը՝ տալու նրանց Սուրբ Հոգու լույսը՝ մեղքերի լվացման և երկնային Հոր շնորհներին որդեգրվելու համար:

Եվ ձեռքը դնելով նրանց վրա խաչակնքեց նրանց հանուն Հոր և Որդվո, և Հոգվույն սրբո, որ տրված է հավատացյալներին՝ ի սրբություն և ի փրկություն անձանց: Եվ կատարելով մկրտության ամբողջ տնօրինական խորհուրդը՝ օրհնեց նրանց և նրանց հետ փառաբանություն վերառաքեց Հայր Աստծուն և Նրա Միածին Որդի Հիսուս Քրիստոսին և կենդանարար ամենազոր Սուրբ Հոգուն, քաջալերեց նրանց և ասաց. «Գնացե՛ք, իմ որդիներ ու եղբայրներ, ում որ ի Քրիստոս Հիսուս ավետարանով ծնեցի, որպեսզի և դուք արժանի լինեք վկայի հավատարմության, և ես հպարտ կլինեմ Քրիստոս Հիսուսի հավատացյալներով, համարձակ ասելով՝ «Ահա ես և իմ մանուկները, որ Աստված տվեց ինձ» (Եսայի, Ը. 18): Եվ հավատացյալ եղբայրները նրա հետ ճանապարհը գնացին բերկրալից ուրախությամբ պատրաստվելով քաջարիությամբ, որ և իրենք երանելիի նման մտնեն նահատակության հանդես և Քրիստոսի համար բոլոր չարաչար նեղությունները հանձն առնեն, և հասան այդ բարվոք ու գովելի ցանկությանը, որ Աստծու համար էր և երկնքի աստվածային բարիքների: Եվ երբ նրանք քաղաքի դռնով մտնում էին՝ չարախոսները լսեցին սուրբ Անթիմոսի գալուստը և լուսաբացին, մինչդեռ ամբարիշտ Մաքսիմիանոսը ատյանում բեմին նստել էր, գնացին նրան հայտնեցին, թե եկել է այրն այն, որին փնտրում էր քո ինքնակալությունը:

Այնժամ թագավորը հրամայեց սրբին բերել առաջ, իր ատենի բեմին: Իսկ նա իր մկրտածներին հաստատում էր ճշմարտության հավատին, նրանց հանձնելով Տիրոջը և Բանի շնորհներին, որին հավատացին: Եվ Քրիստոսի կնիքն անելով իր դեմքին՝ Աստծու սուրբը, համարձակորեն եկավ անօրեն Մաքսիմիանոսի բեմի մոտ, ձեռքերը հավաքած և դեմքը խոնարհ և հույս ստացած երկնքից, սկսում է խոստովանել օրհ-

նելով Աստծուն և սաղմոս է ասում այսպես. «Ցնծություն իմ, փրկիր ինձ նրանցից, որ միասին պաշարեցին ինձ» (Սաղմ. ԼԱ. 7): Եվ բազմակույտ ամբոխը շրջապատեց հանդեսը, ուր հարցաքննվում էր սուրբ Անթիմոսը: Մարդիկ միմյանց ոտնատակ էին տալիս, և ոմանք մեռան, այնժամ Մաքսիմիանոսը հրամայեց բերել բոլոր տանջողական գործիքները: Նախ բերին չիկացրած երկաթով անիվներ, իսկ հետո երկսայրի սուսերներ՝ սայրասուր ծայրերով, նաև կայծակնաբորբոք տապակներ՝ ճարպով և ձեթով լի, շատ երկար ու հաստ մեխեր, արջայիլի ճոպաններ, փշալից մահակներ, արտաշեկ տաքացրած պղնձե ոտնամաններ, հրատեսակ սաղավարտներ և այլ զանազան տանջանքի սարքեր: Երբ սուրբ Անթիմոսը տեսավ այս բոլոր գործիքները, ծաղրով արհամարհելով ասաց. «Արդյոք պակասա՞ծ են քեզնից տանջանքի գործիքները, որ քո եղբայր Անտիոքոսը հնարեց մակաբայեցիների դեմ, որով և ինքը պարտվեց: Իսկ նա, որ նրանց հետ գործեց, որպեսզի հայրենի ավանդը չուրացվի, իմ դեպքում առավել ևս կհաջողվի, և ես նույնպես հաղթելով քո չարությանը՝ իմ քահանայությունը կպահեմ անխարդախ և անբիծ հավատով իմ Աստծու նկատմամբ»:

Այնժամ ամբարիշտ Մաքսիմիանոսը ցասմամբ ու բարկությամբ լցված ասում է սրբին. «Դո՞ւ ես այն չարամոլության կցորդ և գալիլիացոց օրենքի վարդապետ Անթիմոսը, անմահ աստվածների հայհոյիչ, որ խաբեպատիր առասպելաբանությամբ մարդկանց սովորեցնում ես հեռանալ և ապստամբել աստվածների բարերարությունից: Արդ, քանի ուշ չէ, լսիր ինձ. ես մարդ եմ շատ դժնդակ և ցասումով լցված, և ահա տե՛ս տանջանքի գործիքները, որ պատրաստել եմ քեզ համար: Վախեցիր ինձնից և մոտեցիր, զոհ մատուցիր բարեբար և անմահ աստվածներին»: Եվ սուրբ Անթիմոսը բացեց բերանը, խաչակնքեց և ասաց. «Մաքսիմիանոս թագավոր, ես չէի ուզում քեզ պատասխանել, բայց քանի որ աստվածային առաքյալը սովորեցնում է մեզ պատրաստ լինել ամեն մի հարցնողի, ուստի ես կտամ քեզ պատասխան, ունենալով

Քրիստոսի խոստովանությունը, որ ասում է. «Մի՛ հոգացեք՝ ինչ խոսեք, որովհետև ձեզ կտրվի բերան և իմաստություն, որին պատասխանել չեն կարող ձեր բոլոր հակառակորդները, քանի որ ոչ թե դուք եք խոսում, այլ ձեր Հոր Հոգին է խոսում ձեր մեջ» (Մատթ. Ժ. 19-20): Ուստի լսիր ինձ, ո՛վ թագավոր, տանջանքները, որոնցով սպառնում ես, չեն վախեցնում ինձ, որովհետև Աստված ունեմ երկնքում, որ մարգարեի միջոցով ասաց. «Աստվածները, որ երկինք ու երկիր չեն ստեղծել՝ կկորչեն իմ առջևից» (Երեմիա, Ժ. 11): Դրանց խուլ և կույր եմ կոչում և ավեր պղծություն անվանում, և երբեք դրանց Աստված չեմ համարի»:

Մաքսիմիանոսն ասում է. «Գիտեմ, որ հիմա չես ուզում հավանել և զոհ մատուցել աստվածներին, բայց երբ կտեսնես մարմինդ մաշված և մարմնիդ բոլոր անդամները մասմաս կոտորված, այնժամ կհամակերպվես իմ հրամաններին»: Սուրբն ասում է. «Մի՛ խաբիր, ո՛վ թագավոր, թե զոհ կմատուցեմ, քո սնոտի ու խաբեբա աստվածներին, որ քանդակված ու կռած են դիվապատիր ու ամբարիշտ մարդկանց ձեռքով»: Երբ սա լսեց անօրեն Մաքսիմիլիանոսը՝ հրամայեց քարով ջարդել նրա կզակը և ստվար վեմեր դնել նրա լանջին:

Այն ժամանակ սուրբ Անթիմոսը բացեց բերանը, սկսեց անարգել անօրեն Մաքսիմիանոսին և ասաց. «Քեզ կխփի Աստված, ո՛վ չարագույն գազան, սատանայի արբանյակ՝ քո եղբայր Հերովդեսի նման, որի գործը ձեռնարկեցիր: Թե՞ չգիտես, քարջարդ լինելով ինձ համարձակություն տվիր նմանվելու Ստեփանոս Նախավկային, որ քարերի կույտերը որպես ծաղիկ էր հավաքում: Եվ ես այս նետված քարերով ճոխացած կլցվեմ անուշահոտությամբ, հեռու վանելով դևերի ժահահոտությունը»: Մաքսիմիանոսը դարձյալ ասաց նրան. «Այսուհետև հավատա՛ ինձ և զոհ մատուցիր աստվածներին, եթե ոչ՝ առավել ցասմամբ կլցնես ինձ քո դեմ, և զայրանալով՝ ավելի սաստիկ կվարվեմ, քան առաջ»: Պատասխանեց սուրբ Անթիմոս եպիսկոպոսը և ասաց բռնավորին. «Իսկույն արա ինչ որ ուզում ես և մի դանդաղիր, այլ եղիր հպատակ քո հո-

ը՝ սատանային, քանի որ նա ևս ի սկզբանե մարդասպան էր, աներևույթ խավարային պատրանքով: Իսկ քեզանից ստույգ մահը հեռու չէ, այլ մոտ ես վախճանիդ»:

Եվ Մաքսիմիլիանոս թագավորը բարկացավ, հրամայեց նրա ոտքերի հողերին հրաշեկ երկաթներ հագցնել: Իսկ երանելի Անթիմոսը ձեռքերն ու աչքերը երկինք բարձրացրած՝ սկսեց աղոթել այսպես. «Աստծու Միածին Որդի Հիսուս Քրիստոս, լո՛ւյսդ նախահավիտյան, փառք և ապավեն նրանց, որ հույս են դրել Քեզ վրա, խաղաղ նավահանգիստ նավաբեկյալների, որ ծփում են մեղքի ծովում՝ այս հավերժի պատրանքով, որ Քո սուրբ առաքյալների համբերությամբ պարգևեցիր Սուրբ Հոգու շնորհները, դիմում են քեզ, որ ամեն ինչում հասել ես օգնության Քո անհասանելի և անպարտելի զորությամբ, իսկ այժմ նաև այստեղ ես՝ անմիջական մերձավոր, և ամեն ինչ լցնում ես ամենաբավ Քո ողորմությամբ: Ինձ համբերություն տուր, որ հաղթեմ բանսարկու բռնավորին, քանի որ Դու ես միակ Տեր Աստվածը, որ Քո աստվածությունը ճանաչել տվիր ամբողջ տիեզերքին և անգոյությունից գոյություն բերիր ստեղծեցիր, և Քո անունից հաղթություն ես տալիս երկյուղածներին՝ ըստ քո խոստման՝ ասելով. «Ահա ձեզ տվի իշխանություն ճզմելու օձերին ու կարիճներին և թշնամու բոլոր ուժերը» (Ղուկ. Ժ. 19): Եվ այս ասելով սուրբը վկան ամբողջապես անտեսում էր բռնավոր Մաքսիմիանոսի տված տանջանքները:

Այնժամ ամբարիշտը նորից հրամայում է խեցանոթ կոտրել և փռել նրա կողերի տակ և վերևից մահակներով վայրենի հարվածներ [տեղալ]: Այսպիսի չարաչար տանջանքներ կրելով նա սկսեց աղոթել. «Քրիստոս, գոհանում եմ Քեզնից, որ բերիր ինձ հագցրիր պատերազմելու զորությունը, որ դրա դեմ կկապես ինձ վրա բոլոր հարձակվողների ոտքերը և նրանց կդնես ոտքերիս տակ, և իմ թշնամուն կհանձնես ինձ, և ատելիներին արմատախիլ խորասույզ կկորցնես»: Թագավորը պատասխանելով ասաց նրան. «Ո՛վ պիղծ դու և երիցս թշվառական, տանջանքները ճաշակեցիր և չխրատվեցի՞ր»:

Սուրբն ասում է. «Ամենապիղծդ և մարդատյաց, թշնամի երկնքի օրենքին, չե՞ս դադարում Աստծու ուղիղ ճանապարհը շեղելուց, արդ հենց դու քանդվելով կպարտվես ինձնից իմ մարտակից Տեր Հիսուս Քրիստոսով: Իսկ ես օր-օրի կզորանամ նրա շնորհիվ, որ ինձ հետ է, որի համար չեմ զգում տանջանք»: Եվ ամբարիշտ Մաքսիմիանոսը բարկությամբ լցված ու կատաղած՝ հրամայեց շիկացնել պղնձե կոշիկները և հագցնել նրա ոտքերին: Եվ Աստծու նահատակխոս ծառա Անթիմոսը աչքերը բարձրացրեց դեպի երկինք, տեսավ Աստծու փառքը, որ իրեն հովանի էր լինում, և վերևից ձայնը լսելի էր բազմությանը, և ասաց. «Զորացիր և քաջ եղիր, ծառադ իմ Անթիմոս, քանի որ ես քեզ հետ եմ, մինչև որ հաղթես բանսարկու բռնավորին»: Եվ երիցս երանելին զորանում էր ձայնից, որ դիմեց նրան վերևից, և ուրախությամբ ասաց. «Դու իմ համբերությունն ես, Տեր, Տեր, իմ հույս մանկությունից ի վեր, և Քեզնով է իմ օրհնությունը ամեն ժամ»: Իսկ երբ բռնավորը տեսավ, որ [Անթիմոսը] Տիրոջից խրախուսված ու համարձակված է՝ հիացավ, ապշեց իր մտքում և ասում էր. «Այս այրը չարագործ էր, որ այնքան և այնպիսի տարատեսակ չարչարանքներից բան չզգաց, այլ դեռ զվարթացել է»:

Եվ Քրիստոսի երանելի նահատակն ասում է նրան. «Անհանճար տմարդի և եղկելի՝ քան բոլոր կենդանիները, աչքիս դեմ տեսնում եմ իմ զորացուցիչ Աստծուն, որ կարողն է ամեն բանում և մեկ օրում կկորցնի քեզ ու քո աստվածներին»: Եվ Մաքսիմիանոսը մեծ ցասումով լցված ու մոլորված՝ պատռեց իր թագավորական պատմուճանը և ատամները կրճտելով հրամայեց՝ սրբին մոտեցնել սյունին: Եվ Անթիմոսն ասում է. «Ո՛վ թագավոր, տրտմում ու ատամներդ ես կրճտացնում, որովհետև կլինի մարգարեի խոսքը, որ ասում էր. «Իր ատամները կկրճտացնի և կհալչի, և մեղավորների ցանկությունը կկորչի» (Սաղմ. ՃԺԱ. 10): Իսկ թագավորական պատմուճանդ պատռեցիր, որովհետև Նրա սուրբը նահատակիս ճզմելով դառն տանջանքների ենթարկեցիր»:

Այնժամ սրբին հանեցին անիվի վրա, և բռնավորը զինվորներին հրամայեց ձեռքերին ջահեր բռնել և անիվը պտտե-

լիս մոտեցնել նրա մարմնին, որպեսզի դաժան տանջանքներից նեղվելով և ջահի կրակի տաքությունից շուտով ավանդե հոգին: Եվ զինվորները փութով կատարում են ամբարիշտի հրամանը: Իսկ սուրբ վկան Քրիստոսի Սուրբ Հոգով զովացած ասում է. «Գոհանում եմ Քեզնից, Աստված ճշմարտության և Հայր ողորմության, որ Քո հրեշտակին ուղարկեցիր երից մանկանց մոտ՝ Բաբելոն, կրակի միջից փրկեցիր նրանց, իսկ անօրեն քաղդեացիներին հրի մատնեցիր իրենց անհավատության համար: Այդպես ցույց տուր և այժմ Քո սքանչելիքների նշանը՝ այս անօրեն կռապաշտների մեջ և բոցի տապությունը դարձրու նրա պաշտոնյաների վրա, որպեսզի իմանան և հավատան, որ Դու ես իմ պաշտպանը, Տեր, որ փրկում ես Քեզ հուսացողներին»: Այս ասելով՝ ջահերի բոցերը դարձան անօրենների պաշտոնյաների վրա և չարաչար կիզմամբ այրեցին: Եվ հանկարծակի կանգնեց անիվը, և զինվորները գետին տապալվեցին: Թագավորը տեսավ անիվի դադարելը, բարձրացրեց իր գեղարդը, [իր մարդկանց] վրա, որ սպանի նրանց, ասելով այսպես. «Ո՛վ չարեր և չարագործներ իմ պաշտոնյաներից, զինվորական կարգի անպիտաններ, ինչո՞ւ իմ պատվիրանները անտեսեցիք և արհամարհեցիք իմ ինքնակալ զորությունը»: Եվ նրանք ելան դցեցին ջահերն իրենց ձեռքից և ասացին թագավորին. «Ո՛վ արքա քաջ և բարերար, մենք տեսանք՝ երեք այր լուսավոր հանդերձանքով, որ ասացին մեզ. «Թողեք Աստծու այդ ծառային: Ի՞նչ կա ձեր և Աստծու այդ ծառայի՝ Անթիմոսի [միջև], որ թերևս հաղթի բռնավորին, քանի որ նա հրաժարվում է ժամանակավոր կյանքից ու փափագում է հավիտենական կյանք: Երբ անօրեն պաշտոնյաներդ պատրաստում էիք Աստծու ծառայի տանջանարանը՝ արդարին պես-պես տանջանքներով վանելու, դրանով առաքինության պսակ և բրաբիոն էիք պատրաստում: Որի համար, ո՛վ թագավոր, չենք համարձակվում կատարել քո ինքնակալության հրամանը, որովհետև ջահերի հուրը տոչորում է մեր երեսները և մեր մարմինների լարերը կտրատում, մեր գլխում ուղեղը խոցոտված է, և մեր հոգիները ելնում են մարմիններից, և չենք դիմանում աներևակայելի տանջանքներին: Իսկ այս մարդը դիմանում է. դու տեսնում ես նրան անիվի վրա ձգված, իսկ մենք տեսնում ենք հաղթություն հագած երեք լուսազգեստ այրերի շնորհիվ, և տանջանքի խոշտանգումներից չի տուժում: Բայց և քեզ համար հրաման ստացավ, որ պատուհասվես»:

Եվ արքան իմացավ, որ ճշմարիտ է զինվորների ասածը, հրամայեց սրբին իջեցնել տանջարան անվից: Այնժամ սուրբ եպիսկոպոս Անթիմոսը աչքերը դեպի երկինք բարձրացրեց, տեսավ Աստծու փառքը և սուրբ ձեռքերը պարզելով աղոթք մատուցեց մեր բոլորի Տիրոջը. «Երկնքի ու երկրի Տեր, Քո բազմագթությամբ առաքեցիր Միածին Որդուդ՝ լուսատու և փրկիչ, և այդպես Նրա միջոցով ճանաչեցինք Քո անճառ աստվածությունը: Որի համար կռոց մոլորության ունայն պաշտամունքից զատվեցինք, ընտանի դարձանք Քո Միածնի աստվածությանը, որ գթության և բարերար կամքի համար այսօր Իր սուրբ հրեշտակին ուղարկեց ինձ մոտ, թեթևացնելու չարչարանքս, որպեսզի հաղթելով անօրեն բանսարկու բռնավորին՝ հասնեմ սուրբ կենցաղավարության, լինելով երկնային թագավոր Քրիստոսի արժանավոր զինվորը»:

Եվ Մաքսիմիանոսը մեծ ցասումով կատաղեց, ասաց Քրիստոսի սուրբ վկային. «Մինչև երբ չես դադարելու այդ առասպելաբանությունը շաղակրատելուց, կարծում ես շատախոսությամբ դո՞ւրս պրծնել իմ ձեռքից: Արդ, համաձայնիր և զոհ մատուցիր աստվածներին, եթե ոչ՝ սրի կմատնեմ քեզ»: Աստծու սուրբը լսածից ուրախացավ և ասաց. «Քեզ թվում է սրի սպառնալիքներով կզարհուրեցնես ինձ, իսկ ես առավել շուտ եմ ուզում ելնել մարմնի ապականացու այս կյանքից և մտնել Աստծու մոտ, որին կարոտել եմ և [ուզում եմ] արդարների արքայության մեջ ժառանգության մաս ստանալ: Դրա համար համբերում եմ: Որովհետև Նա զորացնում է ինձ, որ երկու բյուրի հետ գնամ իր մոտ և պարծենամ համարձակորեն ասելով. «Ահավասիկ ես և իմ մանուկները, որ տվեց ինձ Աստված» (Եսայի, Ը. 18): Նրանք ևս իմ հոտից էին, որ

կարծում էիր, թե սպանել ես: Երկնային Աստված քաջ հովիվը իմ նվաստությանը հավատաց, որ նաև ես այդպես ասեմ համարձակ. «Ում որ ինձ տվիր՝ նրանցից ոչ մեկին չկորցրի» (Հովհ., ԺԷ. 9):

Իսկ անօրեն Մաքսիմիանոսը իմացավ, թե սուրբ Անթիմոսը ուրախացել է իր կրելիք սրի պատուհասի համար, և նրան ասում է բռնակալը. «Գիտեմ, որ ուրախացար իմ ձեռքից շուտով ազատվելուդ համար, բայց քեզ արագ մահվան վճիռ չեմ տա, այլ ավելի չար ու անողորմ տանջանքով և հարվածներով կմաշեմ մարմինդ, որին հենց արժանի ես, և այն ժամանակ սրի միջոցով քեզ կմատնեմ պատուհասի»: Պատասխանեց սուրբը եպիսկոպոսը և ասաց նրան. «Իբր մահից վախեցնելով խոստանում ես այդպիսի բան. անմիջապես արա՝ ինչ ուզում ես, անօրեն: Քանզի ինչքան ես համբերություն եմ ստանում տանջանքներից, այնքան հաճախակի Աստված փառավորվում է և ինձ կտա համբերություն՝ իր նկատմամբ ունեցած հույսիս համար: Իսկ դու չես փրկվելու Աստծու դատաստանից, այրվելով գեհենում»: Եվ նրան ասաց Մաքսիմիանոսը. «Արդյոք չե՞մ կարող հիմա պատշաճ ձևով վարվել քեզ հետ՝ քո վրա ունենալով իշխանություն»: Եվ սուրբը Անթիմոսն ասաց. «Ինձ վրա ոչ մի իշխանություն չուներիր, այլ Աստված թողել էր, որ քեզ ցույց տա, թե ինչպիսի նահատակներ ունի, որ կհաղթեն քեզ և բանսարկուին, որ հագել ես դու, որովհետև դու նրա կամքի ծառայակիցն ու արբանյակն ես՝ Տիրոջից խորթացածդ և թշնամի արդարության: Քո անօրեն գործերով գեհենի անշեջ հուրն ես գանձել դու, որ կա, պահվում է բոլոր ամբարիշտներին ու մեղավորներին՝ քեզ հետ միասին, անանց և անվախճան տանջանք»:

Այնժամ անօրենը հրամայեց դարձյալ տանջել նրան, ապա նետել բանտ և ոտքերը հաստ երկաթներով կաշկանդել և անուր դնել նրա պարանոցին և պահել զգուշությամբ: Եվ Քրիստոսի զինվորը բանտ գնալով մեծ ուրախությամբ ու ցնծությամբ՝ բանտի արգելարանում աղոթում էր ու ասում. «Հիսուս Քրիստոս, նախահավիտյան ծնունդ Հոր, որ ամեն ինչ ոչնչությունից գոյության բերեց, և հայրական կամքով իջար երկնքից, մարմին առար սուրբ կույս Մարիամից և մարմին առնելու միջոցով աստվածային ներգործությամբ ցույց տվիր Քո սքանչելիքների հնարներն ու նշանները, և մարգարեների գրքերում գրվածները կատարեցիր, կամովին խաչվեցիր և խաչակցեցիր իմ մեղքերը, հարություն առար եռօրյա աստվածային իշխանությամբ և Քո բազում բարեգթությամբ մեզ հարության հույս պարգևեցիր, չանտեսելով մեղքով մահացած մարդկանց որդիներին: Եվ այժմ, բարերար Տեր, վերջին ժամիս, իմ բանտ մտնելուց առաջ տուր վարդապետության պատգամ՝ լուսավորելու այստեղ կալանավոր պահվող Քո ծառաներին, որ Քեզնով խավարը չխավարի, և գիշերը ցերեկի պես լուսավոր լինի՝ հնազանդ Քո հրամանին»:

Եվ բռնավորի անօրեն սպասավորները բռնել էին երանելիին, կապել երկաթե կապանքներով: Այնժամ տեսան նրան, կապանքներից ազատ, ինչ-որ լուսազգեստներով առաջնորդվելիս: Նրանց դեմքը տեսնելով՝ զինվորները գետին էին ընկնում և չէին կարող նայել նրանց: Իսկ Աստծու սուրբ Անթիմոսը բարձրացնում էր նրանց, ասելով. «Ելեք, կատարեցեք բռնավորի հրամանը»: Եվ նրանք ելան նրա ետևից գնացին հեռվից դիտելով նրան, և զարհուրում էին բռնավորի ահից: Եվ սուրբը Անթիմոսը բանտում գոհություն էր մատուցում, և աղոթելիս ասում էր այսպես. «Տեր Աստված արարող և հաստատող ամեն լինելության, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, գոհանում եմ քեզնից, որ արժանացրիր անարժանիս մահու վճիռ ընդունել բռնավորի ձեռքից երանյալ կարապետ Հովհաննես Մկրտչի նման, որ ես նրա հետ Քո շնորհների բերմամբ համարձակությամբ և աչալրջությամբ զվարթերես մնամ սրբերի և Քո անվան սիրելիների հետ՝ Քո Միածնի, մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան օրը»: Եվ բոլորին, որ իր հետ արգելված էին բանտում, քարոզում էր սուրբը և ուսուցանում բարեպաշտության կարգը և հաստատում քրիստոնեական հավատի մեջ, ասելով, «Բազում նեղություններով պարտավոր ենք մտնել Աստծու արքայություն»: Եվ նրանք նրա ոտքերն էին ընկնում, արտասվագոչ պաղատանքներով

աղաչում, ասելով. «Բարձրյալ Աստծու ծառա, դու դիպվածով հանդիպեցիր՝ ում ցանկանում էիր վաղուց, և ավարտեցիր բարվոք ընթացքդ, իսկ մենք դեռևս ճգնական աշխատանք ունենք, ուստի աղաչիր մեզ համար Տիրոջը, որ մեզ տա Սուրբ Հոգու պարգևներ, որ և մենք արժանանանք բարի ու քաջ հովվիդ հետևելու, հանդիպելու մեր փրկիչ Հիսուս Քրիստոսին»:

Եվ նա բանտում սաղմոսելով ու գոհանալով Քրիստոս Աստծու անպատում պարգևներից, քաջալերում էր Քրիստոսի հավատացյալներին, որ իր հետ արգելված էին բանտում:

Անօրեն Մաքսիմիանոսը լսեց, որ այնտեղ ևս սուրբ Անթիմոսը քրիստոնեական կրոնն ու հավատքն էր ուսուցանում, [մարդ] ուղարկեց և կանչեց նրան: Եվ զինվորները բանտ եկան սրբին դատավորի ատյանը տանելու: Անթիմոսը ծնրադիր, նրանց հետ, որ բանտում կալանավոր էին, աղոթք էր անում իր սրտում: Եվ սուրբը ամեն ինչ ասելով՝ ձեռքը դրեց [նրանց] վրա և նրանց հանձնեց Սուրբ Հոգու շնորհները: Եվ այնպես խաչակնքեց, ցնծությամբ ելավ բանտից և ուրախ եկավ կանգնեց Մաքսիմիանոսի առաջ;

Պիղծ բռնավորն ասում է նրան. «Այժմ նո՞ւյնպես չդադրեցիր քո մոլորությունից և չխրատվեցիր այնքան օրեր բանտում մնալով. հավանիր իմ խոսքը, զոհ մատուցիր աստվածներին, և քեզ կդարձնեմ բարձրագույն քահանայապետ»:

Պատասխանում է նրան սուրբ Անթիմոսը. «Քահանայապետն եմ ես բարձրյալ Աստծու՝ հավիտենից Քահանայապետի և Նրան եմ մատուցվում անարյուն զոհ օրհնության և առանց ճենճերի: Իսկ դևերին, որ մոլորեցնում են քեզ անշունչ քարերի միջոցով՝ զոհ չեմ մատուցի: Քար լինելով՝ քարերին ես երկրպագում, և դրանք դատաստանին չեն գալու, որովհետև անզգա են: Իսկ դու, անօրեն, դատապարտելով գեհեն կերթաս, որ պատրաստել են քո հայր սատանան ու իր հրեշտակները, զի լինելով բանական՝ թողիր քո արարողին և թագավորությունդ տվողին, որը Աստված քեզնից կվերցնի անօրինությանդ պատճառով և մարմինդ կմատնե որդերին,

քանի որ չկամեցար ապրել առաքինությամբ»:

Այս ամենը լսեց անիծյալ Մաքսիմիանոսը սուրբ եպիսկոպոս Անթիմոսից, ասաց նրան. «Երդվում եմ աստվածների փրկությամբ՝ այսօր մահից չես փրկվի, քանի որ պաճուճյալ ու սնոտի խոսքովդ խաբել ես մեզ և ծիծաղել մեր վրա»: Եվ պատրաստվեց նրա վրա դատավճիռ կայացնել: Այնժամ սուրբ Անթիմոսն սկսեց աղոթել ասելով. «Հայրերի Աստված և ողորմության Տեր, որ Քո անճառելի բարերարությամբ հասնում ես բոլորին, որ Քո Սուրբ Հոգու շնորհները պարգևում ես Քեզ հավատացողներին, որով և ինձ պարգևում ես համբերություն, աղաչում եմ Քեզ՝ բոլորի պատճառ և արարիչ, ինձ ևս արժանի արա ընթացքս ավարտելու Քո կամքի համաձայն: Եվ այս հոտը, որ հավատացիր և ընձեռեցիր իմ նվաստությանը, հաստատուն պահիր հավատի մեջ, ուր կանչեցիր և խորտակեցիր չարի բոլոր մեքենայություններն ու պատրանքները և Քո ամենակարող զորությամբ նկուն արա սրանց առջև, որ պատկառելով չհեռացնի քո սուրբ հոտից: Տակավին նորընծա այս ծառաներդ հանձնում եմ Քեզ, որ կարող ես Քո շնորհները պարգևել, ինչպես երկու բյուրին պարգևեցիր, խոստովանելու Քեզ, որ Քո անմոռաց անունը, Տեր, և Քո Միածնինը իրենց մեջ պահեն Քո Սուրբ Հոգով: Տեր Հիսուս Քրիստոս, մեր Աստված, գոհանում ենք Քո մարդասիրությունից, որ եկար փնտրելու մեզ՝ կորածներիս, փրկեցիր մեզ դիվապաշտ մոլորությունից և հաղթություն շնորհեցիր աներևույթ թշնամու դեմ: Եվ այժմ ի՞նչ կկարողանանք հատուցել Քո աստվածությանը, լոկ մեր անձերն ենք ընծայում անուշահոտությանը»:

Եվ նա ավարտեց աղոթքը: Իսկ թագավորը չարից գրգռված ու մեծ ցասումով զայրացած դահճապետի և դահիճների վրա, հրամայեց սրբին տանել կառափնարան և սուսերով կտրել նրա պարանոցը: Եվ գրավոր դատավճիռ է տալիս այսպես. «Գալիլիացոց սնոտի պաշտամունքն ընդունելու և կյանքը թողնելով մահ ցանկանալու համար, մեր ինքնակալությունը հրամայում է կյանքից զրկել»: Իսկ զինվորներն ու դահճապետը ստանալով այս վճիռը՝ շտապում էին սրբին տանել

սպանման վայրը: Եվ երբ երանելին հասավ այդտեղ՝ աղաչում էր դահճապետին ու զինվորներին, որ թողնեն իրեն մի քիչ աղոթել, և թույլատրեցին: Այնժամ ձեռքերը տարածեց սուրբը դեպի երկինք, սկսեց աղոթել այսպես.

«Տեր Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, անկարող եմ գոհանալու Քո առատ մարդասիրությունից, որ իմ անարժանությանը պատվի ու եպիսկոպոսության կոչեցիր և ինձ սրբեցիր՝ Սուրբ Հոգուդ տաճար, անարատ և անբիծ պահելով իմ սրբության կուսությունը և ինձ տվիր այս առաքելական քաղաքը և սրանց շուրջը այստեղ բնակվողներին: Եվ նրանց մեջ ուղիղ համառոտեցի Քո Սուրբ Ավետարանի կենսաբեր խոսքը: Արդ, ովքեր հավատացին Քո սուրբ անվանը՝ պահիր նրանց չարի պատրանքներից և խառնիր վերին բանականների, հրեշտակների երամին՝ ստանալու լույսի պսակը Քո բոլոր սրբերի հետ: Ընդունիր և իմ հոգին անուշահոտ պատարագ ընդունելի Քո աստվածության փառքի առաջ՝ երկնքում գրանցված արդարների հարկը: Տեր Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, Հայր գթության և աստվածային բոլոր մխիթարությունների, անարատ պահիր Քո հավատացյալներին և ամոթահար արա չարին իր բոլոր գործակիցներով, նաև ինձ ընդունիր, Տեր իմ»:

Ավարտեց աղոթքը և ասաց ամենը, և այնժամ ասաց դահիճներին. «Արդ, ինչո՞ւ եք դանդաղում, շտապեցեք կատարել բռնավորի հրամանը»: Եվ դահիճներից մեկը բարձրացրեց սուսերը և կտրեց սրբի պարանոցը, և [նա] հոգին ավանդեց Աստծու ձեռքը, չէ՞ որ արդարների հոգիները Աստծու ձեռքին են:

Սա կատարվեց Բութանիայի Նիկոմիդիա մայրաքաղաքում, Մաքսիմիանոսի հյուպատոսության ժամանակ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ մեզ թագավորելու ամսի՝ սեպտեմբերի երրորդ օրը, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ՝ Հոր և ամենասուրբ Հոգու հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՍՈՒՐԲ ԱՆՏԻՈՔ ԱՆԱՐԺԱԹ ԲԺՇԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոսի մեծ վկա սուրբ Անտիոքոսը բժիշկ էր, բարեպաշտ հավատով ի Քրիստոս, Սեբաստիա քաղաքից, շրջում էր բոլոր գավառներում և ձրի բուժում բոլոր հիվանդներին՝ ոչ միայն դեղով ու արմատներով, այլև մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ և վարձի փոխարեն, որ պիտի ստանար նրանցից, ում բուժում էր, պարգևում էր նրանց հավատի սուրբ ավազանի աստվածային լույսը, որ ի Քրիստոս, լուսավորելով՝ բոլորին դարձի էր բերում սնոտի կուռքերի մոլորությունից:

Եվ ելավ սրբի բարեգործության համբավը ամբողջ երկրով, լսելի եղավ մինչև իսկ թագավորներին: Այնժամ նրան բռնեց անօրեն դատավոր Ադրիանոսը և բազում, տեսակ-տեսակ տանջանքներով չարչարում էր երանելին՝ դալար բրերով ու քերիչներով, սուրսայր եղեգնով: Հրկիզելով՝ այրեցին-խորովեցին սրբի մարմինն առհասարակ: Եվ կաթսայից, որ եռման էր, լցրին նրա վերքերի վրա ու նրան ստիպում էին հրաժարվել Քրիստոսից: Իսկ նա բազում վշտերից չէր կարող բանալ իր բերանը, այլ միայն սրտանց գոհանում և օրհնում էր Աստծուն: Երբ տեսան, որ արհամարհում է տանջանքը, նրան գցեցին վագրերի առաջ, և վայրի գազանները երանելի հրաշալի դեմքից պատկառելով՝ չմոտեցան սրբին, հանդիմանելով դատավորի մոլորությունը, մինչև որ զարհուրած դատավորը օրեր անց նրան ներումն շնորհեց:

Իսկ սուրբը, զորացած Սուրբ Հոգուց, գիշերով մտավ կուռքերի տաճարը և բոլոր բագինները կործանելով խորտակեց: Եվ դա իմացան կուռքերի պաշտոնյա քուրմերը, երանելին բռնեցին, տարան դատավորի ատյանը: Երկրորդ անգամ [դատավորը] հարցուփորձով չտանջեց, քանի որ գիտեր նրա համբերությունը և պնդությունը Քրիստոսի հավատքի

նկատմամբ, հրամայեց գլխատել երանելիին: Եվ դահիճներն առան-տարան նրան սպանման տեղը, և սուրբն աղաղակեց դահիճներին՝ թույլ տալ իրեն, մինչև աղոթի իր Տեր Աստծուն: Եվ սուրբն իր ձեռքերը բարձրացրեց դեպի երկինք, արտասվալի, սկսեց աղոթել այսպես. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, Աբրահամի Աստված, Իսահակի Աստված և Հակոբի, ամեն մխիթարության Աստված, խոնարհեցրու ականջներդ և լսիր աղաչանքը Քո ծառայի: Տե՛ր, տո՛ւր ինձ անվեհեր ավարտել ընթացքս, Տե՛ր, տո՛ւր ինձ վաստակներիս վարձը, որ փոքր-ինչ վաստակեցի իմ Տեր Հիսուս Քրիստոսի այգում, որը գնեց Իր արյունով: Տե՛ր, տո՛ւր ինձ իմ վարձքը, որ հատուցեցիր հետին մշակներին Քո առատ մարդասիրությամբ: Լսի՛ր, Տե՛ր, բոլորի աղոթքի խնդրանքը, որ իմ բարեխոսությամբ խնդրում են Քեզնից. հիվանդներին՝ բժշկություն, դևերին՝ հալածանք, կույրերին՝ տեսնել, կաղերին՝ գնալ, խուլերին՝ լսել, մեղք գործածներին՝ թողություն: Լսի՛ր, Տե՛ր, բոլորին, որ կաղաչեն Քեզ. եթե մեկը վտանգվում է ծովում, կամ գետում, ամեն տեղ, օգնիր և փրկիր բոլոր վտանգներից ու նեղություններից: Տե՛ր, տո՛ւր և օդի բարեխառնություն և հանդերին պտղաբերություն, փրկելով խորշակից ու եղյամածին սառնամանիքից: Տե՛ր, շնորհի՛ր մարդկանց առողջություն, արգասավորություն, նաև՝ անասուններին ու թռչուններին, որովհետև Քո ստեղծածն են, և Քոնն է փառքը հավիտյանս. ամեն»:

Միևնույն ժամին երկնքից ձայն եկավ նրան և ասաց. «Քո բոլոր խնդրանքները կկատարվեն, և դու կգաս քո Տիրոջ ուրախությանը: Բաց են դռները երկնքի, և քեզ պատրաստված է փառքի պսակ, որ պատրաստեցիր քո նահատակությամբ»: Եվ այդ ձայնը ուրիշները չլսեցին, այլ միայն Կիրակոս դահճապետը և հավատաց Քրիստոսին ու նզովեց կուռքերին: Եվ այդտեղ հատվեցին երանելիների գլուխները. Անտիոքոս բժշկի և Կիրակոս դահճապետի: Եվ քրիստոնյաները վերցրին նրանց սուրբ մարմինները: Իսկ երբ հալածանքները դադարեցին՝ Սեբաստիա մեծ մայրաքաղաքում կառուցեցին սրբերի վայելուչ վկայարան և կոչեցին սուրբ Անարծաթներ, որ կա մինչև այսօր: Եվ ի հիշատակ սրբերի՝ օգոստոսի 25-ին [կատարվում է նրանց տոնը], ի փառս ամենասուրբ Երրորդության, հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԱՊՈՂՈՆԻՈՍ ՃԳՆԱՎՈՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ովքեր խորհում են բարին և ունեն հաստատուն հավատ առ Աստված, անեն ինչ տվող Քրիստոսը նրանց պատրաստում է արդարության պսակ, քանի որ Աստծու ընտրյալները կանչվում են այս արդարությանը, որպեսզի բարի պատերազմ մղելով համբերությամբ հասնեն խոստմանը, որ անսուտն Աստված խոստացավ իր սիրելիներին և ամբողջ հոգով Նրան հավատացողներին: Սրանցից մեկն է երանելի վկա և Քրիստոսի առաքինի նահատակ Ապողոնիոսը: Մեծ Հռոմում ճգնելով բարվոք ճգնությամբ փութացել էր վերին կոչման առհավատչյային և դասվեց Քրիստոսի սուրբ վկաների շարքը: Երանելին վկայեց սինկղիտոսի և Տերենտիոս հազարապետի առջև, համարձակ պատասխան տալով: Նրա պատմությունն այսպես եղավ:

Տերենտիոս հազարապետը հրամայեց բերել նրան սինկղիտոսի առջև և ասաց. «Ապողոնիո՛ս, ինչո՞ւ ես ընդդիմանում անհաղթ օրենքներին ու թագավորի հրամանին և չես կամենում զոհ մատուցել աստվածներին»: Ապողոնիոսն ասաց. «Որովհետև քրիստոնյա եմ, երկնչում եմ Աստծուց, որ ստեղծեց երկինքն ու երկիրը, և զոհ չեմ մատուցում սնոտի կուռքերին»: Հազարապետն ասաց. «Բայց պարտավոր ես զղջալ այդպիսի մտքերի համար՝ թագավորի հրամանների կապակցությամբ, և երդվել ինքնակալ Կոմոդոսի բախտով»: Ապողոնիոսն ասաց. «Լսի՛ր այս իմաստուն պատասխանս. ո՛վ զղջա արդար ու բարի գործերից, այդպիսին իրապես անաստված և անհույս է, իսկ ո՛վ զղջա անօրեն գործերից ու չար խորհուրդներից և չդառնա դրանց, այդպիսին աստվածասեր է և հույս է ակնկալում»: Եվ ես այժմ հաստատվել եմ այս մտքին՝ Աստծու գեղեցիկ և պայծառ պատվիրանը պահել, սովորել եմ իմ Տեր Քրիստոսից, որ գիտե մարդկանց խորհուրդները և

տեսնում է ինչ որ կատարվում է ծածուկ և հայտնի: Ավելի լավ է բնավ չերդվել և ամեն ինչին հաշտվել ու ճշմարտել, քանի որ մեծ երդում է ճշմարտությունը: Դրա համար Քրիստոսով երդվելն անվայել է, նաև անհավատության համար երդվելը: Ուզում եմ երդվել ճշմարտությամբ, ճշմարիտ Աստծով, թե և՛ Թագավորին ենք սիրում, և՛ աղոթում ենք Նրա զորության համար»:

Հազարապետն ասաց. «Այժմ մոտեցիր և զոհ մատուցիր, Ապողոնիո՛ս, այլ աստվածների և Թագավորի պատկերին»: Ապողոնիոսն ասաց. «Զղջման և երդման մասին քեզ ասացի, իսկ զոհերի համար՝ ես և բոլոր քրիստոնյաները անարյուն զոհ ենք մատուցում Աստծուն, հոգևոր և բանավոր պատկերների համար, որոնք կարգվեցին Աստծու խնամքով՝ թագավորելու երկրի վրա: Ուստի աստվածեղեն պատվիրանի հրամանով աղոթում ենք երկնքում բնակվողին, որ միակ Աստվածն է, որ արդարությամբ թագավորեն այդ աշխարհում, հավատի գիտենալով որ ոչ թե մի ուրիշից, այլ միակ Թագավորից է, որ ամեն ինչ իր ձեռքին ունի Աստված և Նա մնաց Թագավոր»:

Հազարապետն ասաց. «Մի՞թե փիլիսոփայելու ես կանչված այստեղ. քեզ թույլ եմ տվել մեկ օր, որ մտածես օգուտը և քեզ խրատ տաս քո կյանքի համար»: Եվ հրամայեց նրան տանել բանտ:

Երեք օր հետո հրամայեց իր առաջ բերել և ասաց. «Քեզ ի՞նչ խրատ տվի»: Ապողոնիոսն ասաց. «Հաստատ կմնամ աստվածապաշտ, ինչպես և առաջ ասացի»: Հազարապետն ասաց. «Սինկղիտոսի հրամանով խորհուրդ եմ տալիս քեզ զղջալ և զոհ մատուցել աստվածներին, որոնց բոլորը երկրպագում են և զոհ մատուցում: Որովհետև շատ օգուտ է քեզ, մնալ մեզ հետ, քան մեռնել չարաչար: Կարծեմ անտեղյակ չես սինկղիտոսի հրամանին»: Ապողոնիոսն ասաց. «Ես ամենակալ Աստծու հրամանը գիտեմ, եմ և մնում եմ աստվածապաշտ և չեմ երկրպագում ձեռագործ կուռքերին, որոնք ոսկուց, արծաթից կամ փայտից եղան և ո՛չ տեսնում են, ո՛չ լսում, որովհետև

մարդու ձեռքի գործ են, և չգիտեն ճշմարիտ Աստծու բարեպաշտությունը: Իսկ ես սովորեցի պաշտել երկնավոր Աստծուն և միայն Նրան երկրպագել, որ բոլոր մարդկանց կենդանի հոգի փչեց և միշտ կյանք է բաշխում բոլորին: Եվ չեմ խոնարհեցնի իմ անձը խորխորատ ընկնելու, քանի որ մեծ ամոթ է անարգ բաներին երկրպագելը, և ծառայական գործ է՝ պաշտել սնոտիներին, և մարդիկ այդպիսիներին պաշտելով մեղք են գործում: Հիմար էին նրանց գտնողները և ավելի անմիտ՝ նրանց պաշտոնյաներն ու երկրպագուները: Եգիպտացիները սոխին էին երկրպագում՝ մոլորյալնե՛ր. աթենացիք մինչև այսօր եզան գլուխը պղնձով սարքած՝ պաշտում են նրան կոչելով Աթենացոց բախտ, որ և կանգնեցրին մի երևելի տեղ Արամազդի ու Հերակլեսի արձանների մոտ, որպեսզի աղոթեն նրանց: Այժմ ինչո՞վ է առավել սա, քան չորացած կավը կամ թրծած խեցին. աչքեր ունեն և չեն տեսնում, ականջ ունեն և չեն լսում, ձեռքեր ունեն և չեն բռնում, ոտքեր ունեն և չեն գնում, քանի որ լոկ ձևը գոյություն չի շնորհում: Կարծեմ թե նաև Սոկրատեսը ծաղրելով աթենացիներին՝ երդվեց սոսի ծառով, շնով և չոր փայտով: Նախ՝ մարդիկ իրենք մեղանչում են պաշտելով նրանց, երկրորդ՝ թշնամանում են Աստծուն, քանի որ չեն ճանաչում ճշմարտությունը: Դարձյալ եգիպտացիք սոխն ու սխտորը աստված համարեցին և պտուղները, որոնցով սնվում ենք և որոնք մտնում են որովայնը, որպես աղբ դուրս գալիս, դրանց պաշտեցին: Նաև ձկան երկրպագեցին և աղավնու և շան, և քարի և գայլի, և յուրաքանչյուրը իր մտքի ստեղծածին երկրպագեց: Երրորդ՝ մարդիկ մեղանչում են երբ երկրպագում են մարդկանց և հրեշտակներին ու դևերին՝ անվանելով աստված»:

Հազարապետն ասաց. «Շատ փիլիսոփայեցիր և զարմացրիր մեզ, Ապողոնիո՛ս, բայց չգիտես սինկղիտոսի հրամանը՝ ոչ մի տեղ քրիստոնյա չերևա»: Ապողոնիոսն ասաց. «Բայց հնարավոր չէ, որ սինկղիտոսի մարդկային հրամանը հաղթի Աստծու հրամանին, քանի որ ինչքան մարդիկ իզուր ատում են բարեգործներին և սպանում, նույն կերպ բազմապատիկ հեռանում են Աստծուց: Բայց սա իմացիր՝ Աստված մահ

սահմանեց և՛ թագավորներին, և՛ աղքատներին, և՛ իշխաններին, և՛ ծառաներին, և՛ ազատներին, և՛ փիլիսոփաներին, և՛ տգետներին, իսկ մահից հետո՝ դատաստան բոլորի վրա: Մահերը տարբեր են լինում: Դրա համար են Քրիստոսի աշակերտները հանապազ մեռնում, զսպելով ցանկությունները և ճգնում են աստվածային Գրքի համաձայն: Որովհետև մեր մեջ ամենևին մաս չկա անառակ ցանկություններից և ո՛չ աղտեղի տեսիլքներ, և ո՛չ ցանկասեր աչք, և ո՛չ չարալուր ականջ, որ չվիրավորվեն մեր հոգիները: Արդ, քանի որ այսպիսի գեղեցիկ կյանքով և բարի հոժարությամբ ենք ապրում, դժնդակ բան չենք համարում ճշմարիտ Աստծու համար մեռնելը. քանի կանք՝ Աստծու համար ենք, և տանջանքներին համբերում ենք Նրա համար, որ չարաչար չմեռնենք հավիտենական մահով: Եվ մեր ունեցվածքի հափշտակության համար չենք չարանում, գիտենալով, որ կենդանի ենք և եթե մեռնենք՝ Տիրոջն ենք: Ջերմը, դալկությունը և այլ ախտեր կարող են սպանել մարդուն. համարենք թե դրանցից մեկից ենք մեռնում»:

Հազարապետն ասաց. «Պնդո՞ւմ ես մահդ»: Ապողոնիոսն ասաց. «Ուզում եմ մնալ Քրիստոսի հետ, այլև մահից չեմ վախենում Կյանքի նկատմամբ ունեցած սիրուս համար: Քանի որ չկա ավելի պատվական բան՝ քան հավիտենական Կյանքը, որ է հոգու անմահության մայրը, որ մնաց այստեղ՝ գեղեցիկ կյանքում»: Հազարապետն ասաց. «Զիմացա՝ ինչ ասացիր»: Ապողոնիոսն ասաց. «Ինչ անեմ, քանի որ Աստծու Բանը սրտի տեսանող է, որպես տեսնող աչքի լույս»:

Այնտեղ կար մի փիլիսոփա, որ ասաց. «Ապողոնիո՛ս, քեզ թշնամանիր, որովհետև շատ մոլորված ես, թեպետ կարծում ես, թե խորին բաներ ես խոսում»: Ապողոնիոսն ասաց. «Ես աղոթել սովորեցի և ոչ թշնամանել, իսկ քո կեղծավորությունը սրտիդ կուրությունն է խոստովանում, քանի որ անմիտներին ճշմարտությունը թշնամանք է թվում»: Իշխանն ասաց. «Ինձ պարզ բացատրիր՝ ի՞նչ ասացիր»: Ապողոնիոսն ասաց. «Աստծու Բանը հոգիների և մարմինների փրկիչ է.

Հրեաստանում եղավ մարդ, կատարեց բոլոր արդարությունները և պայծառորեն լցված աստվածեղեն իմաստությամբ՝ ուսուցանում էր պարկեշտ կրոնավորություն, որ պատշաճ էր մարդկանց որդիներին, և՝ լռեցնել մեղքի սկիզբը: Եվ սովորեցրեց խաղաղեցնել բարկությունը, չափավորել ցանկությունը, մեղմացնել ախորժանքը, մերժել տրտմությունը, հաղորդ լինել ողորմության, աճեցնել սերը, վանել սնափառությունը, հեռու մնալ վրիժառությունից, քինախնդիր չլինել, արհամարհել մահը, ոչ թե անիրավությամբ, այլ համբերելով անօրեններին. հավանել Աստծու օրենքները, պատվել թագավորներին, պաշտել Աստծուն, հավատալ Աստծու անմահ Հոգուն, դատաստանի հետ մահ ակնկալել, հարությունից հետո պարգևներ սպասել. որ տրվում են Աստծու բարեպաշտությամբ ապրածներին»:

Այս ամենը սովորեցնելով՝ խոսքով և գործով, մեծ հաստատամտությամբ փառավորվեց ամենքից երախտիքի համար, որ անում էր, սպանվեց հետո, ինչպեսև նախորդ իրենց իմաստուններն ու արդարները: Որովհետև արդարները անիրավներին հանդուգն են թվում, ինչպեսև աստվածային Գիրքն է ասում. «Կկապենք արդարին, որովհետև հանդուգն է մեզ թվում» (Իմաստ. Բ. 12, Եսայ. Գ. 10): Նաև հելլենացվոց իմաստուններից մեկն ասաց. «Արդարը կխոշտանգվի, կանպատվվի և հետո կխաչվի»՝ ինչպես աթենացիները անիրավ մահվան վճիռ տվին, զրպարտեցին՝ հավատալով ռամիկին, նույնպեսև մեր Փրկչին հետո անօրենները մահվան վճիռ հատեցին: Անօրենները նախանձելով մարգարեներին, որ Նրանից առաջ էին և Նրա մասին կանխապես ասացին՝ «Կգա և բոլորին բարիք կգործի և բոլոր մարդկանց առաքինության կհամոզի և՝ պաշտել բոլորի Հայր և Արարիչ Աստծուն»,- որին և մենք հավատալով երկրպագում ենք, որովհետև սովորեցինք Նրանից պարկեշտ պատվիրաններ, որոնք չգիտեինք և այսուհետև չենք մոլորվի, այլ բարվոք կյանքով ապրելով հանդերձյալ Հույսին ենք սպասում»:

Իշխանն ասաց. «Ես կարծում էի, թե գիշերը այդ մտքից հրաժարվեցիր»: Ապողոնիոսն ասաց. «Ես նույնպես հույս ունեի, թե գիշերը կփոխվեն քո մտքերը և իմ պատասխաններից կբացվեն հոգուդ աչքերը և սիրտդ կպտղաբերի, և կպաշտես բոլորի արարիչ Աստծուն և Նրա մշտական ողորմությամբ կաղոթես, քանի որ անարյուն և սուրբ է Աստծու զոհը՝ մարդկանց ձեռքով արված ողորմությունը մարդկանց հանդեպ»:

Իշխանն ասաց. «Ուզում եմ քեզ արձակել, սակայն չեմ կարող սինկղիտոսի հրամանի պատճառով, բայց մարդասիրաբար քեզ տալիս եմ վճիռը»: Եվ հրամայեց սուսերով կտրել գլուխը: Ապողոնիոսն ասաց. «Գոհանում եմ իմ Աստծուց, քո վճռի համար»: Եվ դահիճները տարան խսկույն գլխատեցին, մինչդեռ [նա] փառավորում էր Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, որին փառք հավիտյանս. ամեն:

ՍՈՒՐԲ ԱՐՔԻՊԱՍԻ ԵՎ ՓԻԼԻՄՈՆԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոսի սուրբ վկաները Կողոսա քաղաքից էին, սուրբ Պողոս առաքյալի աշակերտները, ամբարիշտ Ներոն արքայի օրոք: Եղավ որ Հովհաննես առաքյալն ու ավետարանիչը գնաց Եփեսոս քաղաքը, այնտեղից հալածեց դևերին, խորտակեց Արտեմիդեսի բագինները և քանդեց ու ավերեց կուռքերի տաճարը: Եվ դիցապաշտ մարդիկ, որ աղանդված էին կուռքերի մոլորությամբ, չունեին դիվական զոհ մատուցելու տեղ: Եվ այնուհետև գնում էին Կողոսա քաղաքը՝ կատարելու աղտեղի տոնը, քանի որ դեռևս կային Արտեմիդեսի տաճարն ու բագինը: Ու մինչդեռ պղծության զոհ էին մատուցում, սուրբ Արքիպասն ու Փիլիմոնը և այլ քրիստոնյաների բազմությունը եկեղեցում աղոթում էին Աստծուն՝ կատարելու [իրենց] ուխտը: Եվ հանկարծակի կուռքերին զոհ մատուցելու եկածները քինախնդրությամբ վառված դիմեցին եկեղեցի, մտնելով բռնեցին սուրբ Արքիպասին, տարան Անդրոկղիտիոս դատավորի ատյանը և խիստ ամբաստանում էին նրան: Իսկ նա, Սուրբ Հոգով լցված, դատավորի հարցաքննությունից առաջ սկսեց հանդիմանել նրանց ամբարշտությունը և սնոտի կուռքերի տկարությունը: Դատավորն ասաց. «Առաջ ընկնելով օգուտ չես ստանա, որովհետև եթե զոհ չմատուցես աստվածներին՝ ապրել չես կարող»: Եվ բռնանում և ստիպում էր Արքիպասին զոհ մատուցել կուռքերին, իսկ նա առավել ևս անարգում էր նրանց կռապաշտությունը:

Այնժամ [դատավորը] հրաման տվեց կապել նրան երկաթե շղթաներով և քարշ տալ մինչև մեհյանի դուռը, որ կոչվում էր Մինաս: Եվ այնտեղ խիստ չարչարեցին նրան տեսակ-տեսակ տանջանքներով և ստիպում էին զոհ մատուցել կուռքերին, իսկ սուրբը չէր դադարում դատավորին ու նրա աստվածներին կշտամբելուց:

Եվ նա բարկանալով՝ հրամայեց, և սրբին դուրս հանեցին Կողոսա քաղաքից մոտ մեկ մղոն հեռու, այն դյուղը, որ կոչվում էր Արքիպիանա: Այդտեղ մի խոր փոս փորեցին տղամարդու հասակի կեսի չափ, նրան դրեցին փոսի մեջ և քարով ամրացրին մինչև գոտին, ձեռքերը հետևը կապած: Եվ հրաման տվին դպրոցի երեխաներին, որ երկաթե գրիչներով ծակեն գլխի գագաթը՝ հասնելով մինչև ուղեղը: Եվ քարկոծեցին նրան նույն տեղում՝ մինչև ավանդեց հոգին: Այնտեղից գնացին, բռնեցին Փիլիմոնին ու սպանեցին նրան: Իսկ Սոփի անունով մի բարեպաշտ կին երկյուղած մարդկանց հետ վերցրեց սրբերի մարմինները և մի պատվական ու սուրբ վայրում գերեզման դրեց:

Այսպես վախճանվեցին Քրիստոսի սուրբ վկաներն ու աշակերտները նոյեմբերի 22-ին ի փառս Քրիստոս Աստծու, հավիտյանս. ամեն:

ՍՈՒՐԲ ԱՓՐԱՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա՛ի քաղաքում, որի անունը Օգոստեա էր, իշխանը հրամայեց բռնել քրիստոնյաներին, բերել, որպեսզի զոհեն պիղծ դևերին: Եվ սպասավորները ելան, հրապարակից բռնեցին մի պոռնիկ կնոջ և տարան իշխանի մոտ: Իշխանը տեսնելով այն կնոջը՝ նախ կամեցավ ողոքական խոսքերով համոզել, որ զոհ մատուցի: Իսկ կինը չէր հնազանդվում հրամանին և համարձակ ասաց. «Ես քրիստոնյա եմ»: Դատավորը տեսնում է, որ արհամարհում է թագավորի հրամանը, ասում է նրան. «Քո անունն ի՞նչ է»: Եվ նա ասում է. «Քրիստոնյա եմ, և անունս՝ Ափրաս»: Դատավորն ասում է. «Ի՞նչ բախտի ես»: Ափրասը պատասխանում է. «Չար բախտի եմ, իմ պիղծ գործերի պատճառով, սակայն ազատ եմ»: Դատավորը հարցնում է. «Ի՞նչպիսին է վարքդ»: Ափրասն ասում է. «Սատանայական խաբեությամբ առաջ պոռնիկ էի, իսկ այժմ Քրիստոսի շնորհներով, որ ծագել են վրաս, զգաստացել եմ»: Դատավորն ասում է. «Արդ, քանի որ զգաստացար, մտիր, զոհ մատուցիր բարերար աստվածներին՝ ըստ թագավորի հրամանի»: Ափրասն ասում է. «Չկա ավելի աղտեղի բան, քան ձեր աստվածները: Որովհետև, երբ ամոթալի գործ էի անում՝ նայում էի նրանց պղծությանը, թե ինչպես կամակից էին աղտեղի գործերի: Հեռացա նրանցից և գնացի իմ պարկեշտ ուսուցիչ Քրիստոսի մոտ, որ պոկում է մեղքի արմատները, և մաքրում դրանից, ասելով. «Ով տեսնի կին՝ ցանկանալով նրան, նա արդեն շնացավ իր սրտի մեջ» (Մատթ. Ե. 28):

Դատավորն ասում է. «Մտի՛ր, զոհ մատուցիր աստվածներին, որ հայհոյությանդ համար քեզ չարաչար չտանջենք և քո երիտասարդական գեղեցկությունը ապականելով այս քաղցը կյանքից չզրկենք»: Ափրասն ասում է. «Հավատում եմ Քրիստոսին, որ բազում մարդասիրությամբ նայեց ինձ և իմ մարմնին համբերություն կտա քո տանջանքների դեմ, որ

բարի գործեր մթերեմ, որովհետև պիղծ գործերով դառնացրել եմ Աստծուն, տրտմեցրել երկնային հրեշտակներին: Արդ, հրամայի՛ր տանջել մարմինս հանուն Քրիստոսի, որպեսզի հաշտեցնեմ Աստծուն և ուրախացնեմ հրեշտակների դասին: Որովհետև Տիրոջից լսեցի՝ «Ասում եմ ձեզ, թե ուրախություն կլինի Աստծու և Նրա հրեշտակների առջև ապաշխարող մեղավորի համար» (Ղուկ. ԺԵ. 7):

Այս լսելով՝ դատավորն ասում է. «Դրա երեսը ապտակներով սաստիկ ծեծեցեք և ասացեք՝ չընդդիմանա թագավորի հրամաններին»: Եվ նրան լավ ծեծեցին, իսկ ամբողջ ժողովուրդը լալիս էր ու արտասվելով ասում. «Անիրավ ես դատում և օրենքից դուրս, ապականում ես մեր քաղաքի վայելչությունը»: Եվ դատավորը զարմացած հարցնում է. «Ինչո՞ւ եք հակառակ թագավորի հրամաններին»: Ամբոխն աղաղակելով ասում է. «Աղաչում ենք քեզ, մի՛ ապականիր դրա գեղեցկությունը»:

Դատավորն ասում է. «Տեսնո՞ւմ ես, Ափրաս, ինչպես է ամբողջ քաղաքը լալիս քեզ համար. անչափ սիրում են քեզ»: Ափրասն ասում է. «Իմ բազում պղծությունների ժամանակ սատանայի արբանյակները, որ ինձ գործակից էին, ուրախանում էին, իսկ հրեշտակները տրտմում էին իմ պիղծ գործերից: Այժմ նրանք լալիս են, իսկ հրեշտակները երկնքում ցնծում են Աստծու նկատմամբ հավատիս և բարի գործերիս համար: Հիմա ինչ որ ուզում ես անել՝ արա իսկույն, որովհետև ես քրիստոնյա եմ, և գրված է՝ «Աստվածները, որ երկինքն ու երկիրը չեն ստեղծել՝ կկորչեն» (Երեմ. Ժ. 11): Դատավորն ասում է. «Ա՛յ անամոթ, մոտեցիր, զոհ մատուցիր աստվածներին, եթե ոչ՝ երդվում եմ թագավորի հաղթությամբ ու բախտով և բոլոր արարածներով, մարմանդ կրակով կվատնեմ քեզ՝ ի ցույց բոլոր քրիստոնյաների»: Ափրասն ասում է. «Երդվեցնում եմ քեզ քո թագավորով, հրամայիր այրել իմ մարմինը, որովհետև այն շաղախել եմ պոռնկությամբ և աղտեղել մեղքով, ինչպես բազում ժամանակներով հնացած և ժանգոտած երկաթը հրի միջոցով կնորոգվի ու կփայլե, նույն կերպ և ինձ այրել հրամայիր, որպեսզի մարմինս անբիծ և անարատ պատարագ լինի Քրիստոսին»: Դատավորն ասում է. «Ահա պնդում ես չարաչար մեռնելդ և կամեցար, որ քո գեղեցկությունը հրով խաթարվի»: Ափրասն ասում է. «Այո՛, պնդում եմ, հավատացի Քրիստոսին, միայն թե գեղեցկությունս ողջակիզվի Քրիստոսի համար»:

Եվ դատավորը զարմացավ խոստովանության հաստատությամբ և թե ինչպես արհամարհեց թագավորին ու նրա հրամանները, և իսկույն հրաման տվեց՝ կապել նրա ոտքերն ու ձեռքերը, քարշ տալ քաղաքից դուրս, մինչև գետեզրը և այնտեղ այրել նրան կենդանվույն, կամաց-կամաց, դալար փայտով: Եվ դահիճներն ստացան այդ հրամանը, իսկույն կատարեցին: Եվ այդպես Քրիստոսի սուրբ աղախինը վկայեց ճշմարիտ խոստովանությամբ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, որին փառք և զորություն հավիտյանս. ամեն:

ԲԱԲԵԼԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ԵՐԵՔ ՄԱՆԿԱՆՑ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գալով Անտիոք քաղաքը՝ Նոմերիանոս թագավորը պիղծ դևերին զոհ էր մատուցում: Ուզեց մտնել Աստծու տունը: Իսկ երիցս երանելի Բաբելասը՝ Աստծու եկեղեցու եպիսկոպոսը, որ Անտիոքում էր, Քրիստոսի հոտի գեղեցիկ և հանճարեղ հովիվը, գիտեր մեծ իմաստությամբ հովվել իր ենթականերին, երբ լսեց, որ Նոմերիանոսը ուզում է մտնել Աստծու տաճարը, ձայնը բարձրացրեց ժողովրդի մեջ և բարձրագոչ ասաց. «Հաստատո՛ւն եղեք, որդյակներ, այստեղ, ներսում մնացեք, որովհետև ապականիչ գայլն ուզում է մտնել Աստծու տունը. եթե Աստված մեզ [օգնության] չհասնի՝ կորչելու ենք բոլորս»: Նրանք այդ լսելով՝ մնացին ներսում, իսկ սուրբը դռան առջև նստած սպասում էր անօրենին: Եվ եկավ Նոմերիանոսը, ուզում էր մտնել եկեղեցի: Աստծու սուրբ ծառա Բաբելասն ընդառաջ գնալով արգելեց նրան. «Այստեղ չպետք է մտնես պիղծ և կեղտոտ ձեռքերով»: Իսկ Նոմերիանոսը բռնի մտնել էր փորձում, և զարմացած էր այրի համարձակությամբ, նաև ակնածելով նրա բարի համբավից, պահ մի լուռ մնաց, ապա հրամայեց նրան պահել ամենայն զգուշությամբ, ինքը գայրացած դարձավ արքունիք:

Հաջորդ օրը [թագավորն] ատյանում նստեց, հրամայեց նրան բերել բոլորի առջև ու ասաց. «Ա՛յ թշվառական այր, ի՞նչ ես մտածել և ի՞նչ նկատի ունեիր, որ հանդգնեցիր արգելել ինձ, չգիտե՞ս, որ քեզ հետ խոսում է թագավորը: Աստվածները գիտեն, որ չես փախչի իմ ձեռքից, և տեսնենք՝ քո Աստվածը կօգնի՞ քեզ»: Բաբելասն ասաց. «Ես տառապած մարդ էի, իսկ Աստված կամեցավ ինձ դարձնել իր ժողովրդի հովիվ: Ուստի տեսնելով, որ ապականիչ գայլը մտնում է Քրիստոսի հոտը, չտապեցի ուշք դարձնել, որ հոտից կո-

բուստ չունենամ և հաշիվ տամ Աստծուն»: Նոմերիանոսն ասաց. «Հիմա ինձ դա՞յլ համարեցիր և ոչ թագավոր»: Բաբելասն ասաց. «Աստծու ներողամտությամբ ես դու թագավոր և մեր մեղքով. գոնե այդպես խրատվելով դառնանք դեպի Նա: Բայց ես քեզ ճշմարիտ թագավոր չեմ համարում, որովհետև չգիտես Նրան, որ քեզ այդ պատիվը տվեց: Եթե գիտենայիր՝ միայն Նրան կերկրպագեիր և միայն Նրան կպաշտեիր և ոչ Նրա ստեղծածներին: Արդ՝ այսպիսի գործերով բարկացնում ես քո արարչին, որ չգոյությունից գոյության բերեց քեզ և պատիվ տվեց, որպեսզի փառավորես Նրան: Քեզ ասում եմ բաներ, որ բոլորը գիտեն. եթե քո պաշտոնյաներից մեկը փախչեր քեզնից ու գնար այլազգի թագավորի մոտ, չէի՞ր զայրանա: Այդպես մտածիր Աստծու մասին: Երկնի ու երկրի արարիչը խանդով է նայում այդ բաներին: Չէ՞ որ, երբ Իսրայելը դառնացրեց Աստծուն՝ մարգարեի միջոցով ասաց նրանց. «Դուք նախանձեցրիք ինձ չաստվածներով, և ես կնախանձեցնեմ ձեզ ազգով և անմիտ ազգով կզայրացնեմ ձեզ» (Բ. Օրինաց Լ.Բ. 21): Արդ՝ դու ևս կզայրացնես Աստծուն, և Նա կխլի իսկույն քո թագավորությունը և կտա ուրիշի, որին չես ուզում: Դրանով կիմանաս, որ բարվոք է Աստծուն խոստովանել և ոչ թե Նրա արարածներին աստվածացնել և երկրպագել նրանց. չէ՞ որ գրված է. «Երկրպագիր քո Տեր Աստծուն և պաշտիր միայն Նրան» (Մատթ. Դ. 10):

Նոմերիանոսն ասաց. «Աղճատվում ես թշնամանելովդ: Քեզ չի՞ թվում, որ այս արարածները մեծ աստծունն են կամ չե՞ս տեսնում նրանց ազդեցությունը և առաջադիմությունը, որ ունեն: Բայց ես ուզում եմ իմանալ՝ ո՞ր ազգն է ասում՝ գիրն անմիտ է. այդ որ ասես՝ սիրով կլսեմ քեզ»: Բաբելասն ասաց. «Աստված մարդուն անմեղ ստեղծեց, իսկ սատանան երկնքից ընկավ և զրկվեց փառքից, որ ստացել էր Աստծուց, և նախանձելով մարդկային ցեղին՝ հափշտակեց մեր նախնիներին իր չար մտքերով, և այդպես եղանք անմիտ: Իսկ Աստծու Միածին Որդին՝ ճշմարիտ Աստված, ներողամիտ եղավ այնքան կռապաշտության հանդեպ և իր ստեղծածների

կորուստը տեսնելով՝ երևաց մեզ և ողորմելով կորզեց մոլորությունից: Եվ այնուհետև անմիտ չենք, քանի որ գիտենք Աստծուն, մանավանդ որ իրենից իմացանք՝ չկա նախապես գիտցող, լոկ Աստծուց բացի: Իսկ այդ ամենը, որ ասում եք՝ առասպել են և բանաստեղծների մտքեր. անունով են միայն աստվածներ և ոչ գոյությամբ, քանի որ եթե մարդկային արվեստը չլիներ՝ այդ աստվածները չէիք ունենա: Այժմ եթե ուզում ես ինձ լսել և մոլորությունից խուսափելով իմաստուն լինել՝ Աստված քեզ կընդունի, իսկ եթե ոչ՝ կաս և կմնաս այդ անմտության մեջ»: Նոմերիանոսն ասաց. «Ձեր գիրքն առասպել է, իսկ մերը՝ գործ և իմաստ, և իր մեջ ունի ճշմարտության պատկերը, որովհետև այնտեղ աստվածային մի զորություն կա: Դրա համար հրամայում եմ զոհ մատուցել նրանց: Եվ իմացիր, թե չլսես՝ անպատիժ չես մնա, որովհետև դու ավելի լավ չես քան նրանք, որ քեզնից առաջ եկան սրան և արժանացան մեծ պատվի»:

Բաբելասն ասաց. «Ովքեր պարտվեցին՝ պարտվեցին իբրև մարդ, իսկ ինձ չես կարող խաբել, և եթե ինձ խոստանաս երկնքի արքայությունը, որից ինձ ուզում ես խորթացնել, տանջանք ես ժառանգելու, քանի որ Աստված քեզնից պահանջում է մարդկանց հոգիները, որ կորցրիր»: Նոմերիանոսն ասաց. «Ի՞նչ է Աստված. այդ անունն ինձ ասա՝ ինչպես է բացատրվում»: Բաբելասն ասաց. «Աստծու մեծությունը չգիտես, թեև [Նրա] թևերով թռչում ես: Մի՛ որոնիր Աստծու անունը, որովհետև չես գտնի, քանի որ ամեն կանչված անուն մի լավի կողմից է անվանվում. մեկը կկանչի, մյուսը կլսի: Եվ ամեն մեկը, որ կկոչի՝ «Աստված, Աստվա՛ծ», ոչ թե Աստծու անունը, այլ փառքն է ասում: Արդ՝ մի՛ խնդրիր բան, որ Աստծունը չէ: Աստված իմաստության ճանապարհ է՝ առանց հասնելու, Աստված որ ամեն ինչ ստեղծեց մարդու համար»: Նոմերիանոսն ասաց. «Ի՛նչ է մարդը»: Բաբելասը պատասխանեց. «Կյանքի ընդունիչ, եղածը վայելող»: Նոմերիանոսն ասաց. «Աստվածներով, պատասխանեցիր կարգով և խիստ իմաստությամբ, ինչպես քո համբավն էր: Բայց քեզ

պակասում է միայն աստվածների իմացությունը, և կարող էիր բարի այր լինել»:

Բաբելասն ասաց. «Անզգա՛մ, ամբարիշտ և ինքնագոհ բռնակալ, այդ պատիվը, որ քեզնից է՝ թշնամանք է ինձ, և քո գովասանքը՝ անարգանք: Քանի որ ես լի եմ ամենայն բարությամբ, որովհետև գիտեմ իմ Աստծուն և քարերին չեմ երկրպագում»: Նոմերիանոսն ասաց. «Նոր շղթա կդցեմ քո պարանոցին, որովհետև չեմ կարող հանդուրժել, և իբրև չար ծառայի ու իր տիրոջը թշնամանողի՝ կապանք կդնեմ ոտքերիդ»: Բաբելասն ասաց. «Աստծուն ունեմ ինձ իշխան ու թագավոր, տերեր ու եղբայրներ՝ երկյուղածներ Աստծու: Արդ, դու հավատա՛ Աստծուն, և կհամբուրեմ քո ոտքերը: Որովհետև պատիվ է ինձ այն, ինչ դու թշնամություն ես համարում: Այլև այս չարչարանքով Աստծու պիտանի ծառա չեմ, այլ անպիտան, քանի որ երանելիներն են Աստծու համար չարչարվում»: Նոմերիանոսն ասաց Բիկտորինոս դքսին. «Ուզում եմ քեզնով խրատել անզգամների ուսուցիչ Բաբելասին և հրամայում եմ նրա պարանոցին շղթա դնել, նաև ոտքերին՝ կապանք, ի թշնամություն նրա, որ ոչ քիչ լուտանք թափեց մեզ վրա»: Բիկտորինոս դուքսն ասաց. «Քո քաջությամբ երդվելով՝ վաղուց եմ ցանկացել հասնել քո երկյուղին՝ այդ ամբարիշտ մարդու կապակցությամբ: Որովհետև անօրեն և ինչ-որ նոր օրենք է ուսուցանում և բազում հոգս է պատճառում մեզ՝ անգոսնելով մեր հրամանները»: Նոմերիանոսն ասաց. «Դու հիմա հրամայվածներն արա այդ անհավան Բաբելասին, իսկ ես դրանից հետո կամաց-կամաց կջնջեմ նրա նմաններին»:

Դուքսը Բաբելասի պարանոցն ու ոտքերը շղթայեց և հրամայեց դուրս հանել, որ տեսանելի լինի բոլորին: Բաբելասն ասաց. «Գոհանում եմ իմ Աստծուց, որ իրեն խոստովանելովս ինձ հասցրեց այս պատվին, իսկ քեզ և քո թագավորին չեմ հարգում»: Դրանից հետո Նոմերիանոսն ասաց. «Կանչեցեք Բաբելաս ուսուցչին երիտասարդների, որ ամեն ժամ անզգամությամբ է շարժվում»: Եվ եկավ Բաբելասը, ասաց.

«Ուսուցիչ եմ երիտասարդների, որ երբեմն մտքով մանկանում են, երբեմն իմաստությամբ պատահում են նրանց, որ ուզում են շեղվել ճշմարտությունից, բայց ձեզ՝ անզգամներիդ ու ձեզ նմաններին ուսուցիչ չեմ»: Նոմերիանոսն ասաց. «Աստվածներով [եմ երդվում] քեզ վայել են այդ շղթաներն ու կապանքները, որ ոտքերիդ են»: Բաբելասն ասաց. «Դու շարժվում ես՝ առաջնորդվելով անզգամությամբ, իսկ ես երդվել եմ Աստծու Որդու [անունով]. ինձ այնքան է վայել, որքան քեզ ոչ՝ այդ թագը, որ գլխիդ է»: Նոմերիանոսն ասաց. «Ո՛վ թշվառական, զոհ մատուցիր, բուժվիր տանջանքներից, որ քեզ պահեն, և մի՛ պարծենար այն մանուկներով, որոնց սովորեցնում ես»: Բաբելասն ասաց. «Որ մանուկների ուսուցիչ եմ՝ ահա քեզ ասացի: Իսկ եթե ուզում ես տեսնել՝ ի՛նչ է մանկանց սնունդը և աստվածային վարդապետությունը, ինձ հետ ունեմ երեք մանուկ՝ ըստ Աստծու սնված, հրամայիր նրանց բերել՝ և կտեսնես նրանց քաջությունը, որ Աստված նրանց հետ է: Թերևս իմ փորձով չհամոզվեցիր և ինձ նայում ես իբրև աղճատվածի ու շատախոսի»:

Եվ Նոմերիանոսը հրամայեց բերել մանուկներին, որոնց մասին Բաբելասն ասաց: Եվ երբ մտան, [Նոմերիանոսը] հարցրեց նրանց՝ մայր ունե՞ն: Եվ նրանք ասացին. «Այո՛, բայց մորից առավել ունենք տեր Բաբելաս մեր ուսուցիչը»: Հրամայեց բերել և նրանց մորը, ու երբ մտավ՝ հարցրեց նրան՝ «Ի՞նչ է քո անունը»: Եվ նա ասաց. «Թեուդուլե»: Նոմերիանոսն ասաց. «Դրանք քո որդինե՞րն են»: Եվ նա ասաց՝ «Այո՛, ես եմ ծնել դրանց և հանձնել եմ իմ հովիվ Բաբելասի ձեռքը, և նա սովորեցրեց նրանց աստվածպաշտություն»: Նոմերիանոսն ասաց. «Դրա երեսն ապտակեցեք սաստիկ իր երեխաների առջև և դրան ասացեք, որ հանդուգն չխոսի»: Իսկ զավակները տեսան իրենց մորը տանջանքի մեջ, միաբան աղաղակեցին ու ասացին. «Բռնավոր, խզուր մի՛ խփիր մեր մորը, որովհետև ազատ է, և ճիշտ ասաց՝ ինչ որ ասաց, նա ծնեց մեզ, բայց սնեց մեր տեր Բաբելասը: Թեկուզ դարձյալ զայրանաս՝ մեր տերն է, քանի որ աստվածպաշտություն է

սովորեցնում»: Եվ զայրացած Նոմերիանոսը հրամայեց երիտասարդներին առանձնացնել: Հրամայեց առաջինին փոկով [հարվածել] տասներկու, երկրորդին՝ ինը, երրորդին՝ յոթ [անգամ]: Իսկ մանկունք մի մարդու պես ասացին. «Օրհնյալ է Աստված, որ Նրա համար չարչարվում ենք»:

Նոմերիանոսն ասաց նրանց մորը. «Քո առաջին որդին քա՞նի տարեկան է»: Եվ նա պատասխանեց. «Տասներկու»: «Իսկ երկրո՞րդը»: Եվ նա ասաց. «Ինը»: «Իսկ երրո՞րդը՝ քանի»: Եվ նա ասաց. «Յոթ»: Սրանից հետո աղաղակեց. «Քրիստոնյաների Աստվածը մեկ է. իմ որդիների քանակի համաձայն այնպես տանջվեցին Նրա համար, որ կվերջացնի նրանց ու կպսակե»:

Նոմերիանոսը հրամայեց դուրս հանել նրանց մորը և ներս տանել Բաբելասին և ասաց նրան. «Անզգամների վարդապետ և մանուկների ուսուցիչ, փորձեցի այն, որ պարծենում էիր մանուկներով. սուտ դուրս եկար, քանի որ առաջ գալով մանուկները խոստացան զոհ մատուցել աստվածներին»: Բաբելասն ասաց. «Զա՛ր, գլխիցդ սուտ ես խոսում, քանի որ քո հայր սատանայի որդին ես, որը մշտապես ստում է, և դուք չեք կարող հաղթել որևէ մեկին, ո՛չ դու, ո՛չ քո հայր սատանան, եթե չստեք»:

Նոմերիանոսն ասաց. «[Երդվում եմ] Ասկլեպեոսով, արհամարհում եմ քո խոսքն ու թշնամանքը և տանջանքով կամաց-կամաց կվատնեմ քեզ, եթե չհավանես և զոհ չմատուցես, դրանից հետո կհրամայեմ գլուխդ կտրել»: Բաբելասն ասաց ծիծաղելով. «Այժմ և ծաղրի եք արժանի»: Նոմերիանոսն ասաց. «Աղճատվում ես. ո՞ւմ ծաղրին ենք արժանի»: Բաբելասն ասաց. «Եթե քո աստվածները լսեն, որ միայն Ասկլեպեոսի անունը տվիր՝ կզայրանան քո դեմ: Արդարև ես ամաչում եմ ձեր անզգամությունից, որ չեք կարող իմանալ, այլ երկրպագում եք՝ ում չերկրպագեցին կամ չհավանեցին մանուկները»: Նոմերիանոսն ասաց. «Թե քո Քրիստոսը լսի՝ կբարկանա, որ միայն Աստված ես ասում, ի՞նչ կանես»: Բաբելասն ասաց. «Ահա դու արժանի չես լսելու քրիստոնեից

գիտությունը, բայց այս ամբոխի համար, որ շուրջս է, ասում եմ, որ քո անօրինությամբ դրանք ևս չզրկվեն գթությունից: Երբ քրիստոնյաները Որդուն են ասում, խոստովանում են Հորը և երբ Հայր են ասում՝ խոստովանում են և Որդուն, որովհետև բաժան չեն ո՛չ Հայրը որդուց, ո՛չ Որդին Հորից, և Աստված համեմատելի չէ դևերին, որոնց երկրպագում ես: Եվ գրված է. «Ի՞նչ հաղորդություն լույսի և խավարի միջև» (Բ. Կորն. Զ. 14-15):

Իսկ մանուկները այնքան ժամ կախված էին Բաբելասի հետ: Նոմերիանոսն ասաց, որ Բաբելասին տանեն՝ կապանքներն ու անուրները պարանոցին: Եվ քանի որ ծանր էին և հաստ, երկար կախելով վերքեր էին առաջացնում: Իսկ որ նրա շուրջն էին ծանոթները, չարչարակից լինելով նրան՝ ասացին. «Խոստացիր զոհել և ազատվիր տանջանքից»: Բաբելասն ասաց. «Այնքան չեմ սգում այդ անզգամին, որ գահին է նստում, որքան ձեզ, որ հավատում եք դրան, որ և կորցրեց ձեր կյանքը: Դրան չհավանելով արդյո՞ք ձեզ կհավանեմ. բնավ: Ձեր տանջանքը կյանք է, որովհետև թեթևացնում է ինձ, որի համար և չարչարվում եմ և չեմ զգում բնավ»:

Այնուհետև թագավորը հրամայեց տանջել նրան: Ու մինչ երանելի Բաբելասը կախաղանին էր, մանուկները աղաղակում էին և ասում. «Բռնավոր և ամբարիշտ, ինչո՞ւ մեր տիրոջը և բարի հովվին այդպես առանց մի պատճառի տանջում ես. քանի որ պաշտում է բոլորի Տիրոջը, դրա համար առավել պատվի է արժանի և ոչ տանջանքի: Դրա փրկությամբ երդվում ենք՝ Աստծու ձեռքից չես պրծնի, այլ մատնվելու ես գեհենի հրին»: Եվ Նոմերիանոսը ցասումով հրամայեց տանջել նրանց: Իսկ մանուկները միաբերան ասացին. «Զե՞ս ամաչում, ամբարիշտ, այդչափ բազմության առջև հաղթվելով մանուկներից, որովհետև դու ավելի պիտի տանջվես, քան մենք: Երդվում ենք նրանով, որ անմիջապես կարող է քեզ հատուցել, որովհետև չենք ընկրկում քո տանջանքներից»: Եվ թագավորը հրամայեց իջեցնել Բաբելասին և թաքցնել տանը, որպեսզի առանձին հարց[աքննի] մանուկներին:

Եվ ասաց նրանց. «Որդյակնե՛ր, համաձայնեցեք ինձ՝ և բազում պատիվներ կշնորհեմ ձեզ, որ ուրիշ մեկը չի կարող»: Իսկ նրանք միաձայն ասացին. «Խորամանկ և նենգավոր, մեզ մահ մի՛ նյութիր, քանի որ քո բոլոր շնորհները լի են գեհենի պատվով: Երբ որ մեր վարդապետը տերունական կնիքը տվեց մեզ՝ կատարյալ դարձանք և մեզնից վանեցինք չար խորհուրդները, և հաղորդվեցինք հաստատուն կերակրին, պատրաստ ենք մեռնելու Քրիստոսի անվան համար: Դու կարծում էիր թե երբ մեզնից մեկուսացնես մեր ուսուցչին՝ կհաղթես մեզ: Աստծու Որդու անվամբ ենք երդվում, որը կարող է օգնել մեր հովվին՝ ուր և լինի, և բուժել քո պիղծ ձեռքից, և այս ժամանակները փոխել անմիջապես, եթե չուրանանք և ամոթ չանենք մեր հովվին, որ աղոթում է իր հոտի համար»:

Իսկ երանելի Բաբելասը լսում էր դա այն տանը, ուր արգելափակված էր: Նոմերիանոսն ասաց. «Առա՛ջ բերեք Բաբելասին»: Ու երբ եկավ՝ ասաց. «Արդարև [սրանք] ըստ Աստծու իմ որդիներն են, իսկ ես իմ Աստծու համար, որից ծնվեցի՝ կին չեմ ճանաչում»: Նոմերիանոսն ասաց. «Եվ ինչո՞ւ ամեն ինչով քեզ են նման»: Բաբելասն ասաց. «Աղոթքով խնդրում եմ, որ ամբողջապես ինձ նման լինեն, բացի իմ մեղքերից»: Նոմերիանոսն ասաց. «Քեզ ասացի՝ ազատվիր տանջանքներից, դու հնազանդվել ես չարչարվել, և չլսեցիր ինձ, և աղաչում եմ քեզ՝ հաճեցրու քո միտքը առաջին տանջանքին, միայն դրանից հետո բավարարվի՛ր տանջանքովդ, համոզիր մանուկներին, որ այդպես դեռահաս չզրկվեն քաղցր կյանքից»: Իսկ Բաբելասը զայրացած ասաց. «Ո՛վ անմիտդ բոլոր մարդկանցից և ամբարիշտ բռնավոր, զբաղվեցիր մեզնո՞վ, պատերազմական հոգսերը թողած, և՝ թե ինչպես պետք է դիմավորել այլազգիներին. հավատում եմ Քրիստոսի Հայր Աստծուն: Ինչպես որ հերքեցիր մեզնից, այդպես կհաղթահարվես թշնամիներից: Գոնե խոստում տուր որդիներիդ և քո պարգևները պահիր քեզ, քանի որ չես կարող այնքան մեզ շնորհել, որքան ձգտում ես զրկել մեզ»:

Եվ թագավորը բարկացավ, նրան և երեք մանուկներին մահվան վճիռ տվեց: Իսկ երանելի Բաբելասը երեք մանուկների հետ վճիռն ստացավ, երդվեցրեց մոտը եղողներին և ասաց. «Երդվեցնում եմ ձեզ մեր Աստծով, որ տեսնում է ամեն ինչ, անուրներն ու կապանքները, որ ոտքերիս են, ես վկայում եմ, որ բռնավորը հավետ տանջվելու է անվախճան հրի մեջ»: Ու մինչդեռ ելնում էր դռնից, այսպես էր սաղմոսում. «Փրկեցիր մեզ մեր թշնամիներից և մեր ատելիներին ամոթահար արեցիր» (Սաղմ. ԽԳ. 8): Նրա հետ սաղմոսում էին մանուկները: Իսկ երանելի Բաբելասը աղաչում էր դահիճներին, որ պատրաստ էին գլխատելու, որ նախ մանուկներին սպանեն, ապա իրեն: Եվ նրանց կանգնեցնելով իր աջ ու ձախ կողմը, ասաց. «Ահա ես և իմ մանկունք, որ տվեց Աստված»: Իսկ երբ նրանց վախճանված տեսավ՝ ասաց. «Օրհնյալ Աստված քրիստոնյաների, որ արիր քո բազում ողորմությունը, արդարև դեռահաս մանուկների բերանով հաստատեցիր քո օրհնությունը»: Այնպես նրան ևս գլխատեցին, թաղվեց շղթաներով, երեք մանկանց հետ:

Աստված, որ Իրեն հուսացողներին զորություն է տալիս, փառավորում փառավորիչներին՝ Նրան փառք և զորություն հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԲԱԲԵԼԱՍ ՄԵԾԻ ԵՎ ՈՒԹՍՈՒՆՉՈՐՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աքսիմիանոս թագավորը մտավ Նիկոմիդիա քաղաքը, զոհ մատուցեց Ապողոնին և երբ վերջացրեց պիղծ գործը՝ ելավ կռոց տաճարից: Եվ ելնելիս՝ նրան մոտեցան Ապողոնի Արտեմիոս և Փիբիանոս քուրմերը և ասացին. «Ինքնակա՛լ տեր, դու մեծ հոժարությամբ զոհ ես մատուցում աստվածներին և բազում ուրիշների աշխատում ես նույնն անել տալ: Որի շնորհիվ մեր աշխարհը խաղաղությամբ է ապրում, միշտ ու հանապազ հաղթություն բերելով քո թագավորությանը: Իսկ այժմ մեր քաղաքում ոմանք կան, որ քրիստոնյա են կոչվում և իրենց ամբարշտությամբ չեն ենթարկվում ձեր թագավորության օրենքներին, այլ հայհոյում են աստվածներին և երկրպագում են ինչ-որ խաչվածի, որին Աստված են անվանում, և ասում են, թե երկնքում է բնակվում և իշխում է բոլորին, որ երկրի վրա են: Այսպես խաբում են շատերին, և զոհ չեն մատուցում մեր աստվածներին, չեն պատվում մեր տոները: Բայց հակառակ քո թագավորության, հպարտանում են և աղոթում, որ ձեր թագավորությունը փոխվի: Արդ, այսօր կա մի ժպիրհ ծերունի՝ Բաբելաս անունով, որ իր հպարտությամբ միշտ չարախոսում է մեր աստվածներին: Եվ իր ձեռքի գրքով շատերին դարձնում է իր չար վարդապետության աշակերտներ: Եվ չեղում է նրանց միտքը՝ չհավատալ աստվածների կրոնին, այլ միայն հետևել Խաչյալի օրենքին և երդվել Նրա անունով, և ոչ դևերի զորությամբ: Եվ հելլենական ուսմանց փոխարեն, որով մանուկները հարգում են վարդապետությունը, ինչ-ինչ առասպելներ է սովորեցնում մանուկներին, որոնք քրիստոնյաները սուրբ երգ և սաղմոս են անվանում իրենց մոլորությամբ: Եվ բոլոր անգամ կանայք այսպիսի ուսումով են կրթում իրենց զավակներին՝ այն մարդու միջոցով: Այդ ծերուկի մոլեգնությունն

այնքան ուժեղացավ, որ ոչ միայն արու մանուկներ են գնում նրա մոտ ուսանելու, այլև աղջիկներ են շտապում նրա վարդապետանոցը: Եվ այժմ, ինքնակալ տեր, դու մի թույլ տուր, որ զորանա այդ մոլորությունը, թե ոչ՝ նա կլինի անարգանք աստվածներին և արհամարհանք քո թագավորությանը»:

Երբ թագավորն այս լսեց քուրմերից՝ Արտեմիոսից ու Փիբիանոսից, լցվեց զայրույթով և իսկույն զինվորներ ուղարկեց բռնելու Բաբելասին՝ երեխաների հետ, [հրամայեց] բոլորին արգելափակել հենց վարդապետանոցում և պահել զգուշությամբ, միայն Բաբելասին բերել իր մոտ:

Եվ երբ զինվորները կատարեցին հրամանը, երանելի ծերունին բերվեց թագավորի առաջ՝ ձեռքերը ետ կապած: Կատաղած թագավորը նստած էր Ապողոնի տաճարի դռան առջև, այնտեղ, ուր լսեց այն քուրմերի հիշյալ խոսքերը: Սրբին տեսավ, խոժոռադեմ նայեց նրան և ասաց այսպես. «Դո՞ւ ես Բաբելասը, որ արհամարհում ես աստվածների զորությունը և զոհ չես մատուցում նրանց: Այս դեռ քիչ է, նաև անզգամ կանանցից հափշտակում ես անմեղ մանուկներին և ինչ-որ բարբաջանքներ սովորեցնում, որոնք և աստվածային երգեր ես անվանում, և մեր օրենքներից չես պատկառում, և սպառնալիքներից չես վախենում, այլ նստում ես հրապարակներում և հնչեցնում քո խոսքերը նրանց ականջներին, որ և չարաչար տանջանք է պատճառում լսողներին: Կամ դու չե՞ս լսել, թե ինչպես քո հիմարությանը տենչացող լինելով՝ անաչառ դատաստան կրեցին մեր դատավորներից: Ոմանք հրի և ոմանք սրի մատնվեցին, իսկ մյուսները ծովը նետվեցին, այլք գազանների կերակուր եղան և գերեզմանի չարժանացան նրանց դժբախտ դիակները: Այժմ դու ի՞նչ կասես այս առթիվ, ո՛վ չարագլուխ ծերուկ, կհրաժարվե՞ս քո հիմար կրոնից և կպաշտե՞ս անմահ աստվածներին, կերկրպագե՞ս նրանց: Եվ ինչի համար մեղք գործեցիր նրանց դեմ, մեր հանդարտ ներողամտությունից օգտվելով, զոհ մատուցելով կհաշտեցնես նրանց, բարիք գործելով քո սպիտակ մազերին և հանգստով ու փափկությամբ կապրե՞ս: Եվ ոչ միայն սա,

այլև դիմոսական գանձեր պարգև կստանաս առատորեն մեր թագավորությունից, բազում հարստություններ կստանաս, որ չասես՝ ծեր եմ և չեմ կարող իմ անձն ապահովել կենցաղային կարիքներով, և դրա համար հոժար եմ մահանալ: Արդ ի՞նչ կասես սրան»: Պատասխան տվեց երանելի Բաբելասն ու ասաց. «Ես, ո՛վ թագավոր, իմ մանկությունից ի վեր պաշտում եմ ճշմարիտ Աստծուն և նրա կրոնով հասա մինչև այս խորին ծերությունը, որ տեսնում ես ինձ նույն բարեպաշտությամբ վառված: Այժմ անցավոր կյանք ցանկանալով ուրանա՞մ իմ Տիրոջը ու Աստծուն, Նրան, որ Իր ողորմությամբ ստեղծեց ինձ որովայնից, քարերին ու փայտերին, մարդկանց ձեռքով ստեղծված անշունչ մեռելների՞ն երկրպագեմ»: Մաքսիմիանոսն ասաց. «Չեմ ների քո բարբաջանքը, որ թշնամանում ես անմահ դից, այլ կհրամայեմ քարերով փշրել ոսկորներդ, որ գոնե այդպես իմաստնանա քո խելագար ծերությունը, եթե այդպես պիտի խոսես թագավորների առաջ»:

Եվ հրամայեց իսկույն ծեծել նրա ծնոտը, մինչև ջախջախվելով մանրացան այտոսկրները, և արյունը հոսում էր ծնոտով ու բերանով: Իսկ երանելի ծերունին մեծաձայն աղաղակեց և ասաց. «Գոհանում եմ Քեզնից, Քրիստոս Աստված իմ, որ այսպես բարեհաճելով Քո ծառայիս զորացրիր այս կռիվների մեջ, արիաբար մարտնչելու հավատի համար՝ ընդդեմ անօրեն այս թագավորի: Ահա Քո ամենազորությամբ ձիթենու նման նորագեղ կանաչեցի, դալարանալով կտրելուց հետո, և դրախտի նորատունկ ծաղկի նման եմ: Քարերի հարվածները համարում եմ ծերացած և հնացած մարմնիս անդամների փառքի նորոգում, որովհետև հավատում եմ, որ նորեն կընդունեմ սա Քո փառավոր գալստյանը»:

Մաքսիմիանոսը տեսավ, որ տանջանքի մեջ այսպես գոհանալով դիմում է Քրիստոսին, ասաց. «Ո՛վ պիղծ և հանդուգն ծերուկ, դեռևս խաչվածին քեզ մարտակի՞ց ես հրավիրում, չե՞ս զգում երեսիդ ոսկորների ջախջախումը և չե՞ս տեսնում արյանդ հորձանահոս կարկաչումը քո բերանից: Դրա համար ավելի ծանր տանջանքի կենթարկեմ քեզ, որ գո-

նե դրանով հասկանաս, որ քո Աստված անվանածը չի կարող օգնել նրանց, որ կդատապարտվեն թագավորներից»:

Այս ասելով՝ հրամայեց առավել ևս հարվածել նրա թիկունքին ու չորս կողմը, նույն քարերով: Իսկ երանելի Բաբելասը այս բոլոր տանջանքներն ընդունում էր անտրտունջ, հեզ ու անխռով ձայնով սաղմոսում էր այսպես. «Տե՛ր է իմ օգնականը, և ես չեմ վախենում՝ մարդն ինչ կանի ինձ: Տե՛ր է իմ օգնականը, և ես կտեսնեմ թշնամիներիս: Բարիք է՝ հուսալ Տիրոջը, քան մարդկանց, բարի է հուսալ Տիրոջը, քան իշխաններին» (Սաղմ. ՃԺԷ 6-9): Մաքսիմիանոսն ասաց. «Երդվում եմ աստվածների փրկությամբ, սուտ չասացին քո մասին Արտեմիոսն ու Փիբիանոսը, թե ինչ-որ առասպելներ շուրթերին սուրբ երգ և սաղմոս անվանելով արտասանում է, որ և ռամիկներին և անզգամներին կարող է խաբել: Արդ, ահավասիկ մեր լսելիքին նույնպես այսպիսի խորամանկություն է բարբաջում և մեզ ևս նույն երգով խաբել կամենալով թմրեցնում է մեր ականջները»: Եվ սուրբը, նայելով նրան, ասաց. «Ճիշտ է ասում աստվածային Գիրը, թե «Հիմարը հիմարություն է խոսում և նրա սիրտը անօրենություն գործում» (Եսայ. ԼԲ. 6): Եվ ինչն է պատճառը, ո՛վ Մաքսիմիանոս, որ չես գիտակցում, որ մեծ և հզոր է քրիստոնյաների Աստվածը, և ոչինչ են համարվում հեթանոսների աստվածները, որոնց սպասավորում ես, կործանման տանելով քո թագավորությունը: «Որովհետև հեթանոսների բոլոր կուռքերը,-ասում է,- դև են, իսկ մեր Տերը երկինքն արարեց» (Հմմտ. Սաղմ. ՂԵ. 5):

Այնժամ Մաքսիմիանոս թագավորը զայրացավ, նրան տվեց Պրիսկեղիոս դատավորին և հրամայեց պարանոցին ծանր շղթա դնել և ոտքերը պնդել փայտերով: Եվ երբ դատավորն ասածը կատարեց՝ երանելի Բաբելասին տարան բանտ, թագավորը հրամայեց նրան ունկնդրած բոլոր մանուկներին տանել իր մոտ: Եվ ծառաներն իսկույն կատարեցին հրամանը, գառների նման հավաքված՝ կանգնեցրին թագավորի առջև. նրանք թվով ութսունչորս էին, արու և էգ, որոնց անուններն են՝ Թեոփիլոս, Պետրոս, Փիլիպոս, Սերապիոն, Սևերիոս, Զուլիանոս, Աղեքսանդրոս, Ագաթոն, Մովիտոս, Սատգիպնեոս, Տիրանեոս, Կյուրիա, Սոփի, Եվսեբիա, Թեոդոտի, Փափստուհի, Արտեմիոս, Մալիկիս, Մաքսիմոս, Ամնոնիոս, Սերապիոս, Նեոփիտոս, Տորիոն, Պիկիլիանոս, Կինաբիոս, Բիտոն, Դոնատոս, Բիքտորիոս, Դուլկիտիոս, Դորոթեոս, Եվտիքիոս, Փիլիպոս, Զենոբիոս, Եվգրաբիոս, Անտոնիոս, Քրիստարիոս, Լիբիոս, Անտիգոնոս, Գենեթլիոս, Թեոդուլե, Սքոլաստիգոս, Թեոփիլուհի, Պատրիկուհի, Թեռիոս, Թեոդորա, Փլորենդիոս, Գլիգերիոս, Գելսիոս, Պատրիկիոս, Ստեփանոս, Բամբիանոս, Ուլանլենդինոս, Թեոդորոս, Եվտիքոս, Եփսեբիոս, Եվագրիոս, Սևերիանոս, Ղևոնդիոս, Մարկիանոս, Փոտիոս, Փիլիկիրոս, Դիոնիսուհի, Սիրմբլիա, Դիոմիտիոս, Նեոփիտոս, Իպատիոս, Ակակիոս, Զոտիկոս, Տրիփենա, Փիմինոս, Դոմնա, Պանքրիոս, Մարկոս, Արքելիոս, Իրինոս, Հուպելիոս, Ասկանիոս, Ելևթերիոս, Այետիոս, Ամովսիոս, Դավնադոս, Անտիգոնոն, Իպատիոն, Փերմոն:

Արդ, սրանք բոլորը, երբ բերվեցին թագավորի առջև, նրանցից հետո գալիս էին իրենց մայրերը և արտասվելով քաջալերում էին նրանց, որ հաստատ մնան իրենց ուսուցչի հավատին: Եվ երբ Մաքսիմիանոսը տեսավ նրանց, ժպտաց նրանց դեմ և իր խորամանկությամբ քաղցր ձայնով սկսեց խոսել այսպես. «Որդյակնե՛ր իմ, լսեցե՛ք ինձ, որպեսզի ապրեք և բարություն վայելեք: Թեպետ ձեր ուսուցիչը, որ ձեզ սովորեցնում էր, ուշ և հազիվ ճանաչեց աստվածների ճշմարտությունը, բայց հետո երկրպագեց նրանց, ինչպես և բոլոր մարդիկ: Ես լսել եմ, որ ձեզ ծեծում էր և տանջում հանդգնաբար, միշտ ձեզնից պահանջելով քրիստոնյաների գրքերի նանիր ուսմունքը: Դրա համար բարկացա նրա վրա, բանտարկեցի նրան, որ այլևս չկարենա ձեզ ծեծել: Այժմ մտե՛ք աստվածների տաճարը, երկրպագեցեք նրանց և գնացեք խաղաղությամբ ձեր մայրերի մոտ, որովհետև տեսնում եք, թե ինչպես ողորմագին կականում են ձեր ետևից»: Թագավորի այս բոլոր ողոքական խոսքերին չպատասխանեցին սուրբ

մանուկները, միայն յուրաքանչյուրը նրանցից սկսեց ասել՝ «Ես քրիստոնյա եմ»:

Այնժամ թագավորը բարկացավ, հրամայեց հեռացնել նրանց իր մոտից: Ապա նրանցից տասը երեխայի ընտրելով, որ մյուսներից համեստ էին թվում, և նրանք կկարենային պատասխանել իր հարցերին, բերին կանգնեցրին նրա առջև: Մաքսիմիանոսն ասաց նրանց. «Գիտե՞ք, որդյակներ, թե ինչու ձեր բոլոր ընկերներից ընտրեցի ձեզ՝ իբրև իմաստուն մանուկների, և կանգնեցրի իմ առջև: Արդ, մի՛ նմանվեք ձեր ուսուցչին ապիկարությամբ, այլ մոտեցեք, երկրպագեցեք աստվածներին և բազում պարգևներ կստանաք ինձնից, արծաթե և ոսկե գանձեր, և մեծ ուրախությամբ կարձակվեք ձեր տները, իսկ եթե չհնազանդվեք ինձ, կհրամայեմ կտրել ձեր գլուխները և ձեր դիակները շներին գցել»: Նրանցից մեկը, որի անունը Ամովս էր, պատասխանեց. «Մենք քրիստոնյա ենք և պիղծ դևերին չենք երկրպագի. ի՛նչ ուզում ես՝ արա իսկույն: Ահա պատրաստ ենք մեր վարդապետի օրինակով»: Մաքսիմիանոսն ասաց. «Դրան վերցրեք, թակեցեք թիկունքն ու կողերը, որպեսզի սովորի տղամարդավարի և ոչ մանկորեն խոսել թագավորի առաջ»: Եվ երբ սա այսպես տանջվեց, առաջ բերին մյուսին, որի անունը Դոնադոս էր: Մաքսիմիանոսն ասաց. «Տեսա՞ր քո ուսումնակցին, թե ինչպես չլսեց ինձ և մատնվեց անհնարին տանջանքի: Արդ դու մի՛ նմանվիր նրա անմտությանը, այլ հնազանդվիր ինձ և պաշտիր աստվածներին և անցիր գնա խաղաղությամբ քո ծնողների մոտ. գիտե՞ս հիմա ինչպես են տրտմել ուշանալուդ համար»: Դոնադոսը պատասխանեց և ասաց. «Ես քրիստոնյա եմ, ինչպեսև Ամովս աշակերտակիցս, և չեմ խաբվի քո փաղաքշանքից, և չեմ վախենա քո սպառնալիքից, և չեմ ուրանա իմ Աստծուն ու տիրոջը»:

Այնժամ Մաքսիմիանոսը բարկությամբ լցվեց, և նրա երեսի գույնը փոխվեց, և ասաց. «Դրան ևս վերցրեք, որովհետև սա ևս բռնված է այն ծերուկի խաբկանքով»: Եվ սուրբ մանկանը տանջեցին թագավորի անողորմ սպասավորները, և նրա արյունը հոսելով իջնում էր գետնին, և նա չէր պատասխանում բռնակալին, այլ միայն աղաղակում և ասում էր. «Ես քրիստոնյա եմ»: Եվ թագավորը հրամայեց նրան գցել տան նկուղը: Բերել տվեց և նրա մյուս ընկերներին և ասաց նրանց. «Ի՞նչ եք ուզում. լսել ինձ և պարգևներով և մեծ ուրախությամբ գնալ ձեր տները, թե չլսել և այնպիսի տանջանք կրել, ինչպես ձեր ընկերները»: Մանուկները, երբ լսեցին նրա խոսքը, մի կողմ թողին իրենց ձորձերը և միաբերան աղաղակեցին, ասելով. «Ահա պատրաստ ենք քո տանջանքներին, ինչպես մեր սուրբ եղբայրները, որ ընկած են մեր աչքի առաջ այս տան նկուղը, Ամովսն ու Դոնադիոսը, և երբեք չենք դադարի մեզ քրիստոնյա անվանել և մեր Աստծուն խոստովանելուց, ինչպես մեզ սովորեցրեց մեր երանելի ուսուցիչը»:

Այնժամ Մաքսիմիանոսը իսկույն ելավ, մեծ բարկությամբ գնաց իր պալատը, հրամայեց Պրիսկիլիանոս դատավորին՝ բոլոր մանուկներին միասին բանտ նետել և մի քանի օր պահել առանց կերակրի, միգուցե, ասում է, սովից նեղվելով, ուրանան իրենց ուսուցչի խրատը, եթե ոչ՝ իրենց վարդապետի հետ կստանան սրով մահվան վճիռ: Իսկ դատավորը, ստանալով այդպիսի հրաման՝ իր առաջ բերել տվեց երանելի Բաբելասին ութսունչորս մանուկների հետ, ասաց նրանց. «Ի՞նչ ես ուզում, ո՛վ Բաբելաս, հիմարությունից զգաստացա՞ր, որ զոհ մատուցես աստվածներին և ապրես, թե՞ դարձյալ նույն համառությանն ես մնում, որ չարաչար կորչես դու քո աշակերտներով, ինչպեսև ինքնակալը հրամայեց»: Երանելին պատասխանեց. «Ո՛վ դատավոր, դու պիտի իմանայիր մեր հավատքի հաստատությունը առաջին քննությունից իսկ, թե ինչպես իմ ծնոտի ոսկորների չարաչար ջախջախումը չսառեցրեց ինձ իմ Աստծուց, հիմա ինչ ուրիշ տանջանքով ես համոզելու ինձ՝ ուրանալ Նրան. արա շուտով՝ ինչ հրամայվեց քո ինքնակալից: Ես պատրաստ եմ ամեն տանջանք կրելու բարեպաշտության համար, որ ընդունել եմ իմ մանկությունից և պահեցի մինչև խոր ծերությունս այս, որում տեսնում ես»: Իսկ դատավորը, երբ լսեց այդ, ասաց. «Ես հույս

ունեի, թե գուցե խնայես քո թշվառական սպիտակ մազերը և այդքան մանուկներին, որ քո պատճառով կորչելու են: Դու այժմ ևս դեռ նույն համառությանն ես. այժմ ես կփափկացնեմ քո հանդգնությունը»: Եվ հրամայեց նրան պառկեցնել, ձգել չորս կողմից և արջառաջիղով խփել թիկունքին ու ներբաններին: Իսկ սուրբը տանջանքն արհամարհում էր, այլ միայն մտքի աչքերը բարձրացրեց երկինք, սկսեց այսպես ասել. «Փա՛ռք Քեզ, զուգահավասար Սուրբ Երրորդություն. Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Փառք Քեզ, Հայր Սուրբ, որ զորացրիր իմ տկարությունը Քո Սուրբ Հոգու շնորհի ուժով, և նորոգեցիր իմ ծերությունը՝ Քո Քրիստոսի չարչարանքով: Այժմ ես ի՞նչ տամ փոխարենը այն ամենի, որ շնորհեցիր ինձ, այլ միայն գոհացողական ձայնով կօրհնեմ և կփառավորեմ անբաժանելի և անիմանալի քո զորությունը՝ այժմ և հավիտյանս հավիտենից»: Սուրբ մանուկներն ևս ասացին բոլորը: Պրիսկիլիանոս դատավորը հրամայեց բոլորի գլուխները հատել, ինչպես հրամայված էր թագավորից: Եվ դահիճներն ստացան այդ հրամանը՝ նախ կտրեցին սուրբ Բաբելասի գլուխը, ապա մանկանցը՝ մեկ առ մեկ, բոլոր ութսունչորսին, որոնք բոլորը դավանելով իրենց քրիստոնեությունը՝ զոհվեցին Քրիստոսին: Եվ երկյուղած մարդիկ առան նրանց մարմինները, հանեցին քաղաքից, մի նշանավոր տեղ, որ կոչվում է Եղանդիոք, երեք գերեզման պատրաստեցին, մեծ տոն կատարեցին նրանց հիշատակին սեպտեմբեր ամսի չորսին:

Արդ, նրանք այսպես զոհվեցին ի Քրիստոս երկու հեթանոս թագավորների՝ Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի հյուպատոսության ժամանակ: Իսկ ըստ մեզ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծու Միածին Որդու թագավորությանը, Նրա հետ Հորը, միանգամայն և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՏՈՐՈՄԵՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԲ ԲԱԳԱՐԱՏԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Բագարատը սուրբ առաքյալների աշակերտն էր, սուրբ Պետրոսի միջոցով ձեռնադրվեց եպիսկոպոս և ուղարկվեց արևմուտք՝ Սիկիլի կղզին, Տորոմենի քաղաքը: Մտնելով նավ՝ իր վարդապետությամբ աստվածգիտության դարձրեց նավապետ Ուղկանիտոսին, նավավար Ագրինոսին և այլ նավաստիների: Եվ երբ նավարկեցին, կղզում գտան բոլոր քաղաքներն ու գավառները՝ կռապաշտ: Երանելի Բագարատը հեծեծանքով հոգոց հանեց, ձեռքերն ու աչքերը բարձրացրեց երկինք և Աստծուն աղաչեց այն մոլորյալ ժողովրդի համար, ասելով Ուղկանիտոսին ու Ագրինոսին. «Որդյակնե՛ր, եկեք աներկյուղ քարոզենք Աստծու անունը այս մոլորյալ ժողովրդի մեջ, ինչպես հրաման ստացա Պետրոս առաքյալից»: Եվ սկսեց Բագարատը քարոզել և ուսուցանել և սքանչելիքներ գործել Աստծու անունով: Քաղաքապետ Ոնիփոտոսը լսեց, զարմացավ և հավատաց Աստծուն՝ ժողովրդից գաղտնի: Եվ երբ [Բագարատը] գնաց Տորոմենի քաղաքը՝ գիշերով մտավ կուռքերի մեհյանը, ուր Փալկոնի և այն քաղաքի չաստվածների բագինն էր, նայեց բագինին և ասաց. «Ո՛վ Փալկոն, անզգա, խուլ և համր և կույր, ո՞վ ես դու և կամ ի՞նչ ես անում այստեղ: Եվ քանի տարի է, որ բնակվում ես այստեղ և խաբեությամբ մոլորեցնում ես իմ Աստծու ստեղծածներին և քեզ զոհ մատուցել ես տալիս, պի՛ղծ և գարշելի դիվապատկեր»: Եվ պատասխանում է դևը, որ բագինի մեջ էր բնակվում. «Երկու հարյուր և վաթսուն տարի է, որ բնակվում եմ այստեղ և ընդունում եմ զոհեր ու նվերներ Տորոմենի քաղաքից. ամեն տարի երեք անարատ տղա և յոթանասուներեք փափուկ ու գեղեցիկ կենդանի, և՛ խոյեր, և՛ նոխազներ, և՛ գառներ բազում»: Եվ երանելի Բագարատը

բարձր ձայնով ասում է. «Երդվեցնում եմ ձեզ, պիղծ դևեր, մեր խաչյալ Քրիստոս Աստծու անունից, հավաքվեցեք բոլորդ այստեղ և խուլ ու համար Փալկոնի բագինը վերցրեք մեհյանից ու ծովը նետեցեք, երեսուն ասպարեզով հեռու ցամաքից»: Եվ իսկույն սաստիկ հողմի հնչումն եղավ, մեհյանը լցվեց անգղներով ու ագռավներով, և աղաղակելով վերցրին Փալկոնի բագինը և ծովը նետեցին: Եվ ծովից մեծ աղմուկ եղավ և երկնքից ձայն եկավ. «Զորացի՛ր, Բագարա՛տ, ես քեզ հետ եմ և քեզ չեմ թողնի, մինչև որ քեզ առաքյալների և մարտիրոսների շարքը դասեմ»: Եվ ելան միասին գնացին իրենց օթևանները:

Եվ առավոտյան քուրմերը գնացին մեհյան զոհ մատուցելու, դուռը բաց գտան և ներս մտնելով Փալկոնի բագինը չտեսան, ելան հրապարակ մեծ հառաչումով կոծում էին. «Վա՜յ մեզ, որ մեր քաղաքը կործանվում է, որովհետև մեր մեծ աստված Փալկոնը անհետացել է»: Եվ բազում ժողովուրդ դիմեց դեպի մեհյանը: Պիղծ բագինը չգտան, գնացին Ոնիփոտոս քաղաքապետի տունը և աղաղակեցին դռան մոտ. «Ո՛վ պատվական իշխան, մեծ աստվածների հաստող և սիրելի, արի՛ և տես մեր քաղաքի կորուստը»: Իսկ նա խոնարհվելով պատուհանից ասում է. «Ո՛վ իմաստուն այրեր և մեծ աստված Փալկոնի քահանաներ, ձեզ ինչ եղավ, որ այդպես աղաղակում եք»: Նրանք պատասխանեցին. «Մեծ բաներ պատահեցին մեզ, քանի որ բաղձալի Փալկոնը կորավ և նրա պայծառ ու վայելուչ բագինը անհետացավ, իսկ սեղանն ու ավազանը և ոսկեկուռ աթոռը ունայն մնացին, և խորանը ոչնչացավ»: Ոնիփոտոսն ասում է. «Ո՛վ պատվավոր տանուտերեր և հարգված քահանաներ, լսեցեք ինձ և քննեցեք՝ մի՞թե մեր աստվածը ամբարտավանացավ, թողեց մեզ և գնաց այլ քաղաք: Գուցե ինչ-որ ժամանակ սովորական զոհը լիովին չեք մատուցել, և անընդունելի է համարել մեր պաշտամունքը և դրա համար ատեց մեզ և փախավ մեզնից: Այժմ գնացեք ձեր տները, իսկ ես կքննեմ և կգտնեմ պատճառները»: Եվ նրանք ասում են. «Մենք կատարում ենք սովորական ավանդները և ոչինչ պակաս չենք անում զոհ մատուցելիս, ինչո՞ւ խռովեց՝ չգիտենք: Արդ աղաչում ենք քեզ, ո՛վ փառավոր պայծառ քաղաքապետ, որ հիմնովին քննես, և եթե մեզնից խռովեց և գնաց այլ քաղաք, գնանք նրա մոտ և երկրպագենք նրան, և նա կհաշտվի մեզ հետ, կասի պատճառը, իսկ մենք կավելացնենք զոհերն ու պաշտամունքը»: Ոնիփոտոսն ասում է. «Ձեզ ասացի, որ գնաք ձեր տները, և եթե հզոր է Փալկոն աստվածը՝ մեզ կհայտնի ճշմարտությունը»: Եվ նրանք աղաղակում էին. «Ո՛վ պատվական և ստեղծարար դատավոր, մերոնց մասին խոսեցիր որպես օտար և անծանոթ աստվածների, չե՞ս ճանաչում մեր երիտասարդ ու գեղեցիկ աստված Փալկոնին՝ Փալկոնիդեսի որդուն: Ամեն ժամ գինարբուքների և ուրախության օրերին ինքդ գովում էիր ու պատմում նրանց գովելի գործերը, իսկ այժմ ասում ես՝ Եթե հզոր է Փալկոն աստվածը՝ ինքը մեզ կհայտնի»: Դարձյալ պատասխանեց Ոնիփոտոսը. «Ձեզ ասացի, ո՛վ իմաստասեր այրեր, համբերեցեք, և ես կքննեմ Փալկոնի կորուստը. կարծեմ թե գարշեց ձեզանից, որովհետև, հպարտ աստված էր»: Երբ այդ լսեցին, դադարեցին և գնացին իրենց գործերին, իսկ Ոնիփոտոսը գաղտնի կանչեց Ուղկանիտոսին և նրան հայտնեց ժողովրդի խռովությունը, և թե՝ ինչպես կորավ իրենց աստվածը, և ասաց. «Ես չգիտեմ ինչ անել»: Եվ Ուղկանիտոսը սկսեց պատմել ճշմարտությունը. «Ուշադի՛ր լսիր, քաղաքապե՛տ և դատավոր, իմացիր որ Երեքանձնյա տերությունը ամոթի մատնեց մեր գարշելի պաշտամունքը, այլևս զոհ չենք մատուցելու այս պիղծ դևերին, այլ՝ միայն կենդանի Աստծուն, որ մնում է հավիտյան, և այլևս կուռքերի պաշտամունքը չի լինի, և ոչ երազանք ու դյութություն կգուշակեն մոլորյալ մարդկանց, քանի որ երկնավոր Աստված իր Որդուն ուղարկեց երկիր, Նա մարմնանալով ծնվեց սուրբ կույս Մարիամից, որպեսզի մեզ մաքրի բոլոր անօրինություններից: Եվ այսուհետև Փալկոնիդեսի որդի Փալկոնը ոչ մեկին խաբել չի կարող»:

Եվ առավոտյան բոլոր քուրմերը հավաքվեցին միասին և սկսեցին լալ ու ողբալ Փալկոնին. «Ո՞ւր է վայելուչ գեղեցկությունը քո, ո՛վ բաղձալիդ Փալկոն, ի՞նչպես հանկարծակի անհետացար քո փափագողներից: Երանի՜ քո քահանաները եղած չլինեինք: Բոլոր աստվածները խնդությամբ ընդունեցին իրենց քուրմերի զոհերը, միայն դու չընդունեցիր և ատեցիր մեզ: Եվ մեր քաղաքապետ Ոնիփոտոսը մոռացավ քո անչափ սերը և չփնտրեց քեզ: Ո՞վ կողոպտեց քեզ մեզնից, ո՞վ նախանձեց մեր անչափ սիրուն: Ո՛վ Լիսիոս և Դիա փոքր աստվածներ և Փապոնիտա աստվածուհի՝ դուստր Իրնոսի և Արտեմիսի, քույր աստվածուհու: Արդ, ինչո՞ւ չեք խղճում մեզ և ողբում մեզ հետ գեղեցիկ ու պայծառ Փալկոն աստծուն: Ինչո՞ւ եք լռում և չեք որոնում կորսվածը»:

Եվ երբ գիշեր եղավ, Ոնիփոտոսը հագավ իր արքունական պատմուճանը և քղամիդը և գնաց Բագարատի դուռը, որովհետև դեռ նրան չէր տեսել: Նույնպեսև նա հագավ եպիսկոպոսական փիլոնը և եմիփորոնը, նստեց թիկնաթոռին, գիրկն առավ ավետարանը, խաչն ու տերունական պատկերը, որ նրան տվել էր Պետրոս առաքյալը: Եվ մտնելով ներս՝ Ոնիփոտոսը տեսավ երանելի Բագարատին բոցի նման և ձեռքի շուրջը՝ իբրև հուր, երեսի վրա ընկավ և մեծ երկյուղով երկրպագեց, ասաց. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը, որ քարոզում է Բագարատը, համոզված եմ, որ Նա է միակ Աստվածը երկնի և երկրի:-Եվ հարցրեց,-ի՞նչպես մերձենամ քեզ, քանի որ տեսնում եմ քեզ բոցավառված և քո շուրջը՝ հուր, վախենում եմ՝ դուցե այրվեմ»:

Եվ Բագարատը իմացավ, որ նա տեսել է Սուրբ Հոգու շնորհները՝ քահանաների սուրբ խորհրդյան զգեստի մեջ, քանի որ սուրբ են: Եվ ելավ հանեց եմիփորոնը, փիլոնն ու ուրարը և նստեց: Եվ Ոնիփոտոսը այլևս չտեսավ կրակը: [Բագարատը] ողջունեց նրան սրբության համբույրով և նստեցրեց իր մոտ և ջերմորեն օրհնեց նրան, և միասին ճաշակեցին բոլոր այն բարիքները, որ իր տնից բերել էր Ոնիփոտոսը: Եվ երբ ուրախացան, ելան բաց արեցին տան ձեղունը՝ պայծառ լույս ծագեց նրանց վրա, և երկյուղած, երեսնիվայր ընկան գետին: Եվ բռնելով նրանց ձեռքերից Բագարատը կանգնեցրեց նրանց ու նստեցրեց իր մոտ և մեկ առ մեկ սկսեց պատմել նրանց Հին և Նոր կտակարանները՝ Ադամից մինչև Քրիստոսի մարդեղությունը, նաև համբարձումն ու Սուրբ Հոգու գալուստը առաքյալներին: Եվ պատմածից աստվածային վարդապետությամբ լուսավորվեցին բոլորը, որ այնտեղ էին: Եվ ողջունելով բոլորին, ուղարկեց իրենց տները:

Եվ այն օրը՝ գիշերվա երրորդ ժամին երանելի Բագարատը իր ձեռքով մագաղաթին գրեց այսպես. «Լիսիո՛վն կուռքերի բագինին, ես Բագարատ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծառա, գրում եմ քեզ Տորոմենի քաղաքիս պիղծ, գազիր և գարշ փոքր աստծուդ: Երբ ստանաս գիրս և կարդաս իսկույն կատարիր ինչ ոչ հրամայում եմ. գնա՛ կորստյան տեղը՝ հրի գեհենը և արտաքին խավարը, ուր քո ավագագույն Փալկոն աստվածն է, միասին կոծեցեք ձեր կորուստը, որ այլևս չտիրեք այս քաղաքին»: Եվ թուղթը տալով Ագրինոսին՝ ուղարկեց կուռքերի մեհյանը: Եվ նա գնաց իբր աղոթելու և խնկելու, գիրը դրեց բագինին և գաղտնի փախավ, վերադարձավ Բագարատի մոտ: Գրեթե երկու ժամ հետո ձայն լսվեց աներևույթից և ասում է. «Ո՛վ Բագարատ, կենդանի Աստծու ծառա, մեզ քո սրբությունից հրամայվածը կկատարենք և կիջնենք սպանդարամետ անդունդը: Արդ, խնդա՛ և ուրախացի՛ր, համարձակ մտիր քաղաքամեջ, որովհետև այսուհետ քոնն է»: Երբ Բագարատը ձայնը լսեց, երեսնիվայր ընկավ և գոհացավ Աստծուց: Եվ իսկույն գնացին քաղաքի հրապարակը, և երկնքի աստղանշանը նրանց առաջնորդեց մինչև Ոնիփոտոսի տունը: Նա ելավ ընդառաջ, նրանց լռությամբ տարավ իր տունը և բնավ ոչ ոք չիմացավ, որ դեռևս գիշեր էր և այնտեղ քառասունք արեց: Եվ մի օր քուրմերը հավաքվեցին Ոնիփոտոսի դռանը և ասացին. «Ո՛վ դատավոր և կառուցող քաղաքապետ, մոտեցել է մեր Լյուսինոս աստծու տոնը: Հրամայիր և տոնենք մեծ պայծառությամբ, որ սա ևս չխռովի մեզնից, փախչի և կորչի՝ ինչպես Փալկոնը, և մենք

լինենք ծաղր բոլոր քաղաքացիներին և հարևաններին: Ո՛վ իշխան, կարծում ենք՝ երբ Ուղկանիտոսը Տորոմենից այս քաղաքը եկավ՝ մեր աստվածները հույժ ատեցին մեզ և չընդունեցին մեր զոհերը: Բազում անգամ դյուրությամբ հարցնում ենք մեծ և մաքուր Փալկոնի աստծուն և պատասխան չենք ստանում, և մեզ համար անօգուտ է, որ կոչվում ենք աստվածների քուրմեր»: Ոնիփոտոսն ասաց. «Ո՛վ իմաստուններ, մեր աստվածների քահանաներ, գնացեք, պատրաստեցեք բոլոր զոհելիները, և տոների ժամանակ ես նույնպես կգամ»: Եվ գնաց Բագարատին պատմեց քուրմերի ասածները, իսկ նա ձեռքերը երկինք պարզելով աղաչեց Աստծուն, որպեսզի կործանվեն մնացած կուռքերը: Եվ այն գիշեր մինչդեռ քուրմերը ննջում էին իրենց տներում կործանվեցին բագինները և բաժանվեցին բազում մասերի: Եվ երբ հասավ պիղծ տոնը պատրաստեցին բոլոր զոհելիները՝ ավելի քան Փալկոնինը, անմեղ մանուկներ և երինջներ և խոյեր, նոխազներ ու գառներ, և զարդարված քուրմերը գնացին Ապողոնի մեհյանը ու գտան բագինը կործանված ու բաժանված բազում մասերի: Սկսեցին բախել իրենց երեսները և մեծ հառաչանքով ասում էին. «Վա՜յ մեզ, ո՛վ Ապողոն, չար պատերազմ շարժվեց քո վրա, մեզ բավական չեղավ Փալկոնի կորուստը, նաև դու մեծ չարի հանդիպեցիր: Վա՜յ մեզ, որ եթե լսեն ուրիշ քաղաքներ կանարգեն մեզ որպես աստվածակորույսների: Ո՛վ մեր հզոր և պայծառ աստված Ապողոն, ինչո՞ւ կործանվեցիր ու փչրվեցիր և քո ոսկեկազմ աթոռը թափուր մնաց»:

Եվ այնտեղից ելնելով սրտաբեկված գնացին այլ՝ Դիա փոքր կուռքի մեհյանը, այն ևս գտան կործանված ու կոտրատված և սկսեցին մեծաձայն ողբալ ու հառաչել մինչև որ ձայնից մեծ ամբոխ հավաքվեց: Եվ քուրմերն ասում են. «Լացեք բոլորդ և ողբացեք մեզ հետ, քանի որ մեր քաղցր և իմաստուն աստվածները կորան և ջնջվեցին խպառ: Պատռենք մեր օձիքները, հող ու մոխիր լցնենք մեր ծոցն ու գլուխներին, բախենք երեսներս ու ճակատներս և սգանք մեր աստվածների կործանումը»: Եվ ամբողջ ժողովուրդը սկսեց լալ ու

ողբալ կուռքի կործանման համար, և բոլորը հառաչելով ու մեծ բարկությամբ գնացին Ոնիփոտոսի տունը և աղաղակում էին դռան մոտ. «Ո՛վ անարժան իշխան, չար ժամի եղար դու քաղաքապետ. դու տեսնում ես կործանված աստվածներին և անփույթ ես, չես հուզվում և չես քննում մեզ պատահած մեծ դեպքերը: Ո՛վ անհավատ և անպետք դատավոր, և քաղաքավեր, իջիր և գնա, տես քո սիրելի և բարեկամ աստվածներին, թե ինչպես աղբանոցում թավալվում են ոտքի տակ. մի տեղ գլուխը, մի այլ տեղ ձեռքը, և այլ տեղ ոտքը: Նրանք չէ՞ին, որ քեզ մեծացրին ու փառավորեցին և քո գանձատունը լցրին ոսկով ու արծաթով, դիպակով, ակնեղենով ու մարգարտով, իսկ քո շտեմարանները բոլոր բարիքներով»: Իսկ Ոնիփոտոսը բարձր պատուհանից ասում է. «Ո՛վ իմաստուն և արժանավոր քաղաքացիներ, ինչ եք ուզում, որ անեմ. դուցե աստվածային պարգևների շնո՞րհը մտավ մեր քաղաքը և կործանեց աստվածներին»: Նրանք ասում են. «Ի՞նչ բան է աստվածային պարգևների շնորհը, չգիտենք ինչ ես խոսում: Եթե մեր աստվածների սիրելին ես՝ ճշմարիտն ասա մեզ»: Եվ նա ասում է. «Շնորհքն ու զորությունները բարձունքից են»: Եվ նրանք շատ բարկացան ու ասացին. «Ո՛վ անարժան ու անպետք քաղաքավեր և մեր աստվածների թշնամի, քո կորուստն ու մահը հասել է, ինչպե՛ս կտաս մեզ պատասխան»: Ոնիփոտոսն ասում է. «Ինչո՞ւ եք բարկանում, աղմկում և դառնանում իմ դեմ մոլությամբ»: Եվ նրանք պատասխանում են. «Ոչ թե փոքր վնաս եղավ, այլ աստվածների կորուստ, և հարկ է ավելի սաստկությամբ բարկանալ, լալ ու կոծել»: Ոնիփոտոսն ասում է. «Ընտրեցեք հանճարեղ և իմաստուն այրերի և ամբողջ գիշերը թող դյուրություններ և հմայություններ կատարեն և վիճակ գցեն ու հավաստի իմանան, թե ինչու կործանվեցին աստվածները, դուցե այլ՝ ավելի հզոր Աստված մարտնչեց նրանց դեմ, ու քանի որ չկարողացան ընդդիմանալ՝ կործանվեցին»:

Ամբողջ ժողովուրդը հավանեց Ոնիփոտոսի խրատը՝ ընտրեցին դյուրության համուտ այրեր, և նրանք գնացին Լիսիով-

նի մեհյանը, քանի որ նրա բագինը կործանված չէր, և սկսեցին դյութել ու կախարդել կեսգիշերին, վիճակ էին գցում Լուսիովնի անունով: Իսկ Ոնիփոտոսը գնաց Բագարատին պատմեց ամեն ինչ, և նա ձեռքերը երկինք պարզած աղաչեց Աստծուն, որ մոլորյալ ժողովրդին սքանչելիք ցուց տա:

Եվ բազում կանայք հավաքվեցին, շրջապատեցին մեհյանը, ծափահարելով երգում-պարում էին դյութական երգեր, իսկ մեհյանի ներսում դյութերը անում էին իրենց կախարդանքը, աղաչում էին, որ բագինը խոսի իրենց հետ: Եվ ձայն լսվեց Լուսիովն կուռքից և ասաց. «Տորոմենի քաղաքիս ո՛վ այրեր, ինձնից լսեցեք ճշմարտությունը: Այսուհետև մենք ոչինչ չենք կարող անել կամ գործել: Մինչև այժմ բոլոր զոհերն ընդունում էինք և կատարում խնդրանքները: Այժմ մենք զորություն չունենք, քանի որ խիստ տկարացանք և ոչնչացանք, որովհետև այստեղ երևաց հզորագույն Աստվածը, և Նրա ահից Փալկոն կորավ և սուզվեց անդունդը, կործանվեցին Ապողոնը և Դիան նույնպես: Եվ բոլորդ գիտցեք, որ Երեքանձնյա աստվածությունը ողորմության շնորհ ուղարկեց ձեր քաղաքը»: Աղանդավոր դյութերն ասում են. «Կա՞ ավելի հզոր աստված, քան դուք: Ասա և հայտնիր մեզ ճշմարտությունը, թե ով է ավելի մեծ աստված քան դուք և Փալկոնը»: Բագինն ասում է. «Ով ստեղծեց երկինքն ու երկիրը և ով սկզբից ստեղծեց մարդուն, այժմ գթաց իր ստեղծածներին և հրեղեն սուրը ուղարկեց ու կորցրեց Փալկոնին, խորտակեց և մյուս աստվածներին, իսկ այն մարդը, որին Ուղկանիտոսը բերեց այս քաղաքը՝ նրա աշակերտն է»: Եվ նրանք ասում են. «Երբ կորավ Փալկոնը, և եկանք քեզ մոտ ու հարցրինք՝ ինչո՞ւ մեզ չասացիր այդ»: Բագինը պատասխանում է. «Եթե ուզում եք, որ նորից մեզ զորություն դա, և լինենք առաջվա նման՝ ինձ զոհ մատուցեցեք իմ սիրելի Ոնիփոտոսին»: Եվ նրանք շատ ուրախացան և ոստերով խկույն գնացին Ոնիփոտոսի տունը՝ ավետիս տալու նրան և ասացին. «Երանի է քեզ, որ ինչպես քեզ մեծարեցին աստվածները և փառավորեցին, կամենում են, որ դարձյալ քեզ

զոհ մատուցենք և դու լինես աստված կործանված աստվածների փոխարեն, և կանգնեցնենք քո բագինը ու պաշտենք քեզ»: Երբ Ոնիփոտոսը լսեց բոթալից լուրը, որ կամենում էին իրեն սպանել և զոհ մատուցել կուռքերին, փութով գնաց երանելի Բագարատի մոտ և լալով ընկավ նրա ոտքերը: Եվ նա ասում է. «Ինչո՞ւ ես լալիս, որդյակ, մի՞թե չար լուր ես լսել և տրտմել է քո սիրտը»: Ոնիփոտոսն ասում է. «Երանի թե չար բան լիներ, և ոչ դառն մահ»: Երանելին ասում է. «Մի՛ վախեցիր, որդյակ, գնա զոհաբերության, իսկ ես կգամ քո ետևից և աստվածային շնորհով հանդիմանելով կհաղթենք Աստծու անվամբ»:

Իսկ պիղծ քուրմերը փողեր փչեցին մեծ և հնչեղ, և հավաքվեց ամբողջ քաղաքի ժողովուրդը արմավենու ոստերով՝ տոնի առթիվ, և գնացին միահամուռ բռնեցին Ոնիփոտոսին, որովհետև ոչ թե ուրախ էր, այլ ողբում և հառաչում էր: Մերկացրին նրան, ձեռքերը ետ կապեցին և տարան մեհյան: Եվ գլխաբաց ու բոբիկ կանգնեցրին Լիսիոսի բագինի առաջ: Եվ Ոնիփոտոսը աչքերն այսուայն կողմ դարձրեց, որ տեսնի Բագարատին ու երբ չտեսավ՝ ողբալով ասաց. «Վա՜յ ինձ, ինչ չար ու դառն մահվան մատնվեցի, վա՜յ ինձ, որ անդունդի խորքն ընկղմվեցի, ո՞ւր ես, հայր Բագարատ, շտապ արի, ինչպես ասացիր, որ իմ հետևից գալու և փրկելու ես ինձ: Ինձ ուղարկեցիր, իսկ դու չեկար: Արդ, օգնիր ինձ, Տեր Հիսուս Քրիստոս, որովհետև քեզ հավատացի, փրկի՛ր ինձ»: Իսկ երանելի Բագարատը հյուպատոսին տվեց խաչը, իսկ Ագրինոսին՝ տերունական պատկերը, ինքը հագավ փիլոնն ու եմիփորոնը, ձեռքն առավ սուրը Ավետարանը, գնաց այն տեղ: Եվ ամբոխի մեջ տեսան Ոնիփոտոսին Լիսիովն կուռքի առջև, մերկ, գլխաբաց և բոկոտն, ձեռքերը ետևը կապած: Եվ Բագարատը ձեռքերը դեպի երկինք պարզեց, ու աղաչեց Աստծուն և ինքը վառվեց բոցի նման, և ժողովուրդը տեսավ հրի պես վառված, և ահից ընկան գետնին երեսնիվայր, և նա նրանց վրա կնքեց տերունական Նշանով, կանգնեցրեց նրանց և ասաց բագինին. «Երդվեցնում եմ քեզ, պիղծ դև, հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, փախիր այդտեղից և գնա՝ ուր

Փալկոնն է, ծովի խորքը»: Եվ իսկույն մեծ ճայթմունք եղավ մեհյանում, և բագինը օդ բարձրացավ, ընկավ ծովը: Բոլորը խիստ վախեցան, փռվեցին գետին, և նրանց վրա խաչակնքեց և ասաց. «Մի՛ վախեցեք, քանի որ պիղծ Լիսիովնը իր դևերով խսպառ կորավ»: Եվ ժողովուրդը կանգնեց և տեսավ ահավոր սքանչելիքը, որ արեց Աստված Իր ծառա Բագարատի միջոցով: Բարձրաձայն աղաղակեցին, ասես միաբերան, և ասացին. «Օրհնյալ է Բագարատի Աստվածը, հավատում ենք Նրան, որ միակ Աստվածն է»: Եվ գնացին, արձակեցին Ոնիփոտոսին, շրջապատեցին երանելին և ապշած նայում էին նրա երեսին: Եվ նա բարձրացավ մի բարձր տեղ, աղոթեց ամբողջ ժողովրդի համար: Եվ քուրմերը գնացին մեհյանները, հավաքեցին կուռքերի բեկորները, թափեցին ծովը և կործանեցին սեղանները: Իսկ երանելին հրամայեց փողեր հնչեցնել, և անթիվ ժողովուրդ հավաքվեց: Նրանց հետ գնացին փոքր մատուռը, որ կառուցել էր Ոնիփոտոսը: Նա հրամայեց յոթ օր մաքրվել, մկրտեց և սովորեցրեց կյանքի Բանը:

Նրանցից յուրաքանչյուրը իր տնից բերեց սպիտակ հանդերձներ, նոր և մաքուր, ինչպես նրանց պատվիրեց սուրբը, և մոմեղեն, ջահեր ու կնդրուկներ, տարավ նրանց մերձակա գետը և մկրտեց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: [Նրանք] քսանչորս հազար հոգի էին. վառած մոմերով նրանց հագցրեց նոր և սպիտակ զգեստ և հաղորդեցրեց Աստծու Որդու սուրբ և պատվական մարմնին և արյանը, և բոլորը, ովքեր լուսավորվեցին, տեսան Սուրբ Հոգու շնորհը՝ սպիտակ աղավնու նմանությամբ, իջավ ջրերի մաքրությանը ու նորից թռավ երկինք: Եվ այն քաղաքում մեծ ուրախություն եղավ: Եվ ութ օր սովորեցնում էր լուսավորյալներին և ուղարկում իրենց տները, ժողովրդի առաջ սքանչելի նշաններ էր բերում և աղոթքով բուժում էր կույրերին, խուլերին, համրերին, կաղերին ու անդամալույծներին, գոսացածներին ու դիվահարներին, ջերմոտներին ու բոլոր հիվանդներին:

Նրա համբավը հասավ կղզու բոլոր քաղաքներն ու գավառները, և գնում էին նրա մոտ, իսկ նա վարդապետությամբ նրանց բերում էր աստվածգիտության, մկրտում

էր նրանց: Եվ ամբողջ կղզին դարձրեց Քրիստոսի ճշմարիտ հավատին: Եվ ամեն օր մկրտում և ուսուցանում էր նրանց: Նույնպես կանանց և մանուկներին մկրտում էր գետի այլ տեղում, և մկրտեց անթիվ հազարավոր մարդկանց: Եվ Տորոմենի քաղաքում մկրտեց քառասուն հազար, իսկ այլ գավառներում ու քաղաքներում՝ հինգ հարյուր հազար:

Ու մի օր մինչդեռ ժողովրդին ուսուցանում էր, երևաց սատանան եթովպացու նման, բազում սևադեմ դևերով, կանգնեց մի քարընկեց հեռու և բարձրաձայն ասաց. «Ո՛վ Բագարատ, ինչո՞ւ եկար, կամ ո՞վ բերեց քեզ այս քաղաքն իմ, և ինձ զրկեցիր իմոնցից, ինձնից հափշտակեցիր իմ բարեկամներին ու ընծայեցիր քո Աստծուն: Ավերեցիր իմ տները և իմ պաշտելի կուռքերը ծովը նետեցիր: Վա՛յ ինձ, սիրելիներ իմ և սպասավորներ, քանի որ դրա գալուց հետո ինձ գերի դարձրեց և իմ սիրելի Ոնիփոտոսին, որին փառավորեցի ու մեծարեցի, դարձրեց իմ թշնամին»:

Եվ երբ լսեց երանելի Բագարատը՝ ասաց ժողովրդին. «Իմացեք, որդյակնե՛ր իմ, որովհետև եկաք Քրիստոսի կոչմանը՝ սատանան կրճտում է իր ատամները մեր դեմ և ինչպես առյուծը դարանից՝ գոչում է մեզ [վախեցնելու]: Բայց,որ զինվորագրվել եք Քրիստոսի գնդին՝ արիաբար մնացեք ընդդեմ թշնամու»: Եվ ժողովրդին հրամայեց դառնալ արևմուտք, սատանայի դեմ և ասաց. «Թքեք նրա երեսին»: Եվ երբ թքեցին, ասաց. «Երեք անգամ հրաժարվեցեք սատանայից»: Եվ երբ հրաժարվեցին՝ սրած հրեղեն նետեր երևացին և հալածեցին սատանային դևերի հետ ու անհետացրին: Եվ հրամայեց ժողովրդին դառնալ արևելք ու երեք անգամ ասել. «Խոստովանում ենք Քրիստոսին՝ ճշմարիտ Աստծուն»: Եվ համբուրեցին Ավետարանը, տերունական պատկերն ու խաչը և Սուրբ Հոգով լցված մեծ ուրախությամբ գնացին իրենց տները՝ լուսավորիչ Բագարատից լուսավորված: Իսկ սուրբը Բագարատը Ագրինոսին՝ քահանա, իսկ Ուղկանիտոսին սարկավագ ձեռնադրեց, և Ոնիփոտոսին ասաց. «Իմ մահից հետո Ագրինասին ուղարկիր Հռոմ՝ սուրբ Պետրոս առաքյալի մոտ, ուր նրան կձեռնադրի եպիսկոպոս՝ իմ փոխարեն, իմ աթոռին

և այս քաղաքին»: Եվ դարձավ Ագրինոսին ու ասաց. «Որդ-յա՛կ, ինչպես ինձ տեսար և սովորեցիր, նույնպես դու հովվիր Քրիստոսի նոր հոտն այս»:

Սուրբ Բագարատի մահվան մասին

Քաղաքում կար մի հարուստ մարդ, որի անունը Արտա-գորոն էր: Սատանան կապեց նրան, և միայն նա էր գաղտնի պաշտում կուռքերին: Պատրաստեց փոքրիկ արձաններ և իր մոտ թաքցրած պահում էր, և ամեն ժամ մոլում էր իր մտքում և սպառնում Քրիստոսի քահանայապետ սուրբ Բագարատին: Ու մի օր երանելիին մենակ գտավ, որ աղոթում էր: Հանեց սուսերը և սպանեց ամենագովելի սուրբ Բագարատին. հուլիս ամսի 14-ին, և փախավ իր տունը, որ ոչ ոք չիմանա: Բայց Աստված անմիջապես հայտնեց Ոնիփոտոս իշխանին: Նա բռնեց անօրեն Արտագորոնին, ձեռքերը ետևը կապեց և այն-քան ծեծեց արջաջիլով լանջն ու թիկունքը, մինչև քայքայ-վեց ամբողջ մարմինը: Եվ հրով այրեց գլուխն ու մորուքը և սևացրեց երեսը, առավ իր սուրը, նրան սպանեց սրով, կտրեց նրա գլուխը ու ծովը նետեց, իսկ մարմինը հրամայեց գցել շներին ու ագռավներին: Եվ արծաթե տապան պատրաստեց, մեծ պատվով ու անուշահոտ խնկերով, մաքուր կտավով պա-տեց պատվական մարմինը ու դրեց արծաթե տապանը և վրան կառուցեց գեղեցիկ մատուռ սուրբ Բագարատի անունով: Եվ Ագրինոս քահանան սրբի հրամանի համաձայն ուղարկվեց Հռոմ՝ Պետրոս առաքյալի մոտ, և բոլորը պատմեց մեկ առ մեկ: Եվ [առաքյալը] ձեռնադրեց նրան եպիսկոպոս, նա վե-րադարձավ Տորոմենի, սուրբ Բագարատի փոխարեն նստեց աթոռին: Իսկ Ոնիփոտոսը մինչև իր մահը ծառայում և սպա-սավորում էր եկեղեցուն և տապանին: Եվ սուրբը բարեխոս էր առ Քրիստոս ոչ միայն Սիկիլիա կղզուն, [այլև նրանց,] ովքեր կատարում են սրբի հիշատակը փառավորելով ամենա-սուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԲԱՍՍՈՍԻ ԵՎ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐ ԹԵՈԳՆԵՍԻ, ԱԳԱՊԻ ԵՎ ՊԻՍՏԻՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աքսիմիանոս թագավորը եկավ մի երևելի քաղաք, որ կոչում են Բիքով, որն արևմուտքում է և Գալի-լեայի ու Հռոմի միջև է: Կանչեց աստվածների քուրմ կոչ-վածներին և մեծ ուրախություն արեց: Խնջույքի ժամանակ ասաց մեկին, որ նրանց պիղծ պաշտամունքի առաջնորդն էր և առանց որին զոհ չէին մատուցում աստծուն և որի անու-նը Մարկեղինոս էր. «Մեծ աստվածների հայր, քո կամքով են լինում ամբողջ աշխարհում զոհաբերություններն աստ-վածներին, և մեծապես կկատարվեն»: Մարկեղինոսն ասաց. «Քո քաջությունը թող հրամայի գրով օրենք հաստատել, որ ամեն մարդ զոհ մատուցի աստվածներին, առավել ևս Արա-մազդին և Ապողոնին, որոնք քո քաջությունը պահում են խաղաղության մեջ»: Եվ թագավորն արեց՝ ինչպես ասաց [Մարկեղինոսը], գրավոր օրենք տվեց Բիքովին՝ սնոտի մո-լորության մասին, քանի որ քաղաքը երևելի էր, այնտեղից առաքեց հրամանը ամեն տեղ: Այնուհետև մեծ տրտմություն եղավ քրիստոնյաներին, քանի որ շատերը հրաժարվում էին ճշմարիտ հավատից ու Քրիստոսի հույսից:

Հրամանը եկավ-հասավ Եդեսա քաղաքը, որ առաջին Մա-կեդոնիան է, Էլլադայի բդեշխին [...] Մակեդոնիան, որ Եդե-սան էր: Նրանք ընդունեցին հրամանը, գրավոր առաքեցին բոլոր քաղաքները, հրամայեցին մեծ ճշտությամբ կատարել կուռքերի զոհաբերությունը, իսկ անհավաններին չարաչար տանջանքով սպանել: Այնուհետև քրիստոնյաներից շատերը, չդիմանալով սպառնալիքներին, ամբարշտության էին դառ-նում: Նրանց միտքը խավարած էր ստույգ Լույսի հանդեպ: Իսկ ովքեր աստվածային Սիրով ճշմարտված էին ի Քրիստոս՝ խրախուսված համարձակվում էին խոստովանել ճշմարիտ Աստծուն:

Քաղաքում մի բարեպաշտ ու Աստծու երկյուղած, երևելի մեծ ազգից մի կին կար, որի անունը Բասսա էր: Ուներ երեք որդի. առաջինի անունը Թեոգնես, որ նշանակում է Աստվածապաշտ, երկրորդինը՝ Ագապիս, այսինքն Սիրուն, և երրորդինը՝ Պիստիս, որ թարգմանվում է Հավատարիմ: Իսկ նրանց հայրը քրմապետ էր, ծանոթ թագավորին և սիրելի՝ իշխաններին և քաղաքում մեծարված: Նրա անունը Վաղերիոս էր, որ բազմիցս կռվել էր կնոջ հետ և չէր կարողացել կռապաշտության դարձնել: Եվ մի օր, որ հեթանոսների տոն էր, իշխանները հրամայեցին զոհ մատուցել կուռքերին, իսկ Վաղերիոսը՝ Բասսայի ամուսինը, առաջ գալով՝ նախ ինքն է մատուցում զոհեր կուռքերին, ապա շատ ուրիշներ նրանից հետո: Իսկ երանելի Բասսան, իր երեխաներին տանելով մի կողմ, հուսացողներին հիշեցրեց Քրիստոսի հավատքը՝ պաշտել սուրբ Երրորդությանը, որով մնացին խոստովանեցին և զոհվեցին, իսկ այլ աստվածներ հեթանոսների ոչինչ են, և մարդիկ դևերից խաբված պաշտում են դրանց և չգիտեն ճշմարիտ Աստծուն և իրենց պարգևատուին երկնքից երկինք. ովքեր կան և մնում են Քրիստոսի գալստյան հատուցումին: [Ասում է]. «Եվ ձեր հայր Վաղերիոսը խավարած լույսի և ճշմարտության դեմ, նրանց ժառանգությունն է և կորստյան խորքում բռնված չհամաձայնեց գալ ճշմարիտ լույս Քրիստոսի մոտ: Արդ, մի՛ հավանեք մոլորեցնողին՝ գթալով ձեր հորը, որ համաձայնեց լինելու դժոխքի ժառանգորդ: Որովհետև ով սիրում է հորն ու մորը՝ առավել քան Քրիստոսին՝ արժանի չեն նրան, մանավանդ Աստծուն ուրացողները (հմմտ. Մատթ. Ժ. 37): Որդյակնե՛րս, հիշեցեք իմ հոգևոր սնունդը, որ ձեզ ավետարանով ծնեցի, թեպետ ես ըստ մարմնի ծնող և սնուցող եմ, հասցրել եմ այդ հասակին, իմը չեմ համարում ձեզ, այլ ձեր և բոլոր արարածների Ստեղծողինը: Այժմ աղաչում եմ ձեզ, որդյակնե՛րս, ընթացեք դեպի հավիտենական կյանքի հույսը, ոչինչ են բռնավորների սպառնալիքները: Բոլոր երկրավորները, որ երևում են՝ անցավոր են ու ժամանակավոր, իսկ ձեր և իմ ցանկությունն է խնդրել Նրա կամքը և պատվիրանի պահպանությունը, և այսպես մեռնել Նրա կամքի համաձայն»:

Եվ երբ ավարտեցին կուռքերին զոհ մատուցելը և պղծության պաշտամունքները, և Վաղերիոսը տեսավ, որ կինն ու որդիները չմոտեցան զոհերին, բարկացած՝ իր որդիներին ատյան տարավ և աղաչում էր իշխաններին, որ իր որդիներին ստիպեն պաշտելու կուռքերին, որ ինչքան հնարավոր է համոզելով կամ սպառնալով և կամ տանջանքով համոզեն նրանց սնոտի չաստվածներին պաշտելու: Եվ բռնավորները հարցաքննեցին, թե ինչու չուզեցին լսել և զոհ մատուցել: Եվ մեծ որդին ասում է բռնավորին. «Քեզ հայտնի լինի այս, որ մի օրինակով և նույն կրոնով պահում ենք Քրիստոսի օրենքը և կատարում Նրա պատվիրանները, նաև մայրական խրատը և ոչ հայրականը, որ չի ճանաչում Աստծուն. նրա միտքը խավարած է պիղծ դևերից, իսկ Աստծու իմաստությունը մեզ առաջնորդում է իր հրամաններին, որպեսզի արդարանալով հավատքով Լույսի որդիներ լինենք և երանելի սուրբ հայրերին ժառանգակից երկնքի արքայության մեջ: Նրանք ճշմարիտ հավատով ծնեցին մեզ՝ հավիտենական Կյանքի հույսին: Ունենք և մեր պարկեշտ ու քրիստոսասեր մոր նույն խրատը և խոստովանում ու փառավորում ենք ամենակալ Աստծուն: Այժմ դուք շտապեցեք տանջանքների միջոցով ընտիր երևացնել մեզ, քանի որ պատրաստ ենք մեր մարմինները մահի մատնել հանուն Քրիստոսի, որպեսզի դատաստանի օրը մեր հոգիները լուսավոր հույսին ժամանեն»: Իշխանները լսեցին, հրամայեցին նրան կախել և քերել, իսկ մյուս եղբայրներին՝ մոր հետ մոտը լինել և նայել: Եվ բդեշխն ասում է նրան. «Ի՞նչ է քո անունը»: Եվ նա պատասխանում է. «Իմ մայրը գեղեցիկ անուն է դրել՝ Թեոգնիս, որի հետ իսկապես գնացել եմ՝ նոր գիտություն առ Աստված, ճգնության միջոցով ջանում եմ հաստատվել դրանում և հավատում եմ, որ հաղորդ կլինեմ սրբոց մասունքին»: Բդեշխն ասում է. «Ինչո՞ւ համոզիչ խոսքերով խաբված մանկան պես ուզում եք ձեզ կյանքից հանել»: Եվ հրամայեց քերել նրան: Ու մինչդեռ չարչա-

ում էին՝ քարոզիչն աղաղակում էր. «Զոհ մատուցիր Արամազդ և Ապողոն մեծ աստվածներին և ապրիր»: Իսկ սուրբ նահատակն ասում է իշխաններին. «Տկար են ձեր սարքերը, ո՛վ պիղծ արբանյակներ սատանայի: Երդվում եմ Քրիստոսի նահատակների երանելի մահով, որ չեմ վախենում ձեր տանջանքներից՝ հանուն Աստծու ճշմարտության: Այլ մեծամեծ խոշտանգումների միջոցով կհաղթեմ ձեր չար հնարքներին»: Եվ քերանքը հասավ մինչև սրբի ոսկորները, ոսկորները մերկացան: Երանելի Բասսոսը տեսավ և ասաց. «Նահատակվիր, որդյա՛կ, ընդդեմ սատանայի հագած Քրիստոսի զենքը, քո ապականացու մարմինը տուր այդ բռնավորներին, որպեսզի Քրիստոսի գալստյանը վերստին ստանաս դա»: Եղբայրները նույնպես ասում էին. «Պինդ կաց, տե՛ր, մեզ ևս ընդունիր միաբան, քանի որ պատրաստ ենք և մենք քեզ հետ գնալ Տիրոջ ճանապարհը, ընթանալ քո շավղով, որովհետև այսուհետ դու հոր տեղ ես մեզ համար»: Իսկ Քրիստոսի երանելի նահատակը աչքերը վեր բարձրացնելով ասաց. «Աստվա՛ծ, ինձ տուր կատարյալ համբերություն և ավարտիր իմ ընթացքը, որ ժառանգորդ լինեմ սուրբ խոստումներին, որ խոստացար քո սիրելիներին»: Այս ասելով փառավորեց Հորը Որդուն և Սուրբ Հոգուն, ասաց ամենը և այդպես ավանդեց հոգին:

Եվ բդեշխը կանչեց երկրորդ եղբորը, ասաց. «Ի՞նչ է քո անունը»: Նա պատասխանեց. «Ճշմարիտ Աստծու մտերիմ աղախին իմ մայրը Ագապիոս կոչեց ինձ: Այդ անվանը վիճակված աշխատում եմ չզրկվել իմ Աստծու սիրուց, այլ Նրան սիրելի երևալ»: Իսկ բդեշխը մեղմորեն վարվեց մանկան նկատմամբ. «Ո՛վ մանուկ, քո դեղեցկությամբ զարմացած աստվածները մեզ հորդորում են գթալ, որովհետև խղճում են քեզ՝ քո հոր ուղիղ վարքի համար: Արդ, քո եղբոր մոլորությամբ մի՛ մոլորվիր, այլ հավանիր և զոհ մատուցիր աստվածներին, որպեսզի սիրելի լինես մեզ»: Իսկ սուրբը ծիծաղելով ասաց. «Ո՛վ ամբարիշտ և անաստված, ձեր այսչափ շատ պիղծ և չար հնարքներից ձեր հայր սատանան հրապույր է մատուցում, որ համոզիչ խոսքերով խաբե Աստծու ծառային: Երդվում եմ իմ սուրբ եղբոր պատվական մահով, որ հավատով ավարտեց իր ընթացքը, նաև մեր սուրբ մոր կանոնավոր վարքով, թե իմ մարմինը սրի և հրի, գազանների մատնեք՝ չեմ ուրանա իմ եղբոր բարեպաշտ ճանապարհը, այլ նրա խոստովանության հետքով կգնամ, և օտար կհամարեմ այս կյանքի ստվերը, որպեսզի իմ հոգու անմահ զգայությունը Աստծուն կատարյալ երևա»: Երբ նա այդ ասաց՝ պիղծ իշխանները հրամայեցին կախել և գլխից մինչև լանջը մաշկատել: Իսկ սուրբը համբերելով այդպիսի դառն տանջանքներին աղոթում էր և ասում. «Ամենակալ Աստված, որ Քո կամքով ապրեցրիր քրիստոնեից ազգը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով, անապական արա մարմնի անդամներն իմ, որ դասեցիր ինձ բարեպաշտության կարգը, որպեսզի քաջությամբ համբերելով այս փորձությանը անապական պսակն ընդունեմ Քրիստոս Թագավորից, որի համար արհամարհում եմ սնոտի աշխարհս՝ մերկացած իմ մարմնի մաշկից»: Երբ նա այս ասաց, անօրեն դահիճները վայրենի գազանի նման պոկում էին մաշկը մինչև կուրծքը: Այդպես քաջությամբ վախճանի հասցրեց նա իր ընթացքը, մինչդեռ աղոթում էր՝ ավանդեց հոգին:

Եվ նա վախճանվեց: Բդեշխը հրամայեց բերել երրորդ որդուն և ասաց նրան. «Ի՞նչ է անունդ»: Եվ նա պատասխանեց. «Զգաստության զարդ իմ սուրբ մայրը Քրիստոսի հավատով է պահել ինձ և հավատարմացրել իմ հոգու խորհուրդները և հանձնել Քրիստոսին: Պիստիս անվանեց ինձ, և այդ անունը ցույց է տալիս մեր մոր բարեպաշտ մտքերը»: Իսկ անօրեն իշխանները ցանկանում էին համոզելով խաբել քրիստոսազգեստ մանկանը: Եվ բդեշխն ասում է նրան. «Իմաստուն խանձարուրի մեջ ես մեծացել, մանո՛ւկ դու, խմել ես ազնվական կաթ, և աստվածները քո հորը գթալով՝ խնայում են քեզ. մի՛ լինիր անհավան, իսկ եթե քո մոր պատիր խոսքերով խաբվեցիր մանկան պես, այժմ հավանիր մեր խոսքին և սիրելի եղիր Արամազդ մեծ աստծուն, կատարիր Թագավորի հրամանը և եղիր մեզ բարեկամ: Եթե զոհ մատուցես մեծն Արամազդին՝ կբուժվես տանջանքներից, քանի որ մենք ևս գիտենք, որ խաբվել ես իբրև մանուկ»:

Իսկ քրիստոսազգյաց մանուկը հեզորեն պատասխանելով ասաց. «Բարով ինձ դրեք ճշմարտության ճանապարհի վրա, թեկուզև չիմանաք, որպեսզի հավատաք Հիսուս Քրիստոսի երկնային Հոր բարեգթությանը, որ գնալով ասպարեզ՝ հաղթեմ ձեր չարահնար զենքերին: Քանզի ճշմարիտն Աստված իմ կողքին է՝ արդարության պսակը բռնած: Արդ, մի՛ կարծեք, թե իբրև մանուկ կհավանեմ ձեր հորդորներին և կվախենամ առաջիկա տանջանքներից: Քանզի թեպետ մանուկ եմ երևում ձեզ, բայց մտքով կատարյալ եմ ձեր առջև՝ խրատված Քրիստոսի իմաստությամբ, և շտապում եմ զոհված իմ սուրբ եղբայրներին ընդառաջ, գրվելու սրբերի շարքում»:

Զարաչար իշխանները հրամայեցին նրա ձեռքերը հետևը կապել և կապարով ձգել ջիլերը, պրկել պարանոցի կապանքները, որ ետ ձգված արմունկները կոտրվեն, խաղերն ու հոդերը պոկվեն, և իսկույն ավանդի հոգին:

Իսկ Քրիստոսի սուրբ նահատակը այդ չարչարանքների մեջ աչքը երկինք հառած բարձրաձայն ասաց. «Քրիստո՛ս Փրկիչ, Լույսդ իմ ճշմարիտ, արդարության Ճառագայթ, որ մոտիկ ես Քո երկյուղածներին, և որոնք պահում են Քո պատվիրանները, դթած և ողորմած Տեր, ինձ ևս առաքիր Քո օգնությունը: Այո՛, իմ Տեր Հիսուս Քրիստոս, ինձ փրկիր հակառակորդի ապականությունից և դասիր ճշմարիտ առաքինի նահատակների կարգը, որ Քո սուրբ անվան համար իրենց անձերը մահվան մատնեցին»:

Երբ լսեցին իշխանները, չհանդուրժելով այդպիսի համարձակություն՝ հրամայեցին գլխատել նրան, և սուրբն ասաց. «Մի քիչ թողեք, որ մտածեմ»: Եվ թողտվություն ստանալով ասաց. «Ամբողջ հավերժի ամենակալ Թագավոր, որ Քո Քրիստոսի միջոցով ամեն ինչ իմաստությամբ ստեղծեցիր՝ ինչ որ երկնքում է և երկրի վրա, որ ամեն ինչ կատարյալ հորինեցիր, որ դևերի գնդերը տարտարոս ընկղմեցիր, իսկ ովքեր Քո անվան համար ճգնեցին՝ երկնային քաղաքացի դարձրիր, և Քո սրբերի հետ տոնում ես հավիտենական ցնծության մեջ: Դու Տեր, ընդունիր և իմ հոգին և դասիր երկնային քաղաքացիների շարքը՝ վերին Երուսաղեմում այս խոստովանությամբ: Եվ մեր սուրբ մորը դասիր սրբերի մեջ, որ Քո պատվիրաններով երեք որդի ծնեց և Քեզ ծառայեց սուրբ սրտով»: Երբ ավարտեց աղոթքը՝ ասաց դահիճին. «Արի՛ կատարիր քեզ հրամայվածը»: Եվ այդպես վկայեց Քրիստոսի առաքինի նահատակը:

Դրանից հետո իշխանները հրամայեցին մանուկների քրիստոսազգյաց մորը տանել բանտ և զգուշությամբ պահել: Եվ նրա սիրելիներից ոմանք մտնում էին նրա մոտ, համոզելու նրան զոհ մատուցել աստվածներին: Իսկ սուրբը բանտում անընդհատ աղոթում էր և փառավորում Աստծուն և ուզում էր անխափան կատարել իր ընթացքը Քրիստոսի խոստովանությամբ: Եվ նրանց, որ մտնում ու ելնում էին իր մոտ՝ համոզելու իրեն, մեծ թշնամանքով էր ճանապարհում:

Շատ օրեր անց իշխանը կամեցավ գնալ Մակեդոնիա և մտածեց առավոտյան զոհ մատուցել դևերին, հրամայեց բերել սուրբը Բասսային, որպեսզի զոհ մատուցի: Եվ երբ եկավ՝ իշխանն ասաց նրան. «Ի՞նչ է քո անունը»: Եվ նա ասաց. «Քրիստոնյա եմ, և մարդիկ, Բասսա են կոչում»: Իշխանն ասաց. «Տեսար տանջանքները քո երեխաների, որ քո կրծքով են սնվել և քո գրկում են մեծացել և իրենց անհավանության պատճառով դառն ու անհնարին տանջանքով մեռան: Իսկ դու տեսար նրանց չար մահը, դիմացար: Այժմ, եթե դու ևս չլսես՝ մեծագույն ու չարաչար տանջանքով կկորչես»: Եվ սուրբը Բասսան ասաց. «Անօրե՛ն և չարիմաց հոգով և պիղծ բարքով, կարծում ես թե կթողնեմ իմ զավակների ընթացքը և այն վկայությունը, որով նահատակվեցին իմ մեծացրած զարմանալի մանուկները, որ այժմ երկնքում Քրիստոսի հետ ցնծում են, քո սնոտի խրատը ընդունե՞մ՝ չմեռնելու համար. դադարեցրու մոլորությունդ, ո՛վ բռնավոր, որովհետև Քրիստոսի ասպարեզը պատրաստ է, և ինձ մնում է նահատակվել ընդդեմ քո հայր սատանայի ու գնալ երկնային Թագավորի մոտ՝ ստանալով վերին կոչման առհավատչյա: Այժմ տանջիր ինչպես ուզում ես, քանի որ չեմ ուզում զոհ մատուցել ան-

չունչ դևերին»: Զայրացած իշխանը հրամայեց կապել նրա ձեռքերը հետևը, նախ կապարով ջարդել բոլոր անդամները և ջարդելուց հետո գլխատել նրան: Բասսան ասաց. «Գոհանում եմ Քեզնից, Քրիստոս, միակդ, որ ունես անմահություն, որ արժանացրիր ինձ այս կոչմանը և աղաչում եմ Քեզ, Տե՛ր, ընդունիր իմ խոստովանությունը, ինձ խառնիր Քո սրբերի թվին, որովհետև փառավորված է Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունը»: Եվ այդպես խոնարհեցնելով պարանոցը գլխատվեց սուրբ ու առաքինի վկան՝ ի Քրիստոս Հիսուս Տեր մեր, որին փառք և զորություն. հավիտյանս հավիտենից. ամեն:

ՉՈՐՍ ՍՈՒՐԲ ՎԿԱ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ՝ ԲԱՍՈՍԻ, ԵՎՍԵԲԻՈՍԻ, ԵՎՏԻՔՈՍԻ ԵՎ ԲԱՍԻԼԻՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ եպիսկոպոս Թեոպոմպիսի և Թեովն կախարդի վկայությունից հետո այս չորս զինվորները՝ Բասիոսը, Եվսեբիոսը, Եվտիքոսը և Բասիլիոսը միասին եկան թագավորի առջև, քանդեցին իրենց մեջքի գոտիները, դրին նրա ոտքերի մոտ, բարձրաձայն աղաղակելով ասացին. «Քրիստոնյա ենք»: Նրանք առաջնորդներ և արքունի դռան պատվականներ էին, ավելի մեծ պատիվ ունեին, քան իրենց զինվորակիցները: Իսկ երբ թագավորը տեսավ, շատ բարկացավ և ասաց նրանց. «Իսկապես քրիստոնյա՞ եք, ինչպես ասացիք»: Այնժամ նրան ասացին. «Քրիստոնյա ենք»: Եվ թագավորն ասաց նրանց. «Ձեզ ի՞նչն ստիպեց այդ ասելու ինձ»: Պատասխանեցին միաբերան և ասացին. «Բավական է, որ մեր մանկությունից մինչև այսօր հանցանք գործեցինք, այսուհետև ուզում ենք ապաշխարել մեր առաջին հանցանքների համար և խոստովանում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ Թագավորին, որ կա և կմնա հավիտյան, որ Իր բազում ողորմությամբ մեզ քավիչ կլինի»: Այս խոսքի վրա թագավորն առավել ևս բարկացավ, բայց մտածեց իր բարկությունը մեղմել, քանի որ նրանց շատ էր սիրում և սկսեց ասել նրանց ծածկաբար. «Ինչ՞ քրիստոնյա եք, որ բերանով ու շրթունքներով խոստովանում եք, թե քրիստոնյա եք, և ձեր սրտերը, խառնվել են ձեր ունեցվածքին: Արդ, եթե ճշմարիտ քրիստոնյա եք դուք, ինձ տվեք այն ամենը՝ ինչ ունեք, որ դրանք բաշխեմ ձեր ընկերներին»: Սա ասում էր, որպեսզի փորձեր նրանց միտքը, թերևս պահեն և չտան նրան իրենց ունեցվածքը: Երանելի Բասոսը գնաց և բերեց մոտ քսան լիտր ոսկի, դրեց նրա ոտքերի տակ և ասաց. «Իմ ամբողջ ունեցվածքը տալիս եմ քեզ»: Նրա նման երանելի Եվսեբիոսը, տեսնելով Բասոսի հո-

ժարությունը, ինքը ևս եկավ, բերեց քառասուն լիտր ոսկի: Ցանկալի այր Եվտիքոսը եկավ, բերեց վաթսուն լիտր ոսկի և ասաց. «Սա ոչինչ է Աստծու համար»: Այս ասաց թագավորի առջև: Իսկ Քրիստոսի երանելի ծառա Բասիլիոսը ոգևորվեց բազում զորությամբ, եկավ, բերեց ոսկի յոթանասուն լիտր և ասաց. «Այս ամենը զոհաբերեցինք Աստծու սիրու համար, ոսկին, արծաթը և պատվական հանդերձները անարգ կհամարենք»,- և թագավորին ասացին. «Այս ամենը ոչինչ է և ոչինչ է համարված. եթե բոլորը շահենք, ի՞նչ օգուտ է մեզ, ինչպես գրված է. «Եթե ամբողջ աշխարհը շահենք և մեր անձերը կորցնենք ինչ շահ է» (Մարկ. Ը. 36): Եվ դարձյալ ասում է. «Ի՞նչ կտաս քո անձի փոխարեն» (Մարկ. Ը. 37): Եվ՝ «Լավ է ընկնել Աստծու ձեռքը և ոչ մարդկանց ձեռքը» (Սիրաք Բ. 22),- որովհետև մենք չենք կարող մոռանալ մեր հայր և ուսուցիչ սուրբ եպիսկոպոս Թեոպոմպիոսի նեղությունները, որ քսաներեք օր եղավ մեր տանը, ո՛չ կերավ, ո՛չ ըմպեց և ո՛չ սով զգաց, այլ համարձակությամբ և բազում զորությամբ սքանչելիքներ էր անում: Որովհետև այն գիշեր տեսանք մեծ լույս, որ լուսավորեց նրան և ամբողջ տունը, և տունը հիմքից շարժվեց: Մենք չենք կարող մոռանալ մեր ճշմարիտ հովվին, որով գտանք ճշմարտության ճանապարհը, իսկ այն, որ դու ասում ես՝ Զոհ մատուցեցեք աստվածներին, որոնք ո՛չ տեսնում, են ո՛չ լսում և ո՛չ խոսում և չեն կարող բարի կամ չար բան անել. քանի որ երեք ամիս եղան իմ տանը և բոլորովին նշան չտեսանք և ոչ զորություն, թաղված էին մոխրի մեջ, և երբ տեսնում էինք փոշին՝ նրանց երեսներից մաքրում էինք, իսկ իրենք անկարող էին վերացնել, որովհետև չէին կարող գնալ, նրանց գրված տանում էին մեհյանի քուրմերը և այսպես խաբում էին մարդկանցից շատերին և քարոզում էին, թե սրանք են աստվածները: Իմացի՛ր սա, ո՛վ թագավոր, դրանք իրենք կորսված են և կորցնում են շատերին: Բայց դու ճանաչիր ճշմարիտ Աստծուն, որ կա և մնում է հավիտյան: Իսկ մեզ վրա իշխանություն ունես՝ ինչ ուզում ես՝ արա՛, պատրաստ ենք շահել մեր օգուտը հանուն մեր Աստծու»:

Թագավորը, այս լսելով, հրամայեց բանտ նետել նրանց, և այնտեղ մնացին յոթ օր, այնտեղ դալիս էին նրանց փեսաները և քույրերը, աղաչում նրանց, քաջալերում և ասում. «Եղբայրնե՛ր, դիմացեք և համբերեցեք բոլոր փորձություններին, որովհետև մեր Փրկիչն ասաց. «Փնտրեցեք, և կտրվի ձեզ» (Մատթ. Է. 7, Ղուկ. ԺԱ. 9): Քանի որ չկա ավելի հզոր, քան Տերը, որ մեր օգնականն է: Այս ևս հիշեցեք, եղբայրնե՛ր, որ այս աշխարհիս բարիքները ընդունայն և անցավոր են, այժմ պարտավոր ենք ձգտել, մինչև հասնենք հավիտենական կյանքի անապականության: Քանի որ այս աշխարհիս հանգիստը ժամանակավոր է, իսկ հուսացյալ աշխարհի կյանքը՝ հավիտենական»: Այսպիսի խոսքերով քաջալերում էին նրանց իրենց ազգականները:

Ութերորդ օրը թագավորը հրամայեց նրանց տանել իր ապարանքը, կանչեց նրանց, և թագավորն ընկավ նրանց ոտքերը, ասաց. «Լսեցե՛ք ինձ, որդյակնե՛րս, ինքներդ գիտեք ինձ և իմ թագավորությունը: Իսպառ չեմ բարկացել ձեզ վրա. դուք ևս խնայեցեք ձեզ, որ չարաչար չմեռնեք, որովհետև ամեն մարդու մահը հասած է. մեկը պատվով, իսկ մյուսը անարգությամբ է վախճանվում: Դուք մի՛ նայեք Թեոպոմպեոս եպիսկոպոսի մահվանը, որովհետև կախարդ էր և ինքը խնդրեց անարգության մահը»: Այս խոսքերը լսելով՝ ազատները չխռովեցին և չխաբվեցին նրա ասածով, այլ միասին ավարտեցին. «Քրիստոնյա ենք, և դու չես կարող խաբել մեզ, քանի որ Աստծու շնորհն է մեզ վրա իջել»: Երբ թագավորն այս լսեց և չկարողացավ նրանց համոզել՝ հրամայեց վերստին նրանց բերել իր առջև: Եվ երբ բերին Բասոսին, թագավորն ասաց նրան. «Ինչո՞ւ զոհ չես մատուցում իմ աստվածներին»: Սուրբ Բասոսը պատասխանեց. «Չեմ զոհում»: Թագավորը բարկացավ և հրամայեց նրա ձեռքերը ետևը կապել, [կապել] նրա ոտքերը և նրան ի ցույց դրեց իր բրեկամներին, ապա հրամայեց կտրել նրա ձեռքերը կացնով: Այդպես անդամ առ անդամ կտրատեցին նրան՝ մինչև հոգին ավանդեց Քրիստոսի երանելի նահատակ Բասոսը և իր վկա-

յությունը կատարեց բարի խոստովանությամբ ի Քրիստոս Հիսուս, Տեր մեր, որին փառք հավիտյանս:

Սրանից հետո շտապ առաջ բերին Եվսեբիոսին: Թագավորն ասաց. «Եվսեբիո՛ս, դու խնայիր քեզ և զոհ մատուցիր աստվածներին, որ չարաչար չմեռնես»: Երանելի Եվսեբիոսը բարձր ձայնով պատասխանեց. «Զլինի, որ ես թողնեմ իմ Տիրոջը, որ սիրեց ինձ և իմ սիրելի բարեկամին, որ [ինձնից] առաջ նահատակվեց և խորհրդակից եղավ իմ բարիքին»: Թագավորն ասաց. «Ոչ ոք քո բարեկամը չէ, և ոչ ոք չի կարող քեզ փրկել իմ ձեռքից»: Երանելին ասաց նրան. «Պանձվի՛ր և մի՛ կրկնիր քո խոսքը»: Բարկացավ դատավորը և հրամայեց կախել նրան գլխիվայր՝ երկու ոտքից և նրա ամեն ոտքը կապել մի սյան: Այդպես պրկված՝ չարչարանքով իր վկայությունը ավարտեց խաղաղությամբ:

Նրա նահատակվելուց հետո [դատավորը] հրամայեց բերել երրորդին, և նրա առաջ կանգնեց Եվտիքոսը, և Թագավորն ասաց նրան. «Գիտե՞ս, ովքեր լսում և կատարում են իմ կամքը՝ պարգևներ եմ շնորհում նրանց, իսկ ովքեր հակառակ են իմ խոսքերին՝ հանում եմ այս կյանքից: Արդ, ընտրիր դու քեզ՝ պարգևներ կամ մահ»: Պատասխանեց Եվտիքոսը և ասաց. «Քո պարգևները քեզ լինեն ի կորուստ. մարդկային պատիվը ժամանակավոր է, աստվածային զորությունն է անվախճան պատիվը: Քանի որ երևացող հույսը՝ հույս չէ, իսկ քո պատիվն ու հույսը կորուստ է մեզ»: Երբ երանելին այս ասաց ատյանում՝ [դատավորը] հրամայեց մեխ խփել նրա ծնոտին, և այդպես երեք մասի բաժանվեց նրա մարմինը, և իր վկայությունը կատարեց խաղաղությամբ:

Այնուհետև հրամայեց առաջ բերել չորրորդին, որի անունը Բասիլիոս էր և պատվական ու երևելի էր նրա պալատում: Եվ Թագավորն ասաց նրան. «Աղաչում եմ քեզ, լսիր իմ խոսքը, որ ասում եմ՝ և կավելանա քո պատիվը, և կփառավորեմ քեզ բոլորից շատ, որ իմ պալատում են: Թող ոչ ոք չխաբի քեզ սնոտի խոսքերով, հիշի՛ր, որ բարի ցանկություն ունեմ քո մասին. քեզ իշխան կկարգեմ բոլոր զորքերիս, որ ամեն ոք լսելով երանի տա քեզ, և դու կատարես բոլոր արքունական հրամանները, որովհետև չունեմ ոչ մեկը իմ պալատում՝ քեզնից առավել, և բոլորից ավելի քեզ եմ սիրում: Լսիր, ինչ որ ասացի քեզ, և կհաշտվի Ապողոն մեծ աստվածը քեզ հետ և կփրկի քեզ այդ կորստից:

Իսկ երանելի և մեծատոհմ Բասիլիոսն ասաց. «Ո՛վ դու անզգա և անմիտ, ի՞նչ ես խոսում, ո՛չ դու, և ո՛չ քո Ապողոնը չեք կարող ապրեցնել իրեն և քեզ, որ հույս ես դրել նրա վրա: Որովհետև ինքը այրվելու է: Եվ ամենքը, որ հավատան նրան՝ կայրվեն նրա հետ»: Այս լսելով Թագավորը խիստ բարկացավ, հրամայեց սուր բերել, պատռեց նրա որովայնը և ասաց նրան. «Որովհետև իմ սերը սուտ համարեցիր, քեզ կպատռեմ իբրև ամբարիշտի»: Պատասխանեց երանելին և ասաց հոգին ավանդելուց առաջ. «Այսօր պահեցիր ինձ, և չօտարացա պատվական մահից, որով նախ մեռան սուրբը եղբայրներն իմ»: Այս ասաց այն վայելուչը և բարեզարմը, ննջեց խաղաղությամբ: Սա ևս կատարեց իր վկայությունը: Եվ [չորս] զինվորները միասին թաղվեցին: Այսպես նահատակվեցին բարի խոստովանությամբ ի Քրիստոս, որ արաց ամսի ութն էր, պսակվեցն ի Քրիստոս Հիսուս Տեր մեր, որին փառք հավիտյանս. ամեն:

ԵՐԱՆԵԼԻ ԲԱՐԴԻՇՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շապուհ արքայի տարիներին սաստիկ հալածանք եղավ՝ ավելի դառն, քան բոլոր թագավորների ժամանակ, և անթիվ եղան Քրիստոսի վկաները: Այդ ժամանակ Բարդիշո եպիսկոպոսը բռնվեց և բերվեց Շապուհ թագավորի առաջ, որպեսզի առավել տանջանք ընդունի իբրև հավատացյալ քրիստոնյաների ուսուցիչ և Քրիստոսի վկաների հորդորիչ, արհամարհելով տանջանքները և մահը հանուն Քրիստոսի:

Արքան ասում է Բարդիշոյին. «Ի՞նչ է, որ լսում եմ, թե սովորեցնում ես ընդդեմ մեր օրենքների և արհամարհում ես մեր աստվածներին՝ արեգակն ու հուրը, և հակառակ մեր հրամանների Աստված ես քարոզում և չես զարհուրում իմ թագավորության ահից»: Սուրբ եպիսկոպոսն ասաց. «Ես աստված չեմ համարչում տարրերը, որ ստեղծվել են բոլորի Արարչից, որովհետև Նա ասաց՝ և եղան բոլոր արարածները: Բան Աստվածը հրամայեց՝ և հաստատվեցին արեգակը, լուսինն ու աստղերը, հողն ու ջուրը և ինչ որ կա երկնքում ու երկրում, Սուրբ Հոգու զորությամբ կազմվեցին ի փառս և ի գովեստ Հոր և Որդու և Սուրբ Հոգու. մի աստվածություն և զորություն, անվախճան թագավորություն, որ խոստովանեցին բոլոր սրբերը՝ բոլոր ազգերի մեջ: Ես ևս նույնն եմ խոստովանում և սովորեցնում բոլորին: Եվ ով ինձ լսի՝ ապրում է հույսով, հրաժարվում սնոտի պաշտամունքից և բոլոր ամբարշտություններից»: Արքան զայրացավ երանելիի համարձակությունից, ծառաներին հրամայեց փշալից բրերով սաստիկ գանահարել: Եվ ասում էին. «Ուրացիր քո Աստծուն, եղիր արքայից արքայի աստվածների պաշտող»: Եվ սուրբը սրտի խորքից դիմում էր Աստծուն և գոհանում, որ այդպիսի դառն տանջանքների մատնվեց ամենակալ Տիրոջ անվան համար: Եվ պատասխանեց տանջողներին ու ասաց. «Ես ուրա-

նում եմ ձեր սնոտի աստվածներին, և ոչ ճշմարիտ Աստծուն, որ ստեղծեց հրաշակերտներ և փառավորներ, որոնց թիվ չկա, որև ինձ կարող է զորացնել չարաչար տանջանքի մեջ, և ժառանգություն կստանամ արքայությունը, որ ցանկացել եմ, որպեսզի փոխվեմ երկրից երկինք»: Եվ երբ այնպես երկար տանջեցին սրբին, բազում մարդիկ արքայի հրամանով, հավանական ոչ մի բան չլսեցին, որ սպասում էին, այլ [սուրբը] առավել ևս համարձակվում էր խոստովանությամբ ի Քրիստոս և անարգում նրանց պաշտամունքը: Եվ բոլորը զարմացած ու հիացած էին, որ ոչինչ էր համարում բրածեծ դանահարությունը: Արքան ասաց. «Ավելի սաստկացրեք հարվածները, որ առավել ցավի»: Եվ դահիճներն այդպես վարվեցին:

Իսկ սուրբը տոկում էր չարաչար տանջանքներին և դիմանում մեծ համբերությամբ և ասաց. «Ո՛վ ամենաչար թագավոր, չգիտե՞ս, որ մարդը զորություն չունի ընդունելու այսպիսի դառն հարվածներ ու չարչարանք, եթե չզորանա Աստծուց: Բայց սա իմացի՛ր, չեմ լսելու քո կորստական հրամանները, թեկուզև հազարապատիկ տանջես»:

Արքան ասաց. «Վստահում ես քո Աստծու զորությանը և քո համբերությանը՝ հաղթելու ինձ, իսկ ես, որ բոլորի տերն եմ, չե՞մ վստահանում իմ աստվածներին և արքայությանս»: Եվ արքան հրամայեց բերել հյուսնի մամլիչը և նրա ոտքերը դնել մամուլի մեջ ու ճզմել: Ապա բերել տվեց խունկ և հուր, որ [սուրբը] գցի հրի մեջ և ծխեցնի և լինի իբրև հրի պաշտոնյա, այդպես խորամանկելով արդարին: Իսկ նա զգաց չարությունը, ճանաչեց դավադրությունը և վերցրեց խունկը, ցրեց երկրի վրա և ասաց. «Աստված մի՛ արասցե՝ պաշտոն մատուցեմ արարածներին և խունկ ծխեմ կրակին, այլ՝ միայն իմ Աստծուն բանական պաշտոն մատուցեցի և կմատուցեմ, որովհետև Նրան է վայել փառք, իշխանություն և պատիվ այժմ և հավիտյանս. ամեն»:

Արքան բարկացավ, հրամայեց նրա մատները հատված-հատված կտրել՝ խունկը ցրելու պատճառով: Իսկ սուրբ եպիսկոպոսը բացեց բերանը գոհանալու և փառաբանելու Աստծուն: Եվ հույսով մխիթարվում էր, թեպետև մատները

կտրատված էին և ցավը՝ սաստիկ, բայց Աստծու սերը անխզելի և անհաղթ էր մնում, և նահատակվում էր խորհուրդներով, պատասխաններով և համբերությամբ: Դահիճները հոգնել էին, իսկ նա չէր վհատում, և արքան և ամբողջ ատյանը հիացած ու զարմացած էին սուրբի համբերությամբ:

Եվ երեք երիտասարդներ Քրիստոսով խրախուսված մեծ համբերությամբ, արքունական ատյանում՝ արքայի և բոլոր մեծամեծների առջև միաբերան աղաղակելով ասացին. «Մեծ է Աստվածը քրիստոնյաների, և չկա ուրիշը, որ զորություն տա իրեն հուսացողներին և ամոթահար անի հպարտ ու ամբարիշտ թագավորներին, որոնք պաշտում են արարածներին և ոչ Արարչին, որ օրհնյալ է հավիտյանս: Մենք ևս խոստովանում ենք ամենակալ Հորը, համազոր Որդուն և համագործ Հոգուն, ինչպես երանելի եպիսկոպոսը քարոզեց, մի աստվածություն միափառ փառքով միավորված՝ անվախճան թագավորությամբ: Մենք ևս խոստովանեցինք սա, հավատով և ճշմարտությամբ փառավորում ենք միշտ, միայն թե ընդունի մեզ, որպես բարերար Աստված»:

Զայրացած արքան հրամայեց դուրս հանել դրանց և տանել բանտ: Եվ իր մտերիմ ծառաների միջոցով [լուր] ուղարկեց, խոստանալով նրանց պարգևներ, պատիվ և իշխանություն, բազում խնդրանքներով դարձնելու նրանց իրենց մոլորությանը: Դրան չհավանեցին, և այնտեղ՝ բանտում գաղտնաբար սպանեցին երիտասարդներին սրով, բարի դավանությամբ ի Քրիստոս:

[Արքան] դարձյալ խնդրում էր սուրբ եպիսկոպոսին՝ առանձնահատուկ խոսքերով և ասում. «Համաձայնիր ինձ հետ և պաշտիր աստվածներին, որ պաշտում եմ ես, և կփառավորեմ քեզ պալատում՝ որպես քաջասիրտ այր և քեզ կանեմ դատավորների դատավոր և արքունի իրավարար»: Իսկ սուրբ եպիսկոպոսն ասաց. «Նենգությամբ ինձ մի՛ որսա կորստյան, որովհետև հավիտենից հույսի համար մատնեցի մարմինս տանջանքի, դու կտրեցիր ինձ հարվածներով և ջարդելով իմ անդամները հյուսնի մամուլի մեջ և կտրատելով մատներս, որպեսզի համբերելով այդ ամենին ապականված մարմինս

անապական դառնա արդարների արքայության հարությանը, որ պատրաստեց ամենակալն Աստված բոլոր սրբերին, որ այսպիսի համբերություն կրեցին մեղավորների հակառակությունից, ինչպես և մեր Տեր Հիսուս Քրիստոսը, որ իր անձը մահվան մատնեց՝ փրկելու համար բոլորին, ովքեր կամեցան գալ հոգևոր ուրախության կոչմունքին՝ վկայելով աստվածների Աստծուն: Եվ այժմ շտապում եմ անջատվել իմ մարմնից և մտնել Քրիստոսի՝ իմ կարոտածի մոտ: Իսկ քեզ և բոլորին, որ քեզ հետ են, պատրաստված է անշեջ հուրը և հավիտենից պես-պես դառն տանջանքներ, որ հոգին ու մարմինը տանջում են առհասարակ, և չկա մեկը, որ փրկի մեղավորներին ու ամբարիշտներին՝ գալիք բարկությունից: Բայց, դու արքա՛, եթե ուզում ես դարձի գալ և պաշտել Աստծուն՝ քեզ կընդունի խոստովանությամբ ու ապաշխարությամբ, որովհետև բարերար և անոխակալ է մեղավորների հանդեպ, քանի որ մեր մեղքերի համեմատ չի կատարում կամ ըստ անօրինության հատուցում, ովքեր հետևեն ճշմարտությանը»:

Այս լսելով արքան առավել ևս զայրացավ և ասաց. «Ո՛վ ամենաչար խարդախող, իմ խնդրանքները արհամարհեցիր, կամենում ես ինձ թագավորությունից գցել ստրկական ծառայության: Բայց այլևս քեզ չեմ ների: Իմ համոզիչ խոսքերը քեզ հասցրին այդպիսի համարձակության»:

Երանելի եպիսկոպոսն ասաց. «Ես օգտակար բաներն ասացի՝ ինչպես ստացել եմ Տիրոջ հրամանը, որ սուրբ Աստված քարոզեց աշխարհում. «Ով ունի ականջ՝ թող լսի կյանքի խոսքը» (Մատթ. ԺԱ. 15, ԺԳ. 9, 23, 43, Մարկ. Դ. 9, 23, Է. 16, Ղուկ. Ը. 8, ԺԴ. 35, Հովհ. Բ. 7, 11, 17, 29, Գ. 6, 13, 22, ԺԳ. 9): Բայց դու՝ Աստծուց օտարացած և ամեն արդարության թշնամի, արժանի չես ճանաչելու իմաստություն և հոգևոր խրատ և ընկալելու հանճարի բանը (Առակք, Ա. 2-3) և ուղղվելու ճշմարիտ աստվածգիտությամբ և արդարությամբ, հեռանալու բազմաստվածության մոլորությունից և չար դևերի խաբեությունից, որոնք քեզ ընկղմում են չար անօրինության խորքերը, [դարձնում] նրանց գեհենի որդի և ժառանգորդ հավիտենական տանջանքի»:

Երբ այս լսեց, բարկությամբ լցվեց թագավորը և հրամայեց լեզուն ծծրակից հանել, որ խոսել չկարողանա: Եվ ամենաչար ծառաները կատարեցին թագավորի հրամանը: Իսկ սուրբը աչքերը բարձրացրեց երկինք և իր սրտում փառավորում էր Աստծուն, և իր խոսքը լսելի չէր լինում: Եվ վերևից ձայն եղավ, որ ասաց. «Քաջալերվի՛ր, քանի որ եկել է քո նահատակության կատարման ժամը, և կատարվեցին խնդրանքներդ՝ ըստ քո բոլոր ցանկությունների»: Եվ այդ-ժամ կազդուրվեց նրա լեզուն իր տեղում, և խոսում էր ուղիղ և իր ատելիների առաջ օրհնում էր Աստծուն՝ ասելով.

«Գոհանում եմ Քեզնից, երկնքի և երկրի Տեր, որ արժանի արիր ինձ՝ անարժանիս Քո ամենաառատ շնորհներին և հարգեցիր չարչարանքով իմ տառապելը՝ ինչպես արծաթը հրի բովում զտվելիս, և կամա թե ակամա սխալներիցս մաքրվել եմ: Այժմ ինչ տամ փոխարենը Տիրոջը այն ամենի համար, որ շնորհեց ինձ, եթե ոչ իմ անձը մահվան տամ Քո սուրբ անվան, ի վկայություն՝ ամբարիշտ թագավորի և չար իշխանների և Քո բոլոր ատելիների առաջ, որ բոլորը հասկանան, թե միայն Դու ես ճշմարիտ Աստված, որ Քո սիրուց երբեք խպառ չհեռացա: Եվ այժմ, Տեր, շտապում եմ ելնել մեղսասեր աշխարհից և կանգնել Քո փառավոր երեսի դիմաց, որին կարոտել եմ, որպեսզի Քեզ հատուցեմ անճառելի օրհնություններ բոլոր սրբերի հետ, որոնց փառավորել է իրենց մահը Քո ահեղ տիրության առջև: Քանի որ Դու ես Աստված փառավորյալ և օրհնյալ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից»:

Եվ ասաց [այս] ամենը և երեք հարյուր յոթանասուներեք հոգի հավատացին Աստծուն և ասացին. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը և չկա ուրիշը, որովհետև ոչ ոք այսպիսի քաղցր հույս չունի, ինչպես քրիստոնյաները, որ արհամարհում են մահն ու տանջանքը և թագավորներից չեն զարհուրում, այլ աներկյուղ համարձակությամբ Աստված են քարոզում: Եվ մենք սուրբ եպիսկոպոսից այս հավատով լուսավորված, խոստովանում ենք բարերար Հորը, որ գթաց մեզ, և բարեխնամ Որդուն, որ մեզ սուրբ կոչման կանչեց և Սուրբ Հոգուն, որ մեր հնությունը վերստին նորոգում է հավիտե-

նական կյանքի հույսով: Որ մի աստվածություն է՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, փառավորված երկրպագված և օրհնված հավիտյանս հավիտենից. ամեն»:

Այս լսելով արքան ավելի մեծ ցասումով լցվեց չարից, հրամայեց սրով վերջ տալ նրանց կյանքին: Եվ այդպես՝ բարի խոստովանությամբ, մկրտվելով իրենց արյամբ նահատակվեցին, ժառանգորդ եղան երկնքի արքայությանը՝ սուրբ եպիսկոպոսի աղոթքներով և բարեխոսությամբ: Նրանց անունները գրված են կյանքի դպրության մեջ:

Բոլորից հետո [արքան] հրամայեց գլխատել սուրբ եպիսկոպոսին: Այսպես վախճանվեց հրեշտակների և մարդկանց համար զարմանալի և սքանչելի սուրբ եպիսկոպոս Բարդիշոն՝ երեք հարյուր յոթանասուներեք մարդկանց հետ, սահմի ամսի տասնյոթին, ի փառս և ի գովություն ամենասուրբ Երրորդության, Շապուհ արքայից արքայի և ամբողջ Պարսից արքունական ատյանի առջև:

Այսպես Քրիստոսի մոտ ամբարձավ և աշխարհում թողեց իր անունը՝ բարության և քաջ նահատակության օրինակ, ժառանգեց անստվեր և անապական և մշտնջենավոր կյանք, և բարեխոս է նաև մեզ համար:

Իսկ մինչ այս կյանքում էր, հորդորում էր շատերին ի սեր աստվածության, ամենասուրբ Երրորդության ուղիղ հավատի, և արդարության վարքի ըստ պատվիրանների և վարդապետության ուղղափառ սուրբ հայրերի: Որովհետև ամեն ինչով ճշմարտախոհ էր և զգաստասեր, ոչ մեկից չդրդվեց ու չշեղվեց հավատքից ու արդարությունից, այլ անբիծ հավատով և անարատ վարքով կրոնավորեց այս աշխարհում և կյանքը ավարտեց ի Հիսուս Քրիստոս: Եվ մենք նույնպես մասնակից դառնալով սրբի վարքին՝ փառավորենք անփոխելի տերությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԲԱՐԴՈՂՈՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

[Երբ] Վերնատանը Սուրբ Հոգին իջավ նրանց մեջ, սուրբ առաքյալների գլխավորները՝ տասներկու աշակերտները, վիճակ ստացան տարբեր ազգեր, հողմերի ձայնով երկնագործելու հրեղեն լեզուների տարուբերմամբ, և ավագության ձեռնադրություն ստացան, իշխանություն ստացան մեղքերը թողնելու և բռնելու, և ցույց տալու նշան ու արվեստ, ախտերին փարատում շնորհելու, և ցավերը վերացնելու, և սատանային հալածելու, և մեղքերից բաժանելու, Հապականության ծառայությունից ազատելու՝ դեպի ազատությունը Աստծու Որդու փառքի, և դեպի Նրա պատվիրանները գնալու, և արժանի լինելու խոստացված պարգևներին ու այնտեղ եղած բարություններին: Եվ ըստ Սուրբ Հոգու առաջնորդության՝ սփռվեցին-գնացին դեպի բոլոր կողմերը լեզուների՝ կենդանի խոսքը քարոզելու, և սուրբ ավազանի ծննդյամբ ու Սուրբ Հոգու արարչական զորության հովանավորությամբ նրանց լուսավորելու:

Գնաց և երանելի առաքյալ Բարդողոմեոսը, որ տասներկու [աշակերտներ]ից մեկն էր, հասնելով մտավ իր առաքելական ընտրության վիճակը: Եվ Թովմա առաքյալի հետ միասին իր քարոզության սկզբում նրան պատահեց մտնելու Հնդկաց սահմաններին մերձակա Եղեմ կոչված քաղաքը: Եվ անցնելով քաղաքի միջով նստեց մի աղբյուրի մոտ, որում հմայությամբ դյութական ազդեցություններ էին կատարվում. ստահոդ խաբեության մոլոր պաշտամունքի ցնորքի [պահին] դևերի հայտնություններ, [որ] ձայն էին տալիս աղբյուրին՝ իբրև աստվածներից մեկին: Այնտեղ բազում նվերներ և զոհեր էին մատուցվում աղբյուրին: Ուստի ստաբանում էին, թե ինքնիրեն է բխել և լի է սնիչ զորությամբ բույսերի և տունկերի և սերմերի, և այլևայլ ծառերի, զանազան

ծաղիկների, համով և հոտով: Եվ աղբյուրն [այն] անվանում էին Նեղոսի դուստր: Եվ մի օր, երբ քաղաքի բազմությունը պատրաստվում էր զոհ մատուցել, ընծայել ոսկի և արծաթ դրամներ և թանկագին ակնեղեն, և մեծագին ու պատվական հանդերձներ, դևերն սկսեցին բարբառել աղբյուրի ներքևից և պղպջակներով ջուրը վեր էին մղում, բորբոք հրի ուժգնությամբ և սաստիկ հողմի հնչումով սարսափեցնելով լսողներին և տեսնողներին՝ հրի փայլմամբ և հողմի հնչմամբ: Եվ արհավիրքի ժամին մեծաձայն աղաղակ բարձրացրին և ուժգին գոռալով գոչում էին աղբյուրի անունը՝ իբրև աստծու, որ կարող է օգնել և պարգևներ ընդունել նրանից: Իսկ սուրբ առաքյալը հիացած էր ու զարմացած իր մտքում, մեծ տրտմությամբ լցվեց նրանց մոլորության և աղտեղի գործի զուր չարչարանքների և սխալ ընթացքի, անօգուտ ծախսերի և անիմաստ աղաղակի պատճառով, որ ժխորով հավաքվել էին տղամարդիկ ու կանայք իբրև ճիճու և զազրատեսիլ զեռուն՝ տղմուտ վայրերում կայտառ խլրտում էին աղբյուրի պատվին, դևերի կեղծավորության պատրանքով: Այնժամ երանելի առաքյալը գնաց նրանց մեջ՝ աղբյուրի վրա, հանեց թիկնոցը, որ ուսին էր գցել, պարզելով գցեց ջրի դեմ, աղոթեց Տեր Հիսուս Քրիստոսի անունով և բարձր ձայնով ասաց. «Ցամաքելով ցամաքի այս ջուրը և ամենևին խոնավության ուժ չունենա»: Եվ իսկույն փակվեց հորդահոս ջրի վտակը և եղավ իբրև ապառաժ վեմ, և հրի որոտման ձայնը և հողմի փայլատակելը լույսի ձևով՝ կորավ և դադարեց: Եվ դևերը աղաղակ բարձրացրին, ճչացին մեծակական ողբով ու հառաչելով ասացին. «Ո՛վ Հիսուս նազովրեցի, մինչև ե՞րբ տագնապներ հասցնես մեզ վրա և թույլ չտաս մնալ ջրերի անդունդում և մեր բնակության վայրում: Ամեն երկրից մեզ հալածական դարձրիր Քո խաչով և այժմ Քո աշակերտների միջոցով նեղում ու հալածում ես, չարչարում ու վտանգում նախ քան ժամանակը, որ գալու է մեզ»: Այնժամ սուրբ առաքյալը սաստելով նրանց ասաց. «Ո՛վ պիղծեր, դժնիներ ու մարդատյացներ, արդարության թշնամիներ և մոլորության վարդապետներ, ահա սաստում եմ ձեզ Հանուն մեր տեր Հիսուս Քրիստոսի, չեք կարող մնալ այստեղ»: Եվ անմիջապես կորան ու սպառվեցին, ջնջվեցին ու վերացան մեջտեղից, ինչպես մոմը, որ չի կարող հրի առաջ մնալ, այդպես վատնվելով պակասեցին: Եվ բազմակույտ ամբոխը տեսավ: Մեծ ահով բռնված դարձան առաքյալին, ընկան սուրբ առաքյալի առջև մեծ սքանչելիքների համար, որ եղան աղբյուրի վրա: Իսկ կեսը գնալով շրջակա տեղերով պատմում էին այդ բանների մասին, մեծ և զարմանալի գործերը և հրաշափառագույն նշանները, որ կատարվեցին առաքյալի միջոցով: Եվ բոլորը գալիս էին տեսնելու սքանչելիքները, քանի որ բազում ժամանակներ հնչել են աղբյուրից. և մի ակնթարթում ցամաքելով սպառվեց հորդահոս ջուրը:

Եվ քաղաքի բազմությունն սկսեց ծարավից նեղվել, և քարեր առնելով ձեռքերը ուզում էին նետել առաքյալի վրա, բայց քարերով խփեցին ու միմյանց սատկեցրին: Հանդուգն ու խուռն քարընկեցությունից սատկեց մոտ երեսուն հոգի: Եվ սուրբ առաքյալը մոտեցավ մեռածներին, ձեռքը դրեց և աղոթեց նրանց վրա, նրանց հոգիները վերադարձան իրենց, և կանգնեցին կենդանի: Եվ նրանցից յուրաքանչյուրը շտապում էր բերել դևերից հիվանդացածների ու պես-պես նեղվածների, կույրերի ու կաղերի, անդամալույծների, խուլերի և համրերի, լուսնոտների, պես-պես ցավերից նեղվածների և բոլորին բուժեց: Այնժամ սկսեց նրանց քարոզել Մատթեոսի ավետարանը, և խնդությամբ լսելով ընդունում էին սուրբ ավետարանի քարոզությունը: Սուրբ առաքյալը ելավ քաղաքից դուրս մի հարթ, ապառաժոտ վայր, ծունր դրեց, աղոթեց և գոհացավ Քրիստոսի շնորհներից, որ բացեց նրանց միտքը հավատալու Տեր Հիսուս Քրիստոսին, որ ճշմարիտ Աստված է և հավիտենական կյանք: Եվ այնտեղ խաչի նշանը արեց և խոսեց բարձրաձայն: Եվ ահա ահեղ որոտման շարժում ու թնդյուն եղավ, և այդ տեղը պատռվեց խախտվելով և հոսեց հորդաբուխ, քաղցրահամ վտակների՝ աղբյուրի ջուրը: Եվ շրջապատելով հանդարտ ու հեզ շարժմամբ սկսեցին ուրախանալ: Եվ նրանց

իջեցնելով ջուրը՝ մկրտեց և լուսավորեց Սուրբ Հոգու լույսով և կատարեց պատարագի խորհուրդը, և նրանց մեղքերի թողության համար հաղորդեցրեց Աստծու Որդու կենդանարար մարմնին ու արյանը, որ կյանք է ու ապրեցնող և հավատացուցիչ սուրբ Երրորդության: Եվ սուրբ առաքյալի միջոցով կենդանացածներին այնտեղ երեցներ կարգեց և նրանց հաստատեց ճշմարտության հավատքին:

Եվ գնաց մարաց և հելլենացոց կողմերը և չընդունվեց նրանցից, չկարողացավ կատարել այնտեղ զորություններ, բայց քչերը նրանցից, որոնց քարոզեց Մատթեոսի ավետարանը՝ հավատացին Բանին և թողին աշխարհի ամբողջ ինչքը և գնացին նրա հետ ամեն տեղ, ուր գնում էր: Այնտեղից դարձավ, մտավ Խորին Ասորոց Բուստր քաղաքը: Եվ երբ մտնում էր քաղաք, բարձրացրած բերում էին մի մեռած պատանու՝ Բուստր քաղաքի հազարապետի որդուն, որի անունը Անդրոնիկոս էր, և տասներկու տարեկան էր: Եվ նրա ետևից բազում լալականներ՝ փողերով ու քնարներով, դաս-դաս խմբերով կոծելով մրմնջում էին և հորդահոս արտասուք հեղում պատանու համար: Նույն պահին առաքյալն ընդառաջ գնաց հրապարակում, մեկնեց իր ձեռքը, մոտեցավ դագաղին, ուր մեռած պատանին էր և ասաց. «Պատանի՛ դու, քեզ եմ ասում, վե՛ր կաց՝ հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի»: Եվ իսկույն մեռյալը կանգնեց, և ովքեր բարձրացրած տանում էին՝ կանգ առան: Եվ բազմությունը նայեց սուրբ առաքյալի երեսին, և տեսան, որ հուր ցոլաց սուրբ առաքյալի բերանից և մտավ պատանու բերանը, և կենդանացավ: Աղաղակեցին միաբերան և ասացին. «Աստված է երևացել մեր մեջ»: Եվ երիտասարդները բռնեցին սուրբ առաքյալին, բարձրացրին իրենց բազուկների վրա, իսկ ուրիշներն շտապում էին զոհեր ու պատարագ բերել: Իսկ սուրբ առաքյալը փախավ նրանց ձեռքից, հեռացավ ամբոխից և աղաղակեց. «Ես ծառան եմ ամենակալ Տիրոջ և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի, և Սուրբ Հոգու, որի անունով կենդանացավ այդ մեռյալ պատանին: Ես ուղարկվել եմ ձեզ մոտ քարոզելու արքայության Ավետարանը, որպեսզի դուք ընդունելով կյանքի Բանը՝ ապրեք և դառնաք ձեր ընդունայն պաշտամունքից, որ պաշտում եք ձեր տգիտության և անհավատության պատճառով, և ճանաչեք միակ ճշմարիտ Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ ստեղծեց երկինքն ու գետինը, ծովը և ամենը ինչ որ կա դրանց մեջ»: Եվ նրանց տվեց Մատթեոսի Ավետարանը, որ վերցրել էր քարոզության համար: Եվ երեք օրում հազիվ զսպեց ժողովրդին՝ զոհ չմատուցելու իրեն: Այնժամ մկրտեց պատանուն Սուրբ Հոգու լուսավորությամբ, հոգևոր հրով և ջրի մաքրությամբ, հայր հազարապետով և նրա ընտանիքով ու ազգականներով հանդերձ: Եվ պատանու անունը դրեց Մատթեոս՝ սուրբ ավետարանչի անունով, և նրան ձեռնադրեց առաքյալների բաժանման տասնութերորդ տարում:

Իսկ ովքեր քաղաքից ելել էին պատանու հետևից և տեսան սքանչելիքը և որ հազարապետն ու ամբողջ ազգը հավատացին Քրիստոսին՝ սուրբ առաքյալի խոսքերով ու նշաններով, իրենք ևս եկան հոժարակամ մկրտվեցին ջրավազանում Սուրբ Հոգով:

Այն քաղաքում յոթ բագին կար, իսկ դրանց մեջ՝ մարդու նմանությամբ կռած ու քանդակած կուռքեր, ձևով Արեսի, և չափով Արամազդի, որ զորապետը, առաքյալի հրամանով, խորտակելով կործանեց և բաժանեց աղքատներին ու կրոտյալներին: Եվ սուրբ առաքյալը բազում զորություններ կատարեց՝ հիվանդների և ախտաժետների վրա, [փրկելով] պես-պես ցավերից, չարչարանքներից, և բազում դևեր հանեց և հալածեց քաղաքից՝ տեսնողների համար ակնհայտ: Եվ այնտեղ սեղան հաստատեց և իր աշակերտներից մեկին թողեց այնտեղ՝ քահանայագործելու, նաև պատանուն՝ ըստ ձեռնադրության, որ ստացավ Սուրբ Հոգու լույսը:

Եվ երբ նրանց հաստատեց կրոնական սուրբ հավատի, ելավ գնաց Գերմանիկեի աշխարհը՝ Սուրբ Հոգու ընտրած վիճակը: Երբ նա մտնում էր այնտեղ, այն ամբողջ երկրում տարածվեց նրա համբավը, և՝ նշաններն ու գործերը, որ կատարվում էին սուրբ առաքյալի միջոցով, արեգակի ճառա-

գայթների նման տարածվում էին ամբողջ երկրով մեկ: Եվ բոլորը շտապում էին գալ նրա մոտ, և բերում էին հիվանդներ՝ պես-պես ցավերով, և Տիրոջ զորությամբ բուժվում էին: Շատերը նստում էին ճանապարհներին՝ սպասում, ակնկալելով հանդիպել նրան, որպեսզի երբ նա անցներ, հիվանդությամբ ախտահարվածները և դիվահարները առողջություն գտնեին: Եվ երբ նրանց թագավորը լսեց առաքյալի այնքան սքանչելիքների լուրը, շատ բորբոքվեց, և առաքեց իր ծառաներին, հրամայեց նրան բանտում պահել հինգ օր: Հինգ օր հետո իր մեծամեծներով ու Գերմանիկեի իշխաններով հանդերձ նստեց ատյանում և հրամայեց բերել նրան: Երբ գնացին բանտ, մեծ բազմություն էր գալիս, շրջապատելով այն վայրը, և բանտից դուրս սաստիկ լույս ծագեց՝ ինչպես արեգակի լույսը միջօրեին: Եվ ահ պատեց նրանց, որ եկել էին սրբին ատյան՝ խոշտանգման տանելու: Եվ ահով շտապ դարձան այնտեղից, իրենց տեսած մեծամեծ սքանչելիքները պատմեցին թագավորին և նրա հետիններին:

Այն ժամանակ թագավորը նաև նրա հետի մեծամեծները մեծ ցասումով հրամայեցին, որ հրկիզեն բանտը և դրա հետ այրեն Աստծու սրբին: Իսկ նա բանտում ամեն օր աղոթում էր, որ Աստված գթա իր արարածներին, և դառնան մոլորությունից, որ ընկել էին խորին կորստի անգիտության խավարի մեջ, սատանայական խաբեպատիր մոլորությամբ, որովհետև պաշտում էին իրենց ստեղծած, իրենց ձեռքի գործերին:

Ու մինչ նրանք այսպես էին մտածում սրբի մասին, հանկարծակի ահեղ որոտմունք ու ճայթյուն եղավ ամպերից՝ հրացայտ փայլատակումով: Նրանք ընկան գետին և նրանց մտքերը ցնորվեցին, եղան անխոս անասունի նման, որոնց մեջ չկա իմաստություն: Իսկ սուրբ առաքյալը բանտից դուրս ելավ, մեկ առ մեկ ձեռքը դրեց նրանց վրա, կազդուրվեցին, կանգնեցին իրենց ոտքերի վրա: Եվ նրանց միտքը վերադարձավ իրենց, և սուրբ առաքյալից խնդրեցին ողորմություն, գթություն հայցեցին Տեր Աստծուց և՝ բուժում ստանալ իրենց հասած հարվածներից: Իսկ Աստծու սուրբն

ասաց. «Ում մարմնի աչքերն են բաց՝ տեսնում են միայն այս աշխարհի լույսը, և ոչ ճշմարիտ լույսը, որ լուսավորում է աշխարհ եկող ամեն մարդու: Արդ, եթե համաձայնեք իմ խոսքերին և հավատաք Աստծու Միածին Որդու Ավետարանի քարոզությանը, որ ես եմ ձեզ ավետարանում, կընդունեք ձեր ստացած հարվածների բուժումը, որ հայցում եք Տիրոջից՝ իմ բարեխոսության միջոցով, և կապրեք դուք և կլինեք անստվեր լույսի ու հավիտյան անանց կյանքի ժառանգորդներ, որ Աստծու Որդին Հիսուս կտա ձեզ, եթե հավատաք Նրա անվանը աներկբա խոստովանությամբ»: Պատասխանեցին. «Հավատում ենք քո Աստծուն, որ դու հավատալով պատմում ես մեզ, միայն թե մեր անձերն ապրեն, և լուսավորես մեզ»: Եվ առաքյալը, ինչպես ամեն տեղ, այնտեղ ևս քարոզեց Մատթեոսի Ավետարանը, և Եսայի տեսանողի մարգարեությունը, և դրանց մեկնությունը, որ կա առակներում, և խորիմաստ ճառերը, որ կային մարգարեության ու սուրբ Ավետարանի մեջ:

Այնուհետև թագավորները, մեծամեծները, նախարարները սկսեցին շտապեցնել սուրբ առաքյալին և ասացին. «Շուտ կատարիր մեր մեջ Ավետարանի քարոզությունը, որից, ասում ես, մկրտվելով կհասնենք մեղքերի թողության և երկնքի արքայության, որպեսզի բուժումն լինի մեզ հասած հարվածներից: Արդ, մի՛ ուշացնիր մեզ տալ օգուտը, որ մեր փրկության համար է, որ քո բերանից լսեցինք, և մեզ հասած այս պատուհասի խրատը: Այժմ իմացանք և ճանաչեցինք, որ քո Աստվածը ճշմարիտ Աստվածն է, և չկա մեկը Նրանից բացի, և մենք Նրան կծառայենք ու կհնազանդվենք, քանի որ Նա է Աստված ճշմարիտ և հավիտենական կյանք և աշխարհների փրկիչ»: Այնժամ սուրբ առաքյալը նրանց տարավ վտակի մոտ, որ հարավակողմում իջնում էր փոքր ձորակից, իջեցրեց ջուրը, մկրտեց նրանց: Եվ նրանք բացին աչքերը և տեսան Սուրբ Հոգին, որ իջնում էր օդով և պարզ լույսով, և լուսավորեց նրանց, նրանց լույս հագցրեց իբրև հանդերձանք, խուսն սեղան բացեց և կերակրեց նրանց երկնային հացով և

Աստծու Որդու արյունով, և աղոթելով՝ ձեռքը դրեց նրանց վրա, որպեսզի հաստատ մնան հավատքին, որ ընդունեցին և լուսավորվեցին Սուրբ Հոգու լույսով: Եվ նրանք խնդրում էին սուրբ առաքյալին, որ մնա իրենց մոտ և հովվի իրենց, որ անբաժան մնա իրենցից: Իսկ նա պատասխանեց. «Ես նաև այլ քաղաքներում եմ ավետարանելու, ինչպես ասաց Քրիստոս. «Գնացեք բոլոր հեթանոսների մեջ, մկրտեցեք նրանց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու» (Մատթ. ԻԸ. 19): Արդ, Քրիստոս ինքը, որին հավատացիք և լուսավորվելով կնքվեցիք Նրա Հոգով, Նա կլինի ձեզ հետ, իսկ մենք [մեկնենք], քանի որ մեզ է հանձնել հեթանոսներին, մի՛ հակառակվեք Նրա հրամանին»: Եվ լսելով՝ թույլ տվին նրան:

Եվ սուրբը գնաց հասավ Պարթևների, Մարերի և Ելիմացոց երկիրը, և նրանց քարոզում էր կյանքի Բանը: Պարթևներից շատերը դարձան դեպի զորությունների Տերը՝ նշաններով, հնարներով և պես-պես բժշկությամբ, որ սուրբ առաքյալից ստացան, առողջացում ախտերից՝ Տիրոջ ողորմությամբ և գթությամբ: Եվ այնտեղ լուսավորելով շատերին՝ գնաց Պարսից և Մոգուց կողմերը և սկսեց նրանց քարոզել իր սովորական վարդապետությունը, Մատթեոսի Ավետարանը, և ինչ հանգամանք որ կար մոգերի վերաբերյալ՝ դրեց նրանց առջև: Եվ հասավ մինչև նրանց կրակապաշտության վայրը, որ մոգության օրենքով պաշտում էին, իր ձեռքերը պարզեց դեպի արևելք, արեգակի դեմ, որը պաշտում էին, և արգելեց այն և նրա ճառագայթների ուժը պակասեցրեց մինչև օրվա վեցերորդ ժամը: Եվ երկնքից նշան՝ հրո սյուն կանգնեց կրակարանի մեջ, հանդիմանելով նրանց մոլորությունը՝ տեսիլքով ու սքանչելիքով, փոխանակ սպասարկեն Հելիոսին, Սեփին, Արեսին և Պռենին: Բայց չնայած ի վերուստ այնքան մեծ սքանչելիքներ ու զարմանալի նշաններ եղան, բայց նրանք չվախեցան դառնալու տարրերի երկրպագությունից, որի մեջ ընկել էին սնոտի առասպելաբանությամբ ու բարձրահոն պարծանքով, միայն ութ հոգուց բացի, որոնց լուսավորեց և հանեց նրանց խուժադուժ ազգի կործանվածների միջից:

Եվ անցավ գնաց Հայոց Գողթն գավառը, շտապեց հասնել Թադեոսի վիճակը՝ ըստ Սուրբ Հոգու հրամանի: Եվ այնտեղ քարոզեց կյանքի Բանը, և նրանք խնդությամբ ու մեծ հոժարությամբ ընդունեցին, հավանեցին ու հնազանդվեցին, լուսավորվեցին ավազանի մկրտությամբ: Նրանց [մոտ] երեցներ թողեց այնտեղի մոգերից, որ աշակերտեցին սուրբ առաքյալին: Եվ բազում զորություններ կատարեց Աստված այն այրերի ձեռքով ամեն տեղ, ուր հասնում էին նրանց ոտքերը: Եվ շատերին սնոտի պաշտամունքից դարձրին ի Տեր, և նրանց վրա իջավ առաքելական շնորհ:

Սանատրուկ Թագավորի քսանիններորդ տարում սուրբ առաքյալ Բարթուղիմեոսը մտավ Հայաստան Սուրբ Հոգու հրամանի համաձայն որ նրան ընտրեց հեթանոսներին դարձի բերելու առաքելության: Եվ Թովմային, որ յոթանասուն աշակերտներից էր, ըստ իր առաջնորդական վերակացության, գրեց նրան, որ իրենց զանց չառնի՝ քարոզելու արքայության Ավետարանը, ինչպես ամեն տեղ, Թադեոս առաքյալի փոխարեն:

Եվ սուրբ առաքյալը եկավ Արտաշի բլուրը, հանդիպեց մի ուրիշի՝ տասներկուսից, Հուդա Հակոբյանին: Եվ այնտեղ, ուր պատահեցին միմյանց՝ տերունական խաչի նշանը կանգնեցրին և միմյանցից բաժանվեցին մեծ ուրախությամբ: Եվ Հուդան գնաց իր տեղերը: Իսկ Բարթուղիմեոսը գնաց մտավ Հայոց Հեր և Զարևանդ գավառները, և հիվանդների վրա նշաններ ու հմտություններ բանեցրեց, և բազում դևեր հանեց, այնտեղ լուսավորեց շատերին և մխիթարեց սուրբ ավետարանի վարդապետության խոսքերով, նրանցից հավատում ստացավ, որ հաստատուն կմնան ընդունած հավատքին, և հավատարիմ եղան: Մեկ-մեկ ձեռքը դնելով՝ նրանց հանձնեց Աստծու շնորհներին: Իսկ ինքը գնաց Հայոց Ուրբանիոս քաղաքը: Եվ նրա մոտ էին գալիս բոլոր նեղվածները պես-պես ցավերից ու տանջանքներից, և բուժեց բոլորին և լուսավորեց սուրբը ավազանի մկրտությամբ:

Նրա մասին լսեց Ոգուհին՝ Սանատրուկ Թագավորի քույրը, որ Աբգարի քրոջ դուստրն էր, և եկավ նրա մոտ գաղտ-

նաբար, լսեց նրանից կյանքի Բանը, հավատաց մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ ինքը և բոլոր յուրայինները: Եվ հագավ կուսության զգեստ, իսպառ հրաժարվեց աշխարհի փառքից և աշակերտելով առաքյալին՝ շրջում էր նրա հետ: Թագավորը լսեց եղելությունները, մեծ ցասումով բռնեց՝ կատաղի արյունարբու գազանի նման, ուղարկեց Տերենտիոս հազարապետին և նրա հետ եղածներին: Եվ երբ հազարապետը թագավորի հրամանով եկավ նրա մոտ և տեսավ Աստծու սրբին՝ գորով զգաց նրա նկատմամբ, և նա սկսեց նրան քարոզել արքայության ավետարանը: Եվ Տերը բացեց նրա միտքը՝ անսալու նրա խոսքերին: Նա բորոտության ախտով էր տառապում, և սուրբ առաքյալը նրան գիշերով մկրտեց, և լուսավոր ամպը հովանի եղավ այնտեղի վրա, և հրո լույսը շրջափակեց սրբարար ավազանը: Երբ նա ելնում էր ջրից՝ նրա վրայից ընկավ գոսացած մաշկը՝ ծառի կեղևի և որթի տերևի նման և լույս հագավ իբրև հանդերձ: Եվ տեսնելով սքանչելիքը՝ շատերը հավատացին Տիրոջը:

Երբ սքանչելիքի լուրը հասավ թագավորին, առավել զայրացավ, աններում բարկությամբ շտապ նախարարներից ուրիշ մեկին ուղարկեց, որ արագ վերջ տա դրան, որ չթուլանան ու մնան, տևաբար լսեն նրանց: Եվ սուրբ առաքյալին՝ կույսի և հազարապետի ու մյուս աշակերտածների հետ տարան ատյան: Եվ վեց հոգի սուրբ առաքյալին փշոտ մահակներով տանջեցին մեկ ժամի չափ, և կարծում էին, որ նա մեռել է. քաշեցին քաղաքից դուրս գցեցին: Բայց սուրբ առաքյալը կենդանի էր զորությամբ և ուժով իր Տիրոջ, որին հավատացել էր: Մոտ երեք ժամ այսպես ընկած մնաց, և նրա շուրջը [հավաքվել էր] մեծ բազմություն քաղաքից և նրա մերձակայքից: Երեք ժամ հետո շարժեց ձեռքը, և ձեռք մեկնեցին, նա ելավ նստեց ամուր, և ձեռքերը վեր բարձրացրեց դեպի երկինք, ասաց. «Տե՛ր Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, այս վիճակը ձեռքից մի՛ թող Թադեոսի, Հուդայի և իմ՝ Բարդուղիմեոսի խնդրանքով, որ հոգ տանեմ այս երկրի համար, որ ոտնահար չլինի թշնամուց, այլ սրանց տուր ողորմության շնորհ, որպեսզի դառնան սնոտի կուռքերի երկրպագությունից, որ զուր և անտեղի մոլորվել են անհավատության տգիտությունից: Սրանց տուր հովիվ և առաջնորդ, որ Քեզ ճանաչեն միակ ճշմարիտ Աստված և՝ որ առաքեցիր Հիսուս Քրիստոսին: Ինձ ևս ընդունիր, Տեր իմ, և Քեզ հավատացողներիս պահիր»:

Երբ սա ասաց՝ հողը շարժվեց, և ահա լուսեղեն կամարը եկավ կանգնեց սրբի վրա: Եվ նա նայեց վերև՝ երկինք, ավանդեց հոգին, և անուշության հոտ բուրեց, և սուրբ Թադեոս առաքյալը մարմնավոր տեսիլքով ընդառաջ էր գալիս նրան: Եվ գնացին նույն կողմը, որտեղից եկավ աստծու սուրբ Թադեոսը: Եվ ահ պատեց բոլորին, և այն օրը երկու հազար հոգի հավատացին, և բոլորը փառավորում էին Աստծուն կատարվածի համար: Իսկ կամարաձև լույսը [սրբի] մարմնի վրա մնաց տասներկու օր:

Իսկ երանելի Ոգուհիին ու հազարապետին սպանեց սրով, նաև բազում ուրիշների: Տեսնելով սուրբ առաքյալի մարմինը՝ հանգստի տեղափոխեցին նույն տեղում, նույնպես և մյուս վկաներին, ի փառս ամենասուրբ Երրորդության: Իսկ երբ որոտումն եղավ՝ խուլերը լսեցին և բուժվեցին, տեսան կույրերը և լուսավորվեցին, և համրերը խոսեցին, և բոլորը ամեն ախտից բուժվեցին, որոնք հավատացին մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ սուրբ առաքյալ Բարդուղիմեոսի միջոցով: Եվ հավատացյալները միաբան ձեռքերը վեր բարձրացրին, միաբերան փառավորում էին մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Նրա հետ Հորը և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԲԱՐՂԱՄԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն օրերին հռոմայեցոց թագավորն էր ամբարիշտ Նոմերիանոսը: Իր արքայության երկրորդ տարում հալածանք սկսեց Աստծու եկեղեցու դեմ, մտադրվելով ամբողջապես վերացնել քրիստոնյաների կարգն ու կրոնը և չարաչար տանջանքներով սպառել Քրիստոսի հավատացյալներին: Դատավորներ և իշխաններ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը, որ դատապարտեն նրանց, ովքեր չեն պաշտում սնոտի չաստվածներին և չեն երկրպագում աստված կոչվածներին: Այն ժամանակ խռովության ամպրոպ և դառն սուգ եղավ Քրիստոսի հավատացյալներին: Այդ նույն օրերին անօրեն Պրեմիանոս իշխանը եկավ Կիլիկիայի կողմերը ասորիների մայրաքաղաք մեծն Անտիոք, վերցրեց այդ նահանգի եպարքոսական իշխանությունը՝ քննելու և մահվան դատապարտելու, ում որ գտնի Տիրոջը հավատացող: Բազում քրիստոնյաներ՝ միասին հափշտակված պատուհասվում էին հելլենացի բռնավոր այդ անաստվածներից, որ մարտնչում էին Աստծու եկեղեցու դեմ: Այլ կալանավորների հետ բռնվեց նաև երանելի Բարղամը և բանտարկվեց Անտիոք քաղաքում նրա ձեռքով, ով գրավել էր դատական իշխանությունը: Որը նույն քաղաքում չարաբարո և վայրագ կարծրությամբ էր գործում: Եվ հրապարակով նա նստեց դատողական բեմին, ասում է իր առաջ եղած զինվորներին. «Այստեղ բերեք այն աղարտված ծերուկին»: Եվ իսկույն նրան բերին նրա առաջ: Իշխանն ասում է նրան. «Ի՞նչ է քո անունը»: Եվ նա պատասխանում է. «Եթե ճշմարիտ անունս ես հարցնում, իմ կատարյալ անունը քրիստոնյա է: Այդպես եմ կոչվում, իսկ նախ իմ ծնողներից կոչվել եմ Բարղամ»: Իշխանն ասաց. «Լավ է, որ անունդ Բարղամ է, քանի որ դա կարող է մեզ հավատարիմ դարձնել, որովհետև անունդ, ծերությունդ և հասակդ քեզ բազում անզգամության կհասցնեն»: Բարղամն ասաց. «Ես

շատ գեղեցիկ անուն և կենցաղավարություն ունեմ, քանի որ խոստովանում եմ Աստված՝ Աստծուց ծնված նախ քան հավիտյանս և մարմնացած վերջին օրերս»: Դատավորն ասաց. «Անգգամ, դրա մասին չհարցրի քեզ, այլ ինձ թվում ես անխոհեմ բարբառող, չնայած ծեր ես»: Բարղամն ասաց. «Մի՛ բարկացիր, ո՛վ իշխան, քանի որ սիրելով Քրիստոսին, քեզնից հրաման չառա, բայց պատասխանեցի»: Դատավորն ասաց. «Ամենայն ստուգությամբ ուզում եմ հարցնել քեզ. այս ամբոխը, որ կա մեր շուրջը, ուզում է ճշմարիտ հարցումը լսել և տեսնել քո համառելը»: Ամբոխն ասում է. «Ահա բոլորս այստեղ ենք՝ լսելու քո խոսքը իբրև մեր նախորդի, քանի որ մեր կրոնը բռնությամբ չէ»: Դատավորն ասաց. «Այժմ պետք է դու ըստ կարգի պատասխան տաս և ոչ թե այլ բաներ բարբառելս: Այսուհետև քեզ հայտնի լինի, որ եթե իմ հարցից դուրս պատասխան տաս՝ չարաչար վախճան կունենաս»: Բարղամն ասաց. «Մեծ իղձով ցանկանում եմ, որ դու ճշմարտությամբ հարցնես, իսկ ես ամենայն ստուգությամբ պատասխանեմ, որովհետև ուզում եմ, որ եկած ամբոխը, մանավանդ քրիստոնյաները, տեսնեն ինձ: Ես գիտեմ, որ հակառակվելուց առաջ քրիստոնեությունն է պատվվել, ուզում եմ քեզ ստուգությամբ հարցնել մեր կամքի իրավունքը, իսկ սրան դատավոր [կարող է] լինել Քրիստոսի Հայրը: Արդ առաջին ճշմարտությունն է՝ խոստովանել Քրիստոսին, ապա մաքուր վարքով կենցաղավարել. հանդարտություն, հեզություն, սեր, քաղցրություն, արդարություն, ներողամտություն, բարեգործություն և ինչ որ ատում ես՝ ընկերոջը չանել»: Դատավորն ասաց. «Երդվում եմ աստվածներով և ինքնակալի բախտով, որ լավ ասացիր, թե ճշմարտությունը և ուղիղ կենցաղը ազատության եղանակից են, բայց ես դա քեզ չհարցրի: Արդ, ո՞ւմ ես երկրպագելու»: Բարղամն ասաց. «Ես նախապես ասացի՝ երկրպագում եմ Հորը և Որդուն, որը Նրանից է ծնվել, և Նրա էակից ու մշտնջենական փառակից Սուրբ Հոգուն»: Պրիմիանոս դատավորն ասաց. «Քեզ չասացի՞, որ ծեր հասակդ քեզ չեղել է զազրախոսության և խե-

լացնորության: Քեզ չի՞ թվում, որ ինքնակալը աստված է»: Բարղամն ասաց. «Երդվում եմ Աստծու Որդի Հիսուսով, որ ամաչում եմ գլուխս բարձրացնել և նայել քեզ, որ արարված մարդկանց աստված ես ասում և դրանց աստված ես անվանում, քանի որ ես չեմ ուզում արարածի պաշտել և երկրպագել, այլ ամեն ժամ խոստովանում եմ Աստծու Որդուն, որ Հորից է ծնվել հավերժից առաջ»: Պրիմիանոս իշխանն ասաց. «Անպարտելի ինքնակալները հրամայեցին՝ ովքեր աստվածներին չեն երկրպագում՝ ողջակիզել»: Բարղամն ասաց. «Պատրաստ եմ իմ մարմինը տալ, որ անես ինչ կամենաս, որ ես քիչ կամ շատ տանջանքներով կհամոզեմ քեզ, որ արարածներին և ձեռակերտներին չեմ երկրպագում»: Դատավորն ասաց. «Պատուհասները քեզ համար կան և մնում են, բայց այժմ դանք ամբոխին, որ մեր շուրջն է. ասա՛ Հայրը ի՞նչպես Որդի ունեցավ և երբ»: Բարղամն ասաց. «Հնարավոր չէ, որ հավերժից առաջ եղածը ժամանակով սահմանափակվի, քանի որ ասում է. «Հավիտյանից առաջ ծնեցի քեզ» (հմմտ. Եբր. Ա. 5, Ե. 5): Եվ ինչու ես Աստծու մասին հարցնում՝ ինչպես և երբ»: Հեգեմոն Պրիմիանոսն ասաց. «Երբ քեզնից լսեցի, թե քո Աստվածը Որդի ունի, դրա համար հարցրի, թե դա ինչպես է: Ես իմ աստվածներին եմ երկրպագում, ինչպես հրամայեցին իմ տերերն ու թագավորները»: Բարղամն ասաց. «Ասացի և այժմ նույնը կրկնելուց չեմ հրաժարվում. երկրպագում եմ Աստծու Որդուն, որ ծնվել է անժամանակաբար, իսկ իրերը և մարդկանց ձեռքի գործերը երբեք աստված չհամարեցի և այսուհետև այդպես կլինի թեկուզ ամբողջ փորոտիքս դուրս թափես կամ մարմինս կտոր-կտոր հոշոտես»: Դատավորն ասաց. «Քեզ չեմ ների զազրախոսությանդ և համառ մտքիդ համար, այլ չարաչար հարվածներով կպատուհասեմ անզգամությունդ և շղթաներով կմաշեմ քո կզակի կարծրությունը, որ հավանելով կատարես մեր ինքնակալ թագավորների հրամանը: Քանի որ ողոքական խոսքերով կամեցա քո միտքը դարձնել իմաստության և խնայելով ծերությունդ ներողամտաբար հարցափորձեցի քեզ, իսկ դու անհողդողդ մնացիր

անմիտ անզգամությանդ»: Բարղամն ասաց. «Մի՛ բարկանա ինձ վրա, ով թագավոր, քանի որ մարմնիս վրա իշխանություն ունես, իսկ հոգուս վրա ունի Աստված՝ ամեն ինչի արարիչը, որին հավատացել եմ և հաստատուն եմ նրա խոստովանությանը մինչև մահ: Եվ երբեք զոհ չեմ մատուցի սնոտիներին, չեմ երկրպագի խուլ և կույր դևերին, որոնք խավարի տանջանքների են մատնում նրանց հոգիները, ովքեր մոլորվելով հավատում և երկրպագում են իրենց»: Դատավորն ասաց. «Մի՛ կարծիր, թե միանգամից վերջ կտամ քո կյանքին, այլ՝ փոքր-փոքր, սակավ առ սակավ կխոշտանգեմ քո մարմնի բոլոր անդամները ի ցույց բոլորի: Տեսնեմ՝ քեզ կօգնի՞ Աստծու Որդին, որ դու ասում ես»: Բարղամն ասաց. «Օգնեց և կօգնի և չի թողնի, որ հեռանամ իր կամքից ու սիրուց կամ պաշտեմ մարդկանցից ստեղծված աստվածների սնոտիապատիր ձուլածո արձաններին»: Դատավորն ասաց. «Ահավասիկ կսկսեմ քո չարաչար տանջանքները, որ մտքովդ չեն անցնում քո անզգամության համաձայն, որպեսզի տանջանքների միջոցով հպատակվես ինքնակալների հրամաններին և զոհ մատուցես աստվածներին»: Բարղամն ասաց. «Ո՛վ իշխան, եթե չես բարկանա՝ ճշմարիտ եմ ասում ստուգապես. աստվածների երկրպագուները հիմարացած են, որովհետև դրանց ստեղծողները անհայտ և շուտ են մահանում: Ինչու պիտի դրանցից ստեղծվածները հավիտյան մնան»: Դատավորն ասաց. «Մաշկեցեք դրան չորս կողմից, որպեսզի դրա մեջ շրջող դևը հավանի և լսի մեզ»:

Բարղամն ասաց. «Նախապես ասացի քեզ, որ ես մի Աստված եմ պաշտում, որ ստեղծեց ամեն ինչ, և երկրպագում եմ Նրան: Ուստի չեմ վախենում քո սպառնալիքներից, քո աչքերի առաջ ունենալով Աստծու երկյուղը՝ կմնամ անսասան: Եվ ոչ միայն ես, այլև բոլորը, որ հետևում են այս օրենքներին ու կրոնին»: Պրիմիանոս իշխանն ասաց. «Հիմա կզգաս տանջանարանների քերանքը»: Բարղամն ասաց. «Երդվում եմ Աստծու Որդիով, որ չզգացի քո այդ տանջանքները, իմ աչքում ունենալով իմ Աստծուն: Տանջանքներից առավել

վշտացած եմ ձեր անզգամությամբ, որ ճարտար մարդկանց կռած-կոփածները աստված եք անվանում, որի համար տենչում եմ ազատվել այս կյանքից և չեմ լսում քո խոսքերը»: Դատավորն ասաց. «Ի՞նչ ես խոսում, Բարղամ, հավանիր և զոհ մատուցիր, քանի որ պատկառում եմ պատվական սպիտակ մազերիցդ և քո վայելչագեղ պատկերից, քեզ խնայելով, ուզում եմ բավարարվել ստացածդ տանջանքներով»: Բարղամն ասաց. «Ես բնավ տանջանքներ չզգացի և պատրաստ եմ մարմինս տալ ավելի խիստ տանջանքների, որքան և պատճառես ինձ: Քեզ կհավանեցնեմ իմ գործերին՝ հավատում եմ Աստծուն, իսկ դևերին զոհ չեմ մատուցում, որովհետև Քրիստոսի սերը ինձ չի թողնում հեռանալ իրենից: Եվ եթե չբարկանայիր, քեզ համառոտակի կասեի մեր բարեպաշտության մասին: Արդ, ներիր մեծահոգաբար»:

Իշխանն ասաց. «Ասա, ինչ որ ուզում ես ասել. իմաստուններից ո՞վ չգիտե, որ ձեր խոսքերը պառավների առասպելներ են, իսկ դուք ստության հետևողներ: Բայց ասա. մի՞թե ինձ կարող ես քրիստոնյա դարձնել»: Սուրբն ասաց. «Աղերսում եմ Աստծուն, որ ոչ միայն դու լինես քրիստոնյա, այլև բոլորը, ովքեր պատրաստած ձեռակերտները աստված են համարում, որպեսզի զղջան և խոստովանեն, որ Աստծու Որդին ճշմարտապես ծնվել է Հորից: Իսկ իմ հավատի մասին՝ ասում է. «Ո՞վ մեզ կանջատի Քրիստոսի սիրուց՝ նեղությունները, անձկությունները թե հալածանքը, սովը, վիշտը թե սուրը. սրա համար [ոչ ոք] չի կարող հեռանալ Աստծու սիրուց և զոհ մատուցել դևերին, հավատալ մարդկանց ձեռքի գործերին և արարածներին»: Իշխանն ասաց. «Բազմիցս ներեցի քեզ, կարծելով թե ավելի օգտակար բան կխոսես, բայց դու անուսաբար այդպիսի զազրախոսություն ես հնչեցնում անիմաստ և տգետ մարդկանց ականջին»:

Այնժամ զինվորներին հրամայեց բռնել և կախել գլխիվայր և քերել, մինչև որ մերկանա ամբողջ մարմինը: Իշխանն ասաց նրան. «Մեզ ցույց տուր, որ քո Աստվածն ու հավատքը կօգնեն քեզ»: Բարղամն ասաց. «Օգնել է և կօգնի, ոչ միայն

ինձ, այլև բոլորին, որ կան և մնում են այս խոստովանությամբ: Քանի որ այստեղ, այս աշխարհում ընդունելության և պատվի են արժանանում, իսկ հավիտենական կյանքում կժառանգեն երկնի արքայությունն»: Իշխանն ասաց. «Հրամայում եմ բանտարկել, որ ավելի ու ավելի ուժեղ տանջենք դրան»: Բարղամն ասաց. «Այժմ ևս նույն Աստվածն է, որ ինձ օգնական եղավ, և երբ կկամենաս չարչարել՝ պատրաստ եմ, որովհետև իմ Աստվածը չի թողնի իր սիրուց և անսպառ բարիքից հեռանալ, որ կա և մնում է Նրան հուսացողներիս»:

Քիչ օրեր անց անօրեն Պրիմիանոս իշխանը քաղաքում, ավելի բարձր բեմի նստած, և քաղաքի ամբոխը իր շուրջը, զինվորներին հրամայեց առաջ բերել երանելի Բարղամին: Այնժամ զինվորները գնացին բանտ՝ իշխանի հրամանով և հանեցին նրան, կապանքներով բերին իշխանի մոտ՝ հրապարակի ատյանը: Այնժամ իշխանն ասաց նրան. «Համոզվեցի՞ր այսուհետև ազատվել մնացած տանջանքներից»: Բարղամն ասաց. «Բազում անգամ լսեցիր ինձնից, որ չեմ շեղվել իմաստներից և դևերին զոհ չեմ մատուցի, չեմ ուրանա իմ Աստծուն և արարածներին չեմ երկրպագի: Եվ այժմ նույնը կրկնել քեզ չեմ հրաժարվում: Արդ, իսկույն արա ինչ որ ուզում ես»: Իշխանն ասաց. «Կախեցեք դրան և քերեցեք երկաթի շեղբերով, որ դրան բռնած չար դևը ելնի նրանից»: Բարղամն ասաց. «Ես դև չունեմ, բայց և բնավ չեմ զգում քո տանջանքները»: Իշխանն ասաց. «Ես ձանձրացա, նաև իմ պաշտոնյաները հոգնեցին ու հեռացան, բայց չես համոզվում: Այժմ դա երկու ոտքով կկախվի երկու ծառից»: Եվ անմիջապես արեցին, ինչպես զինվորներին հրամայեց իշխանը: Բարղամն ասաց. «Ճշմարիտ եմ ասում իմ Տեր Հիսուս Քրիստոսով. ոչինչ թվացին քո հնարած տանջանքները՝ Աստված թեթևացնում էր դրանք»: Իշխանն ասաց. «Ի՞նչ ես ասում, Բարղամ, զոհե՞ս և ազատվես, թե ոչ»: Բարղամն ասաց. «Զգիտես, թե ինչ է Քրիստոսի սերը»: Իշխանն ասում է. «Համաձայնիր հետս, որովհետև երկար կախվելուց բերանիդ փականքները թուլացել են, և մարմնիդ հոդերը բաժանվել են, որի համար

խնայելով քեզ ողորմում եմ ալեհերությունդ և հորդորում եմ քեզ, որ զոհ մատուցես և ազատվես»: Բարղամն ասում է. «Իմ Աստծով, որ երկնքում է բնակվում և երկրի վրա օգնական է իր նահատակներին՝ ասում եմ. չզգացի տանջանքներդ և չեմ զոհի ապականացու սին աստվածներին: Գրված է. «Աստվածները, որ երկինքն ու երկիրը չեն արարել՝ կկորչեն երկնքի տակ» (Երեմ., Ժ. 11):

Իշխանն ասում է. «Պարզեցեք դրա ձեռքերը և տակը կրակ տարածեցեք, և այնտեղ մի բագին մատուցեք, իսկ դրա ձեռքերին կնդրուկ լցրեք. և եթե անշարժ մնան ձեռքերը՝ կտեսնենք, իսկ եթե ձեռքերին եղածը թափի բագինի մեջ՝ ուրեմն զոհ մատուցեց»: Իսկ Քրիստոսի արիագույն զինվոր Բարեղամը վեր պարզեց իր ձեռքերը և հեռացրեց բագինից և աչքերը երկինք բարձրացնելով՝ ասում էր. «Քեզ՝ Հորդ և Քրիստոսիդ եմ տալիս մարմինն իմ. Քո պատրաստ բնակարանից հաշտության աչքով երկնքից նայիր ցրված ու պառակտված Քո ժողովրդին, և իմ արյան հեղումը ի մաքրություն սրանց համարիր»: Եվ կնդրուկը բագինի մեջ չլցրեց, այլ հրի վառվելուց նրա ափերը փակվել էին, քանի որ կայծակը տոչորելով խորովում էր մարմինը սուրբ վկայի, և մկաններըը միասին իրար վրա էր հավաքում և մի կողմից ծակում էր ձեռքը: Եվ այսպես առ Աստված ունեցած սիրով հանդուրժելով՝ Փրկչի նահատակը ավանդեց հոգին, վկայելով Նոմերիանոս թագավորի տարիներին, մեծ Անտիոքում, Պռիմիանոս հեգեմոնի իշխանության ժամանակ, դեկտեմբեր ամսին, որ քսան և ութն էր ամսի, և մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու, մեզ թագավորելու. Որի հետ՝ Հորը և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔ ԵԼԼԱԴԻՈՍԻ՝ ՍՈՒՐԲ ԵՎ ՓԱՌԱԲԱՆՎԱԾ ԲԱՐՍԵՂ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ ԿԱՊԱԴՈՎԿԻՈ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելիներ և բարեկամներ, պատմությունս անհավատալի չէ աներկմիտ որդիներին, որոնք հայրենատուր վարքի են հետևում: Այլև իրավացի եմ համարում, որ արտասուքով ու չարչարակցությամբ վշտակից լինեք, նաև մանավանդ գոհությամբ աղոթք մատուցեք մեր բոլորի Աստված և Տեր Քրիստոսին, որպեսզի, ինչպես խոստացա, գեղեցկապես սկսեմ գրել մեր հովվապետ և վարդապետ Բարսեղի անհաս վարքն ու սքանչելագործությունը, որ ժամանակ անց խոր մոռացության չմատնվի: Ու նաև՝ երիցս երանյալ և սքանչելի այրերինը, որ և ասում եմ իսկ, Գրիգորինը, որ աստվածաբանությամբ գերազանցելով ճոխանում էր, և Նյուսա քաղաքի ստացվածք չունեցող Գրիգորինը, և ոչ միայն նրանց, այլև ամենագովելի Եփրեմինը, որոնք միմյանց շուրջը խմբված փայլեցին: Ախորժելով ես կամեցա Սուրբ Հոգու տեսիլի միջոցով գրել սքանչելի այրերի ժուժկալության դրվագը, ընտրել պատմությունները և լրացնել պակասը՝ և որպես հարազատ որդի պարտքս հատուցել, ինչպես վերևում ասացի, հետևեմ ու ճշմարտությամբ շարադրեմ: Լավ գիտեք արեգակի՝ ամպերով ծածկվելը, [այդպես] և ժամանակի անցնելով վայելուչ պատմությունը ծածկվում է մոռացության [քողով]: Դրա համար մեր մեծ հայրապետը, որ գոչումն է աշխարհի, Բասիլիոսը, երկնային ուժերին էր զրուցակից, փորձառու վարդապետը եկեղեցիների, որ իր ընությունն արիացրեց, որ Երրորդությանն աղոթելով խորտակեց կործանյալ Հուլիանոսին, որ խցեց աղանդավոր հայհոյիչնե-

րի բերանը, որ խզեց արիանոս[ական]ների չարափառությունը, որ քրիստոսական իմաստությամբ բռնեց ուղղափառությունից, որ հովիվ էր համորեն եկեղեցիների Քրիստոսի ժողովրդյան, որ երկնքի արքայության քահանայագործող էր, որ քրիստոսական հոտի փարելին էր, որ աստվածային հավատի ժիր վարդապետն էր, որ կենդանությանն ու մահվանից հետո մեծապես փայլեցնում էր սքանչելիքներ, որ ինչպես վերևում ասացինք, աղոթքով սատակեց աստվածամարտ Հուլիանոսին, նրան, որ բարձունքներ հանեց իր եղջյուրը և անիրավություն խոսեց Աստծու դեմ, նրան, որ անարժանն էր թագավորական պատվի և զորավիգ էր արիանոսականների չարափառությանը, նա, որ հանուն կայսրության քաղաքն ամբարշտության էր ուզում դարձնել: Եվ թե ինչից և ինչպես [եղավ], չկա ժամանակ այս պատմելու, այլ վերստին առաջ ընթանանք և պատմենք սրբի վարքը ծնունդից մինչև վախճան: Միայն Բարսեղը, որ վայելչական ճառերով վարք ցույց տվեց և աստվածային իմաստությամբ խոսքերն ու գործերը պայծառացրեց, բոլորը տալով Քրիստոսին՝ հոգին և մարմինը՝ խոսքով և գործով, և հելլենական մոլորությունը՝ սարդի ոստայնի նման, հերքում էր:

Սա յոթնամյա լինելով տրվում է գրքերի ուսման, և հինգ տարի այնտեղ մնալով ու չընդդիմանալով ուսմանը, ցանկանում էր հմտանալ փիլիսոփայության մեջ և մտածում էր թողնել Կապադովկիո Կեսարիան, որ իր բնակավայրն էր: Եվ մի օր ելնելով, մայրն առնում է նրան և գնում Աթենք՝ բազում պարկեշտությամբ և ժուժկալությամբ, իմաստությամբ զարդարուն: Եվ գնում, տալիս է նրան փիլիսոփայական ուսման հելլենների իմաստության վարդապետին, որի անունը Եվուղոս էր: Իսկ նա դյուրությամբ այնքան հասու եղավ, որ վարդապետն ու աշակերտները զարմանում էին: Իսկ նրա աշակերտակիցն էր Գրիգորիոս Մեծը, որ հետո Նազիանզի եկեղեցու և Ասիայի Աթոռի վերատեսուչ դարձավ:

Մինչև տասներկու տարի ուսանեց, երբ Հուլիանոսը, որ սկզբնական մի կարճ միջոցի քրիստոնյա էր, և Լիվիանոսը, չեղվեցին ուղիղ ճանապարհից: Իսկ սուրբ Բարսեղն առավել էր սքանչանում այրերի մեջ և մտքին դրել էր չճաշակել հաց կամ գինի՝ մինչև չիմանա աստվածային իմաստության հանգամանքները վերին տեսչությունից՝ մինչև տասնհինգ տարեկանը հանձն առնելով բոլոր խրատները և ընթանալով հելլենական ամենայն իմաստություններով և աստղաբանության մեջ կատարելության հասնելով, նրանցից լավագույնն ընտրվեց և չկարողացավ գտնել ամենքին հրաշագործող մի բան նրանցից: Եվ մի գիշեր նրա տքնելու ժամանակ աստվածային ծագում եղավ նրան, որ թողնի աղանդավորական գրքերը: Ելավ անմիջապես գնաց Եգիպտոս և եկավ առաջնորդներից մեկի մոտ, որի անունը Պորփյուրոս էր, որ տվեց նրան քահանայական գրքերը, ուր գրված էին աստվածային պատմությունների հանգամանքները: Իսկ նա այս տեսնելով դադարեցրեց ընթերցանությունը և հաստատելով աստվածային պատգամները՝ մեկ տարի մնաց այնտեղ, ջուր և բանջար ճաշակելով, և սերտում էր ճշմարիտ հավատքի խոսքերը, մնում էր այնտեղ՝ քննում և ստուգում էր ճշմարտության բանը:

Սրանից հետո վանականին խնդրեց, որ թույլ տա գնալու Երուսաղեմ՝ աղոթելու, տեսնելու այնտեղ եղած սքանչելիքները: Վերջինս աղոթելով արձակեց նրան:

Դառնալով վերստին եկավ [այնտեղ], ուր փիլիսոփայական կրթություն էր ստացել, սկսեց բազում փիլիսոփաների և հելլենացիների նվաճելով դարձնել առ Աստված, նրանց ցույց տալ փրկության ճանապարհը: Փնտրում էր իր Եվուղոս ուսուցչին, քանի որ նա էր առաջնորդը խոսքի, նրա աշխատանքի դիմաց նրան բերելով անբիծ հավատքը, որ նրան դարձնի ուղիղ հավատքի: Եվ գտավ նրան մի ագարակում՝ այլ փիլիսոփաների հետ, որ վիճում էին ինչ-ինչ բաներից, ոչ մի ցանկություն չունենալով, բացի ինչ-որ ավելի նոր բան ասելուց կամ լսելուց՝ առհասարակ հարցուփորձելով իրար: Մոտենալով և ունկնդրելով՝ Բասիլիոսը հանդիմանում էր նրանց: Եվ այնտեղ եղածներից մեկն ասում է [Եվուղոսին].

«Ինչ-որ մեկը քեզ հանդիմանում է, ո՛վ իմաստասեր»: Եվ նա ասում է. «Կամ Աստված է, կամ Բասիլիոսը»: Երբ իմացավ, որ Բասիլիոսն է, բաց թողեց մոտը եղած այրերին: Եվ Բասիլիոսն այնտեղ մնաց երեք օր, և ոչինչ չճաշակելով՝ հարցուփորձ էին անում իրար: Հարցնում է Եվուղոսը Բասիլիոսին և ասում.

– Բասիլիոս, ո՛րն է իմաստության սահմանումը:

Եվ նա ասում է.

– Իմաստության առաջին սահմանումը մահվան ճանաչողությունն է:

Իսկ նա զարմացած ասում է.

– Ի՞նչ կա ավելի քաղցր քան աշխարհը:

Եվ նա ասում է.

– Իրերն աշխարհի. բայց դառն է աշխարհը [նրանց համար], որ ախտով են գնում. այլ է ճանապարհը, որ ըստ մարմնի է, և այլ՝ որ ըստ մարմնի բնության. և [նրանք], որ մի անգամ գնում են այդ ճանապարհներով, չեն կարող ընդունելի լինել, որովհետև չեն կարող երկու տերերի ծառայել (Հմմտ. Մատթ. Զ. 24): Բայց միայն [Նրան], որ կարող է քաղցյալներին գիտության հաց բրդել և անօթևաններին առաքինությամբ ծածկի տակ առնել, և եթե մերկ տեսնի՝ կհանդերձավորի և ընտանիքի զավակից երես չի դարձնի:

Այս ասելով՝ օրինակներով նրան մղում էր դեպի փրկության և ապաշխարության, մարդասիրության ճանապարհ:

– Երեքն են,- ասում է,- գրվածքները, որ գրված են մեր կամքի դռան սեմի աջ կողմը՝ ստուգությունից առաջ, որ առաքինություն է բերում. իմաստություն, զորություն և արդարություն: Իսկ ձախից են նախ՝ ստությունը, որի պատճառով կործանվում են, [ապա] անբարեգթությունները, անաշխատությունները, անառակությունները, չարաշահությունները, բանսարկությունները, անակնածելի լեզվագարությունները և որ այս չարիքների նման են: Իսկ ապաշխարությունը վայելչապես հաստատուն է դարձնում, անդրդվելի պայծառացնում է [նրանց], ովքեր իրենով են ղեկավարվում, իսկ

ովքեր դեմ են՝ դիմադարձ են լինում: Ակնածելի ժողովի բնակիչներին ի մի հավաքելը լցնում է նրանց ժուժկալությամբ, լսողությամբ, զգաստությամբ, պարկեշտությամբ, մարդասիրությամբ և բազում բարությամբ, իսկ այս հմտության միտքն է տեսանելիքի ուշադրությունը: Իսկ [նա], ով լսում է իմ խոսքը, նախանձում է այն պատճառով, որ այս ու այն [բաները] տեսնող և տեղյակ եղա և պատմում եմ քեզ, ո՛վ Եվուղոս, որ մենք այլ օրինակ չունենք, քան ամուր կառչել ճշմարտությունից, որ առաջնորդում է մեզ դեպի փրկություն, բոլորը ելնելու են հավիտենական կյանքին և կանգնելու են Քրիստոսի բեմի առջև, ինչպես և մեզ բարձրաձայն ասում են մարգարեները՝ Եսայիասը, Երեմիան, Եզեկիելը, Դանիելը, Դավիթ թագավորը և Պողոսը առաքինի, նրանց հետ և Ինքը, որ ապաշխարության պարգևատուն է՝ բոլորի Տերը, որ կորուսյալ ոչխարին էր որոնում, և հոր ծոցից բաժանված և իր անառակությամբ բազում ստացվածքները վատնած, սովամահ եղած մանուկին վերստին ընդունեց և մտերմությամբ գիրկն առնելով համբուրեց, և զարդարեց պատմուճանով և ավելի շատ թանկագին մատանիով շքեղացրեց նրան (Հմմտ. Ղուկ. ԺԵ), այնպես, իբր նա երբեք չէր մեղանչել Տիրոջ դեմ, որ առավել գթություն ունի, և այսպիսի հաստատությամբ է տալիս հատուցումը: Որպես և մշակների մեջ, որ տասնմեկ ժամ տքնեցին, տվեց նրանց վարձը ինչպես առաջիններին (Հմմտ. Մատթ. Ի. 12): Այսպես և մեզ կընդունի՝ եթե ջրից և Հոգուց վերստին ծնվենք, և մեզ կպարգևի այն, ինչ աչքը չի տեսել, և ունկը չի լսել և մարդու սրտից չի ելել, որովհետև Աստված դա պատրաստել է իր սիրելիների համար:

Եվուղոսն այս ամենը լսելով՝ ուշքի եկավ և ասաց.

– Ո՛վ Բասիլիոս, երկնային զորությունների տեսնող, քեզնով հավատում եմ մի Աստծուն՝ ամենակալ Հորը, երկնքի ու երկրի և մնացյալի արարչին, հավատում եմ մեռյալների հարությանը և հավերժ անվախճան կյանքին: Ես,- ասում է,- հավատս ցույց կտամ քեզ և ամբողջը, որ իմն է՝ կտամ քո ձեռքը և ինձ մնացած ժամանակը կլինեմ քեզ հետ, և եթե

հաճո է Աստծուն՝ կընդունի ինձ սուրբ ջրով և աստվածային Հոգով վերստին ծննդյամբ:

Եվ Բասիլիոսն ասում է.

– Ո՛վ Եվուղոս, օրհնյալ է մեր Տեր Աստվածը, այսուհետև մինչև հավիտյան, որ ճշմարտության լույս ծագեցրեց քո մտքին և փոխեց բազմաստված մոլորությունից դեպի իր ճշմարտության գիտությունը: Արդ ասեմ քեզ, թե ինչպես գտնենք մեր փրկությունը և այս կենցաղից ազատվենք: Տո՛ւր, ինչպես ասացիր, քո ինչքը, և վաճառենք այն ու տանք աղքատներին և մեր ամեն ինչն այդպես անենք և այնպես գնանք Երուսաղեմ սուրբ քաղաքը, որ տեսնենք այնտեղի սքանչելիքները և Աստծու առաջ համարձակությամբ կանգնենք:

Եվ այդպես բարեպաշտությամբ կարգավորեցին իրենց բոլոր գործերը և սուրբ մկրտության էին փափագում: Ապա գնացին դեպի Երուսաղեմ, և երբ հասան Անտիոք քաղաքը, իջևանեցին մի պանդոկում: Իսկ պանդոկապետի որդին, որի անունը Փիլիքսիանոս էր, որ օտարասեր է թարգմանվում, շատ տրտում նստած էր դռանը. նա Լիվիանոս փիլիսոփայի աշակերտն էր և նրանից առել էր բանաստեղծական հատվածներ, որ դրանք մեկնի ճարտասանորեն և բազում հոգեկան հուզմունքի և հոգսերի մեջ վարանում էր, դրանք մեկնել՝ չկարողանալու պատճառով: Եվ նրան տեսնելով Բասիլիոսն ասում է.

– Ինչից ես այդպես վարանել, ո՛վ դու պատանի:

Ասում է նրան պատանին.

– Ինչ օգուտ կունենամ, եթե ասեմ քեզ:-Եվ ասաց նրան պատճառը: Իսկ Բասիլիոսը մոտ կանգնելով կարդում էր հատվածները և վերցնելով գրում էր դրանց մեկնությունը երեք կերպ: Իսկ պատանին խնդությամբ վերցնելով դրանք՝ եկավ Լիվիանոսի մոտ: Եվ [Լիվիանոսը] մեկնությունների լուծմունքն ընթերցելով ուրախացած ասում է.

– Աստվածուհու նախախնամությամբ այժմյան փիլիսոփաներից ոչ ոք չի կարող գտնել դրանց լուծմունքը. ո՞վ է, որ այս իրերը հորինեց:

Պատանին ասում է.

– Մի ոմն օտարական երեկ եկավ իմ պանդոկը և սիրահոժար իմաստասիրեց դրանց լուծմունքը:

Եվ առանց հապաղելու նույն պահին Լիվիանոսը եկավ պանդոկ և տեսավ Բասիլիոսին Եվուղոսի հետ և զարմանքով ծանոթացավ նրանց, որովհետև նրանց տեսնելու [հույս] չէր ունեցել, աղաչում էր, որ արժանանա նրանց իր տանն ընդունելու [պատվին]: Եվ նրանք հավանություն տալով եկան նրա հետ, և նրանց առաջ սեղան դրեց, և ճաշակեցին միայն հաց և բանջար և ուրախությամբ լցվեցին՝ գոհանալով Աստծուց: Իսկ Լիվիանոսն սկսեց ինչ-ինչ ճարտասանական խնդիրներ արծարծել, և նրանք առաջադրեցին Քրիստոսի հավատքի բանը: Լսում է Լիվիանոսը և ասում.

– Ե՞րբ է դրանց ժամանակը:

Բարսեղն ասում է.

– Երբ որ կամքը հաստատվի՝ ոչինչ չի կարող խանգարել:

Եվ նա ասում է.

– Մեծ օգուտի մեզ հասցրիր, ո՛վ Բասիլիոս, խոսիր և ինձ աշակերտող մանուկների հետ:

Իսկ Աստծու բարեշուք այրը տեսնելով հավաքված մանուկներին՝ նրանց ուսուցանում էր մաքրություն անձանց և անախտություն մարմինների, հեզ ընթացք, չափավոր ձայն և արժանավոր խոսք, անխռով կերակուր, լռություն ծերերի առջև, ունկնդրություն իմաստունների առջև, հնազանդություն վերակացուների հանդեպ, սեր ընկերակիցներին, անկեղծություն կրտսերներին, քիչ խոսել և շատ իմանալ. չերկարացնել խոսքը, չհանդգնել ծաղրախոսության, զարդարվել ամոթխածությամբ, անպարկեշտ կանանց հետ ամենևին չխոսել, հառել աչքերը ներքև, իսկ մտքերը՝ վերև, հեռու մնալ հակառակությունից, չուսուցանել իշխանաբար, ամեն մեկից հեշտությամբ պատիվ չընդունել, և ձեզնից ով որ կարող է ընկերոջը փոխ տալու, թող չպահանջի զուգակշիռը նորից ու նորից, այլ Աստծու վարձերին ակնկալել և հավիտյան կյանքի հատուցումն ընդունել Քրիստոսից:

Այս ամենն ասաց Բասիլիոսը Լիվիանոսի աշակերտներին և ինքը, հրաժեշտ տալով, Եվուղոսի հետ գնաց իր ճանապարհը:

Երբ հասան Երուսաղեմ՝ [մեծ] բաղձանքով ամբողջապես քննեցին ուղղափառ հավատքը և այդ ամենի համար Աստծուն երկրպագություն մատուցեցին, եկան տեսնելու քաղաքի եպիսկոպոսին, որի անունն էր Մաքսիմիանոս: Եվ նրա առջև ընկած աղաչում էին արժանի լինել Հորդանան գետում վերստին ծնվելուն: Եվ նրանց տեսնելով սուրբ եպիսկոպոսը առավել ևս նրանց լցրեց հավատով՝ հանձն առնելով կատարել նրանց հայցածը: Եվ նրանց ու այլ հավատացյալների առնելով եպիսկոպոսը եկավ Հորդանան գետի մոտ: Իսկ Բասիլիոսը մոտիկ կանգնելով ամբոխին՝ գետնին ընկած, մեծ հառաչանքով արտասվում էր և խնդրում էր Աստծուց հավատքի համար որևէ նշան տեսնել. և դողալով մերկացավ հանդերձից ու դրա հետ նաև հին մարդուց և աղոթելով մտավ ջուրը: Եվ մոտեցավ քահանան մկրտեց նրան, և նույն պահին հրեղեն սյուն կանգնեց նրա վրա, և մի աղավնի եկավ լույսից, իջավ Հորդանանի մեջ և խառնեց ջրերը և բարձրացավ երկինք: Իսկ ովքեր այնտեղ կային՝ տեսնելով փառք էին տալիս Աստծուն: Եվ երբ մկրտվեց, դուրս եկավ Բասիլիոսը ջրերից: Սքանչանում էր Մաքսիմիանոս եպիսկոպոսը առ Աստված ունեցած Բասիլիոսի սիրուց և աղոթելով դցեց նրա վրա Քրիստոսի վարշամակը: Մկրտեց նաև Եվուղոսին և օծեց նրանց սուրբ մյուռոնով, տվեց նրանց և կենդանարար հաղորդությունից: Ապա Բասիլիոսը ևս Աստծու քահանայապետից հայցեց աղոթքով կերակուր տալ, որպեսև արեց:

Իսկ Բասիլիոսն ասում է.

– Հիսուս Քրիստոս, Աստված մեր, ինչպես հավատում եմ քո ավետարանական խոսքերին և հուսացյալ եմ քո բարերարությանը, Սուրբ Հոգուդ գործակցությամբ՝ ուտելով և ըմպելով կհաղթեմ ինձ հակառակող սատանային:

Իսկ Աստծու քահանայապետը՝ իր հավատացյալներով շրջապատված, այնտեղից վերադարձավ Երուսաղեմ սուրբ քաղաքը:

Իսկ սուրբ Բասիլիոսը Եվուղոսի հետ շրջեց սուրբ վայրերում, և մեկ տարի հետո կամեցան գալ Անտիոք: Նրանց մոտ եկավ եպիսկոպոսը, որ այնտեղ էր: Բասիլիոսը ընթերցում և մեկնում էր առակների խոսքերը եպիսկոպոսի առջև՝ զարմացնելով նրան: Ապա բազում օրեր հետո Եվուղոսի հետ գնաց կապադովկացիների աշխարհը: Ուզում էին Կեսարիա քաղաքի դռնից ներս մտնել: Քաղաքի եպիսկոպոսին, որի անունը Եվսեբիոս էր, գիշերային տեսիլքով հայտնվեց, թե՝ «Քեզնից հետո Բասիլիոսը պետք է նստի եպիսկոպոսական աթոռիդ»: Երբ զարթնեց՝ կանչեց քաղաքի առաջնորդներին և եկեղեցու բարեպաշտ սպասավորներից ոմանց և նրանց պատմելով տեսիլը՝ նրանց ուղարկեց քաղաքի արևելյան դռան մոտ: Եվ դռան մոտ գնացողները ճանաչեցին նրանց և աղաչելով տարան եպիսկոպոսի մոտ: Երբ մտան՝ սրբասեր քահանայապետը նրանց տեսնելով նկատեց նմանությունը տեսիլքի հետ և Աստծուց գոհանալով հարցնում էր, թե ո՞րտեղից են գալիս կամ ո՞ւր են գնում և ինչ վարդապետություն ունեն: Եվ երբ ամենն իմացավ՝ սպասավորներին հրամայեց տեղավորել նրանց, և առնելով տարան նրանց մի նշանավոր տեղ ու նրանց բոլոր կարիքները հոգացին:

Նույն ժամանակ Աստծու բարեսեր այրը [մարդիկ] առաքեց և կանչեց եկեղեցու և քաղաքի ընտրյալներին և պատմում էր նրանց՝ ինչ որ Աստված ցույց էր տվել իրեն: Եվ նրանք միաբան ասում են նրան.

– Ճշմարիտ, սա արժանի է քո վարքին, դրա համար Աստված հայտնեց քեզ, որ քեզնից հետո պայծառությամբ կընդունի քո եպիսկոպոսության աթոռը. այսուհետ մի՛ վարանիր, այլ արա ինչ հաճո կթվա աչքիդ:

Իսկ նա մոտը կանչելով Բասիլիոսին Եվուղոսի հետ, խոսում էր նրանց հետ [սուրբը] Գրքից և սքանչանում նրանց իմաստությամբ, մոտն էր պահում նրանց իբրև աչ կողմի սեմ (Հմմտ. Եզեկ. Խ. 6, Նէեմ. ԺԲ. 25), մինչև սուրբը եպիսկոպոսը փոխվեց աշխարհից:

Ապա սուրբ եպիսկոպոսները Հոգու գործակցությամբ հավաքվելով Բասիլիոսին ձեռնադրեցին եպիսկոպոսության

Աթոռին՝ Աստծու կամքով պահելով եկեղեցին: Եվ օրեր անց խնդրեց Աստծուց, որ իրեն շնորհ, իմաստություն և հանճար տա, որ խոսքով կարգավորի և անարյուն պատարագ մատուցի Աստծուն, և Սուրբ Հոգուց տրվեց նրա խնդրանքը: Եվ վեց օր անց Սուրբ Հոգին այցելեց նրան, և յոթերորդ օրը [նա] սկսեց պատարագ մատուցել Աստծուն: Եվ քիչ օրեր անց հավատով և բազում աղոթքներով կամենում էր սկսել և իր ձեռքով գրել պատարագի խորհուրդը: Եվ այն գիշեր տեսիլքով եկավ Տերը սուրբ առաքյալների հետ և առաջնորդության հացն ու բաժակը պատրաստեց Խորանում, բարձրացրեց Բասիլիոսին և ասում է նրան.

– Քո խնդրածների համաձայն կլիանա քո բերանը գոհությամբ, որպեսզի քո կարգավորությամբ ինձ մատուցեն անարյուն պատարագ:

Երբ [այլևս] ի վիճակի չէր սքանչելիքները տեսնելու՝ ելավ և դողալով եկավ եկեղեցի և մագաղաթին այսպես գրեց. «Լցրո՛ւ բերանս գոհությամբ, որպեսզի օրհնեմ քո փառքը, մեր Տեր Աստված, որ մեզ ստեղծեցիր և առաջնորդեցիր դեպի այս կենդանությունը»,- և՝ սուրբ պատարագի այլ աղոթքներ: Եվ աղոթքները կատարելուց հետո բարձրացրեց հացն ասելով. «Սրբություն սրբոց»: Եվ ժողովուրդն ասում էր. «Միակ սուրբ, միակ Տեր, Հայր Աստծու փառքով միակ Հիսուս Քրիստոս»: Բաժանեց հացը երեք մասի՝ մեկը մեծ երկյուղով հաղորդություն [ընդունեց], իսկ մյուսը պահեց՝ որ թաղվի իր հետ և երրորդը դրեց ոսկյա աղավնու մեջ և կախեց սուրբ խորանից: Իսկ Եվուղոսը և այլ սպասավորներ ու իշխաններ, եկեղեցուց դուրս կանգնած լինելով, տեսնում էին իմանալի լույսը խորանին և սպիտակագեստ փառավոր այրերի, որ մեծաձայն փառավորում էին Աստծուն: Ու Բասիլիոսը ևս նրանց մեջ էր: Եվ տեսիլքից հիանալով՝ ընկան իրենց երեսների վրա և արտասվագոչ հառաչմամբ փառավորում էին Աստծուն: Եվ երբ Բասիլիոսը դուրս եկավ՝ երեսնիվայր ընկած երկրպագեցին նրան: [Նա] հարցրեց երկրպագության պատճառը, և նրանք ասում են փառավոր սքանչելիքները, որ

տեսան խորանի մոտ: Այնժամ Բասիլիոսը ձեռքերը երկինք հառելով գոհացավ Աստծուց և նրանց պատմեց զարմանալի տեսիլքը, որ տեսավ:

Եվ մոտը կանչելով մի ոսկերչի՝ նրան հրամայեց զուտ ոսկուց աղավնի պատրաստել, այն աղավնու նմանությամբ, որ երևաց նրան Հորդանանում՝ Տիրոջ մկրտության ժամանակ, և մեջը դնելով մասունքը՝ կախեց սուրբ սեղանի վերևում: Այս եղելություններից հետո պատվիրեց, որ ամենքը եկեղեցում հավաքվեն, և ժողովրդի անթիվ բազմություն հավաքվեց, որոնց մեջ էր և առաքինի մեծ Եփրեմը, որ հետո կպատմենք ձեզ, թե ինչպես աստվածային հայտնությամբ սուրբը հայր Բարսեղին տեսավ:

Մի ոմն հրեա միանալով քրիստոնյաների խմբին՝ եկեղեցի գալով դիտում էր պատարագի կարգը և սուրբը խորհրդի հաղորդությունը. և սուրբը պատարագի ավարտից հետո հրեան տեսավ, որ Բասիլիոսը իր ձեռքով [հացը] փոքրիկ մասերի է բաժանում և հաղորդում ամենքին: Հրեան ևս եկավ, որ հաղորդվի, և նրան ճշմարտապես միս տրվեց և բաժակով՝ արյուն: Իսկ նա, տրվածներից մի մասը պահելով, գնաց իր տուն և ցույց տվեց իր կողակցին, որ հաստատի իր ասածները, թե ինչ է տեսել իր աչքով և հավատացել, թե որքան ճշմարիտ և փառավոր է քրիստոնյաների խորհուրդը: Եվ առավոտյան եկավ Բասիլիոսի մոտ, աղաչում էր նրան, որ իրեն տա Քրիստոսի մկրտությունը: Իսկ նա [Բասիլիոսը] այս լսելով՝ փառք էր տալիս Աստծուն, որ կամենում է, որ ամեն մարդ ապրի և ճշմարտության գիտության գա: Եվ մկրտեց նրան՝ Տիրոջը հավատացող նրա ամբողջ տնով հանդերձ:

Սրանից հետո մի անգամ Բասիլիոսը դրսում էր, [երբ] մի կին մոտեցավ նրան՝ աղաչում էր, որ նա օգնի իրեն, որովհետև իշխանը նեղում էր հարկերի պարտքի համար: Իսկ նա թղթում այսպես գրեց. «Մի աղքատ կին մոտս գալով ասում է, թե բռնի ուժ ես գործադրում. արդ հանուն մեզ, որքան կարող ես, օգնիր նրան»: Եվ տվեց թուղթը կնոջը, իսկ նա առնելով տարավ իշխանին: Երբ ընթերցեց՝ գրեց այսպես.

«Հանուն քեզ, ո՛վ սուրբ հայր, կամեցա թողնել կնոջ պարտքերը, բայց չկարողացա, որովհետև հարկը թագավորինն է»: Եվ դարձյալ գրում է նրան. «Եթե ցանկացար, բայց չէիր կարող՝ ներում եմ քեզ, սակայն եթե կարող էիր և չցանկացար՝ մի այլ պատշաճ ժամի Աստված քեզ այնպես կանի, որ երբ ցանկանաս՝ չկարողանաս»: Եվ իսկույն նրան պատահեցին այն դեպքերը, որ թագավորական կապանքներով բանտեցին նրան, որ հատուցի իր անիրավությունների համար: Այնժամ եղկելին աղաչում էր Բասիլիոսին, որ իր աղոթքով թագավորին իմաց տա ներել իրեն, ինչպեսև եղավ, քանի որ հրաման ելավ թագավորից ազատել նրան: Եվ երբ նրան պատահեց մարդասիրությունը, չանգիտացավ, այլ գնալով Բասիլիոսի մոտ գոհանում էր նրանից և [այն] կնոջը կանչելով ներեց նրան այն ամենը, ինչ պարտք էր արքունիքին:

Անաստաս քահանայի մասին

Մեծագործ Բարսեղ հայրապետի մյուս սքանչելիքները ևս պատմեմ: Օրերից մի օր սուրբը հայրապետը կամեցավ դուրս գալ քաղաքից որևէ մեկին չասելով, թե ուր է գնալու, և մենք հանդիպեցինք նրան. ասում է մեզ. «Որդյակներս, եկեք իմ հետևից, որպեսզի տեսնեք Աստծու փառքերը»,- և ելնելով մեր քաղաքից՝ գնացինք: Սուրբ Հոգին լուր տվեց Անաստաս քահանային, և [նա] ասում է իր կնոջը, որ անվամբ կին էր, իսկ գործերով՝ քույր. «Ես գնում եմ հող մշակելու, ո՛վ իմ տիկին և քույր, և դու արի՛ և զարդարի՛ր քո տունը և իններորդ ժամին խնկով և մոմերով դուրս արի սուրբ Բարսեղ արքեպիսկոպոսին հանդիպելու, որովհետև գալու է մեր՝ մեղավորներիս հարկի տակ»: Իսկ նա դողաց փառավորագույն խոսքերից, արեց՝ որպեսև հրամայվեց իրեն: Ինքը կույս էր, պարկեշտությամբ էր վարել իր կյանքը, քառասուն տարի տնակեցությամբ մնացել էր ամուսնու մոտ, և պահել իր խորհուրդը՝ մարդկանց ասելով թե ինքն ամուլ է: Եվ մեզ հանդիպեց ճանապարհին՝ ինչպես կարգն է և պատշաճ՝ երկրպագություն տվեց, նախ օրհնվեց մեր հորից, ապա ասում է նրան սուրբը. «Ի՞նչպես ես տիկին Թեոկնի, որ թարգմանվում է Աստվածածանուհի»: Իսկ նա հիանալով իր անունը տալուց՝ ասում է. «Լավ եմ, Աստծու սուրբ»: Մեր սուրբ հայրն ասում է. «Ո՞ւր է տեր Անաստասը՝ Աստծու քահանան, քո եղբայրը»: Կինը նրան ասում է. «Այրն իմ տերն է և գնացել է երկրագործության»: Սուրբը նրան ասում է. «Տուն է դարձել, մի՛ չփոթիր»: Իր անունը տալու համար հիանում էր կինը նրա խոսքերից և ոչ միայն դրանով, այլ նաև, որ ասաց իրեն թե՝ «Նրա կինն ես, բայց միայն անունով, իսկ գործերով քույրն ես»: Եվ հիացմունքից նա դողով բռնվեց և երեսնիվայր ընկնելով գոչում էր ասելով. «Աստծո՛ւ սուրբ, աղոթիր ինձ՝ մեղավորիս համար, որ մեծ և սքանչելի իրողություններ եմ տեսնում քո մեջ»: Եվ աղոթելով անցավ մեր ամենքիս առջևից գնաց: Երբ եկանք տան մոտ, երեցը սրբի դիմաց ելավ և նրա ոտքերն ընկնելով՝ աստվածային ողջույն տվեց: Երեցն ասում է սրբին. «Ո՛րտեղից է այս [պատիվն] ինձ, որ Աստծու սուրբը եկել է ինձ մոտ»: Իսկ Աստծու սուրբն ասում է նրան. «Բարի գտա քեզ, Քրիստոսի աշակերտ, գնա, որպեսզի Աստծու սուրբ պատարագը մատուցես»: Որովհետև երեցը օրն անց էր կացնում պահքով՝ բացի շաբաթ և կիրակիներից և ոչինչ չէր ճաշակում բացի հացից և ջրից:

Եվ երբ եկեղեցի հասանք, սուրբը արքեպիսկոպոսը հրաման տվեց քահանային, որ պատարագ մատուցի: Եվ նա ասում է. «Սուրբդ Աստծու, ինչպես ուսուցանում են՝ նվազը լավից կօրհնվի»: Ասում է նրան մեր երջանիկ հայրը. «Քո առաքինի վարքից հետո նաև անսա»: Եվ լսելով՝ երեցը մատուցում էր սուրբը պատարագը և երբ բարձրացնում էր Աստծու Որդու կենդանարար մարմինն ու արյունը, սուրբը Բասիլիոսը՝ արժանավորներից ոմանց հետ միասին, տեսնում էր ամենաՍուրբը Հոգին՝ լույսի նմանությամբ շրջապատած խորանն ու քահանային: Եվ մեր հաղորդվելուց հետո գոհություն մատուցեցինք Տեր Աստծուն, եկանք քահանայի տունը, և կերակուր ճաշակելիս արքեպիսկոպոսը նրան ասում

է. «Պատմի՛ր ինձ, ո՛րտեղից է քո այդ գանձը, և ինչ է քո վարքը»: Երեցը նրան ասում է. «Մեղսավոր մարդ եմ, հանրային հարկի հնազանդ. երկու եզան լուծ ունեմ՝ մեկով ես եմ վարում, իսկ մյուսով՝ վարձկանը: Եվ ինչ Աստված տալիս է, երկու մասի ենք բաժանում՝ մեկն առնում ենք օտարասիրության կարիքների համար, իսկ մյուսը՝ հարկահանների: Եվ ծառայակիցս, որ հետս է, իմ կինն է. սպասարկում է ինձ և օտարներին»: Սուրբը նրան ասում է. «Նրան քույր կոչիր, որպես և է իսկապես: Եվ պատմիր ինձ քո կյանքը»: Երեցը նրան ասում է. «Երկրում բարիք չեմ ստացել, օտար եմ ամենայն բարի գործերից»: Այնժամ սուրբը նրան ասում է. «Վեր կաց, միասին գնանք»: Եվ երեցի ձեռքից առնելով՝ մեզ մի խուց բերեց և ասում է. «Բաց մեզ տանդ դուռը»: Պատասխան է տալիս երեցը և ասում է. «Ո՛չ, տե՛ր, սուրբդ Աստծու, մի՛ մտեք այդտեղ»: Ասում է նրան սուրբը. «Ես հենց քո այդ կարիքների համար եկա»: Երեցի չկամենալով՝ փականքները բացվեցին, և ներս մտնելով այնտեղ տեսանք մի բորոտ տղամարդու, որ վրան առողջ տեղ բոլորովին չուներ: Եվ ոչ ոք չգիտեր, թե այնտեղ հիվանդ կա՝ բացի քահանայից և իր զուգակցից: Սուրբն ասում է երեցին. «Ինչո՞ւ կամեցար թաքցնել այս գանձը»: Երեցը նրան ասում է. «Բարկացկոտ է, տեր իմ, և թշնամանող ու նեխած: Դրա համար արգելափակել եմ սրան, որ մեջ չընկնի»: Ասում է նրան մեր սուրբ հայրը. «Բարով ես ծառայել դրան, բայց հրամայիր ինձ այս գիշեր սպասավորել դրան, որ ես քո վարձքն ընկալեմ»: Եվ սրբին ներս թողնելով բորոտի մոտ, որն այնքան ախտավոր էր, որ նույնիսկ ձայն չուներ, որպեսզի պատմեր ախտի ծանրությունը, դուռը փակելով գնացինք:

Իսկ վիրավորյալների բժիշկը ամբողջ գիշեր նրա վրա աղոթեց Աստծուն, որ բոլոր ցավերն ու հիվանդությունները բժշկի և առողջություն տա նրան: Իսկ քահանան Հոգով ախտերի բժշկվելն իմանալով, մեզ մոտ լինելով ասում է. «Փառք քեզ, Աստված, որ կատարում ես քո երկյուղածների կամքը և նրանց խնդրածները»: Եվ ասում է մեզ. «Ահավասիկ հիվանդների բժիշկը բուժեց մարդուն»: Եվ նույն ժամանակ ձայն տալով սուրբն ասում է. «Բացեք դռները մեզ [համար]»: Եվ մենք գնալով բացեցինք տան դռները, և նա հանեց փտախտավոր բորոտին՝ ամբողջովին ողջանդամ, մարմնի վրա վերք չունենալով, հստակ խոսելով և Աստծուն փառավորելով: Եվ այս մեծ սքանչելիքների լինելուց հետո ցնծությամբ քաղաք վերադարձանք՝ հավիտյան Աստծուն օրհնելով:

Ասորի և ճգնավոր Եփրեմի մասին

Իմ սիրելի եղբայրներ, մեր երանելի հայր Բարսեղից պատմեմ ևս մի սքանչելիք, որ արեց Եփրեմ անապատականին, որ այսպես եղավ: Մի ոմն Եփրեմ մենաստանում լսել էր հրաշագործություններն ու սքանչելիքները, որ Աստված անում էր սուրբ Բարսեղի միջոցով: Եվ ցանկանում էր տեսնել նրան: Եվ ձեռքերը երկինք բարձրացնելով աղաչում էր Աստծուն, որ հայտնի իրեն, թե ո՛րչափ առաքինի է Բասիլիոսը: Եվ Սուրբ Հոգու նշանը եղավ նրան. գիշերային տեսիլքի մեջ տեսավ մի հրեղեն սյուն, որի գագաթը մինչև երկինք էր հասնում, և ձայն [լսեց] վերևներից, որ ասում էր. «Եփրեմ, Եփրեմ, ինչպես հրե սյունն ես տեսնում, այնպես [կտեսնես] և մեծն Բասիլիոսին»: Եվ նա անմիջապես վերցնելով իր թարգմանին, որովհետև հելլենական լեզվով չէր կարողանում խոսել, և սուրբ Հայտնության տոնին հասավ Կեսարիա քաղաքն ու եկավ կաթուղիկե եկեղեցին՝ տեղ բռնելով, որպեսզի տեսնի սուրբ Բասիլիոսին: Եվ գալիս էր սուրբը սպիտակազգեստ զարդարված, և սպասավորները, որ գալիս էին նրա առջևից ու ետևից, բոլորը սպիտակ զգեստներով զարդարված ու պաճուճված գալիս էին եկեղեցի: Եվ նրանց տեսնելով առաքինի Եփրեմն իր հետ եկած մի այրի ասում է. «Իզուր ջանացինք, եղբա՛յր, սա չէր, որ ես տեսա»: Եվ գնալով կանգնեց մի տեղ՝ եկեղեցու անկյունում, հիանալով իր մտքում ասում էր. «Եթե մենք, որ ծանր և տոթ օրեր ենք կրում և ոչինչ չենք օգտ-

վում, [ապա ինչու] սքանչանամ սրանով, որ այսպիսի փառ-քով և պատվով հրեղեն սյուն է»:

Սա էր մտքով անցնում, [երբ] սուրբն իր նախասարկավա-գին ուղարկում է ասելով.

– Գնա՛ եկեղեցու արևմտյան դռան կողմը և եկեղեցու վերջում մի կրոնավորի կգտնես, որ գլխին վեղար ունի, և մի ուրիշին նրա հետ՝ նոսր մորուքով մի կարճահասակ մարդու,- ուրիշ նշաններ ևս տվեց և ասում է,- գնա՛ և ասա նրան. «Հա-մեցե՛ք, մտե՛ք խորան, արքեպիսկոպոսը ձեզ կանչում է»:

Իսկ նախասարկավագը ճեղքեց ամբոխը և գնալով այն տեղն, ուր կանգնել էր սուրբ Եփրեմը, ասում է նրան.

– Օրհնի՛ր հայր. համեցեք խորանը, արքեպիսկոպոսը քեզ կանչում է:

Եվ թարգմանի միջոցով իմանալով, թե ինչ ասաց իրեն, պատասխան է տալիս և ասում.

– Խաբվեցիր, եղբա՛յր, մենք օտարական ենք և անծանոթ նրան:

Եվ նախասարկավագը գնալով պատմեց հայրապետին՝ ինչ որ Եփրեմն ասաց իրեն: Իսկ մեծն Բասիլիոս քահանա-յական գրքերը կարդում էր ժողովրդին. տեսնում էր երանելի Եփրեմը, որ հրեղեն լեզու էր խոսում նրա բերանում: Նորից է [Բասիլիոսն] ասում իր նախասարկավագին.

– Գնա՛ և ասա՛ նրան. «Տե՛ր Եփրեմ, համեցեք, մտեք խո-րանը, արքեպիսկոպոսը քեզ կանչում է»:

Եվ գնալով նախասարկավագն ընկավ նրա ոտքերը, ասում է նրան՝ ինչպես հրամայեց իրեն սուրբը Բարսեղը: Եվ նա, սրանով հիանալով, փառավորում էր Աստծուն. ծունր դնելով և ասում է.

– Ճշմարտապես Սուրբ Հոգին խոսում է նրա բերանով:

Եվ աղաչեց սարկավագին, որ պատասխանի իրեն, թե պատարագի վերջանալուց հետո ավանդատանը ողջույն կտա Բասիլիոսին: Եվ ավարտելուց հետո Բասիլիոսը ավանդա-տուն եկավ, կանչեց սուրբ Եփրեմին և նրան քրիստոսական ողջույն տալով՝ ասում է.

– Բարով ես եկել, անապատի որդիների հայր, բարով եկար [դու], որ բազմացրիր Քրիստոսի աշակերտներին և դևերին Քրիստոսով հալածեցիր, ինչո՞ւ չարչարվեց քո սրբությունը, հա՛յր, և եկար տեսնելու մեղավոր մարդուն, թո՛ղ Տերը տա քո ջանքերի վարձը:

Իր հետ եղած կրոնավորի թարգմանությամբ պատասխան տվեց սուրբը Եփրեմն ու ասաց ինչ-որ կար սրտում: Եվ հա-ղորդվեց նրա սուրբը ձեռքով, և մեծ սիրով ճաշակեցին: Երա-նելի Եփրեմն ասում է.

– Սո՛ւրբ հայր, մի բան եմ խնդրում և այս եմ աղաչում, որ տաս ինձ:

Եվ նա ասում է.

– Հրամայեցեք ինչ որ ձեր կամքն է, քանի որ բազում բաներ եմ պարտք քո աշխատանքի դիմաց, որ ինձ համար արեցիր:

Երանելի Եփրեմն ասում է.

– Գիտեմ, սո՛ւրբ հայր, որ այն ինչ խնդրում ես Աստ-ծուց՝ Աստված քեզ տալիս է. արդ իմ կամքն է, որ Աստծուց խնդրես, որ ես հունարեն խոսեմ:

Եվ նա ասում է.

– Կարողությունից առավել է խնդիրդ, բայց որովհետև հավատով հայցեցիր, արի աղոթենք Տիրոջը, որ կարող է Աստված ընդունի քո ցանկությունը, [որովհետև] գրված է. «Իր երկյուղածների կամքը կատարում է Տերը, լսում նրանց աղոթքները և ապրեցնում նրանց» (Սաղմ. ՃԽԴ. 19):

Եվ նրանք աղոթք արեցին երկար ժամանակ, և բարձրա-նալով սուրբը Բասիլիոսն ասում է.

– Տե՛ր Եփրեմ, ինչո՞ւ քահանայության ձեռնադրություն չես առնում, որ քեզ պատշաճ է:

Թարգմանի միջոցով նրան ասում է.

– Որովհետև մեղավոր եմ:

Ասում է նրան սուրբը.

– Քո մեղքերը կամենում էի վերցնել, բայց ծունր դնենք:

Եվ մինչ [Եփրեմը] գետնին էր ընկած՝ սուրբը հայրապետն իր ձեռքերը դրեց նրա վրա և սարկավագության աղոթքն ասաց: Եվ ասում է.

– Բարի եղեք՝ կանգնեցե՛ք:

Եվ երբ կանգնեց, նրա լեզուն զորեղացավ և խոսում էր հույների բարբառով.

– Ընդունի՛ր և պահի՛ր Զիսէ. ողորմի՛ր. Ելէիսոն. պահի՛ր. Փիլաքսիմաս, մեզ, Աստված, քո շնորհով:

Եվ կատարվեց գրվածը, որ ասում է. «Կաղը եղջերուի նման կվազի, և ծանրախոսների լեզուները կպարզվեն» (Մատթ. ԺԱ. 5): Եվ դրանից հետո խոսում էր հույների լեզվով, փառավորելով Աստծուն, որ լսում է իր երկյուղածներին: Եվ հոգեպես ուրախ եղան միասին երեք օր: Եվ նրա թարգմանին սարկավագ ձեռնադրեց, իսկ սուրբը Եփրեմին՝ քահանա և խաղաղությամբ ճանապարհեց նրանց՝ փառավորելով և օրհնելով Աստծուն. հավիտյանս հավիտենից. ամեն:

Այրի կնոջ մասին, որ քավություն ստացավ

Մի ազնվատոհմ և մեծատուն, բազում ինչք ունեցող կին՝ Կեսարիա քաղաքից, մատաղ հասակից այրի մնաց և սատանայի ու չարարվեստ մարդկանց պատրանքներով անձն անառակության տվեց, ուտելով և խմելով, անցնող ժամանակը ծախսեց ամեն տեսակ ունայնությունների վրա, Աստծու կամքին հաճո ոչ մի գործ չանելով: Եվ երկար ժամանակ անց, Սուրբ Հոգու [ազդեցությամբ], նա մի օր զղջաց և հիշելով իր մեղքերի բազմությունը՝ հառաչելով ասում էր.

– Վա՜յ ինձ՝ թշվառականիս, վա՜յ ինձ՝ մեղավոր ու եղկելիս. ի՛նչ պատասխան պիտի տամ իմ գործած անթիվ մեղքերի համար. իմ հոգու տաճարն ապականեցի, պղծեցի մարմինն իմ: Վա՜յ ինձ, ինչ անեմ. այլ թե ասեմ՝ պոռնիկի պես եմ, կամ մաքսավորի պես՝ և մեղա, բայց մկրտությունից հետո մեղանչեցի: Եվ ինչ անեմ հիմա, որովհետև ահա ինձ մնում է հավիտյան հրի աննրելի տանջանքը: Այժմ ինչպես կարող եմ ստուգել

ճշմարտապես, որ եթե զղջամ՝ կընդունի ինձ Աստված:

Եվ նրա մտքով սա էր անցնում, [Նա], որ կամենում է, թե բոլոր մարդիկ ապրեն և ճշմարտության գիտությանը գան, [կնոջ] հիշողությանը բերեց մանկուց ի վեր գործածները, և նա նստելով թղթին էր գրում ամենը: Եվ թղթի վերջում գրեց մեծ մեղքերը, որ գործել էր, և թուղթը կապարով կնքելով՝ եկավ, ուշադիր սպասում էր պատշաճ ժամանակի: Եվ երբ սուրբը Բասիլիոսը եկեղեցի էր գալիս մշտական աղոթքի, առաջանալով՝ նետեց թուղթը նրա ոտքերի առաջ և երեսնիվայր ընկնելով գոչում էր ասելով.

– Ողորմի՛ր ինձ, սուրբդ Աստծու, ճարտա՛ր բժիշկ, ողորմի՛ր ինձ՝ բանսարկուի ախտից վիրավորվածիս, որ խոցված եմ մեղքերով առավել քան ցանկացած մարդ:

Իսկ Քրիստոսի երանելի ծառան կանգ առնելով՝ հարցնում է իրերի ճշմարիտ պատճառները: Եվ նա ասում է.

– Ահա գրեցի իմ բոլոր մեղքերը այդ թղթի վրա և կնքել եմ այն, իսկ դու, ծառադ Աստծու, մի՛ բացիր կնիքը, այլ քո աղոթքով ջնջիր դրանք, որովհետև ինձ այս միտքը տվողը կարող է լսել քո աղաչանքները հանուն ինձ:

Իսկ մեծ Բասիլիոսը թուղթն առավ իր սուրբ ձեռքը և եկեղեցի մտավ և ձեռքերը վեր բարձրացնելով հայցում էր Տիրոջից՝ այս աղոթքն ասելով. «Մեր Տեր Հիսուս Քրիստոս, ճշմարիտ Աստված, որ առաքվեցիր Հոր ծոցից և մարմին առար Սուրբ և փառավորված Աստվածածին Կույսից՝ վերցնելու աշխարհի մեղքերը: Եվ հիմա քո մարդասիրությամբ ջնջիր այս կնոջ ձեռքի գրածը, որովհետև միայն քո կարողությունն է այս գործը: Տեր, որովհետև քո առջև թվարկված են մեր ամենքի հանցանքները, և ոչինչ ծածուկ չէ քեզնից, իսկ քո ողորմությունները անթիվ և անբավ են [նրանց հանդեպ], որ հավատով դառնում են և խնդրում քեզնից»: Այս ասելով առաջացավ և թուղթը խորան նետեց և ամբողջ գիշեր մնաց աղոթելով և հաջորդ օրն էլ բազմության հետ աղաչում էր Աստծուն: Եվ սուրբը պատարագի ավարտից հետո կանչեց կնոջը և թուղթը նրան տալով ասում է.

– Լսե՞լ ես երբևէ, ո՛վ կին, որ ոչ ոք չի կարող մեղքերին թողություն տալ բացի Աստծուց:

Եվ նա ասում է.

– Այո՛, հա՛յր սուրբ, դրա համար էլ դիմեցի քո սրբությանը՝ քեզ բարեխոս ունենալով առ բազմագութ և մարդասեր Աստված:

Եվ այս ասելով բացեց թուղթը և ամեն ինչ առանց գրերի գտավ. և մնացել էր միայն մեծ մեղքերի գիրը, որ չէր ջնջվել. և ձեռքերով երեսին խփելով՝ ընկավ Բարսեղի ոտքերը [և] գոչում էր ասելով.

– Ողորմի՛ր ինձ, բարձրյալ Աստծու ծառա, և ինչպես իմ բոլոր մեղքերի համար մեծահոգություն արեցիր, նույն կերպ և այս մեկի համար աղաչիր, որ ջնջվի:

Իսկ մեծ Բասիլիոսը կարեկցանքով արտասվեց և ասում է.

– Ե՛լ դու, կին, որովհետև ես [և] մեղավոր մարդ եմ և [նույնպես] թողության կարիքն ունեմ. քո մեղքերից որը կամեցավ Աստված ջնջեց, կարող է սա էլ վերցնել քեզնից [Նա], որ խափանում է մեղքերն աշխարհի, բայց եթե այսուհետ զգուշանաս և մեղք չգործես, ոչ միայն թողություն կգտնես, այլև փառքի կարժանանաս: Այլև գնա անապատ և այնտեղ կգտնես մի սուրբ այրի, որ բոլորից Եփրեմ է անվանվում. տար այնտեղ թուղթդ, և նա կաղաչի Աստծուն, և կջնջվի դա:

Իսկ կինը չերկնչելով ճանապարհի երկարությունից՝ եկավ նրա նշած տեղը՝ Եփրեմ հայրապետի մոտ և դուռը թակելով գոչում էր ասելով.

– Ողորմի՛ր ինձ՝ Աստծու սուրբ:

Իսկ նա Հոգով իմանալով, թե ինչ բանի համար է եկել, ասում է նրան.

– Ինձանից հեռացիր, դո՛ւ, կին, որովհետև ես մի մեղավոր մարդ եմ և [նույնպես] կարիք ունեմ օգնության:

Իսկ նա, թուղթը նետելով նրա մոտ, ասում է.

– Բասիլիոս արքեպիսկոպոսն ինձ ուղարկեց քեզ մոտ, որ աղոթես Աստծուն և ջնջես մեղքը, որ գրված է այդ թղթի վրա,

որովհետև մյուսները սուրբ Բասիլիոսը ջնջեց իր աղոթքներով, իսկ դու միակ [մեղքի] համար մի՛ հապաղիր աղաչել Աստծուն, որովհետև քեզ մոտ եմ ուղարկվել:

Եվ սուրբն ասում է.

– Ո՛չ, քույր, ո՛չ. որովհետև ինչպես շատի համար կարող էր աղաչել Աստծուն, կարող էր և այդ մեկի համար անել՝ ավելի քան ես: Հիմա գնա՛ և մի՛ հապաղիր, որ հասնես նրան նախքան նրա՝ մարմնից ելնելը, որովհետև մերձ է երանելի վախճանը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մոտ գնալու:

Այս լսելով նրանից՝ կինը բազում հառաչանքով այնտեղից գնաց Կեսարիա: Եվ երբ քաղաք մտավ, դագաղ տեսավ. հանում էին սուրբ Բասիլին: Եվ կինը տեսնելով սկսեց աղաղակել՝ հանդիմանելով սրբին և ասում էր.

– Վա՛յ ինձ, Աստծու սուրբ, սրա համար ինձ ուղարկեցիր մենաստան, որ դու առանց [ինձ համար] աշխատանք թափելու վախճանվես, և ահա ես օգուտ չստացա, իզուր չարչարվեցի ճանապարհի երկայնությանը: Աստված կտեսնի և արդարությամբ կդատի ինձ և քեզ, որովհետև կարող էիր աղաչել Աստծուն և ջնջել իմ մեղքերը, [մինչդեռ] ուրիշ տեղ ուղարկեցիր ինձ:

Եվ այս ասելով նետեց թուղթը դագաղի վրա և բոլոր եղելությունները պատմեց ժողովրդին: Իսկ սարկավագները, կամենալով տեսնել, թե ինչպիսին են հանցանքները, վերցրին թուղթն ու բացին և գտան ամբողջությամբ մաքուր, որև ոչ մի նշանագիր չէր մնացել: Եվ կանչելով կնոջը՝ թուղթը տվեցին նրան՝ լիովին մաքուր և ասում են.

– Ինչո՞ւ ես լաց ու կոծ անում՝ չիմանալով քո հանդեպ եղած Աստծու անսահման մարդասիրությունը:

Եվ ժողովրդի բազմությունը տեսնելով սքանչելիքները, փառավորում էր Աստծուն, որ երկրի վրա մեղքերը թողնելու կարողություն ունի և նույն շնորհը տալիս է իր ծառաներին, որ կենդանության [օրոք] և մահվանից հետո բժշկեն ցավերն ու հիվանդությունները, և ովքեր հավատով խնդրում են՝ իր բարերարությամբ թողնում է նրանց մեղքերը: Որով

և մենք հասնենք՝ մեր Աստված Քրիստոսի ողորմությանը, որին փառք հավիտյանս. ամեն:

Հրեա և բժիշկ Հովսեփի մասին

Այս Հովսեփը, ո՛վ եղբայրներ, հույժ հմուտ էր բժշկության արվեստում, կատարելապես փորձված էր երակների, այլև հիվանդների տեսքի որոշման մեջ, մինչև իսկ անվրեպ իմանում էր վախճանվելուց երեք կամ հինգ օր առաջ, [այնքան որ] նրան նախանձեցին մյուս բժիշկները: Իսկ մեր աստվածազգեստ հայր Բասիլիոսը, Սուրբ Հոգով նախապես իմանալով ամենն ինչ լինելու էր, շատ էր սիրում նրան, մշտապես կանչելով խոսում էր հետը, նրան՝ երկնային արքայության ճանապարհը ուսուցանելով, նրան [սովորեցնում էր] ճշմարտության ճանապարհով շարժվել և պիղծ աղանդից հեռու մնալ և մկրտությամբ Քրիստոսով զարդարվել: Եվ նա չէր համաձայնում, ասելով՝ «Ո՛ր հավատքով ծնվել եմ, այն եմ պաշտում»: Եվ սուրբն ասում էր.

– Ո՛վ Հովսեփ, հավատա ինձ, քեզ այն եմ ասում, որ ո՛չ ես, ո՛չ դու [և ոչ ոք], եթե չծնվի ջրից և Հոգուց, չի կարող մտնել երկնքի արքայություն: Հիրավի ձեր հայրերը չմկրտվեցի՞ն ամպով և ծովի մեջ և [չէ՞ին] ըմպում իրենց հետ գնացող հոգևոր վեմից, վեմից, որ ինքը Քրիստոսն էր, որ վերջին օրերին կույսից մարմին առավ, և հանուն մեր փրկության մարմնացավ և չարչարվեց մարմնով քո նախահայրերից, թաղվեց և երրորդ օրը հարություն առնելով նստեց Հոր աջ կողմը և գալու է բազում փառքերով՝ իր սուրբ հրեշտակների հետ՝ դատելու կենդանիներին և մեռածներին՝ յուրաքանչյուրին ըստ իր գործերի հատուցելով: Այժմ անհնար է ցանկացած մարդու համար տեսնել հավիտենական կյանքը՝ առանց ջրի և Հոգու և մեր Տեր Հիսուս Քրիստոսի անարատ մարմնին ու արյանը հաղորդվելու:

Եվ այս խոսքերը կրկնում էր Քրիստոսի անարատ մշակը, [իսկ] հրեան չէր կամենում լսել նրան, և ընդունել Սուրբ Հոգու շնորհները:

Այժմ սուրբը աշխարհից փոխադրվելու էր: Կանչեց նրան իբր բժշկության պատրվակով, որ տեսնի: Եվ ասում է նրան. «Ի՞նչպես ես տեսնում ինձ»: Եվ բժիշկը երակներից իմացավ, որ նա մահվան [դռանն] է, և ասում է սպասավորներին, որ շուրջը կային, որպեսզի պատրաստեն նրա թաղման պատանքը: Ասում է. «Նա հիմա հանկարծ կվախճանվի»: Մեծ Բասիլիոսը ասում է նրան. «Զգիտես, ինչ ես ասում»: Հրեա Հովսեփը նրան ասում է. «Հավատա, տեր, որովհետև արեգակն արևմուտքում է այսօր»: Ասում է նրան սուրբը. «Իսկ եթե այսօր չվախճանվեմ, ի՞նչ [կլինի]»: Ասում է նրան հրեան. «Հնար չկա այդպես լինելու, դժվար թե հոգիդ այսօր քեզ հետ լինի. այլ հրաման տուր եկեղեցու և քո, և այլ իրերի համար, որովհետև մինչև այս երեկո չես հասնի»: Ասում է նրան սուրբը. «Իսկ եթե ապրեմ մինչև այդաբացի վեցերորդ ժամը, ի՞նչ կանես»: Եվ նա ասում է. «Կմեռնեմ ես»: Ասում է նրան սուրբը. «Այո՛, մահանում ես մեղքերից և կենդանանում իմ Քրիստոսով»: Ասում է նրան հրեան. «Գիտեմ, ինչ ես ասում, կանեմ քո կամքը, սուրբ հայր. եթե ասածդ լինի, երդմամբ կընդունեմ սուրբ մկրտության շնորհների կնիքը, եթե Աստծու ծառաղ ապրի»: Իսկ սուրբ Բասիլիոսը Աստծուց խնդրեց, որ իրեն կյանք տա, որ [հրեային] փրկի և ապրեցնի: Եվ լսեց նրան Աստված, իսկ [ինքը] մարդ ուղարկելով կանչեց հրեային: Նա առանց կասկածելու եկավ, կարծելով, թե վախճանվել է, և նրան կենդանի տեսնելով զարմացավ և նրա ոտքերն ընկնելով ասում է. «Ճշմարտությամբ եմ ասում, որ չկա մեծ Աստված ինչպես քրիստոնյաներինը, և չկա ուրիշ Աստված նրանից բացի. այժմ հրաժարվում եմ հրեաների քրիստոսատյաց աղանդից և հավատով կընթանամ ճշմարտության հետ: Հիմա հրամայիր մկրտությամբ կնքել ինձ և իմ ամբողջ ընտանիքը»: Սուրբը նրան ասում է. «Ես իմ ձեռքով կմկրտեմ քեզ և քո ընտանիքը»: Եվ բժիշկը հանկարծակի մոտեցավ, բռնեց նրա ձեռքից, որ տեսնի երակների զորությունը և ասում է. «Քո զորությունից ընկար, հայր սուրբ, և բնությունդ ի սպառ նվաղել է»: Ասում է նրան սուրբը. «Բնութ-

յունս հրաշագործող ունեմ, որ կզորացնի»: Եվ ելնելով եկավ եկեղեցի և ժողովրդի առջև մկրտեց նրան իր ընտանիքով հանդերձ և անունը Հովհաննես կոչեց և տվեց նրան կենդանարար խորհուրդը, տարավ իր սենյակը և նրան կերակուր տվեց: Բացատրում էր նրան հավիտյան կյանքի մասին: Իր հավատքին միացրեց նրան՝ տիկնոջ և որդիների հետ: Եվ մի ուրիշ օր [Հովհաննեսը] եկավ սուրբ եկեղեցի և աղքատներին բաժանեց իր ինչքը, որ ձեռք էր բերել բժշկությամբ, և ամբողջ ստացվածքը բարեպաշտությամբ տնօրինեց:

Իսկ սուրբ Բասիլիոսը իններորդ ժամին եկեղեցում էր, պատարագի խորանում՝ այլ սպասավորների հետ և կատարում էր սուրբ խորհուրդը: Դարձյալ նրանց հետ ճաշակեց հացով և արձակեց ամբողջ հավատացյալ ժողովրդին՝ սրբության համբույրով նրանց համբուրելով՝ Քրիստոսի ընտիր և նոր զորականին և բոլորին հանձնելով Հայր Աստծուն և Նրա Միածին Որդուն և Սուրբ Հոգուն: Եվ հրամայեց, որ իր հետ թաղեն Տիրոջից հաղորդության համար իրեն տրված երրորդ Մասը և բազմելով իր մահիճի վրա ու ձեռքերը բարձրացնելով՝ օրհնեց Տեր Աստծուն՝ հոգին մարմնից անջատելու և բժշկի դարձի համար, և նույն ժամին հոգին ավանդեց ի փառս Աստծու: Եվ հրեան, որ հավատաց, տեսնելով, թե ինչպես այրն ասաց՝ այնպեսև եղավ, ու նրա կրծքին ընկնելով ողբալով ասում էր. «Աստծու ճշմարիտ ծառա Բասիլիոս, եթե չլիներ քո կամքը՝ հիմա չէիր վախճանվի»:

Եվ այդաբացին հավաքվեց ամբողջ բազմությունը, պատվական սուրբ մարմինը՝ յուղով և խնկով բերում էին եկեղեցի: Լսել էր և մեծ Գրիգոր Նազիանզայի եպիսկոպոս աստվածաբանը, որ և շտապով եկավ և տեսավ նրա սուրբ մարմինը և վրան ընկնելով դառնապես լացեց: Ապա եկած այլ տասներկու եպիսկոպոսների հետ հրաման տվեց ժողովրդին, որ սաղմոսներով և օրհնությամբ՝ պատշաճ պատվով կատարեն փառավոր հիշատակը մեծ հայրապետի: Եվ քաղաքի բազմությունը սրբին դրեց տապանի մեջ, ուր Ղևոնդ հայրապետի սուրբ նշխարներն էին՝ սուրբ Սուքիանոսի վկայարանում:

Հունվար ամսվա առաջին օրը՝ պատկերով հինգշաբթի,

Վաղեսի և Վաղենտիանոսի թագավորության ժամանակ, հանդեց երանելի սուրբ հայրապետ Բասիլիոսը, որ հրեշտակական վարքով ապրեց երկրի վրա՝ բարի հիշատակ թողնելով եկեղեցում, ի փառս Քրիստոսի:

Սուրբ Հոգու գործակցությամբ գրեցի սուրբ հայրապետի վարքը, ի փառս և ի պատիվ ամենասուրբ Երրորդության, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՊԵՆԵՎԵՆԴԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԲ ԳԵՆԱՐԻՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիոկղետիանոս թագավորի ժամանակ Տիմոթեոս անուրեն բռնավորը կալանել տվեց սուրբը եպիսկոպոս Գենարիոսին և հրամայեց իր առջև բերել քահանայապետին: Երբ եկավ նրա առաջ, դատավորն ասաց նրան. «Տեսնում եմ հասակիդ վայելչությունը և կարծում եմ, որ ազատ տոհմից ես: Դրա համար քեզ խորհուրդ եմ տալիս և աղաչում փրկիր քո անձը և ազատիր քեզ բազում տանջանքներից, քանի որ եթե դու չբուժվես տանջանքից, քո Աստվածը քեզ բուժել չի կարող»: Իսկ աստվածիմաստ Գենարիոսը նրան պատասխանեց. «Լռի՛ր, ո՛վ բռնավոր, և չարաչար լեզուդ մի՛ շարժիր Աստծու դեմ, թշնամանելով այն ամենազոր Աստծուն, որ ամեն տեղ հրաշագործում է Իր զորությամբ, կարծում եմ՝ Նրա ներողամտությունը տկարություն ես համարում, և որքան վայելես ներողամտությունը, այնքան ավելացնում ես ամբարտավանությունդ»: Բռնավորն ասաց. «Մի՞թե այնքան զորություն ես ստացել, որքան մենք տանջանք ենք պատրաստում քո անմտության համար: Բայց ինձ թվում է վստահացել ես կախարդությանդ»: Երանելի եպիսկոպոսն ասում է. «Իմ զորությունն Աստված է, այն որ երկնքում է, որ վհուկներին, աղանդավորներին և կախարդներին ու կռապաշտներին և քեզ նմաններին ուղարկում է գեհենի անշեջ հրի մեջ»: Այնժամ բռնավորը հրամայեց հնոց բորբոքել, այնտեղ գցել երանելիին, և ասաց. «Հիմա ես քեզ կայրեմ, տեսնենք, թե կփրկի՞ քեզ Աստվածդ»: Իսկ սուրբը ուրախությամբ սուրբ խաչի նշանով կնքեց իր բոլոր անդամները և փառավորելով Աստծուն մտավ հնոցի բորբոք հրի մեջ, և սկսեց խոսել այսպես. «Ո՛վ Տեր իմ և Աստված, որ ճշմարտապես քննում ես ամեն մարդու գաղտնիքները, Դու գիտես իմ անձի փափագը, որ բուռն սիրով իմ հոգին ցանկանում է գալ Քեզ մոտ: Բայց աղաչում եմ Քեզ, ցույց տուր Քո ամենազորությունը՝ կի-

զող բոցի բնությունը Քո քաղցրության ցողին վերածելով, ինչպես մի ժամանակ սքանչելագործեցիր երեք մանկանց համար: Որպեսզի Քեզ՝ միայն ճշմարիտ Աստծուդ ճանաչեն ամեն ժամ»: Եվ երբ այս ամենն ասաց Աստծուն, հրեշտակների ձայներ լսելի եղան նրան և աղոթակից եղան: Իսկ շուրջը եղողները ահագին հնչմունքից զարհուրած էին, և շտապով գնացին-պատմեցին ամեն ինչ Եպարքոսին:

Այնժամ [Եպարքոսը] հրամայում է բանալ հնոցը և ստուգապես տեսնել, թե արտաքուստ լսված ձայնը ներսում նո՞ւյնպես կա: Եվ երբ բացին, տեսան՝ սուրբը բնավ չի վնասվել հրից: Իսկ բոցը հանկարծակի այսուայնկողմ հեղվեց և կռապաշտներից շատերին, որոնք մոտ էին, հրդեհելով կիզեց: Իսկ սուրբը զվարթադեմ, իբրև հաղթող նահատակ մրցարանից ելավ, կանգնեց բռնավորի առջև: Այնժամ անօրեն բռնավորը՝ իբր բնավ չէր տեսել սքանչելիքը իր փրկության հույսը կորցրեց, միջօրեի աստվածային ճառագայթներից բարձրացրեց մտքի աչքերը, փոխանակ պսակի՝ հրամայեց երանելիին բանտ նետել, իսկ առավոտյան հրամայեց բերել իր առջև: Եվ երբ եկավ, ասաց նրան. «Մինչև երբ անհնազանդ լինելով զոհ չես մատուցելու աստվածներին: Եթե հրից և այլ տանջանքներից կախարդության միջոցով ազատվեցիր, սրից ե՞ս կարող ես փրկվել»:

Երանելին ասաց. «Ոչ թե ինձ համար է ցույց տալիս սքանչելիքը, որ դու դիվական խաբեությամբ խելագարված՝ կախարդություն ես համարում, այլ միգուցե կռապաշտության խորին խավարի մեջ ընկղմված քո հոգին սքանչելագործությամբ լուսավորվի աստվածային ճառագայթներով»: Այնժամ չարիմաց բռնավորը հրամայեց [սրբի] ամբողջ մարմնի բոլոր ջլերը դուրս քաշել: Իսկ երանելին թեպետ այսպես տանջվեց, բայց հոժարությամբ ընդունեց մարմնի հոդերի բաժանումը և Աստծու սիրով ու աղոթքներով քաղցրացնում էր տանջանքի դառնությունը:

Դարձյալ հրամայեց սրբին տանել բանտ, ու մինչդեռ բանտում էր, եկեղեցու սպասավորներից երկու հոգի եկան նրա մոտ: Երբ ուզում էին բանտ մտնել, պահապաններն արգելեցին նրանց ու գնացին, պատմեցին դատավորին: [Սա] հրամայեց քահանայապետի հետ տանել իր առջև: Եվ երբ տարան, դատավորն ասաց եպիսկոպոսին. «Ովքեր են սրանք, կամ ինչ են սրանց անունները և կամ ինչ գործի են»:

Երբ սուրբը ասաց նրանց անունները և եկեղեցու սպասավորությունը, դարձյալ հարցրեց. «Դրանք քրիստոնյա՞ են քեզ նման»: Իսկ երանելին խաղաղաբար պատասխանեց. «Դու ինքդ հարցրու նրանց և իմացիր»: Այնժամ դատավորն ասաց սրբերին, որոնցից մեկին անվանում են Փեստոս, իսկ երկրորդին՝ Փեսերիոդոս: Եվ ասաց. «Քրիստոնյա՞ եք»: Եվ նրանք բարձր ձայնով և զվարթ դեմքով բոլորի ներկայությամբ պատասխանեցին. «Այո՛, քրիստոնյա ենք և պատրաստ ենք Քրիստոսի համար մահ ընդունել, ինչպես մեր այս սուրբ հովվապետը»: Այնժամ դատավորը հրամայեց կապել երանելի եպիսկոպոսին նրանց հետ և տանել Պավտոլիոն քաղաքը և միացնել մյուս վկաներին, որ նախապես կապված էին սուրբ եպիսկոպոսի հետ՝ Պրոկլիոսը, Տյուքիկոսը, Աքուդիոսը: Սրանք գեղեցիկ սարկավագներն էին սուրբ Գենարիոսի, որ ուղղափառ խոստովանությամբ ապրեցին այս աշխարհում և վախճանի ժամանակ չբաժանվեցին միմյանցից, այլ միասին արժանացան փառավորվելու խոստովանական վկայության: Արդ, երբ եկան միասին, երանելին սկսեց փառավորել Աստծուն, ասելով այսպես. «Օրհնյալ է Աստված, որ միայն սքանչելիքներ է գործում, և որ վայելեցինք ի սեր միմյանց թշնամական տանջանքի մեջ, քանի որ հոտապետին առանց հոտի չթողեց»: Եվ մեծ ուրախության մեջ էին:

Առավոտյան անօրեն իշխանը ելավ հանդեսների ասպարեզ, ուր գազաններ էին արձակում և հրամայեց այնտեղ բերել երանելիներին: Երբ քաջ հովիվը նվիրյալ ոչխարներով բերվեց՝ դահիճներն սկսեցին հարվածելով կատաղեցնել գազաններին, որպեսզի ցասմամբ հարձակվեն սրբերի վրա: Ու երբ հարձակվեցին, Աստծուց հրաման եղավ՝ ոչ մի մեղք չեն գործել սրբերը, [գազանները], մոռանալով իրենց բարքը, ընկնում էին նրանց ոտքերը, փարվում նրանց: Իսկ ամբարիշտ դատավորը աստվածային լույսի ճառագայթներից կու-

բացած՝ չիմացավ սքանչելիքը: Ասաց. «Ձեր Աստվածը մի՞թե կարող է սրից [ևս] փրկել ձեզ»: Եվ երբ [սրբերը] վճիռն ստացան՝ ուրախությամբ փառավորում էին Աստծուն, և իսկույն սուրբը եպիսկոպոսը ելավ, տարածեց իր ձեռքերը և աղոթում էր ասելով այսպես.

«Դու, Տեր սրտագետ, մեր գաղտնարանների արարիչ, որ քննում ես մարդկանց սրտերը, գիտես որ ոխ չունեմ իմ չարչարանքի դիմաց, որ կամովին անձս մատնում եմ Քո անվան համար, որ ինձ համար մեռար և հարություն առար, Աստված իմ, աղաչում եմ՝ ցույց տուր Քո աստվածային զորությունը գոռոզացած այս իշխանին, որ մարդկային սահմանից ավելի ամբարտավանացած հայհոյում է Քո ամենակարող բազուկը: Ձեմ աղաչում, որ վերացնես, Դու, որ եկար փրկելու և ոչ կործանելու, այլ որպեսզի իմանան, որ Դու ես միակ Աստվածը»: Եվ երբ վերջացրեց աղոթքը հանկարծակի եպարքոսի աչքերը կուրացան և տանջվում էր աներևույթ տանջանքով, և թշվառականն սկսեց ողբալ, իրեն եղուկ ասելով, և շտապ եկավ-ընկավ սրբի ոտքերը՝ թողություն խնդրելով իր մեղքերին, որ գործեց նրա դեմ՝ չարչարելով, խոստացավ հավատալ ճշմարիտ Աստծուն: Իսկ երանելին, թեպետ գիտեր նրա անճաճանչ հոգու խավարը, բայց նմանվող եղավ իր Տիրոջը, որ իր դեմ մոլեգնածներին հետ էր մղում՝ հարվածելով կուրությամբ: Այսպես սուրբը Գենարիոսը աղոթելով լուսավորեց նրա աչքերը: Եվ քաղաքի բազմությունը (մոտ հինգ հազար հոգի), տեսնելով այդ բոլոր սքանչելիքները, այն օրը հավատաց Աստծուն: Եվ բազմությունն սկսեց փառավորել Աստծուն: Աղաղակ բարձրացրին և գոչում էին այսպես. «Ո՛վ դատավոր, այսուհետև անզգամությամբ չմոլեգնես, որովհետև ոչ թե մարդկանցից, այլ Աստծուց են այդ սքանչելիքները»: Իսկ կատաղի դիվական մոլորությամբ արբածը խաբեական խոսքերով հավատացրեց բազմությանը, որ կանի նրանց կամքով: Եվ կանչեց դահիճներին, հրամայեց տանել անապատ մի տեղ և այնտեղ սպանել, որ ոչ ոք չիմանա: Երբ երանելիները լսեցին հրամանը՝ խնդությամբ գնում էին ճանապարհը, սաղմոսելով:

Մի մերկ ծերունի հանդիպեց երանելիներին, ընկավ քահանայապետի առջև և խնդրում էր նրա զգեստներից: Սուրբը ծերունուն պատասխանեց՝ «Երբ փոխվեմ իմ Տեր Աստծու մոտ, թիկնոցս քեզ կտամ»: Եվ սուրբերը հասան կատարման տեղը, խոնարհեցին իրենց պարանոցները, և նրանց գլուխները հատվեցին: Բարի խոստովանությամբ ավարտեցին իրենց ընթացքը և պսակվեցին Քրիստոսից: Այնժամ երևալով ծերունուն սուրբ Գենարիոսը տվեց նրան այն, որ խոստացել էր, որը վերցրեց ոչ միայն աղքատությունը ծածկելու, այլև իբրև մեծ վկայի արյամբ ներկված գանձ: Եվ նույն օրը դատավորը չարաչար սատկեց: Իսկ քրիստոնյաները երեք տապան պատրաստեցին՝ մեկում դրին երանելի Գենարիոսին և տարան Երապոլիս կոչվող քաղաքը, կառուցեցին վկայարան և սրբի նշխարները տեղավորեցին: Այնտեղ բազում բժշկություններ էին լինում նրանով: Իսկ երեք [սրբերին]՝ Պրոկլիոսին, Տյուքիկոսին և Աքուդիոսին, մյուս տապանի մեջ: Երրորդ տապանի մեջ՝ երկու սրբերին՝ Փեստոսին և Դիսիդորոնին:

Այսպես վախճանվեց արի և քաջ նահատակը, սուրբ և երանելի Գեներիոս հայրապետը, այս ընկերներով հանդերձ, ի փառս մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվան. Նրա հետ՝ Հորը և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ԶՈՐԱՎԱՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստ Տեր Հիսուս Քրիստոսի թագավորության օրերը ոչ սկիզբ և ոչ վերջ ունեն. իսկ փառավորյալ ծնունդը և Մարիամ Աստվածածին կույսից մարդանալը, հայտնությամբ երևաց ամբողջ տիեզերքին, սուրբ առաքյալների ճշմարիտ քարոզությամբ, որոնք արժանի եղան սրբերի վիճակի և ճշմարիտ հավատքի շնորհների: Իսկ շատերը հավատքի ճշմարտությունը անհավատալի համարեցին. դրանք մոլորության ծառաներն են, որ բռնված են այս աշխարհի սնափառությամբ և մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղությունը զառանցանք են համարում, որ արդարև հրեաների գայթակղությունն է և հեթանոսների հիմարությունը: Իսկ Աստված կամեցավ իր բոլոր ծառաներին միավորել ի փրկություն ճշմարիտ աստվածպաշտության:

Այդ ժամանակ եղավ Դիոկղետիանոսի խիստ կռապաշտությունը Հռոմայեցոց աշխարհում. մի ժանտ ու գազանաբարո մարդ էր, քրիստոնյա հավատքին դեմ և խիստ պարտված սնոտի կուռքերի խաբեության մոլորությունից, անաստվածության մեջ ունենալով մի սիրելի համամիտ, որի անունն էր Մանգնենտիոս, երկրորդը նրա թագավորության մեջ և մոլեգնում էր քրիստոնյաների դեմ՝ կուռքերի ամբարշտությամբ զայրագնած: Սրանք միասին ժպրհություն մտածեցին՝ արմատապես վերացնել քրիստոնյաների պաշտամունքը և բոլորին ստիպում էին պաշտել կուռքերի պատկերները: Որովհետև [Դիոկղետիանոսը] իր ծնունդից ապականված էր կուռքերի մոլորությամբ, մանավանդ Ապողոնի արձանով: Միասին նստած մտածում էին հրովարտակ գրել թագավորի անունից այսպես.

«Դիոկղետիանոս, պատվված և մեծ թագավոր Հռոմայեցոց. ամբողջ աշխարհի իշխաններին, զորավարներին, դատավորներին և պետերին, որ իմ ձեռքի տակ եք, ողջույն:

Որովհետև մեր աստվածային լսելիքին լուր հասավ և անչափ խռովեց մեզ, որ քրիստոնյաների ամբարշտության հերձվածը զորանում, է և մի ոմն հրեա կնոջ Մարիամից ծնվածին, որի անունը Հիսուս է, երկրպագում են իբրև աստծու: Իսկ մեծ աստված Ապողոնին և Երմինին և Դիոնիսիոսին, Երակլեսին, Դիային, որոնք մեր աշխարհին խաղաղություն են պարգևում՝ թշնամանում են ու հայհոյում, իսկ Քրիստոս կոչվածին իբրև Աստված պատվում են, որին հրեաները խաչեցին որպես մահապարտի և մոգի: Սրա համար հրամայում ենք՝ բոլոր քրիստոնյաներին, ուր և գտնվեն, այրերին և կանանց բոլոր քաղաքներում և գավառներում դառն խոշտանգման ենթարկել, որպեսզի զոհ մատուցեն մեր աստվածներին և ուրանան այն մոլորությունը: Ովքեր հոժարեն՝ արժանացնել թողության, իսկ եթե ոչ՝ դժնդակ մահով հրի ու սրի մատնել նրանց, թող գիտենան, որ անփոփոխելի է մեր հրամանը, և եթե մեկը մեր աստվածային հրամանը դանդաղի կատարել՝ [այս] վճիռը նրանց վրա [տարածվի]»:

Երբ այսպիսի գիր ու հրաման հասավ՝ ամեն տեղ մեծ հալածանք հարուցվեց քրիստոնյաների դեմ, որ շատ նշանավոր մարդիկ սաստիկ տանջանքներից թուլացան: Դիոկղետիանոսը առավել ևս մոլեգնեց, իր մոտ կանչեց ամբողջ արքունիքն ու զորքը, նորից խորհրդակցեց, որ բոլոր քրիստոնյաներին ոչնչացնեն: Ովքեր թագավորի մոտ էին, երկյուղով մտածում էին օրենքով շարժվել: Իսկ Դիոկղետիանոսը ճառեց և ասաց. «Ինձ այսպես է թվում, սիրելինե՛րս, թե չկա այլ պատվական բան, քան մեր աստվածներին պաշտելը, որովհետև նրանք են տվել մեզ թագավորություն և բոլոր մարդկանց փրկություն, որի համար իրավացի եմ համարում այսուհետև մեր աստվածներին զոհ մատուցել մշտապես: Իսկ եթե գտնվեն մեր աստվածներին թշնամանող քրիստոնյաներ՝ ամեն հնարքով տանջանքի ենթարկել, մինչև նրանց դժնդակ կրոնը վերանա և նրանց հիշատակը մահվան միջոցով կորչի»: Միաբան պատասխանեցին թագավորին և ասացին. «Մենք հոժարությամբ ընդունում ենք ձեր մեծ թագավորության աստվածային հրամանները և խնամքը, ուզում ենք պատվել մեր անմահ աստվածներին, ինչպես և ձեր զորությունը: Այսուհետև, եթե գտնվի մեկը, որ թեկուզ մտքում տա Քրիստոսի անունը՝ կմատնվի մահի»: Այս ամբարշտության և անիրավության խորհուրդները մտածեց բռնավորը հրապարակում: Թագավորի հրամանով առաջնորդվելով՝ քրիստոնյաների հանդիպելիս համարում էին թագավորի թշնամիներ, որպեսզի տանջեին խոշտանգելով:

Այնժամ խավար գիշերում լուսավոր ու մեծապայծառ աստղի նման ծագեց Քրիստոսի պատվական մարգարիտը՝ Գեորգիոս անունով Քրիստոսի զորականը, փարատելու բազմաստվածության մեգն ու մառախուղը և սնոտի կուռքերի մոլորությունը: Երկնային խորհրդով և փրկարար քարոզությամբ սատարեց բոլոր արժանավորներին՝ իր ճգնության միջոցով: Քանի որ արհամարհեց պիղծ Դիոկղետիանոսի սպառնալիքը, իշխանների և զորավարների մոլորությունը և բնավ ուշադրություն չդարձրեց սպասվող տանջանքներին, այլ հայհոյեց բոլորին, որոնց պատվում էին, աստվածասեր սրտով ասում էր ինքն իրեն. «Գեորգիոս, ինչո՞ւ ես դատարկ, ահա Տերը կանչում է Իր հարսանիքին մտնելու, առագաստը բացված է, ընթրիքը պատրաստ է, ինչո՞ւ ես հապաղում, մտիր նախ քան կփակվի դուռը, քանի որ մեզ մոտիկ է Քրիստոս, որ մեզ համար խաչին համբերեց, աղաղակում և ասում է. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, իսկ ոգին չեն կարող սպանել» (Մատթ. Ժ. 28): Հիշի՛ր, Գեորգիո՛ս, ավետարանական վարդապետությունը և Տերունական անսուտ ավետիսը, որ ասաց. «Ով Ինձ խոստովանի մարդկանց առջև՝ կխոստովանեմ և ես նրան Իմ Հոր առջև, որ երկնքում է» (Մատթ. Ժ. 32, Ղուկ. ԺԲ. 8): Մի՛ նայիր, Գեորգիոս, ժամանակավոր, անցավոր աշխարհիս, որ երկնային կյանքի ստվերն է, և աշխարհի ընդունայն փառքին, երկնային հույսի համեմատ: Զէ՞ որ մարդու ամեն փառք ծաղկի ու խոտի նման է, մի քիչ համբերիր և հրեշտակների հետ հավերժական կյանքին կդասվես»: Այսպես խոսեց ինքնիրեն փոքրիշատե հնչեց ձայնը նրա և այսպիսի բարի խրատով հաստատվե-

լով ոչ միայն չվախեցավ բռնավորների սպառնալիքներից, այլև քարոզում էր ճշմարտության խոսքը և սպասվող տանջանքները ծաղրելով, ճգնությամբ հանդերձ մեծ վարդապետությունը Աստծու սուրբ եկեղեցուն գեղեցիկ հիշատակ էր թողնում:

Քրիստոսի սուրբը վկան Գամիրքից էր, ազատ տոհմից և շատ հարուստ, զարդարված աստվածային իմաստությամբ և բազում անգամ տրիբունական իշխանություն էր վարել երևելի պատվով և Անիկորոն գնդից էր: Այնուհետև իր բազում քաջության համար թագավորները նրան կոմսության պատիվ էին տվել: Երբ նա տեսավ անչափ մոլորությունը, որ գործում էին Քրիստոսի դեմ նրանք, որ կուռքերի պաշտոնյա էին, շտապ իր ինչքն ու ունեցվածքը բաժանեց և տվեց աղքատներին և տնանկներին և որպես ճգնավոր մերկացավ ամեն ինչից: Թագավորական ատյանում և արքունի հրապարակում բոլոր զորավարների մեջ, որ նստած էին ատյանում և այլ իշխանների, որ թագավորի առջև էին, հոժարակամ բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Ես քրիստոնյա եմ, թագավո՛ր, և խրախուսվեցի ճշմարիտ ու երկնային Թագավորից՝ Հիսուս Քրիստոսից, և ձեր մեջ եմ զարմացած ձեր այդչափ մոլորությանը, որ ունեք կուռքերի հանդեպ և չեք ճանաչում միակ կենդանի Աստծուն, բոլոր արարածների արարչին, որև այդ թագավորությունը տվել է ձեզ: Արդ, ո՛վ թագավոր և բոլոր աթոռակիցներդ, մի՛ մոլորվեք դևերի խաբկանքից, քանզի աստվածները, որ չեն ստեղծել երկինքն ու երկիրը՝ կկորչեն (Եսայի, Ժ. 11): Իսկ քրիստոնյաները միակ Հայր Աստծուն են երկրպագում և միակ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, որով ամեն ինչ եղավ, և Սուրբ Հոգի Աստծուն, կատարյալ Երրորդություն մի աստվածության և թագավորության մեջ, որով այստեղ ապրում ենք բարեպաշտությամբ, իսկ վախճանվելուց հետո ակնկալում ենք հավիտենական կյանք: Իսկ ձեր պաշտամունքը ստուգապես արժանի է այպանելու, քանի որ դևերի բարբաջանք է և չկա դրա մեջ ճշմարտություն: Դա սատանայի գործ է, որ ընկղմում է իր երկրպագուներին սատակման ու կորստյան»:

Այնժամ Մանգենտիոսը, որ թագավորի երկրորդն էր և սիրելին, նայեց նրան և ասաց. «Ինչ է քո անունը, և կամ ո՞վ ես դու, որ այսքան հանդգնություն ունես»: Սուրբ Գեորգիոսը պատասխանեց. «Նախ և առաջ իմ անունը քրիստոնյա է, բայց մարդկանցից կոչվում եմ Գեորգիոս»: Դիոկղետիանոս թագավորը՝ անդնդային վիշապը, նայեց նրան և ասաց. «Գեորգիո՛ս, մենք իմացել ենք քո մասին, որ իմաստության և քաջության մեջ ընտիր ես միշտ և արժանացել ես մեր արքունական խնամքի պատվին: Ուստի մոտեցիր, զոհ մատուցիր աստվածներին, որ չարաչար չկորչես, այլ մանավանդ վայելես մեր սերը պատվով և առավել ևս մեր խնամածությունը՝ և մեր ներկայությամբ համարձակություն ունենալով: Իսկ քո այդ ունայն համարձակությունը քեզ օգուտ չէ»:

Սուրբ Գեորգիոսն ասաց. «Թագավոր, երանի թե լսեիր դու ինձ և ճանաչեիր միակ ճշմարիտ Աստծուն՝ երկնքի արքայությանը արժանի լինեիր: Բայց հիմա քո իշխանությունը ժամանակավոր է, և քո խոստումներն ու ողոքանքը անզոր են հանելու ինձ իմ Աստծու բարեպաշտությունից: Քո պատիվը քեզ լինի և քո խոստմունքը՝ քեզ հավանողներին, բայց ես Քրիստոսին ունեմ երկնային Թագավոր, որ ինձ փառք է տալիս և հաղթություն հակառակորդի և նրա պաշտոնյաների նկատմամբ»: Եվ զայրացած թագավորը հրամայեց կախել նրան փայտից և գեղարդով հարվածել նրա որովայնին ու նրան գցել գետնին: Երբ այդ արեցին, նրա մարմնից արյուն ցայտեց, բայց գեղարդը անագի պես հետ ծալվեց: Այնժամ սուրբ Գեորգիոսն ասաց. «Գոհանում եմ Քեզնից, Քրիստոս, որ սատանայի պաշտոնյաների սուրը խսպառ ետ դարձրիր և այդ բռնավորի զայրույթը իմ դեմ քանդեցիր»:

Եվ Դիոկղետիանոսը, բարկությամբ լցված, հրամայեց իջեցնել փայտից և բանտ տանել, նրա ոտքերը չարաչար պնդել կոճղի մեջ, նրա կրծքին մեծ քար դնել, որպեսզի քարը չորս մարդու աշխատանքով դրվի: Եվ երբ քարը դրին նրա կրծքին, սուրբ Գեորգիոսը մեծ ձայնով աղաղակեց և ասաց. «Գոհանում եմ Քեզնից, բարձրյալ Աստված, որ արժանացա

ծանր բեռ կրել իմ սրտի վրա, որ հաստատում է անփոփոխելի խոստովանությունս Քեզ»:

Մյուս օրը սատանան Դիոկղետիանոսին և նրա աթոռակիցներին հուշում է, և նրանք հրամայեցին ամեն տեսակ հնարքներով կազմած մեծ անիվ սարքել և արեցին. հյուսնի մամուլի նման, ամեն կողմից սրով կազմած: Եվ անօրեն բռնավորը հրամայեց բերել անիվը: Եվ քաշելով բերին այնտեղ, նա նայեց այն դժնդակ մեքենային՝ կազմված սատանայական արվեստով, ասաց. «Տեր Հիսուս Քրիստոս, գոհանում եմ Քեզնից, որ ինձ կոչեցիր այս վիճակին: Դու, որ երկու ավազակների մեջտեղը խաչվեցիր և մահ ճաշակեցիր, ինչո՞ւ փրկես մարդուն մահից. այս ժամիս ինձ տուր անվեհեր խոստովանություն և պահպանիր հոգիս բանսարկուի հնարներից»: Այս ասելով գցվեց անիվի մեջ, և չարաչար կոտորվեց նրա մարմինը:

Թագավորը Մանգնենտիոսի հետ տեսավ, ձայն բարձրացրեց և ասաց. «Բոլորդ իմացեք, որ չկա այլ աստված, բացի Ապողոնից, Պսղիդոնից, Հերակլեսից, Դիսից և մեծն Արտեմիսից: Արդ, ո՞ւր է Գեորգիոսի Աստվածը, ինչու չեկավ և նրան չփրկեց իմ ձեռքից»: Եվ հրամայեց այնպես թողնել նրան տանջարան անիվի մեջ և ինքը գնաց ճաշելու:

Իսկ տասներորդ ժամին մեծ հնչում և ձայն եղավ երկնքից, որ ասում էր. «Քաջալերվի՛ր, Գեորգիոս, և եղիր աներկյուղ, որովհետև բազում մարդիկ քեզնով հավատալու են Ինձ»: Իսկ նրան պահող դահիճները հնչած ձայնից զարհուրած՝ երկյուղով փախան: Եվ Տիրոջ հրեշտակը իջավ, ազատեց նրան այն տանջարանից և ողջանդամ հաստատեց նրա մարմինը, ողջունեց նրան ու ասաց. «Ուրախ եղիր, Գեորգիո՛ս, և հավատա քո զորացուցչին և շարունակիր քո ընթացքը, որովհետև ահա մենք քեզ տալու ենք կատարյալ խոստովանության պսակը»: Եվ սուրբ Գեորգիոսը ուրախությամբ ելավ, գոհացավ Տիրոջից ու շրջում էր սաղմոսելով. «Բարձրացնում եմ քեզ Աստված իմ և Թագավոր իմ, և հավիտյան օրհնում Քո անունը» (Սաղմ. ՃԽԴ. 1), և՝ «Ուղի՛ղ արա իմ

ընթացքը, Տե՛ր, և չտիրեն ինձ ամեն անօրինությունները» (Սաղմ. ՃԺԸ, 133):

Եվ եկավ մի տեղ, ուր կար Ապողոնի արձանը, այնտեղ գտավ Թագավորին և Մանգնենտիոսին ու Թագավորի բոլոր բարեկամներին՝ կուռքին զոհ մատուցելիս և երկրպագելիս: Գեորգիոսը մոտեցավ և աղաղակելով ասաց. «Ճանաչի՛ր ինձ, Թագավոր, և իմ ավետարանած Աստծուն, որ ինձ փրկեց քո ձեռքից ու մահաբեր տանջանքներից, որ պատրաստեցիր իմ կորստյան համար, կարծելով կորցնել, քանի որ մոլորված ես այդ կուռքին զոհ մատուցելով»:

Նրան նայելով Թագավորն ասաց. «Ո՞վ ես դու»: Սուրբն ասաց. «Ես Գեորգիոսն եմ, որ քո հրամանով պրկվեցի անիվին, և ինձ թողիր անիվի մեջ՝ մեռած կարծելով: Այժմ եկա ցույց տալու քեզ՝ իմ Աստվածը կարող է փրկել ինձ մահից, որ դու թշնամանքով պատրաստեցիր»: Այնժամ Թագավորը հրամայեց բռնել նրան և մոտեցնել: Նայեց նրան և ասաց. «Թվում է, թե բռնամահ եղածի ստվերն է, և խաբում է մեզ»: Իսկ Մանգնենտիոսը՝ «Նման է նրան»: Սուրբ Գեորգիոսն ասաց. «Ես Քրիստոսի ծառա Գեորգիոսն եմ, մի՛ մոլորվեք կուռքով, այլ իմացեք, որ կարող է Քրիստոս մեռելներից հարություն տալ նրանց, ովքեր հույս են տածում դեպի Նա, և ձեր ձեռքից փրկել»:

Նրան տեսան և նրանից այս լսեցին Անատոլիս և Պրոտողիոն ստրատելատները, որ կոչվում են զորավար, իրենց ամբողջ ընտանիքներով հավատացին Աստծուն և ասացին. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը, միայն Նա է Աստված՝ օրհնյալ հավիտյան»: Երբ այս լսեց Թագավորը, հրամայեց նրանց բոլորին տանել քաղաքից դուրս, անապատ մի վայր և կոտորել: Եվ երբ նրանք գնում էին սպանության տեղը, միաբան աղաղակում էին ասելով. «Տեր Հիսուս Քրիստոս, մեր հոգիներն ընդունիր խաղաղությամբ և կարգիր Քո անփոփոխելի անանց արքայության մեջ, ընդունիր մեզ Քո հավատի մի փոքր խոստովանությամբ՝ արդարության ու մեր մեղքերի թողության համար»: Եվ այդպես կատարվեց նրանց վկայությունը ի Քրիստոս Հիսուս:

Այնժամ նաև Աղեքսանդրա թագուհին լսեց սուրբ Գեորգիոսի մասին, ինքը հավատաց Տիրոջը, եկավ թագավորի մոտ, համարձակ աղաղակով ասաց. «Ես քրիստոնյա եմ, Աստծու սուրբ Գեորգիոսի աղախինը»: Թագուհու այս խոսքին պատասխանեց Մանգնենտիոսը և ասաց. «Ասա մեզ, թագուհի Աղեքսանդրա, ինչո՞ւ Քրիստոսին գովեցիր և աստվածներին արհամարհեցիր»: Իսկ նա ասաց. «Մեծագույնին փափագելով՝ պակասն արհամարհեցի»: Այս ասելով գնաց, մտքում ունենալով Աստծու երկյուղը և անշարժ հավատքը, իսկ թագավորը զայրացավ, հրամայեց, սուրբ Գեորգիոսին գցել կրի հորը, որ նույն ժամին իջեցրին և թաղեցին կրի մեջ երեք օր ու գիշեր, և հրաման տվեց պահապաններին, որ հսկեն, որ ոչ ոք չհամարձակվի նրան հանել այնտեղից: «Երեք օր հետո,- ասաց թագավորը,- զորականները կգնան և կհանեն բռնամահի ոսկորները և կպահեն զգուշությամբ, որ ոչ ոք չիմանա այդ մասին»: Երբ զինվորները գնացին կրի հորի մոտ, ուրիշ շատերը ևս եկան տեսնելու: Եվ երբ հեռացրին կիրը, գտնվեց սուրբը վկան առանց իր մարմնի վրա որևէ արատ ունենալու, որովհետև Տիրոջ հրեշտակը նրա հետ էր, լինելով նրան օգնական Քրիստոսի հրամանով: Երբ նրան տեսան, բոլորն աղաղակելով ասացին. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը»: Այս լսեց Աղեքսանդրա թագուհին, նա ևս աղաղակելով եկավ այնտեղ. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը, և չկա բացի Նրանից մի ուրիշը»: Հավատացին զորականները, որ թագավորից ուղարկվել էին սրբին կրի հորից հանելու:

Երբ այս լսեց թագավորը, հրամայեց զորքին գնալ և բռնել սրբին, բերել իր մոտ: Երբ սրբին բերին, թագավորը նստեց ատյանում՝ իր մեծամեծներով հանդերձ և հարցրեց նրան. «Ասա մեզ, ո՞վ կենդանացրեց քեզ»: Սուրբը վկան պատասխանեց նրան. «Գուցե լսեք դարձյալ ու չհավատաք, բայց իմացի՛ր, թագավո՛ր, որ Հիսուս Քրիստոս Աստծու Որդին պահում է ինձ քո բոլոր տանջանքներից, և բոլորին, ովքեր դիմում են Նրան, փրկում է սատանայի որոգայթներից»:

Այն ժամանակ թագավորը հրամայեց պատրաստել երկաթե կոշիկներ, սուր մեխերով, ուղիղ, և չիկացնել, ունելիով բռնել

և հագցնել սրբին ու քայլեցնել նրան: Իսկ սուրբը վկան չկարողանալով գնալ, ասում է ինքնիրեն. «Ընթացիր, Գեորգիոս, դեպի քեզ պահված վիճակը»,- և արտասուքով աղոթում էր. «Տեր Աստված իմ, մեռյալների փրկիչ, հալածվածների ապավեն, Քո անվան համար չարչարվողների համբերություն, մի՛ թող ինձ, այլ շնորհիր ինձ համբերություն մինչև վերջ»: Եվ երբ նա ավարտեց աղոթքը, երկնքից ձայն եկավ նրան, որ ասում էր. «Քաջալերվիր, Գեորգիոս, որովհետև ես քեզ հետ եմ, քեզ փրկելու համար»: Նույն պահին նրա մարմինը բժշկվեց: Եվ թագավորը հրամայեց նրան տանել բանտ, իսկ առավոտյան թագավորն ասաց նրան. «Մինչև ե՞րբ կախարդությամբ սրտապնդված կդիմանաս տանջանքներին, և մանավանդ դևերի օգնության մոգությամբ, համաձայնիր ինձ հետ, այսուհետև զոհ մատուցիր աստվածներին»:

Սուրբը ասաց թագավորին և նրա հետիններին. «Ես ստանալով իմ Աստծու օգնությունը, ընդունելով ձեր բոլոր տանջանքները, ձեր առջև ողջ մնացի՝ վկայելով միակ Աստծու զորությունը, և պատրաստ եմ դարձյալ ձեր բոլոր տանջանքներին՝ Քրիստոսի հավատի համար: Իսկ դուք ի՞նչ հույս ունեք, որ ընդունայն պաշտում եք անշունչ, պիղծ կուռքերին, որ ոչինչ են, և նրանց կորստյան հաղորդ եք լինում: Ամաչեցեք այսուհետև դրանց աստված անվանելուց, որոնք գիճությամբ և արբեցությամբ, պատերազմով ու սպանությամբ մի փոքր ապրել են այս աշխարհում և հավիտյան տանջվելու են անշեջ հրում, որ կա, մնում է բոլորի համար, ովքեր պաշտում են դրանց»:

Թագավորը և ամբողջ արքունիքը լսեցին դա, հրամայեցին արջառաջիլով անխնա հարվածել նրա մարմնին, և երբ ծեծեցին նրան բազում ժամեր, թագավորն ասաց նրան. «Թշվառական, մինչև ե՞րբ չես հավանելու և զոհ չես մատուցելու մեծ աստվածներին, որ մեծ պատվի արժանանաս և ապրես»: Իսկ սուրբն ասաց. «Ես հանապազ օրհնության պատարագ եմ մատուցում կենդանի Աստծուն, որը փրկում է ինձ ձեր ձեռքերից և կարժանացնի երկնային փառքի ու

պատվի: Երանի թե դուք ինձ հավատայիք և երկրպագեիք միակ ճշմարիտ Աստծուն»:

Այնժամ թագավորը հրամայեց բանտ նետել նրան ու ինքը գնաց արքունիք: Երբ սուրբը բանտում էր, բոլոր հավատացյալները գիշերով գալիս էին նրա մոտ, բանտապետին ինչք տալով մտնում էին և նրանից սովորում հավատն առ Քրիստոս: Եվ ովքեր հիվանդություն ունեին, պես-պես ցավով բռնված, կույրերին էին բերում նրա մոտ, և նա աղոթքով բուժում էր նրանց: Ոմն աշխարհական Գլյուկերի տեսավ բուժումները, որ անում էր, եկավ, ընկավ նրա առաջ, աղաղակելով ասաց. «Հավատում եմ քո Աստծուն, որովհետև Նա է Աստվածը, և ուրիշը չկա բացի Նրանից»: Նույն պահին դահիճներն ու զորականները բռնեցին նրան, տարան թագավորի մոտ՝ եղածի համար: Իսկ թագավորը զայրացած անունն անգամ չուզեց հարցնել, այլ հրամայեց անդամ-անդամ կտրատել նրան: Իսկ նա, խոստովանելով Քրիստոսին, աղաղակեց. «Աստված ճշմարիտ, որ ստեղծեցիր ամեն բան, մի՛ անտեսիր ինձ, որպես անպիտան անոթ, որովհետև հավատացի Քեզ՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, և վախենում եմ, քանի որ առանց սուրբ մկրտության եմ, ուզեցի մկրտվել, բայց չհասցրի: Քո կամքով, Տեր, կփրկվեմ, որի համար աղաչում եմ Քեզ, Տեր Հիսուս, իմ զոհվելու արյունը ինձ մկրտություն համարիր, քանի որ սրտագետ Աստված ես, գաղտնիքների և մտքի հոժարության քննող»: Եվ նրան ձայն հասավ երկնքից, ասելով. «Արի՛, Գլյուկերի, ինձ մոտ ուրախությամբ»: Եվ այսպես զոհվեց սուրբը:

Եվ դարձյալ գնացին Դիոկղետիանոսին ասացին, թե շատերը գնալով բանտ Գեորգիոսից ուսանում, են և բոլորին իր կողմն է ձգում, բուժելով բազում ծանր հիվանդների: Այնժամ հրամայեց իր մոտ բերել Գեորգիոսին, իսկ Մանգնենտիոսն ասաց թագավորին. «Քրիստոնյա ազգը դժվարամահ է և վիճող, ուստի աղաչիր ողոքանքով այս մարդուն, որ թերևս քո խորհրդով աստվածներին զոհ մատուցի, և նրան պատիվներով բերկրեցնես»: Իսկ սուրբ Գեորգիոսը եկավ արքունիք, սաղմոսելով ասաց. «Աստված, նայիր ինձ օգնելու» (Սաղմ. ԻԱ. 20, ԼԹ. 14, ԿԹ. 2),- և՝ «Տեր, փութա ինձ ընկերանալու» (Սաղմ. ԿԹ. 2):

Այն ժամանակ թագավորն սկսեց աղաչել նրան. «Տեր արեգակով և բոլոր աստվածներով [երդվում եմ], եթե ինձ լսես, Գեորգիոս, զոհ մատուցես մեր աստվածներին, քեզ բազում բաներ կնվիրեմ, և թագավորությանս մեջ իմ երկրորդը կճանաչվես, քանի որ խնայում եմ քեզ և ափսոսում, ավելի ցանկանալով քո կյանքը, քան չարաչար մահը՝ ինձ չլսելուդ պատճառով»: Իսկ սուրբ վկան ասաց. «Լավ ասացիր այժմ: Ինչու չասացիր ինձ այդպիսի բաներ ավելի շուտ. այսքան չարչարանքներից [հետո], ո՞ւր թողնեմ իմ թշնամանքը»: Թագավորն ասում է. «Ինձ՝ քո հորը վերագրիր այս հանցանքը, զոհ մատուցիր աստվածներին և ինձ հետ կպատվվես արքունիքում»: Իսկ սուրբ Գեորգիոսն ասաց. «Որովհետև իմ պատճառով զղջացիր, թագավոր, այժմ ես կհավանեմ քո մտքին. ուր են քո աստվածները, գնանք նրանց մոտ»: Եվ թագավորը խիստ ուրախացավ և հրամայեց բոլոր պետերին ու զորքին ամբողջ հրապարակով գալ կուռքերի տաճարը, և այսպես քարոզեց. «Ահա Գալիլեացիների գաղափարակից Գեորգիոսը համաձայնեց զոհ մատուցել մեծ Ապողոնին»: Իսկ բոլոր հեթանոսները ոգևորված աղաղակեցին. «Ապողոնը հաղթեց, Դիոկղետիանոս թագավոր, թագավորիր հավիտյանս: Մեծ են թագավորի աստվածները»:

Նրանք մտան կուռքի տաճարը, և երբ բոլորը լռեցին, կանգնեց սուրբ Գեորգիոսը, նայեց Ապողոնի արձանին, ասաց. «Դու աստվա՞ծ ես, և քեզ մարդիկ պիտի պաշտե՞ն»: Իսկ պիղծ ոգին, որ պատկերի մեջ էր, գոչեց ասելով. «Ես աստված չեմ, և ոչ նա, որ ինձ հետ է, այլ ճշմարիտ Աստված մեկ է, որ ստեղծեց ամեն ինչ, և Նրա Որդի Հիսուս Քրիստոս և Սուրբ Հոգին: Իսկ մենք Նրա հրեշտակներն ենք, ապստամբած Նրանից, կոչվում ենք դև»: Սուրբ Գեորգիոսն ասաց. «Եվ եթե աստված չեք, ինչո՞ւ եք մոլորեցնում մարդկանց և հիմա ինչպես եք համարձակվում լինել այստեղ, [երբ] եկել եմ

այստեղ ես՝ ծառան Աստծու, որ կոչվում է Քրիստոս, Աստծու ճշմարիտ Որդի»: Եվ նույն պահին եղավ մեծ խռովություն և դևերի ողբի գոչյուն, և տաճարի բոլոր կուռքերն ընկան, փշրվեցին, նա Քրիստոսի նշանն արեց ձեռքով ու խոսքով: Եվ հեթանոսների քուրմերը եղածը տեսան, մոտեցան սուրբ Գեորգիոսին, բռնեցին նրան աղաղակելով. «Վերացրու այս կախարդին, որ մոլեգնությամբ բոլորին մոլորեցրեց և կործանեց աստվածներին»:

Թագավորը զայրացավ, դևերի օգնությամբ և քուրմերի առաջնորդությամբ ասաց սրբին. «Զարագլուխ, լի ամեն տեսակ կախարդությամբ ու մոլորությամբ, ինձ չխոստացա՞ր զոհ մատուցել Ապողոնին»: Սուրբը վկան ասաց. «Անմիտ և անամոթ, ես իմ պատարագը կատարեցի առ Քրիստոս ճշմարիտ Աստվածն իմ, այդ պատճառով ձեր բոլոր աստվածները ապականվեցին: Գոնե այժմ հասկացիր, թագավոր, որ [դրանք] ո՛չ իրենց, ո՛չ ուրիշի կարող են օգնել, քանի որ կուռքերը անմռունչ, իսկ դևերը անմիտ մարդկանց մոլորեցնող են և այժմ Քրիստոսի ծառայի միջոցով կործանվեցին»: Այնժամ Աղեքսանդրիա թագուհին լսեց եղածը, գնաց թագավորի մոտ և նրա առջև աղաղակելով ասաց. «Սուրբ Գեորգիոսի՝ Քո անհաղթ զորականի Աստված, քավիր իմ մեղքերը և մի՛ հիշիր իմ անզգամ գործերը, Տեր Աստված, այլ հիշիր իմ փոփոխությունը և քրիստոնյաների ու Քո ծառա Գեորգիոսի հետ ինձ մասն ու բաժին տուր»: Նաև բազում ուրիշներ հավատացին Տիրոջը:

Այնժամ թագավորը բարկացավ, վճիռ կայացրեց սուրբ Գեորգիոսի և Աղեքսանդրայի համար, սուրբ վկային ասելով. «Ահա, ամենաչար Գեորգիոս, նաև թագուհուն մոլորեցրիր և ենթարկեցիր մահվան: Արդ, գնա՛ դու նրա հետ աստվածների հայհոյության համար արժանի դատաստան ստացիր»: Եվ այսպիսի վճիռ կայացրին. Գեորգիոսին՝ Գալիլեացիների խորհրդակցին, Ապողոնին չերկրպագելու համար, և որ թագուհուն ևս իր հետ մոլորեցրեց հայհոյելու աստվածներին, այս վճիռն եմ կարդում՝ հրամայում եմ սրով կտրել նրա գլուխը: Նաև՝ նրա մոլորեցրած Աղեքսանդրային»: Եվ իսկույն

զինվորներն առան նրանց, քաղաքից դուրս տարան: Հոժարությամբ գնալով սպանման ասպարեզ Աղեքսանդրան սուրբ վկայի հետ մտքում աղոթելով Տիրոջը, միայն շրթունքները շարժելով և աչերը երկինք հառնելով, նստեց մի տեղ իր հոգին արձակեց խաղաղությամբ:

Իսկ սուրբ Գեորգիոսին տարան սպանման տեղը, և ասաց զորականներին. «Մի փոքր սպասեցեք, եղբայրներ, որպեսզի աղոթք անեմ»: Եվ երբ թողին նրան, երկինք նայելով տարածեց ձեռքերը, մեծապես հառաչեց ու ասաց. «Տեր Աստված իմ, որ ամբողջ հավերժից առաջ ես, որին ես ապավինեցի իմ մանկությունից քրիստոնյաների գեղեցիկ և ճշմարիտ ակնկալությամբ և Քո ծառաների անսուտ խոստումով անանց գանձ, որ մեր խնդրելուց առաջ շնորհում ես մեզ Քո ձրի պարգևները, լսիր ինձ, Տեր, և տուր վկայության խոստովանությանը մինչև վերջ համբերել: Եվ այժմ ընդունիր իմ հոգին և փրկիր ինձ հողեղեն և պիղծ հոգուց և ի հաճույս Քո ինձ հանգեցրու Քո սրբերի մեջ և թողություն շնորհիր այս հեթանոսներին, որ չարչարեցին ինձ, իսկ Քո ծառաներին, որ դիմում են Քո անվանը, լուսավորիր ճշմարտության գիտությամբ: Զէ որ կամենում ես, որ բոլորը ապրեն. օգնություն առաքիր նրանց, ովքեր դիմում են Քո անվանը, նրանց տուր Քո երկյուղը և ցանկություն, սեր սրբերի նկատմամբ, որպեսզի նրանց հիշատակը կատարելով նմանվեմ նրանց հավատին, որպեսզի արժանի լինեմ նրանց հետ երկնավոր կյանքին և հավիտենից արքայությանը, զի Քոնն է Հոր և Սուրբ Հոգու արքայությունը և փառքը. հավիտյանս ամեն»:

Աղոթելուց հետո ծունր իջավ, պարանոցը ձգեց և ասաց. «Կատարեցեք թագավորի հրամանը»: Զորականի սրի հարվածով նահատակվեց ի Տեր սուրբ վկան Քրիստոսի Գեորգիոս, մեհեկի ամսի քսաներեքին, ուրբաթ օրը, յոթերորդ ժամին, ի փառս ամենասուրբ Երրորդության, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ես՝ Պասիկրատես, սուրբ Գեորգիոսի ծառա, գնալով իմ տիրոջ հետ՝ ամենայն ստուգությամբ գրեցի հիշատակարանս:

Սքանչելիքները, որ եղան սուրբ և Քրիստոսի մեծ վկա Գեորգիոսի միջոցով, որ արել է երիտասարդ Գեորգիոսը Գթաց ազգի գերվածին և սրբի միջոցով փրկվածին

Ովքեր փափագում եք արժանի լինել Աստծու պարգևներին աներկմիտ հավատով և բազում գութով՝ անձանձիր տոնեցեք հիշատակն ու տոնը սրբերի: Ստուգապես սա գիտենալով՝ սրբերը, որ գովվում են մեր խոսքով, կայցելեն և հովանի ու վերատեսուչ կլինեն մեզ [...]

[...] *Երբ այս լսում էին բարեկամներն ու ազգայինները՝ ողբակցում էին և մխիթարական խոսքեր էին ասում նրանց: Գերության մեջ գիտակ էր և մանուկը, այն երեկոյին, որի առավոտյան սրբի տոնն էր, քանի որ խոհանոցում կրակ էր վառված գինին եռացնելու համար, որովհետև այն ազգապետը սովոր էր գինին տաք խմել: Մանուկը թախծում էր արտասվելով, տխրած մտածում էր, թե՝ «Իմ տանը այսօր իմ ծնողները կատարելու են սրբի հիշատակը: Եվ բարեկամները, որ այնտեղ մոտիկ են այժմ սեղանի շուրջը բազմած կլինեն: Ես՝ ողորմելի ու գերի պանդուխտս, անցյալ տոնին նրանց հետ էի՝ տոնելով և ուրախանալով նրանց հետ, որ սրբի բուն տաճարում էին հավաքվում, պաշտոնակից ու եղանակակից էի լինում, իսկ այժմ՝ այլազգիների երկրում գերության ու ծառայության մեջ պանդուխտ եմ: Միայն ես, սո՛ւրբդ Աստծու, անարժան եղա նրանցից, որ մտնում էին քո պատվական տաճարը: Եվ այսօր իմ ծնողները կատարում են քո սուրբ հիշատակը և ինձ չեն տեսնում: Շատ տխուր է և իմ մայրը, քանի որ հավաքվում են քո տոնին ու ինձ չեն տեսնում, չեն լսում իմ սաղմոսելու ձայնը: Ինչպես չտոչորի նրա սիրտը, և չպատռի իր պատմուճանը՝ ցավագին հարվածներ տեղալով իր վրա: Ո՞վ կվերացնի իմ հոր հառաչանքը, կամ ո՞վ կկարողանա ընդդիմանալ նրա ողբին, և ո՞վ կփարատե իմ տառապյալ մոր արտասուքը: Նաև ես այժմ ի՞նչ օրհնություններ և ո՞ր սաղմոսները երգեմ քո տոնին, բացի անօգուտ արտասուքներից. [լոկ] ունայն հառաչանք կվերամատուցեմ իմ վշտացած սրտից: Ո՛ղջ եղիր, մայր իմ, ողջ եղեք իմ բոլոր ազգականներ, սիրելիներ ու ծանոթներ և գերության մեջ հիշեցեք ինձ: Եթե իբրև ողջի հիշեք՝ աղոթեցեք ինձ համար, կամ թե իբրև մեռածի՝ ողբացեք ինձ վրա: Ո՛ղջ եղիր և դու, պատվական քահանա, այդ տաճարի սուրբ սպասավոր, որ դաստիարակելով ինձ սովորեցրիր Աստվածաշունչ գիրքը. այժմ հիշիր ինձ քո պատվական աղոթքով: Ո՛ղջ եղեք և դուք, իմ հասակակիցներ, սաղմոսակիցներ ու երգակիցներ, այժմ սուրբ վկայի տոնին չմոռանաք օտարիս, օտարության և գերության մեջ»:*

Այս ասելով լռությամբ արտասուք էր հեղում գետաբար իր աչքերից, որովհետև այլազգիների ահից չէր համարձակվում հառաչանքով ողբալ: Այժմ ուշք դարձրեք [այս] սքանչելիքին, տարածեցեք սրտերդ և ավելի լայն բացեք ձեր լսելիքը: Մինչդեռ այս էր խորհում մանուկ Գեորգը, շտապեցնում էին նրան ծառայակիցները, որ արագ հասցնի՝ տաք անոթը վերցնի կրակի վրայից: Եվ նա, արտասուքը սրբելով իր երեսից, առավ անոթը խարույկի վրայից՝ երբ եռում էր ուժգին հորձանքով, ո՜վ զարմանալի սքանչելիք, հույժ զարմանում եմ, և իմ գլխի մազերը փշաքաղվում են, և չգիտեմ ինչ ասեմ, բայց պետք էր կատարել Տիրոջ խոսքը, որ ասաց առաքյալներին. «Ով հավատա Ինձ՝ գործը, որ Ես եմ անում և նա կանի» (Հովհ. ԺԴ. 12): Մինչ մանուկը գնում էր անոթը ձեռքին, հանկարծակի տարվեց բարձունքները և սուրբը ակնթարթորեն նրան բերեց տան մեջ, որտեղ հյուրերը բազմել էին: Նա ձեռքին ուներ տաք անոթը, որ տակավին նույն ձևով եռում էր, ինչպես կրակի վրայից վերցնելիս: Երբ տեսան նրա ծնողները և նրանք, որ բազմած էին, խիստ հիացան և բարձրաձայն խոսեցին: Եվ առավել ուրախությունից և անսպասելի խնդությունից նրա ծնողները գետին ընկան, իսկ

ուրիշները գրկած համբուրում էին նրան: Եվ սկսեցին հարցնել նրա գալստյան մասին: Եվ մանուկը ճանաչեց իր տունն ու ծնողներին և նրանց, որ նստած էին տարակուսանքի ու մեծ հիացման մեջ: Ապա ուշքի գալով՝ պատմեց իր մասին՝ այսպես ասելով. «Միայն այս գիտեմ, որ այս ժամին գերության և ծառայության մեջ էի բուլղարների երկրում, և այս անոթը, որ տեսնում եք իմ ձեռքին, խոհանոցի կրակի վրայից վերցրի և ուզեցի գնալ իմ տիրոջ մոտ: Երբ բարձրանում էի տաճարի սանդուղքներով, այնտեղ տեսա մի մարդու՝ երիվարի վրա, զինվորի կերպարանքով: Արեգակից ավելի պայծառացան նրա շողերը: Եվ հանկարծակի հափշտակեց ինձ, և ես եղա մեծ հիացքի մեջ և այլ բան չիմացա, միայն լսեցի ջրի ծփանքի ձայն, որ խփում է երիվարի գարշապարներին: Եվ մի ակնթարթում հայտնվեցի այստեղ, ուր տեսնում եք ինձ: Քանի որ լույսի ճառագայթների մեջ էի՝ չգիտեի, թե ուր եմ ես, մինչև հարցրիք ինձ»:

Երբ այս լսեցին, իսկույն դուրս ելան տնից, որոնելու մանկան փրկչին ու ապրեցնողին: Եվ քանի որ անհնար էր տեսնել արագահաս նահատակին, նորեն դարձան իրենց տունը և զարմացած էին սքանչելիքով, մանավանդ որ անոթը դեռ եռում էր մանկան ձեռքին:

Մանկան ծնողները ուշքի եկան, գրկում, համբուրում էին նրան և արտասվելով ասում. «Իսկապես սա մեր որդյակն է, արդյոք իրակա՞ն է, թե երազում: Եթե ճշմարիտ է՝ տեսանք մեր աչքի լույսին և մեր սրտերի մխիթարիչին: Գոհանում ենք պարգևող Աստծուց և Նրա մեծ վկայից: Եվ ովքեր մեզ հետ լալիս էիք մեր որդու կորուստը, այժմ ուրախացեք մեր լույսի հայտնվելուն»: Ի՞նչ չէին ասում և ինչ չէին անում գոհության արժանի եղած նորասքանչ այս գործի վրա: Այս բանը իմացան ամբողջ երկրում և փառավորում էին Աստծուն, գոհություն մատուցում սրբին: Եվ հրամայեցին, որ այն եռացած ջրից խմեն բոլոր նստածները, քանի որ չէր դադարում եռալ:

Այժմ լսեցեք այլ սքանչելիքներ՝ սքանչելիքի վրա: Այն անոթը, որ մանուկը բռնել էր իր ձեռքին՝ մեծ չէր, այլ շատ

փոքր, և ովքեր հավաքվել էին սրբի հիշատակին՝ բազմաբազում էին և բավականեց բոլորին, ովքեր այնտեղ էին, և այնքան ժամանակ բոլորովին չսառեց, այլ նույն կերպ եռում, ասես հրի բորբոքումից էր ստիպված: Եվ ինչպես Եղիայի ժամանակ՝ օտարասեր այրի կնոջ ձեթի սրվակը չնվազեց, և ալյուրի սափորը չպակասեց, այդպեսև այս անոթը՝ չնվազեց այնքան առատ բաշխումից, այլ այն շերտերի օրինակով, որ ջրի մեջ են լինում և նրանից դուրս բորբոքված կրակը ջուրը չի հանգցնում, այլ ավելի բորբոքում է, այդպեսև աստվածային այս հրի զորությունը սուրբ վկայի ազդումով [մանկան] ձեռքին ուժգին բորբոքվում էր ջերմությամբ: Ո՜վ նոր և զարմանալի հիացմունք: Լսելով այս սքանչելիքը՝ ո՞վ չի փառավորի Նրան, որ փառավորված է սրբերի մեջ:

Իսկ ծնողները մանկանն առան գնացին ամենանվիրական տաճարը սրբի: Եվ խնդության արտասուքով թրջում էին եկեղեցու հատակը և մատուցանում այսպիսի գոհություն. «Գոհանում ենք քեզնից, սուրբդ Աստծու, և քո բարեխոսությունից ու օգնականությունից, որ չանտեսեցիր մեր պաղատանքը, այլ կատարեցիր քո երաշխավորությունը և մեր որդուն ողջ պահելով հասցրիր մեզ մոտ: Արդ, քավություն պարգևիր ծառաներիդ՝ նախատինքի ու չար խոսքերի համար, որ ասացինք քո մասին, քանի որ գորովի ցավը խոցոտում էր հոգիներս, և ծնողական բնական գությունը գալարեցնում էր աղիքներս և հարկադրում էր խոսել անպատշաճ բան»: Այս և առավել քան սա գոհություն էին մատուցում սրբին, և այն անոթը տվեցին սրբի տաճարին մեր Տեր Հիսուս Քրիստոսի անարատ մարմնի և արյան սպասավորության համար՝ ի հավաստումն տեսնողների և ի վկայություն սքանչելիքի, որ պատահեց մանկանը: Այն կողմերի բոլոր բնակիչները լսեցին զարմանալի սքանչելիքը և գալիս տեսնում էին անոթը սրբի տաճարում, առավել գոհություն մատուցում Աստծուն, որ կատարում է իր երկյուղածների կամքը, և ասում էին. «Սքանչելի է Աստված իր սրբերի մեջ»,- ինչպես երգում է Դավիթը (Սաղմ. ԿԷ. 36), և «Սքանչելի արեց Տերը իր սրբերին

երկրի վրա», «Վա՜յ մեծ սքանչելիքին, վա՜յ ծնողների հա-
վատին, վա՜յ խնամքին ու բարեգութ օգնականությանը, ինչ
է ավելի սքանչելի քան սա» (Դան. ԺԳ. 32-34),- Ամբակում
մարգարեի խոսքով, որ հափշտակվեց միգապատ երկրից և
ճաշ մատուցեց Բաբելոնում Դանիել մարգարեին առյուծների
մեջ, և իսկույն այնտեղից դարձավ իր տեղը: Իսկ պսակավոր
ճգնակյաց այս վկա Գեորգիոսը մանկանը ծառայությունից
հափշտակեց՝ ազատելով գազանաբարո բարբարոսությու-
նից, մի ակնթարթում տանելով իր տունը, ինչպես Քրիստոսի
սուրբ վկաներ Գուրիասը, Սամովնասը և Աբիբասը՝ կենդանի
աղջկան դնելով գերեզման մի ակնթարթում և հափշտակե-
լով և դնելով իրենց տաճարը, տվին իր մորը՝ ողջանդամ:
Այսպես արագահաս օգնական Գեորգիոսը, լսելով ծնողների
աղաչանքը, ողջ պահելով պատերազմից և ազատելով հեթա-
նոսական ծառայությունից՝ հասցրեց ծնողների մոտ:

Իսկ դու, ո՜վ ամենապերճ և փափագելի վկա, հաստատուն,
անուն Աստծուց մշակված կենսաբեր տունկ, քաջազվարթ և
պտղաբեր այգի, որ կերակրում ես հոգին ու մարմինը նրանց,
ովքեր հավատով դիմում են քո անվանը: Ո՜վ մարտիրոսնե-
րի պարծանք և ճգնազգյաց այրերի պայծառություն, որ բո-
լոր վտանգվածներին պատրաստակամ ապավեն ես լինում,
հովանավորելով պահպանում, ովքեր աներկևան հավատով
խնդրում են քո միջնորդությունը, հասիր և մեզ օգնության,
որ փափագով դիմում ենք քո արագահաս անվանը և բաղ-
ձանքով կատարում քո հիշատակը: Ազատիր մեզ երևելի և
աներևույթ թշնամիների դավադրությունից: Քեզ է դիմում
ու փառավորում ամեն բերան, քեզ է օրհնում ամեն լեզու,
և քո ցանկալի ու աստվածազարդ անունը հռչակված է ամ-
բողջ տիեզերքում: Բոլոր հավատացյալների սովորությունն է՝
դիմել քեզ օգնության կանչով, և փրկող, ապավեն ու ան-
պատկառելի միջնորդ են ստացել: Դու ինքդ, գերապայծառ
և պսակազգեստ վկա, մեծդ նահատակների, ինչպես համար-
ձակություն ես ստացել նահատակադիր և պսակապարգև մեր
Արարչի մոտ, մեզ օգնության կանչիր քո նահատակակից

մարտիրոսներին, քրիստոնյաների ապավեններին և առաջ-
նորդներին. անոխակալ Ստեփանոս Նախավկային, Թեոդո-
րոսին, որ օգնության կանչելիս քեզ նրան հաղորդակից են
կոչում, Մերկուռիոս վկային, Դեմետրիոս Թեսաղոնիկեցիին,
Պրոկավիոս վկային, Եվստաթեոսին և նրա մանուկներին,
Եստռատիոսին և նրա ընկերներին, երեք վկաներին, որ քո
օրինակի նման փրկեցին այրիի դստերը, այրիի՝ կենդանվույն
գերեզման դրված դստերը, Ակնդինոսին, Պեգասիոսին և նրա
ընկերներին, Պրոբոսին, Տարագոսին և Անդրոնիկոսին և բո-
լոր սուրբ ու արի նահատակներին՝ ինքնակալ թագավորնե-
րի [իշխանության] հաստատության համար խաղաղություն
պարգևել աշխարհին և հաղթություն ընդդեմ թշնամիների.
բարեխոսությամբ ամենասրբուհի և միշտ կույս Մարիամի,
որպեսզի փառավորենք ամենասուրբ Աստծուն, Հոր և Սուրբ
Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Այս սքանչելիքի գործը կատարվեց Հունաց կայսր Փո-
կաս Տյուրանոսի ժամանակ: Եվ Հունարենից հայերեն թարգ-
մանեց Մեծ Հայքի սուրբ քահանայապետ Գրիգորիոս Վկա-
յասերը, որին և պսակակից անի Քրիստոսը սուրբ վկային և
բոլոր սրբերի աղոթքով, և ինքը լինի օրհնյալ. հավիտյանս
ամեն:

ՍՈՒՐԲ ԳՈՒՐԻԱՍԻ ԵՎ ՍԱՄՈՆԱՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իկոզետիանոս թագավորի ժամանակ Գուրիաս անունով մի մարդ Սարկիդիմիա կոչվող գյուղից, Աստծու երկյուղած և ամեն առաքինությամբ զարդարված, ուներ իր բարեպաշտությանը համաշունչ մեկին նույն գյուղից, որի անունն էր Սամոնաս: Նրանք ամեն ինչով վարժ ու հմուտ էին Աստծու պատվիրաններին և հանապազ, առանց դադարելու սերմանում էին կյանքի Բանը, Քրիստոսի հավատացյալներին զգուշացնելով կուռքերի մոլորությունից՝ չվախենալ և չերկնչել մահից և բռնավորների սպառնալիքից:

Այս լսեց բռնավորը, զինվորների մի դաս ուղարկեց՝ բերելու սուրբ վկաներին: Եվ տարան այլ բազում քրիստոնյաների հետ միասին: Եվ հրամայեց բանտ նետել և պահել զգուշությամբ, մինչև որ հանգամանորեն քննի նրանց: Այդ օրերից հետո թագավորը հրամայեց արձակել բոլորին իրենց տեղերն ու գյուղերը, իսկ սուրբ Գուրիասին և Սամոնասին չարձակեցին, այլ միայն նրանց պահեցին բանտում: Եվ նրանք շատ ուրախ եղան, լսելով շատերի մասին, որոնք այն օրերին վկայեցին ի Քրիստոս:

Այնժամ դատավորը նստեց Եդեսիա քաղաքում, հրամայեց սրբերին առաջ բերել և ասաց. «Իմացե՛ք, որ դուք պարտավոր եք անսալ ինքնակալի քաջ արանց հրամաններին և աստվածներին զոհ մատուցել և շարժվել հելլենացոց կարգով ու կրոնով՝ ինչպես մենք, հեռանալ սնոտի պաշտամունքից և փրկվել առաջիկա տանջանքներից, որ կրելու եք»: Սրբերն ասացին. «Այն, որ քո խավարյալ մտքին ունայնություն է թվում՝ ճշմարտության լույսն է, որ չես կարող նայել և նկատել, մեզ այն կյանքն է հավիտենական և կենդանություն տվող: Տանջանքներից, որ սպառնում ես, չենք երկնչում: Իսկ քեզ լսել բնավ չենք կամենում»:

Դատավորն ասում է. «Լիովին գիտեք ինքնակալի հրամանը, որ ասում է ձեզ՝ քրիստոնյաներիդ, կա՛մ զոհ մատուցել, կամ՝ մեռնել: Արդ, տանջանքից առաջ փութացեք կատարել ձեզ հրամայվածը»: Սրբերը պատասխանեցին. «Մենք ապականացու թագավորի հրամանները չենք կատարում, մանավանդ որ [նա] տարրերը աստված է համարում: Այլ շտապում ենք պահել անմահ Թագավորի պատվիրանները, որ ասում է. «Ո՛վ ուրանա ինձ մարդկանց առջև՝ ուրանալու եմ և Ես նրան իմ Հոր առջև, որ երկնքում է» (Մատթ. Ժ. 33, Ղուկ. ԺԲ. 9 (հրեշտակները): Իշխանն ասաց. «Եվ հիմա չեք ուզում կատարել մեր թագավորների կամքը»: Սրբերն ասացին՝ Ո՛չ: Իշխանն ասաց. «Ձեր համառության համար բազում տանջանքներ եմ պատրաստում ձեզ»: Սրբերն ասացին. «Թեկուզ տանջանքի մեջ մեռնենք առժամանակյա մահով, կհասնենք անստվեր Լույսին, հավիտենական և անվախճան կյանքին, որ խոստացավ Աստված իր սիրելիներին»:

Այնժամ բարկացած դատավորը հրամայեց նրանց բանտ նետել: Օրեր անց դարձյալ բերելով նրանց ասաց. «Իմ բազում ներողությունն ու երկայնամտությունը ձեզ հավանության չհանգեցրին, այսուհետև ձեզ վրա կտեղամ նեղություններ, կմատնեմ չարչարանքի ու տանջանքի, ինչպես արժանի եք, քերելով ձեր կողերը և մարմիններդ կիզելով հրով, ձեռքերդ կապելով և զանազան կարգի տանջանքներ տեղալով ձեր գլխին»: Սրբերն ասում են. «Գրված է՝ «Մի՛ վախեցեք նրանցից, որ սպանում են մարմինը, իսկ հոգին չեն կարող սպանել» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 4-6): Արդ, չենք հավանելու ձեր խավարասեր կրոնին և մատնվելու տանջանքի անշեջ հրին, այլ մենք պետք է չարչարվենք՝ ինչպես մեր Տերը չարչարվեց մեզ համար, որպեսզի հաղորդակից լինենք Նրա փառքին»: Դատավորն ասաց. «Մի՛ շաղակրատեք, զոհեցեք և կգնաք ձեր տները»: Սրբերն ասացին. «Մենք ունենք տուն՝ անձեռագործ տաճար երկնքում, որ դու չես տեսնում»: Իսկ դատավորը, երբ տեսավ նրանց անխախտ հավատը, ասաց դահիճներին. «Կախեցեք դրանց մի ձեռքից և նրանց ոտքերից կախեցեք ծանր ու մեծամեծ քարեր»: Այդպես կախված էին օրվա երրորդ ժամից մինչև ութերորդ ժամը, և նրանց բերանից աղաչանքի խոսք չլսվեց, այլ այնպես էին համբերում, կարծես օտար մարմնով կրեցին տանջանքի ցավը: Դատավորն ասաց մեկին. «Մոտեցիր այդ թշվառականներին և հարցրու, թե արդյոք հավանեցին կատարելու ինքնակալի կամքը, թե ոչ»: Իսկ ամենագով սուրբը վկաները չկարողացան խոսքով պատասխանել, այլ ձեռքի նշանով ցույց էին տալիս, որ չեն հավանել: Ապա հրամայեց իջեցնել և դնել խավարչտին բանտ և նրանց ոտքերը պնդել կոճղով: Եվ երեք օր հետո դարձյալ հարցրեց նրանց աստվածներին զոհ մատուցելու մասին, և մերժեցին: Ապա օգոստոս ամսից մինչև նոյեմբեր նրանց թողին այդպես: Ապա հրամայեց առաջ բերել և ասաց. «Այսուհետև կլսե՛ք մեր թագավորներին»: Սրբերն ասացին. «Ինչպես անփոփոխելի է մեր միտքը, նույնպես անփոփոխելի և անշարժ է մեր խոստովանության հավատքը առ Քրիստոս»:

Եվ հրամայեց կախել նրանց աջ ոտքից, իսկ ձախ ոտքից կախել ծանր կապար և այդպիսի դժնդակ տանջանքի մեջ թողնել հինգ օր, հետո հրամայեց հարցնել՝ կուզենա՞ն զոհ մատուցել: Իսկ վկաները չպատասխանեցին, բայց միայն կախաղանի վրա սկսեցին աղոթել այսպես. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, ճշմարտության Աստված և ողորմության Տեր, զորացրու մեզ, ինչպես զորացրիր երեք մանուկներին Բաբելոնի հնոցի մեջ, մեզ զորություն տուր, Տեր, դիմադրելու չարին, որ եկել-հասել, պաշարում է մեզ, որպեսզի չչիջի մեր բարեպաշտության ճրագը, մեզ չհաղթահարեն տեսակ-տեսակ տանջանքները, որ սաստկացած կուտակվել են մեզ վրա: Նայի՛ր, ամենակալ Տեր, և փրկիր մեզ և արժանի արա մեռնելու քո սուրբ անվան համար»:

Եվ բռնավորը հրամայեց իջեցնել նրանց կախաղանից: Եվ ուժ չունեին գնալու, քանի որ մեռելի էին նման: Եվ հրամայեց ուսերի վրա առնել և տանել բանտ: Եվ տասնհինգերորդ ամսին՝ առավոտյան [դատավորը] ելնելով հրապարակ՝

նստեց բեմի վրա և հրամայեց առաջ բերել սրբերին: Սպասավորները ուսամբարձ բերին սրբերին նրա առջև: Դարձյալ դատավորն ասաց. «Լսեցե՛ք ինձ, որ զոհ մատուցեք աստվածներին և մի՛ զրկվեք այս արեգակի քաղցր լույսից, որպեսզի չարագործների մահով չմեռնեք: Կարձակվեք կապանքներից և կգնաք ձեր տները: Այդ ամենի հետ պարգևներ կստանաք արքունիքից: Դա կլինի՝ եթե կատարեք ձեզ հրամայվածը, իսկ եթե ընդդիմանաք թագավորի հրամանին, այլևս չեք տեսնի արեգակի՝ բոլորի թագավորի լույսը»: Սրբերն ասացին. «Երբ Աստված արարեց նախաստեղծ Ադամին ու նրա բոլոր ծնունդներին, արեգակն ստեղծելով՝ նրանց ծառայության տվեց, որ արևելքից մինչև արևմուտք գնալով մեզ ծառայակից է. արդ, ինչպես եք նրան թագավոր անվանում: Սակայն ինչ կարիք կա քննության, քանի որ պատրաստ ենք մեռնելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվան համար»:

Իշխանն ասաց. «Եթե կամենաք, դեռևս կշահեք թագավորի կամքը և բազում փառքի կարժանանաք»: Սրբերն ասացին. «Մեր մարմինները տանջելուց առաջ իսկ, երբ ժամանակն է մեր մշակության վարձքը ստանալու երանության մեջ՝ ուզում ես մեզ մոլորեցնել, ով աստվածամարտ»: Բռնավորն ասաց. «Մոտեցել է այսուհետև ձեր մահվան վճռի ժամանակը»: Այս լսելով՝ սրբերը գոհացան Աստծուց, իսկ դատավորը, երբ տեսավ նրանց հաստատուն միտքը և մահվան հոժարությունը, զարմացավ, ձեռքն աչքերի վրա դրած երկար ժամանակ լուռ էր: Եվ այսպես ասաց. «Երդվում եմ անմահ աստվածների փառքով, որ ես չէի ուզում ձեզ չարչարել, բայց դուք ձեր ապրելը չկամեցաք: Ես թագավորի հրամանը ոտնահարել չեմ կարող»: Եվ դահիճներին հրամայեց գիշերով հանել նրանց քաղաքից [դուրս] մի տեղ և այնտեղ գլխատել: Երբ տանում էին՝ սրբերը ցնծությամբ էին գնում, և երբ տեղ հասան՝ դարձան դեպի արևելք, ծունր իջան և տարածելով ձեռքերը՝ արտասուքով ասացին. «Տեր Աստված ամենակալ, Հիսուս Քրիստոս, Աստված ճշմարիտ, որ հանուն մեզ մահ ճաշակեցիր, ընդունիր մեր հոգիները Քո աստվածության անուշահոտության մեջ և մեր ոսկորները պահիր Քո ամրածածուկ աջով, և եթե մեկը նեղվել է վշտերից ու նեղությունից կամ չար դևերից՝ մեզանով աղաչում եմ Քեզ, լսիր Քո երկնքի սրբությունից և ազատիր վտանգներից»: Ավարտելով աղոթքը, խոնարհեցին իրենց գլուխները, և դահիճը հանելով սուրը կտրեց սրբերի պարանոցները: Այսպես վկայեցին սրբերը նոյեմբեր ամսի տասնիններին: Եվ առավոտյան հավատացյալները Սամոնասի դուստրերի հետ, անուշ յուղերով ու խունկով պատեցին Քրիստոսի սուրբ վկաներին և տապան դրին ի փառս և ի պատիվ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվան, որին փառք, հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածահաճո և մեծ Գրիգորիոս վարդապետը երկրորդ Կապադովկիո երկրից է, Անձիանձ քաղաքից, Անձիանձի Գրիգոր եպիսկոպոսի որդին: Եվ նրա պատմությունն այսպես է: Քանի որ նրա մայրը արու զավակ չուներ, գիշեր ու զօր արտասուքով խնդրում էր Աստծուց իրեն արու զավակ տալ: Եվ երազում տեսնում էր պատկերը որդու, որ ծնելու էր: Եվ երբ մանուկը եղավ՝ մայրը նվիրեց Աստծուն: Եվ մանուկն աճեց և շատ ուսումնասեր եղավ: Գնաց Կեսարիա ուսանելու, այնտեղից՝ Պաղեստին, ապա Աղեքսանդրիա, իսկ այնտեղից գնաց իմաստության մայրը՝ Աթենք: Եղավ որ Բասիլիոսը ևս գնաց Աթենք: Եվ բնակվեցին միասին, լինելով հասակակիցներ: Եվ սովորեցին արտաքին իմաստության ամեն հանճար: Սովորեցին պատվիրանների Աստվածաշունչ գիրքը և համբերող եղան ճգնության մեջ, որ երկրի բնակիչների համար եղան զարմանալի ու սքանչելի: Եվ Բասիլիոսը գնաց իր տունը, իսկ Գրիգորիոսը մնաց Աթենքում, և նրան ստիպեցին այն քաղաքի աթոռակալ լինել, բայց հանձն չառավ:

Երբ երեսուն տարեկան դարձավ՝ գնաց իր գավառը և մկրտվեց և ուխտեց իր համար, որ ամենևին չերդվի, միայնակ լինել և առավոտից երեկո ընթերցել Աստվածաշունչ գիրքը: Եվ Քրիստոսին հայտնապես տեսավ երազով, ապա իր հորից ձեռնադրվեց քահանա և գնաց Բասիլիոսի մոտ, և միասին ճառեր իմաստասիրեցին: Եվ եղավ, որ իր եղբայր Կեսարիոսը վախճանվեց, և իր հայրը գրեց, որ գնա նրա մոտ, քանի որ շատ էր ծերացել հայրը, իննսուն տարեկան էր դարձել: Գրիգորիոսը վերադարձավ հոր մոտ և եղավ եկեղեցու հոգացող:

Իսկ Բասիլիոսը նստեց Կեսարիայի եպիսկոպոսության աթոռին և Գրիգորիոս Աստվածաբանին ձեռնադրեց Սաղեմի եպիսկոպոս: Բայց նա տեղի խառնակության, անխաղաղ ժո-

ղովրդի գզվռտուքի պատճառով չուզեց բնակվել Սաղիմում: Գնաց իր տունը: Ապա իր հայրն ու Բասիլիոսն ստիպեցին նրան և բազմեցրին Անձիանձի եպիսկոպոսության աթոռին: Եվ երբ թագավորեց Հուլիանոս Ուրացողը, հրամայեց, որ քրիստոնյաների որդիները չսովորեն արտաքին գրքերի հանճարն ու փիլիսոփայությունը: Այն ժամանակ Գրիգոր Աստվածաբանը գրեց Հուլիանոսին հանդիմանության ճառեր, [ասելով]՝ «Անպետք բարբաջումն են արտաքին ուսումները, առասպել և խոտան, որոնք պետք չէ, որ սովորեն քրիստոնյաները»: Գրեց և այլ գրքեր քերական, պես-պես իմաստնեռով զանազանված, որ շատ օգտակար են բարեպաշտության: Որովհետև աստվածաբանությունը Եռակի Անձնավորության ստույգ դավանության մասին է, մի բնության և առաքինության գովության, և հոգու և մարմնի սրբության, խրատ հոգու և մտքի՝ աղոթելու առ Աստված, և փախուստ ամեն պակչոտությունից ու անմտություններից, բազմաստվածյան առասպելների խաբեությունից: Այսպիսի իմաստությամբ վարդապետությունն էր հաստատում քրիստոնյա մանուկների ուսման համար: Եվ Հուլիանոսը տեսավ Գրիգորիոսի արածը, կարդաց պատճենները Գրիգորի և ամաչեց, և դարձյալ թույլ տվեց քրիստոնյաներին սովորել արտաքին ստույգ հանճարները, քանի որ շատ ավելի վեհ էր Գրիգորի հանճարագիտությունը, քան Պղատոնինը, Հոմերոսինն ու Արիստոտելինը: Եվ իր հայր Գրիգորի և մայր Նունեի, եղբայր Կեսարիոսի և քույր Գորգոնիայի մահից հետո նրանց [հիշատակը] պատվեց ներբողական ճառերով, իսկ ապա գնաց Սելևկիա՝ սուրբ Թեկղե վկայի կուսանաց վանքը և բազում օրեր լռությամբ մնաց այնտեղ:

Եվ երբ վերադարձավ Անձիանձ՝ չկամեցավ եպիսկոպոսարանում մնալ ու հոգ տանել, այլ խնամում էր աղքատներին, գործակցելով մեծ Բասիլիոս եպիսկոպոսին: Կառուցեց տաճարներ աղքատների հանգստի համար և ճառեր գրեց աղքատասիրության մասին: Եվ այն օրերին բազմանում էր արիանոս[ական]ների բռնությունը: [Գրիգորիոսը] սուրբ Բասիլիոսի հրամանով գնաց Կոստանդնուպոլիս, իջևանեց Անաստասի մատուռում և ընդդիմանում էր հոգեմարտ հերձվածողներին ու այլ հերետիկոսների: Նրանց համախոհ և օգնական էր Եվիդոս թագավորը, որ գահ բարձրացավ Հուլիանոսից հետո: Եվ Գրիգորն իր վարդապետությամբ աստվածաբանելով՝ ժողովրդին ուսուցանում էր ուղղափառ հավատը, արմատախիլ էր անում հերձվածողների նոր բարբաջանքները: Իսկ ասորի անիմաստ Ապողինարը այն նոր ու դառն հերձվածը մեջ բերեց, թե՝ «Քրիստոս Կույսից ստացավ իմանալի հոգի»- և այլ հայհոյական խոսքերով շատերին խաբեց և հանեց սուրբ Գրիգոր Աստվածաբանի դեմ, և քարկոծում էին նրան:

Պետրոս Հայրապետը սուրբ Աթանասից հետո նստեց Աղեքսանդրիայի աթոռին: Նրա մոտ հավաքվեցին բոլոր ուղղափառները և Աստծու հաճությամբ ընտրություն արեցին և Աստվածաբան Գրիգորին նստեցրին Կոստանդնուպոլսի աթոռին՝ Թեոդոս Մեծ թագավորի հրամանով, և ուղղափառությամբ վարեց տասներկու տարի: Եվ մի աղեքսանդրիացի իմաստասեր, որի անունը Մաքսիմոս էր, ճգնավորի կերպ առած, կեղծավորությամբ մոտեցավ Աստվածաբան Գրիգորիոսին և նրան ընկերակից եղավ մի սենյակի ու սեղանի, և ձգտեց Կոստանդնուպոլսի աթոռին: Եկեղեցում իրեն օգնական մի երեց գտավ, և իրենց մտքին ու կամքին դարձրին Աղեքսանդրիայի հայրապետ Պետրոսին, որ այն ժամանակ Գրիգորիոսին նստեցրեց աթոռին. նրան խոստացան բազում գանձեր: Եվ նա ուղարկեց մետրոպոլիտներ ու եպիսկոպոսներ, որ իջեցնեն աթոռից Գրիգորիոսին և ձեռնադրեն Մաքսիմոսին: Եվ [նրանք] գնալով չտապեցին կատարել գործը, բայց մեծ խռովություն և աղմուկ եղավ քաղաքում՝ սիրելիների ու թշնամիների միջև: Եվ Մաքսիմոսին հանեցին եկեղեցուց, և աղեքսանդրիացիք Մաքսիմոսին տարան մի փողհարի տունը և նրան այնտեղ ձեռնադրեցին, գնացին Թեսաղոնիկե, Թեոդոս թագավորի մոտ և աղաչեցին նրան, որ Կոստանդնուպոլսի աթոռը տա Մաքսիմոսին: Իսկ նա լսեց բարկությամբ, վտարեց նրանց, տրտում ու ամոթահար վերադարձան Աղեք-

սանդրիա: Եվ սուրբ Գրիգորիոսը մտածեց թողնել աթոռը և գնալ իր տունը, բայց ժողովուրդն արգելում էր՝ թույլ չտալով գնալ: Եվ թագավորը Թեսաղոնիկեից եկավ, ազատեց եկեղեցիները հերձվածողներից և Գրիգորիոսին վերցնելով գնաց եկեղեցի: Եվ ամպ անցավ արեգակի ներքևով, և օրը գիշերի նմանվեց: Եվ հերձվածողներն սկսեցին խնդալ ու խայտալ, թե Աստված չհաճեցավ արտաքսել մեզ եկեղեցուց: Երբ թագավորն ու Աստվածաբանը խորան մտան, ամպը ցրվեց և պայծառ լույս ծագեց, և հերձվածողները ամոթահար եղան: Եվ Գրիգորիոսին աթոռին նստեցրին Անտիոքի Մելիտոս պատրիարքը և հարյուր հիսուն եպիսկոպոսները, որ հավաքվեցին Երկրորդ սինհոդոսին, հետո եկան նաև Եգիպտոսի եպիսկոպոսները և Աղեքսանդրիայի պատրիարքը՝ դժկամությամբ, թե՝ «Առանց մեր կամքի աթոռին նստեցրիք Գրիգորիոսին»: Եվ սինհոդոսի հարյուր հիսուն եպիսկոպոսի միջև խռովություն եղավ. ոչ թե ատում էին Գրիգորիոսին կամ անարժան համարում, այլ մեղադրում էին, թե՝ «Ինչու չսպասեցիք մեր գալստյան»: Գրիգորիոսն ասում է նրանց.

– Եթե իմ պատճառով է այդ խռովությունը, ես լավ չեմ քան Հովնանը. ինձ ծովը նետեցեք, և կդադարի ձեր միջի մրրիկը:

Եվ հրաժեշտ տվեց թագավորին և գրեց ներբողական ճառեր ժողովի հարյուր հիսուն եպիսկոպոսներին, հրաժեշտ տալով նրանց, գնաց իր երկիրը՝ Կապադովկիա, իջավ մի գյուղում, որ կոչվում էր Արուանզոն: Եվ ժողովը Կոստանդնուպոլսի աթոռին ձեռնադրեց Նեքտառիոս Տարսոնացուն:

Երբ սուրբ Բասիլիոսը բարի մահվամբ ննջելու էր, Գրիգոր Աստվածաբանը գնաց Կեսարիա, նրա մոտ և նրա թաղմանը ներբողյան ճառ գրեց ու վերադարձավ իր գավառը, Արուանզոն:

Այս երանելի Աստվածաբան Գրիգորիոս վարդապետը տասներկու տարի մնաց Բիզանդիա, մաքրեց քաղաքը բոլոր հերձվածողներից, և Արիոսի, Ապողինարի ու Նավատիոսի մոլորությունից: Եվ Անձիանձի եպիսկոպոսության աթոռին

նստեցրեց Եվլալիոսին՝ այր կատարյալ առաքինությամբ, որ և սրբին սպասավորում էր արժանապես, որովհետև [վերջինս] մարմնով շատ տկարացած էր: Սրանից հետո նաև ինքը գնաց ընդդեմ արիանոս[ական]ների ու այլ հերձվածողների: Եվ դառնալով լռեց, վարելով ըստ ամենայնի խաղաղ կյանք՝ մեկ տարի միայն աղոթքի հոգ տանելով: Ապա գրեց և այլ թղթեր, բազում նյութեր տալով ինձ՝ առաջադրված իմաստները կազմավորելու:

Արդ, այսպես բարձր և երկնքին արժանի իմաստությամբ և ուղիղ դավանությամբ ապրեց երանելին այս աշխարհում. շատ-շատերին լուսավորեց Սուրբ Հոգու վարդապետությամբ, որ ավանդվեց իրեն: Սրանից հետո փոխադրվեց այստեղից հանդերձյալ [աշխարհ], անցավորից՝ մշտնջենականը, ստվերից ճշմարտին, և փառավորված պսակվեց բոլոր սրբերի հետ: Այն մեծ և հիշարժան Գրիգորիոսը ավարտեց իր կյանքը ի փառս Քրիստոսի, որ օրը քսանհինգն էր հունվար ամսի: Եվ ես ըստ իմ կարողության շարադրեցի նրա վարքը, թեև ոչ ամբողջը, այլ այնչափ իմ փափագը կատարեցի, որչափ վայել է բարեմիտ որդիներին՝ գթասեր հոր խանդաղատանքը փոխանորդաբար հատուցել ըստ մեծության: Որպեսզի և մենք արժանի լինենք նրա միջոցով հարազվարճ բերկրանքով փառավորել անսկիզբ Հորը և Նրանից անսկզբնաբար ծնված Որդուն, և անսկզբնակից բխումը Նրանց էությունից՝ համագոյակից Սուրբ Հոգին՝ երեք անձինք կատարյալ անբաժանելի, և մի բնություն անշփոթաբար զուգակցված, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԱՅԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ո՛վ եղբայրներ, այսօր աստվածաբանությամբ ճոխացած մեծն Գրիգորիոս մեզ հրավիրեց հոգևոր ուրախության՝ իր ճգնավոր բարեպաշտության իմաստների հանդեսին, և մեր առջև սեղանավորեց իր առաքինության աննյութ և անուշահամ խորտիկները, հաճույք պատճառելու մեզ այն կերակրով, որ վեր է բարձրացած բոլոր առաքինություններից: Եվ դուք մի՛ զարմացեք մեր այսքան համարձակությանը, որ խիզախում ենք մեզնից բարձր բաների: Որովհետև այնքան եմ փափագում նրա առաքինություններին, որ մոռանում եմ իմ տկարությունը, բայցև վստահելով Քրիստոսին՝ ճշմարիտ լույսով, որ օժանդակի իմ տկարությանը՝ գիտությունների մեծագոր իմաստների հույսով պատմել կարենամ նրա անմատչելի առաքինությունների մասին: Նաև դրա համար մինչև օրս պատշաճ համարեցի լռության տալ պատմելու մեր այս ցանկությունը, որովհետև չտեսա մեկին, որ կարգ և հետևումն անի պատմելու նրա առաքինի վարքը, որպես ուղղություն հետո եկողների: Ինչպեսև նա ինքը պատմեց Բասիլիոսի և այլ եպիսկոպոսների ու վկաների մասին, որոնք նահատակվեցին Հանուն Քրիստոսի: Եվ արդ, ինչպես վերն ասացի, չգտնվեց սա ձեռնարկող, մենք պետք է պարտքը հատուցենք նրա, մանավանդ որ չի կարելի այնպիսի այրի այնքան առաքինությունը մոռացության տալ...

Ե՛կ այսուհետև հատուցենք հապաղելու դիմաց, մեր խոսքի նորահունձ առաջին արմտիքի պտղով պսակենք Աստվածաբանին: Թեկուզ ոչ ըստ նրա արժանիքի, բայց մեր հոժարամտությունն ու ջանքը չպակասեցնենք: Գիտեմ, որ ամեն ինչով մեծախորհուրդ է այրը և կների մեզ մեր տկարությունը, քանի որ գթած հայրը իր զավակի անարվեստ մտքից ու անարվեստ լեզվից ելած թոթովանքը գվարճությամբ է

ընկալում: Այդպեսև այս երանելին կարծեմ ընտանեգույն կհամարի մեր ասածները, կուրախանա մեզնով: Քանի որ երբ կենդանի էր, այսպես գրկած հոգևոր սիրով էր գրում մեզ, ինչո՞ւ ոչ [հիմա], որ փոխադրվել է մաքուր Լույսի մոտ, բարձրագույն կյանքի: Բայցև ձեզնից խնդրում եմ, ով սուրբ ժողովուրդ, մի՛ պահանջեք նրա ուղղությունների ճշգրիտ իմաստները: Նախ, իմաստից, որ նվազ եմ զորությամբ նրա համեմատ, և ապա, ոչ ոք նրա մասին գրավոր բան չթողեց մեզ, այլ իբրև հասկ հավաքելու ենք նրա խոսքերի պարարտ անդաստանից, ինչ որ նրա մասին կա: Եվ նմանվենք իմաստուն ճարտարապետի, որ մանր քարերը մեծամեծների մոտ ժողովելով շարում է որմի մեջ և դրանով հարմարեցրած կազմում է թագավորի կատարյալ տուն: Եվ այժմ սկսենք՝ որտեղից վայելչապես արժան է սկսել:

Հայրենիքով սա Երկրորդ Կապադովկիա գավառից էր, ծնված Անձիանձու քաղաքում, և նրա բազմազարդության շնորհիվ քաղաքը երևելի եղավ: Որովհետև մակեդոնացոց աշխարհը այնքան անվանի չեղավ Աղեքսանդրի տիրակալությունից, և կամ Պարսկաստանը Կյուրոս թագավորի միջոցով, որքան փառքով ծաղկած զարդարվեց Անձիանձու քաղաքը Գրիգորի միջոցով: Բայց ինձ թվում է՝ սա այլ պատճառ չունի, քան նրա առաքինությունից [քաղաքի] ստացած սննդի դայակությունը: Հայրե՛ր, լսեցե՛ք և կպատկառե՛ք, ընկալելով բարի հոր պատմությունը, որ ոչ միայն մարմնի, այլև հոգու հայրեր լինեք: Նաև նրա հայրը, Աբրահամի նման, հնազանդվելով Աստծու կամքին, թողեց իր աշխարհն ու գավառը, գահագլուխ մեծություններն ու բազմաստվածության մոլորությունը՝ փոխադրվեց աստվածպաշտության և Աստծու շնորհների հարազատ աշակերտ դարձավ: Որ նախ իբրև սուրբ ոչխար խառնվեց Քրիստոսի հոտին, ապա և Սուրբ Հոգու շնորհով հաստատվեց հանճարեղ հովիվ Անձիանձի եկեղեցու: Իսկ նրա մայրը սուրբ էր և սուրբ նախնիներից, այլ առաքինություններով հանդերձ, բարի արմատներից բարեպաշտությամբ պտղաբերեց բարի շառավիղը, քանի

որ տենչում էր արու զավակ ունենալ և դրա համար մաղթանք էր մատուցում այնքան մեծ բարիքներ տվող Աստծուն և հասնում բաղձանքին:

Ո՜վ հավատի մեծություն, ո՜վ սիրո ջերմություն. հղանալուց առաջ խոստանում էր Տվողին մատուցել ինչպես Աննան Սամուելին: Եվ ի՞նչ հետո, Նա, որ կատարում է Իր երկյուղածների կամքը՝ լսեց նրա աղոթքը, և գիշերային տեսիլքով նրան ցույց տվեց լինելիք մանուկը, այլև տեսքն ու անունը և առաքինությունները, որոնց նվիրվեց:

Այս ամենը ցույց տվեց նրան Բարձրյալը նախ քան ծնունդը: Ապա ծնվեց և բարեսնունդ աճեց, բարեպաշտության ժառանգորդ լինելու բարի ծնողներին, զորանում էր իր հասակակիցներից ավելի՝ քրիստոնյաների բարեպաշտության կարգով: Նրան անկատար հասակը չէր խանգարում կատարյալ ուսումից և բարքից, ինչպես որ պատանիներն են պարապում: Այս ամենը արհամարհում էր իբրև անօգուտ, ձգտում ավելի լավին, և նրա փույթն ու հոժարությունն այս էր՝ ստանալ առաքինություններ և զգուշանալ չարիքից, քանի որ անուշ յուղը մթագնում է, երբ դրվում է գարշահոտության մոտ:

Իսկ երբ պատանյակն աճեց, մինչև որ կարող էր այնուհետև մտնել արտաքին իմաստից դպրոց, գնաց Կեսարիա, և այնտեղ քաջալերություն գտավ ուսումնակիցներից, և ոչ սակավ մանուկներ հավաքելով՝ նավարկեց Պաղեստին, քանի որ մեծ էր բաղձանքը հռետորական իմաստների: Այնտեղից գնաց Եգիպտոս, Աղեքսանդրիա և այլ քաղաքներ: Իր մեջ հավաքեց բազում մարդկանց իմաստությունը՝ ըստ սողոմոնյան իմաստության խրատի: Այն ժամանակ եգիպտացիների շատ օգտակար գիտելիքներ հավաքելուց հետո մտածեց գնալ Աթենք: Որովհետև իր մորից այսպիսի հրաման և պատվեր ուներ: Եգիպտական նավ նստելով՝ գնաց Պարթենիոն, ոչ նավարկելի ժամանակ: Այնժամ հանկարծակի սաստիկ հողմ բարձրացավ ու խռովեց ծովը, և թանձրամած խավարն ելավ ու ծածկեց ծովը, ինչպես եգիպտացոց խավարը՝ Մովսեսի

օրերին: Ոչ քիչ վտանգ բռնեց բոլորին, որ նավի մեջ էին: Բայց նա ոչ այնքան մարմնի, որքան հոգու վտանգ էր տեսնում: Որովհետև բոլորը մարմնի մահն էին կոծում, իսկ նա հոգու, քանի որ կյանքի և փրկության ջրով դեռ մկրտված չէր, որ հասավ իրեն մահու և կորստի ջուրը: Արդյոք ի՞նչ էր անում այն մեծը, որ նախքան վերստին ծնվելը զարդարված էր առաքինությամբ: Ելավ, հանեց իր վրայից զգեստը և ուժգին գոչմամբ աղաղակի ձայն հանեց երկինք և այնքան դառնացած հոգով արտասուք էր հեղում, հիացնելով բոլորին, որ նավի մեջ էին, այնպես որ իրենց անձի համար լռածները նրա ողբով էին հետաքրքրվում: Իսկ նա բոլոր մեծություններն իր մեջ ամփոփած՝ Նրան էր կանչում օգնության, որ միակն է սքանչելիք գործելու կարողությամբ... [Նա], որ Կարմիր ծովը կիսեց իր ժողովրդի համար և նույնը ստաբարոյի և ընդդիմամարտի կորստի համար պատրաստեց, որ անապատում վեմն աղբյուրացրեց և ջրերի դառնությունը քաղցրացրեց, որ ձեռքերը խաչաձև տարածելով Ամաղեկին մահացրեց, և նույն խորհրդով առանց պատերազմող ձեռքերի ու գործիքի Երիքովի բարձր պարիսպը կործանեց, որ կուլ գնացած մարդարեին կետի տաք որովայնում ամբողջ պահեց առանց հալելու, նույն կերպ նրան լի ոգով նավակ կազմեց և ուղարկեց հեթանոսներին քարոզելու:

Սրանք և սրանց նման բաներ, որ գրված են աստվածային Գրքում, ի մի էր բերում իր մաղթանքով Աստծու առջև: Նաև պայման էր դնում չուշացնել մկրտությունը՝ կորստից ազատելուց հետո, և նա ամբողջ արդյունքը ապրեցնողին էր խոստանում: Եվ ի՞նչ այնուհետև. խոնարհվեց պաղատանքին նրա՝ Այն, որ ողորմածն է և արագ հասնող սրտի խորքից Իրեն խնդրողներին: Եվ իսկույն ծովի խռովությունը փարատում է և թանձրամած խավարը անօսր ու հստակ օդի է վերածում: Իսկ նրա բարեպաշտ ծնողները այս ամեն վտանգավոր անցքերը երազով իմանալով զգուշանում են մանկան համար, և տևական աղոթքով և հորդառատ արտասուքով աղաչում էին Աստծուն օգնել այն վտանգվածին: Եվ

իսկույն պաղատանքից հետո տեսնում են գիշերվա երազով իրենց որդյակին, որ Քրիստոսի զորությամբ հաղթահարում է դևերի դառնությունը, որ նրան կործանում բերին, որ հետո ինքն իսկ պատմեց ծնողներին: Իսկ նավում եղողներից՝ մի երիտասարդ, որ խորհրդակից էր նրան, տեսնում է գիշերը, ծովի ալեկոծության սկզբին, նրա երանելի մորը, որ գալիս է ծովի վրա և բռնելով նավից հանում է ցամաք: Եվ երբ պատմեց տեսիլը՝ իսկույն ծովը հանդարտվեց: Եվ նավի մեջ եղողները գնացին ընկան Գրիգորի առաջ, հավատով խոստովանեցին նրա Աստծուն, որ օգնական է լինում իրենց: Այս սքանչելիքը ինչո՞վ է նվազ մեծն Եղիայի [սքանչելիքից]: Ինչպես նա իր աղոթքով երկնքից հուր էր իջեցնում պատարագին, որ Աստծուն մատուցում էր ընդդեմ սիդովնացիների կուռքերով մոլորվածների, որով սքանչացավ ժողովուրդը և խոստովանեց ճշմարիտ Աստծուն: Այդպեսև Գրիգորիոսը իր պաղատանքների միջոցով ծովի սաստիկ խռովությունը և թանձրամած խավարը նույն օդի ու միջօրեի փոխեց: Մինչև որ նավում եղողները, ճանաչելով ճշմարիտ Աստծուն, միայն Նրան փրկիչ և օգնական ճանաչեցին:

Իսկ ապա քանի որ նրան հույժ տագնապեցնում էր աթենացիների ուսումնասեր և բազմիմաստ համբավը և դրա համար քաջալերելով իր ուսումնակիցներին՝ հասավ այնտեղ: Նաև մի այլ անապական խնդությամբ, որ պետք է ասել, լցնում էր այնտեղ: Քանի որ մեծն Բասիլիոսը որոշ ժամանակ անց ելավ Բիզանդիայից՝ գնաց Աթենք: Եվ միմյանց տեսնելով ուրախացան, որովհետև համագավառ էին և ուսումնակից: Այնուհետև լինում են ընակակից և առաքինությունների մեջ՝ լծակիցներ, և մի կոչման հույսն ունեին և պայծառացած էին մի լույսով՝ ճշմարիտ հավատով: Իսկ գիտելիք ձեռք բերելիս, թե ինչպես միմյանցից օգնություն էին ստանում՝ հայտնապես երևում է նրանց, որ իմաստության լծակից են: Որովհետև ոչ միայն միմյանց հարցուփորձ անելով հայտնի են դառնում ծածուկ իմաստները, այլև՝ ամբանալով հաստատվում են: Արդ, սրանք իմաստուն երկրագործնե-

րի նման, որ արորաձիգ եզանն են ընկերովի աշխատեցնում, իրենց մտքի պարարտ անդաստանի քաղցր ակոսը պատռում էին, սերմանելով նրա մեջ իմաստության հմտությունը: Իսկ հակառակություններին, որ մանուկները սիրում են, խիստ համբերող էին: Եթե դռանը ուրիշների քննության հակառակություն լիներ, այդ պահին դժվարաշարժ էին լինում, իսկ բարիքի դեպքում դյուրաշարժությամբ ծագում էին բոլորի համար, այնպես անվանի էին երևում, մինչև որ գրեթե նրանց համբավը հռոմայեցոց աշխարհն էր հասել. նրանց մեծախոհ էին անվանում: Ու թեպետ այնքան բազմություններից պատիվ էին ստանում և այնքան դյուրապատիր մարդկանցով էին շրջապատված, բայց հոգու առաքինությունը հաստատուն և անշարժ էին պահում և հակառակորդներից ներքև չէին ձգվում, ինչպես որ նրանց վրա կատարվեց մարգարեական խոսքը: Այս պատճառով մենք չենք երկնչի երկրի խռովությունից, [եթե] լեռները փոխադրվեն ծովի սիրտը: Նաև ժուժկալությամբ պակաս չէին, քան մեծն Հեղիասը և երանելի Հովհաննես Մկրտիչը՝ կանանցից ծնվածներից մեծագույնը, որովհետև միայն մի մատի ծայրով էին մոտենում այս կյանքին: Իսկ մարմնի փափկությունները, որ հանդերձանքով են և կերակրով, սա բնավ ոչ մի բանով արժանավոր չէին համարում: Եվ ի՞նչ ասենք, այլ առաքինությունների հետ նաև նրանց ողջախոհությունը, որ մինչև մահ անարատ՝ նվիրվեցին Աստծուն. սրա հետ՝ նրանց անընչասիրությունը շատ զարմանալի էր, որովհետև թեպետ առաքինության համբավի բերումով նրանց բազում ինչք էին նվիրում, բայց նրանք խուսափում էին իբրև ագահությունից և հափշտակությունից, և ասում էին՝ «Իմաստությունը վարձի համար չենք ձեռք բերել, որ սա գործադրենք վաճառաշահության համար»: Իսկ սնափառությունն ու գոռոզամտությունը ամբողջապես հերքելով մերժում էին որպես իմաստության ապականիչ և բարձրագույն իմաստության խորհուրդները խափանող:

Իսկ նրանց հանճարի մասին ի՞նչ է պետք ասել, որով միաբան ու համամիտ լինելով՝ չէին դադարում գիշեր ու ցերեկ խորությամբ պեղել և գտնել իմաստության գանձերը, ինչպես ասում է երանելի Հոբը:

Որովհետև ուշադրություն դարձրեց զարդարելուն և փարթամությանը նրանց, որ կուզենան նմանն ստանալ, նաև արտաքինների իմաստությունը. ոչ թե հախուռն կերպով հավաքելով չարն ու բարին, որ անմտության է հանգեցնում, [այլ] նրանցից հավաքում և ամփոփում էին օգտակարը, որ չէր հակասում աստվածային իմաստությանը, և ամենայն ավելորդը, որ ըստ հեթանոսական ավանդության էր, փորձելով մերժում էին, որովհետև այն ամենը, որ համահունչ է սուրբ Գրքի խրատներին և ոգով քաղցր, միասին սովորեցին: Իսկ այն բաները, որ հաճոյական են, բայց դառնացնում են հոգին, մերժեցին, այսինքն՝ խորհրդավոր թվերը, երկրաչափական հավասարությունները, աստղերի դրությունը և շարժումները՝ ծննդաբանության առնչությամբ: Իբրև մի նոր Մովսես կամ Դանիել օտար աշխարհում երևացին աստվածային հոգով զարդարված, նույնիսկ նրանցից առավել: Որովհետև ոչ թե գերեվարվել էին հին պատմության նման, այլ մանավանդ համաձայն Գրքի, նրանց բոլոր մտքերը գերված էին ի հնազանդություն Քրիստոսի, քանի որ իրենց իմաստության առաջին պտուղներն էին համարում:

Իսկ այնուհետև ի՞նչ: Այժմ մեր խոսքը նրանց մասին տկար գովեստը չէ, այլ պետք է ավանդել նրանց սողոմոնյան իմաստության գովքը, որ միշտ դեգերում էին Դավթի դռանը նստած, և մենք չտապենք պատմության մյուս [դրվագներին:]

Արդ, Բասիլիոսը, իմաստության բարի գանձերն ընկալելով, իմաստուն վաճառականի նման, վաճառաշահ վերադարձավ այնտեղից: Իսկ Գրիգորիոսը Աթենքի իր մյուս ուսումնակիցների համար ուշացնում էր գնալը, որովհետև նաև թույլ չէին տալիս մեկնել, այլ մնալ այնտեղ և խրատել նրանց: Նրան շատ էին խնդրում ընդունել Աթենքի իմաստության աթոռը: Իսկ նա աղաչանքներից հարկադրված, նաև բարեկամության երախտահատույց լինելու համար մի

քիչ մնաց այնտեղ, այնուհետև անսալով ծնողների աղաչանքին՝ վերադարձավ նրանց մոտ: Երբ եկավ ծնողների մոտ՝ գրեթե երեսուն տարեկան էր: Գալով, անմիջապես ընդունեց աստվածային մկրտություն Սուրբ Հոգու լուսավորությամբ և սահմանեց իր անձին՝ չխորհել կենցաղային բաներ, որով ներքև է քաշվում ամեն ինչ: Ավելի առաջ նույնպես, նախքան լուսավորվելը, այդպես էր որոշել: Դրանից հետո հեռացավ իր քաղաքակիցներից, շտապեց անապատ, որովհետև թեպետ ցանկանում էր ծնողների կարոտին հագուրդ տալ, լսել նրանց բարեպաշտ խրատները, սակայն նկատի առնելով տան հոգսերի հետ կապված զբաղմունքները՝ չէր հավանում, և ապա կրոնավորելով, աշխարհից չուներնալով ոչինչ, տրվում էր միայն աղոթքի և սուրբ Գրքի ընթերցման: Եվ սա՝ մշտապես հսկելով. սրբեց իր սրտի խորհուրդը, բազում անգամ տեսնում էր Քրիստոսին, խոսում Նրա հետ գիշերվա երազով, երանություն էր զգում ըստ ձայնի. «Երանելի են նրանք, որ սուրբ են սրտով, որովհետև նրանք կտեսնեն Աստծուն» (Մատթ. Ե. 8): Այսպիսին էր մեծն Գրիգորիոս. թողնելով քաղաքների փողոցները, իմաստունների հպարտությունը, իշխանների խստությունը, դատապարտյալների հակառակությունը, գողերի դավաճանությունները, սուտ հրապարակները, հարուստների ագահությունը, վաճառողների երդումները, փարթամների գոռոզությունը, կարոտյալների տառապանքը, զեխացածների հարբեցողությունը, նաև մարդկային կարծեցյալ փառքերը, որ մարդկանց կաշկանդելով ետ են պահում երկնային ճանապարհից, պղտորում, մթնեցնում են մտքերը և թույլ չեն տալիս ընդունել մաքուր Լույսը: Այս ամենը ոչ թե կրոնավորության սկզբից, այլ մանկությունից իսկ մերժում էր Գրիգորիոսը:

Իսկ երբ նրա հայրն ստիպելով նրան քահանա էր ձեռնադրում, տես, թե ինչ արեց. այնժամ թողեց եկեղեցին, փախավ Պոնտոս, իր ուսումնակից Բարսեղ Մեծի մոտ, որովհետև վայել չէր այս երկու լուսավորներին միմյանցից բաժանված լինել մարմնով, երբ հոգով և իմաստությամբ բաժան չէին:

Ապա կիրառելով առաքինության վարքը՝ մեկ հոգով և մեկ դավանությամբ կրոնական հանդեսով ստանձնում էին ճգնավորական վարք. նրանց պարագային կատարվում էր տերունական խոսքը, թե՝ «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված են Իմ անունով՝ այնտեղ եմ Ես նրանց մեջ» (Մատթ. ԺԸ. 20): Նաև ի՞նչ ասեմ այս երանելի այրերի մասին, որոնք Մովսեսի նման առաքինությամբ բարձրանալով Սուրբ Հոգու ամպով ամրապես ծածկվեցին ամեն տեսակ աշխարհական խռովքներից և ստացան Սուրբ Հոգու վարդապետությունը և նրանից օրինադրվեցին:

Այդ ժամանակ վախճանվեց Գրիգորի Կեսարիոս եղբայրը, որ թագավորներից ուներ հանրային իշխանություն՝ գանձատան վրա: Իսկ նրա հայրը ծերացած էր և իր որդի Կեսարիոսին ողբալով շատ էր թախծել, չէր դիմանում միայնությանը, նաև հանգուցյալի ունեցվածքի ժառանգորդ չկար, և բոլորը որսի վրա հարձակվող շան նման ձգտում էին հափշտակել: Այնժամ պաղատական նամակներ էր գրում, որպեսզի [Գրիգորիոսը] գա իր մոտ: Իսկ նա մեծ վնաս էր համարում հորը չհնազանդվելը, մանավանդ այնպիսի քահանայապետին ու ծերունուն, թեպետ ոչ կամովին, սակայն պատվիրանին հնազանդվելով եկավ նրա մոտ: Եվ երբ կարգավորեց եղբոր ունեցվածքին վերաբերող ամեն ինչ, հիշելով Պոնտոսի խաղաղ կյանքը՝ ուզում էր վերադառնալ այնտեղ: Ապա ծերունի հայրը շատ թախանձեց, որովհետև մոտ իննսուն տարեկան էր, մնաց այնտեղ, չնայած դժվար էր, բայց հույս ուներ մեծամեծ վարձերի պատվիրաններից, որ հորդորում են պատվել բարեպաշտ ծնողներին:

Այն ժամանակ չարի ազդմամբ ուղղափառների վրա բռնացել էր Արիոսի հերձվածը՝ Կոստանդիանոս Փոքր թագավորի միջոցով, և սուրբ քահանայապետներից շատերը թագավորական հրամանով ինչ-որ զրպարտությունների պատճառով վտարվեցին եկեղեցուց, այնուհետև մեծ նեղություն էր ուղղափառ քահանաներին ու ժողովրդին: Որովհետև աղոթատուն չունեին և ոչ իրավունք՝ անօրեն դատավորնե-

րից: Եվ գրեթե ամբողջ տիեզերքը հաղորդվեց պիղծ հերձվածին՝ թագավորի հրովարտակի համաձայն: Ամենուրեք Քրիստոսի ուղղափառ հովիվներին արտաքսելու համարձակություն տրվեց ամբարիշտ հովիվներին, որոնք այդ իրավունքն ստանալով ապականիչ գայլերի նման մասնատելով ցրում էին Քրիստոսի հոտը: Երբ սա այսպես եղավ, ոմանք սպառնալիքի երկյուղից զարհուրած ընկնում էին ուղղափառության բարձունքից, ուրիշներ ինչքով էին խաբվում, մյուսները մարմնական սիրո փաղաքշանքով, մի մասը՝ ինքնակամ, իսկ ովքեր ճշմարտության մեջ հաստատուն չէին՝ պարտավորագրով էին միանում հայհոյությանը:

Այլևս ի՞նչ ասենք ուրիշների մասին. երանելիի ծերունի հայրը ևս ընկավ սատանայի կարթին, իսկ այն դավառի կրոնավորները, չներելով նրան, ազատ էին համարում իրենց նրան հաղորդվելուց: Ժողովուրդը նույնպես հեռացավ նրանից: Այնուհետև ի՞նչ էր անում Աստծու երջանիկ մեծն Գրիգորիոս. նախ վերցրեց ճգնավորներից ոմանց, նրանց հետ պաղատում էր Ամենատիրոջը, խնդրելով չարի քայքայումը, ապա իր անձը տալիս էր լռության, որովհետև խռովք էր ցույց տալիս ծերունի հորը: Սրանից հետո խրատում էր նրան և խնդրում ճշմարտության խոստովանությամբ ազատվել անկումից, և նզովելով պիղծ հերձվածը, որ խռովության ամպրոպը ևս վերանա և խաղաղություն ու միավորում հաստատվի Աստծու եկեղեցում, ինչպես և եղավ: Քանի որ իսկույն կանգնում էր անկյալ հովիվը և ուղղափառ եկեղեցու գավթում հավաքելով միավորում էր բարեպաշտ հոտը: Այսպես իմաստուն Գրիգորիոսը լուսավոր իր վարդապետությամբ բուժում էր հիվանդացածներին, հանդարտեցնում, խաղաղեցնում էր խռովյալներին և հեռացածներին սերտորեն միավորում: Եվ դա անում էր ոչ թե միայն այն քաղաքում, այլ համարյա դավառի բոլոր մասնատված բնակիչներին, հովիվներին, հոտերը խաղաղարար խոսքերով բերում միավորում էր մեկ կաթողիկե առաքելական եկեղեցու մեջ:

Իսկ որովհետև մեր քրիստոնյաների չարիքը բազմանում էր աստվածային պատվիրանների քամահրումով ու քակտու-

մով, ուստի նա ինքը ներողամիտն Աստված թույլ էր տալիս մեզ վրա հառնելու պիղծ Հուլիանոս Պառավատոսին, որ նշանակում է հանցավոր, որովհետև անարգեց հավատքը, որ ստացել էր սուրբ նախնիներից, երանելի Կոստանդին Մեծից, և իրեն Քրիստոսի հակառակորդ էր դարձրել ու ամեն հնարքով ձգտում էր քրիստոնյաներին հեռացնել ճշմարիտ հավատից. սրանք՝ թեպետ ոչ ակնհայտ հալածանքով, սակայն ծածուկ ու խորամանկ խորհրդով էր կատարում: Ամենուրեք հրահանգում էր հելլենական ուսման դպրոցներ չընդունել քրիստոնյաներին: Իսկ Աստծու ներողամտությունը թույլ էր տալիս նրան երկու ամիս, վեց ամիս՝ թերևս զղջա, ետ կենա ամբարիշտ մտքերից: Երբ Ամենատեսը տեսավ, որ անզղջանալի է, արագորեն թեքեց բարկության սուրը՝ ինչպես արժանի էր նրա ամբարշտությանը, և նրա բարբարոսական ու գազանական կյանքից զրկեց նրան, և երանելի Գրիգորիոսը արձանագրեց ամբարշտի չարությունը: Բայց սրանք հետո. մենք վերադառնանք մեր խոսքի ընթացքին:

Արդ, երբ իմաստուն Գրիգորիոսը տեսավ, որ ամբարիշտ Հուլիանոսը քրիստոնյաների դեմ սահմանած այլ չարիքների հետ (ինչքի հափշտակում, զինվորական պատվից զրկում) իր չարությամբ օրինադրեց, որ քրիստոնյաների երեխաները չսովորեն հելլենների իմաստությունը: Տե՛ս թե ինչ արեց [Գրիգորիոսը]. գրեց աստվածաբանական ճառեր ի հանդիմանություն Հուլիանոսի և ցույց էր տալիս քրիստոնյաների ուսման համար հելլենական իմաստության անպիտանությունը: «Որովհետև- ասում է- բոլորը առասպել են, սուտ պատմություններ, բազմաստվածության մոլորություններ»: Եվ բոլորի համար օգտակարները ընդհանրապես դրեց ողջախոհների առաջ, որ իրապես արժանի են գովեստի՝ իմաստունի սքանչելի պատմություններ: Գրով ներկայացրեց քերականական նյութեր՝ զանազանված պես-պես իմաստներով, որ նաև շատ օգտակար են բարեպաշտությանը: Քանի որ աստվածաբանությունը վերաբերում է Եռյակ Անձնավորության և մի բնության ստույգ դավանությանը, առաքինության, առ

Աստված աղոթքի գովք է, նաև փախուստ բազմաստվածության պագշոտ ու զազրաբան առասպելների խաբեությունից: Այսպիսի իմաստությամբ գիտելիքներ էր հաստատում քրիստոնյա մանուկներին ուսուցանելու, զերծ մնալով նախանձոտ առասպելաբանությունից ամբարշտի, որ հրամայում էր չարամտորեն: Անօրենն ինքն իսկ զգում էր, որ իր օրենքը հանդիպել է հակառակության: Քանի որ ավելի վեհ էր նկատում Գրիգորիոսի մտքերը՝ բարեպաշտ ուսմունքով հանդերձ, քան արտաքին յուրայինների առասպելաբանությունը:

Միայն այս իմաստասիրական ուսմամբ չէր, որ իմաստուն Գրիգորիոս կարգեց բարեպաշտության դպրոցը. հանդիմանում էր նրան նաև թագավոր դառնալուց առաջ, երբ երկուսով մանուկ՝ լինելով Աթենքում, ուսումնակցության բերումով բարեկամացել էր աստվածային իմաստությամբ նախապես, զգուշացնում էր նրան կատարելիք անօրինություններից: Մանկան տեսքից հայտնապես երևում էր նրա ամբարշտությունը: Որովհետև նրա տեսքը լի էր խռովությամբ և տեսնողներին քամահրող: Դեմքը գազանակերպ էր, մարմինը՝ այլանդակ ու անհեթեթ, խոսքը լի անմտությամբ, մտքով ու գործով դյուրագնաց ամեն չարիքի, իսկ բարեպաշտության ու ժուժկալության կրթվելը, առաքինության բոլոր գովքերը արհամարհում էր նա: Այս ամենը՝ լինելիք չարիքները, բարեպաշտությունից հեռանալը, նախապես տեսնելով՝ Գրիգորիոսը հայտնում էր նրան: Բայց նա դրանից չէր օգտվում, որովհետև ինքն էր խավարեցրել իր մտքի աչքերը: Այսպիսի ընթացքով նրա թագավորությունը, որ ամբարտավանությամբ հոխորտում էր քրիստոնյաների վրա, չարաչար հանդիմանվեց, և չարը չարով վերացավ, ոչինչ չշահելով այս կյանքից, միայն հավիտենական տանջանք կուտակեց իր համար:

Այն ժամանակ Կապադովկիայի Կեսարիայում էր սուրբ Եվսեբիոս եպիսկոպոսը: Իսկ Բարսեղ Մեծը քահանայության աստիճան ստացած, թշնամական նախանձի պատճառով հեռացավ նրանից Պոնտոս: Այնժամ հերձվածողների բազմությունները միասին հավաքված գնացին Կեսարիա, մաքառեցին մայրաքաղաքի եպիսկոպոս Եվսեբիոսի հետ: Իսկ նա թեև վարքով պարկեշտ էր, բայց չուներ աստվածաբանական իմաստների կրթություն՝ չէր համարձակվում ընդդիմանալ հերետիկոսներին: Այնժամ նամակ հղեց լուսավորիչ Բարսեղ Մեծին, պաղատելով, խոստովանեց դիմադրելու անկարողությունը, աղաչում էր արագ հասնել և մարտակցել Կեսարիա մայրաքաղաքի եկեղեցուն: Իսկ երանելին, լինելով բարեպաշտության նվիրյալ, շտապ հնազանդությամբ գնաց այնտեղ, հատկապես ուղղափառության պայքարի համար: Եվ իբրև Քրիստոսի քաջ զինվոր մտավ հերձվածողների ամբոցները և տակնուվրա արեց. նրանց ստությունը վախկոտի նման փախստական եղավ ճշմարտության առջև: Զէ՞ որ ամենուրեք, բոլոր դարերում, Աստծու մարդասիրությունը գործադրում է ուժը իր ծառաների գործակցությամբ: Նույնպես և այս ժամանակ սրանց երկու լուսատու տվեց՝ Բարսեղ Մեծին եմ ասում և Գրիգորիոսին, որ Հոգու սիրով միացած, այրեցին Քրիստոսի եկեղեցու անդաստանից հերձվածի փուշը, որ աճել էր սատանայի վարդապետությունից:

Կարճ ժամանակ անց հասավ նախահիշյալ Եվսեբիոս եպիսկոպոսի վախճանը, և երանելի Գիրգորիոսը հավանության թուղթ է հղում Կեսարիա մայրաքաղաքը, որ նրա փոխարեն եպիսկոպոսական աթոռին ձեռնադրեն Բարսեղ Մեծին: Դա անում էր ոչ թե մարմնապես սիրելի լինելու պատճառով, այլ Սուրբ Հոգով իմացավ Քրիստոսի եկեղեցու ուղղափառության այն չափը, որ նրանով էր իրագործվում: Երբ Բարսեղ Մեծը ձեռնադրվեց Կեսարիայի աթոռին՝ մեծ ուրախություն էր այդ կողմերի ուղղափառներին: Բայց հետո Աստծու այրը ուրիշ կողմից է դժվարության հանդիպում, քանի որ ոմանց իշխանասիրությունից երկու մասի բաժանվեց Կապադովկիան, որ առաջ մեկ վիճակ էր՝ մայրաքաղաք Կեսարիայի իշխանության ներքո: Նախանձն ու իշխանությունը այսպես սպանում ու կործանում են, նաև վրիպեցնում հավատքից: Սրանք Կայենից են, որ ամբաստանում է Հովհաննես ավետարանիչը: Այն ժամանակ Բարսեղ Մեծը թեև երկիրն այս-

պես բաժանված էր տեսնում, չէր գրում ոչինչ, այլ բուժում էր արագ հասած հիվանդությունը և եկեղեցիների առավել խնամքի համար գավառում բազմացնում էր եպիսկոպոսներ:

Երբ ուզեց Սաղեմի եկեղեցու համար եպիսկոպոս ձեռնադրել, մտածեց, որ ոչ ոք եկեղեցուն պիտանի չի լինի, ինչպես մեծն Գրիգորիոսը: Եվ այս առթիվ խորհրդակցում էր Գրիգորիոսի սքանչելի ծերունի հոր հետ: Եվ երբ Աստծու այրն ստիպված է լինում հնազանդվել. նախ նա ինչպես ասացինք, լռություն էր պահպանում և ոչինչ չէր կամենում աշխարհից. ա՛յս պատճառաբանեց, ապա ասաց, որ Սաղեմի տեղը անհարմար է ու բազում խռովությամբ լի, թագավորների հարկերի տակ և այսպիսի պատճառաբանություններ բերեց: Հետո, երբ չհամոզվեց, քանի որ ուզում էր այս կյանքում ապրել առանց հոգսի ու զբաղմունքի, նրան խնդրեցին հանձն առնել Անձիանձի եկեղեցու վերակացությունը՝ իր ծերունի հոր փոխարեն: Իսկ նա հանձն առավ վերատեսչի պաշտոնը .հոր հրամաններին մինչև վերջ ընդդիմանալը պակաս հանցանք չէր համարում և ասում էր այսպես. «Ո՛վ հայր պատվական, սա ևս քո իմաստությունից գաղտնի չլինի, որ թեև ստիպվում եմ, բայց չի կարելի անտեսել նախախնամությունն ու սպասավորության շնորհը, որ Աստծուց ինձ վստահվեց քո միջոցով, այլ հարկավոր է Աստծու եկեղեցուն ծառայել»: Այնժամ հայրն ասում է նրան. «Ո՛վ որդյակ իմ, քանի կենդանի եմ՝ ինձ ծերության գավազան եղիր, որ և Աստծու՝ քեզ պարգևած շնորհը հայրական օրհնությամբ հաստատվի քեզ վրա: Իսկ երբ վախճանվեմ, կատարիր Աստծու կամքը այնպես, ինչպես կուզես»: Սուրբ Գրիգորի՝ Անձիանձի եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո նրա ծեր հայրը որոշ ժամանակ ապրեց, հասավ հարյուր տարվան, նրա մայր Նունին դրանից մի փոքր պակաս, առաքինի կենցաղավարությամբ ժամանակավորից փոխադրվեցին մշտնջենական և անծերանալի կյանք: Իսկ նրա սրբուհի քույրը՝ Գորգոնիան, և Կեսարիոս եղբայրը ծնողներից առաջ վախճանվեցին, և նա պատվեց նրանց թաղելով և գերեզմանները վայելուչ կերպով

արդարելով, պատարագով, ավանդեց Քրիստոսին: Նա իրապես ըստ առաքելական կանոնի աստվածային պատվիրանների համաձայն ընդունեց, լավ վերակացու եղավ բարեպաշտ ծնողներին ու իր տանը, ապա հաստատվեց Աստծու եկեղեցու վերատեսուչ:

Մեծն Գիրգորիոսը ծնողների մահից հետո քիչ ժամանակ մնաց եկեղեցում, հիշեց առաջվան ուխտը անզբաղության, այնտեղի եկեղեցին թողեց, գնաց Սելևկիա, հասավ այնտեղ, մնաց Պողոս առաքյալի աշակերտ սրբուհի Թեկղիի տաճարում: Այսպես վարվելով մտածում էր, որ Անձիանձի եկեղեցում իր փոխարեն ուրիշը կձեռնադրվի: Իսկ երբ Աստծու տեսչությամբ վերադարձավ եկեղեցին՝ իր հոտը գտավ անհովիվ: Մարդիկ բազում արտասուքով խնդրում էին, որ այնտեղ հաստատի իր աթոռը: Ու թեպետ առանձնական կյանքը սիրելով չէր կամենում, բայց մեծ թախանձանքով պաղատող բազմությունը հարկադրեց:

Այն ժամանակ Մեծն Բարսեղը տեսավ եղբայրների նվազելը և սիրո պակասելը անօրինության շատությունից, երբ ախտահարներին պիղծ համարելով՝ անտեսում էին մարդատեցությամբ, մինչդեռ նրանք շատ մարդասիրության և ախտակցության կարիք էին զգում: Եվ խորհելով բարեպաշտության մասին, որ վայել է բոլորին, մանավանդ եկեղեցու բարեզարդ առաջնորդներին, և իր մոտ կանչելով երանելի Գրիգորիոսին՝ զանազան պատշաճ վայրերում մեծամեծ տներ է կառուցում աղքատների ու ախտաժետների համար: Եվ տներին նշանակում են հավատարիմ և իմաստուն սպասավորներ և բոլոր տկարներին ու հաշմանդամներին այնտեղ են հավաքում և եկեղեցու տարեկան հասույթից վերակացուների միջոցով բաժանում նրանց, ինչպես հայտնապես երևում է Գրիգորի ճառից, որ այն ժամանակ իմաստասիրեց աղքատասիրության և եկեղեցու մանկանց մարդասիրական ջանքի, մանավանդ ընթերցող ուսումնասերների և աշխատասերների մասին, որ սրտանց մտադրված նայեն իմաստունների և բանասերների ծածուկ գանձերին:

Այժմ պատմեմ զորությունն ու սքանչելիքը, որ նրանցով գործեց Աստված Բիզանդիայում և այլ բազում քաղաքներում, հերձվածողների մեջ, ինչպես երբեմն մեծն Մովսեսի և Ահարոնի միջոցով՝ եգիպտոսում սքանչելագործեց: Որովհետև Արիոսի, Մակեդոնի և Եվնոմիանոսի աղանդը, որ փոքր Կոստանդիանոսի ժամանակ արմատացավ Աստծու եկեղեցիներում, առավել ևս բռնացած էին ուղղափառ կողմերի վրա, Վաղես կայսեր ժամանակ: Իսկ հետո, մեծն Թեոդոս բարեպաշտի թագավորության շրջանում Աստծու նախախնամ ողորմությունը արթնացրեց երանելի Գրիգոր Աստվածաբանի հոգին, այցելելու ապականողներից կորսվածներին, և ինչպես այն ժամանակ Աստված Եգիպտոսում տեսավ Աբրահամի զավակի չարչարանքը, նրանց փրկիչ ուղարկեց Մովսեսին, ասելով. «Արի քեզ ուղարկեմ Եգիպտոս, որովհետև լսեցի նրանց հառաչանքը և իջա նրանց փրկելու» (Ելք, Գ. 7-10, Զ. 13): Այսպես շտապ ուղարկեց Աստծու այր Գրիգորիոսին Բիզանդիա՝ Աբրահամի որդիների ճշմարիտ հավատից դուրս վանելու հոգիների խավարն ու պիղծ հայհոյությունը: Որովհետև, ինչպես ավելի վերն ասացինք, թագավորական քաղաքում երբ բռնացավ պիղծ հերձվածը, բարեպաշտ Թեոդոս թագավորը Աստծու մեծ քահանայապետներ Բարսեղին ու Գրիգորիոսին բողոք գրեց՝ գալու և մարտնչելու սուրբ եկեղեցու դեմ պատերազմողների հետ: Եվ սուրբ Բարսեղը որոշ ժամանակով հետաձգելով իր գնալը՝ շտապեցնում էր իմաստուն Գրիգորիոսին. նա բավական էր հերձվածողների մարտը հաղթահարելու:

Իսկ նա եկավ Կոստանդնուպոլիս, տեսավ որ հույժ թափուր են մնացել ուղղափառների եկեղեցիները բոլոր ուղղադավան հոտապետներից, միայն իբրև նվազած առագաստ փայլում էր լեռան վրա: Լոկ Անաստասի տաճարը, որ այժմ կոչվում է սուրբ Հարություն, որ թերևս արհամարհված էր փոքր լինելու պատճառով: Սուրբ Գրիգորն այնտեղ իջևանեց և պատերազմելով քարկոծեց աստվածային վարդապետությամբ հերձվածողների գնդերը, ինչպես Դավիթը այլազգիներին, վանեց ու ցրեց նրանց, քանդելով նրանց ամրոցները: Եվ նրանցից բռնվածներին գերեց, որ ճշմարտությունից հեռացած էին, ասես հենց այդտեղ կատարելով սուրբ Գրքի խոսքը. «Դավթի տունը գնալով մեծանում էր, և Սավուղի տունը նվազում էր» (Բ. Թագ. Գ. 1): Պետք էր տեսնել սրբի գալստյամբ բազմազան բարեկարգություններ, ոմանց բարեպաշտության ուռկանով որսում էր, մտածելով նաև մյուսների մասին:

Երբ սուրբն այսպես արեց արիոսականներից ոմանք լցվեցին բարկությամբ, ուրիշները չար նախանձով բռնվեցին սատանայի գործակցությամբ, պատերազմում էին նրա դեմ և հերքվում ճշմարտության կողմից: Նրանք գլխակոր-ույս փախան: Երևաց մի այլ հայհոյիչ՝ Ապողինարես անունով, ասորի: Սա ապականամիտ վարքով ուրիշ առանձնակի չարափառություններ էր ուսուցանում, որովհետև ասում էր, թե Տիրոջ փրկական մարդեղությունը կիսակատար է և չէր փառավորում բովանդակ փրկագործության խորհուրդը, այլ ասում էր՝ «Բանը մարմին է առել առանց մտավոր և բանավոր Հոգու, դրա փոխարեն Բանն Աստված բովանդակել է սոսկ մարմնի մեջ»: Սա հելլենական ուսում էր ստացել և այդպես պարզամիտներից շատերին ավազակաբար կորստյան վիհ էր առաջնորդում:

Իսկ քաջ հովիվ Գրիգորիոսը, երբ տեսավ Քրիստոսի սուրբ ոչխարների հոտի անխնա հոշոտվելը ապականիչ գայլից, արիաբար պատերազմում էր նաև այդ մասնատող գազանի դեմ: Այնժամ ապողինարականները արիոսականների և հոգեմարտների հետ միաբանեցին իբրև չարադև այրեր հակադրվելով Գրիգորին: Որովհետև տեսնում էին, որ իրենք պարտված են նրա ճշմարիտ վարդապետության խոսքով, և հարմար ժամանակ գտնելով իրենց չարությանը՝ հարձակվեցին քարերով ու բրերով Աստծու այրի վրա, ինչպես երբեմն հրեաները Ստեփանոսին: Բայց Աստծու օգնականությամբ հովանավորված անվնաս էր դարձնում ցասումը, և ինչպես այն ժամանակ Աստված Բանը դատապարտեց հրեաներին, երբ բարձրացրին լեռան կատարը՝ այնտեղից գահավեժ անելու

համար, այսպեսև երանելիի պարագային սքանչելագործեց: Իսկ Գրիգորիոսը բնավ չզայրացավ չարից դրդվածների դեմ, այլ նմանվելով իր Տիրոջը՝ հեզ և խոնարհ, ոչինչ չպատասխանեց, լոկ հանդարտությամբ սաղմոսում էր ասելով. «Թեպետ ես գնացի մահվան ստվերների մեջ, չարերից չվախեցա, որովհետև, Տեր, դու ինձ հետ ես» (Սաղմ. ԻԲ. 4): Թեպետ նա չէր չարչարվում միայն հոժարությունից առանց տանջանքի և առանց չարչարանքի պսակավոր հանդիսացավ: Որովհետև ինչպես երանելի վկաները կռապաշտների հետ, նույնպեսև նա ճշմարտությունն ուրացողների դեմ էր պատերազմում, նմանվելով սուրբ հայրերին՝ երանելի Պետրոս Ալեքսանդրիայի հայրապետին և Աթանասին եմ ասում:

Արդ սրանք այսպես եղան. [նա] ստիպվեց բարեպաշտ ինքնակալից և ուղղափառ կողմերից՝ հաստատվելու Կոստանդնուպոլսի հայրապետական աթոռին: Եվ դա միանգամայն իրավացի էր, քանի որ ուր վաստակ և աշխատության քրտինք կա, այնտեղ՝ և առաքելական աթոռի ժառանգության վարձ: Իսկ երբ չարը տեսավ իր պարտվելը և ճշմարտության թագավորելը՝ տե՛ս, թե հետո ինչ գործեց: Ի հայտ բերեց Մաքսիմինոս անունով մեկին՝ հակառակ Գրիգորի: Նա եգիպտացի էր և բարքով, կերպարանքով բարբարոս, գործերով ևս առավել, որովհետև շան նման որովայնամոլություն և ագահություն ուներ, իսկ տմարդությամբ և անողորմությամբ հույժ առավել էր Նաբաղի նման, հմուտ և տեղյակ էր հելլենների իմաստության: Սա առաջինը եկավ մեր սուրբ հայրապետ Գրիգորիոսի մոտ, աշակերտեց նրան և անչափ կեղծավորությամբ մերձավոր եղավ սրբին, մինչև իսկ՝ սպասավոր և սեղանակից: Սրանից հետո՝ և՛ սեղանի սպասավոր և՛ սարկավագ, ապա նաև քահանա ձեռնադրվեց, այդպիսով միացավ եկեղեցու ժառանգավորների դասին: Ու թեև այսպես բազում պատվի արժանացավ սուրբ հայրապետից, սակայն նմանվելով Հուդային, չարություն էր կուտակում իր սրտի մեջ դավաճանելու իր վարդապետին և սատանայական փառասիրությամբ ցնորված՝ կամենում էր հափշտակել թագավորական քաղաքի հայրապետության աթոռը: Գտնելով իր դավաճանությանը հարմար ժամանակ, որ բարեպաշտ Թեոդոս թագավորը արևմուտք էր գնացել բարբարոսների դեմ պատերազմելու, Մաքսիմինոսը իրեն մի համախոհ դտավ մի քահանա Նյուսիա քաղաքից, որ Կոստանդնուպոլսի մի վաճառականից գործ էր ստանձնել: Սրանք բազում ոսկի վերցնելով մատուցեցին ծերակուտականներին, որպեսզի Մաքսիմինոսին տան հայրապետական աթոռը, և նրանցից արտոնություն ստանալով ավելի շատ գանձ՝ ոսկի ու արծաթ ուղարկեն Աղեքսանդրիա՝ Պետրոս եպիսկոպոսին, որ երանելի Աթանասից հետո նստում էր սուրբ ավետարանիչ Մարկոսի աթոռին: Իմաստուն Գրիգորիոսն ինքը նրա ձեռքով էր հաստատվել Կոստանդնուպոլսի աթոռին: Երբ [Պետրոսն] ստացավ ոսկին, չհետաքրքրվեց Մաքսիմինոսի վարքով, այլ իսկույն մի եպիսկոպոսի ուղարկեց՝ ձեռնադրելու նրան:

Իսկ երբ ուղարկվածները եկան և առավոտյան ժամին մտան եկեղեցի, առանց հայրապետին և մյուս ժառանգավորներին, բարեխոհ ժողովրդին տեղյակ պահելու, անմիջապես հոգ էին տանում սկսելու ձեռնադրությունը: Իսկ երբ իմացան կղերականներն ու ժողովուրդը՝ զայրացան, հասան և խափանեցին նրանց ծրագրած անկարգությունը, որ հազիվ մագաղուրծ լինելով փախչում էին խռովյալ ամբոխից: Եվ քանի որ նրանք արբած էին ագահությամբ ու փառամոլությամբ չհրաժարվեցին նանիր ծրագրից, այլ իրենց գործակից դարձնելով եկեղեցուց հեռացածներին, գնացին Մաքսիմինոսին ձեռնադրեցին ոմն ռամիկի տանը: Քաղաքի բազմությունն այս լսելով բարկությամբ բորբոքված հարձակվեց նրանց վրա, բայց սուրբ Գրիգորը իջեցրեց նրանց զայրույթը: Ու թեև այսպես ետ կանգնեցին հանդուգն հարձակումից, բայց բազում պարսավանք էին թափում Մաքսիմինոսի վրա, նաև խիստ մեղադրում էին սուրբ Գրիգորին, որ նրան այնքան պատվականների մեջ ունենալով՝ այսպիսի հանդգնության համարձակություն էր տվել: Իսկ երանելին հեզությամբ ու հանդարտությամբ հանգստացնում էր ամբոխին. «Մի՛ բարկանաք, որդյակնե՛ր,

ո՛վ գիտե մարդու մտքերը, բացի Նրանից, որ ստեղծեց նրան, որև ուշադրության է առնում ամեն լինելիք՝ որպես եղած, որովհետև մարդ առաջ է նայում ըստ աստվածային Գրքի խոսքերի, այլև աշակերտելով մեր ճշմարիտ վարդապետին՝ Աստծու Միածին Որդուն, և բոլորին կոչ է անում ընդունել Նրա քաղցր լուծը և թեթև բեռը, որև ասաց. «Ով կա ինձ մոտ՝ չեմ արտաքսի» (Հովհ. Զ. 37): Նաև մեծ [բան] էր Մաքսիմինոսին. մկրտեցի նրան պաշտելու Երրորդություն Ապողոնի փոխարեն, որովհետև պակաս բան չգտա մեր համեմատությամբ սիրով առ Երրորդություն: Այդպես և մեր Տեր Հիսուս Քրիստոս ցույց տվեց մատնիչների մեջ և մեզ սովորեցրեց: Ուստի և մենք պարտավոր ենք կատարել այսպես ստանձնածը, թեպետ նա հետագային բացահայտեց իր ծածուկ կեղծավորությունը: Այսպիսով խաղաղեցնում էր ժողովրդին:

Իսկ Մաքսիմոսը աննահանջ նույն համառ մտքին էր մնում. իր հետ վերցնելով իրեն ձեռնադրող եգիպտացի եպիսկոպոսներին՝ ընդառաջ գնաց բարեպաշտ ինքնակալ Թեոդոսին Թեսաղոնիկեում, խնդրելով Կոստանդնուպոլսի հայրապետական աթոռը: Որովհետև չկարողացավ եկեղեցականների միջոցով՝ մտածեց թագավորական իշխանության օգնությամբ հափշտակել աթոռը: Իսկ բարեպաշտ Թեոդոսը բարկացած հրամայեց հեռացնել նրան իր մոտից, նաև հալածել թագավորական քաղաքից՝ մեծամեծ սպառնալիքներով: Բայց նա, թեև այդպես ամոթալից էր ամեն ինչում, սակայն փառամոլությամբ անզգայացած՝ շարունակում էր լրբանալ և գնաց Աղեքսանդրիա, բազում ոսկի տվեց քաղաքի եպարքոսին, որպեսզի այնտեղ հափշտակե Պողոսի աթոռը: Երբ քաղաքի բազմությունն այդ լսեց՝ մեծ բարկությամբ հուզվեց: Եվ եթե քաղաքի նույն եպարքոսը չխաղաղեցներ աղմուկը՝ բազում սպանություններ կլինեին: Այնժամ [եպարքոսը] նրան հալածեց Աղեքսանդրիայից. նա հետագայում չարաչար հարվածներով ստացավ իր հանդգնությանն արժանի հատուցում:

Այս այսպես եղավ. մեծն Գրիգորիոսը, երբ Կոստանդնուպոլսում ջնջեց ապականիչ հերձվածը և հաստատեց առաքինության արմատները, կամեցավ այնտեղից դառնալ իր քաղաքը. հավաքեց ամբողջ բազմությունը, նրանց խրատեց՝ պահել ճշմարիտ ավանդությունը, որ ստացան նրանից, և սովորեցրեց նախանձախնդրությամբ պահել առաքինությունը: Լսելով նրա հրաժեշտի խոսքը՝ ժողովուրդը և ժառանգավորները արտասվում էին, և բոլոր ծերերն ու երիտասարդները, հայրերն ու կանայք, իշխաններն ու ռամիկները, իմաստուններն ու տգետները աղաղակ բարձրացրին, միաձայն ողբով լալիս էին իրենց որբանալը քաջ հովվից: Այնժամ ժողովրդից մեկը իմաստուն խոսք ասաց նրան բարձր ձայնով. «Ո՛վ հայր սուրբ, գնում ես մեզանից, և կարծում եմ, թե սուրբ Երրորդության դավանությունը, որ բազում չարչարանքով հաստատեցիր՝ կվերանա քո հոտից: Որովհետև այժմ, առանց հովվի մնալով, հոտը կարո՞ղ է դիմակայել բազում գայլերին, որոնք նոր խոսքերով իբրև հոշոտող ժանիքով տարտղնում են եկեղեցու սուրբը ուղղափառ դավիթից»: Այս լսելով սուրբը համաձայնեց լինել այնտեղ՝ եկեղեցում, մինչև ժողովրդի հավաքվելը, որ հրամայեց բարեպաշտ Թեոդոսը, որպեսզի նրա փոխարեն մեկ ուրիշին ձեռնադրեն նրանց հոգիների վերատեսուչ: Այսպես համոզվելով՝ մարդիկ գնացին իրենց տները:

Իսկ երանելին այնուհետև ավելի ընդարձակ վարդապետությամբ լուսավորեց բոլորին ու իբրև իմաստուն երկրագործ բոլոր վնասակար բաները հեռացրեց Քրիստոսի եկեղեցուց, որպեսզի առաքելական վարդապետության ճշմարիտ սերմը ամենայն վնասակարից ազատելով պտղաբեր դարձնի: «Որովհետև,- ասում է,- այն, որ առաքյալները բազում աշխատությամբ սերմանեցին, ձգտելով, որ նույն աստվածային շտեմարանում հավաքվենք. քանի որ վայելումը բոլորին է, չէ՞ որ, ասում է,- թե՛ սերմանողները, թե՛ հնձողները՝ բոլորը կցնծան»: Նաև ոչ թե միայն խոսքով էր ուսուցանում, այլ ավելի շատ գործով էր օրինակ տալիս, ըստ առաքելական խրատին՝ ասված Տիմոթեոսին. «Օրինակ եղիր հավատացյալների,- ասում է,- խոսքով, ընթացքով, հավատով, սիրով,

մինչև ես գամ» (Ա. Տիմո. Դ. 12): Որովհետև աշակերտնե-
րը սրանցով ավելի են հետևում ուսուցիչներին, քան միայն
ճարտար խոսքով: Այս պատճառով նաև երանելի Գրիգորիոսը
ժուժկալությանն առնչվող բոլոր դժվարություններին նախ
ինքն էր դիմանում, ապա ուրիշներին էր ուսուցանում: Իսկ
ողջախոհությունը, հեզությունը և քաղցրությունը առավել
ևս կրում էր իր մեջ: Իսկ իմաստության խոսքերը ոչ թե հա-
վասարապես բաժանում էր բոլորին, այլ իմաստուն բժիշկների
նման՝դեղը տալիս էր ըստ յուրաքանչյուր ցավի: Որովհետև
անկատարներին կատարյալ խորհուրդները չէր կարող հայտ-
նել, իսկ կատարյալից չէր թաքցնում, ավելացնելով նրանց
օգուտը: Նույնպես և հանդիմանելիս՝ ոմանց առանձին, եթե
հանցանքը հայտնի չէր, իսկ հայտնիները՝ հրապարակավ,
որպեսզի մյուսները ևս զգուշանան, ոմանց՝ քչով, ինչպես
և Տերը հրամայեց, նաև նրա երանելի առաքյալները. ոմանց
տանջանքների սպառնալիքն էր հիշեցնում, ուրիշներին հոր-
դորում էր անճառ խոստումով. ո՛չ փաղաքշելիս գովքը հաց-
նում էր մեղկության, ո՛չ հակառակողներին նախատելիս էր
թուլանում: Նրա խոսքերը շատ քաղցր և խոնարհ էին, ինչ-
պես մեղր, որպեսզի բոլորին ախորժ լիներ և ձգեր դեպի իրեն՝
երբ խոսում էր առաքինության մասին: Ավանդությունների
խնդրում ավելի բարձր էին նրա խոսքերը. երբ սուրբ Երրոր-
դության վերաբերյալ աստվածաբանություն էր բացատրում,
բերելով նույն օրինակը, ում անունն ստացավ,_ասում եմ մեծ
և զարմանքի արժանի Որոտման որդուն՝ աստվածաբան Հով-
հաննես ավետարանչին. ուներ սրա և՛ իմաստության ոգին,
և՛ գիտությունը, ինչպես որ ակնհայտ ցույց են տալիս նրա
վարդապետական ճառերը: Նաև մարգարեությունից պակաս
չէր, ինչպես ինքն իսկ ասում է իր ճառերից մեկում՝ եպիսկո-
պոսների գալստյան առթիվ:

Եվ ոչ ուշ, այլ շատ շուտ, բարեպաշտ Թեոդոսի ժամանակ,
երանելիի մարգարեությունը կատարվեց. արեգակի ճառա-
գայթների նման ուղղափառ վարդապետությունը ծագեց
ու տարածվեց ամբողջ տիեզերքում. Քրիստոսի եկեղեցիներ-
ը աճելով բազմացան երկնքի աստղերի նման: Եվ ինչ ասել

կուզե, բազում տոնախմբություններով, ճառերով զարդարեց
ուղղափառների եկեղեցիները, կամ նրա իմաստները ավելի
բարձր են, քան շատերինը: Իսկ նրա հեզության ու քաղց-
րության որքանությունը արդյունքն է վկայում, որ այն ժա-
մանակ ստացվեց, և որ բարի է ստանալ բոլորի համար, առա-
վել ևս վարդապետներին: Այդպես և մեր բոլորի ուսուցիչ
Հիսուս Քրիստոս ցույց տվեց և սովորեցրեց: Ուղղափառնե-
րի ժամանակ, երբ հերձվածողների վրա իշխեցին, երանելին
միշտ իջեցնում էր նրանց զայրույթը, որ անհավատների չա-
րին չարով չհատուցեն: Եվ այսպես էր ասում. «Որդյակներ,
մի՞թե մեզնից այս չի պահանջում Քրիստոս, մի՞թե այսպես
չի ուսուցանում մեզ Ավետարանը. մեղավորներին դարձ-
նել ապաշխարության, իսկ մոլորյալներին՝ ճշմարտության
գիտության, որպեսզի այժմ ճանաչելով իրենց մեղքը՝ խոս-
տովանությամբ ընկնեն Տիրոջ առջև և խառնվեն սուրբը հո-
տին, նախքան կգա վրեժխնդրության օրը մեղավորներից,
ովքեր չապաշխարեցին: Սրա համար մեծ իմաստությամբ նե-
րողամիտ եղեք նրանց հանդեպ, ո՛վ կատարյալ այրեր, որով-
հետև ոչ միայն պետք է ներել նրանց, այլև սիրել ու բարիք
գործել, և աղաչել Աստծուն: Այս բաները ևս պատվիրեց մեզ
Քրիստոս: Իսկ եթե այս ամենից հետո չզղջան, նրանց թողեք
այլ օրվա դատաստանի և դատավորի, քանի որ Նա ասաց.
«Վրեժխնդրությունն իմն է, և ես կհատուցեմ» (Եբր. Ժ. 30):
Այսպիսի հեզության ու հանդարտության խոսքերով խրա-
տում էր իր ժողովրդին:

Իսկ բարեպաշտ Թեոդոս թագավորը, երբ վտարեց արև-
մուտքի բարբարոսներին և մեծ հաղթությամբ վերադարձավ,
բազում ավար ու գերիներ բերեց՝ նրանց ամբարշտությանն
արժանի, և Աստծու սուրբ քահանայապետին ընդունեց մեծ
պատվով: Եվ նրա վաստակին արժանի՝ առավել լայն գովքի
ու շնորհակալության խոսք մատուցեց նրան և իր գովեստ-
ների վերջում այսպես ասաց. «Ո՛վ հայր սուրբ, կարծում եմ,
Աստծու կանխատեսությամբ վստահվում է քո աշխատասեր
իմաստությանը՝ Նրա եկեղեցին. թույլ տվեց պատերազմող-
ներին որոշ ժամանակ նեղել քեզ, որպեսզի Իր հաղթող զո-

րությամբ թշնամու կարծեցյալ զորությունը պարտության մատնի քեզնով և Իր եկեղեցին պսակի մեծամեծ հաղթությամբ: Եվ քանի որ քոնն են վաստակն ու քրտինքը, քոնը կլինի և պսակը: Ահավասիկ ես տալիս եմ այս տաճարն ու հայրապետությունը, մանավանդ որ Աստված ինքը քեզ է հանձնել այն»: Իսկ երևելին լցվեց Սուրբ Հոգու շնորհներով, ողջունեց թագավորին և աղոթքով հաստատեց նրա ամենապարգև թագավորությունն ու մեկնեց նրա մոտից:

Արդ մինչև այստեղ արիոսականների ձեռքին էր Աստծու տունը, և երբ թագավորից լսեցին այդ մասին՝ կռվում էին սրբի դեմ: Քանի որ թագավորի ահից չէին համարձակվում, բայց թաքուն մարտնչում էին, երբեմն նույնիսկ գալով նրա մոտ պաղատում էին, որ խնդրի թագավորին իրենց վերադարձնելու սուրբ տաճարը: Այսպես գաղտնի և բացահայտ զինվում էին նրա դեմ: Ու մի օր որոշեցին դավադրաբար սրով սպանել նրան գիշերը, և քանի որ չկարողացան այդ անել տաճարի շուրջը եղած բազմության պատճառով, երկու կողմը սուսերամերկ հարձակվեցին միմյանց վրա՝ ինչպես բարբարոսների պատերազմում: Նաև քաղաքամեջի փողոցներում, ուր հանդիպեին՝ բախվում էին միմյանց. այնուհետև երկու կողմերի կանանց և երեխաների բազմությունից շատ հառաչանքներ էին լսվում: Ու մի օր պատահեց, երբ թագավորը մտնում էր եկեղեցի, հայրապետի հետ, առավոտյան ժամին, մթագին ու մռայլ մառախուղ եղավ, շրջապատեց արեգակը, որին սովոր չէին արարածները. այս տեսնելով արիոսականները ուրախացան, կարծելով թե իրենց Աստծու տաճարից վտարելու դիմաց՝ Աստված վրեժխնդիր էր լինում նրանցից: Դրանից ուղղափառների կողմի պարզամիտներից շատերը տարակուսեցին գայթակղվելով:

Իսկ երբ մտան սուրբ տաճարը հայրապետն ու թագավորը ժողովրդով հանդերձ, միաբան ձեռքերը վերև բարձրացրին մեծամեծներն ու տնանկները, այր ու կին, ծեր ու մանուկ, արտասվելով պաղատանք էին մատուցում Ամենատիրոջը: Եվ հանկարծ, դեռ չէր ավարտվել նրանց օրհնությունը, ամպն ու մառախուղը հեռացան, ծագեց արեգակի լույսը՝

սովորականից ավելի պայծառ, և Աստծու տաճարը լուսավորվեց հրաշալի լույսով, իսկ մարդկանց մտքերը առավել հաստատվեցին ի սեր սուրբ հայրապետի: Եվ սկսեցին միաձայն ու միակամ աղաչել թագավորին, որպեսզի [Գրիգորին] տիրապես հաստատի հայրապետական աթոռին: Իսկ երանելին, քանի որ չէր ախորժում այդպիսի պատվավոր բան ընդունել, նեղվում էր ժողովրդի աղմուկից, ճշմարտախոս մեկի միջոցով ժողովրդին հրամայեց լռել, քանի որ ինքը չէր ուզում խոսել ժողովրդի հետ՝ ժուժկալությունից ձայնի խիստ նվազած լինելու պատճառով: «Ո՛վ իմ որդյակներ, լռեցեք, քանի որ, թեպետ մենք չենք ուզում, բայց անհրաժեշտ է Սուրբ Հոգու խնամակալությունը»,-այս խոսքից հետո ժողովուրդը լռեց: Իսկ թագավորը շատ զարմացավ իմաստուն այրի առավել խոնարհությունից: Այսպես ժողովուրդը մեծ ուրախությամբ ցրվեց, յուրաքանչյուրը գնաց իր տունը, և հակամարտությունը դադարեց, և եկեղեցու հողմակոծված նավը հասավ նավահանգիստ, իսկ մերկացած սուրը դրվեց պատյան: Այս ամենը եղավ և կատարվեց աստվածասեր թագավորի և սուրբ հայրապետի միջոցով:

Իսկ երանելի Գրիգորիոսը, թեպետ չէր ցանկանում, որովհետև շատ էր սիրել միանձնության ազատությունը, բայց թագավորի և ժողովրդի բազմության ստիպումով հաստատվեց հայրապետական աթոռին: Թագավորը՝ իբրև արդար և սուրբ հոր ու հայրապետի և Աստծու քահանայապետի արժանի պատիվ հատկացրեց նրան. քանի որ, թեպետ բարեպաշտ Թեոդոսը արտաքին իմաստության անտեղյակ էր, բայց ուղիղ դավանությամբ և եկեղեցիների նկատմամբ խաղաղ մտքով հույժ առավել էր բոլոր թագավորներից, ու աղոթքներով՝ ևս առավել, քանի որ դրանով ավելի էր զբաղվում, քան թագավորական հոգսերով:

Երանելի Գրիգորիոսը թեպետ թագավորին տեսնում էր այսպես բարեպաշտությամբ զարդարված, բայց և, տեսնելով նրանց, ովքեր շրջապատում էին թագավորին կաշառքով, արծաթասիրությամբ ու պերճանքով, որ մանավանդ ատելի էր իր համար, և այն պատճառով, որ հաճախ չէր մտնում այնտեղ,

այլ աղոթքով, տքնությամբ ու վարդապետությամբ այցելում էր հիվանդներին և ավելի ձգտում էր բժշկության, այդ պատճառով չէր շտապում մտնել թագավորի մոտ և երբեմն հեռանում էր ագարակներ՝ տրվելով լռության: Նրան հույժ փափագելի էր մենաստանը: Այսպես աշխատասեր լինելով ամեն ինչում երանելին հապաղկոտ էր թագավորի և իշխանների ապարանք մտնելիս: Նաև վայելչապես մտքում ուներ առակախոսի ասածը. «Հաճախակի մի՛ այցելիր քո բարեկամին, որ չատի քեզ» (Առակ. Իե. 17): Եվ այսպես քաջ հովիվը նմանվեց իր Տիրոջը. հեռու մնալ ամեն երկրայինից, որովհետև եկեղեցու եկամուտի առատությունից, զանազան զարդերից, տեսակ-տեսակ թանկագին անոթներից ու անբավ գանձերից չստացավ իր անձի համար և ոչ մի դանգ, այլ ամբողջը աղքատներին, որբերին ու այրիներին բաժանել հրամայեց: Նաև եկեղեցու ագարակների ծախսերը ճշտությամբ չէր պահանջում մատակարարներից և հաշիվ չէր պահանջում հաշվեմատյաններից, ասելով, թե այդպես անելը վաճառականների գործն է, և ոչ եկեղեցականների ու իշխանների, կամ եպիսկոպոսների: «Մեզ,- ասում է,- անհրաժեշտ է նախ մաքրել բոլոր մարդկանց խղճմտանքը, ապա միայն խրատել բոլորին և սովորեցնել ոգու առաքինություն»: Այն ժամանակ նա մահացու հիվանդացավ և երանելին սենյակում անկողին ընկավ, և ժողովրդի բազմությունը եկավ սենյակի դուռն ու տանիքը՝ տեսնելու նրան, իսկ նա իջեցրեց ոտքը հատակին և հարցրեց [նրանց] գալստյան պատճառը: Նրանք խնդրում էին աղոթել թագավորի և իրենց համար նաև՝ բոլոր ուղղափառ եկեղեցիների: Իսկ նա աղոթեց, ուրախացած գնացին սուրբ հայրապետի մոտից, բայց մի մանուկ մնաց այնտեղ և բռնելով սրբի ոտքերը լալիս ու կոծում էր ինքնիրեն եղուկ ասելով, պաղատում թողնել իր հանցանքները: Գրիգորիոսը հարցրեց պաղատանքի պատճառը, իսկ նա չէր պատասխանում, այլ միայն գլխիկոր ողբում էր ու քավություն խնդրում: Մեկը նրանցից, որ մոտն էին ասաց նրան. «Ո՛վ հայր սուրբ, այդ պատանին քո սպանիչն է, որ ոմանց

սադրանքով ուզում էր սրախողխող անել քեզ, բայց Քրիստոսի պահպանիչ աջը, որ քեզ մոտ էր, թույլ չտվեց նրանց հղացումը կատարվի: Սա իբր իր կողմից կատարվեց հանդգնությունը, այդ պատճառով ողբը բերանն առած լալիս ու կոծում է»:

Այն ժամանակ երանելին արտասվելով խանդաղատեց նրան ասելով. «Մի՛ վախեցիր, որդյա՛կ, կհաշտվի բարերար, մարդասեր և անոխակալ Քրիստոս քեզ հետ, միայն խոստովանիր քո մեղքերը և նզովիր պիղծ հերձվածը, Աստծու առջև ընդունիր ուղղափառ դավանությունը»: Այսպես մխիթարեց նրան վարդապետական շնորհքով, հաստատեց ճշմարիտ հավատքի մեջ և ուղարկեց խաղաղությամբ: Ամբողջ քաղաքը, երբ տեսավ ու լսեց սրբի այսպիսի անոխակալությունն ու բարեգթությունը՝ առավել ևս հաստատվեց նրա սիրո մեջ:

Այդ ժամանակ եկան Կոստանդնուպոլսում հավաքվեցին հարյուր հիսուն եպիսկոպոս՝ բոլոր կողմերից, որ հռոմեացոց իշխանության տակ էին, բացի եգիպտացիներից: Սա եղավ ինքնակալի հրամանով, որպեսզի ժողովի միջոցով Գրիգորիոսին հաստատեն հայրապետական աթոռին, և որպեսզի ժամանակին ծագած Մակեդոնի հերձվածը հեռացնեն Քրիստոսի եկեղեցուց: Ու քանի որ ընդդիմամարտ Մակեդոնի, Եվնոմիանոսի և Արիոսի հերձվածները և բազում ուրիշներ երանելի Գրիգորիոսն իբրև քաջ հովիվ ժողովի գալուց առաջ հալածում էր Քրիստոսի հոտից, իսկ ժողովի գալուց հետո նրանց պատերազմակից լինելով հերձվածների մնացածներին վտարեցին նզովելով նրանց աղանդները: Այնժամ սուրբ ժողովը Գրիգորիոսին հաստատեց հայրապետական աթոռին՝ ինչպես նախապես կար, թագավորի և ժողովրդի կամքով: Այս կատարեցին Անտիոքի սուրբ Մելիտոս եպիսկոպոսի առաջնորդությամբ: Վերջինս սուրբ մարդ էր, կատարյալ առաքինությամբ, Վաղես կայսեր ժամանակ բազում չարչարանք էր կրել արիոսականներից, բազում ժամանակ բանտարկված էր ուղղափառության պատճառով: Սրա համաձայնությամբ Գրիգորիոսը հաստատվեց թագավորական քաղաքի հայրա-

պետության աթոռին: Նա, թեպետ սկզբում դժվարանում էր, սակայն [բազմության] փափագով և Սուրբ Հոգուց ընկալած իր առատապարգև վարդապետական շնորհներով կարող էր կերակրել այնքան բազմությունը, հանձն առավ վերատեսչությունը: Նաև կասկածում էր. գուցե հակառակորդներից մեկը ստանձնելով մայրաքաղաքի աթոռը՝ իշխանությամբ շատերին հեռացնի ճշմարտությունից: Այս ամենի համար հրաժարվեց միանձնության անզբաղ կյանքից և համաձայնեց ժողովին ու երանելի Մելիտոսին, հաստատվեց հայրապետական աթոռին: Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում հասավ սուրբ Մելիտոսի վախճանը, և քաղաքի բազմությունը սգաց նրա համար: Սուրբ Գրիգորիոսը բարեվայելուչ զարդարեց նրա մահվան օրը՝ գերեզմանական ճառով:

Քիչ ժամանակ անց Կոստանդնուպոլիս եկան նաև Եգիպտոսից կանչվածները, քանի դեռ այնտեղ էին նախահիշյալ հարյուր հիսուն եպիսկոպոսները: Եվ դժգոհում էին ժողովից, իբր թե առանց իրենց համաձայնության հաստատեցին Գրիգորիոսին հայրապետական աթոռին: Ոչ թե այդ անում էին նրան ատելով, այլ վրեժխնդիր էին լինում, որ առանց իրենց կամքին են կատարել: Այնժամ ժողովականներից ոմանք ևս համախոհ եղան նրանց և սկսեցին բանավիճել. կեսն ասում էր, որ հարմար է Գրիգորիոսը, որին և նախապես վիճակվել է, ուրիշները հակառակվում էին: Իսկ նա ասաց նրանց. «Ես, ո՛վ հովիվներ և սուրբ հայրապետներ, ինձ համար քահանայապետության իշխանությունը այլ բան չեմ համարում, քան միայն չարչարանք ու տքնություն, և ժամանակը վկա է, թե ձեր գալուց առաջ ինչքան ջանք պահանջվեց ինձնից: Վկայում է եկեղեցին ուղղափառների, թե որքան նվազությունից այդքան մեծ առավելություն հասավ: Բայց և հույս ունեմ, որ այդ ամենը կուտակվելով պահվում է ինձ հատուցման օրվա համար: Այլև ես ոչ թե փառքի, կամ բարձրագահ աթոռի, կամ թագավորական այս քաղաքով երևելի լինելու ցանկացող եմ, այլ այս հոտի սիրույն և թագավորական հրամանին և նախապես ձեր ստիպմանը անսալով ստանձնեցի այս աթոռը:

Բայց այժմ ինձ ճիշտ չի թվում ձեր այսպես գործելը, որովհետև բոլորդ համաձայն չեք դրան, որ ձեր կամքով անում եք: Բայց ես այսուհետև, առանց տրտմության, կամովին հեռանում եմ այս աթոռից, և դուք արեք ինչ որ մտածում եք: Որովհետև ինձ համար շատ սիրելի է այն անապատը, որ նախապես ստացա, ինչպես ինձ է թվում՝ մեզ Աստծուց դա չի օտարացնում, այլ մանավանդ որ մերձավորներն են անում աշխարհի ալիքների նավակոծությունից փախչողներին և խաղաղ նավահանգստի ապավինողներին»:

Այս ասելով նա ելավ եպիսկոպոսարանից և հանգրվանեց եկեղեցուց հեռու մի տեղ: Այնժամ ժողովրդից շատերը գնացին նրա մոտ արտասվալից ընկան ոտքերը, պաղատում էին ասելով. «Ո՛վ հայր սուրբ, ողորմի՛ր քո հոտը, որ բազում քրտինքով ու աշխատությամբ ստացար, մի՛ լքիր քո ձեռքով տնկածը, որ քեզնից բխած՝ Սուրբ Հոգու կենարար ջրով, հավատքով սնել ու աճեցրել ես: Քո շնորհների առավելությունը տո՛ւր քեզ սիրողներին, քո մնացած կյանքը տո՛ւր քո ժողովրդին, այն զավակներին, որոնց վրա բազում ժամանակ քո կյանքի ավյունը մաշեցիր, որպեսզի քո կենդանությանը քո հորդառատ վարդապետությունից լուսավորվածներս քո վախճանին ստանանք վարդապետության շնորհները քո նշխարներից»:

Այս լսելով երանելին արտասվեց և իբրև գթած հայր խանդաղատում էր ու սփոփում նրանց, համոզելով դադարեցնել ողբերը: Եվ իր սրտի աչքերը բարձրացնելով առ Աստված՝ աղոթք էր մատուցում, որպեսզի տնօրինի նրան օգտակարը...

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ՎԱՐՔԸ

Սքանչելագործ Գրիգորիոսը Նեոկեսարիա քաղաքից էր, Ավրելիանոս կայսեր ժամանակ, հեթանոս ծնողների որդի, բայց Աստված որովայնից ընտրեց և առանձնացրեց նրան: Որի համար մանկահասակ՝ ընտանի դարձավ անապատի, ընծայվեց Քրիստոսին, հրաժարվելով ամեն ինչից, հեռու մնաց հասակակիցներից, հանդեսներից, ճոխ պատմուճաններից, փափկությունից, գինարբուքներից: Նրա առաջին ստացվածքն առաքինությունն էր, և դրանից առաջ՝ Աստծու երկյուղը և սրանց լծակից իմաստությունն ու ուսման սերը: Իբրև դաստիարակ ուներ ժուժկալությունը, իսկ համեստությունն ու ունեցվածքի արհամարհանքը ի ծնե էին նրա մեջ: Թողնելով ծննդավայրը գնում էր Կոչողի հետ՝ ինչպես Աբրահամը, նույնպես և մեծն Գրիգորիոս թողնելով իր հայրերի մոլոր աղանդը՝ փնտրեց արդար ու ճշմարիտ հավատքը, գալով խորհրդական ծնունդին, չունենալով ոչ մի աղտ մեղքերի վերացման՝ մկրտությամբ Քրիստոս հագավ:

Արքունքի հասնելով նա գնաց Ալեքսանդրիա՝ իմաստասիրություն սովորելու: Առատ մտքով կատարելագործվեց փիլիսոփայական արվեստի մեջ, Հին ու Նոր կտակարանների հմտությամբ, անհամեմատելի էր մտքով այլ մանուկների հետ, որ ամեն կողմից հավաքվել էին հելլենացոց իմաստասիրություն և բժշկություն ուսանելու: Եվ նախանձեցին Գրիգորիոսի անարատ վարքին և մտածեցին ինչ-որ արատ գտնել անարատ Գրիգորիոսի մեջ: Վարձեցին մի պոռնիկ կին և հանդիպեցրին նրան, որ եկավ ու ասաց. «Տո՛ւր ինձ խոստացածդ՝ պոռնկության վարձը»: Եվ բոլորը բարկանում են կնոջ վրա: Իսկ սուրբ Գրիգորիոսը անվրդով էր և ոչինչ չասաց ընդդեմ պոռնիկի կամ դավաճանողների, ո՛չ վկաներ

կանչեց, ո՛չ երդումով մերժեց բիծը, այլ մեկին, որ պոռնիկի հոմանին էր և նենգության առաջնորդը, ասաց. «Ա՛ռ այդ արծաթը և տո՛ւր պոռնիկին, որ չգա և թախանձի»: Ու մինչ-դեռ կինը գալիս էր և ձեռքին ուներ զրպարտության գին արծաթը՝ Աստծուց եղավ արդարի վկայություն և զրպարտիչների հանդիմանություն: Որովհետև [կինը] իսկույն դևերից բռնվելով գալարվեց, ոռնալով ընկավ քաղաքի ահավոր բազմության առաջ, մազերը ցցվեցին, ձեռքերով ճանկռտվում էր, աչքերը շրջվել էին, բերանը փրփրել: Դևը կամենում էր խեղդել նրան: Եվ եկավ սուրբ Գրիգորիոսը, դիմեց Աստծուն՝ նրա համար, և անմիջապես բժշկեց դևից, որով հիացան բոլորը: Սա նրա երիտասարդության առաջին սքանչելիքն էր:

Արտաքին գիտություններից անցավ [քրիստոնեական] ուսման, աշակերտելով մեծ Որոգինեսին, Պերմեղյանոսի հետ աշակերտեց, որ նույն գավառից էր: Սուրբ Գրիգորիոսն ու Պերմեղիանոսը, որ հետո եղավ Կապադովկիայի Կեսարիայի եպիսկոպոս, մեծն Որոգինեսի մոտ ստացան բոլոր գիտելիքները: Որովհետև զարմանալի Որոգինեսը լի և կատարյալ էր ամենայն գիտությամբ, գրեց բազմաթիվ գրքեր և ոսկու և արծաթի գանձերի նման հավաքելով շնորհներ՝ Գրիգորիոսը դարձավ իր աշխարհը: Այնտեղ ամբողջ ժողովուրդը հավաքված նրան հրապուրում էին աշխարհիկ վարքի, բայց չէր ուզում լսել և հրաժարվելով իրեն Աստծուն նվիրեց:

Այն ժամանակ Ամասիայի մետրոպոլիտն էր Փիգիմիոս եպիսկոպոսը, որին Աստված հրամայեց Գրիգորիոսին ձեռնադրել քահանա: Իմանալով՝ փախավ երեք օրվա ճանապարհ հեռու, իսկ Փիգիմիոսը փնտրում է նրան: Մեծն Գրիգորիոսը երազում տեսնում է, որ Փիգիմիոսը քահանայապետի օրենքով ձեռնադրում է իրեն քահանա. ձեռքը դնում է իր գլխին և նա ձայն լսեց. «Գրիգորիո՛ս, մնա՛ այդտեղ, որպեսզի Փիգիմիոսը քեզ ձեռնադրի»: Սա շտապ հասավ այնտեղ, ուր Գրիգորիոսն էր և ձեռնադրեց նրան՝ ըստ աստվածային հրահանգի, այն քաղաքում, ուր հանդիպեց, և որտեղ կռապաշտ էին: Միայն տասնյոթ հոգի էր քրիստոնյա: Այսպիսի լծի տակ

մտնելով [Գրիգորիոսը] Աստծուց հայցում էր սովորել ուղիղ հավատի խոստովանություն:

Այնժամ, հսկելով և հոգալով, տեսիլք երևաց նրան. մի ծեր քահանա, վայելուչ, շնորհալից կերպարանքով, հրեշտակական ձևով: Տեսիլքով սքանչացած և հիացած Գրիգորիոսը ուզում էր իմանալ, թե ով է, կամ ինչու երևաց: Իսկ նա հեզ ձայնով ասաց. «Աստվածային հրամանով երևացի քեզ՝ ուսուցանելու ճշմարիտ հավատը»: Եվ նա լցվեց խնդությամբ ու երկյուղով: Ապա սքանչելի ծերունին մատով նրան ցույց տվեց այլ սոսկալի տեսիլ. մի շատ ահավոր կին՝ շրջապատված պայծառ լույսով: Եվ խորին գիշեր էր, և չէր կարողանում տանել լույսի սաստկությունը: Այնժամ նա յուրաքանչյուրին կոչելով անունով ծանոթացրեց նրանց: Այն գեղեցիկ կինը Տիրոջ մայրն էր, իսկ ծերը՝ Հովհաննես ավետարանիչը: Լսեց, որ Տիրամայրը Հովհաննեսին ասաց. «Դրան սովորեցրու ճշմարիտ հավատի խորհուրդը»: Նա ասաց, իսկ սա քարոզեց իր եկեղեցու մեջ: Ովքեր ճանաչեցին Աստծուն, մինչև այժմ մնում են անփորձ հերձվածներից ի փառս Աստծու:

Եվ հանգանակն այս էր. մի Աստված՝ կենդանի Բանի, իմաստության, անձնավորի և զորության Հայրը. կատարյալ Էության մեծարանք, կատարյալի ծնող, Միածին Որդու Հայր, միայն մի Տեր Միակի հետ, Աստված՝ Աստծուց, Աստվածության կերպարանք և պատկեր. Բանն Աստված՝ ամեն ինչի ստեղծող, ամեն եղածի բովանդակիչ և անհասանելի զորություն, բոլոր ստեղծվածների Արարիչ: Ճշմարիտ Հոր ճշմարիտ Որդի. անտեսանելիից անտեսանելի, անապականին՝ անապական, անմահին՝ անմահ և մշտնջենավորին մշտնջենավոր: Մի Սուրբ Հոգի Աստծուց ունենալով էություն Որդու միջոցով, երևացած և հայտնված մարդկանց: Որդու պատկերը կատարյալ է կատարյալից, կյանք է և կյանքի պատճառ, սրբություն և սրբության պարգևող, որով հայտնվում է Հայր Աստվածը, որ բոլորից վեր է և ամեն ինչի մեջ, և Աստծու Որդին, որի միջոցով են բոլորը: Երրորդությունը՝ կատարյալ փառքով և մշտնջենավորությամբ. անբաժանելի են և անօտարելի, չկա

ոչինչ անստեղծ, և Երրորդությանը չծառայող, և ոչ ստո-
րադասվող, ասես նախապես չեղած և հետո հովանու տակ
մտած, ոչ նվազ Որդին Հորից, և Հոգին Որդուց, անայլայլելի
և անփոփոխելի, այսինքն՝ Երրորդություն միշտ:

Այսպես այս առթիվ պետք է հավատալ. լսիր եկեղեցուն,
ուր քարոզվում է Բանը, որոնցից նույն երանելիի այն տպա-
վորությունը ձեռքին՝ մինչև այսօր պահվում է ի փառս Աստ-
ծու, ինչպես աստվածագիծ տախտակները:

Այնտեղից ելնելով գնաց քաղաք, մտածում էր եկեղե-
ցի կառուցել, քանի որ ամբողջ աշխարհն ու քաղաքը, նրա
շրջակա գավառը ճոխանում էին բագիններով, մեհյաններով,
և դևերի արձաններով: Բոլորի փույթը կռամոլությունն էր.
մերկանում էին, կուռքերի տաճարներն ու մեհյանները զար-
դարում, այդպես զորանում էին դևերը: Ինչպես որ հզոր թա-
գավորի զորավարը հալածում է թշնամիներին, այնպես այն
մեծը հալածում էր դևերի գունդը: Արդ, ճանապարհով քա-
ղաք գալով, հասավ երեկոյան, և սաստիկ անձրև եղավ, իր
ուղեկիցների հետ մտավ մի մեհյան: Այն մեհյանը նշանավոր
էր, և բազում դևեր էին բնակվում այնտեղ: Դևերին աշա-
կերտում էր մեհենակալ քուրմը. դյութություններ ու հար-
ցումներ էր անում: Մեծն Գրիգորիոսը յուրայինների հետ
մտավ մեհյան, Քրիստոսի անունով սաստեց դևերին և խաչի
նշանով զարհուրեցրեց ու հալածեց: Եվ դիշերը լուսացնում
էր արթուն աղոթքներով: Լուսադեմին ելավ, շարունակեց
ճանապարհը:

Առավոտյան քուրմը եկավ՝ ըստ սովորության զոհ մա-
տուցեց դևերին ասելով. «Երևացրեք ինձ աստվածներին և
խոսեցրեք»: Իսկ դևերը մեհյանից դուրս ձայնում են ասելով.
«Անհնար է, որ մենք մտնենք այդ մեհյանը, որովհետև այդ-
տեղ մտել է Գրիգորիոս Սքանչելագործը. նա մեզ հալածեց»:
Քուրմը ամեն հնարքի դիմեց, հրապուրելու դևերին, բայց
դևերը չենթարկվեցին դյութությանը: Այնժամ, բարկությամբ
լցված, հասնում է մեծն Գրիգորիոսին, սպառնում նրան մատ-
նել իշխանների ու թագավորի ձեռքը, ասելով՝ քրիստոնյա

է և աստվածների թշնամի, հանդգնեց մտնել աստվածային
մեհյանը, դուրս վտարել աստվածներին, խափանեց նրանց
զորությունը: Իսկ Գրիգորիոսը զսպում է քուրմի անառա-
կությունը. «Հավատում եմ ճշմարիտ Աստծուն, որ կարող է
հալածել դևերին՝ որտեղից ուզի և բնակեցնել՝ ուր կամենա:
Քեզ ևս կլինի»: Այս լսելով քուրմն ապշեց: Այնժամ գրում է
հրամանագիր դևերին այսպես. «Գրիգորիոսից սատանային.
մտիր այդ բագինը քո ընկերների հետ իմ հրամանով»: Քուր-
մը վերցրեց գիրը, գնաց կարդաց բագինի վրա և իսկույն դևե-
րը մտան մեհյան՝ ինչպես առաջ էր: Եվ մեհենակալը տեսավ
ու գիտակցեց Գրիգորիոսի խոսքի ու գրի հավաստիությունը,
մեծապես զարմացավ սքանչելիքից և դևերի վրա ունեցած
նրա իշխանությունից: Դարձյալ հետապնդեց Գրիգորիոսին,
աղաչեց սովորեցնել, թե ով է այն Աստվածը, որ այս իշխա-
նությունը տվել է: Մեծն Գրիգորիոսը հակիրճ ասաց բարե-
պաշտության խորհուրդը, իսկ քուրմը խնդրեց նրանից նոր
սքանչելիք, որպեսզի ճշմարիտ հավատի գա:

Նրանց հանդեպ մի լեռնացած քար կար, որ ոչ ոք չէր
կարող շարժել, բացի Աստծու զորությունից: Քուրմն ասում
է Գրիգորիոսին. «Հրամայիր փոխել ուրիշ տեղ»: Իսկ նա,
առանց հապաղելու, քարին հրամայեց որպես անձնավորուԹ-
յան՝ փոխվել այլ տեղ, ուր ցույց տվեց քուրմը, և իսկույն
տեղափոխվեց Գրիգորիոսի խոսքով: Այդ տեսնելով քուրմը
հավատաց ճշմարիտ Աստծուն, թողեց տուն, ազգ, կին, երե-
խաներ, քրմությունը, ունեցվածքը, գնաց մեծն Գրիգորիոսի
հետքով: [Գրիգորիոսը] առավ նրան, տարավ քաղաք, հռչա-
կեց, պատմեց սքանչելիքը: Ամբողջ քաղաքը բերեց սքանչե-
լիքը տեսնելու, և տեսնում էին քուրմին ու Սքանչելագործին
միասին: «Ո՞վ է,- ասում էին,- Գրիգորիոսը, մարդ լինելով՝
աստվածներին իշխում է իբրև ծառաների և իր հետ ունի
սպասավոր»: Բայց նա դրան չէր նայում, այլ ուշադրություն
էր դարձնում ճանապարհին: Ապա հավաքվեցին քաղաքա-
ցիները նրա մոտ՝ լսելու Աստծու Բանը, մի տան մեջ, ուր
իջևանել էր, շատ աղաչեցին: Քիչ խոսեց, որովհետև արևը

մայր էր մտնում, հրամայեց այգաբացին հավաքվել, որ քաղաքի Աստծու Բանը:

Առավոտյան ամբողջ քաղաքը հավաքվեց՝ այրեր և կանայք, ծերեր ու մանուկներ, երիտասարդներ ու կույսեր, պեսպես ախտերից ու դևերից վտանգվածներ, որովհետև ամբողջ երկրում տարածվել էր նրա համբավը: Իսկ նա Սուրբ Հոգու զորությամբ հրապարակի մեջ կանգնած բուժում էր բոլոր ախտաժետներին, քարոզում երկնքի արքայությունը: Իսկ նրանք, խնդությամբ ընդունելով, դարձան սնոտի կուռքերից: Այսպես բոլորին դարձրեց Աստծու փառաբանակից և սուրբ Երրորդության երկրպագու: Դրանից հետո աղոթատուն կառուցեց, սեղան հիմնեց և կատարում էր կենսաբեր խորհուրդը, և բոլորը ինչքով և մարմնով, եռանդուն սպասավորում էին: Այս տաճարը մինչև հիմա ցույց են տալիս. աստվածային մի շնորհով կատարում էր գործը, որ Աստծուց էր: Քաղաքում մեր ժամանակ մի սաստկագույն երկրաշարժ եղավ, արքունական ապարանքները և քաղաքի շինվածները քանդվեցին: Լոկ այն տաճարը անսասան մնաց, որով հայտնի երևում է Աստծու զորությունը և նրա աղոթքների արդյունքը: Եվ [նա] մկրտեց քուրմին ու ձեռնադրեց սարկավագ:

Աստվածային Գիրքը զարմացնում է Սողոմոնի դատաստանով, որ արեց երկու կանանց: Դու արի՛, զարմացիր մեծն Գրիգորիոսի դատաստանով: Ինչ-որ երկու երիտասարդ եղբայր հայրենի ժառանգությունը բաժանելիս մի լճակի համար վիճաբանում էին: Դատաստանին ձեռնամուխ է լինում Սքանչելագործը: Գնում է նրանց մոտ, խնդրում խաղաղություն, բայց չեն լսում նրան: Շահի ցանկությամբ վառվում էին և կռվում: Աստծու այրը մնում է լճի մոտ և գիշերը հսկում՝ [աղոթում] և ջրերի մեջ տեսնում է Մովսեսի սքանչելագործությունները, գավազանը խփելով ոչ թե ծովը երկու կես արեց, այլ ամբողջապես ցամաքեցրեց, և առավոտյան լիճը չոր ու անթաց էր, նույնիսկ փոսորակներում խոնավության նշան չկար: [Գրիգորիոսը] պատերազմը փոխեց խաղաղության և եղբայրությունը նախամեծար ճանաչել տվեց, և ավելի լավ համարվեց լճի ցամաքելը, քան երկուսի մահը: Այժմ ևս երևում է աստվածային սքանչելիքը, ուր երբեմն լիճ էր՝ փոխվեց անտառի և արտավար դաշտերի: Դա ավելի սքանչելի է, քան Մովսեսինն ու Սողոմոնինը:

Հայոց լեռների գավառում մի գետ է հոսում ձորերի միջով՝ ահավոր հորձանք տալով: Երկրի բնակիչները Գայլ են անվանում: Որտեղից որ անցնում էր մերձակայքին բազում վնասներ էր տալիս, ողողելով ագարակները, արտերն ու մարդերը. վտանգը քիչ չէր: Հավաքվեցին եկան սուրբ Գրիգորիոսի մոտ և աղաչեցին, որ վերացնի գետի վնասը՝ ինչպես ուզում է, կամ հրամայի, որ հոսի այլ տեղով: Ելավ, նրանց հետ գնաց գետեզրը, որովհետև չէր հրաժարվում մարդկանց օգուտի համար աշխատելուց: Երբևէ չգնաց ձիով կամ էշով, այլ հետևակ՝ գավազանին հենված, անցնում էր բոլոր ճանապարհները: Գնաց գետի ափը և իմացավ, որ անհնար է մարդկային իմաստությամբ կամ ուժով ելք գտնել: Այլ միայն աստվածային զորությամբ, ինչպես ասում է մարգարեն. «Սահման ես դրել՝ չի անցնի» (Սաղմ. ՃԽԸ. 6): Այս ասելով գավազանը ցցեց գետի ափին, ուր հորձանքները վնաս էին գործում, և աղոթեց առ Աստված: Անմիջապես գավազանը արմատակալեց և դալարություն էր ցույց տալիս, ինչպես Ահարոնի գավազանը, և աճեց, ծառ դարձավ և հոսանքների սահմանը հաստատվեց, որ երբ անձրևներից ու հեղեղներից ջուրն առատանում է, հորդելով ահավոր ձայնով, չի կարողանում անցնել ծառի արմատից, և ծառի անունը մինչև օրս Գրիգորիոսի գավազան է: Համբավը ամբողջ երկրում հռչակված էր:

Նրան աղաչում էին Կոմնա քաղաքից գալ իրենց մոտ և եպիսկոպոս ձեռնադրել: Եվ նա լսեց նրանց աղաչանքը, գնաց: Եվ եղավ նրանց մոտ՝ ընտրությունը տալիս էր Աստծուն: Իսկ նրանք, որ ավելի մեծ էին խոսքով, ազգով և ճոխությամբ առաջարկում էին [ինչ-որ մեկին]: Մեծն Գրիգորիոսն սպասում էր, որ Աստծուց հայտնություն լինի իրեն, ինչպես Սամվելին՝ որ ոչ թե գեղեցկություն, այլ պայծառ հոգի էր խնդրում: Իսկ մեկը, որ իրեն ընտրյալ էր կարծում, թե-

րություն էր գտնում Աստծու այրի մեջ, առաջ գալով նախա-տինքով ասում է Աստծու այրին. «Եթե նախապես ընտրված երևելիներս արժանի չենք, և ուզում ես անարգներին կոչել քահանայության, ապա թող դարբին Աղեքսանդրոսը քահա-նայանա. եթե քեզ հաճո է՝ ամբողջ քաղաքով համաձայն ենք Աղեքսանդրին»: Իսկ սուրբը չարհամարհեց և ասաց. «Ո՞վ է այս Աղեքսանդրոսը, որ ասում եք»: Մոտը եղածներից ոմանք կատակով մեջ բերին Աղեքսանդրոսին, որ կարճահասակ էր, տգեղ կերպարանքով, ձեռքերն ու երեսը և այլ տեղեր կեղ-տոտված կրակի կայծերից. ծիծաղելի էր և գծուծ: Իսկ մեծն Գրիգորիոս Սուրբը Հոգով ճանաչեց, թե ինչպիսի մարդ է այ-րը. ոչ թե այս կյանքի վտանգից է ընտրել այդ արհեստը, այլ առաքինության և աղքատների օգուտի համար:

Այնժամ նա աշխատում էր թաքնվել՝ առաքինությունը ծածկելով անարգ կերպարանքով. այսպես անարժան էր ցույց տալիս իրեն: [Գրիգորիոսը] հրամայում է առաջ բերել Աղեք-սանդրին և ի հայտ էր բերում նրա ծածուկ վարքը: Սպա-սավորներին ակնարկում է, և նրանք տանում, լվանում են Աղեքսանդրին՝ ըստ մեծի հրամանի: Բոլորը, որ ընտրյալ էին կարծված, տեսնելով զարմացան դրա վայելչությամբ:

[Գրիգորիոսը] ասում է նրանց. «Ինչո՞ւ եք զարմացած Աստծու գործերից. չէ որ մարդ երեսին է նայում, իսկ Աստ-ված սրտին» (Հմմտ. Սիրաք ԺԱ. 22): Այս ասելով Աղեքսանդ-րին քահանայության է բերում՝ կատարելով խորհրդածութ-յունը, որ նախապես ծածկված էր Քրիստոսով և Գրիգորիոսի միջոցով հայտնվեց. տեսքով նվազ էր, և Սուրբ Հոգուց նրա վրա շնորհ երևաց, և շատերը տեսան, օրհնում էին Աստծուն՝ բռնված մեծ երկյուղով: Եվ հրամայում է նրանց, որ հնա-զանդ լինեն նրան՝ որպես Աստծու քահանայի, իսկ նրան գիտության շնորհք տվեց, և ան Բանը սովորեց ավելի քան ուսյալները, և բոլորը զարմացան: Հետո [Աղեքսանդրոսը] կռապաշտների օրենքից մարտիրոսացավ և հրով վախճան-վեց Քրիստոսի անվան համար:

Երկու հրեա կամեցան ծաղրել և խաբել Սքանչելագործին: Նրանցից մեկը սուտ մեռած ձևացավ՝ իբր հանկարծամահ լի-

նելով, իսկ ընկերը կոծում էր նրա վրա ողբերգական ձայնով: Այնտեղով անցնում էր Սքանչելագործը, [հրեան] դիմեց նրան ասելով. «Հանկարծակի մահ պատահեց այս թշվառականին և հիմա մերկ է թաղմանը: Հասարակ շորեր պարգևիր դրան պա-տանելու համար»: Իսկ Աստծու սուրբը չի անտեսում հրեայի խնդրանքը, վերցնում է իր վերարկուն և փռում մեռելի վրա ու ինքը շարունակում ճանապարհը: Հրեան ծիծաղելով ընկ-նում է [սուտ] մեռածի վրա՝ ծաղրուծանակի խոսքեր ասելով հանդերձը շահելու առթիվ: Իսկ նա ոչինչ չխոսեց, որովհետև հանդերձը փռելու ժամանակ հոգին ելավ:

Քաղաքի մի հրապարակում սքանչացած էին մի տղա-յի ուսումով, որ աղաղակում էր ընկերների մոտ՝ որ ոչ թե իրենից է ասում այսքանը ուսուցչին, այլ մեկը մոտը լինե-լով նրան հուշում է, որովհետև մանկան մեջ դև կար և չէր ուզում ելնել նրանից: Գրիգորիոսը եկավ, հասավ այնտեղ, և մանուկը, որի մեջ դևն էր, ասում է հավաքվածներին. «Խոսե-ցեք մեծի հետ՝ ինձ չմաքրի դևից»: Սուրբը վերցրեց կտավը, որ ուսին էր գցած, և դրեց մանկան բերանին: Սա շատ տագ-նապեց դևից՝ պատռելով կտորը և փրփրելով: Սուրբը մոտե-նում, ձեռքը դնում է նրա վրա, խաչակնքում և դուրս վա-նում դևին մանկան միջից, որը զգաստանալով փառավորում է Աստծուն:

Մի անգամ դատավորները բռնեցին նրան և [սպասավոր-ներին] հրամայեցին ջեռուցել բաղնիքը սաստիկ ջերմութ-յամբ, որ սրբին կործանեն: Եվ մերկացնելով մտածեցին ներս դցել: Կանգնելով ջրի առաջ խաչակնքեց, և աստվածային զո-րությունից նոր և չքնաղ տեսիլ երևաց. գմբեթաձև շինված-քը դեպի հիմքը խոնարհվելով ոչ թե դղրդալով, այլ փոխվե-լով այլաձևեց: Դրանով հիացան բոլորը, սրբին կապանքնե-րից արձակեցին:

Դարձյալ մեկից հանում էր դևը, իսկ վերջինս բարձր աղա-ղակելով ասում էր. «Մի՛ հանիր ինձ իմ բնակատեղից, ապա թե ոչ՝ շատ դժվարություններ կպատճառեմ քեզ»: Իսկ նա սաստելով հանեց նրան մարդու միջից: Դևը գնաց, մտավ Հո-

ռոմոց թագավորի դստեր մեջ և աղաղակում էր կնոջ ձայնով. «Ձեմ դուրս գա այստեղից. միայն նեոկեսարացի Գրիգորիոսը կարող է գալ և հանել»: Կայսրը լսելով՝ շտապ ուղարկում է նրան փնտրելու: Գտնում են Կեսարիայում, և [միասին] կայսերական հրամանով, շտապ անցնում են ծովով ու ցամաքով Հռոմ:

Երբ հասան, դևը սաստիկ շարժեց թագավորի դստերը՝ տապալելով գետին: Մեծն Գրիգորիոս մտավ տունը, ուր աղջիկն էր, խաչակնքեց, սաստեց պիղծ դևին և հանեց աղջկա միջից: Եվ [դևին] հրամայեց այնտեղ մնալ՝ դռան մոտ:

Կայսրը տեսավ մեծ սքանչելիքը մեծապես պատվեց Գրիգորիոսին և մտածեց բազում հարստություն շնորհել նրան: Իսկ նա ոչինչ չվերցրեց, խնդրեց նրանից մի մարմարյա լակոնական սյուն, որ շատ երկար և ստվար էր: Կայսրը զարմացավ, թե ինչի համար դա խնդրեց, որ անհնար է հասցնել իր աշխարհը: Նա պատասխանեց. «Միայն տո՛ւր խնդրածս և բան մի մտածիր»: Անմիջապես պիղծ դևին հրամայեց վերցնել սյունը և հասցնել Կապադովկիա: Դևը վերցրեց, գնաց, և [սյունն] այնտեղ է մինչև այսօր: [Գրիգորիոսը] հրաժեշտ տվեց կայսերը, նավարկեց, եկավ, մտավ Սիկիլիա մեծ կղզին: Այնտեղ կար մի բարձր լեռ, որի գագաթը գիշեր ու ցերեկ բորբոքվում է հրի կայծակներով: Եվ ժամեժամ հրի հեղեղ է հոսում լեռան կատարից, կիզում ամենքին, որ հանդիպում է. առավել ևս ձմեռային ժամանակ: Այնքան որ հնարավոր չէր, որ մարդ անցներ այնտեղով: Դրա մոտ մի եկեղեցի կար, ուր մտավ մեծը պատարագի ժամին պաշտոներգության: Իսկույն դադարեց հուրը վկայարանի հանդեպ, ուր սուրբն էր, և սաստիկ ձայն էր լսելի լինում: Երբ տեղացիները տեսան հրի հոսքը սարից՝ բողոքեցին սուրբ Գրիգորիոսին, և նա սեղանի սպասքից վերցնելով գնաց հրին ընդառաջ, ձգեց՝ ասելով. «Դադարի՛ր, մի անցնիր սրանով»: Եվ այդպես եղավ նրա խոսքով և է մինչև այսօր:

Այսքան սքանչելիքները մեկ կամ երկու տարում են եղել: Նաև այս պատմեմ, քանի որ ամեն տեղ տարածված էր աստվածային [սքանչելիքների] լուրը քաղաքում և շրջակա բնակիչների մեջ՝ բոլորը բարեպաշտ հավատի փոխադրվեցին և կուռքերի պղծության ու զազրելի զոհերի բագիններից ու մեհյաններից հրաժարվելով ամեն տեղ եկեղեցիներ ու աղոթարաններ վերականգնեցին, և քրիստոնեական խորհուրդը հույժ տարածվեց: Թագավորը լսելով զայրացավ, գրեց իշխանին, որ խափանի եկեղեցիները, և ովքեր Քրիստոսին երկրպագեցին՝ հարկադրաբար դարձնեն հայրենական պաշտամունքին: Երբ չար և անաստված հրամանը իշխանները տարածեցին հրապարակներում՝ կամ ուրանալ հավատը և կամ տեսակ-տեսակ չարչարանքներ ու մահվան տանջանքներ կրել, քաղաքներն ու գավառները դատարկվեցին բնակիչներից ու անապատացան:

Այնժամ մեծն Գրիգորիոսը լսեց մարդկային տկարությունը, որ շատ շատերը մահվան դուռն են հասնում, մտածում է փոքր-ինչ տեղի տալ հալածիչներին՝ փախուստով, ըստ Տիրոջ պատվիրանի: Եվ բռնավորները ձգտում էին, որ բռնեն նրան՝ որպես քաջ զորավարի: Իսկ նա պաշտամունքի իր սպասավորներով գնաց, բնակվեց անապատում: Ամբարիշտներից մեկը տեսնելով հայտնում է տեղը հալածիչներին, որոնք, մեծ խումբ կազմելով, գնում, շրջապատում են տեղը և հսկում, որ նրանք փախչելու հնար չունենան: Իսկ Գրիգորիոսը ձեռքերը պարզած աղոթում էր սարկավագի հետ, որ առաջ քրմապետն էր: Եվ նրանք դարձան անտեսանելի. ովքեր առաջ նրանց տեսան, այլևս չէին տեսնում: Փնտրեցին ամեն տեղ, և երբ չգտան՝ զարհուրած փախուստի դիմեցին, գնացին իրենց ճանապարհով: Իսկ հալածիչներին հայտնողը եկավ, ընկավ սրբի առաջ և հանցանքի թողություն խնդրեց, հավատաց Աստծուն ու մկրտվեց: Նա, որ առաջ հալածիչն էր, փախչողներից մեկը դարձավ և օրհնեց Աստծուն: Ու որովհետև հալածանքները երկարեցին, շատ էին կապանքներն ու տանջանարանները, [Գրիգորիոսը] անապատում աղոթում էր նրանց համար ինչպես Մովսեսը Ամաղակի դեմ՝ Իսրայելի համար:

Երբեմն ըստ սովորության Աստծուն աղոթում էր Սուրբ Հոգով լցված, այնպես որ հայտնի էր դառնում մոտականներին՝ ձայն էր գալիս նրան Աստծուց, բայց նրանք չէին կարող հասնել տեսիլին ու ձայնին, և դադարեցնելով աղոթքը՝ [նա], որ մեկուսի էր, գալիս է ժողովրդի մոտ: Եվ պայծառ ձայնով աղոթում էր Աստծուն՝ հաղթական երգով. «Օրհնյալ է Տերը, որ մեզ որս չդարձրեց նրանց ատամներին» (Սաղմ. ՃԻԳ. 6): Դրանով սքանչացան նրա մոտ եղողները, աղաչում էին արժանի լինել ուսանելու: Ասում է նրանց. «Աղոթքի ժամին ատյանում տեսնում էի Տրովանդիոն անունով մի երիտասարդի, որ մարտնչում էր բանսարկուի ու դառն հալածիչների դեմ: Քաղաքի դահիճները տարան իշխանի առջև և բազում տեսակ-տեսակ տանջանքներից հետո [սուրբը] վկայեց և անապական պսակ հագավ: Եվ լսեցի ձայն, թե հալածանքները դադարելու են»: Սարկավագն ու նրա մոտ եղողները այս լսելով՝ հիացան ու հավատացին, որ այնքան հեռու լինելով քաղաքից, այդպես ստույգ իմացավ: Սարկավագը մյուսների հետ աղաչում էր նրան, որ հրամայի, գնալ քաղաք ու տեսնել: Եվ նա ասում է. «Կարող է բռնվես, որդյակ»: Իսկ նա ասում է. «Հույսս քո Աստվածն ու աղոթքներն են, որ փրկեն ինձ»: Գալիս են քաղաք, բոլորից լսում են սրբի վկայությունը և նրա անունը, ինչպես ասել էր Աստծու այրը, և այնտեղից վերադարձան հոգնած: Երեկոն իջավ, և քաղաքում բաղնիք կար. ուզեցին գիշերն այնտեղ անցկացնել, ուր դևերն էին: Բաղնիքի մոտ կար մեկը, աղաչում էին նրան բանալ: Եվ սա պատասխանում է նրանց. «Ոչ ոք հնար չունի գիշերով բաղնիք մտնելու, որովհետև արեգակի մարամելուց հետո դևն է գրավել բաղնիքը և սրա մեջ եղած ջրերը: Շատերն անգիտությամբ մտան, և դևն սպանեց նրանց»: Բայց սարկավագը յուրայինների հետ չլսեց և մտավ ներս հանգստանալու: Եվ բազում ճայթյուն էր լսվում. արհավիրք, ողբ, հառաչանք: Եվ [բաղնիքը] հրով ու ծխով լցվեց, և զանազանակերպ գազաններ վխտում էին նրանց մարմինների շուրջը: Իսկ նա Քրիստոսի նշանով կնքեց իրեն ու արհամարհեց դրանց: Առաջին դռնով անցավ, մտավ ավելի ներս. այնտեղ

ավելի ահավոր ու դժնդակ էր դևերի, գազանների երևույթը. շարժում, տատանում էին շենքը, մինչև իսկ տեսան հատակի ճաքելը և ներքևից կայծակներ լցվեցին ջրի ու նրանց վրա: Իսկ նա աղոթքով ու Քրիստոսի կնիքով հալածեց ահեղ երևույթը: Գիշերը հանգստացան, իսկ առավոտյան լողացան և մտածեցին ելնել ու գնալ: Դևը դարձյալ ուզեց արգելել, փակեց դուռը, իսկ նա խաչակնքելով բացեց: Դևերն ասացին. «Թե չլիներ Գրիգորը, որ քեզ Աստծուն հանձնեց, բաղնիքից կենդանի չէիր ելնի»: Սարկավագն ասաց. «Գրիգորիոսը, որ աղոթքով բանտից հանեց ձեր հայր սատանային, որին ես սպասավորում էի, և դարձյալ մտցրեց, նրա աղոթքը կհալածի ձեզ այստեղից»: Եվ այս լուրը տարածվեց ամբողջ աշխարհում: Եվ սարկավագը եկավ, պատմեց սուրբ Գրիգորին:

Նա սիրում էր միշտ աղոթել և քահանաների միջոցով հովվում էր ժողովրդին, որ հավատաց նրան: Եվ երբ հալածանքները դադարեցրեց աղոթքով, այնտեղից իջնում էր քաղաք և ուսուցանում էր բոլորին և հրամայեց կատարել բոլոր սրբերի տոնը, որ նահատակվեցին, և՝ ուրախանալ հոգեպես և ցնծալ սրբերի հիշատակով:

Որովհետև նրա քահանայության առաջին տարին, որ զանց առանք, պատմում ենք այժմ: Ամբողջ քաղաքում համախմբված մի դևի տոնն էին անում. նրանց միացան և դավառի բնակիչները: Միաձայն աղաղակում էին. «Ո՛վ Զևս, մեզ տեղ տուր և արձակիր»: Այդ իմանալով՝ մեծն Գրիգորը նրանց հայտնում է. «Ձեզ տեղ կտրվի, որ լսված չէ»: Եվ իսկույն դևերի վրա սաստիկ ահ ընկավ, հրի պես այրում էր նրանց ու նրանց տները, և նրանց տոնը սուգի փոխվեց, և գնացին ապավինեցին Աստծու ծառային: Իսկ նա գնաց նրանց հետ, մտավ ամեն մի տուն, աղոթքով մերժեց սպանող ախտը և բժշկեց նրանց: Եվ հարվածներից խրատված՝ դարձան քրիստոնյա ու մկրտվեցին: Եվ իմացան, որ դևը չարությամբ կատարեց աղոթքը, որովհետև ուզում էր մարդկանց մահ տարածել քաղաքում, որից փրկվեցին սուրբը Գրիգորի աղոթքով, և մարմնական ախտերից առողջացան հոգով:

Այս կերպ վարվեց Աստծու եկեղեցում, որ նրանով կայացրեց Քրիստոս Աստված: Նախապես գիտնալով իր փոխման մասին՝ շտապում էր կուռքերի պղծությունից բոլորին փոխադրել փրկական հավատքին: Որոնեց, թե կա՞ մարդ, որ հավատքից դուրս է մնացել, գտավ տասնյոթից ոչ ավելի մարդ, սաստիկ տրտմեց, Աստծու առջև ընկած խնդրում էր նրանց դարձը, որ եկեղեցում իրեն փոխարինողը նրա հոտի մեջ կռապաշտ չտեսնի: Այդ ժամանակ ևս Տերը լսեց նրան, և նրանց սրտերը զղջացին, եղան նրա վարդապետության ունկնդիր, դարձան ուղիղ հավատի: Այս է Աստծու այրի կյանքը և Աստծու մոտ փոխադրվելը: Եվ քանի որ այս աշխարհում տուն ու տեղ չունեցավ, նաև մահվանից հետո չստացավ թաղման տեղ, այնքան որ ասում էին, թե Գրիգորը ո՛չ կենդանությանը, ո՛չ մահանալիս տեղի մասին չհոգաց, այլ ինչպես կյանքն անցկացրեց պանդխտության մեջ, նույնպեսև օտարների ձեռքով թաղվելով պանդուխտ եղավ, իր կյանքում հրաժարվեց ունեցվածքից ու տնից, նաև թաղմանը՝ գարդից ու տեղից:

Յուրաքանչյուրը կզարմանա հանդիպելով այս բանին, բայց ոչ ոք թող կասկածի չենթարկի սքանչելիքներն ու վարքը, քանի որ շատ հեռու է ստությունից և լի է ճշմարտությամբ: Նա այլ նշաններ ևս ցույց տվեց, որ մինչև օրս երևում և պատմվում են, որ թողինք, որպեսզի անհավատները հնարովի չհամարեն: Քանի որ շատ զարմանալի բաներ ցույց տվեց և նահատակվեց գերազանց առաքինությամբ: Նաև բազում ճառեր շարադրեց ուղղափառ հավատի ու վարքի վերաբերյալ: Այսպիսին եղավ այս կյանքում և հեռանալով սրբերի մեջ՝ գնաց մեր Տեր Հիսուս Քրիստոսի մոտ, որին փառք հավիտյանս. ամեն:

ՑԱՆԿ

Երկու խոսք 5

Սուրբ եպիսկոպոս Աբդայի, Որմզդանի, Սահնի և Բենիամին սարկավագի վկայաբանությունը.....7

Սուրբ Աբդլմսեհի վկայաբանությունը 13

Սուրբ Ադրիանոսի և նրա կնոջ՝ Անիտոլի վկայաբանությունը.....31

Սուրբ Աթանագինես եպիսկոպոսի վկայաբանությունը 53

Սուրբ Ակակիոսի վկայաբանությունը.....75

Սուրբ Ակիփսիմասի, Այիթալայի և Հովսեփի վկայաբանությունը.....95

Անդրե զորավարի և նրա զորքի՝ երկու հազար ութ հարյուրի վկայաբանությունը 109

Սուրբ Անթիմոս եպիսկոպոսի վկայաբանությունը 119

Սուրբ Անտիոք անարծաթ բժշկի վկայաբանությունը 139

Սուրբ Ապողոնիոս ճգնավորի վկայաբանությունը.....143

Սուրբ Արքիպասի և Փիլիմոնի վկայաբանությունը.....149

Սուրբ Ափրասի վկայաբանությունը.....151

Բաբելաս եպիսկոպոսի և երեք մանկանց վկայաբանությունը.....155

Սուրբ Բաբելաս Մեծի և ութսունչորս աշակերտների վկայաբանությունը 165

Տորոմենիի եպիսկոպոս սուրբ Բագարատի վկայաբանությունը 173

Սուրբ Բասսոսի և նրա որդիներ Թեոգնեսի և Ագապի և
Պիստիսի վկայաբանությունը 185
Չորս սուրբ վկա զինվորների՝ Բասոսի, Եվսեբիոսի,
Եվտիքոսի և Բասիլիոսի վկայաբանությունը 193
Երանելի Բարդիշո եպիսկոպոսի վկայաբանությունը.....199
Սուրբ Բարդողոմեոս առաքյալի վկայաբանությունը.....205
Սուրբ Բարղամի վկայաբանությունը.....217
Պատմություն և խոսք Ելլադիոսի՝ սուրբ և փառաբանված
Բարսեղ հայրապետի՝ Կապադովկիո Կեսարիայի
արքեպիսկոպոսի կյանքի և
սքանչելագործությունների մասին 225
Պենեվենդի եպիսկոպոս սուրբ Գենարիոսի
վկայաբանությունը.....251
Սուրբ Գեորգ զորավարի վկայաբանությունը 257
Սուրբ Գուրիասի և Սամոնասի վկայաբանությունը 277
Սուրբ Գրիգոր Աստվածաբանի կյանքի պատմությունը 283
Սուրբ Գրիգոր Աստվածաբանի կյանքի այլ պատմություն 289
Սուրբ Գրիգոր Սքանչելագործի վարքը.....319

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ - Ա

Թարգմանությունը գրաբարից՝
Արշակ Մադոյանի

Էջադրումը՝
Հովհաննես սրկ. Ազնավուրյանի

Չափսը՝ 60x84 1/16, ծավալը՝ 21 տպ. մամուլ,
տեքստը՝երկու գույն, կազմը կոշտ, չորս գույն
տպաքանակը՝1000:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան